



Ա.Ա.ԲԱՅՐԻ

891.99

4-89

ՏԵՂՄԱՆԻ Տ 1981 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ
19 - ԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ - 48

Հ 26906
Հ 12613

М. АРАЗИ
ИЗБРАННЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1948

Ա Ր Ե Վ Ը

Էսո՞ւմ եք... սպասե՞ք մի փոքր, ես ձեզ կպատմեմ բոլորը սկզբից...

Գնո՞ւմ եք... լավ, ես կպատմեմ ծաղիկներին ու խոտերին...

Սիրուն կակաչներ, լավ լսեցեք արևի պատմությունը...

Աղջիկս հիվանդ էր...

Գիտե՞ք, նա էլ ձեզ նման մի ծաղիկ էր, նախշունիկ դեմքով, ոսկեգանգուր մազերով:

Աղջիկս հիվանդ էր...

Բժիշկը եկավ, իշավ մեր բնակարանը: Նա տիսուր էր, ինչո՞ւ...

Հա, հիշում եմ, նա չէր սիրում ներքեկի հարկերը...

Նա իշավ ներքեւ, նայեց իմ աղջկան, նայեց սենյակի պատերին:

— Խոնավ է,—ասաց, —պիտի փոխեք բնակարանը, պիտի արևկող սենյակ ճարեք...

— Քանի՞ երեխա ունեք, —հարցրեց:

— Երեքն էին. երկուսը մեռան, մնաց այս մեկը... Աղատե՞ք իմ աղջկան. նա մեր տան հոգին է...

Նա ինչոր դեղ գրեց ու տիսուր դեմքով գուրս գնաց:

— Հայրիկ, ի՞նչ գրեց բժիշկը, —հարցրեց աղջիկս:

— Արև գրեց, սիրելիս, արև գրեց, որ փայլի քեզ վրա ու աղատի ցավից...

Ու այն օրը գնացի արև փնտրելու. գնացի շատ հեռու քաղաքի ծայրը ու գտա արևկող մի բնակարան:

— Սիրո՞ւմ կակաշներ, արևի զավակներ, ավելի լավ
չէ՞ր, ձեղ մոտ բերեի իմ ոսկեծամիկ աղջկան:

Դուք նրան կզուգեիք կարմիր ու կանաչ...

Բայց, հա՛, գիտեմ, դուք նրան հաց չէիք տալ... Դուք
սնվում եք վաղորդյան ցողով...

Լսե՞ք, ես դեռ չեմ վերջացրել...

...Մյուս առավոտ պիտի տանեի աղջկանս արևի տոմ,
բայց երբ լուսացավ, նա ինձ կանչեց, ձեռքս բռնեց ու փա-
կեց աշքերը...

Հետո եկան մարդիկ ու տարան նրան...

Ու երբ ոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեղանից, մենք
բոլորս այրվեցինք լալուց, իսկ ես դարձաւ արևի հիվանդ:

Ես գնում էի, նստում փոքրիկ գերեզմանի մոտ և սպա-
սում արևածագին:

Ու միշտ տեսնում էի աղջկանս՝ արևը դրկած և իր մա-
զերը նրա վրա փոած...

Բայց երբ պատմում էի արևի մասին, կինս ու մայրս
չէին հավատում, նրանք կարծում էին, թե ես խելագար եմ,
և ողբում էին այրված, ցամաքած աշքերով:

Ու մի օր էլ ես դիմեցի արևին.

— Հզո՞ր արև,—ասի,—մի մեծ գանգատ ունեմ քեզա-
նից... ինչո՞ւ դու մի շողք խնայեցիր իմ աղջկան, ինչո՞ւ
սպանեցիր ու տարար նրան...

Նա տփրեց ու մթնեց:

— Գնա՛, ասաց, հայտնիր աշխարհին, ասա՛—վերևի
հարկը արևի շողքերը խլեց, ստվեր ձգեց ներքեփ հարկին ու
սպանեց էն ոսկեհեր աղջկան...

ԿԻՍԱՏ ՏՈՒ

Այդ այն օրերին էր, երբ ամեն ինչ շարժվեց:

Երբ մութ խորշերից ձայնեց դարավոր բողոքը, երբ
բացվեցին փակ բներանները...

Այն ժամանակ Սարգիսը վերադարձավ քաղաքից ու հայ-
տարարեց գյուղի հրապարակում.

— Էլ հարուստ-աղքատ շիա, սրանից դենը բոլորս մին
ենք...

Շուտով եկան նրա հետեւից և ուրիշները՝ նույն հովերով,
ու ամբողջ գյուղը դղրդաց նոր խոսքերի տարափից:

Պատմում էին քաղաքի անցքերից, շշմեցնում գյուղացի-
ներին նոր բերած մտքերով:

Այդ օրերին էր ահա, երբ Սարգիսը ուրախ սրտով սկսեց
իր նոր տան շենքը. նա բարձրացրեց պատերը, բայց շկառո-
ղացավ ծածկել ու սարքել իր տունը...

Ու անցան ամիսներ, անցավ այն ժամանակը...

Սարգիսը մնաց գյուղում—քաղաքում էլ գործ չկար...

Նա ման էր զալիս լուս՝ ինքն իր մեջ խորասուզված, աշ-
խատելով աննկատելի դարձնել իրեն: Խոնացել էր նրա շու-
խան, որի վրա երեսում էին երկու մեծ կարկատաններ, դը-
գունել էր նրա դեմքը, իսկ նրա տունը դարձյալ կիսատ էր...

Անցել էր այն ժամանակը, կյանքը նորից իր նախկին
հունի մեջ էր ընկել: Գյուղի հրապարակում դարձյալ իրենց
առաջիւագիրն էին գրավել երկու վաշխառուները՝ հաս-
տափոր Սանդրոն և նիշար, չոր Մարտիրոսը:

Ու ամեն անդամ, երբ Սարգիսը լուս անցնում էր գյու-

զի շուկայով, Մարտիրոսը տերողորմյան ձգելով, սպասում էր որ նա մոտենա ու կամացուկ առում.

— Սա՞րդիս, կարելի ա փող ա հարկավոր, ա՛րի տամ, տունդ վերջացրու...

Ու նրա ոսկրոտ դեմքի վրա խաղում էր խորամանկ ժպիտը և մանր աշքերը խայթում էին հեղնող փայլով:

Սարդիսն անցնում էր լուս, արհամարհանքով, բայց ահա նրա առաջ էր գալիս հաստափոր Սանդրոն՝ շրջապատված իր համախոհներով: Դեռ հեռվից նա բղավում էր իր հրճիւալից, խրինջող ձայնով.

— Սա՞րդիս, բա ասում էիր էլ հարուստ-աղքատ չկա. բա ինչի՞ չես տունդ շինում, կիսատ ա մնացել...

Սարդիսն այրվում էր այդ խոսքերից. — Նրանք հիշեցնում էին անցած օրերը, երբ նա ինքն էր հարձակվում այդ երկու վաշխառուների վրա, — ու էլ չէր համբերում.

— Շա՞տ մի եղակալիլ, — ասում էր, — մի առվով որ ջուր ա գնացել՝ մին էլ կդնա... սաղ աշխարհի տունն ա կիսատ մնացել, մենակ իմը հո չի՞: Լավ իմանաս՝ էն օրերն էլի կռան, տունս կշինեմ քու աշքն էլ կհանեմ...

— Հա՞ հա՞ հա՞... մին էլ կրգան, — հոհոսում էր Սանդրոն, ու ծիծաղից գրվելով՝ ավելի էր լայնացնում իր տեղը:

Եվ նրա հետ ներդաշնակ հոհոսում էին իր շուրջը պատաժ համախոհները:

— Ծիծաղիր, ծիծաղիր. տեղդ լենացել ա, ամա լա՞վ միտդ պահիր, քանի էս խալխի ցավը կա՞ էն օրերն էլի ուղարի նման կշռեն դռանդ առաջ:

Ասում էր Սարդիսը, կծու հեղնանքով շափում ոտից գլուխ Սանդրոյին ու հեռանում դանդաղ քայլերով:

Գնում էր ու իր այրվող աշքերով ելք էր փնտրում այն նեղ փողոցներում...

Ու որպես մի արձան էն անցած օրերին՝ խորհրդավոր լոռությամբ հանդիպում էր նրան իր կիսատ տունը...

ՎԻՐԱՎՈՐ ԹՌՉՈՒՆԵ

Անցնում եմ սալահատակ մայթերով, քայլում եմ հայտնիած էն շքեղ լուսերից, քարերի տապից, խեղդով փուռոց...

Կուրծքս հիվանդ է, աշքերս մթնում են, ծնկներս ծալվում, իսկ զո՞ւ, սեերես, կրկնում ես անվերջ.

— Գնա՛, գնա՛...

Ես քեզ վազո՞ւց եմ ճանաշում, ո՞վ սեերես կարիք. դու զիշեր ցերեկ ճետևում ես ինձ, ճալածում...

— Հիշո՞ւմ ես... դու տարար ինձ այն մեծ խանութը, ուր ամեն ինչ կար ուտելու համար, բայց այդ ծով-ուտելեղինի մեջ ես քաղցած էի ու Տանտալի նման չէի կարող ձեռք տալ և ոչ մի բանի; Ես՝ մի դալուկ օրիորդ, նստած այնտեղ՝ միայն գանձում էին տիրոջ փողերը...

Հիշո՞ւմ ես, երբ առաջին անգամ ոտ զրի այնտեղ, երբ խանութի տերը զիշեց մորս աղալանքին ու ինձ ընդունեց... նա ինձ ճավանեց ու գաղտնի հրճվանքով ասաց իո մտքում.

— Կա ժամը և գառը կլինի ողջակեզ...

Ես ընդունվեցի և առժամանակ ճանդիստ առա..., Կարձատե՛ ճանդիստ...

Նու միշտ նայում էր ինձ իշխողի ժպիտով, նա յանկանում էր ինձ, իսկ զո՞ւ, սեերես շշնջում էիր դռան արանքից.

— Զո՞վի՛ր, գառնուկս... Եթի չճպատակվես, ցուրտ ձրմանը կմնաս մայթերի վրա...»

...Եվ ահա մի օր տերս ճայտնեց իր կամքը. գաղանի ժպտով մեկնեց ձեռքը դեպի ինձ, ուզեց ճաշակել իր ստըր-

կուհուն, բայց համբուլյոի տեղ մի ապտակ իջավ նրա մսել
դեմքին:

Նա ապշեց, կատաղեց, ուզեց հարձակվել նորից, բայց
ես արդեն գուրսն էի...

Ու այն օրից ես եկա ձեզ մոտ, ո՞վ անհյուրընկալ մայ-
թեր, ես ընկերացա քեզ, ո՞վ սևաղդեստ կարիք...

...Անցնում եմ սալահատակ մայթերով, քայլում եմ
հալածված էն շքեղ լույսերից, քարերի տապից, խեղքող փո-
շուց...

Կուրծքս հիվանդ է, աչքերս մթնում են, ծնկներս ծալ-
վում, իսկ դու, սկերես կարիք, կրկնում ես անվերջ.

— Գնա՛, գնա՛...

ՎԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ

Ամեն օր նու գնում էր հեռագրատուն նույն ճանապարհով:

Տարիների ընթացքում այդ փողոցները սովորական եին բարձել, ինչպիս իր բնակարանը, սովորական էին դարձել նույնիսկ այն մտքերը, որոնք ծագում էին ճանապարհի զանազան կետերում:

Հասնելով երկու փողոցների անկյունին՝ նա մտածում էր—մի՞թե միևնույնը չէ, թե որ կողմով կը գնամ.—կյանքն արդեն լծել է ինձ իր մեծ բեռին, և ուր էլ գնամ, բայց չի թողնիլ...

— Զէ՛, պետք է վճռել այն գլխավոր հարցը,—ասում էր նա ինքն իրեն քաղաքային այգով անցնելիս.—Ո՞ւմ համար է այս կյանքը, որ ես քարշ եմ տալիս. ինձ համա՞ր... բայց ես առա ոչ թե ապրում եմ, այլ մեռնում օրեցօր... կնո՞շս, երեխայիս համա՞ր.—բայց նրանք էլ ինձ նման են—նույն դալուկ դեմքերը, փշրված սրտերը...

— Ո՞ւմ համար է այս բոլորը,—կրկնում էր նա, քայլերը դանդաղեցնելով.—Հա՛, զիտեմ,—այն երջանիկ զույգի համար՝ հարուստ ու անհոգ... նրանք գալիս են հեռագրատուն ծիծաղելով, մեկ-մեկու ձեռքից խլում են գրիչը, գրում են, ջնջում, նորից գրում: Հաճախ հեռագիրներ են տալիս, այն էլ՝ ի՞նչ զվարճալի ու չնշին բաների մասին.—«Ծնորհավորում ենք քո անվանակոչությունը. մենք առողջ ենք. առողջ է և մեր շարաձմի շնիկը»... Նրանք ջնորհավորում են, փառաբանում այս կյանքը, իսկ ես անիծում եմ... անքուն գիւ-

Հերներով հեռագրում եմ, չխչիկացնում և զվարճության այդ
բերք հասցնում իր տեղը:

— Փո՞ղը, փո՞ղը,—կրկնում էր նա մտնելով հեռագրա-
սան շեմքը.—ամեն ինչ կը փոխի, ամեն ինչ կը վճռի... փողը
ինձ կազմակի այս անտանելի մթնոլորտից, կեղտու հատա-
կից, տաժանելի աշխատանքից...

— Ո՞վ, անիծված վանդակներ,—ասում էր նա, ներս
մտնելով իր ծանծրալի սենյակը, ուր արդեն սպասում էր
նրան ծերությը: Նա սովորաբար ամենքից վաղ էր գալիս ու
կարդում էր իր փոքրիկ, կոպեկանոց լրագիրը:

— Բարե, ի՞նչ նորություն կա քո լրագրում.—հարցնում
է նա ծերությին:

— Մեզ համար ոչինչ, մեզ վիճակված է միայն աշխա-
տել և աշխատել...

— Բայց երևակայի՛ր,—ասաց Սելանյանը,—հանկարծ
վիճակիսազում տանես երկու հարյուր հազար, թեեր առնես,
դուրս թռչես այս հոտած վանդակից ու պատես աշխարհի
շուրջը...

— Է՞՛զ, երանի քեզ, դու դեռ երազում ես.—դեռ երիտա-
սարդ ես. իսկ իմ բանն արդեն վերջացած է... Ես էլ մի ժա-
մանակ երազում էի, բայց քեզ պես համառ երազող դեռ չեմ
տեսել. այնքան ուժեղ է քո հարստանալու ձգտումը, որ եր-
բեմն թվում է, թե կհարստանաս: Բայց երևակայի՛ր, հան-
կարծ քո իդքը կատարվի... դու, իհա՛րիկ հետեւալ օրը մեզ՝
քո ծառայակիցներիդ կարհամարհես.—այդպես է կյանքի
օրենքը... կդաս մի օր շքեղ վերաբերուվ, հպարտ քայլերով,
կմոտենաս մեր փոքրիկ պատուհանին և կոպիտ տոնով
կպայթես.

— Սա ի՞նչ խայտառակություն է. ինչո՞ւ եք ուշ հասցրել
իմ հեռագիրը... Դու իհարկե երբեք չեիր հաւականալ, որ
մենք անառելի ծանրաբեռնված ենք գործով. ավելին կասեմ՝
դու դրանով չեիր բավականանալ. Հեռախոսով կհայտնիր
մեր կառավարչին, որ մեզ նկատողություն անի: Ել այդ կլի-

ներ աշնան մի անձրևային, լացող օր... Զէ՛, թող քո այդ
դաժան ձգումները...

...Փոքրիկ պատուհանում երեաց հաճախորդի ձեռքը և
Հեռագրի կապույտ թուղթը: Նրանք ընդհատեցին խոսակցու-
թյունը: Վանդակում նորից տիրեց սովորական շրխշըսկոցը:

Մերուկը տիխուր էր. նա երեխայի նման խոռված դեմք
ուներ: Տարօրինակ պայքար էր ծագել այդ երկուսի մեջ՝
երեակայական հարստության շուրջը: Ամեն անգամ, երբ
ծերուկը լսում էր Մելանյանից վիճակիսաղերի, հարստա-
նալու մասին, նրա սիրութ դառնանում էր: Նա մեքենայաբար
գրում էր անդորագրերն ու մտքում կուլում.—«Ուզում է հա-
րստանալ, ստրկացնել հաղարավոր մարդկանց... Զէ՛, թող
քո այդ համառ երազը, քո չար դավադրությունը»...

...Այսօր Մելանյանը գնում էր տում նույն սովորական
ձանապարհով՝ պաշարված իր մտքերով. նա կարծես շտա-
պում էր, որ իր սենյակում վճռի իրեն տանջող հարցը:

Մի խավար տում էր այն, որ արկը մուտք չուներ: Եր-
եւու սենյակներից մեկը իրան էր հատկացրել: Կարծես մի
տիխուր ոսկի էր թագավորում այնտեղ: Կինն ու փոքրիկ պաշի-
կը նրա տրամադրությանն էին հարմարվում, իսկ այդ տրա-
մադրության լավ մասերը վաղուց վերացել էին: Նա ժամերով
ետ ու առաջ էր քայլում սենյակում ու մտածում, մտա-
ծում... Քայլելոց մաշվել էր փոքրիկ կարպետը, որը ձգած
էր սեղանի առաջ:

Այդ երեկոյան նա մի առանձին թափով էր քայլում սե-
նյակում՝ անձնատուր եղած իր մտքերին: Նրան գրգռում էր
այն ժխորը, որ տիրում էր փողոցներում՝ մոտակա տոնի
պատճառով: Անգիտակցաբար նա շարունակում էր մտքում
այն խոսակցությունը, որ ունեցավ ծերուկի հետ:

«Մերո՛վ, —ասում էր նա, —ամեն անգամ երբ ես
ձգտում եմ հարստության, զու վիճում ես. դու խանգարում
ես իմ հարստանալուն»...

Ու երեակայում էր թե ինչպես ծերուկը՝ նատած է իբ փոքրիկ, սառը սենյակում և ծխում է, ծխում։ Նրա առաջ՝ սեղանի վրա փոքրիկ, կեղտոտ հեշտայեռը թշթշում է տը-խուր, —ու հիշեցնում անցյալը...

Նա մոտենում է ծերուկին և ասում ականջին.

— Ծերո՛վկ, լսում ես՝ դու խանգարում ես իմ հարստա-նալուն...

Ծերուկը հանկարծ ոտի է կանդմուն ու ասում զայրույ-թով.

— Եսկ գո՛ւ, դո՛ւ, խանգարում ես մեր ապրելուն. — դու ուզում ես հարստանալ, ելնել մեր ուաերի վրա...

Եվ՝ ո՞վ զարմանք... հանկարծ թվում է, թե հեշտայեն սկսում է բարձր թշթշալ գոլորշի է թողնում... ծերուկի հետե-վից հարյուրավոր մարդիկ են երեւում ու ձեռները բարձրաց-րած՝ սպառնում են, գոշում.

— Դո՛ւ, դո՛ւ, խանգարում ես մեր ապրելուն...

Ու Մելանյանը հանկարծ ասես հաղովում է հազարավոր մարդկանց տաքությունից ու միանում է նրանց հետ:

— Ես ձեզ հետ եմ, — հանկարծ գոշում է նա, — ես էլ ձեզ հետ եմ...

...Նա ներս է մտնում մյուս սենյակը, ուր կինն ու երե-խաներն էին ու շփոթված, բարձր ձայնով կանչում է.

— Ես ձեզ հետ եմ... Գնանք բոլոր միասին...

Փոքրիկ աղջիկը, որ զբաղված էր գույնգգույն թղթերից շղթաներ շինելով՝ տոնածառի համար, ու իր կինը մնացել էին ապացած:

Նա գրկում է աղջկան, որը ուղախությունից շվարած փարվում է հորը, կարծելով թե մոտակա տոների առիթով է նրա ուրախությունը, ու իր ձեռքի կարմիր շղթան փաթաթում է հոր վզին:

Կարծես ծանր աշխատանքից հանգստանալով՝ Մելանյա-նը պայծառացած դեմքով նստում է աթոռին: Հեշտայեռը հզոր հերով քլթթում է, գոլորշու քուլաներ թողնում ու

թվում էր, թե զսպված գոլորշին էլ՝ բռնկված նույն մտքերով,
գոշում էր.

— Բոլո՞րա միասին... բոլո՞րս միասին...

...Մոտենում էր նոր տարին:

Դործի մեջ թաղված՝ Մելանյանը հեռագրում էր անընդ-
հատ ու շմկչիւկացնում մեքենան, շնորհավորական հե-
ռագրեր հաղորդելով: Թվում էր, թե դրաի ամբողջ աղմուկը
նրան էին հանձնել, որ զեկավարի: Այդ ժխորում նրա վառ
երկակայության մեջ լսվում էին բյուրավոր ամբոխի ձայներ:
Նա շմկչիւկացնում էր՝ շնորհավո՞ր, շնորհավո՞ր, ու թվում
էր՝ մի ուրիշ, մեծ տոն է երկրի վրա, թե հսկա զանգեր են
դողանջում օվկիանից օվկիան՝ ամբողջ աշխարհին ու ինքը
կանգնած բարձր՝ մի աշտարակի վրա, գոշում է բյուրավոր
ամբոխին.

— Ուզդեցե՞ք կորացած մնջքերը, ծաղկեցրեք թառամած
կանաչները... Զկա՞ն այլևս վանդակները... ոդուք ազա՞տ եք,
ազա՞տ...

ԿԱՐՄԻՐ ՀԱՄԲՈՒՅՐԸ

Պատերազմի դաշտը այն դաշտն է, ուր ծաղիկները լաւ են, նույնպես վիրավոր ու հաշմանդամ...

Մի հատիկ ծաղիկ է շոյում գեմքս, երբ մոտեցնում եմ գետնին, այն էլ աշնան գեղին ծաղիկ է,—մահվան ծաղիկը...

— Մենավո՞ր ծաղիկ, թող ըմպեմ քո ցողը, ծարավս հագեցնեմ, թեկուզ մահվան թույն լինի այդ:

Բայց զու արյունոտ ես, վիրավո՞ր ինձ նման...

...Դիակնե՞ր... անվե՞րջ դիակներ...

Նրանք ընկած են խառնիխուսան, թշնամին ու բարեկամը միասին:

Եվ բոլորի գեմքին դրոշմած է մի լարված անշարժություն, ասես ամեն մեկը մեխել է հիշողության մեջ իր տեսածը և սպասում է, որ ահեղ ձայնով պատմի աշխարհին:

...Անգղերը պատվում են վերելում...

Նրանք իշնում են, մոտենում զգուշությամբ, ապա զգաւով մեռելությունը՝ համարձակ հոշոտում են մարմինները:

Ահա նրանցից մեկը կտցահարում է թափված ուղեղը:

— Հարգա՞նք, ով անգղ, դեպի մարդկային ուղեղը... նա արժանի էր ուրիշ վիճակի, —շանթահա՞ր ուղեղը... բայց այժմ դարձել է անգղերի կերակուրը...



...Զո՞ւր, մի կաթիլ չո՞ւր...

Շարժվում եմ առաջ օրհասական ձիգով:

Ինչ էլ լինի, պիտի փնտրեմ, պիտի գտնեմ ջուրը...

Հազիվ երկու քայլի շափ փորսողում եմ ու ընկնում թուլցած:

Դիմակները պատել են շուրջը ու շեն թողնում հեռանամք նրանք կանչում են չորս կողմից, հրավիրում իրենց լուս խոհ հերին...

Տաժանելի ուղեղ, դու կպայթես այս լուս խոստկցությունից...

Այս լուսի ուժը մի հզոր ազմուկ է, որից փրկություն չկա...

Առջևս ընկած է արյունոտ մի դեմք, հոյակապ մի մարմին...

Պատառուած վերաբերուի տակից երևում է ժամացույցի երկաթե շղթան, կախված փոքրիկ պատկերով:

Մոտենում եմ մի փոքր, նայում պատկերին ու սիրոս սկսում է բարախել ուժգին:

Երկդիմի պատկեր է,—երկու իմաստասերների խոհուն ձակատներով:

Եվ հիշողությունս այրվում է,—փնտրելով այն մարդուն, որի ձեռքին տեսել եմ այդ պատկերը:

— Ես քեզ ճանաչում եմ, ընկեր:

Օ՛, լավ կը իջներ՝ չճանաչեի, չզատեի քեզ այս անթիվ դիակներից...

Պատմի՛ր, այդ ի՞նչպես եղավ, որ մենք թշնամի ենք իրար, որ իմ ողջունի տեղ գուցե քեզ հանդիպեց իմ դաժան գնդակը:

Բայց դու չես կարող խոսել,—բերանդ լիքն է արյունով և մահվան խավարն իշել է աշքերիդ...

Հիշում ես այն երեկոն, երբ դուրսը բուք ու ձյուն էր, իսկ այն անշուք տանը կը բակը վառվում էր օջախում դուրեկան ճարճատյունով: Ու մենք, —օտարազգի ընկերներս՝ ի մի

Հավաքմած,—խոսում էինք գալիք օրերից... եկ դու, ճիշում
ես, ժպիտը դեմքիդ շփում էիր մատներով այս փոքրիկ պատ-
կերը...

Գիտեմ, ընկեր, էն օջախում կրակը մարել է արդեն. և
մովթ գիշերները՝ շների ոռնոցից արթնացած՝ քո փոքրիկ
տղան կծկվում է մոր գրկում ու հարցնում՝

— Հայրիկը ե՞րբ կգա:

Իսկ մայրը՝ արցոմքները զսպելով ասում է.

— Շոտո՞վ, շոտո՞վ...

Ասում է ու ասես հավատում, որ դու կվերադառնաս...

...Երեկոն գալիս է; Լուսմ են թնդանոթները:

— Ո՞վ հաղթեց, մենք՝ թե՝ դուք... ե՞ս՝... թե՝ դու...

Լովում են մարդկային ձայներ.—Եկել են վիրավորներին
հավաքելու:

Գալիս են, շարժում դիակները, ապա հրում են ինձ ու
ասում.

— Թող մնա, թող մեր թշնամին փտի էս ամայի դաշ-
տում...

— Թող մնանք էս ամայի դաշտում, արյունոտ ընկեր:

Մենք կսպասենք գիշերվան, ու կելնենք, կզարթեցնենք
դիակներին անթիվ ու կքայլենք դեպի քաղաքները քարահա-
տակ...

Թուք ու բորանի հետ մենք կխուժենք ամենուրեք, շոինդ
ու շըխկոցով կբանանք փակ դռներն ու ներս կտանենք շըր-
տահար, արյունոտ մեր ճշմարտությունը...

Մենք ահեղադղորդ փողեր կհնչեցնենք, դժոխային սար-
սուս կտանք մեր դահիճներին ու հրեղեն պատգամեներ կնե-
տենք աշխարհից աշխարհ...

Ու կպու այն օրը... Հաղթական կամարների տակով մենք
պանցնենք նոր կյանքի շարքնորով...
— Ընդունի՛ր համբաւյլս՝ ընկեր, արյունոտ, կարմիր
համբաւյլս...
Կարմիլել է մեր ընկերական շղթան. ե՛կ, միացնենք
ամուսիք և ամուսիք...
Եկ հանգչենք միասին այս արյունոտ դաշտում մինչեւ ել-
ճական...
— Մինչեւ ելնե՞լը...

1915

Ա 26906 1/2 Ե 13



Կ Բ Վ Ա Խ Ն Զ Ո Ր Ը

Ամեն բարեկենդանի անցյալի Յիշողությանները սիրու տակն ու վրա են անում:

Հենց առավոտքը զարթնում եմ թե չէ՝ տշքիս առաջ է գատիս մայրս, տեսնում եմ նրան՝ ինչպես այսօր, մեր զյուղական առան առաջ՝ որա՞ի տակ: Նա զլուխը քաշ արած, ձեռքերով երեսը ծածկած՝ ինքն իրան խոսում է ու խորուն լաց լինում:

Այն ժամանակ ես փոքր էի, բայց զորք էլ լավ զիտեր, որ աղքատի փոքրը շուտ է մեծանում, վազ է կանքի զառնության համար առնում: Մայրս աշխատում էր թարցնել իր արցունքները, բայց ես նկատում էի ու հասկանում նրանց պատճառը:

Տեսնում եմ՝ նա ինչոր պղինձ է զրել կրակին, բայց զիտեմ, որ մեջը բան չկա՝ միայն ջուր է տաքանում:

Ի՞նչ ուներ եփելու:

Ինձ համար պարզ էր, որ ինչպես անցյալ տոնին՝ այս անդամ էլ բրինձ ու յուզ էին խոստացել և չեին տվել, իսկ մօրս վափագն էր՝ փլավ եփել, ինչպես կարգն է՝ ուրախացնել մեզ՝ երեխաներիս:

Ի՞նչ աներ, մորթի՞ր մնացած երեք հավերից մեկը... բայց հետո ո՞րտեղից ձու հարեր իր հաղար ու մի հոգսերի համար, ինչո՞վ թուխս դներ...

Ու նստած մեր դսան առաջ՝ մայրս մնացել էր այրող ցավերի ճանկերում, ուղեղը մաշում էր մի ելք դտնելու համար, ու լաց էր լինում:

Իսկապես ի՞նչ էր մեր օրը:

Դեռ Հորս կենդանության ժամանակ մի բանի տեր չէինք, իսկ նրա մահից հետո, ինչպիս ասում են՝ ջուրը մաղվեցինք: Մի կտոր Հոգ էր մնացել, այն էլ զորբաներից մեկն էր գրավել: Մայրս ընկել էր ուրիշների գոներն ու սրա-նրա գործին էր գնում՝ որի ազանն էր անում, որի հացը թխում, ջուրը կրում ու մի կերպ մեզ պահում:

Եվ առա հեկել էր «աղիկ» օրը, իսկ նա իր անվերջ չարշարանքի փոխարեն ուրախության մի չնշին շլուղ էլ չէր ստացել:

Կրծո՞ղ ցավեր...

Ռողում էի մոտենամ, հանգստացնեմ, —ասեմ, մայրիկ, երբ մեծանամ, ինչ որ լավ բան կա՝ կճարեմ քեզ համար, բայց վախենում էի՝ ավելի վշտացնեմ՝ իր գաղտնիքը բանալով: Մեկ էլ սիրաս այնպիս էր զառնացած, որ զգում էի՝ եթե մոտենամ մորս, ևս էլ կվարակվեմ նրա արցունքներից: Իսկ այդ բանը չէր թուլ տալիս իմ՝ փոքրիկ տղամարդուս ինքնասիրությունը:

Բայց մենակ մորս վիշտը չէր ինձ այրողը. մի ուրիշ ցավ էլ ունեի, որ ինքս էի նրանից ծածկում...

Մեր հարուստ հարևանի տղան ու իր երկու ընկերները՝ մեկը տանուտերի տղան, մյուսը քահանացի՝ բարձրացել էին մեզանից մոտիկ մի կտորի վրա ու քեֆ էին անում: Երեքն էլ ունեոր էին, հագել էին իրանց լավ շորերը, իսկ մեր հարևանի տղացի խելքը գնում էր նախշուն թելերով կարած իր նոր կոշիկներից, որ նրա հայրը քաղաքից էր բերել:

Նրանք ամեն կերպ աշխատում էին մեծերին նմանվել, հարահրոց էին գցել, երգում էին, շվի ածում ու պարում: Իհարկե ամենից շատ պարում էր մեր հարևանի տղան, որպեսզի ցուց տա իր նախշուն կոշիկները:

Սիրոս չէր համբերում, հաճախ անցնում էի այդ տան մոտից ու ամեն նրանց ձայնը լսելիս այնպես էր թվում, թե շուրջ անզունդ է բացված ու տեղ չեմ գտնում գետնի վրա:

Ինչո՞ւ նրանք ուրիշ խաղերի ժամանակ ինձ կանչում

էին, իսկ այժմ չէին կանչում: Պարզ բան է՝ նրանք իրանց տներից բերել էին ամեն տեսակ ուստելեղեն, իսկ ես ի՞նչ կարող էի տանել. — ես նրանց ընկերը չէի... Այդ միտքն էր, որ ինձ կատաղեցնում էր. գգում էի մի խորը վիրավորանք: Այդպես գնում-գալիս էի, մեկ տեսնում մորա ու գառնանում, մեկ անցնում քեզ անողների մոտից ու այրվում, խորովվում:

Այդ գեռ բավական չէ. նկատելով, որ ես հետեւում եմ իրենց, նրանք ավելի էին աշխատում ինձ գրգռել: Ինձ տրաբացնելու համար տեսնում եմ՝ մի ձող տնկեցին կտուրի վրա ու նրա ծայրին մի մեծ, կարմիր խնձոր ցցեցին:

Նայում էի խնձորին ու կատաղում, իսկ նրանք էլ իրեցով իրենց ծաղրական բացականշերով, ծամածություններով մյուս կողմից էին սիրուս դաշում: Վերջն էլ՝ կարծես այդ բոլորը քիչ էր, — հանկարծ վերեկց գլխիս հող թափեցին:

Բաժակն արդեն լցվել էր: Պիտի վրեժ առնեի, ինչ էլ լիներ:

Կորին սկսվեց: Սկսեցի քարեր նետել դեպի կտուրը:

Եմ քարեկարկուտի աճից նրանք՝ թաքնվեցին, բայց ես չի դադարում, իմ աշքի փուշը այն կարմիր խնձորն էր, որ չգիտեմ ինչո՞ւ, ամենից զատ էր ինձ գրգռում:

Ինչքան ուժ ու շնորհք ունեի՝ լարում էի, որ դիպցնեմ խնձորին: Քարերը թոշում էին քարձր-քարձր ու նորից ընկենում, բայց ես համառությամբ շարունակում էի նետել: Քըրտինքը պատել էր համկատս, սիրուս ուժգին բարախում էր, բայց ո՞վ կարող էր ինձ ետ դարձնել կոմից:

Իմ շուրջը հավաքվել էին հարևանները՝ մեծ ու փոքր, ու ամեն կողմից խրախուսում էին, սպասելով իմ հաղթանակին:

Մեկ էլ հանկարծ... ի՞նչ ասեմ՝ դա մի հրաշք էր... խընձորն ընկավ ներքեւ ու ոգևորության ցնծագին մի աղմուկ բարձրացցավ շորս կողմը:

— Ա՞յ, ա'պրես, ա'պրես, — կանչեցին բոլորը:

Վրաստիքի, վերցրի խնձորն ու անսահման ուրախության մեջ թռա դեպի մեր տուն ու փարվեցի մորա վզովը:

Նրան արդեն պատմել էին մեր կովի մասին. նայ պատրաստվում էր գալ ինձ տանելու, բայց աճա ևս եկա:

— Բա՛չաս,—կրկնում էր նա, Համբուրելով ճակատու և իր հորդառատ արցունքներով թրջելով երես.—քո հերը քեզ համար հարստովյուն չի թողել. քոնն էլ էս զոշաղ ձեռքերն են...: քո փայն էլ էս կարմիր խնձորն ա...

Նայում եմ մորս. արցունքները սահում են աշքերիցս... երջանիկ արցունքներ... ապա դարձնում եմ Հայացքս ու անուշ-անուշ նայում իմ հաղթանակին՝ կարմիր խնձորին...

ՀԵՔԻԱԹԸ

Այդ երեկո էլ, բայ սովորովյան՝ երեխաները հավաքվել էին Մարգարի տանը և անհամբեր սպասում էին նրա խոսացած հեքիաթին:

Դուրսը ձյուն էր: Երեկոր ձնագնդի խաղից հետո նրանք ներս վագեցին այն ժամանակ, երբ Մարգարն իր համեստ ընթրիքը վերջացնելով, թիկնել էր թափախն՝ օջախի մոտ, ու ըթի տակ մրմում էր—«Ենջյա՛, Վարդան, անուշ քնով»...

Օջախում ծովութուու թշթշում էին թաց փայտերը, լրցնելով սենյակը ծխով: Մի թիթեղյա անապակի ճրագ, որը կտիված էր սեացած սնից, հազիվ էր լուսավորում սենյակն իր աղոտ լույսով ու երեան հանում տան խղճուկ պարագաները՝ դիմացի պատի թարեքն իր հասարակ ամանեղենով:

Մարգարի կինը երեխաների լվացքն էր անում, լաթերը փոելով բովսարու մոտ, իսկ մայրը ծալապատիկ նստած կրակի մոտ գուշակա էր գործում, ստեպ-ստեպ հորանչելով ու երեսը խաչակնքելով: Երեխաներից փոքրերը քնած էին, իսկ երկու տղաները խաղում էին մեծ բրդու կատվի հետ, որը ուշադրություն շգարձնելով նրանց վրա, հանգիստ մոլասում էր:

Ամեն ինչ այնտեղ տրամադրում էր մի անգորք քնի: Միայն երեխաներն էին, որ պատրաստ էին երեկոր ժամերով նստել, միայն թէ Մարգարը հեքիաթներ պատմեր: Ամբողջ գյուղում նրան հման հեքիաթ պատմող չկար:

Եվ Մարգարն սկսում է՝ ասես երգելով, աշքերը փակ,
կույր աշուղի նման, սկսում է պատմել իր սիրած մեծ Հե-
րիաթը՝ Հրեղեն թռչունի և երեք եղբայրների մասին։ Իսկ
երեխաները՝ շնչները զսպած՝ ագահությամբ որսում էին նրա
ամեն մի խոսքը։ Ու չնայած դորսը ձյուն-ձմեռ էր, նրանք
ահսնում էին մտքով մայիսյան դաշտեր ու ծաղիկներ, ջինջ
Երկինք, ամրացներ...»

...Յոթը սարերի հետեւմ Հրեղեն թռչունն է ապրում իր
սոկե վանդակում։ Ու նրա շուրջը հաստ, ամրակուռ պատեր
են քաշած ու երկաթի մեծ դոների մոտ սև, դաժան վիշտապ-
ները հսկում են դիշեր ցերեկ...»

Եվ առաջ երեք եղբայրները՝ մեկ-մեկու հետեխց գնում են
այդ Հրեղեն թռչունը փնտրելու, բայց միայն փոքր եղբայրն
է տիրապետում նրան՝ Հաղթելով աժդաշա վիշտապներին։ Սա-
կայն ճամփին գավառան եղբայրները, որոնց նաև աղատել էր
վիշտապներից, խարելով իշեցնում են նրան Հորի մեջ, ապա
առնելով նրա վաստակած Հրեղեն թռչունը, թողնում են նրան
և դնում...»

...Հանկարծ դռան շեմքում շունը Հաշաց և վաղեց գետի
փռղոց, միանալով ուրիշ շներին, որոնք հարձակվել էին ան-
ցորդի վրա։ Ազմուկի մեջ լավեց մի ձայն։

— Մա՞րդար, ա՞յ Մա՞րդար...»

— Քեզ են կանչում, — Հայտնեց Մարգարի կինը վախե-
ցած ձայնով։

Մարգարը կարծես քնից նոր արթնացած՝ Հոնքերը կընձ-
ռելով ականջ դրեց, ապա ստները ձգելով տրեխների մեջ ու
դիմին փափախ դնելով՝ դուրս եկավ փռղոց։ Դուռը բաց
մնաց և դրսից մի անախորժ սառնություն փչեց։

Նու շուտով վերադարձավ աշլայլված դեմքով։

— Աղեն կանչել ա,—ասաց նա և յրափու ու հուզմոնքից
սրբարթալով, սկսեց ամրացնել տրեխոները:

Նա գնաց, երեխաներն էլ նրա հետից տխուր դուրս
եկան փողոց: Չքացան երեակայությունից Հրաշալի պատ-
կերները, նրանց կծկում էր ձմռան ցուրտը, իսկ տների մութ
անկյուններից շարագուշակ փոփուկով կարծես դաժան ա-
ղացի անունն էին տալիս, որը կտրեց վառ հերիտիը...



Բայց ինչո՞ւ այդ օրվանից Մարգարը կարծես պապանձ-
վեց, ու էլ երբեք չէին լսում նրա հերիտիները: Երկար ժա-
մանակ երեխաները չէին հասկանում, բայց աճա մի օր՝
դարնան սկզբին նրանց տուաջ բացվեց տխուր գալանիքը:

Այդ օրը եկավ մի աստիճանավոր տանտեսերի ու նրա
օկնականի հետ, եկավ նայեց Մարգարի տունը, ինչո՞ր զրեց:

— Եկել են տունը վեր զրելու, — լսում էինք հարեաննե-
րից.—փող էր պարտ աղացին, շտվեց, հիմի տունը խլում են
ձեռքից...

Մարգարը կանգնել էր զլխակոր, քարացած դեմքով:

Միայն երբ նրա ականջին հասավ երեխաների լացը բ-
մոտեցավ աստիճանավորին.

— Ա՛ղա, խնդրում եմ համբերեք... աշխատանք կանեմ,
պարտքս կտամ...

Բայց աստիճանավորը չթողեց, որ նո իր խոսքը վեր-
ցացնի:

— Գնա քո պարտատերին խնդրիր. օրենքը չի համբե-
րում:

Նրանք գնացին, բայց դեռ երկար լսվում էր Մարգարի
մոր և կնոջ աղերսական լացը, նրանց հուսահատ գոշերը
Սակայն զուր էին նրանք ծնկները թակում, ձեռքերը բարձ-
րացնում, — Մարգարի տունը խլեցին, իսկ գարնան վերջերին
նա հեռացավ գյուղից:

Ահա թե ինչո՞ւ աղան կանշեց նրան էն մութը, ցուրտ գիշերը, ահա թե ինչո՞ւ կտրվեց հրեղեն թռչումի հեքիաթը...

Անցել են տարիներ...

Այն տեղը, որ Մարգարի տունն էր, երեսում է փլատակների մի կույտ:

Միայն սկացած պատի մի բեկոր հիշեցնում է, որ այնտեղից երբեմն ծովս էր ելնում: Խափանված է վաղուց նաև ջրհորը տան առաջ, իսկ նրա տեղը երեսում է կիսով շափ հողի մեջ թաղած մի քար:

Եվ ամառվա լուսինը սահում է, անցնում, խորհրդավոր ստվերներ ձգելով փլատակների վրա:

Ու ծղրիդներն անվերջ, կրկնում են երգը տխուր.

Այստեղ... այստեղ... երբեմն... մարդիկ էին... ապրում... ապրում...

Ու այս ժամերին թվում է՝ խափանված ջրհորից ձայներ են գալիս... այն հերիաթի երրորդ եղբայրն է՝ ինքը Մարգարն է, որ ճգնում է ելնել մութը Հորից...

Ու այս ժամերին թվում է՝ խափանված ջրհորից ձայներ են գալիս... ու հեռուներից թռչելով գալիս է շորորդ եղբայրը, նա սկանում է ամսերից վեր իր կարմիր նժույգով, գալիս է ազատելու Մարգարին իր խափար բանտից...

ԽՈՐՃՐԴԱՎՈՐ ԱՅՉԻՆ

Կես գիշերին մոտ էր, երբ խնջուքը վերջացավ:

Հյուրերը երաժիշտների ուղեկցությամբ ծանր ու բարակ դնում էին այգիների ճամփով: Երբեմն նրանք կտնդ էին տռնում, ուրախ բացազանչերով խրախուսում երգչին, ապա նորից հնչում էր նվազի ձայնը՝ հետղօնուե մարելով տարածության մեջ:

Այգետերը՝ կանգնած մեծ դոների առաջ՝ երեսը դարձրած հյուրերի կողմը՝ մտքով մասնակցում էր հեռացող երաժշտությանը: Ահա վերջին ձայներն էլ մարեցին գյուղի մեջ, լսվեց շների կարճատե հաշոց ու ամեն ինչ հանգստացավ: Աշունքավա աստղալից գիշերը դարձյալ սփռեց իր լսությունը:

Հանկարծ այգու փոքրիկ գոնակը գոռալով բացվեց ու այնտեղից գուրս նայեց մի դեմք՝ իր երկար մորուքով: Վախի մի սարսուռ անցավ այգետիրոջ մարմնով:

— Ո՞վ ես, — հարցրեց նա դողդոջուն ձայնով:

— Ես եմ, աղա... ուշացար, հենց իմացա հյուրերի հետ դնացիր:

— Ակոփ, դու ե՞ս... աշքումս ուրիշ մարդ երեաց:

— Չե, աղա, ուրիշ մարդն էստեղ ի՞նչ է շինում:

Ակոփը շարունակում էր նայել այգեստանին հատուկ խուզարկու հայացքով, բայց տեսնելով, որ աղան չի խոսում, դեմքը նորից ներս տարավ, զգուշությամբ փակելով դոնակը:

Այգեստանը հինգ տարի էր, ծառայում էր Ամիրյանի մոտ, բայց ինչո՞ւ այս անդամ ուրվականի նման զարգանդ բերեց վրան: Թվում էր, թե իշեց ցանկանատերից ինչ-որ

մակսուկներ էր լսում: Ու վախի տագնապով նո շտապ ներս
մուտք այդին, երեակայելով, թե հետեւց մարդիկ են գալիս:

Տարօրինակ, մուզը ու ամայի տպավորություն էր անում
այժմ իր տունը, նրա լուսավառ պատշգամբը, ուր մի փոքր
տուաջ հնչում էին քեֆի ուրախ բացագանձերը: Ներքեմի հար-
կի խավար, ոև պատուհանները զարհուրելի աշքերով նայում
էին սանդուղքների տակից, կարծես հագարավոր սպիներ
դարան մտած սպասում էին նրան:

Կանգ առայլ տատանմունքի մեջ: Նա կուզեր հենց այդ
բողեին թողնել ու գնալ բաղաք, սղատվել այս այգուց, որի
մմեն մի վազը, տմեն մի ծառը կարծես սպասում էր իրեն:

Բայց ահա լուսի շերտում նորից երեաց այգեպանը.
Նա սպատվում էր սանդուղքների մոտ, որ այն ճոխ սեղանի
մնացորդներից ինքն էլ մաս ստանա: Տերը փոքր ինչ հան-
գըստացավ՝ նրան տեսնելով և իսկույն հրավիրեց.

— Ակուի, արի վերե, դու էլ մի բան կեր:

Այգեպանը բարձրացավ տիրոջ հետեւց ու քաշվելով մի
կողմը՝ կանգնեց պատշգամի ծալիքն:

Տերը նստեց, ծանր թիկնելով աթոռի մեջքին: Նրա դա-
լուկ դեմքը արտահայտում էր ինչոր ներքին հիմանդություն:
Ածիլած նիշար դեմքի վրա նշմարվում էին ժամանակից
տուաջ սպիտակած բեզերը:

— Ակուի, արի նստի՛ր, — կանչեց նա, երբ նկատեց, որ
այգեպանը հեռու կանգնած սպասում է:

Ակուիը զպուշ քայլերով մոտեցավ սեղանին, նստեց
աթոռի ծալիքին ու սկսեց ախորժակով ուտել խորովածի մնա-
ցորդները:

Տերը նաշխանձով դիտում էր Ակուիի առողջ ուտելը և
ակամացից համեմատում իր հետ: Ահա այժմ էլ իր հիման-
դությունը նորից զլուխ է բարձրացրել և մոալլում է դեմքը:
Ծանր, ծակող ցախ սկսում է ստամբքից ու պտտում, անց-

նում ամբողջ մարմնով: Նա կիսաթաց աշքերով նայում է՝ մեկ տեսնում է ացքեալանին, մեկ կորցնում նրան, մեկ տեսնում է նրա ստքերի մոտ մի շուն, մեկ էլ նկատում է, որ այդ նրա փափախն է՝ ստքերի մոտ դրած:

Իսկ Ակոփը շարունակում էր ուտելը, մեկ-մեկ էլ լցնում էր բաժակը գինով ու երկար կենացներով խմում:

Տերը հանկարծ սթափիվեց մի կենացի վրա. անզիտակցաբար՝ «ողջ լինես», մրժնչաց ու սկսեց լուռ նայել այդեպանին, կարծես ուղում էր հիշել թե ո՞վ է նա:

Ակոփն արգեն կշտացած՝ վառեց շիրովին ու սկսեց ծխել դանդաղ, կարծես դիտմամբ երկարացնելով իր բավականությունը: Մառան քնաթաթախ դեմքով հաւաքեց սեղանի ամանեղենն ու տարավ ներքեւ: Ամիրյանը շարունակում էր ննջել:

— Աղա, տեղդ ննջում ես, կմրսես,—ասաց Ակոփ:

— Քնած չեմ,—պատասխանեց տերը, ապա հանեց ծխախոտի անուշահոս գլանակներն ու սկսեց ծխել, զրոյցելով այդեպանի հիտ:

— Երանի քեզ, Ակոփ, ապրում ես տառզ ու հանդիսու, մեղ պես հաղար ու մի ցավ չունես:

— Է՞հ, աղա, քեզանից ինձ երանի չե հասնիլ, ամբողջ օրը մեջքս ծուած բանում եմ, աշխարհի լավ բաներից հեռու: Էն էլ ուղիղ է՝ մեծ կյանքը մեծ ցավեր ոնի: Աղա, քեզ էլ հայտնի է, որ ես երեսուն տարի է աշխատուած եմ էս այդում... Ի՞նչքան բան են տեսել էս աշքերա... Լավ միտս է՝ ութք տարիի սրանից առաջ՝ հենց էս ժամանակ էս այգու տիրոջ սպանեցին...

Տերը՝ շնայած որ լսել էր դրա մասին, բայց այստեղ՝ այս ժամին նա ցնցվեց այդ խոսքից, ասես ապանությունը իրան էր վերաբերում: Ու ինչպես հաճախ պատահում է, նա՝ կամենալով վերջ տալ այդ անախորժ պատմության, հենց

ինքը ակամացից նպաստեց, որ այդեպանը պատմի եղելու թյունը:

— Վերջը ո՞նց եղավլ, բացվե՞ց սպանովիումը, թե չէ:

— Բացվեց, բայց ուշ բացվեց. ուղիղն առած՝ էս սպանողը մեղքի մեջ ընկալ՝ իր նամուտի պատճառով...

— Ինչքան էլ նեղված լիներ, մեծի պատիվը շահետք է մոռանար... փշացած, ավազակ մարդ է եղել:

— Աղա, ոու որ գլխիցն իմանաս, կտեսնես որ էն մաքր-ը իրան նամուտի կրակից էղակն բան արավ: Նա էս այ- գումն էր աշխատում,—իմ օգնականն էր. մի սիրուն կնիկ ուներ՝ շարմաղ երեսով... Դու ասա՛, թե էղակն էշխով աղ- ջիկը ո՞րտեղից պատճենեց էդ աղքատ մարդուն:

Մրանց գալուց միքանի շաբաթ անց՝ տեսա որ մեր աղի աշքը կպել ա էդ կնկանը: Առաջ ո՞վ էր տեսել, որ նա երկու օրից ավելի նատեր այդում, բայց հիմի շաբաթներով էր մնում: Գնում-գալիս էր, աշք ածում, ինչ բաներ ասես՝ կտո- րեցեն թե ականջի օղեր, բերում նրա համար: Կանչում էր տուն, մթամ գործ էր տալիս, մարդուն էլ շուտ-շուտ դես-դեն էր զրկում: Էսպես օր-օրի վրա անց կացավ՝ տեսնում եմ կնիկը կակզում է, մարդն էլ տանը չի: Խաթեն դալիս է, ես էլ շեմ իմանում ի՞նչ անեմ: Մի անգամ էլ սիրոս շնամբե- րեց, ասի՞ աղա, նա էլ մարդ ա... շատը նամուտի խաթրու կյանքից ձեռք ա քաշում... Բայց ո՞ւմ ես ասում.—ծիծաղեց վրես:

— Դու հին մարդ ես,—ասեց, չես հասկանում.—ա՞յ էս իմ այդին, էս էլ իմ այդեպանը. ուրիշի ասլրանքին հո ձեռք չե՞մ տալիս...

Դե ի՞նչ ասեի. ի՞նչ ուժ ունեի. գլուխս թափ տվի ու առս կացաւ:

Մի օր էլ տեսնեմ՝ էդ կնկա մարդը կանչեց ինձ ու հար- ցուսիործ արավէ Բանից դուրս եկավ, որ գլխի է ընկել: Ես էլ շառի ահից շեմ ու շում անելով անց կացրի բանը: Բայց մարդը շէր հանգստանում. կրակն ընկել էր շանը. դես էր գնում, դեն էր գնում, միտքը ձեռքից բաց չէր թողնում:

Տեսաւ որ քանը դժվարանում է, ասի՞ ա՞յլ տղա, քանից որ մեջդ կասկած է ընկել, լավ կանես կնկանու առնես, զնաս քո գեղը: Նա էլ վերջիվերը հոժարվեց, միայն փող ուներ ստանալի, աղին էլ կատեղ չէր, ասաց՝ որ գա՞ հաշիվս կտռնեմ, կրոշեմ կստեղից:

Աղեն որ եկավ, ևս տղեն ուզում էր փողն առնիլ, բայց նա զիսի էր ընկնում, որ միտքը զնալու է՝ խնքն էլ չէր ուզում կնկանը քաց թողնի, ձգձգում էր—էսօր-էզուց էր անում: Իսկ կնկա հետ էլ քիչ էր մնում աշկարտ սեր քաշի: Դէ՛ կրակը թաքցնել կի՞... Բանն էն տեղը հասավ, որ տղեն ամեն բան իմացավ: Եկավ դարպը սկասմեց ինձ՝ իրան աշքով տեսածը... Հազիվ էր մարդուն հանգստացրի, ուշքի բերի: Էլի խորհուրդ տվի, որ զնա կստեղից. նա էլ տառնց փողի, առանց հաշիվն առնելու վեր կացավ կնկով ու երեխով քոչեց, զնաց:

Էղ օրից մի ամիս անց կացավ, ևս էլ հանգստացա ասի՝ կրակից ազատվեցինք: Բայց զու մի ասիլ՝ մարդը իր մուռը պահած՝ թաքուն մեկ-մեկ զնում-զալիս է, որ իր մտքում վճռածն անի: Մի զիշեր էլ, երբ մեր աղեն կստեղ քիֆ էր անում, զալիս է ու մի մութը տեղից թվանքով նշան է զնում... Ի՞նչ երկարացնեմ. Հենց էդ ժամանակ մի զնդակ եկավ ու մեր ազի կյանքին վերջ տվամ:

Միտս է՝ ևս սանդուղքների վրա կանգնած թամաշա էի անում, աղեն քեֆից ծամբացած, վեր կացավ սեղանից ու օրորիվելով առաջ եկավ որ պարի, մեկ էլ տեսանք՝ վեր ընկավ ու շունչը փչեց:

Ակոփը նորից լցրեց շիբուխն ու ծխի խոշոր քուշաներ դուրս թողնելով, ընկղմվեց մտածմունքների մեջ:



Տերը լուռ էր ու անհանդիստ. սարսուն անցնում էր մարմնով ու կծկում. թվում էր թե կաշկանդված էր շղթաներով և ոչ մի շարժում չի կարող անել: Ու մի դեմք նրա աշքից

չեր Հեռանում, անթարթ նայելով՝ համառությամբ մոտենում էր ու մոտենում; Եվ ինքը նրա առաջ նվաստանում էր՝ զգում էր որ ո՞չ մի բան չի փրկել այդ դաժան հայացքից:

Դա այն մարդն էր, որ այդ առավոտ մոտեցավ նրան փողոցում ու շտեսնված համարձակությամբ պահանջեց իր աշխատավարձը:

— Վեց ամիս է, շարշարում ես... վարձս տուր, թե չէ՞ ես զիտեմ, թե ինչ կանեմ...

Իսկ ինքը կոսկիտ մերժեց նրան, նույնիսկ դանդատվեց պրիստավին և ծեծել տվալ:

Եվ այժմ նա ամեն բան կտար, միայն թե հեռացներ իր մտքից այդ սպառնացով աշքերը, որոնք համառ ու անթարթ մոտենում էին իրեն... Աւ հանկարծ նա սոսկումով զգաց, որ իր վախի պատճառը հենց այդ դեմքն է...

— Հիմի, աղա, դու տաս. ինչի՞ցն էր էդ ամենը, — շարունակեց այգեպանը. — Ինչի՞ցն էր, որ էն մարդը դադարդուն էլավ ու իր տոնը քանդեց: Մի ամիս չքաշեց, բանը բացվեց, — տուում են՝ իրեն թշնամին էր մատնել... ինչ որ է՝ մարդուն տարան, կորցրին, նրա տան ծովսը կտրեցին...

— Երես են տեղել... երես են առել, — հանկարծ միշտմտեց տերը իր խեղդված ձայնով, դեմքը կնճռելով ստամոքսի ցավից:

— Չէ, աղա, մեկը չի, երկուսը չի. ես իմ աշքով շատ բան եմ տեսել... ես աշխարհում մի ծուռ բան կա. մինչև շուղղվի, հանդստություն չի ընկնիլ: Հերս պատմում էր, որ էս այդու վրա անեծք կա... Ասում են՝ մի ժամանակ սրա հռը ժողովրդին է եղել. մի օր խանը գուրս է դալիս զբունելու, տեսնում է ու շատ հավանում էստեղը: Կանչում է իրան մարդկանց ու հրաման տալիս՝ թե շորս կողմը պատեցեք ու ինձ համար այդի շինեցեք: Ժողովուրդը տեսնում է, որ բանն էղպես է՝ կռիվ է զցում. մեջը արյուն է թափվում. բայց խանն իրանն անում է, ու մինչև անդամ հողը ժողովրդին վարել է տալիս, Ասում են՝ հենց էդ զիշերը մի հա-

Հիվոր մարդ այսու չորս կողմը պտտում է ու անիծում.—
ասում է՝ «ո՛չ ուսեք, ո՛չ մարսեք»... Ու էն օրվանից դեսը էս
այդին հանգստություն չոնի...



Տերը հանկարծ զարթնեց ցնցումից: Նու ննջել էր ու
երազով ընկել:

Նրան թվում էր, թե զնում է մի նեղ ճամփով, որի երկու
կողմից վշեց ցանկապատեր էին, որոնք քանի զնում, մոտե-
նում էին իրար... Տաքնազով առաջ էր զնում: Ահա ցանկա-
պատերը միանում են ու սեղմում նրան... Հանկարծ մի մեծ
գուշ ծակում է նրա կողքը...

...Զարթնում է: Նայում է առաջը՝ այգեանը շկա: Սար-
սափած վեր է կենում, անցնում է պատշպամբի ծայրը, որ
կանչի, բայց այդ բովեին հանկարծ լսվում է հրացանի պայ-
թյուն, նա զգում է մի մահացու ծակով ցավ:

— Օդնեցե՛ք,—կանչում է հատված ձախով ու վար-
դնկնում:

ԱՐՅՈՒՆՈՏ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Ամեն առավոտ, արհեստանոց գնալիս՝ ես մի քանի բոպեով կանգ էի առնում մի շքեղ տան պարտեզի առաջ ու Հրձվանքով նայում զարմանալի գույնզգույն ծաղիկներին:

Բայց ամեն անդամ հեռանում էի դառը մտածմունքով:
— Երա՛նի ձեղ, ծաղիկներ,— ասում էի, — ձեղ այդպես
քնքույշ պահում, գուրգուրում են, նույնիսկ աշնան ցուրտ
գիշերները խսիրներով ծածկում են, որ չմրսեք, իսկ ինձ՝ օր
չի անցնում, որ չծեծեն...

Ես իմ փոքրիկ տեղովս այնպես էի մտածում, որ մարդս
մի ծաղիկ էլ չարժի:

Բայց մի աշնան առավոտ ատեցի այդ ծաղիկները...

Այդ օրը մի դժբախտ օր էր ինձ համար:
Վարպետը հանջնել էր ինձ նորոգելու մի զույգ կոշիկ-
ներ, իսկ ինքը գնացել էր գործերով:

Ես էլ փոքր էի՝ ուշը տվել էի փողոցում խաղացող
աշակերտներին ու շարդանակ նրանց կողմն էի նայում: Մեկ
էլ տեսնեմ՝ մեխը ծուռ խփվեց ու ճեղքեց կոշիկի կաղա-
պարը:

Հենց այն գլխից ատում էի այդ կաղապարները, — նրանք
չիշեցնում էին ինձ մեռելի ոտքերը. — շատ անգամ այդպես
էլ տեսնում էի երազում:

Վարպետը վերադարձավ երեկոյան գաղաղած. երևում
էր՝ գործը, ավելի շուտ՝ քեփը չէր հաջողվել, օրն էլ կորել էր:

Նա իսկույն իմացավ իմ դժբախտության մասին և կա-
տաղած սկսեց ինձ ծեծել:

Մինչ այժմ էլ սարսուռ է անցնում մարմնովս, երբ հիշում եմ այդ ծեծը.—կարծես նա վճռել էր միանգամից վերջ տալ իմ դոյությանը: Նա երկար կծեծեր ինձ, եթե պատահամբ ներս շմտներ իր ծանոթ կոշկակարը: Նրանից քաշվելով՝ վարպետը դադարեց ու ինձ փողոց դուրս ձգեց:

Աղի լաց լինելով, քայլերս ուղղեցի դեպի վարպետի տոմսը: Մտածում էի՝ ինչպես միշտ՝ այս անդամ էլ նաև հհանգստանա ու կմոռանա, բայց սխալվում էի:

Տու վերադառնալուն պես նա նորից հարձակվեց և միքանի հարված տալով, վրնդեց ինձ փողոց, գոռալով.

— Գնա՛, կորիր, էլ չերեաս, թե չե կսպանեմ...

Կանգնել էի փողոցում մոլորված, սիրաս լքվալով ու ցածր ձայնով հեկեկում էի:

Իսկ աշնան քամին վզզում էր, միշտաղում մարմինս, ասես մտրակում էր, քշում ինձ:

Անցնում էի դես ու դեն ու մտածում՝ ո՞ւր գնամ, ի՞նչպես անցկացնեմ այդ երկար, դաժան դիշերը:

Նայում էի դիմացի լուսավոր պատուհաններին ու երանի տալիս այն տղաներին, որոնք մայրական փայտայանքով պարուրված՝ տաք անկողիններում անուշ-անուշ քնած էին:

Իսկ իմ մա՛յրը... նա շա՛տ հեռու էր, դյուլումը, և իսկի չեր կասկածում, թե ի՞նչ օրն է ընկել իր որդին...

Այս դրության մեջ ես մոտեցա այն շքեղ մեծ տանը: Նայեցի պարտեղի կողմը և իսկույն մի միտք անցավ գլխովս:

Ես հիշեցի, որ աշնան ցուրտ գիշերները այդ պարտեղի ծաղիկների վրա խսիրներ էին ծածկում, որ շմբսեն:

Հենց այդ առավոտ տեսել էի խսիրները:

«Ի՞նչ կլինի, — մտածում էի, — եթե անցնեմ պարտեղը, յանեմ այն խսիրների տակ ու պատսպարվեմ ցրտից: Առավոտը շատ վաղ կհեռանամ, չեն նկատիլ ինձ, իսկ եթե նկատեն էլ, մի՛թե չեն ներիլ, եթե իմանան իմ դրությունը...»

Լավ նայեցի չորս կողմը, տեսա մարդ չկա, բարձրացացանկապատի վրայով և իջա պարտեղ:

Մտա խսիրների տակ ու մի կերպ ոտներս կծկելով՝ պա-

տըսպարվեցի: Գետինը խոնավ էր. ծաղիկների հոտը շշմեց-
նում էր. օրվա ցնցումները դեռ տանջում էին ինձ: Երկար
ժամանակ քում չէր տանում, բայց վերջապես ես քննեցի. և
շատ խորը:

...Սակայն իմ զարթնելը շատ դառն էր:

Երազի պես զգացի, կարծես ինչ-որ ծանր բան վրաս
ընկալ: Սուր ծակծկող ցավը կրկնվեց, ու վեր թռա տեղից,
նստեցի:

Հիշում եմ՝ պայծառ օր էր. արևն ընկել էր վրաս ու տա-
քացրել: Բայց մի ակնթարթում ամեն ինչ աշքից ծածկեց մի
հրեշավոր դեմք՝ մեծ, մորթի փափախով, որն արջի նման
կտաղած՝ հարվածում էր ինձ:

— Շում, ավազակ, — գոսում էր նա. — ի՞նչ կասի իմ
անքը:

Ասում էր ու կոսկիտ հարվածներ տալիս՝ նախ փայտով,
ապա ձեռներով:

Քթիցս արյուն էր կաթկաթում, կիսարթում դրության մեջ
շշմել էի, շիմանալով թե ի՞նչ է կատարվում:

Նորից ճիգ արի, վեր կացա և օրորվելով դուրս փախա
պարտեզի բաց դռնով, հետեւցս թողնելով արյան կաթիւների
հետքերը:

...Ահա այդ օրվանից ես ատեցի այն շքեղ տան ծաղիկ-
ները, ու ամեն տեսնելիս թվում է ինձ, թե նրանք արյունով
են զբվում. թվում է՝ թե էն կարմիր ծաղիկները իմ արյան
կաթիւներն են...

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵՎԸ

Օրվա ծանր աշխատանքից հոգնած՝ բանվոր Մինասյանը հրեկոյան նստել էր սեղանի առաջ, ու գոզն առել իր մի տարեկան երեխային։ Նա զգում էր մի դուրեկան հանգատություն, որ տարածվում էր նրա ամբողջ մարմնով։

Նրա առաջ դրած էր մի բաժակ թեյ ու լրագիր. բայց նա ինքնամոռացության մեջ թիկնել էր աթոսին և ընկղմվել անոռոշ մտածմունքների մեջ։ Երեխան շարունակ վեր-վեր էր Շաշում դեպի լամպի լույսը, բայց միշտ հանդիպելով հերձեռքերին, որոնք լայն գրկել էին նրան, զարմանքով ետ էր նայում, ապա նորից սկսում իր շարժումները։

Դուրսն անձրեւ էր՝ աշունքվա բարակ ու անընդհատ անձրւել։ Տների խողովակներից տաղտկալի երաժշտությամբ անվերջ թափվում էր ջուրը։ Վերեկի հարկից լսվում էին խուճայներ, որ թվում էր թե զալիս էին շատ հեռվից՝ մի ուրիշ աշխարհից։

Դրսից երբեմն լսվող կառքերի ձայները նրա առաջ պատկերացնում էին քաղաքի փողոցները, ուր լապտերները՝ խոնավության շղարշով պատած, օաղիսի նման գրավում էին Հաղվագյուտ անցորդներին։ Ապա կառքերի հետզհետե մարմող ձայներին հետևելով, նրա երեակայությունն անցնում էր քաղաքից դուրս՝ դեպի իրենց գյուղի մութ ու ամայի դաշտերը, տերեազուրկ ծառերը, անանցանելի ցեխն ու շների ոռնոցը։

Նա տեսնում էր իր մորը, նստած մեն-մենակ իր տանը, վառարանի առաջ... Ի՞նչ է շինում այժմ այդ համառ կինը,

որին նա երբեք չկարողացավ տեղափոխել քաղաք։ Անցյալ
օրը իրենց գյուղացիներից մեկն ասաց, որ մայրը թեթև, ուժի
վրա հիվանդ է... Ո՞վ գիտե, ինչ զրության մեջ է... Նա երբեք
չի պահ քաղաք։ Նա իր գյուղի՝ իր տան հետ ամուր է կապ-
ված...

Դուռը բացվեց։ Ներս մտավ Մինասյանի կինը՝ ձեռքերը
մինչեւ արմանկները բաց, հետը բերելով լվացքի հուար։ Նա
սպիտակած, բշտած մատներով բռնել էր մի նամակ, որն
արդեն ճիշվել էր ու կեղտոտվել։

— Էսօր մի գյուղացի բերավ, ասաց ազգական է, բայց
ես շճոնաշշեցի։

Նա նամակը դրեց սեղանի վրա ու նկատելով, որ երե-
խան անհանգիստ շարժումներով դեպի իրեն է ձգտում, շտա-
պով դուրս գնաց դեպի խոհանոց։

Մինասյանը վերցրեց ծրաբը։ Անշուշտ նամակն իր մո-
րից պիտի լիներ. բայց ինչո՞ւ այս անգամ հասցեն գրած է,
ավելի վարժ ձեռքով։

«Միրելի որդի, գրում էր մայրը. քանի տարի ա, աշքու-
ջուր կտրվեց քեզ ճամփա պահելով։ Օրերը համարելով ապ-
րում էի՝ միշտ աշքս դռանը, միշտ սպասելով, որ հա՛ որդին
կզա ու իմ ամայի տունը կշենացնի... Ի՞նչ թաքցնեմ քեղա-
նից. միշտ իմ սրտի խորհուրդն էն ա էլել, որ մի օր էլ գու-
շուտանիքովդ գաս էստեղ ապրես, քու պապերի, քու օշա-
խի ծուխն էլի վեր անես, ու իմ սիրտն էլ փառակորմի՝ տես-
նեմ աշքին առաջ թոռներիս ու հարսիս. իսկ դու էլ աղասիվն
էդ թանել ու կրակ քաղաքից։ Ախր է՛լ ի՞նչ կյանք ա, որ ջուրն
էլ փողով ես առնում։

Է՛հ, ի՞նչ ասեմ, որդի, պիշեր-ցերեկ մտածում էի, ախ ու
վիշ անում, առավոտներն էլ վեր կենում, տանը մտիկ տա-
լիս. շատ անգամ սիրտս փշաքաղվում էր, երբ տեսնում էի
մի տեղ գերանը վատած, մի տեղ կտուրը քանդված։ Ի՞նչքան
էմ ձեռքերով, մատներով, շարշարով, որ մեր տունը քանդ-

վելուց ազատեմ... Երբ ուրիշներն էլ էին ասում, թես ավելի
էր կոտրվում... Հայ տունդ քանդվում ա, հայ մենակ մնա-
ցիր, տղեգ մտից հանել է քեզ... Ես լսում էի, մեջս լաց լի-
նում, ամա բերանիցս մենակ մի խոսք էր դուրս դալիս.

— Հուսով եմ, հուսով...

Բայց դե ի՞նչ արած. իմ բախտս ուրիշ ցավ բերեց... Մի
օր էլ գիշերվա մեծ անձրկից հետո՝ երբ տանից դուրս էի զա-
լիս՝ շեմքը փուլ եկավ, դերանի ծերը դիպավ ուսիս... շատ
շանցած՝ մնացածն էլ քանդվեց ու ես մնացի ուրիշի դռանը:
Մի շաբաթ է, պառկած եմ քվորս տանը: Տեսա, որ հալս հալ-
չի, էսօր կանչեցի մեր վարժապետին, որ էս նամակը գրի,
ինչ-որ սրտումս պահած ունեմ, իմ ազիզ որդուն իմաց
անի... Ո՞վ գիդի, կարելի է մինչև էս նամակը տեղ հասնելը,
ես կենդանի վիճեմ. ու թե էս էլ իմ վերջին խոսքն է, որդի,
էլի ասում եմ՝ հուսով եմ, որ դու կդաս, մեր ավերակ տունը
կշինես, քու օջախի տերը կլինես:

Մնամ քեզ սիրող և քեզ կարոտ մնացած մայրդաւ:

•

Մինայանը մի շնչում կարդաց նամակը. նա զգաց, որ
մայրը մեռած է. գիտեր, որ միայն վերջին րոպեն կարող էր
իր համառ մորը ներշնչել այդպիսի նամակ: Ու տարիներով
թաքնված, անթեղված զգացուաներն սկսեցին շարժվել իր
մեջ: Խորին ամսուսանքը, խղճառարությունը բռնեց նրան:
Նա ճգնում էր պատկերացնել մորը, բայց իզուր. կարծես
դիտմամբ նա ծածկում էր դեմքը, հեռանում դեպի հավի-
տենական լուսվյունը...

Դրա տեղը գալիս էին մանկական հուշերը, երբ ինքը
գյուղումն էր՝ մոր վեցի տակ: Հիշում էր՝ մի օր, աշնան
վերջերին, երբ սաստիկ քամուց հետո իրենց տան առաջի
թթենին մերկացած՝ տիսուր նայում էր: Եվ ինքը, որ միշտ
մանկական հետաքրքրությամբ հետևում էր տերևաթափին՝
ուզում էր անպատճառ նկատել, թե ե՞րբ կընկնի վերջին տե-

բեր, այս անդամ տեսավ, որ մի հատիկ տերեւ է մնացել ծառին։ Ու երբ ցույց տվավ մորը, նա ասաց.

— Տերեւ որդին ա, ծառն էլ մերը. էդ մեկ տերեւ շախտ ա սիրում մորը, չի ուզում բաժանվել... Դու էլ թե ինձ շատ ես սիրում, ինձանից շես բաժանվիլ...

...Մինասյանը նորից վերցրեց նամակը, որ մի անդամ էլ կարդա, բայց երեխան հանկարծ մի ճիշ արձակեց ու ճանկելով նամակը, վայր գցեց ներքեւ սեղանի տակը։

«Վերջին տերեւ... անցավ նրա մտքով, — վերջին տերեւն էլ ընկավ»...

Եվ արցունքի երկու կաթիլներ հանդարտ սահեցին նրա աշքերից...

ԱՆՑՑԱԼԻ ՆԻՐԱԾ

Քաղաքի բարձմամարդ շուկայի արևկող մի անկյունում
նստած է ծեր գեներալը:

Նստած է նա մի խարխուղ արկղի վրա ու հենված պատ-
տին նիրհում է անշարժ, որպես մի արձան:

Նրա լայն խորշումած դեմքն իր երկճյուղ սպիտակ մո-
րուքով ու ծխախոտից դեղնած երկար բեղերով՝ քանդակված է
այն հին, անցած ոճով: Նրա խիտ հոնքերի մեջ խոր ակոս-
ված կնճիռները, որ երբեմն հրամայողին տալիս էին խրոխտ
արտահայտություն, այժմ էլ ոչ ոքի վրա շեն ազդում, որպես
հնացած, շատ սովոր դիմակները, որոնցից երեխաններն էլ
չեն վախենում:

Իր դինվորական խունացած գլխարկը, որի ճակատին
դեռ նշմարվում էր հանած կոկարդի տեղը, իր վերարկուն,—
նույնպես խունացած, և փայլուն մետաղյա կոճակները սե-
վերի փոխած՝ պատմում են անցյալի փառքից...

Առջև փուած մի քանի հնագույն գրքերն ու իրերը նա
կարծի չի ծախում, այլ միայն հսկում է, որ շշարժվեն տե-
ղից:

Անցյալ դարու պատերազմների պատմություններ, մի
դինվորական դասագիրք, հնագույն թվաբանություն, մի կա-
սոց անկազմ գրքեր,—դինվորական կանոնադրությունների
մասին, մի կեղտուոտ, վլված աստվածաշումշ, և վերջապես,
փամփուշտներից շինված մի սեղանի դարդարանք—ահա այդ
էր նա շուկա բերել ծախելու:

Շաբաթներով նստած է նա, անշարժ, և սակայն իր բերած իրերը մնում են իրենց տեղերում, և նայողին թվում է՝ թե նրանց տերը ցանկություն էլ չունի ոչ ծախելու և ոչ իսկ խոսելու, այլ միայն ննջելու, խոր ու հավիտյան ննջելու...

Եղ կարծես ամեն անցնող ավանդում է իրանգարել այս ներդաշնակ, արձանացած լուսթյունը:

Ահա մոտենում է մի պառավ կին, բաց է անում աստվածաշնչը, ապա վերցնուած գիրքը և մոտ բերելով ծերունուն, հարցնում է.

— Պապի, ի՞նչ արժե քո սուրբ գիրքը:

Պապը շի զարթնում:

Կինը նորից է կանչում:

Ծերունին բաց է անում աշքերը, անթմբթ նայում կնոջը, ասես ուղենալով հիշել, թե ո՞րտեղ է ինքը և ի՞նչ է անում, ապա նկատելով իրան մոտ բերած գիրքը, սկսում է մտարել թե ի՞նչ արժե նա:

— Հարցուր հազար,—լսվում է նրա խոպոտ, մաշված ձայնը:

Կինը՝ վախենալով այդ տարօրինակ ուրվականի ձայնից, պատկառանքով վայր է զնում գիրքը և լուս հեռանում:

Նորից նիրհում է ծերունին ու նրա հետ կարծես նիրհում և՛ն իր ծախու բերած իրերը:

Ապա մոտենում է նրան հնավաճառ թուրքը, վերցնում է անկազմ գրքերի կապոցն ու բարձր ձայնով կանչում.

— Է յ, թավարիշ, ո՞նց ես ծախում էս գիրքը:

Ծերունին բարձր ձայնից նորից զարթնում է և զարմացած նայում է թուրքին, կարծես ուղենալով իմանալ, թե ի՞նչ կատ կա իր և այդ մարդու մեջ, ապա վերջապես նկատելով բարձրացրած գրքերի կապոցը, ձեռքով ծանր ու դանդաղ նշան է անում, թե շի ծախում:

Նա արդեն մի քանի անգամ փորձել է և գիտե, որ այդպիսի թուրքերը քաշով են առնում և գին շեն տալիս:

Փողոցով անցնում է Կարմիր Բանակի մի վաշտ, խրոխսություննացիոնալի նվազով։ Գեներալը ցնցվում է, զարթնում, ապա ձայնի հեռանալուն պես, ննջում է նորից...

...Նիրհում է ծեր գեներալը, անխոռով ու անշարժ, որպես մի արձան, նիրհում են նրա հետ և իր շուկա բերած փրերը...

1922

Ա Ն Ց Վ Ո Ր Ը

Քաղաքի ամենալավ փողոցով՝ երթեմն այնքան սովոր և այժմ անշափի խորթացած՝ անցնում է նախկին հարուստ Աղասյանը:

Մի ժամանակ նա թեթև սլանում էր ավտոյով, կառքով, խոկ այժմ անցնում է հազիվ ոտները քարշ տալով, ասես ամեն ինչ ետ է մզում նրան, ամեն ինչ փշերի նման կառչում է շորերից:

Երթեմնի գեր մարմինն իր ազդեցիկ, հաստ փորով, այժմ ներս է ընկել, նիհարել: Ու բկի երկծալ կաշիները, որ նրա կարողության ուժն էին ներշնչում՝ այժմ դատարկ կախ են ընկել ու շարժվում են, որպես ավելորդ լաթեր:

Մի ժամանակ երեք բժշկով պահված այդ մարմինն այժմ բնության կամքին հանձնած՝ թանշում է, հեռա խոռոշուկ կառքի նման:

Սանր շունչը չի հնազանդվում, խեղոռամ է նրան, շրակալած աշքերն այրվում են ու ականջները թշուամ անհանգիստ ժխորով. շուրջն ասես բոլոր ձայները կանչում են միաբերան.

— Անցի՛ր... անցի՛ր...

Զեռքին բռնած մի կեղտոտ տոպրակ՝ մեջը մի կտոր հաց, գնում է նա ու անիծում այս աշխարհը, որ դարձել է նրա համար մութ գերեզման:

Ողջ անցյալում՝ որին տիրում էր նա որպես իշխան, չա կուզեր ձբացած լինել այդ անցյալի հետ...

Բայց ի՞նչ... նա ապրում է տակալին, կենդանի է ու
կարծես մհուած, շրջում է որպես ուրվական:

Փողոցի անկյունում, իր նախկին պալատի տուազ նա
հանգ է առնում փոքր ինչ շունչ քաշելու:

Ո՞վ է այս փողոցի անկյունում իր տունը նորոգում:
Անշուշտ խելագար է նա, որ շինուած է, նորոգում...

— Հը, չե՞ս ճանաշում, ես Արշակն եմ...

— Ո՞ր Արշակը:

— Ես տունը շինուղը: Միտք է, որ ինձ խոստացար
ասիր տոմը վերջացնելուց հետո մի ձեռք շոր կտամ... Խոս-
տացար ու վերջը շտվիր: Է՞զ, զիմի տոմը մնաց իր շինող-
ներին...

— Արշակ, դո՞ւ ես, ո՞ւմ համար ես շինում... թա՛րդ
տուր: Է՞զ, ինձ համար շինեցիր ես պալատը, բայց ո՞ւմ
ձեռն ընկալ, ի՞նչ օրին հաստ ես...

— Հա՛, ասեցի, տոմը մնաց իր շինողներին...

— Է՞զ, մի՛ նորոգիր. թող քանդվի, կործանվի ամեն
ինչ...

Ասում է ու շտապում հեռանալ այս անհյուրընկալ վայ-
րից, ուր ամեն մի հիշողություն փշի նման ծակում է նրա
սիրտը:

Իսկ Արշակը՝ բարձր շվացնելով շարունակում էր իր
դործը:

...Անցնում է նախկին տերը, հազիվ ուժները քարշ տա-
լով, գնում է ու անիծում էս աշխարհը, որ դարձել է նրա
համար մութը գերեզման:

Ու փողոցի անհանգիստ ժիսրը միաբերան կանչում է,
թշշում նրա ականջին.

— «Անցի՛ր... անցի՛ր»...

Բայց ի՞նչ... նա ապրում է տակավին, կենդանի է ու
կարծես մեռած, շրջում է որպես ուրվական:

Փողոցի անկյունում, իր նախկին պալատի տուազ նու
կանգ է առնում փոքր ինչ շունչ քաշելու:

Ո՞վ է այս փողոցի անկյունում իր տունը նորոգում:
Անշուշտ խելագար է նա, որ շինում է, նորոգում...

— Հը, չե՞ս ճանաշում, ես Արշակն եմ...

— Ո՞ր Արշակը:

— Ես տունը շինողը: Միտի է՝, որ ինձ խոստացար
ասիր տունը վերջացնելուց հետո մի ձեռք շոր կտամ... Խոս-
տացար ու վերջը շտվիր: Է՞զ, ճիմի տունը մնաց իր շինող-
ներին...

— Արշակ, դո՞ւ ես, ո՞ւմ ճամար ես շինում... թա՛րդ
տուր: Է՞զ, ինձ ճամար շինեցիր էս պալատը, բայց ո՞ւմ
ձեռն ընկալ, ի՞նչ օրին ճասաւ ես...

— Հա՛, ասեցի, տունը մնաց իր շինողներին...

— Է՞զ, մի՛ նորոգիր. թող քանդվի, կործանվի ամեն
ինչ...

Ասում է ու շտապում Ճեռանալ այս անհյուրընկալ վայ-
րից, ուր ամեն մի Ճիշողովյուն փշի նման ծակում է նրա
սիրտը:

Իսկ Արշակը՝ բարձր շվացնելով շարունակում էր իր
գործը,

...Անցնում է նախկին տերը, ճաղիվ ոտները քարշ տա-
լով, գնում է ու անիծում էս աշխարհը, որ դարձել է նրա
ճամար մութը գերեզման:

Ու փողոցի անհանգիստ ժխորը միաբերան կանչում է,
թշշում նրա ականջին.

— «Անցի՛ր... անցի՛ր»...

Երեք տարի առաջ էր, երբ Մահմեդը՝ ամեն առավոտ,
դեռ լույսը լքացված՝ շալակում էր իր տղային ու շտապում
գեպի քաղաքի ծայրը՝ խալիչայի արհեստանոցը։ Փողոցում
նա պատահում էր իր նմաններին։ Խումբն անցնում էր մըթ-
նում խարիսափելով՝ ոտարորիկ, պատուած շորերով, ծանր
գլուխներով ու քաղցած փորերով։ Շատերը Մահմեդի պետ՝
ոսկրացավով հիվանդ երեխանների շալակած՝ տանում էին
իրենց օգնելու, որ փոքր ինչ ավելի վաստակեն։ Անիծում
էին ու գնում. — ինչ որ ստանում էին, հացի փող հաղիվ էր
դառնում. գնում էին մեռնելու՝ ապրելու համար...

Քաղաքի ծայրին՝ խոնավ, կիսավեր դարբասում լույսը
բացվելուն պես սկսվում էր տաժանակիր գործը։ Ամենքը
բռնում էին իրենց տեղերը՝ դազգահների մոտ և Մահմեդը՝
նկարն առաջին, իր անուշ ձայնով երգում, թելագրում էր թե
ո՞ր թելը որին կցեն։ Բանվորները խումբ-խումբ կրկնում էին
նրա երգը.

Կարմիր թելը կանաչին,

Կարմիր թելը կապույտին...

Կրկնում էին ու լը՝ թիւկ... լը՝ թիւկ, շարժում դադահ-
ներն ու նախշում թելերը շարում խալիչայի մեջ։

Ամեն կեսօրին՝ նամազից հետո, գալիս էր արհեստանո-
ցի տերը, լուս ընդունում խոնարհ բարեները։ Նա գիշատիչ
հայցքով շփում էր մորուքը, ու գիտում իր հերթական գո-
չին, որին պիտի հայցոյի և սպառնա, որին ծեծի ու վոնդի-
նրա տեղը մի ուրիշ՝ ավելի արժան բանվոր դնելու համար։

Նա ամեն ինչ գիտե, նույնիսկ ճանճերի շարժումը։ Ար-
հեստանոցի պահապան Ալին, որին «անոթի Ալի» էին կոչում,
իր շիլ աշքերով ամեն ինչ գիտում էր, լրտեսում։ Հատ անգամ
նա ստիպված հնարում էր ու պատմում տիրոջը։

Հավատարիմ Ալին, տկլոր ու կիսաքաղցած՝ միայն տի-
րոջ անոնով էր կշտանում. այդպես էր արևելյան վաճառա-

կանի օրենքը. — ռազմակալան շուրջ երբնք շպիտի կշտանա, որ ծառայի հավատարիմ»...



Ասկրացավի բուն էր խոնավ արհեստանոցը։ Հիվանդ էր Մահմեդը, հիվանդ էր նրա տղան ու ողջ արհեստանոցը։ Բայց քանի ոտքի վրա էր, քանի երեխային կարող էր շալակով գործի տանել, նա հիվանդություն չէր անվանում այդ, այլ աղքատություն։

Բայց մի օր ճակատագիրը հարվածեց նրան ընդմիշտ ու անդարձ։

Մի առավոտ, երբ նա՝ շալակած երեխային, արհեստանոց էր գնում՝ տղան հանկարծ հառաջեց ու ասաց խորհրդավոր ձայնով։

— Հայրիկ, ես քո զավակն եմ, դու ինձ սիրում ես, չէ՞... Տա՛ր ինձ, փորի՛ր գերեզմանը, մեջը դիր... մի տանիլ ինձ խալիշայի արհեստանոցը...

Մահմեդի ծնկները թուլացան։ Նա հանկարծ զգաց, որ կյանքի թելը կտրվեց իր մեջ, ու էլ ոչ մի հաշիվ չունի այս աշխարհում։

Հետեւյալ օրը նա մենակ գնաց գործի. երեխան արդեն կոնդացել էր և չէր կարողանում շարժել նույնիսկ ձեռները։ Երգում էր, թելադրում Մահմեդը, բայց ծանր դարդն իր սրտում՝ մտազբաղ. երբեմն նույնիսկ մոռանում էր ու «կարմիր-կապույտ թելերի» տեղը տիտուր բայցաթի էր մոռում։ Աշքերն արդեն այրվում էին, պղտորվում. մի քանի անգամ խալիշայի նկարը խառնել էր ու թելերը շփոթել։

Իսկ աերը ամեն ինչ գիտեր ու գիշատիշ բազեի նման իր մաղձուր աշքերով պտտվում էր Մահմեդի շուրջը, մորուքը շփելով։

Ու մի օր էլ նա կատաղած, փրփրած հարձակվեց Մահմեդի վրա ու ծեծելով, թքելով դուրս շպրտեց փողոց, լավ հիշելով իր վաշխառու հոր կորատը.

— «Մի մարդու, որ քամեցիր ու մղեցիր իսպառ՝ զուրս
շպրտիր փողոց»:

Ամեն առավոտ երեք ստվերներ՝ մահվան դատապարտ-
վածների դալկությամբ ծանր անցնում են փողոցով։ Փոքրիկ
աղջիկը շարսավի մնացորդներով ծածկված՝ առաջնորդում է
կոյք հորը գեպի շուկա։ Հոր շալակին իր կոնդ տղան է, իսկ
ձեռքին իր տիսուր սաղը։ Բերում է դրանց փոքրիկ աղջիկը,
հարսցնում փողոցի մի անկյուն ու ամոթխածությամբ ետ
փախչում շտապով։

Հայրը տնքալով ու հառաշելով վայր է դնում տղային,
լարում է իր սաղն ու սկսում երգել իր մեծ դարդը, իր «խա-
լիչան»... Հյուսում է իր երգն ու սպասում անցորդների ողոր-
մության։

Կարմիր քելը կանաչին,
Կարմիր քելը կապույտին,
Հե՞յ, խալիշա, խալիշա...
Արիշի ոտքերը փափկացրիր,
Երեխիս ոտքերը տարար,
Հե՞յ, խալիշա, խալիշա...

Զայնը մղկտում է, այրվում, պատերը կոծում, բողոք
քում, ու մնում անդարման, որպես ամեն ինչ արևելյան էն
քաղաքում...

ԱՐԾԱԲԻ ՏԱԿ

Աժդահան, վիթխարի այդ մարդն անշուշտ երանի մեծ Հերոսների ժառանգներից էր: Բարձրահասակ, լայնաթիկունք, խոշոր, գեղքով՝ խոհեմ մորուքի ու խիտ սև հոնքերի շրջանակի մեջ: Կապտավուն աշքերում նախնական համատ ներշրնչող մի փայլ կար, և միաժամանակ՝ անվախ ու անշարժացացք՝ կյանքի բոլոր արհավիրքների վեմ:

Սակայն զենքը ու զերծի տեղ նրա վրա կար միայն մի մեծ փալան:

Բեռնակիր մշակ էր Հասանը, բայց ծանրովիշտունների Հետ նա կարծես խաղ էր անում: Ապրանքների ծանը հակերն ուսին՝ վազում էր, թոշում:

Բայց ո՞ր չար աշքը նրան դիպավ, ո՞ր սատանան նրա մեջ մտավ ու ավերեց էն լիումարմինը:

Մի օր առավոտից երեկո նա անընդհատ ապրանք կրեց, լցորեց եկրոպական մեծ պահեստն ու երբ քրոնքի մեջ լողում էր, մի քամի եկավ, «սաթլջամ» բերավ նրա վրա ու անկողին ձգեց մի ամբողջ ամիս:

Նրա միակ բժիշկը մայր բնովիշտունն էր, որն այրող տենդի մեջ կյանքի թելն էր պահպանում:

Երբ նա ուշքի եկավ, առաջին ձայնը որ լսեց, իր կնոջ Հառաշանքն էր ու չորս երեխաների ճիշը.

— Բարա, հա՞...

Այդ ճիշը սուր ասկզներով ծակծկում էր նրան, ու դեռ տակավին շամոքված, նա վեր կացավ, մեջքին դրեց իր փաշանը և օրորվելով դիմեց իր ծանոթ շուկան:

— «Մի մարդու, որ քամեցիր ու մղեցիր իսպառ՝ դուրս
շպրտիր փողոց»:



Ամեն առավոտ երեք ստվերներ՝ մմհվան դատապարտ-
վածների գալկությամբ ծանր անցնում են փողոցով։ Փոքրիկ
աղջիկը չարսավի մնացորդներով ծածկված՝ առաջնորդում է
կույր հորը դեպի շուկա։ Հոր շալակին իր կոնդ տղան է, իսկ
ձեռքին իր տխուր սազը։ Բերում է դրանց փոքրիկ աղջիկը,
հասցնում փողոցի մի անկյուն ու ամոթխածությամբ ետ
փախչում շտապով։

Հայրը տնքալով ու հառաշելով վայր է դնում տղային,
լարում է իր սաղն ու սկսում երգել իր մեծ դարդը, իր «խա-
լիչան»... Հյուսում է իր երգն ու սպասում անցորդների ողոր-
մության։

Կարմիր թելը կանաչին,
Կարմիր թելը կապոյտին,
Հե՞յ, խալիչա, խալիչա...
Ռորիշի ոտքերը փափկացրիր,
Երեխիս ոտքերը տարար,
Հե՞յ, խալիչա, խալիչա...

Զայնը մղկտում է, այրվում, պատերը կոծում, բողոք
քում, ու մնում անդարման, որպես ամեն ինչ արևելյան էն
քաղաքում...»

Նորից շարժվում է դանդաղ, երերում։ Ահա անգլիական բանկը. բայց ո՞քան հեռու է թվում։

Օ՛, երբեք իր կյանքում նա այսպիսի սոսկալի ճիղ չի արել...

Աչքերը մթնում են. նա չդիտե, երազո՞ւմն է, թե՝ արթում է, շարժվում է, բայց թվում է, թե ինքը չի այդ անում, այլ մի ուրիշ ուժ մղում է իրեն։

Մոտենում է բանկին։ Սանդուղքները որբա՞ն բարձր են...

Հասանը մի վերջին ճիղ է անում, մոտենում է սանդուղքներին, բայց առաջին աստիճանի վրա ոտքը դնելուն պես վայր է ընկնում...

Արծաթը զնդում է ու լուսմ. մի խոր հառաչ է ենում Հասանի կրծքից, վերջի՞ն հառաշը... Արյունը հոսում է նրա բերանից ու ներկում սանդուղքի շիկացած աստիճանները։

Լուս ու անտարբեր նայում է բանկը. լուս ու արձամարդող հայացքով անցնում է հաճախորդ վաճառականն իր քարցած դեմքով. չի շտապում նույնիսկ բանկի պահապանը։

Ընկած էր Հասանը, որպես մի զո՞հ մեհյանի առաջ նրա շրթումքների վրա զայրուցի անեծքն էր զրոշմվել՝ իր միակ ժառանգությունը, որ նա թողնում էր քաղցած երեխաներին։

Իսկ էն բարձր մինարեից կրոնավորը զիլ ձայնով կեսօր-վա ազանն էր կանչում, կարծես ասում էր ընկած Հասանին.

«Այսպե՞ս է... այսպե՞ս է... օրենքը երկնքի և երկրի»...

ՀԻՆ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

— Գնե՛ք էս պատի ժամացուցը... լսովն է, կծառայի չեղ երկար, անխափան... Տեսէ՛ք, ինչ պինդ փայտից է... Գուցե կուզեք պահարա՞նը...

Ասում էր պառավ կինը շուկայի անկյունում, ցուց տալով հին, փորբ դուրս ընկած պահարանն ու նրա վրա դրած ժամացուցը: Նրա դեմքը բազմաթիվ կնճիռներով ակուված է, նա աղերսանքով նայում է ամեն անցնողի ու խոնարհ աշբերով՝ պառասում պատասխանի:

Սակայն անցորդներն աշքի տակով նայում են այդ տարօրինակ, հին իրերին և ոչ մի կապ չկանց հետ՝ հեռանում են՝ մեկը ժպտալով, մյուսն ուսերը վեր քաշելով:

Ճիշտ որ տարօրինակ ժամացուց է: Նա այնքան հազվագյուտ է, որ այժմ էլ ընկեր չունի: Կինամոնակույն, տեղտեղ մաշված ու դեղնած, ներքեր լայն, ասես ծալապատիկ նստած բուդպայտական կուսք լինի, նույնիսկ աշքեր էլ ունի, որոնց տեղ բանալիների անցքերն են՝ ծառայում. — մեռած աշքեր, որոնք նայում են քարացած հայացքով: Նիշար, հոռմեական թվանշանների շրջանակի վրայով պտտում են սլաքները, ասես ամաշելով իրենց շարժումից: Իսկ ճոճանակը՝ լայն պղնձե այդ ստրուկը, ծանր հեալով անցնում է աշից ձախ, ձախից աջ, ու ամեն անգամ հասնելով մեջտեղը՝ ասես գաղտնի տնքում է մի հին ցավից ու նորից շարունակում իր ճամփան, միալար ու տաղտուկ:

— Զը՛կ... չը՛կ... չը՛կ...

Ու այս հին իրերին ներդաշնակ է պառավի զգեստը, նրա

ու շորերն ու զլխարկը հագնում էին տարիներ առաջ, իսկ այժմ նրանք հնություն են, թեպետև խնամքով պահպած:

— Գնե՞ք էս ժամացուցը, — կանչում է պառավ կինը, — իսկ եթե կուղեք, այս ալբոմն էլ կծախեմ, շատ գեղեցիկ է... լավ հիշատակ... էօ, չի ծախիլ, բայց ի՞նչ արած...

Սակայն անցորդները դարձյալ չեն զնում ոչ մի բան: Պառավը բոպեապես լուսմ է և բաց է անում ալբոմը: Պատահմամբ նա թողել է մեջը ամուսնու պատկերը... Ահա և նա, —օրինավոր մորուքով ու բեղերով, ակնոցավոր, խոժուած դեմքով մի մարդ, որը միշտ վախ էր ազգում ամենքին, նույնիսկ իր կնոջը, մանավանդ երբ հագնում էր իր փայլուն կոճակներով՝ մարմնին պինդ կպած համազգեստը:

Կինը նայում էր պատկերին ու բոպեապես սեանում մըտքով գեպի անցյալը, տեսնում է մի ընտանիք, ծանր կահավորումով սենյակներ, սեղանի մոտ մի դաժան ամուսին, մյուս սեղանին դասերը սերտող վախկոտ երեխային ու... լուսթյուն, լուսթյուն: Ամեն ինչ հղու հնագանդ էր այնտեղ... նույնիսկ հեշտայեն ասես վախենում էր պինդ ձայն հանել, իսկ ինքը՝ կինը, որը փափսում էր նրա շորջը, ոտքերի ծայրերով էր ման գալիս, որ չգրգռի իր ամուսնուն... Այդպես էր և պատինը, որը համարյա չէր խոսում, այլ միայն կատարում էր հրամանները՝ աշքերը ցած գցած:

Եվ ժամացուցը՝ այդ հնագարյան կուռքը, իր բուի աշքերով լուս նայում էր ու հավանություն տալիս այդ կաշեանդված կյանքին: Իսկ ճոճանակը, որպես պղնձե ստրոկ՝ անցնում էր աշից ձախ, ձախից աջ և միալար հաշվում էր վայրկյանները...

— Այդ-պե՞ս... այդ-պե՞ս...

...Կինը նայում է ամուսնու պատկերին, խորասուզվում անցյալի մեջ ու մոռանում, թե ո՞րտեղ է ինքը և ի՞նչ է անում:

Նրա մոտով անցնում են բարձր քրքիջով մի խումբ դըպոցականներ, —պիոններներ. կինը սթափվում է, վախենում, ապա նորից սկսում.

— Գնեք էս ժամացույցը. շա՞տ լավին է, տեսեք ի՞նչ
ամուր է... Նա կծառայի ձեզ երկա՞ր, անխափան...

Աշ ոք չի մոտենում հնավանդ՝ երկու թպդավորների շըր-
ջանով անցած ժամացույցին, որ միայն ինքը գիտե, թե ինչ-
պես խարիսով է իր ներսը, թե ինչպես տարիները խանդարել
ու մաշել են իրեն...

Իսկ ճոճանակը պառավ-պառավ շարժվում է աջից ձախ,
ձախից աջ, և հասնելով մեջտեղը, կարծես դադտնի տնքում
է մի հին ցալից ու հառաշում.

— Մեռն՝ ամ եմ... մեռ-նո՞ւմ եմ...

1924

ԿԱՐՄԻՐ ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

I

190... թվի ամառը ուսանող Փանչանը աքսորվել էր Մոսկվայից, որպես ուսուցիչոներ և ապրում էր ոստիկանության հսկողության տակ:

Երկու շաբաթ անգործ ու անփող թափառելուց հետո, նա դժել էր մի մասնավոր դաս և նրա հույսով վարձել սենյակ քաղաքի ետ ընկած թաղում: Սենյակի միակ պատուհանը նայում էր նեղ ու ծուռ փողոցին, իսկ հորիզոնը ծածկում էր դիմացի հին տունը, որի պատը՝ ծծված երկար տարիների խոնավությամբ, վաղուց էր կորցրել իր երբեմնի սվաղը, բացելով հին ձեմի աղյուսների շարքերը: Սենյակն այնքան փոքր էր, որ նրա մեջ զգալի տեղ էին գրավում ուսանողի գրքերը:

Տանտիրություն՝ հին սովորություններով մեծացած մի կին, երկյուղ էր զգում այդ հաստ գրքերից ու պատերին կպցրած երկար մաղերով պատկերներից: Բայց ամենից շատ նրան անհանգստացնում էր ուսանողի «անգործությունը». նա համարյա ամբողջ օրը նստած գրքեր էր կարդում: Միքանի օր դիտելուց հետո՝ նա ասաց իր ամուսնուն, որը ճոթեղենի վաճառական էր.

— Գիտե՞ս, մեր նոր կենողը ուրիշ տեսակ մարդ է երեւլում, մի գլուխ գրքեր է կարդում ու պատերին էլ կպցրել է երկար մաղերով «ֆարմասունների» պատկերներ:

— Հիմի ասելու ի՞նչ է. վախենում ես ես էլ ֆարմասիոն զառնա՞մ:

— Զէ, է՞ն էի ասում, որ անդործ է երևում. ի՞նչով պետք է սենյակի վարձը տա:

— Հեր օխնած, եքա տղաւ է, մի հինգ մանեթ չի՞ ճարի որ տա:

Տանտիբուհին հանգստացավ, նկատելով որ ամուսինը չի բարկանում իր արած «սխալի» համար: Բայց նրա հետաքրքրությունը զրգում էր ուսանողի տարօրինակ կյանքը, ուստի և շարունակ խուղարկու հայացքով հետեւում էր նրան:

Ամեն անգամ, երբ ծառան աշխալոյժ շարժումներով մաքրում էր ուսանողի սենյակը, տանտիբուհին ներս էր մտնում, իբր թե օգնելու համար, բայց խսկապես նրան տանողը կանացի հետաքրքրությունն էր. նա ուշի ուշով զննում էր ուսանողի սեփականությունը:

Սեղանի վրա մի հաստ գիրք կար. ո՞վ գիտե, «զակոն» էր, ավետարա՞ն թե մի ուրիշ, ավելի խորհրդավոր գիրք... Մի օր էլ շամբերեց, կանչեց հարևանի փոքր տղային ու ցույց տալով հարցրեց.

— Երվանդ, էս ի՞նչ գիրք է:

— Վրեն «Կապիտալ» է գրած:

— Կապիտալը ի՞նչ է:

— Ռուսերեն է, չգիտեմ:

Ամբողջ օրը տանտիբուհին կրկնում էր մտքում «Կապիտալ»-ը խառնելով «կլապիտոնի» հետ: Երբ երեկոյան վերադարձավ ամուսինը՝ նա հարցրեց.

— Սերգո, կապիտալը ի՞նչ բան է:

— Բա վաճառականի կնիկ ես, չես խմանո՞ւմ... կապիտալը փողն է էլի՛...

— Փողը... ինչ խելոք է էլել մեր նոր կենողը, մի գիրք ունի՝ վրեն կապիտալ է գրած, միշտ էն է կարդում:

— Երեխ ուզում է հարստանալ, ի՞նչ կա, հիմի ամենքը գիշեր-ցերեկ հարստանալու մասին են մտածում:

«Երելոք տղեն» այդ օրվանից նատեց տանտիբուհու մըտքում: Շուտով նա ավելի ամրացավ, այդ համողմունքի մեջ,

Երբ իմացավ, որ Փանչանը մասնավոր դաս ունի: Այժմ աշակերտը ինքն էր գլուխ պարապելու ուսանողի մոտ:

Եվ քանի որ տանտիրուհին մի անբժշկելի հիվանդություն ուներ՝ իր բարեկամներին ու ծանոթներին ամուսնացնելու հիվանդությունը՝ ուստի այդ տեսակետից էլ սկսեց մոտենալ և Փանչանին:

«Խելքը տղա է, ուշք ու միտքը փողի վրա... Էսպես տղին կսազի մեր նատալիեն... Մեղք է քուզրս, աղջիկը հասել է, չի իմանում ո՞նց ճամփու դնի»:

Եվ աշա այդ մեծ հարցը սկսվեց քննության առնվել երեկու քուզրերի մեջ: Տանտիրուհին հայտնում էր քրոջը իր դիտողությունները ուսանողի մասին, մասամբ ծածկելով թերի կողմերը:

Ծրագիրն իրագործելու համար տանտիրուհին երեկոն հրավիրում էր ուսանողին թեյի կամ սուրճի, հյուրասիրում քաղցրավենիներով, թխվածքներով ու զգուշությամբ հարցեր տալիս, նոր «Հանգամանքներ» իմանալու համար:

— Որ ուսումն ավարտեք, ի՞նչ պետք է դառնաք:

— Ադվակատ եմ լինելու:

— Լավ գործ է, Ասլանովի պես սեփական տուն, սեփական կառք կոմիենաք:

— Հա՛, իհարեկե, — համաձայնում էր Փանչանը, ժպտալով:

— Բայց մենակությունը լավ չի... ինչի՞ չեք պսակվում:

— Ես ոչ թե ադվակատ, այլ վարդապետ պետք է դառնամ, — կատակով պատասխանում էր Փանչանը:

— Չե՛, հանաքը դենը, եթե մի լավ նամուառվ աղջիկը լի, — օրինավոր ընտանիքից, բաժինքով, չեք ուզի՞լ...

Ուսանողն զգաց, որ «ցանց» է պատրաստվում, բայց կատակով համաձայնություն տվեց:

— Հա, եթե մի էնպես աղջիկ պատահի, — հարուստ, գեղեցիկ, էն ժամանակ կմտածեմ...

Տանտիրուհին ժպտում էր, հյուրասիրում քաղմատեսակ քաղցրավենիներով ու մտքում ասում:

— Կամաց-կամաց կկակղես... մի օր էլ ոտք թել կկաւ-
ալենք...



Ամառվա արեք մայր մտնելու մոտ էր: Քաղաքի փողոց-
ները, տները, կարծես մեծ հրդեհից հետո անդրագարձնում
էին կուտակած տաքոթյունը, չերմ ալիքներով ողողում ան-
ցորդներին:

Ուսանող Փանյանը վերջացրել էր իր գասը, մի ժամ էլ
կարգացել Բելտովի գրքից—պատմական մատերիալիզմի մա-
սին ու գորս եկել փողոց:

Վերջերս նրան տանից դուրս վանողը իր ողբալի ֆինան-
սական վիճակն էր. երկու օր էր, չէր ճաշել, իսկ այսօր հա-
վաքել էր թամբաքվի վերջին փշտանքները ու հազիվ մի ան-
դամ ծխել: Սենյակի վարձն էլ պայմանավորվել էր սկզբից
վճարել, սակայն բացի խոստումներից դեռ ոչինչ չէր տվել:
Լավ է, տանտիրուհին՝ նկատի առնելով, որ ուսանողը փեսա-
ցու է, քաղաքավարի և փափով ձեռվ էր հիշեցնում, թե չէ
այս կողմից էլ դրությունը ողբերգական կլիներ:

Միակ հույսը մասնավոր դասն էր, բայց դա էլ թարսվել
էր.—ամեն օր մտադրվում էր փողն ուղել աշակերտից, բայց
հենց մոտենում էր ասելու բոպեն, հետաձգում էր մյուս օր-
վան: Ուրեմն մնում էր պարտք անել, բայց ո՞ւմից... բոլոր
ազգուրներն արդեն սպառված էին: Այնուամենայնիվ նա
դուրս էր գալիս փողոց, հուսալով, որ կհանդիպի որևէ ըն-
կերոջ կամ ծանոթի և կփրկվի այս դրությունից:

Նրա արտաքինի վրա աղքատ ուսանողի դրոշմ կար՝
հագին ուսական ձեի կապույտ բլուզ էր, ու վրան կապած
մնջավոր, բարակ գոտի: Շալվարը մաշված էր, սվաղված ու
«հայելի» դարձած. ուսանողական գլխարկը խոնացել էր՝
կապույտից կանաչի փոխվել, իսկ կոշիկները բավականաշափ
կտրկատաններ ունեին:

Փանյանի դեմքը իր խոժուած, խիտ հոնքերով՝ ակնոց-
ների տակից նայող քննական-հարձակողական հայացքով

«Ժխտողական» արտահայտություն ուներ: Մեջը վիստացող նոր գաղափարներից թեավորված, նա պահանջ էր զգում վիճելու, նոր հավատի բերելու ամենքին, տապալելու «բուժուական ամբությունները»:

Փողոցի անկյունում նա կանգ առավ, որոշելու համար, թե ո՞ւր պիտի գնա, ո՞ւմ պիտի դիմի պարտք անելու համար, բայց դրա փոխարեն հիշեց նոր կարդացած դիրքը:

Անասելի շոգից ամեն քայլի հետ քրտինքը վրա էր տալիս: Նեղ փողոցների ծանր, գարշահոտ օդը ճնշում էր: Հասնելով փոքր հրապարակին, Փանյանը հանկարծ ցնցվեց.— «Ելի էս կողմովն անցա՞... գրողը տանի, չէ՞ որ վճռել էի դեսը չգալ...»

Նրա շփոթության պատճառը պատոհանից նայող օրինակն էր՝ իր տանտիրուհու քրոջ աղջիկը: Օրվա որ ժամին էլ անցնեիք՝ կտեսնեիք նրան հրապարակի կողմի պատոհանից դիտելիս: Նայում էր աշքի տակով, բայց նկատում ամեն ինչ, կարծես լուսանկարում էր անցորդներին:

Ամեն անգամ, երբ Փանյանն անցնում էր այս տան առջևից, ընկնում էր շփոթության մեջ: Այնպես էր թվում, թե օրիորդը նկատում է նրա արտաքինի վրա ինչ-որ ծիծաղելի բան,—թվում էր, թե շորն է պատոված, կամ մի բան թարս է հագել, բլուզի տակից շապիկն է երկում, և այն. երևակայությունը պատկերացնում էր մի շարք այսպիսի պատահարներ:

Հենց որ օրիորդը նկատում էր ուսանողին, նա մի առանձին հետաքրքրությամբ սեեռում էր նրա վրա իր հայացքը և աշքերը շորում ագահությամբ, ասես վախենալով, որ կարող է մի բան բաց թողնել առանց նկատելու:

Ու ամեն անգամ իրար տեսնելիս, նրանց մեջ սկսվում էր մի տարօրինակ լուս խոսակցություն, որն այս անգամ կարելի էր թարգմանել այսպես.

Օրիորդը—ի՞նչ ես «ավարա» ման գալիս, պատակվիր հետքս... փող, բաժինք կը երեմ, տուն կդնես, կհարստանաս...

Ուսանողը—Քո բաժինքի հետ գու կը երես և քո սահմանափակ, բաղքենի ուղեղը...

Օրիորդը — ի՞նչ ես շատ երևակայում, — տե՛ս, կոշիկդ
պատռվել է, սպիտակ գուղպան երեսում է... (աշքերը շուծ
դիտում է ուսանողի կոշիկները):

Աւանողը — (շփոթվում է, կարմրում մինչև վիզը) Փո՞ք,
մոռացա, որ կոշիկս պատռված է... գոնք թանաքով սեացնելի
սպիտակ գուղպան...

...«Փետք է վերջ տալ այս կոմեդիային», ասաց ինքն
իրեն Փանյանը, անցնելով օրիորդի «քավարանից»: Սակայն
նա միշտ այսպես վճռում էր ու հետո մոռանում, իսկ տան-
տիրուժին շարունակում էր հարսնախոսությունը, շնկատելով
ուսանողի զավեցական վերաբերմունքը:

Օրիորդն արդեն գիտեր հարսնախոսության մասին: Ամեն
օր երկու քույրերը կշուռպատռմ էին ուսանողին՝ մեկ ոգևոր-
վելով նրա ապագա դիրքով, մեկ կամկածելով: Սակայն դրա-
կանը միշտ հաղթում էր բացասականին, և Փանյանն օր օրի-
վրա ամրանում էր փեսացուի դիրքում:

Նեղ փողոցից զուրս գալով, Փանյանն ընկալ խանութ-
ների շարքը: Վաճառականները՝ նոր զարթնած հետաշյա-
քնից, նստել էին խանութների առաջ ու թմրած աշքերով նա-
յում էին զիմացը, ծուլ-ծուլ հովահարելով թաշկինակներով
բաց էրծքերը: Պիշակները հանած, ժիշեաների կոճակներն
արձակած, նրանք գերազանցում էին իրար փքված փարերով,
կախ ընկած թշերով ու հաստ արյունակալած վզնրով: Եր-
բեմն նրանցից մեկն ու մեկը կոպիտ ձայնով ՚տանշամ էր
գրծակատարին, ապսպրում զովարար խմիչքներ, ու բերե-
լուն պես խմում ուղղակի 22երից:

Փանյանն անցնում էր, թունոտ հայացքներ ձգնով ճար-
պակաւած դեմքերին ու խորհրդածում — «ա՛խ, ոնսլոցիա,
ո՞ւր նո մի դուրս շպրտես այս զիշատիչներին իրենց որչե-
րից»...

Մինչդեռ նա անցնում էր այսպես խորհրդածելով, հան-
կարծ նկատեց, որ իր շուրջը իրարանցում է ընկել: Վաճա-

ուականները շտապ-շտառ վեր էին թոշում, հագնում պիջակները ու կանգնում խանութիւնների առաջ:

Ուսանողը ետ նայեց: Հայտնի հարուստ Թարխանյանն էր գալիս: Այսօր նա բավական ուշ էր վերադառնում իր գրասենյակից՝ երեխ մի անակրնկալ լուր էր ստացել:

Նրան ուղեցում էին մի խումբ աշքի ընկնող վաճառականներ, որոնք սովորաբար միանում էին շքախմբին իրենց խանութիւններից՝ Համբարձում Գերասիմիշին մեծարելու, նրա աշքը բաղցրացնելու համար:

Թարխանյանը գալիս էր ծանր, իշխովի քայլերով, ու քայլերի հետ զուգընթաց կանոնավոր շեշտով խփում էր դետնին իր արծաթագլուխ ձեռնափայտը: Միահեծան իշխանի նման նա ծանրացնում էր իր ամեն մի շարժումը և թունոտ հաճուցքով ընդունում իր վրա դարձրած հպատակվող հայացքները: Նրա գոռող գեմքը՝ իր վրա խոժուած հոնքերով, ջղուա կնճիռներով ու գազաղած աշքերով մի ձգտում էր ցուցադրում ընկճելու, ստորացնելու մարդկանց: Խանութների առաջ շարված վաճառականները խորը գլուխ էին տալիս, բայց թարխանյանը ձեւացնում էր, իբր չէր նկատում: Իր շուրջը պատած վաճառականները, մեկ մեկու առաջ կըտքելով, խոսում էին հետը, ամեն կերպ աշխատելով իրենց վրա դարձնել ուշադրությունը, բայց նա շահելու էր տալիս ու աշ ու ձախ դարձնելով գեմքը, մերենաբար կրկնում.

— Հը՞:

Խոսողը նորից էր կրկնում իր ասածը, բայց թարխանյանը իր արհամարհող բարձրությունից ողորմության պես ուշադրության մի փշրանքն էր ձգում ու համարյա մերենաբար կրկնում:

— Հա՞...

Ու այս «Հը»-ի և «Հա»-ի մեջ նա դիրիժյորի նման դեկավարում էր շրջապատի քծնող վաճառականներին:

Մի բոպե թարխանյանի և ուսանողի հայացքներն իրար հանդիպեցին. Թարխանյանի մեջ մի անախորժ զգացում ան-

ցավ Փանչանի շխոնարհվող դեմքից, որը նրա աշքի համար անսովոր ու խորթ էր:

— Էս վարժապետին մտիկ, — ասաց նա իր կողքի վաճառականին, — Հենց իմանաս վեկսիլը «պրոտեստ» է գնացել...

— Քաղցած ստուդենտ է երևում, — Ժպտալով ավելացրեց վաճառականը ցածր ձայնով:

— Հաջիվը մեկ է, մազերը երկար, շերը՝ դատարկ...

Ուսանողը կանգնել էր հպարտ ու ձիգ և հեգնող ժպիտը դեմքին, շեշտակի նայում էր Թարխանչանին՝ լսելով նրա խոսքերը: Նա ասում էր մտքում:

— Պատմության դիալեկտիկան քո գերեզմանն է փորում օր ու գիշեր...

Թարխանչանի շքախոսմբն արդեն անցել էր, բայց Փանչանը մի քանի րոպէ դեռ նայում էր Հետեկից: Ապա սթափիլելով, նա ամուր խսից գետնին ձեռնափայտով ու շարունակեց իր ճամփեն:



Մեծ հրապարակի անկյունում Փանչանի աշքին ընկալ «Պարիկմախեր Ժորժ»-ի ցուցանակը: Բացի ճակատի մեծ ցուցանակից, կար և մի փոքրը՝ վարսավիրանոցի անկյունի ուղղությամբ: Քամին ծռել էր ցուցանակը և «պարիկմախերի» տեղ թողել միայն «մախերը», բայց ինչպես երևում էր՝ Ժորժը (կամ դաշտախեցի Գևորգը) դրա մասին իսկի չէր էլ մտածում:

Ուսանողը ներս մտավ վարսավիրանոց: Նրա առաջ բացվեց մի հոյակապ տեսարան՝ մեծ հայելու առաջ, գլուխը մարմարե սեղանին հենած, քնել էր Ժորժը և խռմփացնում էր իր մեծ քթով: Մի առանձնահատուկ վարսավիրային անուշահոտություն էր տիրում ներսը, որից այդ զոգ պահին կարելի էր ուշաթափել:

Ուսանողը մտադիր էր հիմնովին սափրելու մորուքն ու բեղերը՝ դեմքը փոխելու նպատակով, որովհետեւ երեկոյան պիտի գնար բանվորական ժողովի: Բայց Ժորժի կառավագություն

այնքան համոզիչ էր, որ նա սիրտ շարավ զարթեցնելու, մասնավանդ որ ապառիկ պիտի սափրվեր:

Անցնելով բուլվարը, նա՝ ըստ սովորության կանգ առավ գրախանութիւ առաջ՝ նոր լուս տեսած գրքերին աշք ածելու համար: Եթե ուզում էր անցնել վիտրինայի երկրորդ մասը, հանկարծ նկատեց աջ կողմից մի մարդ, որը կասկածելի թվաց.—թեպետ հագել էր բանվորի հասարակ շորեր, բայց երեսում էր՝ ինտելիգենտ էր, և իրեն բանվոր էր ձևացնում:

Նրան մատնում էին իր գաղտնի հայացքները, որ նա մեկ-մեկ աշքի տակով գարձնում էր ուսանողի վրա ու շինծու անտարբերությունը,—իբր թե իսկի չէր հետաքրքրվում Փանյանի գոյությամբ և միայն գրքերին էր նայում:

«Գաղտնի ոստիկանն է» անցավ Փանյանի մտքով. նա մի քանի բոակ դիտմամբ կանգնեց վիտրինի առաջ, իբր թե շի նկատում ոշինչ, ապա հեռացավ դանդաղ քայլերով, որպեսզի կասկած չհարուցի, մինչև որ հասավ փողոցի անկյունը:

Այստեղ նա մատնեց իր անփորձությունը—թեպետ գիտեր, որ չպետք է ետ նայել, բայց չհամբերեց, ետ նայեց: Գաղտնի ոստիկանը դարձյալ կանգնած էր վիտրինի առաջ և աշքի տակով հետևում էր ուսանողին:

Ծռելով ճամփեն դեպի աջ, Փանյանն արագացրեց քայլերը. նա ընկալ նեղ փողոցների ցանցը ու պտույտ տալով նորից դուրս եկավ քաղաքի կենտրոնը:

«Սա էլ մի բան չէր, մտածեց նա.—փոխանակ հեռանալու կենտրոնից, նորից եկա այստեղ»:

Նա ներս մտավ ժորժի վարսավիրանոցը և սափրվելուց հետո շտապեց դեպի քաղաքային փոքրիկ այգին, որտեղ պիտի հանդիպեր բանվոր Մարգարին:

II

Մի փոքրիկ այգի էր՝ այնքան փոքր, որ միայն անճարացած քաղաքացին կարող էր նրան այգի համարել: Մի քանի ժողոտված ծառեր, մի քանի մարգեր, նստարաններ: Երջա-

պատի փողոցների փոշին ու ազմուկը ազատ մուտք ունեին այնտեղ, այնպես որ կարելի էր նույնիսկ հարց տալ, ինչո՞վ է զանազանվում այդին փողոցից: Կարձ ասած,—փոքրիկ այդին այն իլուզիաներից էր, որոնց մարդիկ հավատում են, ուստի և նա լավ էր կատարում իր դերը:

Ամառվա երեկոներն այստեղ էին համեստ կարողության և համեստ երեակայության տեր մարդիկ,—մանր տնատերեր, երեսուն-քառասուն ստացող ծառայողներ, կոտր ընկած վաճառականներ, հանգստացող ծերունիներ:

Կար մի խումբ, որը համարյա ամեն երեկո գալիս էր, զրավում միենույն նստարանն ու զրոցում, սկսելով եղանակից, ապա անցնում քաղաքականության, կրկնելով փոքրիկ լրագրի փոքրիկ դատողությունները՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի մասին:

Այնուհետեւ պատմում էին պատերազմներից, Հին-Հին բաներից ու վերջը գալիս, կանգ առնում հարուստների վրա, խոսում նրանց նիստ ու կացի, բնավորությունների, թողած կտակների մասին:

Ջրուցում էին հանգիստ տոնով, առանց շտապելու ու մեշ-մեշ բարձր ձայնով հորանջում: Այնպիսի անդորրություն էր տիրում, ասկս վաղոց սահմանված կարգով մի հին սրբագործված պատմություն էին կարգում:

Ու ամեն երեկո, նույնպես որոշ կարգով գալիս կանգնում էր երկնքում՝ այդու դիմաց՝ Մեծ Արքի համաստեղությունը, ու ժպտալով նայում ներքեւ իր յոթն աշքերով, կարծես ուրախանալով, որ երկրի վրա էլ կան համաստեղություններ՝ նույնպես հաստատուն և կանոնավոր բնիթացքով:

Ներս մտնելով այդին, Փանյանը երկու անգամ պտույտ արավ, բայց չհանդիպեց բանվոր Մարդարին: Շառուղիով անցնելիս՝ նա հանկարծ դիպավ իր ընկերոջ, —Միքայելյանին:

— Բարեկ, Աշոտ:

Միքայելյանը կարծես վեր թուավ:

— Փանյան, դու ե՞ս, —հարցորդ խանձլած ձայնով:

— Հը՞, ո՞նց ես... բեր մի ծխեմ, էսօր երջանիկ դրու-
թյան մեջ եմ՝ ոչ ճաշել եմ, ոչ ծխել:

Միքայելյանը հանեց գրաբանից ծխախոտի տուփը — ապա
մի թղթադրամ ու զրեց Փանյանի ձեռքին:

— Ուրիշ ինչ կա, — հարցրեց Փանյանը մեծ բավակա-
նությամբ ներս քաշելով թամբաքվի ծուփը:

— Նույն դրությունը շարունակվում է, — տիսուր պատաս-
խանեց Միքայելյանը:

— Երկի այնքան ես տարված, որ էլ ուրիշ բաների մա-
սին չես մտածում. կարդացի՞ր էն... — հարցրեց նա ցած ձայ-
նով:

— Կարդացի, բայց ուշքս վրաս չեր...

— Ուրեմն դեռ էլի ոտով-գլխով տարված ես:

— Է՞՞, ի՞նչ ասեմ, — հառաշամքի տոնով պատասխանեց
Միքայելյանը, ձեռքը հուսահատորեն շարժելով վերկից ներքեւ:

— Դե՞մ, ցտեսություն, — ասաց Փանյանը շուղենալով
խանգարել նրա միայնությունը:

Միքայելյանը հազիվ լսելի ձայնով հրաժեշտ տվեց ու
շարունակեց ետ ու առաջ քայլել:

Արդեն մի շաբաթից ավելի էր, Միքայելյանը այնքան
հաճախ էր գալիս այստեղ, որ համարյա իր տունն էր դարձ-
րել այս փոքրիկ այգին:

Նրա գաղտնիքն այն էր, որ սիրահարվել էր դիմացի
տանն ապրող օրիորդի վոա, բայց նրա ծնողները, իրենց
ոլայեղը շտեսնելով Միքայելյանին, խստիվ արգելել էին
օրիորդին տեսնվել նրա հետ, նույնիսկ վերջերս տանից
դուրս չեն թողնում:

Ամեն երեկո մի քանի անգամ օրիորդը երևում էր այգու
դիմացի պատշգամբում, կանգնում էր լապտերի մոտ, որ-
պեսզի «Նա» տեսնի ու իր լուսնի նման սպիտակ, թախծուտ
գեմքը դարձնում էր դեպի այգին:

Նույն բոպեկին ուսանողն էլ գուրս էր գալիս այգուց ու
կանգնում փողոցի լապտերի տակ, որպեսզի «Նե»-ն տեսնի,

ու սիրաբորբոք հայացք էր նետում դեպի պատշգամբը, մըր-
Հնջալով սիրային խոսքեր:

Այսպես նայում էին իրար, մինչև որ օրիորդը հիշում էր
մոր խստությունը ու ներա մտնում սենյակը:

«Լուսինը» մայր էր մտնում և Միքայելյանը սրտակտոր
զերաղանում էր այգին ու շարունակում քայլելը մինչև ուշ
գիշեր, լցնելով ծառուղին իր ախ ու վիշով ու թամբարվի քու-
լա-քուլա ծխով:

Բաժանվելով Միքայելյանից՝ Փանյանը մտածում էր—
«Ահա կանցնեն օրեր, օրիորդի ծնողները կհաջտվին, Միքա-
յելյանն էլ կավարտի, կամունանա ու կդառնա մի զոնտի-
կավոր քաղքենի... Այո՛, նա էլ այգում նստած «համաստե-
ղությանն» է պատկանում...

Իսկ «համաստեղությունն» արգեն հավաքվել էր, բազմել
նստարանի վրա: Բայց այսօրվա խոսակցության մեջ ինչ-որ
անհանգստություն էր նկատվում ու ձայներն էլ սովորակա-
նից բարձր էին հնչում:

Խոսում էր տնատեր Բուդաղյանը:

— Ախտեր, ես ասել եմ, և կասեմ՝ օրենքը պետք է էն-
ալես պինդ ըլի, որ էս ճամփից դուրս եկած մարդկանց հա-
սիցը գա: Ճմի խոսքս ի՞նչի վրա է,—իմ տունը, կարելի է
տեսած ըլեք—լավ տուն է, է՞հ լավ կենողներ էլ շատ եմ
ունեցել: Բայց հիմի մի բանվոր է ապրում ներքեմ սենյա-
կում,—ի՞նչ ասեմ, ուղղակի աստծո կրակ է... Առաջվա ժա-
մանակը ո՞վ կլսեր բանվորի կամ արհեստավորի ձենը: Սա
մի ուրիշ բան է, էլ դադար չի տալիս:

— Ի՞նչ է ուզում, —հարցրեց կողքին նայող «նախկին»
վաճառականը:

— Ինչ է ուզո՞ւմ, կոիվ է ուզում, մեկ ասում է՝ տունդ
խոնավ է, ի՞նչի առաջուց իմաց շարիր, մթամ ես խաբել
եմ.... էն օրն էլ կանգնել է, թե տունդ ճեղքած է, պետք
է կամիսա կանշել տամ, որ քննեն, տեսնեն: Մեկն ասի—

տուացինը՝ իմ տունը քանդվելու ի՞նչ ոմի, գրանից էլ լավ տո՞ւն... վրա երկուան էլ ապրանքը իմը չե՞, հավանում չե՞ս,—գնա ուրիշ տեղ, թող իմ խոնավ սենյակը ինձ մնա... .

Հանկարծ նստարանի առաջ պայթեց մի անսովոր, ուժեղ ձայն, որը բոլորովին խորթ էր համաստեղության կարգերին:

— Ստի հերն անիծած՝ թե քո տունը չի քանդվում:

Բուդաղյանը վեր թռավ տեղից.

— Էստեղ էլ գագար չես տալի՞ս,—գրգռված պատասխանեց նա, —ի՞նչ քո գործն է, թե ո՞ւմ տունն ինչպես է, չես ուղում՝ զնա էնտեղ, որտեղից եկել ես:

— Զե՛մ զնա, մինչև գլխիդ կամիսիա չբերե՛մ. ինձ որ խարեցիր, բա քեզ կմարսեցնե՞մ:

— Ապրանքը իմը չի՞... զնա էլի, թե չես ուզում:

— Ի՞նչ ապրանք, էդ որտեղի՞ց է, ապրանքը քո ձեռքով է շինվա՞ծ թե՞ ինձպեսների:

— Խաթա ե՞ս գլխիս. ի՞նչ ես կուպրի նման կպել. ես գիդամ, զու ուզում ես իմ տան գլխին խաթա բերես, համաներողություն կանես, — հենց զուրս անել տամ քեզ, որ իմանաս թե օրենքը որտեղ ա:

— Ո՞ւմ զուրս անես, մի փորձի տեսնեմ...

— Ախպեր, զնանք, էստեղ էլ չեն թողնում մարդ հանց պրստանա...

Ու արագ քայլերով զուրս զնաց այգուց: Նրան հետևեցին Համաստեղության մյուս անդամները, վախենալով որևէ «անկարգությունից»:

* * *

Փանչանը հենց սկզբից նկատեց, որ խոսողը բանվոր Մարգարին էր: Երբ Բուդաղյանը զուրս զնաց այգուց, նա մուեցավ Մարգարին ու թեքից քաշեց:

— Ես ո՞ւր ես, շերևացիր Ժամանակին:

— Դո՞ւ ես, կեոն... չճանաշեցի: Գնանք խոսելով:

Նրանք զուրս եկան այգուց և կանգ առան մոտակա ոչ բանուկ մի փողոցում: Խոսում էին ցածր ձայնով:

— Ժողովը Հետաձգեցինք վաղվան՝ նույն ժամին: Էսօր Հաջողվեց:

— Էս ի՞նչ կովի մեջ էիր:

— Որ իմանաս, թե ի՞նչ ավաղակ մարդ է իմ տան տեսքը, չես զարմանալ, էղ լիբրը գնացել է մատնել, թե մեր տանը ժողովներ ենք անում: Լավ է՝ առաջուց իմացա, թե չէ կարող էինք ծուղակի մեջ ընկնել: Եկան խուղարկեցին, բան չգտան, դե ի՞շա՛րկե, առաջուց մաքրել էի:

— Մի քիչ անգույք էիր խոսում:

— Էնպես կատաղած էի էղ անիծածի վրա, որ Հենց նրա ագուալի ձենք լսեցի, էլ շկարողացա համբերեմ, որ կախաղան էլ տանեին, էլի կասեի: Ա՛խ, մի դրա դատաստանն ինձ տան, ես գիղամ, թե ի՞նչ կանեմ:

— Բայց էս երեկո նրանց «գաստեն» խանգարեցիր:

— Հա, լավ են իրար գտել... սրանք որ կան՝ էն մեծ բուրժուաների մանր-մունք տականքներն են, բայց նրանցից ավելի են Հարահրոց անում: Ռեոլուցիոներների մասին որ լսում են, էնպես են խելքները կորցնում, կարծես ահեղ դատաստանն է գալիս:

— Ուրիշ... ընկերները ո՞նց են.

— Լավ են. Հետզետե գործադուզի տրամադրություն է ստեղծվում: Պետք է ուժեղացնենք կոփովը, միշտ պատրաստ պահենք մեր զենքերը... Ընկեր Լևոն, ճիշտ է, մենք տանջում ենք, բանտարկվում, աքսորվում, բայց վերջը հաղթանակը մերն է... Ասաց ու բռուցիցը ուժեղ թափահարեց:

Տիրեց բողեական լուսավորություն: Մարդարը ուշադրությամբ նայում էր փողոցի ուղղությամբ:

— Տեսնո՞ւմ ես Լևոն,—ասաց նա—Հրեն մեկը էն անելունց մեղ Հետեւում է. կամ ինձանից է կպել կամ քեզանից. ասենք դու «նորընծա» ես, դժվար թե շուտ նկատվես:

«Նորընծա» խոսքից ուսանողը կարմրեց, ինչպես երեխն կարմրում էր, երբ ասում էին—«բեղերդ նոր են դուրս եկելք: Չնայած, որ նա նոր էր ուկոլուցիոն ասպարեզ իջել, բայց իրեն փորձած ռեոլուցիոներ էր հաշվում:

— էսօր մեկն էլ ինձ էր հետևում:

— Դե, ցրվենք, թե չէ կկպչի: Ուրեմն վաղը՝ էլի նույն տեղը՝ ժամի 9-ին: Դու աշ գնա, ես՝ ձախ:

Մարդարը հեռացավ արագ քայլերով, իսկ ուսանողը մի քանի փողոց անցնելով, մտավ կաթնատում, շտապ կերավ մի բաժակ մածում, գնեց ծխախոտ ու քայլերն ուղղեց դեպի տուն:

Լուսինը դուրս եկավ, մի առանձին խորհրդավորություն և քնքշություն սփռելով ամեն ինչի վրա: Ուսանողը գնում էր տուն ամայի փողոցներով, ծխում էր ու խորհրդածում: Այսուհետեւ իր կյանքի նպատակը թվում էր որոշ: Նա իրեն կոշված էր համարում մի մեծ, դժվարին գործի համար, և զգում էր, որ այդ գործը նախ և առաջ պահանջում է անձնազոհություն: Ու երբ մտածում էր անձնազոհության մասին՝ թեթև ամպի նման մի տիրություն էր իջնում. թվում էր, թե կասկածում է իր ուժերի վրա ու հարց տալիս ինքն իրեն՝ արդյոք պլատրա՛ստ է զոհվելու...

Տիսուր ամպը դախու էր, անցնում... իհա՛րկե, նա պատրաստ է զոհվելու այդ վեհ գործի համար...:

Լուսինը նայում էր վերեկից ու թվում էր՝ ավելի էր վեհացնում նրա մտքերը: Երևակայությունը թոշում էր հեռուուր մեկը մյուսից ավելի գրավիշ պատկերներ ստեղծում...

Ահա ընդհանուր գործադուլ է. — իր՝ կեռնի զեկավարությամբ կամբվել է քաղաքի բանվորությունը... Հանկարծ նա նկատում է, որ զորքը շրջապատել է իրենց. — այն վճռական մոմենտն է, երբ պիտի համազարկ տա, ու նա՝ ընկեր կեռնը, մի բարձր տեղից դիմում է զինվորներին.

— Ընկեր զինվորներ. եթե ձեր մեջ չի ցամաքել աշխատավորի արյունը, դարձրեք ձեր զենքը մեր ընդհանուր թըշնամու դեմ...

Եվ հանկարծ... զինվորները ձգում են զենքերը ու գրկախառնվում բանվորների հետ... ուղղուցիան հաղթանակում է ու ընկեր կեռնը հայտարարում է բանվորական դիկտատորական...

Տարված երեակայությամբ՝ Փանցանը չէր նկատել, որ իր բնակարանից առաջ էր անցել: Նա կանգ առավ մի փակուլու առաջ ու ետ դարձավ:

Նորից մտավ իր փոքր սենյակը ու նորից ողջունեցին նրան Մարտի, ինդելսի, լենինի, պատկերները:

III

Ժողովը քողարկելու նպատակով բանվոր Արամը սեղան էր սարքել, զրել էր մի քանի շիշ փինի, երշիկ, պանիր, կանաչի, սեղանի մեջտեղն էլ բազմեցրել էր մեծ հեշտաեռը:

Դրսում նա կանգնեցրել էր իր տասերկու տարեկան տղային, որպեսզի ոստիկան կամ ուրիշ կասկածելի մարդ տեսնելուն պես՝ իմաց անի:

Ժողովականներից արդեն վեց հոգի եկել էին: Վերջապես եկավ և յոթերորդը—Պետրոսը, գունատ դեմքով:

— Քեզ ենք սպասում,—ասաց Մարգարը.—Հը՞, դուրս կասկածելի մարդ հո շտեսա՞ր:

— Զկար: Ես հենց դիտմամբ ուշ եկա, որ մի լավ աշք ածեմ:

— Էդ շները, ինչպես երևում է՝ գործադուլի հուն առել են, էլ գիշեր-ցերեկ դադար չեն տալիս:

— Էդ նրանից է, որ մենք պառակ նանի նման մի գլուխ խոսում ենք ու հետաձգում գործադուլը,—ասաց բանվոր Ստեփանը,—վաղոց պիտի սկսեինք, տղամարդ ենք՝ դեխիկենք գնա, էլ ի՞նչ ենք մի ամիս փիլիսոփայություն անում:

Նա վեր կացավ ու ձեռքերը զրպանում քայլեց սենյակում, նրա լիքը թմբլիկ մարմինը ցնցվում էր քայլերից.

— Դու էլ հենց քո ձին ես քշում,—պատասխանեց Արամը՝ քառասունի մոտ բանվոր, մորուքի ու բեղերի մեջ կորած դեմքով,—մի շորս կողմդ էլ նայի, տես ինչքան անգիտակից ընկերներ ունենք. առանց պատրաստելու շի կարելի սկսել գործը:

— Ե՞ն, դուք էլ միշտ հին երգն եք երգում, — ասաց Ստեփանը, կանգնելով Արամի դիմաց՝ պատրաստ չեն... ետշատ ենք լսել. խոկ ես ասում եմ, պատրաստ չեն լինիլ. դու՛ պետք է քո հետեւից քաշես նրանց:

— Քաշելուն կտրվել էլ կա. պիտի ամուր կապենք հետներս:

— Զարմանալի է, ինչո՞ւ ավագ ընկերներդ էղակես կամաց եք շարժվում:

Բանվոր Մարգարը մոտեցավ Ստեփանի հետեւից ու նրա ականջից քաշեց.

— Դե՛, շատ մի բորբթալ. դու գեռ ժանդարմի ու բանտի երես չես տեսել և լավ կանես՝ քո փորձված ընկերներին հետեւս. շտապողին տղա չի ըլիլ:

— Խակ կամաց զնացողին խոկի աղջիկ էլ չի լինիլ:

— Դե՛, ընկերներ, սկսենք, — ասաց Արամը:

Ուսանող Փանյանը նստել էր թախտի վրա ու հենված մոթաքին՝ մտքում կրկնում էր զեկուցման սկիզբը զանազան վարդանտներով:

— Խոսքը ձերն է, ընկեր Լևոն, — դիմեց Արամը:

Փանյանը երկու անգամ հագաց, զսպելով իր շփոթությունը ու սկսեց, բայց ոչ այնպես, ինչպես ինքը ենթադրում էր. Մի քանի բոպեից հետո շփոթությունն անցավ և զեկուցումն ընկավ իր բնական հունը: Ունկնդիրները հետաքրքրությունը լարած լսում էին ու վարակվում նրա ոգևորությամբ: Պրոլետարիատի անցած արյունոտ կոփվները մշուշապատճենավոր հանձնարարում էին շարունակել պայքարը մինչև վերջնական հաղթանակը: Մեջները կուտակված դժբոհությունը բռնկվում էր ու պահանջում — «Պետք է կռվել...»:

Փանյանը վերջացրեց իր զեկուցումը կոմունիստական մանֆեստի խոսքերով — «Պրոլետարները ոչինչ չեն կորցնի, բացի իրենց շղթաներից, բայց ձեռք կբերեն ամբողջ աշխարհը...»:

Վերջանալուն պես բանվոր Ստեփանը վեր կացավ տեղից ու Փանյանի ձեռքը պինդ սեղմելով, սկսեց թափահարել:

— Ընկեր լևոն, շնորհավորում եմ. տղամարդի պես խոսքեր էին:

— Ընկերներ, ես կարծում եմ, որ մենք էլ հարցերով չպաղեցնենք ընկեր լևոնին, այլ անցնենք գործնական խընդիրներին:

— Ուղղակի խոսենք գործադուլի մասին, — միջամտեց Ստեփանը:

Այդ ժամանակ հանկարծ ներս մտավ Արամի տղան ու շնչառապառ ասաց.

— Մեր կողմը պոլիցիա է գալիս...

Բոլորը վեր թռան:

— Լավ տեսա՞ր, — հարցրեց Արամը:

— Հա, երեք հոգի էին:

— Ընկերներ, պետք է ցրվել, — ասաց Մարգարը:

— Գուցե ավելի լավ է, նստենք իբր թե քիֆ ենք անում, — առաջարկեց Արամը:

— Զէ, էղան կարող ենք բոլորս թակարդն ընկնել, — ասաց Մարգարը. — պետք է ցրվել մեկ-մեկ:

Ուսանողը բանվոր Արամի տղայի՝ Սուրենի հետ դուրս եկավ փողոց:

Լուսինը դեռ չէր ծագել: Փողոցը մուտքն էր ու խորթ ու բորթ: Շտապելուց նրա ոտքը փոսն ընկավ, և հավասարակշռությունը կորցնելով, փովեց փողոցի խիտ փոշու մեջ: Իսկուզն վեր կացավ, շտապ-շտապ թափ տվեց շորերը ու շարունակեց համբան:

Վերջապես հոգնած ու քրտնքի մեջ կորած նա հասավ իր բնակարանը:

Տուն վերադառնալով՝ Փանյանը նկատեց սանդուղքներ՝ և պատշգամքի վրա արտակարգ լուսավորություն: Տանտիրուհու բնակարանից անսովոր ձայներ էին լավում, ըստ երեվույթին՝ հյուրեր կային:

Մտնելով սենյակը, նա մեկնվեց մահճակալի վրա ու

մտածում էր իր ընկերների մասին՝ թե արդյոք կարողացա՞ն ազատվել: Մտածում էր նույնպես՝ թե ո՞րտեղ անցկացնե՞ն այս գիշեր, գուցե կարելի է մի ավելի ապահով տեղ գտնել:

Դուռը ծեծեցին: Նա վեր թռավ, կարծելով, թե ոստիկանությունն է իր հետևից եկել, բայց տեսավ տանտիրություն:

— Էս ո՞ւր ես, ինչքան ժամանակ է, սպասում եմ. համեցեք մեզ մոտ, հյուրեր ունեմ:

— Շնորհակալ եմ, գլուխս ցավում է, չեմ կարող:

— Էհ, ջահել տղեն կասի՞ն, թե գլուխս ցավում է... ա՞րից գնանք օրիորդների հետ ծանոթացնեմ:

— Շնորհակալ եմ, — նորից կրկնեց Փանչանը:

— Զէ՛, չէ՛, անպատճառ պետք է գտն. Էս ի՞նչ է, վեր ես ընկե՞լ, ինչո՞ւ են շորերդ կեղտոտվել:

— Զէ՛, փողոցով կառք էր անցնում, նեղ տեղն ընկաշպատին քսվեցի:

— Դե արի զնանք:

— Լավ, մի քիչ կարգի բերեմ շորերս ու կդամ:

«Աս լավ առիթ է» մտածեց Փանչանը, տանտիրություն գուրս գնալուց հետո. «պետք է բուրժուական կյանքով ապրել, ուսուցիոն գործունեությունը քողարկելու համար»:

Շորերն ու կոշիկները մաքրելուց հետո՝ նա զննեց ամեն ինչ լամպի մոտ, որպեսզի «շխայտառակվի» որևէ պատրութածից:

Երբ նա ներս մտավ, դահլիճում արգեն հավաքվել էին մոտ տասնհինգ հոգի: Բոլորը հանկարծ լսեցին, հետաքրքիր հայացքները դարձնելով Փանչանի վրա:

Ուսանողի բնական շփոթությունը կրկնապատկվեց, երբ հյուրերի մեջ նկատեց տանտիրություն քրոջ ազգկան:

— Ինդիմ, ծանոթանաք, — ասաց տանտիրութին — քրոջ աղջիկն է, օրիորդ նատալիան:

Փանչանը կարմրած մոտեցավ օրիորդին ու առանց նույնելու նրա դեմքին, ձեռքը մեկնեց: Ապա տանտիրութին մոտ տարավ նրան բոլոր հյուրերին ու ծանոթացրեց:

Երկու օրիորդ էին հրամիրել, սեռով ու ագեղ՝ օրիորդ

Նատալիային «Փոն» տալու համար, որպեսզի նա ավելի գեղեցիկ երեար: Կային տիկիններ, գիմնազիստներ, մի զինվորական դպրոցի ուսանող ու տանտիրոջ խանութի գործակառաք:

Օրիորդ Նատալիան նստած էր մի առանձին, ձգված պոզայով, կարծես մի գեր էին հանձննել նրան և շարունակ կասկածում էր—կարող է արդյոք կատարել այդ դերը: Կարճ մարմինը կորսետի մեջ ճնշվում էր, շնչառությունն արգելվում: Շփոթությունից կարմրում էր ու քողարկում իր բնական դաշկությունը:

Փանյանը նստեց պղատ աթուներից մեկի վրա: Դիմացի երկու տիկինները սկսեցին քշիչալ, մեկ-մեկ հայացքը դարձնելով ուսանողի վրա:

«Երեխ արտաքինս են բամբասում,—մտածում էր Փանյանը. ի՞նչ Հիմարություն արի, որ եկա. պարզ է՝ բերել են այս Նատալիայի հետ ծանոթացնելու և «գործը» սարքելու համար...»:

— Ինչի՞ եք սուս կացել, ջաշելներ չե՞ք. ի՞նչ եղավ ձեր խաղը,—ասաց տանտիրուհին:

Դիմնազիստները վեր կացան ու շարունակեցին ընդհատված խաղը: Նորից սկսվեց շարժումն ու աշխույժ ծիծառը: Ուսանողը ինքն իրեն ստիպելով մի կերպ մասնակցում էր, միօրինակ ժամանակ պահելով դեմքին:

Խաղերից հետո մի տիկին նստեց խանգարված պիանինոցի մոտ ու սկսեց վայզսի եղանակը:

Զույգերն սկսեցին պտավել: Օրիորդ Նատալիան սպասում էր, որ Փանյանը իրեն կատաջարկի պարել, բայց ուսանողը շմասնակցեց պարերին:

Երբ օրիորդ Նատալիան սկսեց պարել գիմնազիստներից մեկի հետ, Փանյանը դիտելով նրա կարճ, ճնշված հասակը, ներս ընկած վիզը, խղճահարկեց ու տիսրեց.—«Աղջկան ուզում են մի կերպ սաղացնել և չեն կասկածում, թե ո՞րքան հեռու եմ ես կիսայի դերից...»:

Ընթրիքի ժամանակ առաջուց ծրագրված «զուգադիմու-

թյամբ» օրիորդ Նատալիան և Փանյանը իրար կողքի ընկան: Թամապա ընտրվեց տանտիրուհու առաջարկությամբ իրենց գործակատարը, որին առանձին հրահանգներ էր տված կենացների վերաբերմամբ:

Խոսակցությունը օրիորդի և ուսանողի մեջ չէր կապվում, որովհետև օրիորդը՝ վախենալով տգետ երևալոց, շարունակ շայո» կամ «ոչ» էր պատասխանում, իսկ ուսանողը մտազբաղ էր և դժվարությամբ էր նյութ գտնում խոսելու համար: Հաճախ նրա երևակայությունն անցնում էր նոր խափանված ժողովին, պատկերացնում էր, թե ի՞նչպես ընկերները դուրս են գալիս փողոց, դիտում են չորս կողմը... իսկ հետո, ո՞ւ դիտե, ինչ...

Կենացները զույգ-զույգ էին առաջարկում և ամեն անգամ երգում էին ազգային ու սիրային երգեր: Մի առանձին ողերությամբ և աղմուկով խմեցին օրիորդ Նատալիայի և Փանյանի «Թանկագին» կենացները. բոլորը ցանկանում էին, որ «Արանք հասնեն իրենց մուրագին», ծաղկեն ու առաջադիմեն:

Ուսանողն ընկել էր տրագիկոմիքական դրության մեջ:

«Պետք է վերջ տալ այս հիմար դրության»... «Վաղվանից բոլոր թելերը կկտրեմ»...

«Թանկագին կենացի» վրա օրիորդ Նատալիան խեղդվող ձայնով երգեց «Չայն տուր ով ծովակ»: Վիզը ձգելով, ձիգ թափելով նա երգում էր—

«Սրբյոք գալու է մի օր—ժամանակ՝ տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ»...

Իսկ ուսանողը մտածում էր—«Հիանալի պատկեր... Նատալիան կինս կլինի, Մասիսի գլխին էլ մի գրոշակ»...

Վերջապես հյուրերը վեր կացան: Տիկինները հրաժեշտի ժամանակ հրավիրում էին ուսանողին իրենց տուն:

Երբ բոլորը գնացին, տանտիրուհին մոտեցավ ու ասաց Փանյանի ականջին.

— Հավանեցի՞ր:

— Ո՞ւմ:

— Օրիորդ Նատալիային... որ զիտենաս ի՞նչ ուսկի աղջիկ է, սալ քաղաքում սրա հատը չի գտնվի:

Ուսանողը ծիծաղեց և շնորհակալություն հայտնելով, դնաց իր սենյակը:

— Ո՞ւ, վերջապես աղատվեցի կոմեդիայից,—ասաց ուսանողը, ձգվելով մահճակալի վրա: Մտածում էր, թե ի՞նչ ձեռվ վերջ տա այս հարսնախոսությանը, որը հանաքից դանակի էր անցնում: Սակայն հոգնածությունից նա չէր կարողանում մտածության թելը առաջ տանել և ասում էր—«մաղը կմտածեմ...»:

Աննկատելի կերպով նրա քոմը եկավ, բայց մի քանի րոպեից հետո հանկարծ զարթնեց:

Մուտքի դռան դանդը պինդ քաշեցին:

«Գալիս են խուզարկելու—անցավ նրա մտքով, բայց տեղից չշարժվեց. ականջները լարած հետևում էր ձայներին:

Մի քանի րոպեից հետո դրաի դուռը ծեծեցին: Լսվեցին ոտնաձայներ: Ծանր կոշիկներ էին, բայց զգույշ էին քայլում:

Ահա բարձրանում են պատշգամբը, մոտենում են իր սենյակին...

Հանկարծ կոպիտ ձեռքով դուռը թիսկթիսկացրին:

— Ո՞վ է,—հարցրեց Փանյանը:

— Ոստիկանությունն է, բացեք:

Դուռը բացվելուն պես ներա խուժեցին ժանդարմական սպան, և ոստիկանները շոշապատեցին ուսանողին ու սկսեցին խուզարկել՝ նախ իրեն, հետո էլ սենյակը: Քրքրեցին գրքերը, անկողինը, սպիտակեղենը:

Փանյանն իրեն՝ համարում էր փորձված և զգուշ ուսուցչիներ, բայց ո՞րքան եղավ զարմանքը, երբ հանկարծ գըրքերից մեկի մեջ գտնվեց մի կասկածելի նամակ...

Խուզարկությունից հետո՝ երբ արձանագրություն էին կազմում, ներս կանչեցին տանտիրություն: Երեսում էր, նա չէր

Հասկանում գործի էությունը, որովհետեւ ոստիկաններից մեկը հանգստացնելու նպատակով ասել էր նրան, թե ուսանողին վկա են կանչում մի գործի համար:

Երբ ամեն ինչ վերջացավ, ուսանողը հանձնեց իրեղենները տանտիրուհուն, ասելով թե ինքը գնալու է, և կկարգադրի, որ գան վերցնեն:

— Քա՞ զնում ե՞ս... էլ չես գալո՞ւ... բա հարսնացո՞մ...

Նա այնքան միամտորեն ասաց այդ, որ ուսանողը շկառողացավ ժայիտը պահել:

— Ի՞նչ հարսնացու, — ասաց նա, ապա ավելացրեց մըտքումը, — իմը կարմիր հարսնացուն է...

— Прошу не разговаривать..! Հրամայական տոնով ասաց ժանդարմական սպան:

Ուսանողին տարան բանտը:

ՄՈՎԵՏԱԿԱՆ ԱՌԱՎՈՏԸ

Կարմիր զորքերը մոտենում էին, գրավելով կայարան-
առ կայարան, ու քանի մոտենում էին այնքան ավելի էր
ճեղքվում քաղաքի տրամադրությունը։ Կյանքը բեեռվել էր
երկու ծայրերում.—մի տեղ քաղքենիների շրջանում, կար-
միրների ամեն մի նվաճումը բերում էր իր հետ մղամանջ,
սև գիշեր, իսկ մյուս ծայրում՝ բանտում՝ այդ լուրերն ըն-
դունվում էին ցնծագին խանդակառությամբ։ այստեղ գալիք
ազատությունը շաղկապվում էր վարդապույն արշալուսի
հետ...



...Գիշեր էր, ցուրտ ու խավար։ Բանտի կծու հոտերով
լցված մթնոլորտի մեջ՝ սառը գետնի վրա պառկած էին բան-
տարկյալները։ Աղոտ ու պղտոր լույսի տակ երևում էին ցըր-
տից կծկված մարմինների շարքերը։

Օրվա լուրերը հուզիչ էին,—կարմիրներն արդեն մոտե-
ցել էին նախավերջին կայարանին։ Վաղ առավոտից, բանտը
մեղքանոցի նման բզզում էր, արձագանքելով դրսից եկող
այդ լուրերին։ Այժմ էլ՝ ուշ գիշերին՝ բանտարկյալները քնած
երազում էին ցնցող ուրախության թևերի տակ։ Միայն ան-
կյունում մի խումբ մարդիկ դեռ արթուն քշիչում էին, քննում
մոտալուա իշխանության՝ ուկոմի կազմը...

Կես գիշերը վաղուց էր անցել, երբ հանկարծ զրնդակեն
բացվեց բանտի դուռը և մի դաժան, թավ ձայն գոչեց ձգելով։
— Վըստա՞տ... (կանգնե՞լ):

Բոլորը ոտքի են կանգնում ցնցված, ու բոլորի մեջ փայտող ցրտի սարսուսի հետ ներս է սպրդում մի մռայլ միտք՝ «եկել են գնդակահարելու...»

Կանգնում են երկու շարքով, ու սպասում. բոպեները դիտմամբ ձգում են ահարեկելու համար: Բանտապետը իր երկու պահապանների հետ նայում են, շանթում բանտարկչալներին մոլեզին աշքերով:

Ապա սկսում են կարդալ ազգանունները ձայնի կոշտ, հրամայական շեշտով, ու տեղ-տեղ կանգ առնելով՝ նշաններ դնում ցուցակի մեջ:

Բանտապետը դուրս է կանչում իր ընտրած երկու բանտարկյալներին, ապա ձեռքով նշան անում, որպեսզի մնացածները ցրվեն իրենց տեղերը:

Երկու զոհերը շտապով հավաքում են իրերը, ու արագ շշուկով խոսում շրջապատղ ընկերների հետ. «տանում են գնդակահարելու»—անցնում է շշուկը մեկից մյուսին... մահվան դաժանությունը կասեցնում է խոսքերը... Սեղմում են ձեռքերը. համբուրգով խորը հրաժեշտով.

— Մնա՞ք բարով ընկերներ, մենք էլ չենք դառնալու, — տառամ են նրանք ու բաժանմում:

Հանկարծ վալոդյան, որն ամենափոքրն էր ընկերների մեջ, բղավում է հիստերիկ ձայնով.

— Դահիճնե՞ր...

Բանտապետը ետ է դառնում, կանգնում խմբված բանտարկյալների դիմաց ու մոնշում, արյունոտ աշքերը շռելով.

— Ո՞վ ասաց:

Բոլորը լուսում են:

Վալոդյան ուզում է դուրս ընկնել, ասել, — «ես եմ», բայց համեմից կանգնած ընկերները քաշում են փեշից, հասկացնեալուից կանգնած ընկերները քաշում են փեշից, հասկացնեալուից որ լոի: Բոպեաշափ բանտապետն ու բանտարկյալները աշքերը հառած նայում են իրար, կարծես շափելով իրար ուժերը: Բանտապետը ձեռքը զնում է ատրճանակի պատյանի վրա, ձեացնելով, թե ուզում է հանել: Կատաղի վրեժը բռնը-

Առամ է բանտարկյալներին. թվում է, թե մի փոքր ցնցում ևս՝
առաջ բոլորը կհարծակվեն ու կխեղդեն նրան:

Աւ կարծես զգալով այդ ահավոր բռնկումը, նա սթափ-
վում է, ու բավականանում է միայն պոռալով.

Մալշա՞տ... (լուել):

Ապա մի քանի վայրկյան էլ կանք է առնում, և գուրս
գնում զինվորական քայլերով: Բոլորը զգում են, որ բանտա-
պետը ահից ստիպված նահանջի դիմեց, ու հուզված շրջա-
պատում են Վալոդյային:

— Վալոդյա, — դիմում է ընկերներից մեկը, — մի՞թե չես
հասկանում, որ սրանք մի պատճառ են փնտրում, որպեսզի
բոլորին զնդակահարեն: Մենք չպետք է զուր տեղը նոր զո-
հեր տանք. չ՝ որ մեր ընկերները շուտով կմտնեն քաղաք...

— Չե՛մ կարող համբերել, հասկանո՞ւմ ես, չե՛մ կա-
րող, — ասում է Վալոդյան, բոռնցքները ցնցելով:

Քունը փախչում է բոլորից. հուզված զեկուը երկար ժա-
մանակ չեն հանգստանում: Բայց, գալիս է պահապանն ու
պահանջում, որ գնան իրենց տեղերը:

Նորից պառկում են, ու ցածր ձայնով խոսում, ծխելով
հասարակ կոշտ թութունը: Խոսում են իրենց երկու ընկեր-
ների մասին... Նրանց սրտերում հնչում են վերջին հրաժեշտի
խոսքերը.

— Մնա՞ք բարով ընկերներ, մենք էլ չենք դառնալու...

Գիշերն անցնում է անհանգիստ. կայարանի կողմից
լսվում են շոգեկառքերի խուճապային սուլոցներ. ապա տի-
րում է խորհրդավոր լոռվթյուն...

Արշալույսը ողջունում է բանտի պատուհաններից, ասես
Ժպում է հազարավոր դեմքերով...

Վաղ առավնոտից բանտի դուռը բացվում է ու էլ չի կողպ-
վում... Պահապանը ներս է մտնում ու բարեկում քծնելով.
Նրա դաժան, գորշ դեմքին այնքան է սազում ժպիտը, որքան
ազատությունը՝ բանտին:

— Եթե ուղում եք կարող եք դուրս գնալ, — առաջարկում
է նա:

Բայց ոչ ոք չի դուրս գնում, չհավատալով թշնամու առաջարկին. չէ՞ որ կարող են փախչողների տեղ գնել ու պնդակահարել...

Սկսվում են այն սպասողական, միջանկյալ մոմենտները, երբ Հին կառավարով յունը չքանում է, բայց նորը դեռ չկա. երբ քաղաքը զրկվում է իր իշխանությունից, իր դեմքից...

Չանցած մի քառորդ ժամ՝ հանկարծ փողոցով ծիծեռնակի թևով թռչում է մի ձիավոր կարմիր բանակացին ու յատրով կանգ առնելով բանտի առաջ՝ ներս է ընկնում գավիթը. Նրան նկատում են բանտի պատուհաններից ու դուրս թափվում. Բարձրանում է մի ցնծագին աղմուկ, մի աննկարագրելի ճիշ, որը դուրս է քաշում բանտից բոլորին, բոլորին...

Դուրս են թափվում հեղեղի նման, շրջապատում կարմիր բանակացինին, աեղմում են ձեռքը, համբուրում են ձիուն...

Կարմիր բանակացինը՝ 22մած այս անսպասելի պաշարումից, ամոթիսած կարմրում է, ժպտում, կարծես զարմանում, թե մի՞թե ինքը կարող էր այդքան ուրախություն պատճառել...

Մի քանի րոպեից հետո նա հագիւ է կարողանում ազատվել ու շարժվում է ղեափի դուրս՝ իր հետ շարժելով բանտի ամբողջ բանակը. Բոլորը կուտակվում են փողոցում:

Դեմքերը պայծառանում են մի ներքին լույսով. մի րոպեում մոռացվում են ամիսների տանջանքն ու զրկանքը. Երեկվա օրը թվում է վաղուց անցած մի անախորժ երազ...

Մինչ ընկերները շարվում են երթի, քաղաքից գալիս է Վալոյայի քույրը, փաթաթվում է եղբորն ու համբուրում ուրախության արցունքներով...

— Ընկերները. գնդակահարված են...—հայտնում է նա ախուր ձայնով: Լուրը տարածվում է շարքերում ու վառում ցասումով.

— Մրիկանե՛ր... դահիձնե՛ր... — կոչում են չորս կողմից:
Վալողյան դարձնում է երեսը դեպի բանտն ու առոմ
արտասվախառն ձայնով.

— Մնա՞ք բարով, զոհված բնկերներ, մենք ձեզ չե՞նք
մոռանալ երբեք...

Փողոցը լցվում է մարդկանցով. շարքերի ծայրը կորչում
է հեռվում: Հնչում է ինտերնացիոնալը ու հետզհետե ծավալ-
վում հարցուրափոր ձայներով: Իսկ բանտի շենքը մնում է
հետևում, որպես շատ հին, բորբոսնած անցյալ...

Երթը շարժվում է...

Սկսվում է սովետական առաջին օրը...

1932

ԿԱՄՈՒԲՐՁԸ

Ամեն առավոտ, երբ մենք հավաքվում էինք երկաթուղու պահակատան սենյակում՝ թեյի շուրջը, անխոսափելի վեճ էր բռնկվում, որը համարյա միշտ սկսվում էր կամուրջից: Բաց պատուհանից երևում էր կամուրջը՝ պայթումից բացված իր երախով, որը տադիապ էր ներշնչում մեզ, կարծես մի վերք լիներ հսկա երակի վրա: Սպիտակ զորքերն էին պարթեցրել կամուրջը, ու այժմ նահանջում էին, հետզհետե հալվելով կարմիր բանակի հետապնդումից: Մեր վաշտը մնացնել էր գետափին՝ կամուրջը պաշտպանելու համար:

Քաղղեկը այսօր փոքր ինչ մոռայլ էր. նա ինչ որ տեղեկություն էր ստացել:

— Եյս զրոյթյունն այլիս չի կարելի հանդուրժել,— ասաց նա, թողնելով թեյն ու քայլելով սենյակում.—պետք է անհապաղ վերականգնել կամուրջը...

— Վերականգնե՞լ, այն էլ անհապա՞ղ.—ակնոցն ուղղելով ասաց հին ինժեները, որին ուղարկել էին՝ կամուրջը հետազոտելու. նա ձեռքին բռնած լրազրի հետեկից աշքերը սևեռեց քաղղեկի վրա.—կատակ ե՞ք անում... այս կամուրջը փոքր ինչ կարգի բերելու համար մի տարի է հարկավոր:

— է՞զ, դուք, մասնագետներդ միշտ սիրում եք գործը դժվարացնել...

— Համե՛ցեք, ինքներդ հետազոտեք. բայց դրա համար անհրաժեշտ է, ծանոթ լինել տեխնիկային...

Քաղղեկը՝ կարծես շսելով ինժեների ասածը, մի երկու

անգամ մտացիր անցավ սենյակով ու նորից տեղը նստելով
նայեց վաշտապետի դեմքին:

— Ի՞նչ կասես, Սիմյոն:

Վաշտապետը, դադարելով փշշալեն թեյ խմելուց, հան-
գիստ պատասխանեց.

— Գլխավորը հրամանն է. եթե հրաման գա՝ իսկույն
կվերականդնենք կամուրջը:

— Լսո՞ւմ եք, ի՞նչ է ասում. — դիմեց քաղղեկը ինժենե-
րին:

— Լսում եմ, — ասաց ինժեները. — բայց ի՞նչ է հետեւմ
դրանից — երկու անգամ երկուսն տասնշորս շի կարող դառ-
նալ...

Ուսի հացի կտորը բոնած՝ ձեռքը շարժելով, նա սկսեց
բացատրել, թե ի՞նչ տեխնիկական դժվարություններ կան
գործի մեջ: Բայց նրա խոսքի ամենատաք մոմենտին, ներս
մտավ մեր ագիտապրոպը՝ պրոլետարական բանաստեղծը՝ մի
խոշոր թաս ձեռքին: Շեշտակի նայելով ինժեների դեմքին,
նա բարձր ձայնով արտասանեց իր նոր գրած «Կամուրջ» պո-
եմից.

Մենք կկապե՞նք կամուրջը,
Կամուրջը՝ ապագայի նետ...

— Ե՞՞զ, ձեզ ի՞նչ կա, — ասաց ինժեները քմծիծաղով. —
դուք՝ պուտներդ կարող եք կամուրջ ձգել և ամպերի վրա:

Պուտը շեղ նայեց ինժեներին.

— Թույլ տվեք ասել, որ դուք դեռ շեք վարակվել գետի
ձախ ափի հոգեբանությամբ. ձեզ հարկավոր է փոքր ինչ
երիտասարդանալ...

— Գուցե և պուտանա՞լ, — այն ժամանակ իհա՛րկե, ան-
կարելին կարելի կդառնա...

Քաղղեկը, կարծես սպասելով իր հերթին, միջամտեց.

— Ռելուցիայի ժամանակ անկարելի բան չկա. ես ձեզ
կհիշեցնեմ մի դեպք ֆրանսիական ռելուցիայից. մի անգամ

գործերի հրամանատարը առաջապահ ջոկատի հետ շտապում
է՝ դեպի մեծ գետի ափը, որի վրայով պիտի անցներ զորքը:

— Զափեցե՛ք գետի լայնությունը — դիմում է նա ինձեներին.

— Զեմ կարող. — պատասխանում է նա. — գործիքները հետեւ են մնացել:

— Պետք է շափել անմիջապես. — ասում է հրամանատարը, ձին քշելով գետն ի վեր:

Ինձեները տարակուսում է, ուսերը շարժում, բայց... շանցած մի քանի րոպե՝ կատարում է հրամանը...

— Ի՞նչպես, — հարցընց պոետը, հետաքրքրությամբ բլունը կված:

— Նա ինքն է դառնում գործիք՝ դառնում է կարկին: Նա կանգնում է՝ ձգվում սյունի պես, ճակատին է քաշում գըշխարկն ու նրա եզրով նայում դիմացի ափին. հետո նույն դիրքով պտտվում է ու երեսը դարձնում իր կողմի ափին՝ նշելով այն կետը, որտեղ ընկնում էր իր հայացքը. ապա քայլելով շափում է մինչև նշված տեղը, — և գործը պատրաստ էր... Երբ հրամանատարը վերադառնում է, ասում է ծիծաղելով:

— Դուք ավելի շուտ շափեցիք, քան թե ևս սպասում էի...

— Այլ հասկանում եմ, — ասաց պոետը ոգևորված, այդ դեպքի մեջ թուիչը կա, բանաստեղծություն կա...

Ինձեները փոքր ինչ նեղացած վեր կացավ տեղից.

— Ձեր կարծիքով ամեն ինչ զինվորական հրամանով է կատարվում՝ մե՛կ-ե՛րկու, սրբած վ... Որտե՛ղ կամուրջի վերանորոգելը և որտե՛ղ գետի լայնությունը շափելը...

— Ամեն մեկն իր կարգով, — ասաց քաղզեկը. — կրկնում եմ՝ ուղղուցիացի ժամանակ, անկարելի բան չկա...

Ինձեները ձեռքով շարժեց ու դուրս գնաց ասելով.

— Ի՞նչ խոսեմ ձեզ հետ, այսօր բոլորդ էլ պոետ եք դարձել...

Բայց մի առավոտ խոսակցությունն ընդհատվեց անակընկալ կերպով. պոետը ներս մտավ՝ ձեռքին բռնած հեռագիրն ու Հանդիսավոր ձեռվ մատուցեց ինժեներին:

— Սա ի՞նչ երեխայություն է,—բացականշեց ինժեները, կարդալով հեռագիրը և դեմքը խոժոռելով.—ի՞նչպես թե—«անհապաղ վերականգնել երկաթուղային հաղորդակցությունը... վազոն-արհեստանոցները կժամանեն վազը ժամի 7-ին»: Սա ի՞նչ բան է,—ասում էր նա, նայելով բոլորի դեմքերին...

— Աւզլակի ոչինչ չեմ հասկանում,—ասաց նա հուզված ու շտապ քայլերով դուրս գնաց, թողնելով սեղանի վրա թեյի կիսատ բաժակը:

— Իսկ ես հասկանում եմ,—ասաց պոետը նրա հոկտից, — նա ձեր հորեկյանն է...

...Անցալ մի քանի օր: Ինժեները դարձել էր լուակյաց, մտացիր, ու կարծես շարունակ ինչոր փնտրում էր: Մենք հազվագետ էինք՝ լինում նրա հետ, նա մեծ մասամբ լինում էր գետի մյուս ափին: Տեսնում էինք, թե ինչպես նա շարունակ կամուրջի վրա կարգադրություններ է անում, հաճախ իշնում ներքն՝ բանվորների մոտ: Գետի մյուս ափին կանգնած էր մի գնացք, որն ամբողջովով վերածված էր արհեստանոցի:

Մենք անհամբեր սպասում էինք կամուրջի ավարտելուն, —բայց երբ Հանդիպելիս Հարցնում էինք ինժեներին, նա ոչինչ չէր ասում:

Վերջապես մի ամսից հետո՝ առավոտը նա ներս մտավ ու գլխարկը վերցնելով, ասաց ուրախ ձայնով.

— Միրելի ընկերներ, կարող եք ինձ շնորհավորել. կամուրջն արդեն պատրաստ է... վաղը ձեզ ամբողջ կազմով հրավիրում եմ իմ հորեկյանին... այժմ ես կարծես քսան տարեկան երիտասարդ եմ...

Մենք ցնծաղին բացականշելով ողջունեցինք նրան՝ ձեռ-

քը թոթվելով, իսկ պոհտը մոտեցավ ու համբուրվեց ինժեների հետ:

Երբ մյուս առավոտ մենք մեծ խմբով նստեցինք վագոնը, ինժեները ուրախությունից կարծես ոչինչ չէր լսում:

Ծովեկառը սուլից ու գնացքը շարժվեց հանդիսավոր, դանդաղ ընթացքով:

Երբ հասանք կամուրջի նորոգված տեղին, ու ներքեւից՝ խաշածեւ ամրացրած շողալների վրայից, բանվորները ողջուն ունեցին ուսաներով, դրոշակները ծածանելով՝ ինժեներն էլ չշամբերեց.

— Սա ուղղակի հերոսություն էր, — ասաց նա, ինքնամուսացության մեջ ու գլխարկը ձգեց գետի մեջ:

Նորից ներքեւից թնդացին ուսաները:

Իսկ պոհտը բամբ ձայնով արտասանում էր իր պոհմից.

Մենք կկապե՞նք կամուրջը,
կամուրջը՝ ապագայի հետ...

ԸՆԿԵՐ ՄՈՒԿՈՒԶԸ

1

Ամեն ինչ փոխվում էր, բայցի Մուկուզից:

Տասը տարի էր, ինչ նա պահապան էր կաշվի գործարանում: Այդ միջոցին պետական կարգերը երկու անդամ հեղաշրջվել էին, գործարանի գլխով՝ հինգ կառավարիչ էր անցել, բայց դժվար թե մեկն ու մեկը նկատեր Մուկուզի վրա որևէ փոփոխություն: Եվ ում էլ Հարցնեիր, այն էր ասում, թե աշքը բաց է արել՝ տեսել Մուկուզին նույն Հագուստով և նույն տեղը:

Ամեն նորեկ կառավարիչ նկատում էր Մուկուզին առաջին օրը՝ գործարանն ընդունելու ժամանակ, երբ անհրաժեշտ էր լինում այցելելու նրա ամեն մի անկյունը: Եվ ամեն անդամ ընդունելու ձևականությունները վերջացնելուց հետո նոր կառավարիչը դիմում էր Մուկուզին այս խորհրդավոր խոսքերով:

— Հա՛, դու էլի շարունակիր գործդ, մինչև այդ մասին կարգադրություն կանեմ:

Սակայն այդ կարգադրությունը չէր լինում և Մուկուզը՝ որն իսկի չէր էլ Հասկանում այդ ասածի խմաստը, շարունակում էր մնալ իր պաշտոնում: Այնուհետև, ինչպես կարգն է՝ նա մոռացվում էր, կամ լավ է ասել՝ չէր նկատվում: Կարճ ժամանակում նորեկ մարդու աշքն այնպիս էր ընտելանում, որ Մուկուզին նայելիս թվում էր, թե նա էլ գործարանի ոյուներից մեկն է, որ պիտի մնա ընդմիշտ և անփոփոխ:

Մուկուզի արտաքինն էլ կարծես խոսք էր տվել անփո-

փոխ մնալու: Նա միջին տարիքումն էր, այսինքն այն հասակում, երբ Մովկուչի նման մարդիկ առանձնապես երկար կանգ են առնում և սահող ժամանակից դուրս մնում: Նրա մսուտ, կոշտ գծված թուփ դեմքը՝ իր լայնանիստ, հիմնավոր քթով ու անխնամ ու մորուքի մեջ թաղված, փքված տեսք ուներ: Ինչի՞ցն էր ուսած նրա դեմքը—քաղցածությունի՞ց, թե՞ շատ ննջելուց. ավելի ճիշտը՝ երկուսիցն էլ: Անշարժ, խոշոր աշքերի մեջ միայն մոտիկից տեսնողը կնկատեր քարացած հոգսի ու թախիծի արտահայտություն:

Ամառ-ձմեռ կտեսնեիք Մովկուչին նույն գորշ, կեղակ դույն հագուստի մեջ: Թեակետ նրա կիսավերարկուն բարակ, զինվորական կտորներից էր հավաքած (որոնք վազուց կորցրել էին նախնական գույնի հետքերը), բայց նրա տակն այնքան լաթեր էր հագած, որ հեռվից Մովկուչը նմանում էր շարժվող պարկի: Մաշված, ու մորթե փափախն ամբողջություն էր կազմում մազերի հետ, կարծես հենց գլխից բած լիներ:

Բայց ամենից հետաքրքրականը Մովկուչի կոշիկներն էին, որոնց վրա արձանագրված էր կաշվի թանկության ողջ պատմությունը: Նրանց հիմքը երբեմն կազմում էին մի պատմությունը: Նրանց հիմքը երբեմն կազմում էին մի պուլք ամերիկական ծանր կոշիկներ, որոնք երկու մարդու ոտքերից անցնելով՝ եկել հասել էին Մովկուչին: Կարկատան-ների թիվն այնքան շատ էր, որ կոշիկների հիմնական կաշին այլևս չէր նկատվում: Եվ ինչո՞վ ասես չեն ամրացրած կարկատանները՝ թելերով, մեխերով, երկաթալարերով:

Ճիշտ է՝ պիտի խոստովանել, ամեն կառավարիչ հենց դործարան մտնելու առաջին օրից նկատում էր այդ տարօրինակ հակասությունը, որ չնայած Մովկուչը կաշեկործարանի սպահապան է, նրա կոշիկները ողբակի վիճակի մեջ են, ու կարգադրում էր՝ թեկուղ օրենքից դուրս՝ նրան կաշի տալ կարգադրում էր՝ թեկուղ օրենքից դուրս՝ նրան կաշի տալ կոշիկների համար: Սակայն միքանի օրից հետո Մովկուչը կոշիկների փոխանակում էր այդ կաշին ալյուրի հետ, ու իր հին կոշիկ-փոխանակում էին մնալ իրանց փառավոր դրության ները շարունակում էին մնալ իրանց փառավոր դրության մեջ:

Ուղիղն ասած՝ Մուկուչն այնքան էլ չեր մտահոգվում այդ առիթով, լավ իմանալով, որ թեկուզ նոր կոշիկները կարել տար, մեկ է, նորերը պիտի մաշվեին, ինչպիս սովորաբար մաշվում է ամեն մի կոշիկ, իսկ ճները՝ նա արդեն համոզված էր՝ անմաշ, հալիտենական էին:

2

Առաջին անգամ տեսնելով Մուկուչին, կասեիք դադիական է, բայց որ հարցնեիք, կասեր՝ փոքր հասակում հոր հետ դադիակ է այսինչ գյուղը, այնտեղից էլ այնինչ գյուղը, հետո էլ մի ուրիշ գյուղ, իսկ թե ո՞րտեղից էր սկիզբն առել այդ խափառական հայը, մնում էր մշտշի մեջ:

Ասենք Մուկուչն այնքանով էր դադիական, որ իր ամբողջ հարստությունը լամերից կազմված անկողինն էր ու մի մաշված սպիտակ, և նա իր ամբողջ ունեցածը կարող էր հետք ման ածել: Այս հանգամանքն էլ մտահոգություն չեր պատճառում Մուկուչին, քանի որ նա ապրում էր այն տարիներում, երբ ամբողջ հայ ազգը դադիական էր դարձել:

— Դու ասա հայ ըլի, թե չէ մնացածը դատարկ բան ա: — կրկնում էր նա սովորաբար:

Իր ընտանիքը՝ կնոշն ու չորս երեխաներին Մուկուչը տեղավորել էր գործարանից մոտիկ մի ավերակ տան մեջ, եթե այս անակնկալ հյուրերը չինեին, այդ տանը դժվար թե մարդու երես տեսներ: Պատշգամբի տանիքն աշ կողմից թիքվել էր ներքե, հետո կարծես փոշմանելով՝ հետաձգել էր փըլդելը:

Երեխաները, որոնցից ամենամեծը յոթ տարեկան էր, ամբողջ օրը կատվի ձագերի նման մլալում էին: Մուկուչը վաղոց էր ընտելացել այդ տարօրինակ լեզվին, դա հացի լեզուն էր:

— Հա՞յ, — այդ էր միալար ճնշում օր ու գիշեր Մուկուչի ընտանիքում:

Այդ էր պատճառը, որ ամեն անգամ պետական կարգե-

ըր փոխվելիս Մոմկուշին հետաքրքրողը միայն հացն էր լինեւմ: Օրական մի քանի անգամ սրան-նրան կհարցներ:

— Ուզիդ ա՛, ասում են հացի փայերը պետք ա ավելացնեն:

Ո՞վ էր ասել, ո՞րտեղ էին ասել, եթե կուպեք՝ գուցե ոչ որ էլ չեր ասել, այլ միայն Մոմկուշի շերմ ցանկությունն էր թելադրում այդ լուրը:

Երբ սովետական իշխանության օրով Մոմկուշին գործարանի հացը բերող նշանակեցին, ուրախությունից նրա լուսայաց լեզուն բացվեց, հենց իմանաս հացի բոլոր փայերն ինքը պիտի վերցներ: Էլ մարդ չմնաց, որին շատեր.

— Բանվորի հացը ես պիտի բերեմ:

Որ իմանաք ի՞նչ եռանդով էր կատարում նա այդ պարագանությունը... Հացի մեծ պարին ուսին նա ոչ միայն չէր հոգնում, այլ համարյա վազում էր, կարծես մեկը խողոտում էր նրա մեջքը: Այնքան գուրեկան էր հացի մոռիկովյունը, նրա տաքությունը, նրա անուշ հոտը, որ նա կուպեր միշտ կպած միներ այդ պարկին: Երբեմն նույնիսկ երազանքի մեջ էր ընկնում, — մտածում էր թե հանկարծ իրեն են տալիս այն մեծ հացերից մեկն ու ասում.

— Մոմկուշ, տա՛ր, քեֆ արա:

Բայց որ հացը բաժանվում էր ու պարկը դատարկվում, նրա երազներն էլ փախչում էին: Այդ շափած-ձևած հացի փայից, նրա ստամոքսը բան չէր հասկանում...

Իսկ այն օրերին, երբ հացն ուշանում էր և Մոմկուշը ստիպված էր լինում ժամերով սպասել պարենավորման բաժնում, նրա սիրտը սկ ամպերով էր պատում. միշտ նրան թվում էր, թե էս է՝ կգան ու կատեն.

— Էլ հաց չկա, ինչ ուզում եք, արեք:

Բայց հետո մտածում էր՝ չէ՝ որ բոլոր բանվորներն ու ծառայողները միասին են հաց ստանում. ի՞ա՛րկե, եթե միայն Մոմկուշի նման ինեղճերը լինեին, բանը բուրդ կվեճացն Մոմկուշի նման ինեղճերը կան կառավարիչն ու ուրիշ «աղա մարդիկ», այդ պատճառով հացը չեն կտրիլ...

Օրվա մեջ մի քանի անգամ Մուկուշը զնում էր տուն և
ամեն գնալով թյուրիմացության մեջ էին ընկնում թե ինքը,
թե իր կինը: Մուկուշի քաղցած փորը թելադրում էր նրան,
թե մի գուցե կինը բանջարեղեններից կերակուր է պատ-
րաստել, իսկ կինն էլ իր կողմից կարծում էր, թե Մուկուշը
մի տեղից հաց է ճարել՝ բերում է տուն:

Հիասթափումը բաց էր անում առանց այն էլ գաղապած
կնոջ բերանը. նա սկսում էր նորից զիլ ձայնով իր սովորա-
կան «հացի կախվը».

— Դլո՞ւ ա բերել, աշխա լի՞ս, դարդակ տուն ա դալիս,
էլ չի ասում երեխեք ունեմ...

Զայնը հետզետե ուժեղանում էր. Մուկուշի ականջնե-
րում սկսվում էր սովորական ծղրացը: Զնայած նա Սոկ-
րատի համբերություն ուներ, բայց էլի չեր համբերում.

— Ի՞նչ ես զուտնեդ շալել... զե հերիք է, էլի՞... Մի էր
խալխին էլ մտիկ է:

Ասում էր ու շտապում դեպի գործարան, բայց մինչեւ
տեղ հասնելը նրան կարծես ուզեկցում էր իր կնոջ՝ ականջ-
ները ծակող ձայնը:

3

Եկել էր սովետական իշխանությունը, ալեկոծել, ցնցել
ամենքին. որն ուրախ էր, որն անիծում էր մտքում՝ հարըս-
տությունից, դիրքից զբկվելու պատճառով: Միայն Մուկուշը
էր, որ կարծես օտար հյուր լիներ այս բոլոր անցուդարձի
մեջ:

Ասենք՝ նոր իշխանության առաջին օրերի խանդավառու-
թյունը, այն ոգեսրմած ճառերը, շարժվող կարմիրները Մու-
կուշին էլ գրավեցին. միտինդներին, ժողովներին նա էլ մի-
քանի անդամ մասնակցեց: Կանգնում էր ամենահետին տե-
ղը, լսում ճառերը, երբեմն թվում էր, թե ամեն ինչ հանկա-
նում է. շէ՞ որ խոսում էին իր նման խեղճերի իրավունքների
մասին:

Բայց ահա անցնում էր միքանի օր. հացը նեղում էր Մուկուշին. նրա մտքերը շփոթվում էին, ճառերը թվում անհասկանալի, օտար, ու նա սկսում էր նահանջել...

Եվ առա Մոմուշի մտքում էլի իր հին հարցն էր միայն շարժվում ու ամեն խստելիս առաջը գալիս.

— Ուղիղ ա՞ . ասում են հացի փայերը պետք ա ավելացնեն:

Ո՞վ էր ասել, ո՞ւմ էր ասել, —դարձյալ մնում էր անհայտ:

Այն մնացած բաները, որոնք հացից դուրս էին, այն
քարոզն ու ճառիկը Մովկուշը համարում էր «իտուք ու գրից»:
Այդպես զրոյց են անում գլուղացիք՝ կիրակի օրերը կամ
ձմեռվա երեկոները, երբ կուշտ ուտելուց հետո խոսում են
հենց այնպես՝ քեֆի համար: Խակ քաղցրիք, որոնց Մովկուշը
համարում էր «աղա մարդիկ», այդ զրոյցը կարող էին անել
ամեն ժամանակ:

Այդ «աղա մարդկանց» թվին էր դասում Մովկուշը բռլոր քաղաքի զորեր հագած ու գրի սև ու սպիտակը ջոկող մարդ-կանց, որոնց մեջ էր հաշվում և սովետական ծառայողներին: Կանց, որ հացը և ուրիշ մթերքները, նույնպես և ոռմիկ-ջնայած, որ հացը և ուրիշ մթերքները, նույնպես և ոռմիկ-ներն իր ներկայությամբ էին բաժանում, բայց Մովկուշը միշտ այնպես էր կարծում, թե նրանք մի ուրիշ տեղից հաց էի՝ «ամեն բան էլ» ստանում են:

«Սովոր մեզ պես խեղճ մարդը կդիմանա. աղա մարդը
ո՞նք կդիմանա»,—ասում էր Մովուշն ինքն իրեն:

Դե, մամկությունից սկսած Մովուշն այդպես է տեսել
աշխարհիս կարգերը. իսկ այդ վաղուցվա բաները նրա մեջ
այնպես պինդ են նստած, ինչպես են անկոտրում ընկույզ-
ները, որոնց ինչքան էլ խփես՝ միջուկին չես հասնիլ:

Միայն այդ հո շի՞՝ Մուկուչը շատ բան է տեսնում ու լուսնում. ի՞նչքան է փոխվել աշխարհը, բարձրինը ցած է ընկել, ցածրինը՝ բարձրացել, բայց պետք է լավ իմանաք, որ ամեն բանի վրա Մուկուչն իր հանգի՝ «Ճուկուչավարի» էր նայում:

Ի՞նչ խոսք, մտածում է նա, լավ է, որ Հիմի ամենքն իրար ընկեր են ասում. Մուկուչը սիրում է այդ խոսքը. բայց ինչի՞ցն է, որ բոլորն իրան «տնավարի» միայն Մուկուչ են ասում: Ամենքը մոտավոր անցնելիս կանչում են.

— Մուկուչ, քեֆդ ո՞նց ա:

Ի՞շարկե, Մուկուչը գանգատ չունի. գործարանում ամենքը հետք սիրով են վարվում. բայց թե որ կարգ է՝ պատիվ է՝ թող իրեն էլ «Հընկեր» ասեն. թե չէ Մուկուչի սիրութ պակասում է:

Հիմի ասում են խեղճերի, բանվորների իշխանությունն է. բայց դե բանվոր էլ կա՝ բանվոր էլ, մինը հրեն նախագահ է, մյուսը՝ քարտուղար, մինը՝ բջիջ՝ մինը տեղկոմ: Հրեն Սերոբը ո՞նց է ուսը ձգում, կառավարչի հետ հավասար է ժամանակիս, Մուկուչի վրա էլ վերեկց է մտիկ անում: Ինչի Մուկուչին էլ մի տեղ «գլխավոր» չեն նշանակում. ա՞յս, թե ուզում են՝ կարգն էդպես է, որ մի մարդ նշանակեն, զա՝ ինչպես մայրը երեխանց հաց է բաժանում, այնպես էլ նա բաժանի՝ մեծությունն էլ, իրավունքներն էլ, ասի՝ էս էլ քեզ. թե չէ Մուկուչին բան չի հասնիլ՝ հարյուր տարի էլ որ անցնի՝ նա էլի կմնա առաջվա պես:

Մի ասեք, տեսնենք՝ ինչի՝ գործարանի սափրիչը միշտ Մուկուչին «ցանում է»: — ամեն անգամ երբ նա ներս է մըտնում սափրիվելու, միշտ ասում է.

— Մուկուչ, դու լա՛վ կանես՝ քիչ հետո գաս. Էս հերթը որ պրծնեմ, կազատվեմ...

Այդպես՝ քանի անգամ Մուկուչը գնացել է սափրիչի մոտ ու էլի այդ խոսքերը լսելով՝ ետ է դարձել. վերջն էլ

խոսվել է ու էլ չի գնում: Նրա մորուքը դարձել է՝ ինչպես մի-
ավել, ամբողջ երեսը ծածկել է: Մովկուը լավ է իմանում,
որ սափրիչը չի ուզում աշխատել իր նման հասարակ մարդու
համար, ու իր կոշտ մորուքի վրա ածելիներ մաշել:

Բայց դե Մուկուչը Հո կույր չի, տեսնում է՝ ի՞նչպես
այդ «ժողովիկ» մարդը նոր առած ածելիները փոխում է իր
սեփական հների հետ: Գողանում է գողնոցի ու երեսարքիչի
համար տված կտորներից, այն էլ՝ էս «թանկ ու կրակ» ժա-
մանակը: Մուկուչն իմանում է, որ այդ պոռշը-կտրած «փուշ»
մարդը սովորական սափրիչ է դառեւ, որ իր գործերը «որբս-
տի», սարքը գողանա ու հետո իր համար ջոկ արջեստանոց
բաց անի:

Այդ բաները Մովկուշը գիտե, բայց չի ուզում վատա-
մարդի լինել. իսկ եթե դատաստանն իրեն տան՝ ինքը գիտե,
թե ի՞նչ կանոնադր անիրավին:

...Ճիշտ որ՝ ամեն ինչ փոխվում էր, բացի Մուկույից...

5

Այս էլ Մուկուշի բախտիցն էր:

Սակայն այս ծանր բեռն էլ կտաներ Մովկուչը, եթե մի դեպք չպատճեր, որը նրան տակնուվար արագ. — մի առա-

վոտ իմացվեց, որ գործարանի պահեստից մի մեծ կապոց կաշի են գողացել:

Էլ ի՞նչ հարցնենք Մովկուշից.—օրական քանի՛ անգամ նրան հարցուախորձ էր անում կառավարիչը, հետո միլիցիա էին տանում, էլի խոսացնում: Ու ամեն անգամ Մովկուշը մի գլուխ էն էր լսում կառավարիշից, թե՝

— Պահապան ես, ուրեմն մեղավոր ես:

Մովկուշը երկի՛նք, գետի՛նք է անում, թե այդ գովությանը տեղյակ չի, բայց ինչպես նկատում էր՝ չէին հավասարման: Գնում գալիս էր գաղաղած կառավարիչը, ելի իր ձին էր քշում.

— Պահապան ես, ուրեմն մեղավոր ես:

Այս ցավերը բավական չէին, նրա կինն էլ մյուս կողմից էր Մովկուշի սիրտը տակնուվրա անում:—«Մովկուշին բանտ պետք է տանեն»—լսել էր նա հարման կանանցից ու ամեն օր ծնկները թակելով՝ սուզ ու շիվան էր անում.

— Բա էսպես բան կըլի՛—ասում էր նա,—որ մարդու շատի մեջ գցեն, տուն տեղով կորցնեն... Բա մի մարդ չկա՞՝, որ տիրություն անի, էս խաթից ազատի՛. բա չե՞ք տեսնում, որ մեջը թշնամություն կա...

— Ի՞նչ ես ճղճղոցդ վեր արել. մի իմ սրտին էլ մտիկ է՝,—ասում էր Մովկուշը, աշխատելով «տղամարդավարի» լուցնել կնոջը, բայց նա էլի շարունակում էր իր սուզ ու շիվանը:

Նա լաց էր լինում, գլխին հավաքում հարևան կանանց. Երեխաներն էլ նայում էին, ու սարսափահար՝ սկսում մեկը մյուսից բարձր հեկեկալ:

Օրը մթնում է, Մովկուշի սիրտն էլ նրա հետ:

Մոտել է գործարանի գամթում գտնվող վարպատական սկսում մեկը, որի դռուն ու պատուանների փեղկերը չկային. նստել է մի քարի վրա ու գլուխը քաշ նայում է գետնին:

«Է՞՞, —մտածում է Մովկուշը. —բանս վերջացած է... կտանեն, բա ի՞նչ պիտի անեն... մթամ ո՞վ է իմ տերը... իմ գլուխը ջնաննամը, ի՞նչ պիտի անեն երեխեքս»...

Ո՞վ պիտի գողանար այդ անիծած կաշին... այն փուչ սավրիշից ավել ո՞վ կարող էր անել... Աշխարհիս կուրությանը մտիկ՝ քանի օր է էդ անիրավը փսփռում է կառավարչի ականջին... դե պարզ բան է, Մովկուշը է խոսում, ինձ վրա է գցում գողովթյունը...

Օրը մինում է, Մովկուշի սիրտն էլ նրա հետ...

Հանկարծ նրա ականջին պայթեց մի ձայն.

— Մովկուշ, էս ո՞ւր ես:

Մովկուշ վեր թռավ ու խարխափելով, առանց ձայն հաշուելու դուրս եկավ գավիթ:

Բանվոր Մարտարն էր:

— Այ տղա, ո՞րտեղ ես, մի ժամ է ման եմ գալիս. դե է՛կ հետո, գնանք:

6

Սա էլ մի ուրիշ խաթա է, —մտածում է Մովկուշը. —դե էն է միանգամից սպանեն պրծնեն, էլ ո՞ւր են ժողովում, ուրիշների առաջ խայտառակ անում: Հակառակի պես Մարտարը տանում է նստացնում Մովկուշին հենց առաջին շարքարը տեսնում. —դե պարզ բան է՝ ուզում են այնպես անեն, որ ամենքը լավ տեսնեն նրան ու մի լավ խայտառակեն:

Էս ի՞նչքան մարդ է հավաքվել... բոլորն էլ բարկացած են... լավ չի, որ Մովկուշը մեռնի, կորչի ու այսքան մարդկանց մեջ առակ շդառնա՞...

Տեսնում է Մովկուշ՝ բեմի վրա մեծ սեղան է դրած, կարմիր մաշուղը վրան քաշած. շուրջը նստել են հինգ-վեց հոգի: Մոտ մարդիկ են, բայց օտար են թվում: Մինն ասի՝ հոգի: Մոտ մարդիկ են, բայց օտար են թվում: Մովկուշը, որ այդպես խոսուած երեսներով են նայում:

Վախոր մի կողմից, ամոթը մյուս կողմից... այս ի՞նչ

կրակի մեջ է ընկել Մուկուշը, դարնան տաք եղանակ է, բայց նա սարսուռի մեջ է, այնպես է թվում՝ թե էս է՝ պիտի դուզացնի...

Կողքին նստած բանվորները խոսում են, սիրո են տուլիս Մուկուշին, բայց նա ասես չի լսում՝ նրա միտքը շատ հեռու է...

Չէ՛, պրծած բան է... Մուկուշը կորած է... ի՞նչ պիտի անի նա այսքան մարդկանց գեմ, որոնք բոլորն ել լավ խոսում, հասկանում են, դե պարզ բան է՝ կառավարչին կը պաշտպանեն. չէ՞ որ նա «աղա մարդ» է, իրա նման խեղճ ու կրակ չի... Հրե՛ն, ոնց էնստել ու ակնոցի տակից այնպես է՝ մտիկ անում, կարծես ասում է՝ էղ բոլորդ որ կաք, իմ բար մեջն եր...

Ի՞նչ պիտի ասի Մուկուշը, թե որ իրեն խոսացնեն, կասի՞ ես մի խեղճ մարդ եմ, ի՞նչ գիտեմ, գողացել են. իսկ թե ո՞վ է գողացել՝ երկինք, գետինք, չեմ իմանում...

Մուկուշի աշքին է ընկնում դիմացի պատին կպցրած կենինի մեծ պատկերը:

«Ասում են լավ մարդ է, — մտածում է նա. ա՞ս թե իստեղ լիներ՝ ինձ կօգներ... ես ել էս օրը չէի ընկնիւ...»

Զանգահարում են. ժողովն սկսվում է, ինչ-որ բաներ են ասում, որ Մուկուշը չի հասկանում: Նա ուշքի է գալիս այն ժամանակ, երբ սկսում է խոսել բանվոր Սահակը. նրա ձայնը ամենքից բարձր է, խոսելն էլ ամենքը հասկանում են: Ի՞նչ բարկացած է՝ ասես բերանից կրակ է թափում. երեխ Մուկուշի վրա է բարկացել... միայն զարմանալին այն է, որ, հրե՛ն, «ընկեր Մուկուշ» ասաց... թե շարացած է Մուկուշի վրա, բա ինչի է պատիվ անում՝ «Հընգեր» ասում:

Այդ դեռ բավական չէ, նրա ճանի ժամանակ կառավարիչը վեր-վեր է թոշում, ոնց որ մեխերի վրա լինի նստած, շուտ-շուտ մատ է բարձրացնում, մթամ ուղում է շուտով պատասխանի... ու դեռ Սահակը խոսքը շվերջացրած դուրս է գնում ժողովից՝ մինչև ականջները կարմրած ու փնթիթն-

թալով: Բոլորը նայում են կառավարչին. իսկ Մովկուշի կողքին նստած բանվոր Սերգոն ասում է նրա ականջին.

— Հը, տեսա՞ր, Մովկուշ, ոնց հուշտ արինք քու կառավարչին. մեզ բանվոր կասեն, Յա՞...

Զէ՛, էստեղ ուրիշ բան է երեսմ... էլի են խոսում, էլի «ընկեր Մովկուշ» են ասում. պարզ է՝ նրան գովում են. ասում են՝ Մովկուշը ոչ ցուրտ է հարցրել, ոչ քաղցածություն. միշտ իր գործի վրա պինդ կաղնած է էլել, ոնց որ մի զինվոր... թէ կառավարիչը լավ կառավարիչ է, իսկի մի օր հարցրել է, թէ Մովկուշը ո՞րտեղ է քնում գիշերը, ո՞նց է՝ ապրում...

Էլ ի՞նչ կասկած... Մովկուշին օգնում են, պաշտպանում են... նրա սրտի կապված թիւերը բացվում են. հենց իմանաս սառած եկել է Մովկուշը ու հիմի տաքությունից ետ է գալիս:

Նա արգեն սկսել է տեղն անհանգիստ շարժումներ անել. լարված, շունչը պահած՝ լսում է ամենքին ու զարմա՞նք բան. ամեն ինչ հասկանում է...

Մեկ էլ հանկարծ Մարդարը փեշիցը քաշում է:

— Խոսքը պատկանում է ընկեր Մովկուշին, — նորից կրկնում է նախագահը:

Մարդարը մոտենում է Մովկուշի ականջին ու ասում.

— Մո՛վկուշ, հիմի գու պիտի խոսես. ինչ որ տեղու ես ասա, մի՛ քաշվիլ:

Մովկուշը վեր է կենում. միքիշ սպասում է, որ շունչը տեղը բերի ու հետո ասում է ցածր, խանձված ձայնով: Բոլորը լսում են և ուշադրությամբ լսում.

— Դէ ես մի խեղճ մարդ եմ, բայց իմ նամուսը չեմ ծախել... ես էկ գողությանը տեղյակ չեմ... միայն կասեմ՝ վատ մարդու ձանկ եմ ընկել... գուք պիտիք ու ձեր խիղճը...

Ասում է, ծանր շնչով նստում: Նախագահն էլի մի քանի խոսր է ասում, մի երկու մարդ էլ կարճ խոսում են ու ժողովությանում է: Բանվորները շրջապատում են Մովկուշին, ամեն կողմից սիրտ տալիս.

— Բնկեր Մուկուշ, քեֆդ լա՛վ պահիր, Հետևից սարի
պես կանգնած ենք:

Խոսում են, ձեռքներն ուսին դնում ու ամեն կողմից ըն-
կեր կանչում...

Մուկուշ դուրս է գալիս փողոց: Այնպես է սիրառ լցվել,
հենց իմանաս էս աշխարհում շինի: Գնում է տոն, թե դոր-
ծաբան, ինքն էլ չի իմանում: Էս ի՞նչքան պաշտպան ոմի...
բա ինչու մինչև հիմի գլխի չեր ընկնում... Ասես շորս կողմը
Հաղար ձեն է գալիս ու ամենքը մի բերան՝ «ընկեր Մուկուշ»
են կանչում...

Այնպես է լցվել Մուկուշի սիրառ, որ ի՞նչ հաց, ի՞նչ
նեղություն.—նա թեկուղ կյանքն էլ տա, հոգը չէ: Ասես մե-
ծանում է, աժդակա դառնում, կոները լցվում են արյունով
ու հպարտ-հպարտ կանչում է, իմաց անում բոլորին:

— Հե՞յ, լա՛վ իմացեք. սրանից դենը ես մենակ չեմ...
էլ ոչ մի բանից չեմ վախենում...

7

Անցել էր երեք տարի, երբ նորից վերադարձա իմ հայ-
ունի քաղաքը:

Մի երեկո գնացել էի բանվորական ժողով, որը հրա-
վիրված էր քաղաքական մի հարցի առթիվ: Կոսմ էի խո-
սողներին ու միաժամանակ նայում շորս կողմը նստած բան-
վորներին և համեմատում մոտիկ անցյալի հետ: Ո՞րքան բան
էր փոխվել:

Երեք թե շորս հոգու խոսելուց հետո ականջիս հասավ
նախագահի՝ բանվոր Սահակի հուժկու ձայնը.

— Խոսքը պատկանում է ընկեր Մուկուշին:

Բեմ ելավ մազերը կարճ խուզած մի բանվոր, փոքր ինչ
կանգ առավ, ապա սկսեց խոսել այն զգացված տոնով, որ
Հատուկ է ուղղուցիայի վրա սիրահարված բանվորին:

— Ընկերներ, քանի՛ տարի է, մեղ շըշապատել են,
ուզում են խեղդել,—փորձեցին զոռով հաղթե՛ շելավ, փոր-

Ճեցին սովորվ հաղթել՝ չելավ... թող լավ իմանան՝ էն ժամա-
նակն անցել է, մեր միտքը, մեր աշքերը բացվել են. ել սրա-
նից դենը մեզ ու մի բան չի հայթիլ...

Ծափահարությունները թնդացին ամբողջ դաշնիձում:

Խոսողի գեմքը կարծես ծանոթ լիներ. ուզում էի հարց-
նել կողքիս նստած բանվոր Մարդարին, բայց նա ինձ
կանխեց:

— Գիտե՞ս, ո՞վ է եդ խոսողը, — ասաց նրա. — մեր հայտ-
նի Մովկուշն է:

— Ինչպե՞ս թե Մովկուշը. բա ո՞ւր գնացին նրա խո-
պան մորուքը, նրա փթանոց կոշիկները:

Մարդարը ծիծաղեց.

— Հենց բանն էլ այդ է... Մովկուշի կոշիկներն ու նրա
հացի պարկը թանգարան ենք ուղարկել. մորուքն էլ՝ ինչ-
պես տեսնում են՝ ածելիի բերան է ընկել. թե որ Մովկուշի
կնիկը չկհներ, բեղերն էլ կածելիր:

— Իսկ ի՞նչպես վերջացավ այն գործը. միտս է՝ այն ժա-
մանակ ինչ-որ գողովթյան հարց կար...

— Բա ի՞նչ ես կարծում, մենք կթողնեի՞նք, որ մեր
Մովկուշի քեֆին դիպչե՞ն. կառավարիչն էր զահլա տանում:
Նրան հեռացրինք, շատ էր հին կարգերի հետեւց ընկնում...
Գողովթյունն էլ մի ամսեն վրա բացվեց. այն անպիտան
Որ իմանաս՝ ի՞նչ սիրով է բանում, կասես քսան տարեկան
լինի...

...Ես վերադառնում էի տուն պաշարված մտքերով: Քայ-
լում էի, վերհիշում անցյալը: Մտածում էի թե ի՞նչպես
փոխվեց մեր Մովկուշը... ու ականջիս շարունակ հնչում էր
Սահակի հուժկու ձայնը՝ նրա ասածը.

— Խոսքը պատկանում է ընկեր Մովկուշն...

ՏՐԱԿՏՈՐԸ

Մի շաբաթից ավել էր՝ Դանելը մտքի հետեւց ընկած՝ Հալածված մարդու նման տեղ չէր գտնում գյուղում։ Արդեն գովթանակարի ժամանակն էր, ով լծկան ուներ՝ վարում էր, իսկ Դանելը և իր նման չուներները մնացել էին կրակի մեջ։ Ճիշտ է, միքանիսը կիսովի վարել էին տվել իրենց արտերը, բայց Դանելը շատ լավ դիտեր, որ եթե դիմի ուներներից մեկին՝ Հենց թեկուզ Սահակին, այնպես կդադվի, որ մինչև վերջին շունչը չի մոռանալ։ Ինչպես և շատերին՝ Սահակը Դանելին էլ օձի նման կիսայիշի, — նա կասի այն խոսքերը, որ ասել էր միքանիսներին։

— Գնա, թող քու կառավարությունը քեզ օգնի։

Եվ ի՞նչպես շասի, ի՞նչպես չանի իր սրտի սիր, քանի որ Դանելն իր ընկերներով միշտ Սահակի ու նրա նմանների դեմ է խոսել։ Ճիմի այդ բոլորից հետո գնա նրա դուռն ընկնի, թե ինչ է լծկան տուր՝ արտա վարե՞մ... չէ՛, դա լինելու բան չի, մահը դրանից լավ է։

Դեռ ճիմա էլ Սահակը մին-մին դադում է Դանելին։ Արդեն երկու կիրակի է՝ նա ոչխարի բուդր ձեռին՝ անցնում է Դանելի տան առաջով։ Նա դիտմամբ նրա կողմբովն է անցնում՝ ցույց տալու համար, թի՛ տե՛սեք, ես էլի առաջվա Սահակն եմ, էլի ե՛ս եմ միս ուսում, իսկ դուք՝ տկլորներդ՝ բերաններիդ ջուրը գնալով մտիկ եք անում։ Հենց թեկուզ ամեն նստելիս ի՞նչ է խոսում Սահակն իրեն ուզած մարդկանց հետ։ — (մեկ-մեկ ձեռնը հասնում է Դանելին)։ Նա տսում է՝ էսքան ինձ շարչարեցին, անունս կուլակ դրին, ընտրելու

իրավունքից զրկեցին, վերջը ի՞նչ տարան, էլի էդ անողները
պետք է գան ուսներս ընկնեն, լծան ու գութան խնդրեն...

— Զէ, էլի եղակալել է էդ անիծածը, — մտածում էր
Դանելը, — լավ կլեր մին էլ թափ տայինք, բայց ի՞նչ անես,
որ հրաման չկա... Հենց էդ իմանում է, էնդուր է երես առ-
նում. մի տես՝ ո՞նց է ոտք հուպ տալիս, երբ իր դուռը մարդ
է գալիս՝ խնդրում, որ կիսովի արտք վարի. քա՞նի անդամ
տանում-բերում է, շարշարում, ձեռք լիզել տալիս, նոր վա-
րում: Իսկ Մուքելի գլուխը, ի՞նչ օյին էր հանել. կարելի՞ է
ձուանալ. դեռ ասել էր՝

— Անհոգ կաց, արտդ կվարեմ, փողն էլ հեշտ է, երբ
էունենաս՝ կտաս:

Բայց ժամանակը որ եկել էր, Սահակը լծել էր գութա-
նը, ամեն ինչ պատրաստել ու վերջին բոպեին առել, թէ՝

— Փողը հանիր տուր, թէ չէ՝ դու գիդաս, վարիլ չեմ:

Ու մինչեւ օրս էլ Մուքելի արտք մնում է վարելու:

Զէ, Դանելը Սահակի կամ նրա նմանակի դուռը գնա-
ցողը չի, թեկուզ տասը տարի սոված մնա իր ընտանիքով:
Բայց ի՞նչ անի, ո՞րտեղից ճար գտնի... ցանիլ չես՝ հնձիլ
չես... մի տուն երեխեքդ կմնան քաղցած...

Մտածում էր Դանելը՝ կանգնած իր տան սրահում,
միտքը դես-դեն գցում, բայց մի ճամփա չէր գտնում: Ի՞նչ
պայծառ վարելու օր է, բայց փետի նման կանգնել է ու չի
իմանում՝ ի՞նչ անի, ո՞ւմ դիմի...

Դանելի կինը՝ նստած նույն սրահում՝ երեխանց կար-
կատանն էր անում: Նա աշքի տակով հետևում էր մարդուն,
զգալով, որ նա էլ նույն դարդի մեջ է, ինչպես և ինքը: Մեկ-
մեկ խորը շնչում էր, զսպելով ինքն իրեն ախ քաշելուց: Կա-
նացի սիրտն անհամբերությունից պատովում էր. «Էս ա օրե-
րը կանցնեն, խալխը կվարեն, կցանեն, մեր արտք կմնա խո-
սան, էլ ինչո՞վ ապրենք, ո՞ւմ դուռն ընկնենք...» — մտածում
էր Հոռոմսիմը ու մի առիթ փնտրում, որ մարդուն էս բոլորն
ասի, թեպետ օր չէր անցնում, որ դբա շուրջը խոսք չբացվեր:

Փոքրիկ Արտոն՝ Դանելի տղան, բոքիկ ստներով, վազե-
վազ եկավ կանգնեց մոր առաջ ու հեխնե վրա բերեց.

— Հաց եմ ուղում:

— Ի՞նչ հաց. նոր շոարա՞ր,—ասաց մայրը,—հենց
իմանում ես ամբարներդ լիքն ի՞ն... էգուց-էլոր հացը կվեր-
շանա, փորիդ միթիշ հուպ տուր: Գնա վերցրու, քիչ կտրի,
թե չէ ինձանից չես պրծնիլ:

Երբ երեխան հացը կծուելով դուրս գնաց փողոց, կինը
դարձավ Դանելին.

— Էս օրերն անց են կենում, չորս կողմը վարում են,
դու ի՞նչ ես մտածում. էգուց-էլոր քեզ հաց է հարկավոր,
երեխանցդ ի՞նչ պատասխան ես տալու:

— Ի՞նչ պիտի անեմ. մթամ դու չե՞ս իմանում, որ ոչ
լծկան ունենք, ոչ գութան:

— Դու միշտ էդ ես ասում. դե տեսնում ես՝ չունեցողն
ունեցողին ա կպչում՝ հետը յոլա գնում, վարել տալիս. բա
կանգնելով բան կըլի՛. Երեն Սահակը քանիսինն է վարել:

Սահակի անունը կարծես շամփուրով դաղեց Դանելին.
նա պատասխանից գրգռված.

— Հենց մի գլուխ տակից-գլխից խոսում ես. ես քեզ
ասել եմ՝ տղամարդու բաներում մի խառնվիլ:

— Հիմի էն ժամանակը չի, որ կնիկը բերանը կապիր,
սուս կենա. ինչի՞ ես էլ իմ խորհուրդը շասեմ. խի՞, մենակը
խելոքը դու ե՞ս...

— Բա քու նոր խելքդ ո՞րդի մնաց.—ասում ես՝ գնա
Սահակին խնդրովի. բա ո՞նց չես միտոդ զցում՝ քանի անգամ
ենք նրան խայտառակ արել, հիմի թուք ու մուրը կուլ տա-
լով գնանք մեղա գա՞նք:

— Ինչի՞ պտի մեղա գաս, է՞դ էր պակաս. քեզպես մի-
քանիսդ գնացեք ճակատ-ճակատի կաղնեք ու վարել տվեք
արտերը:

— Ներողովյուն կանես. խաթրով, օրենքով թե կարաս՝
կանես, թե չէ՝ ճակատ-մակատ չկա... Համ ասում ես՝ յոլա
գնա, համ էլ թե՝ զոռի կաղնենք:

— Ո՞նց թե իրավունք չկա, որ սուս կենաս ու օրենք-օրենք անես, քեզ հայ տվողն ո՞վ է: Նոր օրենքն էն է, որ աղքատն ապրի, բա երեխանցդ կոտորելու հ՝ս: Թե ուղիղը կուզես՝ տղամարդիկդ փալաս եք դառել. շատ եք խոսում, բայց թուրներդ կարուկ չի:

— Եդ լեզուդ առանց էն էլ մի բան չէր, հիմի թթուն կծու ես արել... թուրը կտրում չի... քեզ համար աշխարհու գուզ է... շատ էլ կտրուկ է թուրս, բայց որ կտրելու բան չկա՝...

— Լավ, հիմի քո ասելու ի՞նչ է.—մենք գնանք ջուրն ընկնենք, իսկ Սահակի կնիկն ու երեխեքը գաթա ուստեն ու նախշուն շթեր հագնե՞ն... մի տեսնեմ՝ ո՞րն է քու օրենքը՝ ապրելն է, թե՝ մեռնելը. իմ ասելն էն է, որ ձեր ձենը պտի լսել տաք, քարը պատռեք ու արտերը վարել տաք:

— Դու որ էզպես մեծ-մեծ խոսում ես, նրանից է, որ աշխարհից տեղյակ չես, հենց իմանում ես՝ քու հրամանքն է ինչ ուզես՝ անես, ասելու ի՞նչ է՝ քանի փափախս զլխիս. Ես՝ Սահակի դուռը չեմ գնալ... թե սրտովդ է, դո՛ւ գնա:

— Էն է ասա՝ օրս սև է, էլի՛... բա էն մեծ-մեծ խոսելն ընշի՞ս էր, որ էս օրը պաի մթնացնեինք... է՛հ, ոնց ուզում ես՝ արա, իմ օրը սև է ըլել, սև էլ կմնա...»

Ու կինն սկսեց լաց լինել՝ զսպելով իր հճճկւտողը:

— Դե լա՛վ, ի՞նչ ես քեզ ու քեզ վառվում. տղամարդու զործ է՝ տղամարդն էլ կանի. զու լավ կանես՝ քու կարկատանին ու իլիկին մտիկ անես,—ասաց Դանելն ու դանդաղ բայլերով դուրս եկավ փողոց:



Գյուղսովետի սրահում հավաքվել էին մի խումբ գյուղացիներ ու աղմկում էին: Դանելին գուր էր գալիս այդ աղմուկը. կարծես հույս էր տալիս: Մոտ գնալով՝ նա նկատեց իրեն լավ ծանոթ գյուղատնտեսին, որը խոսում էր գյուղացիների հետ և ինչ-որ գրում ծոցատերում: Նրա երկար մորու-

քը, արեկից այրոված դեմքը ցույց էին տալիս, որ վազուց է դուրս եկել քաղաքից: Իր դեմքի բարյացակամ և ուշագիր արտահայտությամբ նա շատ նման էր երեխաներից սիրված ուսուցչի, որն իր շուրջը հավաքած աշակերտներին՝ ներողամիտ ժամանելով ամենքին էլ հավասար լսում է և բավարարում: Գյուղացիք՝ մեկը մյուսի առաջը կտրելով խոսում էին այնքան բարձր, կարծես լսողը պյուղի մյուս ծայրին էր: Հատ ու կտսր լսվում էին.

— Թէ լծկանի ճար շարիք, լավ է դնանք շուրջ թափ-մենք...

— Մեր հույսը դուք եք...

— Մեզ մեր զորքաների ճանկը մի՛ք պցիլ...

Դանելը մոտեցավ գյուղատնտեսին:

— Բարով եք եկել:

— Այ բարե, ո՞նց ես, Դանել, դու ի՞նչ կասես ձեր գյուղի կարիքների մասին:

— Դե ի՞նչ ասեմ. բոլորը դրանից են խոսում. լավ տեսնում ես՝ ինչ օրի ենք...

Ապա նկատելով, որ Սահակի տղան գյուղացիների մեջ կանգնած լսում է, շարունակեց, ուզենալով ծածկել իր բուն ասելիքը.

— Դե դուք էլ լավ հասկանում եք, թէ ի՞նչ դրության մեջ ենք. մի խոսքով՝ ես ձեզ իմաց եմ անում, որ բանն ուրիշ թալուր է... պետք է օգնությունը հենց հոգուն վրա համար...

Գյուղատնտեսը ժպտաց:

— Ասում ես՝ «բանն ուրիշ թալուր է»... լավ, որ եղաւ է, մի ճար կանեմ ձեզ համար:

Գյուղատնտեսի նախագահ Պետրոսը, որը վիոքահասակ, նիշար դեմքով, ինքնահավան մարդ էր, իր պարտքն էր համարում ամենքի խոսելուց հետո բացատրել նրանց ասածը ու նորից կրկնել ամեն ինչ: Նա վորձեց խոսել Դանելից հետո.

— Հընգեր, այ ասեմ, թէ մեր դրությունը ո՞նց է. էս մեր գեղը հո տեսնում ես, մեզ մոտ շատ մարդ կա, ոչ լըծ-

կան ունի, ոչ գութան, Հիմի ասենք վարելու ժամանակն է հասել...

— Ներողություն,—ասաց գյուղատնտեսը, կտրելով նախագահի խոսքը, —ինձ համար պարզ է ձեր գրությունը. այս ինչ եմ մտածել. թող ձեզանից երկու հոգի գան ինձ հետ միասին՝ գնանք սովետական տնտեսություն, կիսնդրենք, որ ձեզ տան էն նոր բերած մաշինի գութաններից, տրակտոր են առում. կարելի է տեսած լինեք՝ առանց լծկանի վարում է:

— Այս շնորհակալ ենք, —ձայն տվին գյուղացիք:

— Տղերք, իմացա՞ք, —ասաց Դանելը. —դե եկեք՝ երկու մարդ ջոկենք, որ գնան մեր ընկեր գյուղատնտեսի հետ:

— Դե մինը մեր նախագահը կը լի, մինն էլ դու, —ասաց գյուղացիներից մեկը, որն ամենքից տարիքով էր:

— Հոժար ենք, —ձայն տվին գյուղացիք:

— Եկեք գնանք՝ միքից հանգստացեք, —ասաց նախագահը գյուղատնտեսին:

— Ո՛չ, չեմ կարող, հենց Հիմա պիտի գնամ, շտապ գործ տնեմ:

Սովետական տնտեսության կառավարիչը խոսում էր մշակների հետ, երբ պատգամավորներն ու գյուղատնտեսը ներս մտան: Կառավարիչը կարձահասակ էր, լիքը մարմնով, արևից թիացած կլոր դեմքով:

— Բարեւ ձեզ:

— Բարեւ, հը, ի՞նչ է պատահել, երեքով եք գալիս, —ասաց նա ժպտալով ու իր լայն, մսոտ ձեռքը տվեց երեքին էլ:

Գյուղատնտեսը բացատրեց գործի էությունը:

— Հա՛, բանն էսպես է, —վերջացրեց նա, —էս մարդկանց հույսը քեզ վըա է, պիտի մի ճար անես:

— Գիտե՞ք ինչ կա, —ասաց կառավարիչը գյուղացիներին, որոնք ուշադրությամբ հետևում էին նրա դեմքին, ուղենալով գուշակել իրենց խնդրի վճիռը. —տեսնում եմ, որ

թունդ նեղն եք ընկել. բայց ո՞նց անենք. երկու տրակտոր ունենք. մեկը մեզ հարկավոր է, մյուսն էլ փշացել է:

Դանելն առաջ ընկալ.

— Ընկեր ջան, որ էսօր քու դուռն ենք եկել՝ իմացիր՝ տեղներս շատ նեղ է. պետք է մեր զորքաներից մեղ ազատեք. էն է՝ ատամները սրած սպասում են, որ մեղ գցն. էսքանն իմացեք, որ բանն ուրիշ թավուր է...

— Ի՞նչ ասիր... բանն ուրիշ թավուր է. — ասաց ժպտալով կառավարիչը. — Հէ տեսնում եմ, որ շատ նեղված եք, բայց իմ բանն էլ դժվար է... ուղղղն ասած՝ գործը մեր վարպետի ձեռին է. գնանք տեսնենք՝ ի՞նչ է ասում:

Ու քայլերն ուղղեց դեպի բակի մյուս ծայրի շինությունները: Ելվորները հետևեցին նրան:

Վարպետ Ռոկանը փոքրիկ արձեստանոցում խորասովվել էր գործի մեջ. խարացում էր մեքենայի մասը:

— Ընկեր Ռոկան, էս մարդկանց հո տեսնո՞ւմ ես. կարծ ասած՝ սրանք ոչ եղներ ունեն, ոչ դութան. եկել են տրակտոր խոնդրելու: Էս մեր տրակտորը պիտի նորոգենք, իրենց տանք. Հիմի գործը քեզ վլա է, ի՞նչ ուղում ես արա՝ հնարքով լինի, թե հրաշքով՝ պիտի էս մարդկանց տրակտոր տաս:

Ռոկանը՝ հանկարծակի եկած կառավարչի վճռական տոնից՝ նայեց նրա գեմքին, կարծես ստուգելով, թե ո՞րքան հաստատ է նրա կամքը:

— Ընկեր Արշավիր, ձեզ հայտնի է, որ գործով խեղդված եմ. մի կողմից էլ հարկավոր նյութեր ու գործիքներ շկան. կաշխատեմ, թե հնար կլինի՝ դրանց բախտն է:

— Ընկեր, իմացած լինես, որ մեր բանն ուրիշ թավուր է, — ասաց դյուղսորհրդի նախագահը, կրկնելով Դանելին:

— Լա՛վ, ուրեմն վաղվանից կսկսես: Իսկ դուք, ընկերներ, հո լսեցի՞ք, մի շաբաթից հետո կդաք. թե պատրաստ կլինի՝ կտանեք տրակտորը:

— Շնորհակալ ենք, մնաք բարով:

Դանելն ու նախագահը հանապարհեցին դեպի դյուղը:

Ամբողջ շաբաթ գյուղն իրարանցման մեջ էր: Դանելի խոմբը՝ գյուղի աղքատները՝ մեծ հուսով սպասում էին տրակտորին՝ «մաշինի գովթանին»: Իսկ կովակները՝ որտեղ նստում, ծաղրում էին նոր տեսակի «գովթանը» և կասկածում նրա գալու վրա: Բայց այսքանը կար, որ քանի մոտենում էր սպասած ժամանակը, այնքան ավելի էր ուժեղանում անհանգիստ, լարված դրությունը գյուղում: Աղքատները մեկմեկ ծաղրի ու կասկածանքի ազգեցովթյան տակ իրենք էլ տարակուանքի մեջ էին ընկնում, մտածելով, թե՝ հանկարծ տրակտորը չգա, ու իրենք հարուատների սրտով լինեն, ավելի նեղն ընկնեն, իսկ հարուատները նախանձից գրգռվում էին կարծելով, թե կարելի է այդ գովթանը մի էնպես հրաշք է, որ աղքատներին իրենցից կբարձրացնի ու նրանց առանց այն էլ երկար լեզուն ավելի կերկարացնի:

Կիրակի առավոտը գաղթական Տիգոն՝ սովետական տնտեսովթյան բանվորը, եկալ Դանելի տունը.

— Դրախտոր բաղրաստ է, — ասաց նա ցածր, խոպոտ ձայնով, մի աշքը շիլ անելով:

— Ի՞նչ դրխտուր, ի՞նչ ես ասում:

— Դրախտոր, մաշինի գովթան շինած-բաղրաստ է:

— Պա՛հ, քեզ մատաղ, էղպես ասա էլի՞... ապրե՛ս, զե արի գնանք, տղերանցն իմաց անենք:

Երբ նրանք անցնում էին գյուղի գլխավոր փողոցով, Սարոյի խանութի մոտ (նրա ավել անունը «Հորացած Սարո» էր), գերանների վրա մի խումբ գյուղացիներ նստած զուտ ցում էին: Կենտրոնում Սահակն էր, նրա շուրջը՝ գյուղի մյուս կովակները, բայց նրանց մեջ կային միքանիսը այն միջակ գյուղացիներից, որոնց չէր կարելի դասել ոչ ունեռուների, ոչ աղքատների կողմը, և որոնց մասին Դանելն ասում էր, թե նրանց մի ոտք տաքումն է, մյուսը՝ սառումը:

Սահակը նստած դրությամբ շատ նման էր այն կարճ ու հաստ կաղնիներին, որոնք ոչ մի կացնի մոտ չեն թողնում:

Իր թափթփված բեղերի արանքից նա խոսքեր էր շաղ տալիս «մաշինի դութանի» մասին:

— Հա՛, դլուխները եղոտ կըլի, բան ու գործ են շինել էդ շինմաշինի մաշինի-դութանը, էլ չեն իմանում, որ տակը բան չկա, ինելքները կորցրել են, ուզում են, մենք էլ կորցնենք. ախաղեր, հա՛յ-հա՛յ անելով արտ չի վարվիլ: Առանց լծկան դութան կըլի՞... քիչ էլ կենան, կասեն՝ երկաթի մարդ է գալիս...

Դանելը մոտենում էր Սահակի հետեկից. նա մտադիր էր անցնել առանց ձայն հանելու, բայց վերջին խոսքերն այնպիս վառեցին նրան, որ կանդ առավ.

— Վախիլ մի, Սահակի սրտովը չի ըլիլ. Հենց լավ էլ իմացած կենաս՝ տրակտորը՝ մաշինի դութանը գալիս է. հազիր էն ասես, ինչ սրտումդ է՝ դու չես ուզում, որ աղքատն էլ օր քաշի:

— Ինչի՞ս մրա ես ասում, թե սրտովս չի. Հերթք չի՞ ինչքան տունս քանդեցիք, բա ես խալսի լավը որ շուկենամ, լծկանս ու դութանս էսքան մարդու կտա՞մ:

— Էդ որ տալիս ես, ձրի ես տալի՞ս. տասն անգամ սերը քաշում ես. շըլինի՞ թե՝ էն ցորենն ու փողը որ առնում ես, քու տունը չի մտնում: Ում տալիս ես՝ քու ճորտն ես շինում:

— Ախաղեր, դե էն ա միանգամից գնդակի տակ տվիք, պրծեք էլի՝ թող քոռ ու փուշ ըլեմ, վերջանամ: Զաթի ձեզանից օր չեմ տեսել. թող սրանից գենը շքվեմ...

— Դու շատ լավ գիտես, թե մեր ուզածն ինչ է. էդ դո՞ւ ուզում ես՝ ինչ կա, քոնը լինի, ու խալսն էլ քու ստրուկը դառնա...

Դանելը շարունակեց իր ձանապարհը Տիգոյի հետ, իսկ Սահակը խեթ նայելով նրա հետեկից՝ մտքում հայհոյում էր: Իրեն շրջապատող դյուդացիք բերանները հուալ տված՝ քաղաքագիտորեն լուսմ էին:

— Ես ի՞նչ վատ ժամանակ է,—ասաց խանութանը՝ զկուշությամբ դիտելով շրս կողմը իր շոած, վախս կերած աշքերով,—խերը հո կորել է, լավ խոսքն ինչ է՞ ի՞ս էլ

է շքացել: Հիմի տրակտոր հնք բերում՝ կոփվ է, դա էլ կոռպերատիվի նման ավելորդ բան է... է՞ և ափառ չե՞ր առաջվագ ժամանակը. Հավատ կար, յոլա դնալ կար... չէ՛, ախսպեր, խերն ու լավությունը գնաց...

Սահակը՝ առանց լսելու խանությանին՝ վեր կացավ, փեշերը թափ տալով ու փնթփնթալով գնաց դեպի տուն:

Հննց որ գյուղում ձայն ընկավ տրակտորի գալու մասին, էլ մարդ շմնաց՝ զուրս եկավ փողոց: Սկսած գյուղի ծայրի ջրաղացից մինչև կոռպերատիվի հրապարակը տրակտորն անցնում էր «կեցցեների» ուղեկցությամբ: Մեքենավարի տեղը Ասկանն էր. նա ամաշկու ժամանակ էր այս անսպասելի բազմության հայացքների դիմաց: Տրակտորի ճակատին ամբարտած փոքրիկ կարմիր գրոշակը փոփոռմ էր ուրախ, կարծես պատասխանելով «կեցցեներին»:

Տրակտորը կանգ առավ կոռպերատիվի առաջ: Գյուղացիները շրջապատեցին մեքենան ու ագահությամբ դիտում էին նրա մասերը: Երեխանները ճշալով ու մեկ-մեկու հրելով առաջ էին. ընկնում մեծերի խիտ շարքերից ու աշքերը չուած՝ դիտում ու շոշափում այդ տարօրինակ գովիտանը: Ավելի հեռվից՝ ո՞րը տան շեմքից, ո՞րը կտորից, նայում էին կանաքը:

Դանելն իր միքանի ընկերներով ուրախ ժպտալով կանոնել էր մեքենավար Ոսկանի մոտ, նրա թիրու բռնել:

Մաղոն՝ որը գյուղի ունեորներից էր, մոտեցավ տրակտորին, խեթ նայեց իր սովորական ծուռ հայացքով, որի ժամանակ նա իր ձախ աշքը փակում էր:

— Ախապեր, թե իմ խելքը բան է կտրում՝ սա վարող պտուղ չի. թե սա մեր արտերը փարի, ինչ ուզում եք ասեք, թեկուզ բեղս կտրեք... էնպե՞ս, թամաշի համար են բերել:

Մեքենայի մոտ կանգնած վարպետ Ռոկանը կատաղեց:

— Ի՞նչ, շես հավատո՞ւմ, դե սպա՛սիր, ամբողջ օրը քեզ պտի ման ածեմ մեքենայի հետեկից, որ ինքդ քո ձեռով բեղդ կտրես:

Մադոն վախից ետ քաշվեց, մտածելով, թէ պատիժ նշանագեն իր խոսքերի համար:

— Բնկեր Ռոկան, դէ զնանք միքիչ հանգստացիր, մի քան կեր, հետո կվարենք,—ասաց Դանելը:

— Զէ՛, հենց էս րոպեիս պետք է սկսենք,—ասաց Ռոկանը,—ձեր գեղում էնպես մարդիկ կան, իրանք չեն հավատում, ուրիշների սիրտն էլ ուզում են պղորել: Էդ տեսակ մարդկանց աշքը պիտի ծակենք ու վարենք:

— Դէ տանենք էս մոտիկ ուսումնարանի արտը վարենք:

Ռոկանը պտտեց տրակտորը ու դանդաղ շարժվեց գեպի ուսումնարանի արտը. նա դիտմամբ դանդաղում էր, որպեսզի շատ մարդ հետևի իրեն:

Վարն սկսելուն պես սկսվեց և գյուղացիների ցնծալի զարմանքը.

— Ա՛յ տղա, սրան մտիկ, է՛, հենց վարում է հողը, կասես դարման է շուռ տալիս:

Դանելի կինը վազեվազ եկել էր ու մոռանալով իր ամոթխածությունը, կանգնել էր մարդու մոտ. նա ասում էր ցածր ձայնով, Հրելով նրա կողքին.

— Ա՛ մարդ, դէ մի ասա շուտ անի, մեր արտը վարի է՛...

— Ա կնիկ, տեսնում չե՞ս. Հլա նոր է փորձում. մերն էլ կվարի, ուրիշներինն էլ, վա՛խիլ մի, մեզ էլ կհասնի:

Կնոջ դժողով գեմքից երևում էր, որ նա չի հավատում, թէ իրենցին էլ կհասնի:

Երբ Ռոկանն արգեն վերջին ակոսումն էր ու մոռանում էր արտի ծայրին, որտեղ կանգնած էր Դանելը, ուրախությունից դեռ վերջին չհասած՝ կանգնեցրեց տրակտորը ու բարձր ձայնով կանչեց.

— Դանել, բանն ի՞նչ թավուր է...

— Բանն ուրիշ թավուր է, Ռոկան, ո՞ւրիշ թավուր է...

Երկուան էլ ծիծաղեցին, հիշելով մի շաքաթ առաջ ասած խոսքերը, որոնց նշանակությունն իրենք էին հասկանում:

Դանելի շուրջը համարված դյուղացիք՝ գլխի ընկնելով նրանց
գաղտնի խոսակցությունը, ժպտում էին:

Գործը վերջացնելուց հետո Ոսկանին տարան ճաշի:
Այստեղ ուրախությունն առանձնապես շաղացավ Դանելի
շուրջը. ամեն կողմից նրան էին դիմում.

— Դանել, բանն ուրիշ թափուր է, ո՞րիշ...

Ասում էին ու ծիծաղում:

Երբ դուրս եկան ճաշից ու գնացին տրակտորի մոտ,
Դանելը՝ երջանիկ ժպիտը դեմքին, հենվելով տրակտորի
վրա՝ ասաց.

— Ախաղեր, ճիշտ որ բանն ուրիշ թափուր դառավէ: Այս
զան տրակտոր՝ միշտ էսպիս մեր նեղ մաջալին հասնես,
ինչպես էսօր հասար: Տղերք, հիմի տրակտորն է մեր զեն-
քը, սրանով ենք կովելու...

Ու սիրալիք հայացքով նայում էր մեքենային, որի մեջ
կարծես՝ ամեն արգելքներ հաղթող ողի էր նստած...

1926

Օ Ղ Ա Կ Ո Ւ Մ

Ակումբի ընթերցարանում մնացել էին՝ բանվոր Մադաթը և երկու կոմերիտականներ:

Մադաթը թիկնել էր աթոռին և հանգատացող աշխատավորի բարյացակամ ժամանակով նայում էր երիտասարդներին:

Նավթահանքերում երկար տարիներ աշխատելուց հետո Մադաթի դեմքն իր շեկ մորուքով ծծվել էր գորշ գույնով ու տեղ-տեղ սեխն էր տալիս մանրիկ բծերով։ Երբեմնի կապտավում, վճիռ աշքերը պղտորվել էին, կոպերը կարմրել։

Նա նայում էր ու խորհրդածում, թե ժամանակը փոխվել է, ու սրանք էլ այնպես չեն ապրում, ինչպես ինքը և իր ընկերները՝ տասնյակ տարիներ առաջ։

— Ընկեր Մադաթ, մի բան պատմիր անցյալից,— ասաց Ռուբենը։

— Այ ջահելներ, էդ որ անցյալից տեղյակ եք տալիս, անցյալի զադրը իմանո՞ւմ եք։

— Ինչպես չէ, ընկեր Մադաթ, մենք ջատ բարձր ենք գնահատում մեր հին ընկերներին, — ասաց Ռուբենը։

Մյուս ընկերը խորհրդավոր ժպտում էր, կարծես համաձայնվելով Մադաթի հետ։

— Հենց, օրինակի համար էս մեր Վաղոն, — ջարունակեց Մադաթը ձեռքն ուղղելով նրա կողմը, — նստել է՝ փառավոր, ոտը ոտի վրա դրել, գագեթ ա կարդում։ իսկի մտածո՞ւմ է, որ առաջվա ժամանակը, եթե ժանդարմը էդ տեսակ գագեթի մի կտորը գտներ բանվորի մոտ, բանտում կփառացներ նրան։

բայց հիմի որ Վաղոյին փոսացնես, կասի Մադաթը հին մարդ է, լավ չի հասկանում հարցերը...

Վաղոն լսելով խոսակցությունը, լրագիրը թողեց ու մոտեցավ Մադաթին:

— Զի՞, ընկեր Մադաթ, քու անոմը այս էստեղ եմ պահել, — ասաց նա, ձեռքը դնելով սրտի վրա:

Մադաթը ժպտաց: — Պարզ երեսում էր, որ նա չէր նեղանում, կատակով էր խոսում:

Բողեաշափ նայելով Վաղոյին, Մադաթը թեթև տխրեց:

— Քեզ որ տեսնում եմ, Վաղո, միտս է գալիս մեր հին ընկերներից մի լավ տղա. — մի քիչ դու նրան նման ես տալիս, էնպես կուզեի, որ նա էլ մեր մեջ լիներ...

Տղաները զգալով, որ Մադաթը պատրաստվում է պատմելու, նստեցին նրա կողքին:

— Լավ միտս է, — շարունակեց Մադաթը, — աշումքվավերջին էր, էն թոռ ու թացին, որ եկավ էն տղեն ու ծառայության մտավ մեր նամիշահանքերում: Նա նոր էր եկել գյուղից, իսկ ես արդեն հինգ տարի էր, աշխատում էի: Զահել՝ հասակը տեղը, կրակուտ աշքերով տղա էր: Որ տեսնում էի նրան նավթի ու ցեխի մեջ, սիրու ցավում էր, ասում էի, — ափսո՞ս տղա, դու էլ մեզ պես պետք է կյանքդ մաշես, նավթիսվես ու կերպարանքից ընկնես... էդպես մարդ ափսուում է, երբ տեսնում է սարիցը եկող թովուան առջարներին, — մտածում է, թե նրանք էլ ծանր լուծի տակ կընկնեն ու չեն սիրուն տեսքը կկորցնեն...

Էս տղեն եկավ-շեկավ՝ ոնց որ թխպի տակից արև գուրս եկավ մեզ համար: Ուրախ էր, սրտաբաց ու այնպես համարձակ, որ ես շատ քիչ եմ պատահել նրա նմանը:

Շատ լավ ձեն ուներ. մեկ էլ տեսար՝ մի երգ, մի բայաթի վեր քաշեց, ու էնպես կլկլացրեց, որ սիրու հետը տարավ: Երիկունները կաղարմում երդում էր, սազ ածում, նաղելեր պատմում, մեկ մեկ էլ սկսում էր կառավարիչին, ինժեներին ձեւացնել. ծիծաղից թուզանում էինք՝ համ էլ թաքուն տկանցին ասում.

— Ա՛ մեռած, խելոք կաց, էստեղ լրտեսող մարդիկ
կան, խաթի մեջ կդցեն քեզ:

Բայց նա վախեցող տղա չէր, շատ անգամ հենց ճակա-
տին կիսիեր խոսքը, որ զարմանում էինք, թէ ո՞րտեղից է
էղ համարձակությունը:

Մեր ռևոլուցիոներ ընկերները միշտ պաշտպանում էին
նրան, մտածում էին թէ մի օր էլ՝ երբ աշքերը կբացվեն,
կմիանա մեզ հետ:

* * *

Եկավ գարունը: Դե մեր նավթահանքերում ի՞նչ գա-
րուն,—ցեխից ազատվում էինք, թողի ճանկն ընկնում:

Հենց որ արևը մի քիչ բարձրացավ, երկինքը երեսը
պարզեց, ևս մեր Սամելը (էդպես էր նրա անունը) ավելի
տաքացավ. միտն էր բերում իրանց կանաչ սարերն ու սառն
աղբյուրները, երգում էր, հենց իմանաւ երգով հարթում էր:

Նրա երգի պատճառով հաճախ կոփիվ էր ընկնում կառա-
վարչի հետ: Էղ կառավարիչը մի կոպիտ, հաստկաշի մարդ
էր, կարձ բոյով, պոչը կտրած վերարկվով, սապոգները հա-
գին: Ամեն անգամ նկատողություն էր անում Սամելին. բայց
չէր կարողանում շատ ձենը բարձրացնի, պատճառը որ՝
վախում էր մեզանից—տեսնում էր՝ մենք նրան պաշտպա-
նում ենք:

Մի օր էլ էղ կառավարիչը գլուխը կորցրած սպասում էր
ինժեներին: Ինչ որ գործիք էր փշացել, շատ էր վախում.
գիտեր, որ ինժեները զա՝ պետք է շան լափիը դլիսին տա:
Հենց էղ ժամանակ էլ Սամելն իրան բայաթին էր վեր քաշել:
Կառավարիչը մի քանի անգամ գազազած գնաց-եկավ, խե-
թեց Սամելին.

— Արա ձենդ կտրի, թէ չէ վերջը վատ կլի:

Սամելն էլ թե.

— Վատը թող վատին ըլի, ինչի շպետք է երգեմ:

— Էսա ինժեները կգա քեզ գուրս կանի:

— Թե նա մարդ ա—դրա համար չի դուրս անիլ:

— Դե սո՞ւս, զահլես մի տանիլ, թե չէ ես ինքս դուրս կանեմ:

— Հետո որ դուրս անես կմարտե՞ս...

Էդ ժամանակ մեր տղերքը մի քիչ ձեն ու ձուն արին, որ վախցնեն կառավարիշն:

— Արա էդ ի՞նչ խաբար ա... ի՞նչ է ուզում. լսվում էին ամեն կողմից:

Կառավարիշը տեսավ, որ Սամելի քամակին մարդ կու, դուրս եկավ փնթինթալով:

Մեկ էլ տեսանք՝ ինժեները եկավ ֆայտոնով: Կառավարիշը նրա առաջն ընկավ, խոնարհ խոսքերով ուզում էր քաղցրացնի, բայց երեսում էր, չէր հաջողվում:

Էդ ինժեները մի բայցուշ մարդ էր, մեծ, դուրս ցցված բթով, մանր՝ բզով ծակած աշքերով, երեսն էլ ոնց որ երկու տափտակի մեջ տափտակացրած: Որ երեսում էր մեր աշքին, էնպես սրտներս սկանում էր: Ինչքան էլ ամեն բան տեղը ըլեր, էլի նա պետք ա անպատճառ նկատողություն աներ, դուռըուար ու հայտնյեր:

Ֆայտոնից վեր եկավ, մի քիչ առաջ անցավ ու կանգնեց.—ականջին ընկավ մեր Սամելի ձայնը՝ երեսը ծոմոնց ու վրա պրծավ կառավարիշն:

— Դու էստեղ ինչացո՞ւ ես:

Կառավարիշը սփրթնեց:

— Զէ՛, մի ասա տեսնենք, դու ինչացո՞ւ ես, կառավարիշ հ՞ս, թե ժամանուած երկաթի կտոր. դու գործի մտի՞կ ես անում:

— Մտիկ եմ անում:

— Բա էդ որ երդում է՝ չե՞ս լսում. մի դեսը կանչի տեսնեմ ո՞վ է էդ քուրակը:

Կառավարիշը վաղեվազ գնաց կանչեց:

Սամելը եկավ, առաջը կանգնեց:

Ինժեները մի խեթ նայեց Սամելին:

— Էստեղ թատրո՞ն է, որ բերանդ զունա ես շինել:

— Զուռնան քո բերանն է, որ էղպես անպատիվ բաներ ես ասում:

— Առ' ա, ինչպե՞ս ես համարձակվում էղպես պատասխան տալ, — գոռզոռաց ինժեները:

— Դու մարդավարի հա՞րց ես տալիս, որ ես մարդավարի պատասխան տամ:

— Դո՞ւրս, դո՞ւրս կորի, քո ոտք չի էստել... պոլիցիա կանչե՛ցեք...

Բայց էդ ժամանակ մեր տղերանցից մի քանիսը դուրս եկան նրա առաջը: Մեզ տեսնելուն պես գույնը դցեց, եթե մնար՝ բանը վատ կլիներ. շատ էինք դաղված նրանից:

— Ընկերներ, — ձեն տվեց բանվոր Դանելը. էլ համբերելու տեղ չի մնացել. թե որ բան է՝ մեր Սամելին հեռացնեն, մենք պետք է նրան պաշտպանենք...

Սամելը զարմացած նայում էր. նա չէր սպասում, որ իրեն էղպես կպաշտպանեն:

— Սամել, — ասացի ես, — զոշաղ կաց, քամակիդ պինդ կանգնած ենք:

— Ես էլ ձեզ հավատարիմ ընկեր, — ասաց — որտեղ դուք՝ Հնտեղ էլ ես:

Եդ դեպքից հետո Սամելի անունն ավելի վեր ելավ. բանվորներն ուրիշ աշքով էին նայում նրան:

Մենք մի լավ պարտիական ընկեր ունեինք — անունը Մուքել էր. նա որ առաջին անգամ տեսավ Սամելին ասաց մեզ.

— Սրա մեջը բաներ կան, կամաց-կամաց առաջ քաշեցեք, սովորեցրե՛ք:

Դրանից հետո մի շաբաթ էր՝ ամեն օր սպասում էինք. թե էս է, Սամելին կհեռացնեն գործից: Հետո իմացանք, որ ինժեները հենց դեպքի օրը պահանջել էր Սամելին դուրս անել, բայց էդ ժամանակ հանքատերն ասել էր.

— Էդ գործը թողեք, ես ինքս կկարգադրեմ:

Եշա՛րկե՝ մի ուրիշ ժամանակ հանքատերը մի լոպե էլ չէր պահիլ Սամելին, իսկ հիմա հանգամանքներն էնպես

էին, որ վախենում էր գործադուկից: Բայց նա էլ ուրիշ ճանապարհով էր բանը դրատում...

Մի երեկո տեսնենք՝ եկավ պոլիցեն. Հարցրին Սամելին: Նրա բախտից էդ ժամանակ տանը չէր: Խուզարկեցին առաջ նրա իրեղենները, հետո էլ անցան նրա կողքի բանվորներին:

Իսկույն գլխի ընկանք, որ Սամելին մատնել են: Մեր ջահելներից մեկին ուղարկեցինք, որ իմաց անի: Ապսպրեցինք, թե «Քեզ ուզում են ձերբակալել, գլուխդ ազա՛տիր, գնա գյուղը, մինչև որ գործը կմոռացվի»:

Էդ տղեն դուել էր Սամելի տեղը ու իմաց արել: Հենց էդ դիշերը նա գնացք էր նստել ու ճանապարհ ընկել դեպի իրենց գյուղը:

Գարունքիւ կանաչի էն անուշ ժամանակն էր: Սամելը որ գալիս է գյուղը, հերն ու մերը շատ են ուրախանում, բայց մի կողմից էլ անհանդմտանում են, թե ինչի՞ էսպես շուտ վերադարձավ քաղաքից: Սամելը հնարում է, թե արձակուրդ է առել, եկել է հորն ու մորը տեսնելու:

Նա օգնում է հորը, տան գործերը կարգի գցում, իսկ ազատ ժամանակը գյուղացիների հետ խոսք ու զրից անում: Դու մի ասիլ՝ որտեղ նստում է, մեղանից լսած բաներն իրարկապում, քարոզում է:

Պատահել է, որ գյուղը պրոպագանդիստ ենք ուղարկել, նա էնքան բան չի կարողացել անի, ինչքան Սամելը: Խոսելուա բաց չի թողել գալառապետին, իրենց գյուղի քյոխվին, կուլակներին...

Սամելի խոսածները մի քանի օրից հետո հասնում են գալառապետի՝ պրիստավի ականջը ու նրա հանդստությունը խանգարում: Հանաք հո չի՝ պրիստավի ույոնում ուսուցուցիոններ էր լուս ընկել...

Իսկույն կարգադրում է քյոխվին՝ որ լավ հետեւի էդ խառնակիշին՝ «բունտովչիկին» ու իրեն իմաց անի ամեն ինչ:

Ինքն էլ չի համբերում, մի օր գնում է Սամելանց գյուղը, որ
անձամբ ծանոթանա «գործի» հետ:

Դե առաջվա ժամանակ պրիստավին գյուղում թագավորի
նման էին ընդունում: Քյոխվեն ու քեթխուղաները դիմավո-
րում էին, նրա ձիու սանձը պահում, գլխովը պտիս գալիս:
Երեսը շատ խմելոց ուռած, բողի նման կարմրած, բեղերն
ուղրած ման էր գալիս ու ինչ ուղում էր, անում էր:

Օրը կիրակի է ըլում, փողոցը լիքը գյուղացիներով:
Պրիստավիք՝ շրջապատած կուլակներով, անցնում է բազարով՝
շերքեղին հագին, զաղախի փափախը թեք դրած՝ հաստ
մտրակը ձեռին: Գյուղացիները մեկ մեկու հետեւց վեր են
կենում նստած տեղից ու գլուխ տալիս:

Սամելն էլ էդ ժամանակ բազարում նստած գյուղացի-
ների հետ զրից անելիս է լինում: Պրիստավը երևում է թե
չէ՝ բոլորը վեր են կենում ու գլուխ տալիս, իսկ Սամելը
մնում է իր տեղը նստած:

Քյոխվեն պրիստավի հետեւց աշբով-ունքով է անում
Սամելին, ձեռքով նշան տալիս որ տեղից վեր կենա, բայց
նա էլ ի՞նչ տղա էր, որ էդպես բաներին տաշք դարձներ...
Մինչև անգամ իր կողքի գյուղացիներին ասում է.

— Արա ի՞նչ հիմար ժողովուրդ եք, դրանք ովքե՞ր են,
որ էդպես պատիվ եք տալիս. ձեր թշնամիներն են, ձեր
արյուն ծծողները...

Պրիստավը նկատում է, որ մեկը տեղից վեր չկացավ,
պոռշները կրծոտում է ու հերսոտում:

— Ո՞վ է էդ լիբրը, որ տեղից վեր չի կենում, — հարց-
նում է պրիստավը:

Քյոխվեն էլ փափառում է պրիստավի ականջին.

— Էդ նստողը քաղքից եկած էն տղեն է, որի մասին
իմաց եմ արել ձեզ:

Պրիստավը մանրամասն հարց ու փորձ է անում Սամելի-
մասին, տակն ու գլուխն իմանում, ու հրամայում քյոխվեն՝
որ երբ լավ մթնի, գնա ու բանտարկի նրան:

Սամելի բախտն էստեղ էլ է բանում. գղիրներից մեկն

իրանց բարեկամն է լինում, էդ հրամանի մասին հայտնուած է նրա հորը: Հուրն առնելուն պես՝ Սամելն էլ ժամանակ չի կորցնում. նստում է ձին, թռչում երկաթուղու կայարանը, էնտեղից էլ գալիս է նորից քաղաք:

Պրիստավը ընթրիթի է նստում գյուղի ամենահարուստ կուլակի տանը: Քեֆի թռնդ ժամանակը, երբ նա թագավորի կենացն է առաջարկում, ու էդ կենացի վրա ցանկանում, որ թագավորի թշնամիները կործանվեն, աշքով է անում քյոխմին ու կտմաց ասում.

— Ին բանի ժամանակն է, գնա...

Քյոխմեն էլ գնում է տեսնում՝ ոչ Սամել կա, ոչ էլ ծնողներն են իմանում, թե ո՞ւր է գնացել: Հարց ու փորձ են անում ու գալիս սկերես քյոխմի ականջին հայտնում, թե նապաստակը փախել է...

Դե հարբած մարդն ի՞նչ է փմանում, թե իրան ի՞նչ են ասում. ոչ մի կարգադրություն չի անում, և Սամելը «ողջ առողջ» հասնում է քաղաք:

Մի երեկո ժողով էինք արել մեր հայտնի ընկեր Մուգելի մոտ՝ Մայիսի 1-ին ցույց կազմակերպելու համար: Մեկ էլ տեսնենք՝ ներս ընկավ Սամելը: Մուգելի կինն ուզեցել էր մի քիչ գուրաը պահի նրան, որ իմաց անի մարդուն (ո՞վ գիտե, կարելի է կասկածելի մարդ էր), բայց Սամելը չէր համբերել, ուզգակի մտել էր սենյակը:

Նա բալորիս մի բարե տվեց և լուրջ մոտ գնաց Մուգելին, բռնեց նրա ձեռքից ու թափ տալով ասաց.

— Մուգել, թե ինձ սիրում ես, իմ անունը գրի բացլամիկ պարտիայի մեջ:

Մուգելը ծիծաղեց.

— Ա՛ ջահել, ջատ ես շտապում. մի նստի՛ր, պատմի՛ր տեսնենք, ի՞նչ է պատահել:

Սամելը սկսեց պատմել իր գլխին եկածը:

Մորուքը մորուքը բռնած ժպտում էր:

— Տեսնո՞ւմ ե՞ս, Սամել, — ասաց նա, — թե քաղաքումն են՝ ասում են ուղղուցիոներ են. թե գյուղն ես գնում՝ էլի էն են ասում. ինչպես երևում է՝ դու վերջը ուղղուցիոներ ես դառնալու...

— Աշքիս վրա—ասա զուրն ընկի, կրակն ընկի, ես էլ կանեմ. միայն թե հիմի ինձ գրես պարտիայի մեջ:

— Դեռ սպասիր, ծանոթացիր մեր ծրագրի հետ, հետո կգրենք:

Սամելի երեսը ուրախությունից այրվում էր:

Դրանից հետո Սամելը սկսեց կանոնավոր հաճախել մեր հավաքույթներին ու կատարում էր իր ավագ ընկերների պատվերները:

Եկամ Մայիսի 1-ը:

Եդ օրը ցուց էինք կաղմակերպել: Բանվորները խումբ խումբ ամեն կողմից եկան, հավաքվեցին նշանակված տեղը՝ մեծ հրապարակը: Կարմիր դրոշակը բարձրացրինք ու բանվորական մարտելյող երգելով շարժվեցինք առաջ...

Հանկարծ շորս կողմից թափվեցին ձիավոր կաղակները, զրջապատեցին մեզ ու սկսեցին խափել թրերով:

Մենք անդեն էինք՝ նրանք զինված. ձեռք ընկած քարերով, փայտերով խստում էինք, կամ ծառս ըլում, ձիաներից վեր դցում նրանց:

Ամենից տաք կոփվը դրոշակի մոտն էր. մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ: Երբ մեկ էլ կաղակները հարձակվեցին, ծանր վիրավորեցին դրոշակակիր բանվորին, Սամելը առաջ ընկալ ու քաշեց, ազատեց դրոշակը: Բայց երկար շմաց նրա հաղթությունը. — կաղակները նորից վրա տվին ու սպանեցին Սամելին...

Էսպես վերջացավ նրա ծաղիկ կյանքը:

...Տղաներն անշարժ նայում էին Մադաթին. նրա աշքերում արցումքներն էին փայլում...

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՆ

Սովորաբար ծառայողներն առավոտից մի կես ժամ շմլուկ» էին տալիս, ապա սկսում իրենց զբաղմունքները: Երկար շարքերով ձգված սեղանների վրա ո՞րը համրիչն էր շնկչիսկացնում, ո՞րը աշքի անցնում ստացված գրությունները, կամ թերթում հաստափոր «գործերը»: Կեսօրին մոտ հաճախորդները լցվում էին բոլոր միջանցքները: Թամբաքվի ժումբը տարածվում էր բոլոր սենյակներում, ու գրամմերնենաների աղմուկը հասնում էր գագաթնակետին: Այդ ժամին ծառայողները դաշտապում էին. հաճախորդները թվում էին բժամինդիր: Դաշտից եկող գյուղացին՝ ներս մտնելով, մնում էր շվարած թե՝ «չս մարդիկ ինչի՝ են հերսոտել»:

Մեծ սենյակի պատից վերահսկիչի աշքով նայում էր ժամացուցը: Նրա սլաքները շատ խարուսիկ էին.—Երբեմն արտակ մոտենում էին վերջին ժամին, կարծես ստիպում ծառայողներին զուտով տուն գնալ, երբեմն էլ ընդհակառակը՝ երկար ձգձգում, կարծես առուտուր անում ամեն մի բռպեկ համար:

Ամելի համեստ էր նույն պատի վրա ամրացրած օրացուցը. նա ոշոքի չէր նեղացնում, եթե հաշվի շառնեինք միերկու ծառայողների, որոնք պիտի զեկուցում պատրաստեին ամսի այնինչ օրը:

Հեռավոր անկյունի մի փոքրիկ սեղանի մոտ նստած էր հաշվապահ Մաղաքյանը: Նրա տեղը և սեղանը համապատասխանում էին իր պաշտոնին: Մաղաքյանը մի հասարակ և համեստ ծառայող էր: Միայն եթե ասում էին իրեն, թե համեստ ես՝ նա դրանից նեղանում էր իր ներսում, կարծես

վիրավորանք էին հասցնում կամ ասում «Դու անբուժելի Հիվանդություն ունես, չես կարող առողջ մարդկանց հետ լինել»:

Նրա դեմքը ավելի լուրջ էր, քան անհրաժեշտ էր՝ մռայլ էր: Իր ներսում նա բողոքում էր բնության դեմ, որ այդպիսի տխուր դիմակ է գրել իր դեմքին, երբեմն նույնիսկ փորձում էր իր բնավորության հակառակ գնալ, ուրախ լինել, մտերմանալ մարդկանց հետ, բայց բնությունը նորից իր գերին էր ստանձնում՝ դեմքի պատուհանները շուտով փակվում էին ու կարծես ասում խոսակցին: —«Կա՞նգնիր, էլ առաջ մի գնալ, ներս մտնելն արգելված է»:

Սովորական այցելում կարող էր ասել, որ Մաղաքյանի գեմքին ծիծաղը երբեք չի հյուրընկալվում: Պետք է ասած, որ այդ կարծիքը սխալ էր: —Նրա ուրախ բովեները տեսնողներ կային: Նրան ճանաչողներն ասում էին. «Հավ տղա է Մաղաքյանը, բայց մի ծանր քար կա նրա ներսում»:

Ի՞նչ էր Մաղաքյանի գործը: —Հեշտ է ասել՝ հաշիվների, աղջուսակների, անհոգի ու դաժան թվերի հետ էր նրա գործը: Այդ հաշիվները, պատահում էր՝ զիշերն էլ հանգիստ չէին տալիս: —Շատ անդամ երազում ուղիղ թվերը սխալ թվեր էին դառնում ու բավական քրտինք քամում Մաղաքյանից: Պահանջկոտ, բծախնդիր թվեր էին: Երբեք չէին զիջում, եթե գումարը թեկուզ մի չնշին բանով ավելի կամ պակաս էր լինում:

Մաղաքյանի միակ բավականությունը այն ժամանակ էր լինում, երբ նա ստուգելով գումարը՝ համոզվում էր, որ սաղիդ է, կամ մանավանդ երբ գտնում էր սխալը. այդ բովեներին թվերը վարժված զինվորների նման ուրախ շարպում էին ու ողջունում:

Առավոտից սկսած նրա գործն անպակաս էր. նրա առաջ հաշիվների, աղջուսակների կույտը քանի գնում՝ մեծանում էր: Ասես բնական օրենք լիներ՝ որ ինչ անհետաքրքիր, խճճված գործ կար՝ ուղարկում էին Մաղաքյանի մոտ: Նրա սեղանի վրա կտեսնեիք այն մնացած, «Չանչալ» հաշիվները,

որոնցից՝ ուրիշ ծառայողներն այս կամ այն պատրվակով հրաժարվել էին, կամ թե այն շտապ ու «Հրատապ» գործերը, որոնք հենց իսկուն պիտի կատարվեին:

Միշտ այնպես էր պատահում, որ մի ժամից հետո ժողով պիտի լիներ, և այդ անհրաժեշտ թվերը, պիտի զեկուցեին, կամ երեկոյան կառավարիչը պիտի մեկներ «կենտրոն» և հետը տաներ պատվիրած աղյուսակները: Օրվա մեջ քանի անգամ կը սեիք:

— Հանձնեք Մաղաքյանին:

— Դիմեք Մաղաքյանին:

Եվ նա տնքում էր այդ թվերի տակ, ինքն իրեն մոռանում, մի երկու ժամից հետո նրա դեմքը՝ լարված աշխատանքից կարմրելով այնպիսի տապավորություն էր անում, կարծես կովակեճի էր բռնվել իր առաջը կիտած թղթերի հետ:

Գործի այդ բռնարար բոպեներին մի միտք խոռվ կերպով հնչում էր նրա ականջին, որպես պատամիան իր բոլոր տանջանքի՝

— Ընկել ես՝ պիտի տանես...



Առավոտները Մաղաքյանը գալիս էր աշխատանքի ճիշտ իր ժամանակ, բայց դժգոհում էր իր ճշտապահովթյունից:

— Ի՞նչ ես մեքենայի պես ճիշտ իր ժամանակին գնում գալիս, — ասում էր ինքն իրեն. — զոնե մի արտակարգ բան արա, հենց թեկուղ մի քառորդ ժամ ուշացիր, որ ասես, թե ապրում ես ուրիշների նման...

Բայց այսպես մտածելով՝ նա դարձալ շարումակում էր նույնը, և, ինչպես ասում էին ծառայողները, դեռ մի դեպք չէր եղել, որ Մաղաքյանն ուշանար:

Ճիմնարկը գնալիս լավ է, որ բարձր չէր արտահայտում իր մտքերը, թե չէ թյուրիմացություններ կարող էին ծագել: Տեսնելով շարան-շարան ծառայողներին, որոնք թղթապահակները կոնատակին շտապում էին գործի, նա մտքում դիմում էր բոլորին մի արհամարհական խղճահարությամբ.

— Թղթի ստրուկներ, — ասում էր նա, — դուք արժանի եք ձեր վիճակին. բայց թղթերից ոչինչ չեք հասկանում...

— Իսկ դու, Մաղաքյան, — ասում էր նա ինքն իրեն, — դու էլ նույն ապրանքիցն ես. եթե «ուրիշ» մարդ լինեիր, այս թղթի գործում չէիր լինի, որը իսկապես մարդ-մեքենայի գործ է... Դու կլինեիր...

Բայց այստեղ սկսում էր գործել նրա երևակայությունը՝ աշա նա, Մաղաքյանը՝ ժողկում է. բայց սովորական ժողկում չէ. նա բոլոր շինարարական և գյուղատնտեսական գործերի «պետն» է. — Թոշում է ավտոյով, թռչում է աերոսլանով ու որտեղ իշխում է, այնտեղ մի նոր շենք է բարձրանում, լայնատարած այգիներ, բանջարանոցներ են սփռվում...

Նա պտտվում է ողջ երկրում, գործի է հրավիրում ամենքին... Անօրինակ եռանդով հրաշքներ է գործում, բայց այդ բոլորը կատարվում է առանց թղթի՝ նա խիստ արգելում է գրագրությունը...

Նրա երևակայությունը վերջանում էր այն ժամանակ, երբ հիմնարկության սանդուղքներով բարձրանալով՝ հանդիպում էր իրենց սպասավորին. Սերոբ էր անոնը՝ կեռ քթով, երկար ձեռքերով, որոնք շարունակ փնտրում էին իրենց տեղն ու չէին գտնում: Նրա պիշակը շատ լայն էր, իսկ շալվարը՝ նեղ ու կարճ:

Երար տեսնելով՝ Մաղաքյանն ու Սերոբը տարօրինակ խաղի մեջ էին ընկնում. Մաղաքյանը անպատճառ աշխատում էր բարեել Սերոբին, որպես հավասար ընկերոջ, իսկ սա էլ խուսափում էր նրա բարեկից, մտածելով, թե՝ «Երբ որ բարձր ծառայողները շեն բարեւում, քո բարենելն ի՞նչ եմ անում. շատ հարկավոր է»...

Սերոբի կցկտուր բարեկ կամ նրա երես շուռ տալը անհարմար դրության մեջ էին դնում Մաղաքյանին, միշտ զգացնել տալով, որ իր և Սերոբի մեջ մի պատճեղ կա: Նա ամաշում էր, որ Սերոբից ավելի է ոռնիկ ստանում, որ նրանից ավելի բարձր դիրք ունի, ու ամեն անգամ այս ճմլող զգացումով ներս էր մտնում գրասենյակը,

Նա անցնում էր երկար դահլիճով, նստում իր տեղը ու ընդհանուր սովորության հակառակ՝ խսկույն սկսում գործը: Կես ժամից հետո գալիս էին բարձր ծառայողներն ու բաղմում իրենց բազկաթոռներին: Կարճատե հանգստյան ըռպեներին կամ երբ առիթ էր լինում անցնել այդ «բարձրերի» առաջ, Մաղաքյանը տեսնում էր գլխավոր հաշվապահի ամբարտավան գեմքը, որը կարծես ասում էր.—«Ինձ հետ խոսելը սրբագործություն է»:

Գործավարի երկար քիթը միշտ ձգտում էր դեպի վերև, մի արհամարհական ժպտի ուղեկցությամբ:

Բաց դռներից երեսում էին փոքրիկ սենյակում նստած երեք «սպեցները», որոնք կեղծ լրջություն տված դեմքերին՝ միշտ այնպիսի տեսք ունեին, որ թվում էր, թե զբաղված են ամենալուրջ և ծանրակշիռ հարցերով:

Ամեն անգամ, երբ Մաղաքյանն անցնում էր իրենից բարձր ծառայողների մոտով, նկատում էր նրանց դեմքին մի դաշտնի արհամարհանք դեպի ինքը ու լցվում էր ատելությամբ:

«Մի՞թե նորից գալիս են «բարձրերն» ու «ցածրերը»... մի՞թե նորից սկսվում է այն հինը, որը նա մոռացել է: Այդ րոպեներին նա հիշում էր անցյալը, երբ ծառայում էր մասնավոր բանկում ու ատամները կրծտացնելով հպատակվում էր դաժան կառավարիչներին:

Այն ժամանակ նրա շուրջը ծառայողները քծնում էին բարձրերի առաջ, իսկ ինքն իր մռայլ դեմքը դառնորեն ծամածում էր զգվանքից: Երբեմն մեծ ճիգեր էին հարկավոր Մաղաքյանին իր մարդկային արժանապատվությունը պահպանելու համար. նրա շղերը շարունակ լարված էին, բռունցքները սղմած...

Անցել են այդ օրերը. բայց ահա նորից տեսնում է ովերինս ու «ներքին» խավերը և զգում է իր մեջ հավասարության տենչեր: Սակայն այդ մոմենտներին նա ինքն իրեն բռնում էր հակասության մեջ.—«Չէ» որ միքանի տարի առաջ, երբ հավասարություն էր, երբ Սերոբի ու կառավարչի

մեջ տարբերություն չկար, որու էլ դժգո՞հ էիր, պինթինթում էիր, թե ի՞նչու թղթատարը քեզ հետ հավասար ոռճիկ է ատանում. իսկ այժմ, երբ քո ցանկությունը կատարվեց, որու նորից դժգո՞հ ես»...

Ի՞նչպես գոյացան այդ «բարձրերը»: Միքանի անգամ ոռճիկների հավելում, և ահա դրվեց այդ պատնեշը: «Ամեն մի ծառայող կամ պոչն էր շարժում, կամ պողը՝ իրեն առաջ քաշելու համար. իսկ որու այդ չես արել, այդ պատճառով էլ մնացել ես ներքեի շարքերում»...

«Այժմ դու դժգո՞հ ես նորից. բայց որո՞նք են քո իղձերը... հավասարությո՞ւն ես տեսնում, թե՞ գուցե կամենում ես սանդուղքների վերելը պատվավոր տեղ գրավել... Եթե այդպես է՝ ի՞նչ կասես Սերոբի մասին. նա է՞լ է մտնում քո ծրագրի մեջ... չէ՞ որ նա էլ է սպասում քո հավասարության»...

Ամեն օր, որոշ ժամին կառավարչի օգնականի առանձնամենյակից դուրս էր գալիս Մեջլումյանն ու անցնում ծառայողների երկար շարքով: Անցնում էր թելիկ-մելիկ գալով, ինքն իրեն վրա սիրեալարվածի տեսքով: Շառայողներն ատում էին նրան, որովհետեւ նրա հայացքի մեջ ինչ-որ արհամարհանք կար՝ մանավանդ դեպի ստորին ծառայողները: Փողոցում պատահելիս նա ակնհայտնի սպասում էր, որ դիմացինը բարեի, հետո ինքը բարեհաճի պատասխանել: Իսկ ծառայության տեղը նա ուշադրություն էր դարձնում միայն «բարձրերի», պարտիականների ու մեկ էլ կանանց վրա:

Ամենը գիտեին, որ Մեջլումյանը կառավարչի օգնականի բարեկամն է՝ նրա քրոջ տղան: Շառայողներն այդ պատճառով որոշ ակնածովյուն ունեին դեպի նա: Իր դիրքն ավելի բարձրացնելու համար Մեջլումյանը տարածել էր, թե պարտիական թեկնածու է և շուտով մտնելու է նրա շարքերը: Միամիտ հավատացողներին այդ բանն ամենից ավելի էր գրգռում.

— Ախր ո՞նց թե պարտիական... Մեջլումյանը ոչ միայն

ապեկուլանտի տղա է, այլի սպեկուլանտի թուր... Ախր
ձենինը ի՞նչ է ասել...

Սակայն, եթե Մեջլումյանը սուր ականջներ ունենար,
կլսեր, թե ի՞նչպես են Հեգնում իրեն հետեւից:

— Վերևը դատարկ է ա՝ յ,—ասում էր մի ծառայող մյու-
սին:

— Հա, մեջը դարման է,—պատասխանում էր մյուսը:

Բայց, իհարքեն, նա այդ խոսքերը չէր լսում. փքված
առաջ էր գնում դեպի դահլիճի ծայրը, ուր նստած էին դրա-
մեքենաների վրա աշխատող օրիորդները:

Աշխենը, որին համակրում էր Մեջլումյանը, այն պաշ-
տոնական գեղեցկուհիներից էր, որոնք առանձնահատուկ
տեղ են գրավում ծառայող օրիորդների մեջ: Բնականից
հետեւ կոկետությունը այստեղ՝ ծառայող տղամարդկանց
մթնոլորտում՝ աճում է մոլախոսի նման ու ամեն ինչ կլա-
նում: Պաշտոնական հաճոյախոսություններով սնվելով՝ նրանց
դեմքերը հետզհետեւ թատրոնական են գառնում և լցվում դե-
րասանական ինքնաբավականությամբ:

Մինչև Մեջլումյանի մոտենալը օրիորդ Աշխենն արգեն
որոշ «պոպա» է ընդունում, ուսերը և գլուխը կոկետորեն
շարժում: Երբ Մեջլումյանը նստում էր իր կողքին, նա իր
ձեռքը ոլոր-մոլորելով տալիս էր նրան, բարեւում: Նրա խոշոր
աշքերը լայնանում էին իրենց սահմաններից դուրս: Ակսվում
էր աշքերի ու ժպիտների մի ներկայացում:

Մեջլումյանը զիջող ժպիտը դեմքին՝ առաջ է քաշում մե-
քինագրած թղթերը, իբր թե ստուգելու կամ թելադրելու հա-
մար, բայց դրանով միայն քողարկում է իր սիրաբանությու-
նը: Նրանց հայացքներն արգեն իրար ընտելացած էին և
կցկտուր խոսքերից միմյանց հասկանում էին:

Այսքանը պարզ էր՝ Մեջլումյանը իրենն էր համարում
Աշխենին, իսկ օրիորդն էլ սրտի խորքում մի գաղտնի հույս
ուներ, թե այդ սովորական, թեթև սկսված կապը կհանգի
ամուսնության:

Դռների մոտ նստած տիկին Կարույանը, որը հասակն

առած էր ու միշտ աշքերը լացակումած, նայում էր օրիորդին ու ասում մտքում.—«Ի՞նչ ես կոտըրտվում. շատ-շատ մի գեղի լուսին ես էլի»: Նրա կարծիքով պյուղի լուսինը մի առանձին, հասարակ տեսք ուներ:

Իսկ մյուս մեքենայի վրա աշխատող օրիորդ Շողիկը, որը նիշար, սուր դեմք ուներ և նախնիքներից ժառանգած դեղին, մալարիոտ գույն, այդ բոսկեներին ջղայնանում էր և սովորաբար շփոթում տառերը: Մուսլ մտքերը, հուսահատ նախանձը հասնում էին գագաթնակետին:

Նրա ավելորդ անունը «օրիորդ կրծատում» էր,—նրա վախկոտ և կասկածոտ բնավորությանը ամեն մի չնշին դնաք առիթ էր տալիս մտածելու «Զլինի» թե կրծատում է լինելու: Նրա վախը որոշ հիմք ուներ, քանի որ նրա վզին էին ծնողները և փոքր քույրը:

Առավոտները օրիորդ Շողիկը զարթնում էր ու մտածում անկողնում—«Ինչի՞ցն է, որ Աշխենը երջանիկ է... Մենք միևնույն մեքենայի վրա ենք աշխատում, նրա ոռչիկն էլ իմի շափէ է, բայց ո՞րտեղից է այդպես հագնվում ու պճնվում... նա արդեն երկու կոշիկ է փոխել, իսկ իմը կարեկատած դեռ քաշ եմ տալիս: Տղամարդիկ նրան փայտայում են,—նա գեղեցիկ է, իսկ ե՞ս... Մի՞թե թառամելու եմ այսպիս զրկված անձնական կյանքից»,—հարցնում էր նա ինքն իրեն և կես ժամից հետո՝ նայելով բարձի տակ դրած փոքրիկ ժամացուցին, միայն մի պատասխան էր կտնում:

— Պետք է վեր կենալ... արդեն գործի զնալու ժամանակն է...



Կար մի մարդ ծառայողների մեջ, որին Մեջլումյանը մարսել չէր կարողանում. դա Մաղաքյանն էր, որի գոյությունը նա կարծես մի հանդնություն էր համարում: Մանկությունից՝ դեռ դպրոցական շրջանում, հարուստ լինելով՝ Մեջլումյանը ատում էր այն աղքատ տղաներին, որոնց միջ որևէ ընդունակություն կամ «հպարտություն» էր նկատում: Հետագայում «աղքատ ու հպարտ» մարդիկ նրա կծու ատե-

լուգիյունն էին շարժում: Այդպիսիների թվին էր պատկանում Մաղաքյանը:

Ամենից շատ Մեջլումյանը սիրում էր գործեր հանձնել ծառայողներին «պետի» անունից և Յետո շտապեցնել, նկատողություն անել, նույնը անում էր և Մաղաքյանի վերաբերմամբ, բայց այս կետում միշտ ժայռի էր հանդիպում ու միշտ կատաղում, որ չի կարողանում ընկճել «մի ինչ-որ Մաղաքյանի»:

Արտաքուստ շատ համբերող էր Մաղաքյանը, ուզո՞ւ նման համբերող, բայց և ուզտի նման վրիժառու: Նա առանց հակածառելու ընդունում էր իրեն հանձնած բոլոր գործերը, բայց նրա գեմքի վրա մի թաքնված հեգնանք կար, մի սպանիչ թույն, որը Մեջլումյանին մահու շափ ցնցում էր: Մաղաքյանի գեմքին նա տեսնում էր «քիմիական անալիզի» ենթարկող մի հայացք, որը կարծես մերկացնում էր իրեն:

Ֆեռ հեռվից նկատելով Մաղաքյանի պրոֆիլը, նրա ակնոցները, լայն՝ գուրս ընկած ձակառը, հեգնող կնճիռները՝ Մեջլումյանն արդեն կատաղում էր, նա այդ գեմքի վրա տեսնում էր ինքնասիրություն, հպարտություն, որոնք իր մաղձը շարժում էին. նա մեծ ցանկություն էր ունենում այդ րոպեներին վիրավորել, ստորացնել Մաղաքյանին, ցուց տալ, որ նրա այդ «հպարտությունը» մի ֆիկցիա է, ոչ մի շիմք շոնի, որ էլի «Շին» ժամանակվա նման կան հրամայողներ և ենթարկվողներ, որ նա մի հասարակ ծառայող է և ուրիշ ոչինչ, ուստի միայն պիտի «հպատակվի»: Սակայն այդ բանը չէր աջողվում Մեջլումյանին:

Նա միայն մի գենք ուներ՝ գործ էր ուղարկում Մաղաքյանին «պետի» անունից և շտապեցնում, որ պրգուի նրանք բայց Մաղաքյանն էլ ամեն կերպ աշխատում էր շուտ և լավ կատարել, ու շատ անդամ ավելի առաջ էր վերջացնում և մինչև Մեջլումյանի գալը ուղարկում էր օգնականին, որով ավելի էր դաղում նրան:

Եկ այդպես՝ օր-օրի վրա Մեջլումյանն ավելի էր կատաղում, տեսնելով, որ այդ հպարտությունն ու ինքնասիրու-

թյունը, այդ «ֆիկցիան» կարծես ավելի էր ամբանում Մազաքյանի համառ գեմքին: Եթե իշխանությունն իր ձեռքին լիներ՝ նա, անշուշտ, անմիջապես կվռնդեր Մաղաքյանին որպես «ֆիկցիաներ» տարածողի...

Պետք է ասած, որ իր կողմից Մաղաքյանն էլ ատում էր Մեջլումյանին: Իր ծոցատերի մեջ նա գրել էր. «Ես այնպես եմ ատում Մ-ին (Մեջլումյանին), որ եթե լուսնի վրա ես և նա մենակ մնանք, կշպրտեմ նրան գեպի մի ուրիշ հանգած մոլորակ, որովհետեւ նա մեր երկուսի մեջ էլ կմտցնի իշխողի և հպատակվողի աստիճաններ, իր գատարկ գլուխը ինձանից բարձր կպահի... Նա ընկերական կյանքի երդվալ թշնամի է, նրա թույնն է»...

Որպես միջանցուկ քամին իր հետ հարրուս է բերում, այնպես էլ Մեջլումյանի հայտնվելը գահինում մոայլ մըտքեր էր ներշնչում Մաղաքյանին: «Եթե Մեջլումյանը՝ օգտվելով իր բարեկամական կապերից՝ կարող է այսպես թող փշելով համարյա ոշինչ զինել, բոլորի վրա վերեից նայել, ել ի՞նչ ես շատ մտածում... տառմ էր ինքն իրեն Մաղաքյանը—որքան ուզում ես մտածիր ուրարակ մանիք՝ անխոռոավելի «ումն» կգա և կնսափ աղբյուրի ամենավերին ակի վրա...»

Բայց զարմանալի է՝ այսպիսի հեռետիս մաքերը գալիս էին, եթք Մաղաքյանը հեռվից նկատում էր Մեջլումյանին: Խոկ հենց որ նա մոտենում էր, մի զորեղ ալիք գալիս սրբում էր Մաղաքյանի այդ մտքերը, ու նրանց տակից խսկույն ծառանում էր մի բուռն զիմաղբություն, որը պատրաստ էր խսկույն զործի անցնելու: Նա ամբողջ հոգով «Ժխտում էր» Մեջլումյանին և պատրաստ էր նոր ուղղուցիա սկսելու՝ նրա նմաններին տապալելու համար...

Թարս օր էր: Առավոտից Մաղաքյանին հանձնել էին մի քանի հին ավանսի հաշիվներ: Անկարգ կազմած էին, վատ ձեռքով գրած և սխալներով լիքը: Մաղաքյանին գրգռում էին

անկանոնությունները, սխալները, բայց մանավաճառի հաշիվը ներկայացնող անձերն ու նրանց ծախսած մեծ գումարները:

— Եքրե՛ր, — ասում էր նա ինքն իրեն. — ո՞վ զիտե էս փողերի կեսը քեֆի եք տվել, իսկ ևս հիմա պիտի ձեր կեղտու շապիկները մաքրեմ...

Այսուհետեւ եկան մեկը մյուսի հետեից շտապ և «Հրատապ» գործերը երկուսը բերեց Մեջլումյանը, զրեց Մաղաքյանի սեղանին ու արհամարհական տոնով ասաց...

— Օգնականի համար է, պիտք է մի ժամից հետո պատրաստ լինի...:

Մաղաքյանը այսպես գրգռվեց Մեջլումյանի արհամարհական տոնից, որ պատրաստ էր իր առաջի թանաքամանը նրա զիտովը տալ, բայց Մեջլումյանը կարծես զգալով այդ՝ ուսելն ու հեռանալը մեկ արավ:

Մաղաքյանը երկար ժամանակ չէր կարողանում կենտրոնանալ իր հաշիվների մեջ: Գումարները սխալ էին գուրակալիս ու գրգռում: Իսկ պատի ժամացույցն այսօր զիտովին թարսվել էր և ուշացած գնացքի նման էլ զադար չէր տալիս. մի զլովս վազում էր ու շատապեցնում Մաղաքյանին:

Զանցած մի կես ժամ՝ Մեջլումյանն ուղարկեց սպասավորին իմանալու՝ վերջացրել է Մաղաքյանը թե չէ: Պատասխան եկավ, թե՝ չէ: Մի քառորդ ժամից հետո նա նորից դուրս եկավ օգնականի առանձնասենյակից, անցավ դահլիճով ու դառնալով՝ նորից ուղարկեց սպասավորին, ինքն էլ հետեից գնալով:

— Մաղաքյանն ասեց, զեռ չի վերջացրել, երբ պատրաստ կլինի՝ կզրկի, — ասաց նա:

— Ի՞նչ... Մաղաքյանի հերն էլ անիծած. — պատասխանեց Մեջլումյանը դեմքը արհամարհական ծամածոցով: Ասաց դիտմամբ բարձր ձայնով, որ Մաղաքյանն էլ լսի՝ նրա մոտի նստողներն էլ:

Մաղաքյանը տեղից վեր թռավ ու բռունցքը բարձրացրած՝ վազեց դեպի Մեջլումյանը.

— Սրիկա, ես քո գլուխը կշարդեմ, — գոռաց նա կտառապահ:

Բայց նրա վեր թռչելուն պես ծառայողներն առաջը կը տրսեցին ու նա հազիվ միքանի քայլ արած՝ նրանց ձեռքումն էր:

— Թո՞ղեք, — գոռում էր Մաղաքյանը՝ մի տարօրինակ զարդանկ աղղող ձայնով:

Երեք հոգավ հազիվ էին կարողանում նրան բռնել: Իսկ երբ նա զգաց, որ անկարող է շարժիլ, ծանր հեքով ընկալ տթուի վրա:

Ամբողջ դաշլիճը տակն ու վրա եկավ: Ծառայողները մեկ-մեկու հետեից դաշիս էին հարցական դեմքերով, համախըմբվում Մաղաքյանի շուրջը՝ ապա իմանալով գործի էռթյունը՝ ամեն մեկը մի որիէ ածական էր տալիս.

— Ի՞նչ զզվելի... ի՞նչ տպեղ բան է...

Կառավարիչն աղմուկի վրա դուրս եկավ, մոտեցավ խմբված ծառայողներին և իմանալով գործի էռթյունը՝ դիմեց բոլորին.

— Հո չի՞ կարելի մի ինցիդենտի պատճառով ամբողջ հիմնարկության կարգը խանգարել: Գնացեք տեղներդ և շարունակեցեք ձեր գործը:

Ու ակնոցներն ուղղելով՝ լուրջ դեմքով վերադարձավ իր տառանձնասենյակը, մտածելով, — «օգնականիս ֆրոնտը շատ է ուժեղացել. պետք է մի քիչ տեղը ցույց տալ»....

Բայց մի հինգ բոպեից հետո նա մոռացավ՝ «ինցիդենտը»՝ մի հաճախորդի հետ զրուցի բռնվելով:

Անօրինակ դեպքը կարծես մեխակց հիմնարկության պատերին: Մերթ ընդ մերթ գրիչները ծառայողների ձեռքերին կանգ էին առնում ու ասես հարցնում:

— Ի՞նչպես թե... ի՞նչպես թե այդ խոսքերը... այս ժամանակին, այս հիմնարկության մեջ...

Տուն գալուն պես Մաղաքյանը պառկեց մաշճակալի վրա ու երկար ժամանակ մտածում էր հոգված, անկատ մտա-

ծուա էր օրվա դեպքի շուրջը: Ակզբում երեակայում էր, թե հարձակվում է Մեջլումյանի վրա ու վրեժը հանում, նույնիսկ ատրճանակով սպառնում: Սպա փոքր ինչ հանգստանալով՝ երեակայում էր, թե դատի են կանչում Մեջլումյանին, ինքը հառ է ասում, մեղադրում Մեջլումյանին ու հիմնովին տապալում:

Մեկ-մեկ նա հանկարծ վեր էր թոշում, նստում մահճակալի վրա ու բռնկվում կասկածով, շինի՞ թե նա այսօր մի անուղղելի սխալ է արել, թուզ է տվել, որ իրեն ծանր վիրավորեն, չի դիմադրել, և այժմ ոչ մի կերպ չի կարող սըրսել իրենից այդ վիրավորանքը... գուցե բոլոր ծառայողները գիտեն և խոսում են դրա մասին և միայն ինքը շղիտե...

Վեր է կենում, քայլում ու հետզհետե հանգստանում. չէ՛, այսօր նա արել է այն, ինչ որ բնականարար պիտի աներ ամեն մեկը...

Մեղանի վրա դրած էր մի շիշ գինի: Խմում էր, քայլում... նորից խմում: Արգեն շիշը դատարկվելու վրա էր: Նրա տրամադրությունը գինու ալիքներով բարձրացել էր: Մաքերի, զգացումների մի խառնորդ էր մեջը: Ահա վերջին բաժակն էլ խմեց ու նորից քայլեց: Ամեն ինչ մշուշի մեջ էր երեսում: Կանգ առավ լենինի պատկերի առաջ.

— Մտածե՞լ ես ինձ նմանների մասին.—Հարցնում է պատկերից ու ինքը նրա տեղ պատասխանում.

— Կովի՛ր, պայքարի՛ր...

— Իսկ եթե գալիս է «անխուսափելին»... եթե մանրանում են մարդիկ և նրանց կոփվները...

Պատկերը նորից պատասխանում է.

— Բայց կա ավելի մեծ և հզոր «անխուսափելին»—«միշինավորը»... այսուհետեւ ամեն ինչ նրա օղակի մեջն է...

Քայլում էր նորից, ու մշուշի միջից բացվում էին մարդկային լայնածիր շարքերը. բոլորը միաձույլ գալիս էին, խառանում ու փոթորկալից ձայնով կանչում.

— Կպաշտպանե՞նք, կպաշտպանե՞նք...

Անձրեային օր է: Զբազմունքներից հետո երկու հոգին մնացել Հիմնարկության մեջ՝ կոնֆլիկտային հանձնաժողովի նախագահ՝ Պետրոսյանը և Մաղաքյանը: Բավկան ժամանակ նախագահը լուր էր: Դուրս էր նայում պատուհանից, սակայն ավելի դեմքը ծածկելու համար: Մտածում էր՝ ի՞նչպես սկսի, որ կարողանա «Համոզել» Մաղաքյանին: Փոքրիկ գեմքը ծռմուռմ էր, մի աշքը խուփ անում: Վերջապես մազերը ձեռքով խառնելով՝ սկսեց.

— Ընկեր Մաղաքյան, դուք, ի՞շարկե իրավացի եք... շատ ցավալի գեղք է այսպես ասած՝ ծառայողների ընտանիքում... ինչ խոսք, Մեջլումյանը շատ անկորրեկտ է վարվել ձեզ հետ, միանգամայն անթուլատրելի մեր՝ այսպես ասած՝ ծառայողների ընտանիքում... մենք պիտի աշխատենք ընդհանուր ջանքերով այդ անախորժ գեղքը լիկվիդացիայի ենթարկել...

Մաղաքյանը շնամբերեց.

— Ես զարմանում եմ, որ դուք դիմում եք ինձ այդպիսի խոսքերով. իմ հարցը շատ պարզ է. Մեջլումյանը վիրավորել է ինձ և պիտի ներողություն խնդրի. ես ուրիշ գեր չունեմ խաղալու, բացի Մեջլումյանից ներողություն լսելուց...

— Ընկեր Մաղաքյան, դուք մոռանում եք, որ բոլորը միատեսակ գիտակից չեն. և այդպիսի գեղքերում գիտակիցները պիտի օգնեն գործին...

— Այսինքն, ներեցեք, դուք կուք կամենում եք, որ ե՞ս քնար Մեջլումյանից ներողություն խնդրեմ:

Պետրոսյանը կարմրեց:

— Դուք իրավունք ունեք, ընկեր Մաղաքյան, որպես վիրավորված մարդ՝ գրգովելու. սակայն պետք է հարցին հանդիստ նայել...

— Այսինքն, ի՞նչպես, չի՞ կարելի, որ պարզեք ձեր միտքը:

— Գիտե՞ք, կան հանգամանքներ... օրինակ, կարող է

պատահել, որ Մեջլումյանը համառի և շանի այն, ինչ անձրաժեշտ է...

— Հետո՞ւ: Իսկ դուք... ի՞նչ է ձեր դերը: Դուք պիտի ինձ պաշտպանե՞ք, թե չէ...

— Ինչո՞ւ եք այդպես մոտենում հարցին. չէ՞ որ մենք կոչված ենք՝ այսպես ասած՝ խաղաղություն՝ մտցնելու... և այդ տեսակետից ցանկացի էք, որ ձեր հաշտեցումը լինեք՝ այսպես ասած՝ փոխադարձաբար... ձեռք ձեռքի տված...

— Միանգամայն հասկանալի է ձեր ասածը, ընկ. Պիտույքան: Ծնորհակալ եմ, որ վերջապես պարզեցիք ձեր դեմքը: Իսկ ևս հայտնում եմ, որ դուք շնորհիվ ձեր «հանգամանքների» գործիք եք՝ դարձել տմելների ձեռքին և օրը ցերեկով այդպիսի առաջարկություններ եք անում...

— Ի՞նչու եք այդ տոնով խոսում: Ինձ թվում է՝ վիրավորելու կարիք չկա, երբ մարդ ձգտում է իր պահաքը կատարելու:

— Դուք դա անվանում եք պարաք կատարե՞լ... Իսկ ես, պարզ լսեցեք՝ ձեր առաջարկը համարում եմ մի գավաճանություն: Ես ձեր պաշտպանության կարիք չունեմ. կարող եմ՝ գործը տանել առանց ձեզ լլ:

Ու դուքս դնաց:



Ահա այդ ժամանակ էք, որ Մաղաքյանը գրեց իք նամակը արհեստակցական միության խորհրդին.

— «Ընկերներ, եթե լուսնի վրա եմ, իշեցրեք, եթե քնած եմ՝ արթնացրեք: Օրը ցերեկով մեր հիմնարկում ինձ վիրավորեց չակերտավոր մի ընկեր, և մեր կոնֆլիկտային հանձնաժողովն առաջարկում է, որ վիրավորվածը ներողություն խնդրի վիրավորողից:

«Ընկերներ, որքան ճիշտ է, որ գրում եմ սև թանաքով, նույնքան ճիշտ է, որ չի կարելի հանդորժել այսպիսի վերաբերմունքին: Ուստի պահանջում եմ՝ պաշտպանեցեք «ընկեր» անունը, որը անցել է բարբիկադներից և խոցվում է ձեր

առաջ... ընկերներ, պաշտպանեցեք «ընկեր» անունը, որ
բարձր է ամեն ինչից...»

Նամակն ստանալուն պիս կարգադրություն եղավ նշա-
նակել ծառայողների ընդհանուր ժողով՝ արհմիության ներ-
կայացուցի մասնակցությամբ:

*** *

Սրտակարդ ժողով էր:

Համակրական ճանակարգը տար շրի նման թափվում էր Մա-
զաքյանի վրա:

Պարտիական Ազատյանի վճռական հայուարարությունը,
թե՛ վերջին ժամանակներս մեր հիմնարկության մեջ «նեպի»
աղդեցության տակ առաջ են եկել երեսութներ, շեղումներ»...
կարծես գալիս են Մազաքյանի ներսից: Նրա ներսից էին
գալիս և անպարտիական Կողմիյանի խոսքերը, թե՛ «մեր
հիմնարկության աշխատակիցներն այս հարցում ցուց տվին
կատարյալ տհասություն. այսօր արհմիության խորհուրդը
մեր ականջից բռնած հրավիրում է ժողովի»... Կոմերիտ
Մազոյանը, իր երկար մազերը թափահարելով՝ բուռն կերպով
հարձակվում է Մեջլումյանի և նրա «արբանյակների» վրա,
պահանջում է մաքրել աշխատավորների շարքերը թունավոր
օձերից...

Մազաքյանն ընկնում է տար հոսանքի մեջ. այլևս չի
կարողանում հետեւ խոսողների մտքեսին, ոչ էլ կարողա-
նում է կենտրոնանալ, չիշել, թե ի՞նչ պիտի ասի ինքը. նա
չի նկատում, թե ինչպես բոլորի հայացքներն ուղղված են
իրեն, համակրական հայացքներ...

Միայն «բարձր» ծառայողների մի խմբակ ճարպիկ թըղ-
թախաղների նման ծածկում են ամեն ինչ իրենց դեմքերի շե-
ղոք արաւայացությամբ. չի իմացվում, թե ո՞ւմ կողմն են—
Մազաքյանի, թե Մեջլումյանի:

Օրիորդ Աշխենը հազիվ է զսպում իր կատաղությունը,
նա սկզբից անհամբեր սպասում էր Մեջլումյանին, բայց շե-
կալ (բանի օր է շի տեսել). «Մի գար, տապալեր էս մռութը

գիտած փիլիսոփային... Ինչի՞ համար են ապրում էսպես մարդիկ, որոնք միայն ուրիշներին խանգարում են... ի՞նչ լավ էր... նա սիրահարված էր ինձ վրա, իսկ այժմ... ո՞վ գիտե, ինչ կպատահի...»

Օրիորդ Շովիկը զարմանում է, թե ի՞նչու այդպես փոխվել է Մաղաքյանի դեմքը, կարծես լուսավորվել է. ինչո՞ւ առաջ չէր նկատում... ուժեղ մարդ է երևում. համարձակ զուրս կդա...

— Ընկեր Մաղաքյան...—զիմում է նախադահը:

Մաղաքյանը շփոթված, այրվող դեմքով գալիս կանդառում է նախադահի սեղանի մոտ. սիրտը բարախում է, կարծիս մենամարտի է զուրս դալիս:

— Ընկերնե՛ր, ամեն անգամ, երբ խոսողները իմ անունն էին տալիս, ես երեակայում էի մի ուրիշ Մաղաքյան, որը նստած է ձեղանից ամեն մեկի մեջ... Ընկերնե՛ր, այստեղ Մաղաքյանի և Մեջլումյանի դատը չէ... այստեղ փորձում է զլուխ բարձրացնել անցյալը... Եվ ինձ այրում է այն միտքը, որ Մեջլումյանները սնվում են մեր մեջ... մեր այն աշխատակիցների հնացած սրտերում, որոնց մեջ այսօրվա ժողովի ընթացքում չկար պայքար, բողոք, այլ շեղոքություն... բայց այս մոմենտին ես զգում հմ իմ և ձեր մեջ, մի ուրիշ, ավելի հզոր բան՝ «անխուսափելին»... նա ապրում է մեր սրտերում ու բանկում, երբ ժամն է հասնում... նա հետեւում է մեղ ամեն տեղ.—Թեկուզ յոթը սարի հետեր թաքնըլեք՝ նա կհասնի... այսուհետեւ ամեն ինչ նրա օղակի մեջն է...

...«Հեռացնել Մեջլումյանին... շարքերից» անցնում է Մաղաքյանի ականջներով:

Ժողովը վերջանում է: Ամենքը մոտենում են Մաղաքյանին, ձեռքը սեղմում, խրախուսում, թվում է, թե մի հակա, նոռն բանակ է բանում նրա առաջ, որի դեմ ոչ մի ուժ չի դիմանալ:

«Եվ ինչո՞ւ առաջ չէի տեսնում, որ այս բոլոր ընկերներն ինձ հետ են...», անցավ Մաղաքյանի մտքով, «Չ՝ որ նրանք իմ առաջ էին...»:

Ընդհանուր հոսանքի հետ Մաղաքյանը զուրս եկավ փողոց: Եկեկտրական լույսերն ուրախ ողջունում էին. թվում էր, թե ամեն ինչ փոխվել է, գարձել մտերիմ, թվում էր, թե ամեն ինչ իրեն՝ Մաղաքյանի հետ է կապված...

Անցավ փողոցի մյուս կողմը, որպեսզի մենակ մնա և մտքերը հավաքի: Մի քանի քայլ անցնելով, հանկարծ հետեւց լսեց իր անունը.

— Բնկեր Մաղաքյան...

Ետ նայեց: Օրիորդ Շողիկն էր:

— Բնկեր Մաղաքյան, շնորհավորում եմ ձեր հաղթանակը, — ասաց նա մի առանձին քնքուշ ձայնով: — Ես զարմանում եմ. զուք բոլորովին փոխվել եք, եւ նման չեք առաջվա Մաղաքյանին...

— Այս, ես էլ կարծես չեմ ճանաչում ինքս ինձ...

Օրիորդը ձեռքը մեկնեց Մաղաքյանին:

Ու իբրար ձեռք տված նրանք զգացին մի համակրանք և միաժամանակ մի անհարմարություն, կարծես հանցանք էին գործել:

Բաժանվեցին: Մաղաքյանը քայլեց առաջ, նորից ընկնելով իր մտքերի հոսանքի մեջ:

Այդ բոպեին մեկն էլ թափառում էր փողոցներում, չեր ուղում տուն գնալ: Օրիորդ Աշխենն էր, որը թղթախաղում ամեն ինչ տանուլ տվածի պես բռնկվում էր, թույն թափում Մաղաքյանի գլխին, հետո՝ ինքն իրեն մխիթարում: «Գուցի Մեշումյանը նորից բարձրանա... կամ գուցե մի ուրիշը...»:

Մաղաքյանը անցնում էր փողոցով հարբածի նման, ոչոքի չնկատելով: Նրան թվում էր, թե էլի շարունակում է իր ճառը երկար, երկար, Յաղարավոր ամբոխի առաջ... ամենքը լարված լսում են... «Բնկերներ... իմ և ձեր մեջ խոսում է «անխուսափելին»... այսուհետեւ ամեն ինչ նբա օդակի մեջն է»:

ՏԵՍԻԼԸ

Ամեն անգամ, երբ անցնում եմ քաղաքի այն նոր, լայնացրած փողոցներով, ակամա Հիշում եմ անցյալը:

Առաջ այստեղ մի նեղ, ծուռ փողոց էր, իր հին, փոքրիկ տներով, որոնցից մի քանիսը դեռևս պահպանում էին կըզմինդրե տանիքներն ու դրսից համեստորեն ծածկված էին ցանկապատով։ Մուտքի դռներին կտեսնեիք երկաթե մուրճեր, որոնք դեռևս մրցում էին զանգերի հետ։

Այդ տների նեղ ու մութ բակերում, որոնք ծծված էին դարավոր խոնավությամբ, օրը ցերեկով, հանգիստ պտտվում էին մեծ մկները, կերակուրի մնացորդներ փնտրելով։ Երբեմն էլ զիտովի աշքը հանգստանում էր, տեսնելով որևէ բակում արևպակաս մի թթենի։

Այստեղ ոչ ոք չէր շտապում։ Թաղը լիքն էր ծանրաքայլ քահանաներով ու հին տարագին հավատարիմ ծերունիներով։ Ամեն ինչ, որ արագ ու սրբնիաց էր քաղաքի կենտրոնում, հասնելով այստեղ, դանդաղում էր, կարծես համոզվելով, որ շտապելու կարիք չկա։

Փողոցում կային մի շարք արհեստավորներ, նրանք շարունակում էին իրենց հին արհեստները, որոնք այժմ այլևս չկան։ Մանր խանութների ճակատին կտեսնեիք կախված շիրուխի զլուխների, խաշխաշի ու օբորոցի շիթեքների շարաններ։

...Հիշում եմ այս բոլորը, բայց ամենից շատ Հիշում եմ այն նեղ փողոցի մի փոքրիկ տունը և նրա փոքրիկ տիրոջը։

Այս տան մուտքի երկաթե մուրճը շատ էր զրավում փո-

զոցի երեխաներին. ամեն անգամ անցնելիս նրանք գտղտադրով մոռենում էին, մի քանի անգամ պինդ շնչիկացնում ու փախչում: Չիշխկոցի վրա իսկույն դուրս էր թռչում մի փոքրահասակ, մեծ մորոքով, «շինովնիկի» զգեստով մի մարդ, արագ-արագ նայում էր աջ ու ձախ, փնտրում էր չարաձի հանցավարներին, ու չպանելով նրանց, փընթիւնթալով ու սպառնալով ներս էր մանում:

Ինչպես մոռանամ այն մարդուն... նա այնպիս էր սազում այդ թաղին, փողոցին ու այդ տանը, որ թվում էր, թե այդ բոլորի հետ հատուկ պատվերով ստեղծած մի ամբողջություն էր կազմում:



Թավաբբեկյան էր այն փոքրիկ մարդու ազգանունը: Նախկին պետական պաշտոնյա՛ երկար տարիներ համեստ պաշտոնների վրա թուխս նստած ու կենսաթոշակի շրջանը լրանալուց հետո ծառացությունը թողած:

Թե ինչպես էր նա ձեռք բերել այդ տունը, ի՞նչ խոչընդուներ հաղթահարել, ո՞ւմ հետ դատի բռնվել,—այդ բոլորի մասին միայն ինքը կարող էր պատմել իր բոլոր մանրամասնություններով:

Այդ փոքրիկ տունը լցնում էր իր տիրոջ կյանքը հազար ու մի մանր-մունք գործերով: Եվ այդ գործերը նա կատարում էր ամենամեծ ուշագրությամբ, նույնիսկ կարելի է ասել՝ ոգեսրվում էր նրանցով, իսկ շեղած տեղը միշտ փնտրում էր ու գտնում:

Ամբողջ օրը նա փսփսում էր իր տան մեջ,—մի տեղ մեխ էր խփում, մի ուրիշ տեղ դռան կողաքեքը փոխում, պատըշդրամի թուղացած ձաղերն ամրացնում ու այսպես անընդհատ մի գործից անցնում էր մյուսին, վանդակի մեջ ձգած թռչունի նման պտտվելով իր տան մեջ:

Կիրակի օրերը պատարագից հետո նա իջնում էր շուկա, դնում էր ամեն տեսակի մանր-մունք երկաթեղեն, դռների ու

պատուհանների պարագաներ, ու Հետո ամբողջ շաբաթը զբաղվում էր իր բերած իրերն այս կամ այնտեղ հարժարեցնելով:

Այնուհետև կտեսնեիք թափարբեկյանին մուրացկանին կամ թափառական շանն իր գավթից վանդելիս, գոնապանի կամ ոստիկանի հետ իր տան մասին խոսելիս, փողոցի երեխանների վրա բղավելիս:

Իսկ ամառվա երեկոները հաճախ կտեսնեիք նրան պատըշգամբում փառավոր նստած՝ հանգիստ զրոցելիս որևէ պատվավոր մարդու հետ.—զինվորականի, վաճառականի կամ քահանայի հետ:

Այդ ժամերին նա իր սեփական տան բավականությունն էր վայելում:

Ամբողջ փողոցի բնակիչները տարիների ընթացքում այնպես էին ընտելացել թափարբեկյանին, որ թվում էր, թե մի տան մեջ էին ապրում նրա հետ։ Գիտեին նրա սովորությունները—թե ե՞րբ է տանից գուրս գալիս, ո՞ւր է գնում, ե՞րբ է ճաշում, քնում և այլն։

Հացթուլուր, իմանալով նրա սովորությունը, «առանձին» ընտրովի հաց էր պահում նրա համար, կոշկակարն «անմաշ» կաշի էր բանեցնում նրա կոշիկները նորոգելիս, Խանովթականներն էլ դիտեին, որ նա սիրում է երկար սակարգել, բայց չէին նեղանում, որովհետև դա նրա «խասիաթն» էր, որին ամեն կերպ պետք էր հարմարվել։

Երբեմն միայն փողոցի երկու կոշկակարներից մեկը նեղանում էր թափարբեկյանից, թէ ինչո՞ւ նա իր կոշիկները հանձնել է նորոգելու իր հարկանին։ Բայց այդ էլ շուտով մոռացվում էր, որովհետև հետեւյալ անգամ նա իր կոշիկները հանձնում էր մյուս կոշկակարին, որպեսզի առաջինը երես շառնի։

Փողոցի աշքի ընկնող բնակիչների՝ մանավանդ տնաւե-

գերի, վաճառականների հետ շատ սիրալիր էր Թավարբեկյանը։ Բացառություն էր կազմում միայն իր տան հարևանը, որի հետ սահմանավեճի կոիլ ուներ։ Ամեն անդամ նրա անունը տալիս ավելացնում էր։

— Ես էդ ավագակին Սիրիր պետք է ուղարկեմ...

Քանի որ խոսքը եկավ թշնամության, սիրտի ասենք, որ նրա ամենամեծ թշնամիները փողոցի երեխաններն էին, որոնք մեծ անհանգստություն էին պատճառում գուան մուրճը շըխկշխկացնելով։ Նա միշտ գանգատվում էր ուսուցիչներից, թի ինչո՞ւ են երես տալիս աշակերտներին, խիստ պատիժներ շեն նշանակում։



Թավարբեկյանի ստացած թոշակի ամեն մի կոպեկը մի պատմություն ուներ։ Շախսում էր այնպիս, կարծես ամեն մի փող իր մարմնից էր ողոկում։

Առավոտը վաղ գնում էր շուկա, հետո առած փոքրիկ ծառացին, որը լայն պիջակի մեջ, թեքերը քաշ ընկած, շարժվող խրտվիլակի էր նմանում, ու մեծի կոշիկները քարշ տալով հաղիվ էր հասնում իր տիրոջ հետեւց։

Սյուտեղ Թավարբեկյանը երկար պտտվում էր, անվերջ սակարկում, քարկանում գյուղացիների վրա, սպանում ովկերջապես մթերքներ առնելով վերադառնում տուն՝ մեծ մասմբ հաղթական տրամադրությումք։

— Սոֆյա, — ասում էր կնոջը, — Հենց էժան ապրանք եմ քերել, որ փողն էլ հետո է եկել։

Իսկ տիկին Սոֆյան անխոտիր գովում էր նրա գնած մթերքները։

— Հա, ի՞նչ լավն է. էսքան էժա՞ն... էս հո գտած է...

Պետք է ասենք, տիկին Սոֆյան ստիլված էր ամեն ինչ պովելու, քանի որ փորձով գիտեր՝ եթե մի չնշին փուտ գներ ամուսնու գնած ապրանքի վրա, Թավարբեկյանն իսկուն փոթորիկ էր քարձրացնում վիրավորված ինքնասիրությունից, նույնիսկ սպառնում էր ոռաերեն։

— Դու գիտե՞ս, ում հետ գործ ունես—նորին կայսերական մեծության շինովնիկի հետ...

Զարմանալի է թվում, թե ինչպե՞ս այդ փոքրիկ մարդը ևնթարկել էր այդ կնոջը, որն իրենից երկու անգամ մեծ մարմին ուներ:

Կինը միանգամից ընդունել էր ամուսնու անսխալականությունը և անշեղ գնում էր նրա հետեւյց: Նա ապրում էր ամուսնու կյանքով—երբ նա դուրսն էր, սպասում էր նրան, Երբ տանն էր, նրա կարգադրություններին ու սովորություններին էր հետեւում:

Իսկ Թավարբեկյանի սովորությունները մի ամբողջ ծիսակատարություն էին կազմում: Նրա ճաշելը, ընթրելը, թեյ կամելը, բաղանիք գնալը, բոլորն իրենց կանոնադրություններն ունեին:

Հետեւով ամուսնում, կնոջ կյանքն էլ ընկել էր կարգ ու կանոնի մեջ. նույնիսկ նրա դեմքը կարծես միանգամայն կազապարվել էր, ստացել «շինովնիկ» կնկա պատվավոր արտահայտություն և այդպես էլ մնացել իր կլոր փքված այտերով, կորսետում ձևակորված հաստ մարմնով ու ծոծրակինցից արած մազերի մեծ գնդով:

Մի արտակարգ դեպք միայն խանգարում էր Թավարբեկյանի հանգստությունը.—իր մըրակ տղան, ավարտելով զինվորական դպրոցը Պետերբուրգում, առանց իր թույլտվության ամուսնացել էր, որի պատճառով էլ հայրը խոռվ էր իր տղայի հետ:

Բայց այս էլ շատ շանցած կարգ ու կանոնի տակ էր ընկել: Տարենը երկու անգամ՝ զրօրհներին ու զատկին որդին նամակ էր ուղարկում ծնողներին, երեխայի պատկերի հետ: Հայրը փնտինթում էր, բայց պատկերին նայում ու ժպտում, իսկ մայրը թաքուն պատասխան էր ուղարկում, նկարագրելով մի քանի ամսվա անցքերը:

Թող ուրիշները ձանձրանային այս կյանքից, որը քաղաքային ժամացույցի նման միօրինակ էր: Թավարբեկյանը ոչ

միայն չէր ձանձրանում, այլ ընդհակառակը՝ նույնիսկ ողեղորսում էր:

Կյանքը նրա համար մի ամուր օրենք էր, հաստատված Շնորին կայսերական մեծության» կողմից: Նրա կարծիքով մարդ միանգամից պետք է մտներ նրա շրջանակի մեջ, —իբ աստիճանի համեմատ, —և դուրս շդար իր սահմանից:



Այսպես՝ քաղաքի այն հին, սրբագործված թաղում, իր սեփական տանը, իր կնոջ հետ, օրինավոր ու կանոնավոր ազգում էր նախկին աստիճանավոր Թավարբեկյանը:

Ապրում էր այնպես օրինավոր, որ բոլոր պետությունները, իրար ձեռքից կիսլեին այսպիսի «գոհար» հոգածակին:

Ու կապրեր իննուն ինը տարի, եթե մնար «նորէն» կայսերական մեծությունը», եթե շգար ունուցիան...



Երևակայեցեք, թե մի հաղար ոռոմք միանգամից պայմանում են ու խլացնում Թավարբեկյանին:

Կամ թե չէ մի սոսկալի քամի խառնում է ամեն ինչ, փոշով ծածկում աշխարհը, բարձրացնում է վերև ու պտտում անվերջ շշմած Թավարբեկյանին...

Մի՞ք ասիլ նրան, թե ունուցիա է. ասեք երկինքը փուլ եկավ, երկիրն էլ հետք:

Փողոցում աղմուկ է, շարժում, հաղարավոր ամբոխի ողկորություն, իսկ Թավարբեկյանի համար այս բոլորը սատանի հուղարկավորություն է, մեծ հրդեհ է, կամ զրհեղեղ:

Մի քանի օր սխալմամբ դուրս էր գալիս, կարծելով թե այս բոլորը թյուրիմացություն է: Բայց հաղարավոր ամբոխը սարսափելի վախ էր աղմուկ նրան. թվում էր թե պիտի հարձակվեն իր վրա և պատառ-պատառ անեն:

Փողոցներում թվում էր, թե տները շարժվում են և շուտով պիտի փլվեն:

Իսկ երբ լուր տարածվեց, թէ բայլշեփիները խլում են
հարստությունը, նա իսպառ խելքը կորցրեց.

- Տներն էլ են խլո՞մ, — հարցրեց վախվինելով:
- Տներն էլ:

Այլևս աշխարհը սկացավ նրա առաջ, ոտներն ու ձեռ-
ներն սկսեցին դողալ ու այդպես դողում էին երկու տարի:

Պինդ վակվեց իր տանը ու մեծ աճը սրտին սպասում էր
ու զողղողում: Ամեն աղմուկ, ոտների ձայն սանդուղքների
վրա մահվան զրեշտակի ձայն էր նրա համար:

- Գալիս ե՞ն, — հարցնում էր կնոջը:
- Ո՞վ:
- Բա էն ի՞նչ ձայն է...
- Աղբի մշակն է...
- Վա՞յ թէ դանտունս խեն ու ինձ էլ անհաղորդ սպա-
նեն...

Սրտի ծակոցներ, անվերջ նվազումներ — շնչի սպասում,
մի կիսամեռ կյանք սկսվեց իր վատ երազներով:

Կինը կանչեց իրենց ծանոթ բժշկին: Եկավ, նայեց ու
տաց իր անգիր արած կորհուրդը:

- Հա՞նգիստ, հանգիստ... շպետք է հուզվեք...
- Ասում էր ու ինքն իր վրա խնդում: Ի՞նչ հանգստություն,
երբ ինքն էլ անհանգիստ էր. նրա աշքերում էլ պարում էր իր սեփական տոմսը...

— Էս ժամանակին սիրո կղիմանա՞ , — ասում էր բժիշկը
Թավարբեկյանի կնոջը, — ամեն ինչ քանդեցին...

- Հա՞ , հա՞ , — պատասխանում էր կինն ու թաշկինակով
արցունքները սրբում:



Անցել էր երկու տարի: Շատերն էին հաշտվել ու հար-
մարվել նոր կարգերին, բայց Թավարբեկյանը շարունակում
էր իր հին վախն ու դողոցն առաջին օրվա թարմությամբ:

Մարդու և կնոջ դերերը փոխվել էին, այժմ դրսի աշ-

Հարաբերությունները պահպանում էր կինը, իսկ «նախկին» Թավարբեկյանը փալաս դարձած տանն էր մնում:

Կինն էր այժմ փնթինթում մարդու վրա, նկատողություններ անում, պահանջում, որ իր «կարգադրությունները» կատարի, և Թավարբեկյանը՝ մոռացած իր նախկին իշխանությունը, ստիպված էր լինում հնազանդել, որովհետեւ նույնիսկ ամենամեծ սպառնալիքը, որ տալիս էր առաջ—«նորին կայսերական մեծության» անունով, այժմ միայն ժպիտ կարող էր հարուցանել:

Կինը համոզում էր նրան դուրս գալ փողոց, մի քիչ շարժվել, հավատացնելով, թե ոչ մի վտանգ չկա, նույնիսկ երբեմն էլ ասում էր—«Համարյա թե առաջվա նման է», բայց Թավարբեկյանը կատածում էր,—Հանկարծ դուրս գա, ընկնի «նրանց ձեռքը». ո՞վ զիտե, կը ոնեն կտանեն անհաղորդ կոպանեն...

Բայց վերջապես մ՞ն օր, մի պայծառ մայիսյան օր կարությ քաշեց, և նա շանկություն զգաց քաղաքը ահանելու: Ինչոր ջահեկության հիշողություններ եկան մեջ... իր սիրած փողոցները, իր պաշտած կայսերական տոների պարագները և էլ ո՞վ գիտե, թե ինչ:

Ու դուրս եկավ կուշ ու կուզ արած, վիզը կնոջ շալով փաթաթած, ձեռնափայտը քաշ տալով:

Աշքերը մարած էին, ճպոստ, ու նրանց տակերին երկ-Հարկանի կնճիռների գոգեր: Շրթունքները շարունակ շարժման մեջ էին. փսփսում էր, ինքն իր հետ խոսում ու հաճախ կրկնում—«տե՛ր, փրկյա՛ զմեզ ի շարե՛»:

Շարունակ մրսում էր, չնայած տաք օր էր և շատերը ամառվա հագուստով էին ման զալիս:

Կանաշաղարդ ծառերը, ակացիների բուրմունքը, շարա-ձեզի ծտերի ձայնը հիշեցնում էին վաղո՞ւց, երազի նման անցած կյանքի մի կտոր:

Բայց թվում էր, թե շատ հեռվից էր գալիս այս բոլորը ու աղոտ էր ամեն ինչ, որպես լույսը խորը ջըհորի մեջ:

Փողոցներն էլ ասես առաջվանը չէին, փոխվել էին. շա-

րունակ կանգ էր առնում ու դարմանում, —մի՞թե առաջ այսպ-
պես էր:

Մի տեղ նա դեմ ընկալ փողոցն ի վեր շարված ամբո-
խին ու ակամա կանգ առալ:

— Տեսնում ե՞ս, նիկոլայի զորք ա, — ասաց Թավար-
բեկյանի կողքին կանգնածներից մեկը մյուսին. — Հե՞յ գիդի
հա, ինչ գեներալներ են, ի՞նչ օֆիցերներ...

Կարծես եռացրած ջուր սրակեցին Թավարբեկյանի դեմ-
քին, այնպես անսպասելի էին այս խոսքերը. «Նիկոլայի
զո՞րք»... ինչպե՞ս, որտեղի՞ց...

Նրա լեզուն բացվեց:

— Ինչպե՞ս ասացիք, պարոն, ներողություն, ի՞նչ զորք...

— Թագավորի զորք է, — ասաց նույն մարդն ու հեռացավ:
«Թագավորի, նիկոլայի զորք»...

Թավարբեկյանի ականջին ասես մի մեծ, աճեղ զանգ
հնչեց: Նրա սիրտն սկսեց վեր վեր թռչել, և ուրախության մի
ալիք կուրծքը մտավ: «Տե՛ր, մեղա քեզ ասոված, էս ի՞նչ
բան է»,...

Մի կերպ առաջ անցավ դեպի փողոցի մեջտեղը, աշքերը
լարեց. Ճիշտ որ հեծելազոր էր անցնում շքեղ ու փայլուն
զգեստներով:

Ահա զորքի մի մասն անցավ փողոցի այս կողմով, բո-
լորովին մոտիկ Թավարբեկյանից:

— Տե՛ր, մեղա քեզ ասոված... ճիշտ որ նիկոլայի զորք
է... ուսնոցներով, փայլուն կոճակներով...

Ակամա ձեռքը ճակատին դրեց, կարծես ստուգելու հա-
մար, երազ է թե՝ իրականություն: Չէ, սա իրականություն
է, բայց ինչպե՞ս եղավ այս բանը: Ուրեմն ճիշտ էր ասում
այն պարոնը, թե նիկոլայի զորք է դալիս... ճնորին կայսե-
րական մեծության» զորք...

Ահա կազակներ են անցնում, իսկական կազակներ... և
ո՞րքան մոտիկ...

Եվ անսպասելի ուրախությունից հուզված, աշքերը շրա-

կալած, գողղողացող ձեռքերով գլխարկը վերցրեց ու փաշա՛-
կընքեց երեսը:

Անցան կազակները ու նրանց հետեից շարվեցին կառքե-
րը, որոնց մեջ նստած էին կայսերական բարձրաստիճան
մարդիկ, մեկը մյուսից փառահեղ հաղնված, կրծքներին խա-
չեր, մեծ սպիտակ տառղեր, ժապավեններ, փայլուն դեղին
մետաղյա կոճակներ...

Բայց որ գլխավորն է, և որ պարզ նկատում էր Թավար-
բեկյանը, նրանց գլխարկներն էին, հին ձեմ, եռանկյունաձև:

Թավարբեկյանը նայեց այդ պաշտելի գլխարկներին,
ուրախությունից ինչ-որ անորոշ ձիչ արձակեց ու վազեց դե-
պի կառքերը:

Նա հրճվում էր, ցնծում, արտասվում՝ ուրախությունից:
Հուզմունից չէր կարողանում մի բան ասել. նրան թվում էր,
թե ուռա է կանչում, բայց իսկապես նա միայն ա՞-ա՞ էր
բղավում, կարծես ոչխար լիներ մայելիս:

Մոտենալով կառքերից մեկին, նա վայր ձգեց ձեռնա-
փայտը և իր հին, շինովնիկի խոնացած գլխարկը հանելով,
սկսեց երեսը խաշակնքել:

Նրա հետեից ամբոխը բարձր ծիծաղում էր, սուզում, բայց
Թավարբեկյանը չէր լսում, նա շարունակում էր երեսը խա-
շակնքել:

Միլիցիոները, որ հսկում էր շարժմանը, նկատելով Թա-
վարբեկյանին կառքի մոտ, իսկուն մոտ վազեց և թերից
քոնելով քաշեց իր հետեւից:

Ամբոխի ծիծաղն ու սուզոցները բանկվեցին կրկնակի
ուժով: Երբ նրանք երկուսով հասան փողոցի եզրին, Թավար-
բեկյանին շրջապատեցին ու հետաքրքրությամբ դիտում էին
նրան խնդալով:

Թավարբեկյանը նոր էր նկատում, որ իրեն լրա են ծի-
ծաղում, բայց չէր հասկանում պատճառը: Այդ ժամանակ
մի տղա բերում էր Թավարբեկյանի ճիւլած գլխարկն ու խո-
րը մինչև ականջները հագցնում նրա գլխին:

— Հենց իմանում ես Նիկոլայը եկել է՝ — ասում է տղան Ժպտալով. — Էս հո կինոյի համար են նկարում:

Թավարբեկյանն ապշած նայում է տղային. երեսում է, չի հասկանում, թե ի՞նչ է ասում:

— Իմացա՞ր, էս զորքը որ տեսար, սարքովի էր. էսպես անց են կացնում ու պատկերը հանում, ճետո էլ կինոյում ցույց տալիս:

— Էս բոլորը իսկական չե՞ր:

— Չէ, թամաշա էր:

Թավարբեկյանի սիրտը ճմլեց: Զեռքերի դողդողցն ավելացավ. թուլովթյունից քիչ էր մնում վայր ընկնի:

Տղան տեսնելով նրա նվազելը, թերից բռնեց ու դուրս բերեց շրջապատ ամբոխից:

Այժմ նրան թվաց, թե այս բոլորը սարքել են, որպեսզի իմանան, թե ո՞վ է «նրանց» կողմը... և մտածեց թե հիմի կղան ու կբանտարկեն իրեն...

Տղան դուրս բերեց նրան, մի քանի քայլ հեռացրեց ամբոխից ու բաց թողեց:

Թավարբեկյանը շարժվում էր դանդաղ, կարծես շղթակապ լինեին ոտքերը:

Քայլում էր օրորվելով, շնչառպառ, ամեն բողե թվում էր, թե վայր կընկնի:

Նկատելով ծառը, մի կերպ մոտեցավ ու հենվեց, երկու ձեռքով ընկնելով ծառի վրա:

Հանկարծ տղաների մի խումբ անցավ նրա մոտով:

Ականջների թշոցի անսպասելի աղմուկի մեջ Թավարբեկյանը միայն զգաց, որ մարդիկ մոտեցան. նրան թվաց, թե եկել են բանտարկելու:

Մի ուժեղ սրտի ծակոց ցնցեց նրան, ու վայր ընկավ:

Երբ միլիցիոները եկավ ու սկսեց շարժել, Թավարբեկյանն արդեն մեռած էր:

ԱԶՔԸ ՎԱԽԵՑԱՌ ՀԱՆԵԱԾ

Ամեն անդամ, երբ քաղաքից մի մարդ էր գալիս՝ լինեք դա կոռպերիտիվի հրահանդիշ, կոմերիտների շրջիկ, նույնիսկ կին բաժնի վարիչ՝ միկնույն է, Հանեսը պիտի նրա առաջը ելներ՝ մեծ մասամբ գյուղից գուրս, որ մարդ չտեսնի, ու միշտ նույն խնդիրը կրկներ.

— Հընդեր, խնդրում եմ ինձ օգնեք...

Աշքերը շոած՝ հերձե, նա այնպիսի տեսք ուներ, կարծես հետեւց վաղում, հալածում էին, և շուտափույթ օգնություն էր աղերսում:

Քաղաքի մարդը կանգնեցնում էր ձին՝ ու Հանեսն սկսում էր իր վարելահողի պատմությունը.—Էս բայլշեկի կառավարությունը որ եկավ՝ Սիմոնի արտը խլեց ու տվեց իրան՝ Հանեսին։ Ու հիմի նա չի կարողանում տերություն անել արտին, օգտվել նրանից.—Սիմոնը կոխվ է գցում, չի թողնում մոտ գնալ... իսկ էղ Սիմոնը ամենահարուստ մարդն է գյուղում։

— Խնդրում եմ մի էնպես հրաման տաս, որ Սիմոնը վերջ տա, եւ կոխվ չպցի, ու արտն էլ ինձ վրա պինդ հաստատվի...

Նորեկը մնում էր շվարած, տեսնելով, որ գործը իրեն չի վերաբերում, բայց խորհուրդներ էր տալիս, թի ում պետք է դիմել, կամ նամակ էր գրում այս ու այն պաշտոնյացի անունով և շարունակում իր ճամփան։ Սակայն Հանեսը գոհ չէր մնում ոչ տված խորհուրդներից և ոչ նամակից,

(որը չէր հանձնում), ու էլի շաբունակում էր իր դիմումները՝ ամեն մի քաղաքից եկողին:

Հանեսին այնպես էր թվում, թե ոչ չի ուզում հասկանալ իր դարդը ու ամեն մեկը, որին նա դիմում է՝ միշտ աշխատում է գործը ձգել գյուղի մարդկանց վրա, փոխանակ իր ձեռքով լճուելու, կամ քաղաքից կարգադրելու: Ոչ ոք չէր մտածում, թե էս Սիմոնը՝ գյուղի ամենահարուստ մարդը, (որի մոտ Հանեսը երեք տարի նոքար է եղել) օրը ցերեկով իր արտը չի տալ Էստեղի մարդու ասելով... Էն էլ ո՞ւմ... ամենախեղճ, ձենը փորն ընկած մարդուն, որի ավելորդ անունը «աշքը վախեցած Հանես» էր...



Այդպես էր Հանեսի ավելորդ անունը, և զուր չէր կպել նրան այդ անունը: Ասենք՝ պիտի խոստովանել, Հանեսի վախը մի ուրիշ տեսակ էր, — նա չէր վախենում գաղաններից, սատանաններից: Նա վախենում էր «աղա-մարդկանցից»: Դեռ մանկությունից պրիստավ, քյոխվա, կակարդավոր մարդկանց տեսնելիս՝ նա փախչում էր թաքնվում: Մի անգամ, երբ Հանեսը դեռ ութ տարեկան էր, քաղաքից եկել էր մի կակարդավոր մարդ, հետն էլ բերել էր իր փոքրիկ տղային: Մի օր էլ սա մտրակ էր շինել ու վազվզում, խաղում էր: Հանկարծ տեսավ Հանեսին, վազեց նրա կողմը: Հանեսը վախից գլուխը կորցրած՝ սկսեց վագել, ու մի շնչում ընկալ իրենց տունը, զուռը շրմիկացնելով.

— Այ տղա, ի՞նչ ես վազում, — հարցրեց Հայրը:

— Էն աղի տղեն, — հազիվ կարողացավ ատել Հանեսը:

— Լավ, ի՞նչ կա վախելու...

Հանեսը գիտեր, որ Հայրը չէր կարող պաշտպանել իրեն աղա-մարդուց. — շէ՛ որ նա մի անգամ տեսավ, թե ինչպես մի կակարդավոր մարդ քյոխվի հետ միասին ծեծեցին իր հորը հարկահավաքի ժամանակ...

Դեռ տասնհինգ տարեկան էր Հանեսը, երբ նրա հայրը

մեռավ; Թաղման օրը բարեկամ, հարևան, բոլորը՝ ասես
խռոքը մեկ արած՝ սիրա էին տալիս Հանեսին:

— Վախի՛լ մի, Հանես, դոշաղ կաց. օչով շի կարող քեզ
մի շոռ ասի, սարի պես քամակիդ կանգնած ենք...

Բայց շատ շանցած՝ Հանեսը ուրիշ խոսքեր լսեց: Էս
սիրտ տվող հարևանը՝ Առաքելը, վարելու ժամանակ Հանե-
սի արտից զավթեց, մեջ գցեց բավական տեղ, ու երբ Հա-
նեսի մայրը գնաց, որ առաջն առնի, հարևանը կատաղած
պոռաց.

— Գնա, թե չէ հենց կտամ, մարդուդ տեղը կընկնես:

Մի բարեկամ էլ մյուս արտը վերցրեց, խոստանալով
կիսովի վարել, բայց կեսի տեղ մի քառորդը տվեց, իսկ հե-
տևյալ տարին այդ էլ շտվեց, ու արտը մնաց նրա ձեռքին:

Մայրը փորձեց գանգատվել, բայց շուտով համոզվեց,
որ վտանգն ավելի է մեծանում, — դեռ գանգատը շվերջացած՝
գողացան նրա միակ կուլը, բոլորը գիտեին, որ այդ գողու-
թյունը գանգատի վրեժն էր: Ու մայրը լսեց, սարսափած
ուժեղների շառից: Երբ պատանի Հանեսը խոստամ էր դրա
մասին, մայրը միշտ լոեցնում էր.

— Որդի, սո՞ւ կաց, էն զորքաների հետ չենք կարող
կռվել. տնով տեղով ջուրը կմաղվենք, մինչև վերցին թիքեն
էլ կիւնն, լավն էն ա՝ սուս ու փուս ապրենք. մի կտոր հաց
կճարենք, գնա նոքար մտի, հնազանդ աշխատի, մինչև որ
կմեծանաս, հետո տեսնանք, կարելի է մի ճար անենք:

Հանեսը նոքար մտավ, ու իր բախտի պակասը լրացավ:
Աշխատում էր գիշեր-ցերեկ ու քանի շատ էր աշխատում,
այնքան ավելի էին հայհոյում, ծաղրում ու ծեծում: Օր-օրի
վրա նա խեղճացավ: Մի վախ իշավ նրա վրա, ձայնը փորձ
ընկավ:

Երբ մի քանի տարուց հետո Հանեսի մայրը մեռավ, նա
ավելի խեղճացավ: Ամեն մի ուժեղ ձայն, ամեն մի խեթ հա-
յացք նրան դող էր բերում: Ու այդ ժամանակ էր, որ նրա
անունը կպակ «աշքը վախեցած Հանես»:

Այժմ Հանեսն իրեն լավ էր զգում միայն գյուղից դուրս,

Հանդում, անտառում՝ տավարի ու ոչխարի հետ, նա ուրախ կլիներ, որ իսկի շվերագառնար գյուղը, ուր մարդիկ փշի մացառների նման ճամփա շէին տալիս նրան: Եթե տավարը պահելիս՝ մեկ երկու ընկեր էլ պատահում էր, նա մոռանում էր իր ցավերը: Ամենից շատ նա մտերմացել էր իր ընկեր Սիրաբի հետ: Սիրաբը պատմում էր հայտնի ավաղակների մասին, հետո երազում էին, թե ինչպես իրենք էլ ավաղակ են դառնում, գալիս են իրենց գյուղը, բոլոր զորքաներին գերի են տանում: Էդ տեսակ իդիթին թեկուղ սպանեն. ի՞նչ կար որ. դժվարը էս նոքարությունն է, էս հայճոյանքը, ծաղը...



Դեռ մինչև բայլշեիկների գալը գյուղում հաճախ խոսք էր ընկնում նրանց մասին։ Հանեսը չէր մասնակցում խոսքակցությանը, վախենալով մի վտանգավոր բան թոցնել բերած ասեր՝ Բացի դրանից նա լավ գիտեր, որ թեկուզ իմաստում բանից Բացի դրանից նա լավ գիտեր, որ թեկուզ իմաստում խոսք ասեր՝ բանի տեղ չէին դնիլ, կծաղրեին, քանի որ ինքը աղքատ էր։

— Դո՞ւ էիր պակաս, — կասեր զոռքաներից մեկը, — ի՞նչ
և հիմար-հիմար դուրս տալիս:

Միայն ամենաթունդ սովոր օրերին, երբ
Մի անգամ միայն, էն ամենաթունդ սովոր օրերին, երբ
նորից խոսք ընկավ բայց կիների մասին, Հանեսն էլ չհամ-
ուերեց.

— Ա՞յս, մի գան, է՛,—ասաց նա սրտով. — մի գան էս
անիրավներից ազատեն:

Ասաց ու ինքն էլ զարմացավ, թե էղ ի՞նչպես ասաց.
շորս կողմը նայեց՝ տեսավ, որ հավաքվածները իրան նման

աղքատներ են. ունկորներից միայն երկու հոգի էին, նրանք էլ հեռու կանգնած՝ շմեցին:

Հանեսը սրտիցն էր խոսում,—սովոր եկել էր, երեխաները հաց էին կանչում, իսկ իրեն քարքարոտ արտից նա համարյա ոշինչ չէր ստացել, մյուս կողմից էլ պարտքի տակ տնքում էր: Միտքը խառնվել էր, մի ճամփա չէր գտնում, որ աղատվի էս նեղովթյունից: Դուրսը ինչ-որ կատարվում էր, Հանեսը դժվարովթյամբ էր զիսի ընկնում: Պատերազմը, թագավորին գցելը, այս խառը բաները նրա համար, ամպով ծածկված սարերի նման ոշինչ չէին երևացնում: Միայն այն էր տեսնում Հանեսը, որ քանի գնում՝ սովոր հաղթում էր, որ գյուղի ունկորները օր-օրի վրա ավելի էին աղահանում և քիչ էր մնում «մարդ ուտեն»: Այնքանը գիտեր Հանեսը, որ ատում էր նրանց, ատում էր մահից ավելի, ու թե գատաստանն իրեն տային, ո՞վ գիտե՝ թե ի՞նչ կաներ... Բայց նրա ձեռքից ի՞նչ կգար, չէ՞ որ նա խեղճ, անձեն մարդ էր...

Այսպիսի օրերին, երբ Հանեսը լսում էր «բալշեիկի» մասին, այդ խոսելը մոռացնում էր նրա ցալերը: Ինչ որ ատում էին նրանց մասին, վեր էր քաղում ու ինքն իրան մտածում, սպասում, անհամբեր սպասում, որ մի օր գան...

Այսպես խոսեցին—խոսեցին գյուղում, մեկ էլ տեսան՝ եկան... Մինչև Հանեսը կհասկանար, թե ի՞նչ է կատարվում, եկան, նրան էլ տեղահան արին, ժողովի կանչեցին: Գնաց տեսավ, որ գյուղի աղքատները նստած՝ այնպես են խոսում, հենց իմանաս՝ ամեն մեկը հինգ օրավար հող ունի ու չորս լուծ եղներ: Ինքն էլ ուրախացավ, բայց միշտ զարմանում էր.

— Աղքատների իշխանություն... ո՞նց թե. բա աղքատների իշխանություն կլի՞... նոքարը խաղեցինի հավասար...

Այդ էլ դեռ ոշինչ ամենից զորեղն այն էր, որ գյուղի հեղկոմը՝ քաղաքից եկած թագրատի առաջարկությամբ՝ վըճռեց ամենաաղքատ գյուղացիներին հող տալ, խլելով հարուստների մասից: Հանեսին ընկալ Սիմոնի արտը: Այնքան

զարմացավ Հանեսը, որ կասկածում էր՝ շինի՞ թե կատակ
են անում:

Մինչև այսպես կասկածում էր, տեսավ մի օր էլ գու-
թան, եղներ իրար հավաքեցին ու Հանեսի ներքեւ արոր
ուրիշների հետ վարեցին:

Այստեղ արդեն Հանեսը մտածեց.

— Դե, էլ ի՞նչ դես ու դեն. էնա թաղա օրենք ա... օրեն-
քի դեմ ո՞վ կարա խոսի...



Հանեսին տված վարելահողը երկու կտոր էր. մեկը
ճամփի սրակը, մյուսը՝ վերելը: Ներքեւ մասը, հենց սկզբից
վարեցին ու ցանեցին, իսկ վերելինը՝ թողած էր խոպան՝
աշունքավարի համար, և այժմ խոտի տեղ էր: Հենց որ խո-
տը հասավ, Հանեսը գերանդին առավ ու գնաց հնձելու:

Խը՛շ-խը՛շ սկսեց հնձել. ու քանի հնձում էր, այնքան
ավելի ձեռները բացվում էին ու թափն ինքն էր տանում-
բերում գերանդին. արդեն Հանեսը գործով տարվել՝ ինքն
իրեն մոռացել էր, երբ հանկարծ ականջովն ընկալ Սիմոնի
ձեյնը.

— Դու էդ ո՞ւմ շունն ես, որ արտո հնձում ես:

Հանեսը ցնցվեց նրա ձայնից, կանգ առավ. նրան թվաց,
թե ինքն էլի առաջվան նման՝ նոքար է Սիմոնի մոտ, ու հիմի
նա եկել է գործի ժամանակ ճղճում է, հայհոյում, ինչպես
առաջ էր անում:

— Ես օրենքով եմ հնձում, — ասաց նա հաղիկ լսելի
ձայնով:

— Ի՞նչ օրենք. քիթ ու պոռմդդ որ կշարդեմ՝ էն ժամա-
նակ կիմանաս, թե օրենքն ի՞նչ ա:

— Օրենքը ընդունում չե՞ս. դե ես կդնամ նախագահին
դկանչեմ, տենամ ի՞նչ ջուղաբ կտաս նրան:

— Զհանդամը գնաս, ինչ ուզում եմ՝ արա, ես իմ արտը
քեզ չեմ տալ. էն որ ցանեցիր ներքեսումը էն էլ քթիցդ կհա-
նեմ... դուրս կորի, ասըմ եմ...

Հանեսը նկատեց, որ գալիս էր և Սիմոնի մեծ տղան՝
Ճեռքին մի քաղանակի: Պարզ էր՝ եկել էին Հանեսին այնպիսի
ջարդ տան, որ ճեռք քաշի այդ արտից: Ուժը նրանց կողմն
էր, երկու հոգու դեմ ի՞նչ կարող էր անել:

Ու գերանդին ուսին զնելով, Հանեսը շտապ քայլերով
Հեռացավ արտից: Սիմոնի տղան ճամփեն ծոկց, որ նրա
առաջը կտրի, բայց հայրը չթողեց:

— Թող գնա կորչի էդ շունը, ինքն ա փախչում, էլ ո՞ւ
ես գնում:

Տղան կանգ առավ, կարծես տատանվում էր, ապա նո-
րից քայլերն ուղղեց դեպի հայրը:

Հանեսը գնում էր, կատաղությունից արագ հեռալով,
հայհոյելով Սիմոնին:

Ուղղակի գնաց Հեղիումի նախաղաճի մոտ:

— Սիմոնը թողնում չի արտս հնձեմ:

— Գլուխը քարովն է տալիս: Ինչի՞ չի թողնում:

— Կոիվ է գցում. եկել էին ինքն ու տղեն՝ փետերը
ձեռներին. հիմի դու գիդաս, թե արտը ինձ ա տված՝ հընձեմ,
թե չէ՝ էս ի՞նչ բան ա...

— Արա, մի գնացեք Սիմոնին կանչեցեք, — ասաց նա
իր քարտուղարին:

Սիմոնը եկավ փնթփնթալով:

— Ի՞նչի չես թողնում, որ էս մարդը հնձի:

— Բա իմ արտը թողնեմ ուրիշը հնձի...:

— Դու էդ խամ-խամ խոսելը թող... թե չէ կրանտար-
կեմ:

— Զհաննամը, եկեք սաղ տոմ-տեղս էլ տարեք, ճեղ-
ըլի...

Ասաց ու փնթփնթալով Հեռացավ:

Հանեսը մյուս օրը գնաց, հնձեց արտս: Էլ Սիմոնը շե-
կավ: Բայց երբ խոտը չորացավ, Հանեսը հավաքեց, բլուկից
ու մինչև սայլ ու լծկան կգտներ, որ տուն տանի՝ մեկ էլ
եկավ տեսավ, որ խոտը չկա...

Սիմոնը խոտը հավաքել տարել էր: Էլի գործը հասավ

նախադահին: Այս անդամ Սիմոնին երեք օր բանտարկեցին. ստիլեցին, որ խոռոք հետ տա. բայց Հանեսը միայն կեսի շափ ստացավ ու դրանով էլ բավականալով՝ էլ շգանգաւով:

Ահա այդ օրվանից սկսվեց Հանեսի արտի պատմությունը:

— Զէ,—ասում էր նա ինքն իրեն.—Հաստատ օրենք չկա, սրանից բան չի գուրս գալ. էն ա՛ թե քաղաքից եկած մարդն արավ՝ թե չէ էստեղի մարդու բանը չի: Մեր գեղի մարդիկ ի՞նչ են հասկանում, որ ի՞նչ վճռեն, միշտ ուրիշի ձեռին, ուրիշի խոսքին են մտիկ անում: Օրինակի համար Հանեսը գնում է գանգաւում նախադահին. դե նա էլ աղքատներից է. ինչքան զի՞ մի քիչ քաշվում է Սիմոնից, կարելի է սրտումը մի քիչ էլ վախում է. մտածում է՝ ո՞վ է իմանում, ժամանակը ինչպես շուր կգա... Ուզիղ է, կարգադրություն անում է, բայց այնպես պինդ բան չի բռնում, որ միանգամից կտրցնի, ու Հանեսը հանգիստ վայելի իր արտը: Զէ', հաստատ օրենք չկա...

Նա ոչ մի կերպ չէր հաշտվում այն մտքի հետ, թե իրենց դյուղացիք կարող են նոր իշխանություն կազմել. նա կուզեր, որ բոլոր իշխանավորները քաղաքից գային. Թող գան, նըստեն, մի անգամից իրանց ձեռքով հաստատեն ամեն ինչը, թե չէ՝ «մեր մարդը էլի հին օրենքով կանի, ամեն բան կը փշացնի»...

Ու դրանից էր, որ Հանեսը աշը բռնեց քաղաքի համփին: Միշտ սպասում էր, թե մի մարդ կգա ու իրան ձեռքով գործը կվճռի, կհաստատի. այնպես պինդ կհաստատի իր վրա էն հողը, որ էլ հազար Սիմոններ գան, չեն կարող քանդել...

Այդ էր պատճառը, որ Հանեսը ամեն քաղաքից եկողի առաջ էր դուրս գալիս, իր արտի պատմությունն էր անում ու խնդրում կարգադրություն անել, որ Սիմոնն էլ կռիվ շգցի...

Քանի մոտենում էր վերևի արտի հնձելու ժամանակը, Հանեսն ավելի էր անհանգստանում: Նա էլի շարունակում էր դիմումները ամեն մի քաղաքից եկած մարդու, բայց միշտ դժգո՞չ էր մնում: Մի նոր հույս էր բացվել Հանեսի համար. երկու շաբաթ առաջ ընտրել էին նոր նախագահ, որը թեպետ տեղացի էր, բայց երկար ժամանակ եղել էր դուրսը՝ բաշեցիկի կոփիներում. նրանից օտարի հոտ էր գալիս և դրա պատճառով էլ նա Հանեսի սրտին մոտ էր: Բայց Հանեսը տատանվում էր—գանգատվի թե չէ.—վա՞յ թե նա էլ ուրիշ ների նման կիսաբերան կարգադրություն անի:

Վերջապես, երբ արդեն արտը հասել էր, և էլ ուրիշ ելք չէր մնում, Հանեսը սրտապնդեց ու զնաց նախագահի մոտ:

Առավոտ էր. նախագահը մտրակը ձեռքին՝ պատրաստվում էր գնալու շրջանի կենտրոնը, երբ մոտեցավ Հանեսը:

— Հը, ի՞նչ կասես, Հանես:

— Սաղություն! Խնդրում եմ, ինձ օդնություն անես... կարելի ա քեզ հայտնի ա, կառավարութենը ինձ վրա նշանակել ա Սիմոնի արտը. հիմի էտ Սիմոնը չի թողնում, որ օդարվեմ, սրանից առաջ երկու անգամ կորիվ ա գցել, հիմի էլ էս ա հնձի ժամանակն ա, էլի կորիվ ա ընկնելու. խնդրում եմ էնպես կարգադրութեն անես, որ էտ Սիմոնը էլ մոտ չդա:

Նախագահը ժպտաց, մի աշքը կուշ ածելով.

— ... էս ո՞ր օրն ա, որ վախում եմ. զնա հանգիստ հընձի, ոշով կարալ չի բան ասի:

— Ի՞նչ անեմ, մենակ մարդ եմ, նրանք երկու հոգով են գալիս. ասենք՝ թե եկան խփեցին, ի՞նչ պտի անեմ:

— Ես քեզ ասում եմ՝ գալ չի. հիմի նա մի թաքուն տեղի ա ման գալիս, որ մեղնից ծածկվի:

— Չէ՛, չէ՛ երվանդ զան, նա էնպես կատաղած մարդ ա, հենց դուզ գալիս ա՝ փետը ձեռին, էլ օրինք-բան չի հարցնում:

— Այս տղա, դու ոնց որ տեսնում եմ՝ հանաք չես անում.
քա չե՞ս ամաշում, էսօրվան օրը վարխենո՞ւմ ես Սիմոնից:
— Երվանդ, դու Սիմոնին լավ չես ճանաշում. նա էս
թագա բաները չի ընդունում. նա մենակ մի բան ա իմանում,
որ էտ արտը իրանն ա, նրանից դենը՝ ով ուզում ա գա՞ խո-
սի, նրա համար մեկ ա... ինդրում եմ էնպես սաստես, որ էլ
Կոփիվ չգցի:

Նախագահը ժպտալով նայում էր Հանեսին:

— Հենց էս խնդրում, կասես խեղճ, անօդնական ըլես.
Էնդո՞ւր են անունդ դրել աշքը վախեցած Հանես, ամոթ ա,
էլ մի խոսիլ, գնա հնձիր, թե Սիմոնը համարձակվի ու կըռ-
վելո՞ հենց գոռա վրեն, որ ետ փախչի: Աշքերդ բաց արա՞
հիմի աղքատների իշխանությունն ա. նա՛ պարի քեզանից վա-
խի և ոչ թե դու, իմացա՞ր...

— Զէ՛, չէ՛, ես հաստատ գիտեմ՝ նա էդ բաներից քաշ-
վողը չի. խնդրում եմ, մի բան արա, էգուց հնձելու եմ...

Նախագահի դեմքը լրջացավ. նա աշքը ավելի կուշ ածեց.
կարծես մտածում էր, թե ի՞նչ պիտի անի:

— Դէ՛, ես գնում եմ շրջանը. էլի ասըմ եմ, դոշաղ
կաց, մի մաղիդ էլ շեն կարող գիպշի. իսկ եթե վախում ես,
քեզ մի գրություն կտամ, որ ապահով լինես:

Նախագահը նստեց սեղանի մոտ, վերցրեց այնտեղ
դարսած հաստ, վարդագույն թղթի կտորներից մեկը ու գրեց
խոշոր տառերով ուեկոմի որոշման մասին: Ապա, վերջացնե-
լով, վեր կացավ տեղից:

— Էս թուղթը հետդ կտանես, թե որ բան է՝ Սիմոնը
գա, կասես՝ նախագահը կարգադրել է, որ մոտ չգա արտին,
թե չէ պատիժը մեծ կլինի... իգիթի նման կկանգնես, կհայտ-
նես, որ իմ հրամանով ես եկել... դէ՛, գնա՛, ցույց տուր, որ
տղամարդ ես, որ հին անունդ փոխենք, էլ «աշքը վախեցած»
շասենք... իմացա՞ր...

Հանեսը վերցրեց թուղթը, նայեց, հետո, աշքերը բարձ-
րացնելով՝ դիտում էր նախագահի դեմքը, կարծես կասկա-
ծում էր նրա տսածների վրա:

— Ասըմ ես տանե՞մ, — հարցրեց:

— Ո՞նց որ քեզ ասի, էնպես արա. տղամա՛րդ կաց. գե, մնաս բարով, ես գնում եմ:

Հանեսը ծոցը դրեց գրությունը ու գնաց տուն: Գնում էր ու մտածում.

— Ա՞յ տղա, ո՞նց թե էս գրությունը... էս հանա՞ք ա անում... բա էն կատաղած մարդուն էս թուղթն ի՞նչ պտի անի... ի՞նչ ասեմ... հանգստացնում էր ինքն իրեն Հանեսը. — կարելի է թե սրա մեջ մի զորություն կա, որ մարդը տվեց... գե, նախագահ է, զո հասարակ մարդ շի՞...

Առավոտը ծեփին Հանեսը վեր կացավ, մի երկու քուաք շուր տվեց երեսովը, մաշված աղլուսով սրեց, հետո վերցրեց սեղանից թուղթը և ծոցը դրեց: Կինը շորերը հագնելիս նկատեց այդ:

— Դու էլ զարմանք մարդ ես, շատ էլ նախագահը քեզ տալիս է էդ թուղթը, բա դու ի՞նչ ես մտածում. էն զորա Սիմոնը դրանից կվախսի՞...

— Դե մարդը նախագահ է, որ խոսք է տվել՝ հո իր խոսքը գետին չի գցիլ. էս թուղթն իրան հրամանն է, նա իմանում է, որ զորություն ունի, թե չէ՝ ի՞նչի պետք է ինձ տար:

— Ես ինչ գիտամ, ա՛ մարդ, շառը շատ է. սիրոս ասում է՝ թող էդ արտօ, կարելի է մի բան կճարենք, կապրենք:

Հանեսը ոչինչ չպատասխանեց, մի շոր հաց փաթաթեց աղլուսի մեջ, վերցրեց մանգաղն ու եղանը, ճամփա ընկավ դեպի արտը:

Գնում էր վարանոտ քայլերով, կարծես մեկը ետ էր քաշում. ու քանի գնում էր՝ ավելի էր սիրտը պղտորվում. ինչ ասես՝ շէր անցնում նրա մտքով:

— Հիմի որ գա ինձ տա սպանի, հետո՝... երեխեքս որբ կմնան, դռնելուու կը նկնեն. ձեռիս էլ մի թվանքից-խանչալից շկա...

«Հիմքի ես հնձելու եմ գնո՞ւմ, թէ՞ կռվի. Ես ինչ օր ա... ավելի լավ չի՞ միանդամից տամ սպանեմ էն շանը. ինչ ուզում են թող անեն. մի օր էլ մեռնելու չե՞նք. էջ, երի-խանցս էլ մի ճար կլի...»:

Հանկարծ հիշեց նախագահի խոսքերը—«Իդիթի նման կկանգնեն»—ու սիրո առավ:

— Ինչի՞ պիտի ես նրանից վախենամ. նա էլ ինձ նման մի մարդ չի՞ . նա որ էդպես բարձր ճղճղում ա, էդ էլ նրանից ա, որ երես ա տուել առաջվանից. Հիմքի նրա ժամանակն անցել ա. Հիմքի ես պետք է բղավիմ: Թէ ինձ մի վնաս տա՝ ինքն էլ կպատասխանի... ինչի՞ յ եմ վախում...

Այսպես գնում էր Հանեսը, մեկ խեղճանում, մեկ սիրո առնում՝ հիշելով նախագահի ասածները: Վերջապես հասավ արտին:

Զով առավոտ էր. արտերից հաշանի դուրեկան հոս էր գալիս: Կանաչով եղերված արտն օրորվում էր քամուց: Խորհրդավոր լուսիթյուն էր տիրում. կարծես ցողունի մեջ մարդիկ էին թաքնվել, տապ արել:

Հանեսը մի քանի քայլ առաջ անցավ արտի եղերվով, ապա խրեց գետնին եղանը ու նրա ծայրին թելով կապեց նախագահի տված գրությունը:

Սկսեց հնձել: Ծանր էր շարժվում ձեռքը. կարծես մի քան մանգաղի առաջն էր ընկնում:

Նրեմի առաջին շողքերը խփում են արտին ու հանկարծ աշքերը ծակող լույս է սփռում... Հեռվից լսվում են հնձվորների ձայները: Հանեսը վեր է կենում, մեջքը քիչ հանգըստացնելու համար ու մտածում է.

— «Երեսում ա՝ էն անիծած Սիմոնը ձեռք ա քաշել, էլ չեղալ... եկող էր՝ առաջուց կպար...»:

Բայց հենց ուզում էր կռանա, շարունակի հունձը, մեկ էլ հանկարծ մի ճղավոց լսեց, ասես մի քան տրաքվեց նրա ականջի մոտ:

— Արա, հե՞լ, ա՛յ շուն, էդ ո՞ւմ արտն ես հնձում, դո՛ւրս կորի, թե չէ՝ վերջդ եկել ա...

Հանեսը ցնցվեց այդ դաժան ձայնից. նրան թվաց, թէ
ինքը պապանձկեց, մի խոսք անգամ չի կարող ասել: Բայց
հանկարծ որքան ուժ ուներ՝ հավաքեց ու մի անորոշ ձայն
հանեց, մի ճղավոց, ու դրանից սիրտ առավ:

— Դուրս կորի, ասում եմ, թե չէ՞ գալիս եմ շարդեմ:

— Ի՞նչ ես զա՞լա տանում, — հանկարծ ծղրտաց Հանե-
սը; ալելի բարձր, քանի ինքը սպասում էր, — տեսնո՞ւմ ես էն
եղանի վռա նախագահի գրությունն է՝ թե կարաս՝ նրան պա-
տասխան տուր... օրենքով եմ եկե՞լ, թե չէ՞...

Մի բոպե Սիմոնը վարանեց՝ աշքը դարձնելով դեպի
եղանը, զինի՝ թե նախագահն է հրամայել: Բայց մեկ էլ
որ նայեց Հանեսին, տեսավ նրա գզգզված շորերը, խճճված
մորուքն ու խոր ընկած աշքերը, տեսավ նրա խեղճ նորարի
դեմքը ու էդ խեղճի ձեռքին մանգաղը, որով նա իր արտը
հնձում էր՝ էլ շնամբերեց, — «ո՞վ, էս Ճիճո՞ւն՝ իմ արտը
խլի՞...»:

Ու արագ վազեց դեպի եղանը:

Նկատելով նրա շարժումը դեպի թուղթը, Հանեսը կա-
տաղած թռավ, ու հենց Սիմոնը ձեռքը մեկնեց, որ հանի
գետնից եղանը, հանկարծակի մի ուժգին հարված տվեց իր
մանգաղով նրա վզին, մի հարված, որ երբեք կյանքում չէր
տվել:

Սիմոնը ընկավ գետին, ինչոր ձայն հանեց, մի քանի
շարժումներ արավ ու մնաց անշարժ: Արյունը երևաց վզին,
հոսեց ներքեւ ու ներկեց գետինը:

«Սպանեցի», — անցավ Հանեսի մտքով. բայց այդ միտքն
էլ նրան չէր զարմացնում: Այդ բոպեին նա գիտեր միայն մի
բան՝ որ եթե Սիմոնը վեր կենա, նա նորից կխփի:

Բայց Սիմոնը չէր վեր կենաւմ, չէր շարժվում նույնիսկ:

Հանկարծ հավաքվեցին գյուղացիները, կարծես մեկը
նրանց կանչել էր. հավաքվեցին Սիմոնի շուրջը, շարժեցին
նրան, գլուխը տմտմբացրին:

— Հանես, այս քու տոմնը շքանդվի, էս ի՞նչ ես արել.
բանը բանից անց ակացել...

— Հա, իմացե՞ք, ա՞յլ խալիսը. ես եմ սպանել, — ասաց
Հանեսը մի շտեսնված ձայնով. — Հա՛, սպանել եմ, լա՞վ
իմացեք...

Ու կանգնել էր մի շտեսնված տրամադրությամբ, հենց
իմանաս տարիների ծանր բեռք վերցրել էին վրայից. — տա-
րիների տանջանքի, Հայոցանքի ու ծաղրի վրեժն էր միան-
կամից լուծել:

Կանգնել էր Հանեսն անշարժ, ինչպես մի զինվոր՝ պատ-
րաստ ամեն վտանգի. իսկ նրա դիմաց եղանի վրայից նա-
յում էր նախագահի վարդագույն թուղթը, թեթև քամուց տա-
րութերվելով...

ՀԱՐՄԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԻՑ

Հուլիսի 18.

Ամառն է—շոգի, փոշու և քաղաքի ամայության սեղոնը։ Կնոջս ու երեխայիս ուղարկել եմ ամառանոց, մնացել մենակ։

Բնակարանս ասես շատ վաղուց մարդու երես չի տեսել ու քարացել է իր սարք ու կարգով, փոշութել։ Ամեն ինչից նկատվում է, որ Մարգոյի ձեռքը բավական ժամանակ չի դիպել։

Ճաշից հետո դուրս եմ գալիս պատշգամբ ու նստում մի հին, խարիսով բազկաթոսի վրա, որը ժառանգություն է մնացել տանտիրոջից։ Զարմանալի բազկաթոս է—հենց որ նստում եմ վրան, խսկույն ընկնում եմ անուրջների-երազների մեջ ու վրաս իշնում է ներդաշնակությունը—հարմոնիան...

Ես, Հարմարյանս, շարունակ փայփայում եմ մեջս այդ հարմոնիան, որը երևում է աշքերիս որպես անվրդով մի կյանք, փափուկ կահավորված բնակարանում,—վարդադույն լուսերի ու երազային երաժշտության մթնոլորտում, որտեղ իշխում է իմ պաշտելի, իմ շքնաղ Մարգոն...

Պատշգամբիս առաջ մի թռքախտավոր, վիզը ձգած թթենի է, բայց ես երեակայում եմ նրա տեղ հովասուն անտառ, աղբյուրներով, թռչուններով... Ընկնում եմ մի երջանկության աշխարհ, ուր ոչ ամառն է խայթում, ոչ ձմեռը... ուր մարդիկ ապրում են առանց պայքարի։

Քայլ հանկարծ սթափվում եմ ու իմ շնաշխարհիկ հարամոնիան խանգարվում է.—դիմացի բակից կանչում է աքաղաղը, թևերը սպառնալից թափ տալով, նրան պատասխանում է մեր բակի աքաղաղն իր գոռոզ ու ահեղ ձայնով, և ահա սկսվում է նրանց տարօրինակ մենամարտը: Թվում է, թե կովի ոչ մի առիթ չէր կարող լինել, քանի որ երկու բակերը բաժանված են իրարից տախտակե բարձր ցանկապատով. սակայն օրական քանի անգամ աքաղաղները մոտենում են ցանկապատի մեջ մնացած մի նեղ արանքի, որից հաղիվ անցնում են նրանց գլուխներն ու սկսում են կատաղի կորիվն իր բոլոր կանոններով, կարծես աշխարհու պիտի բաժանվի նրանց մեջ...

Հովիսի 22.

Ես, Հարմարյանս, իսկական հայ եմ,—ծնմել եմ Արարատյան դաշտի Հնաշեն գյուղում: Հայրս քահանա էր, այն հին քահանաներից, որոնք ուսում-խմում էին յոթը մարդու շափ ու քնում այնպիսի խոմքոցով, որից դողդողում էին սկատուհանների ապակիները:

Սակայն բնության թարս քմահաճույքով, ես՝ փոխանակ Հորս՝ ժառանգել եմ մորս վտիտ մարմինը: Պետք է խոստովանեմ, որ ես աշխարհ եմ եկել կիսակենդան, անձայն, և միայն տատմոր երկար թափ տալուց հետո ուշքի եմ եկել ու փոշտացել: Կարող եմ ասել, որ այդ փոշտալն ու նրա հետ հարություն առնելը միակ նշանավոր ռեսույցին ակտն է եղել իմ կյանքում:

Դպրոցում ես «օրինակելի»՝ այսինքն դժբախտ աշակերտներից էի: Ուսուցիչները շատ անգամ ասում էին շարաշակերտներին.

— Ա՞յ, օրինակ առեք Հարմարյանից.—տեսե՞ք, ի՞նչ խելոք է նստած...

Այդ հաճախ կրկնվող խոսքերն առիթ էին տալիս շարեցին ավելի մեծ թափով բարձելու գլխիս ծաղրական անուն-

ներ—նբանք հետևիցս կանչում էին վանկերը ձգելով—«Ար-
հա-մար-յան» ու հաճախ դմիում էին: Ի՞նչ ասել կուզի—
այդ ժաղըն ու դմիոցը ավելի էին ազդում, քան ուսուցչի դո-
վասանքը: Ավելին կասեմ՝ ես ուրախությամբ կուզեի շար
լինել, նախանձում էի նրանց: Այդպիսով պարզվում է, որ ես
դեռևս դպրոցական հասակում նահատակվել եմ «առաքինու-
թյան» պատճառով:

Դպրոցն ավարտելուց հետո, ես՝ ինչպես ասում են,
կյանք մտա, այսինքն սկսեցի պաշտոնների շարանը: Մի առ
մի նկարագրել, թե ինչպես եղել եմ ուսուցիչ, քարտուղար,
վարիչ և այլն—միանգամայն ձանձրալի է: Սակայն, ետ նա-
յելով դեպի իմ անցյալը՝ նկատում եմ այնտեղ երկու աշքի
ընկնող կետեր, որոնք խոսում են հիշողության հետ.
Դրանցից մեկը ունուցիան է, մյուսը—Մարգովի երեան
գալը:

Փետրվարյան ուելուցիայի սկզբին՝ արյանս սակավաթիվ
կարմիր բշտիկները շարժվեցին. ոգևորությունս այնտեղ հա-
սավ, որ ճառ արտասահեցի մեր հնաշենցիների ժողովում:
Քայլ երբ եկավ Սովետական իշխանությունը, ես վախեցա ու
կրիայի նման գլուխս պատյանիս մեջ առնելով՝ մնացի սպա-
սողական դրության մեջ:

Ամեն մի ցնցումից հետո ասում էի ինքս ինձ—«ահա
այստեղ ունուցիան կանգ կառնի, կհանգստանանք», բայց
դավիս էր մի նոր ալիք, ու կարծես նորից սկսում ամեն ինչ...
վնրջ ի վերջո ես համոզվեցի, որ ունուցիա ասածդդ շատ ան-
հանգիստ բան է և չի սաղում Հարմարյանին...

Քանի որ բանը հասավ ունուցիային, բնական կինի
հարց տալ, թե ո՞ր պարտիային եմ պատկանում: Այդ կող-
մից ես մի երջանիկ անորոշություն եմ: Ես ընտրել եմ ինձ
համար մշուշային մի դրություն, որը շատ հարմար է գալիս
ինձ: Այդ է պատճառը, որ երբ վեճի եմ բռնվում ընկերոջս՝
Կորեկյանի հետ, նա սովորաբար ասում է, որպես եզրակա-
ցություն:

— Քո հայացքները պարզելու համար անհրաժեշտ է մի հանձնաժողով հրավիրել...

Այնուամենայնիվ պիտի ասեմ, որ ես լրդունում եմ սոցիալիզմը, որպես առաջայի մեծ հարմոնիա, բայց վախենում եմ այդ ձանապարհին կորցնել իմ փոքրիկ ընտանեկան հարմոնիան, իմ Մարգոյին:

Մարգոյի երեան դալն իմ կյանքի հորիզոնում մի կատարյալ հեղաշրջում էր ինձ համար: Երեք ամիս սիրահարված էի և գտնվում էի «վերացական» դրության մեջ: Տարօրինակ ցանկություններ էին դաշիս մեջս—ինչպես Հին բանաստեղծներն էին ասում—«սավառնել զինջ եթերում»... «ննջել բնության ծոցում»... «գրկախառնվել անհուն տիեզերքի հետ»...

Ոգևորությունս այնքան մեծ էր, որ նույնիսկ բանաստեղծություն գրեցի, —նվիրված Մարգոյին... Նրա առաջին տողերը մինչև այժմ մնացել են հիշողությանս մեջ—

Ո՞վ Մարզո, Մարզո,

Սիրում եմ 汝ę

Խոնարհ ու հեզ...

Մի օր էլ՝ այդ վերասալց տրամադրության տակ, ամառանոցի փողոցով անցնելիս, տեսնելով մի հորթ՝ բուռն կարուտվ համբուրեցի նրան...

Իմ ընկեր Կորեկյանը, շունենալով իր ներսում «Հարմոնիա», սիրահարությունը համարում էր խելադարսություն, իսկ հորթին համբուրելը՝ հայրական զգացմունքների արտահայտություն:

Այո՛, Մարգոն...

Ես չեմ կարող հանգիստ կերպով արասասանել այդ անունը... Այժմ նա իմ կինն է և պարգևել է ինձ Սեղիկին... Ես շարունակում եմ սիրել նրան... նա կազմում է իմ փոքրիկ իդիլիան, որի մեջ ես զգում եմ ինձ ինչպես բանաստեղծներն են ասում «երջանկության օրրանում»...

Այսօր ճիշտ որ ձախլիկ օր էր:

Հենց առավոտից գործա թարավեց: Անցյալ երեկոյան կողմիներս հանձնել էի նորոգելու և պատվիրել կոշկակարին, որ բերի այսօր՝ գործի դնալուց մի ժամ առաջ:

Առավոտը վեր կացա, թեյ խմեցի, պատրաստվեցի գնալու, բայց կոշկակարը դեռ չկար: Նշանակած ժամանակն անցավ. արդեն պարզ էր, որ պիտի ուշանամ: Սկսեցի ջղացնամալ.—գովազները հագիս անմիտ քայլում էի սենյակում ու թռնդ փոսքեր առաքում կոշկակարի հասցեին:

Վերջապես՝ երբ ջղերս արդեն կապը կտրել, վեր-վեր էին թռչում, դուռը հանկարծ բացվեց ու ներս մտավ կոշկակարը: Ես արդեն պատրաստվել էի շանթ ու կայծակ թափել նրա գլխին, բայց մի ակնթարթում չգիտեմ ինչպես եղավ, վերցրի կոշկեներս ու ասացի մեզ, Հարմարյանին հատուկ ձայնով.

— Շնորհակալ եմ...

Կոշկակարը նայում էր զարմացած: Նա ուզում էր պատճառաբանել, թե ի՞նչու է ուշացել, բայց ես լուր ցուց տվի մատով սեղանի անկյունը, որտեղ դրած էր փողը: Նա վերցրեց և շնորհակալություն հայտնելով, դուրս գնաց:

Երբ կես ժամով ուշացած ներս մտա մեր հիմնարկը, քարտուղարը նայեց ինձ դեմքի մի առանձին արտահայտությամբ, որը նշանակում էր և նկատողություն և մի ներքին ուրախություն: Նա հանեց ժամացույցը, նայեց ավելի երկար, քան անհրաժեշտ է ու կարծես քթի տակ նշանակեց իմ ուշանալը: Թվում էր, թե նա ասում էր.—«ընկեր Հարմարյան, մենք ի նկատի կոմենանք ձեր ուշանալը որպես «նյութ», երբ կամ հարմար մոմենտը...»

Ինձ համար պարզ է, որ նա ինձ ասում է, քանի որ նրան խանգարում եմ... նա ուզում է ինձ «կրծատել», իմ պաշտոնը միացնել իրենին, իսկ հետո այդ առիթով ավելացնել իր ոռձիկը:

Ես, ի՞արկե, աշխատառամ էի ցուց տալ, որ ինձ համար ոչ մի նշանակովթյուն չունի նրա մեծ քնի «արտահայտությունը», բայց պետք է խստովանեմ—այդ ինձ դժվարությամբ էր աջողվում—կյանքում դերասանովթյուն անելն այնքան էլ հեշտ բան չէ...

Ո՞վ կեն, ի՞նչ է քո անունը...—վերջիվերջո կեն...

Հարմարյանի ափորիզմներից

Օգոստոսի 10.

Մի շաբաթ է չեմ գրել...

Այնքան փոթորկալից էին անցած օրերը, որ Հարմարյանից ուժեղ մարդիկ էլ կկորցնեին հավասարակշռությունը։ Այժմ, հանդարտվելուց հետո, նորից ձեռք եմ առնում գրիչ։

...Այդ օրը մեր հիմնարկում սպարական օր էր, և ոչ մի նշան չէր ցուց տալիս, թե Հարմարյանի գլխին դժբախտություն է իշնելու։

Ժամը մոտ երկուսին հանկարծ ստանում եմ մի նամակ՝ կապույտ ծրարի մեջ՝ կանացի ձեռքով հասցեագրած։

Ծրարը բացելով, նկատեցի, որ անանուն նամակ է... ու նկացի սիրոս լքլալով կարդալ։

— «Ընկեր Հարմարյան,—գրում էր «անհայտը»,—մինչդեռ դուք այրվում եք քաղաքի շոգից, քայլում եք փոշոտ փողոցներով ու քաղցր երազներ տեսնում ձեր պաշտած Մարգոյի մասին, նա այստեղ երջանիկ ժամեր է անցկացնում իր «հոգու հատորի» հետ, ամառանոցի հովի, թարմ կանաչների ու բուրավետ ծաղիկների մեջ...»

«Նա» գալիս է ամեն օր և Մարգոյին մենակ է գտնում (երեխային ուղարկում են հարևանուհու մոտ), իսկ այնուհետեւ... իմ գրիչն անզոր է նկարագրելու, թե ի՞նչ երանավետ ժամեր են անցկացնում միասին...»

«Նամակս թողնում եմ անստորագիր... (ի՞նչ կարիք կախառնվելու ուրիշի ընտանեկան գործերում...)»:

...Այս բոպեիս էլ, երբ արդեն մի շաբաթ է անցել, հուզմունքից գրիչս դուրս է ընկնում ձեռիցս... իսկ այն օրը այնպես շշմեցի, կարծես սենյակի առաստաղը փուլ եկալ գուշիս: Թվում էր, թե ընդմիշտ հրաժեշտ կտամ կյանքիս, բայց այդպես չեղավ (ըստ երևութին, մարմնիս մեջ բավական հակաթույն է եղել այդպիսի կատաստրոֆիկ գրություններին դիմադրելու համար):

Երկար նստած էի անշարժ, արձանի պես ու նայում էի առջևս թափալած թղթերին, ոչինչ չնկատելով: Ներսս ալեկոծվում էր՝ խելագար տեսդուք ըսնկված, ու մի ձայն կանչում էր ականջիս—վե՛րջը, վե՛րջն է գալիս քո երջանկության, քո ընտանեկան հարմոնիային... գուցե և կյանքին...

«...Ի՞նչ... Մարդոն ինձ դավաճանո՞ւմ է... ասում էի ինքս ինձ... ուրիշին է սիրում... Զէ, սա աշխարհի վերջն է... Մարդո, դու խորտակեցիր իմ կյանքը... վրե՛ժ, սոսկաւ մի՛ վրեժ...»

...Սպասեցի մինչև պարապմունքների վերջը ու ներս մտա կառավարչի առանձնատեսնյակը: Կարծես երազի մեջ էի. խոսելիս ձայնս այնպես տարօրինակ էր հնչում, ականջներս ծակում, ասես իմ ձայնը չէր, այլ մի ուրիշ, օտար մարդու...

Ասածիս միտքն այն էր, որ կինս ու երեխաս հիվանդ են, նրանց պահող չկա, անհրաժեշտ է գնալ ամառանոց գոնե կբեք օրով:

Կառավարիչը համաձայնվեց: Ապա նայելով ընկճված կեմքիս, ասաց.

— Ոչինչ, ընկեր Հարմարյան, շատ մի՛ք մտածիլ. Հիվանդություն է, կփա էլ, կանցնի էլ...

Անմիջապես գնացի տուն, վերցրի պայուսակս ու ճանապարհ ընկա երկաթուղով:

Վագոն նստելով, կարծում էի, թե փոքր ինչ կցրվեմ, բայց ընդհակառակը՝ ջղերս սկսեցին սատանի պար... թվում

էր, թե շարունակ ընկնում էի ակների տակ, ապա նորից դուրս գալիս, նորից գլորվում...

Մոտո նստած մարդիկ իրար հետ զրուցում էին, սրախոսում, իսկ ևս երեսիայությանս մեջ արյունաբռու վագր էի զարձել. շարունակ մտածում էի սպանության մասին: Մեկ սպատիերացնում էի, թե ինչպես զնում եմ ամառանոց, ներս եմ մտնում... և տեսնում «նրանց» միասին, ու երկուսին էլ տեղնուտեղը սպանում... կամ սպանում եմ սիրեկանին, իսկ Մարգարին թողնում, որ կոկծա ինձ նման...

«Գուցե և այսպես կլինի»—մտածում էի,—իշնում եմ ամառանոցում, ոչ մի նշանով չեմ ցուց տալիս, որ մի բան գիտեմ, բայց գաղտուկ առաջ եմ տանում իմ հետախուզումը, պատելով Մարգովին աներևույթ ցանցով: Վերջապես մի օր բացում եմ գաղտնիքը... Մարգոն զգալով, որ ցանցի մեջ է, հուսահատորեն ընկնում է գետին, արցունքներով աղերսում, ոչ ներեմ: Բայց ևս անողոք ինկվիզիտորի սառնասրտություն եմ պահպանում—ո՛չ գութ, ո՛չ զիջում չեմ ցուցադրում դեմքիս, միայն մտածում եմ իմ «գլուխցին» վրեժի մասին...

Մինչև գիշերվա կեսը այսպիսի սարսափելի տեսարանների մեջ շուր ու մոտ գալով, վերջապես քննցի ու ընկա ավելի սոսկալի արյունալի երազների մեջ.—սուրբ ձեռիս անցնում էի անթիվ «գլուխցի» միշից ու մի սպանությունը հաղիկ վերջացրած, մյուսին էի դիմում, թողնելով հետեւցո դիակների շարքեր...

* * *

Առավոտը զարթնեցի նախավերջին կայարանում, հոգենած ու շարդված, ասես ամբողջ գիշերը ծանր քարեր էի կրել: Տեղ հասնելով, դուրս եկա կայարան: Սառը, խոնավ օդից ուշքի գալով, կառք նստեցի ու նոր միայն հիշեցի, որ ատրճանակ չունեմ...

«Սպանել ես ուզում և գենք չունեմ... մտածում էի ես, երբ կառքն անցնում էր ամառանոցի երկար փողոցով.—դա միանդամայն ծիծաղելի է...»

Երբ կառքը կանդ առավ և ես իշա ներքեւ, Հանկարծ մի սարսուլ ինձ կծկեց.—«իսկ եթե ներս մտնեմ ու տեսնեմ Մարգարին նրա հետ...»—անցավ մտքովս:

Մի քանի վայրկյան ես չգիտեի ի՞նչ անեմ... նույնիսկ մի անհեթեթ միտք ծագեց.—անմիջապես նստել կառք ու գնալ կայարան՝ հետեւյալ գնացքով վերադառնալ քաղաք...

Կառապանի ձայնից սթափվեցի. նա հանձնեց ինձ պայտակաս: Փողը վճարեցի և դարձյալ մնացի տառանումների մեջ.—գնա՞մ, թե զգնամ:

Նորից հիշեցի, որ ատրճանակ չունեմ ու հեգնանքով ասացի մտքում—«խոստովանի՛ր, Հարմարյան, որ դու ըստեղծված չես տրագիկական մոմենտներ լուծելու համար»...:

Վերջապես նկատելով, որ դիմացի ամառանոցից երկու օրիորդներ դիտում են ինձ, ես անհարմար զգացի կանոնելուց և ներս մոտ մեր ամառանոցի պարտեզը:

Հազիվ մի քանի քայլ էի արել—հանկարծ աշքերիս երեւաց Մարգոն՝ Սեղիկին գրկած... Կարծես մի հոկայական բեռ իշավ ուսերիցս. ուրախացա, որ կարող եմ առալժմ շմտածել սպանության մասին...

Իսկ երբ Մարգոն մոտեցավ ինձ, մի տարօրինակ հիասթափություն եկավ վրաս.—ես երեակացում էի, թե նա կկանգնի առաջս մի առանձին, «դիվային» դեմքով, «սև գաղտնիքից» այրվող աշքերով... Բայց զրա տեղ իմ առաջ երևաց սովորական ընտանեկան Մարգոն, ամոթիսած գեմքով, նույնիսկ մի տեսակ խեղճացած, ինչպես լինում են սովորաբար երկար ժամանակ ամուսիններից զատկած կանաց:

Ես համբուրեցի Մարգոյին, գրկեցի երեք տարեկան Սեղիկիս համբույրներով շշմեցնելով նրան, ու զգացի, որ մի վայրկյանում իմ սպանության դիտավորությունը թոշնեց աշնան տերեների նման:

«Գուցե թյուրիմացություն է...» անցավ մտքովս.—«մի թեթև համակրանք, ընկերական վերաբերմունք կարող էիր

սիրու տնեղ ընդունել... կամ գուցե մի ինտրիգ է «թշնամուք կողմից՝ մեղ իրարից բաժանելու նպատակով...»:

Այսպես մտածում էի, գուրգուրելով երեխայիս ու ցըրված ուշադրությամբ լսելով Մարգոյին, որն աշխույժ ջաղակրատում էր այնպիսի անմեղ ու միամիտ տոնով, որ չէր կարելի կասկածել, թե նրա մեջ կա որևէ կեղծիք կամ դավաճանություն:

— Եղ ինչպե՞ս կարողացար գալ, Գուրգեն, մի՞թե արձակուրդ ես ստացել, — Հարցրեց Մարգոն քնքշորեն:

— Չէ, Էնպես, կարգից դուրս եմ եկել, — երեք օրով արձակուրդ եմ վերցրել, շատ էի կարուտել Սեղիկիս...

— Իսկ ինձ չէ՞...

— Քեզ էլ, ի՞նարկի:

— Գիտե՞ս, Գուրգեն, Սեղիկը շատ է ամիրում առանց քեզ, շարունակ քո անոնն է տալիս:

«Եթե իսկապես հանցավոր է», — մտածեցի ես, — «ապա լավ տակտիկ է բանեցնում, — երեխային է մեջ գցում, որպեսզի փափկացնի ինձ...»:

— Ուրիշ ի՞նչ կա քաղաքում, շոգ է՞... ո՞նց են մերոնք... վրա էր տալիս Մարգոն, երբ մենք արդեն առնե էինք:

— Աներեակայելի շոգ է, — ասացի, չփառեմ ինչու շամբանցնելով շոգի աստիճանը:

— Գիտես, Գուրգեն, շատ դժվար է առանց քեզ... Մյուս տարի ինչ էլ լինի՝ առանց քեզ ոչ մի տեղ չեմ գնալ: Հիմա էլ, ճիշտն ասած՝ երեխայի պատճառով եմ էստեղ, թե չէ մի րոպե չեի մնալ...

«Սա էլ հավատարմության հավաստիքներ են...» մտածում էի ես. «ի՞նչպես է շեշտում «առանց քեզ»-ը... Եթե ծրագրված է տանում գործը, ապա պետք է ասել, շատ հաջող է...»

— Հետո, Գուրգեն, մի ուրիշ բան էլ կա... Կոկետութեն, խոռված երեխայի նման ասաց Մարգոն, իր գեղեցիկ, սև աշքերը պտտացնելով. (օ՛, այդ աշքերի առաջ ես հանձնեցի

համարյա բոլոր դիրքերս) — շարունակ անհանգիստ եմ. ասե՞մ... ինչո՞ւ... մտածում եմ... թե իմ Գուրգենն ուրիշ կանաց հետ է ման գալիս, նրանց է սիրում...

Ու երկու ձեռներով բռնելով պղովս, Մարգոն խորը նայեց աշքերիս...

— Ասա, Գուրգեն, իսկի ուրիշներին չե՞ս սիրել...

— Ի՞նչ ես ասում, Մարգո... մի՞թե ես ինձ թույլ կըտամ...

— Այժմյան տղամարդիկ ուրիշ տեսակ են... գուցե գուէ նրանցից վարակվել ես...

— Իսկ կանա՞լք... մի՞թե նրանք սկակաս են:

— Հա, իհարկե, այդպիսի կանալք էլ կան, բայց նրանք դժիգ դուռս են...

Ու կամենալով խոսքը փոխել, շտապով վրա բերեց.

— Չէ՛, Գուրգեն, ես քո աշքերից տեսնում եմ, որ դու ինձ սիրում ես, ուրիշ տղամարդկանց նման չես:

Ասաց ու համբուրեց շրթունքներս այնպիսի գուրգուրանքով, որ շատերը կհամարեին այդ տեսարանը մեր ընտանեկան երջանկության գագաթնակետը:

Ես շարունակում էի իմ «ներքին» մտքերի թելը — «ինքը նախահարձակ եղավ, որպեսզի կասկածներս թուլացնի». — ասում էի ինքս ինձ. «իսկ աշքերիս խորը նայեց հետախուզելու նպատակով՝ արդյոք լուրջ կասկածներ շունե՞մ իր դեմ... սա էլ լավ տակտիկ է...»

— Բայց ինչո՞ւ, Գուրգեն, այդպիս գումար ես, աշքերդ դեղնած... ու մի տեսակ ցրված ես...

— Ոչի՞նչ. հոգնած եմ... Գիշերս չեմ քնել, վագոնում տեղ չկար...

— Ախ, ես մոռացա, որ նախաճաշիկ պիտի տամ Սեդիշիս... — հանկարծ խոսքը կտրեց Մարգոն ու երեխային ինձ հանձնելով, սկսեց զբաղվել նախաճաշի պատրաստոթյամբ:

Նոր էր Մարդոն կաթը գրել կրակի վրա, երբ ներս մտավ
ուսանող Գարիկը, ամառային՝ խորը զնկոլտեով բլուզ հա-
գած:

— Բարե ձեղ, — ասաց նա, շփոթվելով, ըստ երևութին՝
հանկարծակի գալով ինձ տեսնելուց:

Մարդոն իսկույն մոտեցավ նրան:

— Բարե, ընկեր Գարիկ, — ասաց նա կեղծ-քաղաքավաճ-
քի տոնով. — Երեսի եկել եք նամակ ուղարկելու Գուրգենի ձեռ-
քով հա՞...

— Այո, նամակ ուղարկելու ե՞րբ եք գնում, — դիմեց նա
ինձ:

— Երկու օրից հետո, — պատասխանեցի սառը, պաշտո-
նական տոնով:

«Երես սա է Մարդոյի սիրելին», — մտածեցի ու մի ակըն-
թարթում կատկածի ալիքները ներս խուժեցին մեջս: Երեխա-
ցին ցած դրի ու աշքի տակով դիտում էի Գարիկին: Նա մեր
ծանոթն էր, բայց երբեք կատկածի առիթ չէր տվել: Իսկ այ-
ժըմ... ո՞վ գիտե... ամառանոցում, գեղեցիկ բնության մեջ...
միայնակ... երկուսով... Օ՛, դժոխք...

— Ի՞նչպես է ձեր մայրիկը, — հարցրեց Մարդոն, աշ-
խատելով «լուծել» լարված գրությունը:

— Լավ է, — պատասխանեց Գարիկը կարմրած ու շփոթ-
ված աշակերտի նման:

— Նստեք, ընկ. Գարիկ:

— Ոչ, շտապում եմ, գործ ունեմ... ուրեմն՝ ընկեր Գուր-
գեն, վաղը կբերեմ նամակը. ցտեսություն:

— Ցը' :

... Գուցե և կապ կա սրանց մեջ, — ասում էի ինքս ինձ,
բայց ի՞նչ կարող եմ անել... արդեն ուշ է — այժմ հեշտու-
թյամբ կարող են ծածկել ամեն ինչ, նույնիսկ կիսնդան վրաս՝
իմ գնալուց հետո... Զէ՛, Հարմարյան, քո բանը չի կնոջդ սի-
րեկանին բռնելը — եթե ուզում էիր մի լուրջ գործ տեսնել՝

պիտի որոշ ծրագրով շարժվեիր, «սուրատեպիացի» և «տակ-
տիկի» մասին մտածեիր...

— Սրանք էլ ժամանակ են գտել նամակ հանձնելու, —
ասաց Մարգոն, շատ դժգութ տոնով. — կարծես չեն կարող
փոստով ուղարկել... Գարիկի մայրիկին հարգում եմ, թե չէ
կոսիտ պատասխանով ետ կդարձնեի:

Ես ոչինչ չարատասխանեցի, և աշխատում էի ցույց տալ,
թե երեխայով եմ զբաղված, բայց գաղտագովի դիտում էլ
Մարգոյին: Շարժումներից երեսմ էր, որ զղայնացած է, —
ամաններն իրար վրա էր ձգում անտեղի աղմուկով ու մի
գործ մյուսի հետ խառնում: Շուտ-շուտ երեսն իմ կողմն էր
անում, իբր երեխային նայելու համար, բայց ավելի զբաղ-
ված էր ինձ դիտելով:

Երկուսս էլ մտազբաղ էինք, երկուսս էլ տանջվում
էինք — ես այն հարցից՝ թե կա՞ արդյոք կապ Մարգոյի և
Գարիկի մեջ... իսկ Մարգոն — ինձ թվում էր՝ մտածում էր —
«զիտե՞մ արդյոք «այն բանը», թե չէ...»

Մի հանգամանք որոշ շափով հանգստացնում էր ինձ —
Գարիկն ինձ թվաց անհետաքրքիր, շաբլոն դեմքով... Միակ
բանը, որի վրա դուցե կարելի լիներ ուշադրություն դարձ-
նել — դա նրա դանգուր մազերն էին:

Երեխային կերպերելիս Մարգոն հայացըն ինձանից չեր
հեռացնում:

— Գուրգեն, ինչո՞ւ ես տիտոր. դուցե մի բան է պատա-
ճել, ինձանից թաքցնում ես...

— Զէ՛, ոչինչ չի պատաճել... Միայն հոգնած եմ... Գի-
շերս շեմ քնել...

— Ես դիտեմ, Գուրգեն, երբ հոգնած ես լինում, այդ-
պես չես փոխվում... չէ՛, ես նկատում եմ, մեզդ ինչ-որ բան
կա... ասա՛, մի ծածկիր, թե ինձ սիրում ես...

— Ասում եմ, ոչինչ չկա:

Զգում էի, որ Մարգոն գլխի է ընկնում իմ կասկածների
վերաբերմամբ և իր կանացի համառությամբ ուզում էր

դուրս քաշել գաղտնիքս: Երբ նա նորից թափանձեց, ես տէ-
զի տվի:

— Ի՞նչ ասեմ, Մարգո, գիտես էլի՞... երբեմն լինում են
այնպիսի զրություններ... Հիմնարկության մեջ հաճախ ծա-
դում են ինտրիգներ...

Մարգոն վեր թռավ տեղից:

— Զինի՞ թե կրծատել են քեզ:

— Չէ՛, այդպիս բան չկա:

— Է՛՞, ուշադրություն մի դարձնիլ... ինտրիգներ միշտ
կլինեն...

Մարգոն այժմ ավելի հանդիսաւ. էր երևում—գուցե նա
բոպեապես հավատաց, որ «գործը» իրեն չի վերաբերվում...
կամ գուցե նրան հանգստացնում էր այն, որ ես այդպես
հեշտությամբ սկսեցի տեղի տալ և ծայրը բացել; — մի փոքր
սատուհան բանալով դեպի իմ ներսը, նա հավատացած էր,
որ շուտով մնացածն էլ կբացի: Հետո նա պիտի նկատեր, որ
ես այնքան էլ բարկացած չեմ, որ անկարելի լիներ հաշտվե-
լը...

— Հիմա մեր մասին մտածենք,—ասաց Մարգոն ժըպ-
տալով, — շուտով նախաճաշը պատրաստ կլինի:

Նախաճաշը եկավ ու ես մեծ ախորժակով կերա: Ինքս էլ
դարձանում էի, թե ինչպես «այդ գրության մեջ» ցուցադրում
էմ այդպիսի ախորժակ, բայց դա փաստ էր և Մարգոյին էլ
շատ հաճելի՝ նա իր կողմից նպաստում էր իմ «հիմնավոր»
ուսելուն:

Երբ մի աշխարհաշոշակ մարդու հարցրել էին, թե ի՞նչ-
պես է նա կարող եմ ասել—ամեն պարագայում լավ ուտում
էմ և դա ինձ փրկում է...

— Ամեն պարագայում, ինչ էլ լիներ, ես շատ լավ
քնում էի և դա ինձ փրկում էր...

Ես էլ կարող եմ ասել—ամեն պարագայում լավ ուտում
էմ և դա ինձ փրկում է...

Ուտելու վրա տրամադրությունս էլ բարձրացավ, նույ-
նիսկ սկսեցի սրախոսել, ծիծաղել:

Մարգոն, տեսնելով, որ մոաց ամպերը քաշվեցին ճակատիցս, և սովորական ընտանեկան հունի մեջ ընկա, ինքն էլ թե առավ և սկսեց առջևս փոքր իր ամբողջ հմայքի փունչը.—զլուխը քնքշորեն թեքում էր, աշքերը կոկետորեն ինձ դարձնում, գաղտնի ցանկություններ ներշնչում, անտես թեւերով ինձ պատում... Երեխային խաղացնում էր,—բարձրացնում, համբուրում, հետո ինձ տալիս, որ ես էլ համբուրիմ:

Ես աննկատելի կերպով անձնատուր եղա ընտանեկան իդիլիային...

Երեկոյան թեյից հետո ես ու Մարգոն միասին քնացրինք Սեղիկին: Նորից աշքիս առաջ էին Սեղիկի «Յաթիկներն» ու «տոտիկները», նորից լսում էի նրա մանկական թոթովանքը, շնչում նրա մարմնի կաթնահոտ բուրմունքը: Երեխային քնեցնելուց հետո Մարգոն թիկնեց մահճակալին մի առանձին գեղեցիկ պողայով:

Նա իր նազուկ մարմնով, կրակոտ աշքերով ու տենչող շրթունքներով այնպիսի հրապույր էր ստեղծում, որ ինքն էնձ կորցնում էի, հալվում նրա առաջ:

Եվ ամբողջ էությամբ անձնատուր կլինեի Մարգոյի սիրում, եթե այդ բռպեին հանկարծ չհիշեի Գարիկին. «ո՞վ գիտե, —անցավ մտքովս, —գուցե Մարգոն այս նույն պողայով հրապուրում է Գարիկին, և նա համբուրներ է քաղում այդ վառ շրթունքներից... օ՛ հրեշավոր ենթադրություն...»

Սկսեցի քայլել սենյակում: Մի կողմից ինձ ալեկոծում էր «Հրեշավոր միտքը», մյուս կողմից գրավում, քաշում էր Մարգոն իր հրապույրներով: Ես ասում էի մտքում—«տես, Հարմարյան, շմոռանաս, ինչի համար ես եկել... Իմացի՛ր, որ Մարգոն կաշխատի իր հմայքներով քեզ պատել... դու պիտի ամուր կենաս, շինթարկվես, շանձնես զենքերդ...»

Սակայն հեշտ է ասել.—Մարգոյի ձգողական ուժն այնքան մեծ էր, որ զողդողում էի... Այդ բռպեին մեջս հալվեց, չքացավ Հարմարյանի կամքը. զգում էի միայն, որ մի ուժ տանում է ինձ դեպի երջանկություն... Ինքնամոռացության

մեջ ես մոտեցա Մարգովին... ու ինքս էլ չիմացա, թե ինչպես ընկա նրա զիրկն ու հպլեցի շրթունքներին... և այդ մոմենտին արցունքները հորդառատ սկսեցին թափվել աշքերիցն:

Ո՞վ Հարմարյան, ո՞րքան սանտիմենտալ ես եղել դու, ո՞րտեղ մնաց քո «ստրատեգիան», քո վրեժը...

Երբ Մարգոն նկատեց, որ արտասվում եմ, վեր թռավ ու նայեց աշքերիս.

— Գուրգեն, լա՞յ ես լինում... ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես թաքցնում ինձանից...

Նա վախեցած նայում էր ինձ, իսկ ես ավելի էի ուժեղացնում լաց: (Այս բապեիս, զրելու ժամանակ մտածում եմ՝ գուցե Մարգոն ոչ թե վախենում էր, այլ ուրախանում, ասելով մտքում—«սա լավ նշան է—անձրի է դախիս, ուրեմն շուտով հաշտովյան ծիսածան կկապվի»):

— Գուրգեն, ի՞նչ է պատահել... Մի՞թե ես քո Մարգոն շեմ, ասա, մի տանջիր ինձ...

Երբ նա մի քանի անգամ այգպես թախանձեց, ես լուս հանեցի ծոցիս կապույտ նամակը և ձեռքիս դանդաղ շարժումով ձգեցի նրան:

— Սա ի՞նչ է,—ասաց նա ձայնը խզված ու արագությամբ վեր թռչելով տեղից, մոտեցավ լամպին:

Մատները գողգողալով, դեմքն այլալլված, նա բացեց ծրարն ու շունչը պահած սկսեց կարդալ ագաճությամբ:

Վերջացնելով, նա մի կողմ շպրտեց:

— Ի՞նչ լրություն... ասաց ու նվազած ընկալվ աթոռին, ձեռքը ճակատին դնելով: Ապա շղաձկորեն բռունցքները սեղմելով, շարունակեց.

— Օձե՞ր, կարիճնե՞ր... ի՞նչ կեզառ միջոցների են զիմում մեր ընտանեկան երջանկությունը խորտակելու համար...

Ապա սկսեց հեկեկալ այնպես ուժգին, որ ես ամեն ինչ մոռացած, վեր թռա տեղից:

— Իմ անարատ անունը ցեխի մեջ են ձկում...—ասում

Էր նա հեկեկալով,—իմ անբիծ սերը ապականում... և դո՛ւ,
Գուրգեն, Հավատո՞ւմ ես. այո՛, դու հենց այս նամակի
պատճառով ես եկել...: ստուգելու Մարդոյին... Օ՛, ես այլիս
մոտիկ մարդ չունեմ...

Մարդոն շարունակում էր հեկեկալ, իսկ ես, գլուխս
կորցրած, կանգնել էի նրա առաջ ու շգիտեի ի՞նչ անեմ:

Հանկարծ նա թեք ընկալվ աթոռին ու շնչասպառ առաց.

— Օ՛, ես չեմ կարող դիմանալ... ես կմեռնեմ...

Սկսվեց այնպիսի հիսուներիկային դրություն, որ ես
կատարելապես պանիկացի մեջ ընկա: Ես չոքեցի նրա առաջն
ու դրիած մեծ ճիգ էի գործ դնում ուշքի բերելու համար:

— Մարդո, Հանգստացիր,—ասում էի քնրուց աղեր-
անքով,—ես քեզ սիրում եմ... պաշտում եմ... չեմ կամկա-
ծել երեք... իսկ նամակը ցույց տվի, որովհետև քեզանից
չեմ թաքցնում ոչինչ...

Այսպես երկար աշխատում էի ուշքի բերել Մարդոյին,
փաղաքում էի, շոյում մաղերը, Համբուրում ձեռքերը, բայց
Մարդոն շարունակում էր հեկեկալ:

Ես բոլորովին փափկել, «կաթուկ» էի դարձել ու դառ-
նորեն փոշմանում էի, որ ցույց տվի շարաբաստիկ նամակը:

— Ների՛ր, Մարդո, ների՛ր,—շարունակում էի ես,—նե-
րիր քո Գուրգենին. Ես չեմ ենթադրում, թե քեզ վրա այդպես
կազդի... Աղաշում եմ Հանդարտովիր... ես քեզ առաջընթաց
շատ եմ սիրում...

(Ո՞վ Հարմարչան, խոսովանի՛ր, դու այդ կետին էլ
Հասար, որ փոխանակ սպանելու Մարդոյին, ներողովիտյուն
էիր Հայոցում նրանից):

Մարդոն ոչինչ չեր պատասխանում, բայց նկատում էի,
որ իմ «ներիր»-ների ազդեցության տակ հետզհետե հանգըս-
տանում է: Կարծում էի, հենց այդպես նվազած կքնի, բայց
Հանկարծ գլուխը բարձրացրեց ու տրագիկ հայացքով նաշե-
ջով ինձ, ասաց.

— Գուրգեն... ասա՛... հավատո՞ւմ ես այդ նամակին...

— Ո՛չ, ո՛չ, երբե՛ք... դա մի կեղառու զրաբարտություն է...

— Օ՛, եթե իմանամ, որ գեթ մի բոպե դու կարող ես հայատալ, ես ինձ կսպանեմ...

Նորից սկսեցի հանգստացնել, համբույրներով ծածկելով դեմքը: Սկզբում Մարգոն լույլ կերպով դիմադրում էր, իսկ հետո ինքն էլ սկսեց համբուրել... և շատ շանցած—մենք ընկանք այնպիսի բուռն սիրային տենդի մեջ, ասես նոր էինք սիրահարվել...

Այդ երջանիկ բովի մեջ ես հալվեցի, մոռացա ամեն ինչ ու եթե այդ մոմենտին մեկն հիշեցներ, թե եկել եմ «դավաձան» Մարգոյին սպանելու, անշուշտ ես շատ կզարմանայի...

...Սակայն այժմ, երբ անցել են օրեր, հարց եմ տավիս— ո՞վ կարող է հասկանալ կնոջ «հանգնըր»... ո՞վ կարող է առեղի ծայրով բաժանել իրարից կնոջ կեղծն ու անկեղծը: Ես, Հարմարյանս, անզոր եմ այդ հարցում... Ա՛խ, Մարգո, դու կին ես... դու միաժամանակ իմ երջանկության ու տանշանքի աղբյուրն ես...

Երկու օր անցկացրի ամբողջովին տարված սիրո քընքը՝ շանքով: Ես ընկել էի այնպիսի անուշ՝ հովվերդության մեջ, սրի նկարագրությունն իմ գըշի ուժերից վեր է:

Այն դժբախտ կապույտ նամակի կոշմարը մենք վճռեցինք ընդմիշտ մոռացության տալ, այլևս նորա մասին շխուել:

Ամեն ինչ լավ կընթանար, և «հարմոնիան» ընդմիշտ կթևալորեր ինձ, եթե երկրորդ օրը, երեկոյան մեզ շահնդիպեր Գարփիկը:

Նա մոտեցավ մեզ, երբ վերաբանում էինք զբոսանքից:

Նրան տեսնելուն պես վերքս նորոգվեց. կասկածները նորից շարժվեցին մեջս: Բայց ի մի հավաքելով Հարմարյանի սառնասրտությունը, կարողացա ինձ պահել հանդիսաւ: Մենք միասին դնացինք տուն ու թեյի ժամանակ շաբումա-

կեցինք մեր զբույցը զանազան հարցերի շուրջը: Իմիշի այլոց Գարիկը պատմեց իր մի ծանոթի մասին, որի կնոջ հետապնդելիս է եղել իր ընկերը. երբ վերջինս նկատողությունն է ստացել այդ առթիվ, նա պատասխանել է.

— Ի՞նչ, դու քո կնոջը սեփականությունդ ես համարում...

Առիթից օգտվելով, Գարիկն սկսեց մեծ ապլոմքով, մազերը թափահարելով խոսել կնոջ պատագրման մասին:

— Կինը պիտի անպայման ազատ լինի... Նրա առաջ չակետք է լինի ոչ մի խոչընդոտ, ոչ ծնողների, ոչ ամուսնու կողմից...

Ես առարկեցի.

— Դա շատ անորոշ է. անպայման ազատությունն անհասկանալի է... կան անխոստավելի պարտականություններ, որ դնում են կնոջ վրա բնությունը և ընտանիքը...

Գարիկն իմ խոսքերի վրա ալելի թե առավ ու մի ամբողջ դասախոսություն թափեց գլխիս՝ կնոջ պատության մասին, կրկնելով այն, ինչ լսել ու կարդացել էր:

— Դա ապագան է,—ասացի,—իսկ մենք խոսում ենք ներկայի մասին...

— Ի՞նչպես թե ապագա է. դուք ընդունո՞ւմ եք սոցիալիզմը, —Հարցը նա շեշտակի.

— Ես ընդունում եմ սոցիալիզմը...—ասացի ես և ուզեցի պարզել մտքերս, բայց նա խոսքս կտրեց:

— Դա ի՞նչ կրոնական վերաբերմունք է. դուք սոցիալիզմը դարձրել եք հանդերձալ կյանք, ինչպես քրիստոնեությունն էր անում... Զեր ուղղումները տանում են կանանց գեղի բուրժուական հասարակակարգը, երբ կինը տղամարդու սեփականությունն էր համարվում...

Կարծես գլխիս փայտով խփեցին: Սկսեցի առարկել, թե ինձ սխալ է հասկացել, բայց տպավորությունն այն էր, որ Հաղթողը Գարիկն է, նա' է կանգնած նոր տեսակետի վրա...

Մարդուն զդույց քաղաքականությունն էր վարում. —նա չէր մասնակցում վեճին: Ես երկու անդամ նկատեցի, որ նա

դաղտագողի ժպիտ նետեց Գարիկին ու իսկույն դեմքը դարձ-
րեց իմ կողմը, ժպիտը վորխելով «աղաշտոնական-ամուսնա-
կանի»:

Երբ Մարգոն նկատեց, որ վեճը երկարում է, նա միջա-
մտեց.

— Իմ կարծիքով շարժե այդ հարցի շուրջը երկար խո-
սել, մանավանդ, որ ես նկատել եմ տղամարդիկ լուրջ շեն-
իսոսում կանանց մասին. ուստի՝ իբրև կին, առաջարկում եմ
այդ հարցն օրակարգից հանել...

Բոպեապես տիրեց լուրջում, որից օգտվելով, Մարգոն
փոխեց խոսակցությունը:

— Ընկեր Գարիկ, ինչո՞ւ ձեր քույրը վի երեսմ:

— Նա այժմ զբաղված է. արդեն ստացել է իր գրքերը
և պատրաստվում է քննության...

— Իսկ ձեր եղբոր—Վաղիկի ոտքը լավացա՞վ:

— Այո՛, բանից դուրս եկավ, որ բժիշկը չէր հասկա-
ցել...

Երկի զգալով Մարգոյի գործելակերպից, որ իր ելույթն
անտեղի էր, Գարիկը վեր կացավ և հրաժեշտ տալով, ոչ մի
խոսք շասաց իր ուղարկելիք նամակի մասին:

Գարիկի գնալուց հետո երկար ժամանակ արամապեռ-
թյունս ետ չէր գալիս: Երեկոն համարում էի թունավորված,
մեր ընտանեկան հարմոնիան խանգարված... Նորից երկինքը
մթնեց աշքերիս ու կասկածների նման ծակծկում
կին մարմինս:

«Այո՛, Մարգոն նրան սիրում է.—մրմնջում էի ես,—նրա
թաքուն սիրաժակիտ հայացքներն այդ էին ասում...»

Հետո՝ մի ուրիշ «կետ» էլ էր ինձ ալրում.—Հոգու խորը
ծալքերում ես դգում էի, որ Գարիկը ծիշտ էր ասում—ինձ
կարծես սիրելի է հին տեսակետը... Ամեն անգամ, երբ լսում
եմ կանանց աղատագրման մասին, թվում է, թե Մարգոյին
պիտի խլեն ինձանից, ու սկսում եմ մտածել մի ամուր, ան-
բաժանելի կապ ստեղծելու մասին: Ներկա դրությունը, երբ
կինը աղատ կերպով կարող է բաժանմել ամուսնուց, վախեց-

Հոռամ է ինձ՝ որպես սպառնալիք իմ ստեղծած հարմոնիայի դեմ:

...Այս ձախորդ տրամադրության մեջ ես Գարիկի գնալոց հետ սկսեցի հարձակվել նրա «անհեթեթ» հայացքների վրա: (Այսպես է միշտ Հարմարյանը—նա հարձակվում է իր ռայանի վրա, երբ վերջինս բացակայում է...):

Մարգոն այժմ բացարձակ ինձ էր պաշտպանում:

— Գուրգին, զու ուղակի ինձ զարմացնում ես... Զէ՞սր Գարիկը մի անփորձ տղա է և գաղափար չունի ընտանեկան կյանքի մասին... Սրբե՞ արդյոք ուշադրություն գարձնել նրա միամիտ գատառությունների վրա: Թո՞ղ այդ վիլի՞՛սովայությունը, արի մեր Սեղիկին քննցնենք... սա է մեր տրախությունը... Էս հյուրերը ուղղակի ցավ են՝ միշտ խանգարում են մեր երջանկությունը:

Մարգոցի բերանում այնպիս լավ հնչեց այդ «Երջանկությունը», որ ամեն ինչ մոռացա. նորից հեռացան ամպերն ու ընկա ընտանեկան իդլիայի մթնոլորտը: Սեղիկին քննցնեցաց հետո Մարգոն էքսպրոմտով ընթրիք պատրաստեց, որը կերանք իրար անընդհատ հյուրասիրելով, ապա սկսեցինք սիրտ-սրտի զրուցել: Իսկ այնուհետեւ—կուզեի բանաստեղծական ոճով գրել—«Երջանկության թերեով մենք սավառնեցինք դեպի երազների աշխարհը»...

Առավոտը վեր կացա թարմացած, երջանիկ տրամադրության մեջ: Ինձ թվում էր, թե այսուհետեւ մշտապես հաստատվել է վաղոց երազած «հարմոնիան» ու այլև ոչ մի ամպ չի կարող մթագնել իմ երկինքը...

Նախաճաշելոց հետո պատրաստվում էի կայարան պնակու, երբ եկավ Գարիկը, հետո բերելով նամակը:

Ես նրան ընդունեցի բարեկամաբար ձեռքը սեղմելով ու ոչ մի թշնամանք չեի զգում նրա դեմ: Բոլորս միասին դուրս եկանք փողոց, որտեղ ինձ սպասում էր կառքը: Երկար համ-

բուլըներ տալով Մարդոյին ու Սեղիկին, ևս այնուշետև պինդ սեղմեցի Գարիկի ձեռքը:

Այդ բոպեին դիմացի ամառանոցից լսվեց կանացի բարձրաձայն քրքիչ, որն ավելի ճիշ կարելի էր համարել: Քրքիջը նորից կրկնվեց, ավելի բարձրաձայն, բայց Մարդոն խկույն ուշադրությունս գրավեց իր կողմը: Ես նկատեցի նրա դեմքին մի զսպված կատաղություն, որը նա ամեն կերպ աշխատում էր քողարկել: Հանելով ծոցից «կապույտ» նամակը, նա մեկնեց ինձ, դեմքին շինծու ժպիտ ձևացնելով, ձեռքը կոկեատորեն շարժելով:

— Գուրգեն, վերցրու այս նամակը, քեզ պետք կգա...

Այդ մոմենտին ես մի անմեղ բան համարեցի այդ քայլու, որպես մեր հաշտության և սիրու մի նոր նվաճում, բայց այժմ կարծում եմ, որ Մարդոն այդ արավ դիմացի օրիորդականիքին դաղելու համար՝ իրեւ պատասխան նրանց ծիծաղին: Նա դրանով ասում էր—«այս անոնիմ նամակը երեխ դուք եք գրել, բայց տեսե՞ք—նա իմ ձեռքին է և ես շատ հանգիստ՝ նույնիսկ խնդրականությունը վերադարձնում եմ իմ ամուսնուն, որը ոչ մի ուշադրություն չի դարձնում ձեր խծբանքի վրա և շարունակում է սիրել և պաշտել ինձ...»

Կառքը շարժվեց: Անցնելով ամառանոցի երկար փողոցով, ես վերհիշեցի այն մոայլ տրամադրությունը, որի մեջ զալիս էի քաղաքից ու ինքս ինձ հարց տվի—«Հարմարյան, ի՞նչպես եկար և ինչպես ես գնում... եկար կատաղության սպառնալիքներով՝ Մարդոյին սպանելու մտադրությամբ և գնում ես այնպես խաղաղ, ասես ոշինչ չի պատահել... խոստովանմիր, Հարմարյան, որ դու ստեղծված չես տրագիկական մոմենտները լուծելու...»

Սակայն այդ բոպեին մեջս խոսեց հոգուա «Աներքին ձայնը»—«Հարմարյան լոփ'ը և լոփ'ը... քո կյանքի «Հարմոնիան» հաստատվել է և քեզ մնում է պահպանել և պաշտպանել այնին...

Լոփ'ը...

Քաղաք վերադառնալով, երեք օրից հետո նորից նամակը
ստացա նույն կապույտ ծրարով.—

«Ընկեր Հարմարյան,—գրում էր իմ անանոն թղթակի-
ցը,—մինչև այժմ այն կարծիքին էի, թե երջանկությունը
երկուսով է լինում... որքա՞ն միամիտ եմ եղել... ես շդիտեի,
որ երեքով ավելի լավ է լինում... եռյակ սրտաբուխ զեղում-
ներով...»

Զափաղանց ուրախ եմ այս գլուխի համար, որի պատ-
ճառը դուք եղաք... կաշխատեմ ամեն կերպ հետեւ ձեր եք-
շանիկ օրինակին...»

«Զեր բարեկամ—երեք կետ (. . .)

«Իմ հասցեն—լուսնի վրա՝ հանդած հրաբխի մոտ...»

«Հ. Գ.—Եթե նորից գալու լինեք ամառանոց, կույրի ակ-
նոցներ դրեք ձեր աշքերին.—դա անհրաժեշտ է լիակատար
երջանկության համար...»

Նույնը»

Կարդացի ու նորից ալեկոծվեց սիրոս, նորից առաջո-
քացվեց անդունդը... Զգում էի, որ կապույտ նամակի միջ
բույն կա, այդ պատճառով էլ ստանալով հիմնարկում, իս-
կույն շբացեցի ծրարը, այլ պահեցի մոտս՝ տանը կարդալու
համար:

Քայլում էի սենյակում ու անգոր ցասումի ալիքներ
ուղարկում տարածության մեջ:

«Օ», թույն է, թույն է Մարտոն ամբողջովովին,—ասում էի
ինքս ինձ.—ի՞նչ դիմացին նենդությամբ նա կարողացավ ոչ
միայն հարպիորեն քողարկել գավաճանությունը, այլ և ավելի
սիրելի դառնալ իմ աշքում...»

Ու նորից կանչում էի մոքումս—«սպանե՛լ, սպանե՛լ
Մարդոցին... հետո ինքս ինձ... լե՛րջ տալ ամեն ինչին...»

Բայց քանի քայլում էի, այնքան ավելի, էր ուժեղանում

Հոգուա ներքին ձայնը, որն ասում էր—Հարմարյան, պետք է
ի նկատի առնես, որ կարող ես սխալվել օթելոյի նման և
զրկվել քո Մարդոյից... Ինչո՞ւ սպանել... Զէ՞ որ հենց այդ
են ցանկանում քո թշնամիները՝ նամակ գրողները,—տեսնել
ատրճանակը ձեռքիդ... Ուզում են սպանություն, հոգիլ տե-
սարաններ, քո երջանկությունը կործանելու համար... Ո՛չ
դու չպետք է ընկնես այդ որոգայթի մեջ. մի՞թե վայել է
Հարմարյանին ատրճանակով վճռել հարցը, այս սոցիալիս-
տական դարում... Ինչո՞ւ սպանել, քանի որ կա խաղաղ մի-
ջոց, օրինակ—բաժանվել Մարդոյից...»

Բայց հենց որ պատկերացրի այդ բաժանումը, զգացի
խորապես, որ աչքերս պատվում են սպավոր ամպերով: Ահա
երևակայում էի—Մարդոն, Սեղիկն ինձ հետ չեն... Ես մենակ
եմ, տխուր, որպես մի բու... կործանվում է իմ երջանկու-
թյունը և տխուր խորհրդածում եմ—կարո՞ղ է արդյոք
դժուվել մի նոր Մարդո, որ վերականգնի նորից իմ նոր հար-
մոնիան...

Ո՛չ, ո՛չ, ես չեմ կարող բաժանվել Մարդոյից—ասում էր
ներքին ձայնս:

Այս վճռին հանգելով՝ ես արագացրի քայլերս, և որով-
հետև կես զիշերից շատ էր անց, հարկանս սկսեց թխկթըխ-
կացնել միջանկյալ դուռը, որպես բողոք իմ աղմկալի քայ-
լու դեմ:

«Եթե քո կինն այդպիս լիներ,—ասացի մտքումս,—կը-
տեսնեինք, թե ինչպե՞ս երկու զույգ կոշիկ կմաշեիր քայլե-
ւով...»

Օ՛, երբե՞ք չեմ բաժանվիլ իմ Մարդոյից,—կրկնում էի
ինքս ինձ, երբ անկողնում պառկած երազում էի նրա մա-
սին:

Օգոստոսի 20.

Նորից նստած եմ պատշամբում՝ իմ հին բազկաթոռի
վրա և անբջում եմ...

Սրտիս մեջ խաղաղություն է տիրում... էլ չի տատան-
վում իմ իդիլիան... Մարդոն դարձյալ իմ անբաժան կինն է...

Նստած քաղկաթոռի վրա նորից վերանում եմ մտքով
գեղի այն աշխարհը, ուր վարդագույն երազն է իշխում, ուր
Մարդոն՝ որպես սիրո դիցուհի՝ առաջնորդում է ինձ դեպի
երջանկության տաճարը...

Բայց հենց այդ մոռացության մոմենտին բակում կան-
չում է աքաղաղը, թերը սպառնալից թափ տալիս, նրան
պատասխանում է զիշ կանչով իր ախոյանը՝ հարևան բակից,
և առա սկսվում է աքաղաղների մենամարտը՝ բարձր ցան-
կապատի նեղ արանքից, որից հազիվ են անցնում նրանց
գլուխները:

Նայում եմ աքաղաղներին ու նորից հարց տալիս ինքս
ինձ—կարո՞ղ է ինել ներդաշնակություն—հարմոնիա, երբ
նույնիսկ իրար հետ ոչ մի առնչություն չունեցող արարած-
ները կատաղի կոհիվ են մղում իրար դեմ...

Արդյոք թյուրիմացություն չէ՝ իմ խաղաղությունը,—իմ
փոքրիկ հարմոնիան, որը մի փոքրիկ նավակ է գոռ ալիքների
մեջ... առագաստները պատառումել են փոթորկից, զնկը
ճեղքված է, իսկ ես համառությամբ կառշում եմ նավակին ու
երազում փոթորկի մեջ...

...Բայց այդ հարցին ես շեմ պատասխանում... նորից
անրջում եմ... մի քնքույշ շղարշ է իշնում «Հոգուս պարփ-
նակության» վրա ու պարուրում ինձ հարմոնիայի երազնե-
րով...

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Դանելյանը նոր էր վերադարձել հայրենի քաղաքը երկարաժամկայությունից հետո:

Երեկոյան, երբ նա ներս մտավ սրճաբանը, նրան մոտեցավ բաննվորի արտաքինով մի մարդ:

— Ներողովթյուն, եթե կարելի է... ձեզ հետ ուզում եմ խոսել, — ասաց նա, շփոթվելով:

Դանելյանը ճանաչեց: Այդ մարդն անախորժ հիշողություններ զարթեցրեց մեջը, սակայն դժվարացավ մերժել նրան:

— Խնդրեմ, — ասաց նա կիսաբերան, կառծես մի չանր պարտականություն էր կատարում: Ու ակամա մնաց կանգնած սեղանի մոտ:

— Խոսքս մի քիչ երկար է լինելու... եթե կարելի կը թույլ տվեք ձեզ մոտ նստեմ...

Դանելյանը նստեց, ձեռքով հրավիրելով նրան նստելու դիմացի աթոռին:

Եկվորը մի երկու բոպե աշքերը ձգեց գետնին, խոհաւութելով Դանելյանի հայացքից: Շփոթվելուց նա կարմրելու քրոնել էր:

Դանելյանն աշքի տակով դիտում էր նրա դեմքը: Անցյալի համեմատ բավական փոխված էր երկար, անկանոն բեղերը կրծատվել էին, թողնելով քիչ տակ մի փոքրիկ, աև կտոր: Թիթե, հազիվ նշմարելի կնճիռները ճակատին ու աշքերի մոտ խոհուն, կենտրոնացած արտահայտություն էին տալիս դեմքին:

— Բնկեր Դանելյան, գուցե գուք ինձ մոռացել եք... ես Երամյանն եմ՝ ձեր նախկին հարևանը, — ասաց նա, փորձող հայացքը ձդելով Դանելյանի վրա:

— Այս, չեմ մոռացել, — սառը պատասխանեց Դանելյանը:

— Ես գիտեմ, որ գուք ինձ վատ մարդ եք համարում են տարվա դեպքից հետո... Հենց զրա մասին էլ ուզում եմ խոսել ձեզ հետո...

Դանելյանը դեմքը խոժողուց: Վերջին խոսքերը նրան զարմացրին. — «Երեք հարբած է, թե չէ այսպես չէր սկսիլ», անցավ նրա մտքով:

— Շատ անգամ եմ ուզեցել ձեզ նամակ գրել, բայց քաշվել եմ. — Չարունակեց Երամյանը, — Հիմի որ պատահեցի, վճռեցի անպատճառ խոսել ձեզ հետո... կարծում եմ, չեք նեղանայ... Ես հաճախ հիշում էի ձեզ... ինձ տանջում էր ինձիտքը, թե ընկել եմ մի մարդու աշքից, որին հարգում եմ... եռ ձեր մասին լավ բաներ եմ լսել...

— Եթե այդպես պահանջ եք զգում բացատրվելու՝ յանդրեմ, պատրաստ եմ լսելու, — ասաց Դանելյանը լուրջ տոնվել:

Ճաշարանի սպասավորը եկամ կանգնեց նրանց առաջ:

— Մի շիշ գարեջուր, — պատվիրեց Դանելյանը:

Երամյանը վառեց ծխախոտի գլանակն ու մի քանի անգամ իրար վրա ներս քաշելով ծովսը, սկսեց.

— Դուք իհարկե, հիշում եք, ին ժամանակ շատ ալեկոծված էր մեր կյանքը: Սովորացումից մի տարի առաջ ընտանիքիս հետ գաղթել էի գյուղից քաղաք ու տեղավորվել ձեր բակի գետնահարկում: Իմ ունեցած տան սարքը մի կարպետ էր, երկու գզգզված վերմակ ու մի պղինձ:

Կինս ոտի վրա հիվանդ էր, երկու երեխան վզին: Փոքը երեխաս շարունակ լաց էր լինում, մոր ծիծը բերանը դնում, լմլմացնում, հետո տեսնելով, որ մեջը կաթ չկա, քաց էր թողնում ու ավելի ճշում: Մյուսն էլ քաղցած, մի գլուխ լացակումած հաց էր ուզում:

Սիրասս մղկուռամ էր այդ սուտ ու շիվանի մեջ, բայց ի՞նչ
անեի, սովոր տարի էր, ո՞ամ դիմեի. —ոչ ծանոթ ոնեի, ոչ
բարեկամ, քաղաքն էլ ինձ ուղղակի վախեցնուամ էր իր մեծու-
թյամբ:

Մի քանի անգամ գնացի երկաթուղու կայարան՝ մշակու-
թյուն անելու, բայց տեսա՝ գործը քիչ էր՝ ցանկացողը շատ,
միմյանց ձեռքից խլում էին: Գնացքների ժամանակն էլ որոշ
չէր, —պատահում էր, որ երկար սպասում էի, հետո հույսս
կտրելով, վերադառնուամ տուն՝ զուր տեղը շատերս մաշելով,
ու երկար ճանապարհից հոգնելով:

Մեկ-մեկ էլ գնում էի շովկա, բայց էնտեղ էլ հազարից
մի անգամ բեռն էր ընկնուամ ինձ, իսկ մեծ մասամբ ժամերով
կանգնում էի, հետո մի տեղ նստում ու թուզությունից նմա-
ղում: Մի առ ժամանակ էսպես մնում էի, հետո կարծես
քնից դարբնելով, ասում ինքս ինձ—«ի՞նչ եմ նստել, մի
գնամ տեսնեմ» երեխաներս ի՞նչ դրության մեջ են...»

Բայց երբ տուն էի վերադառնուամ, լուս երեխաներիս
լացը, տեսնուամ կնոջս սպավոր գնմքը, սիրաս տակն ու վըա
էր լինում, ու էլի ասում էի մտքում—«ի՞նչ եմ տուն մտել,
մի դուրս գամ դես-դեն ընկնեմ, կարելի է մի բան ճարեմ...»

Էսպես՝ ոչ մի տեղ հանգիստ չունեի: Ամեն ըոպե կար-
ծես մեկը մտրակում էր ինձ, ու քշում, որ գնամ ապրուստի
հար դունեմ:

Է՞զ, ծանր օրեր էին. ով քաշել է էղ օրերը, նա' ինձ
կհասկանա...

Սպասավորը բերեց գարեջուրը: Դանելյանը լցրեց բա-
ժակներն ու առաջարկեց Երամյանին, բայց նա շնորհակա-
լություն հայտնելով՝ մերժեց:

—ի՞նչու ինձ չէիք դիմում, —ասաց Դանելյանը. —ես կա-
րող էի ձեզ համար գործ գտնել:

— ի՞նչ ասեմ... դուք՝ որպես ինտելիգենտ, քաղաքա-

վարություն էիք քանեցնում, չէիք խառնվում իմ «ներքին գործերի» մեջ, չէիք հարցնում, թե ի՞նչ դրության մեջ եմ, ես էլ գյուղից նոր էի եկել, քաշվում էի, մտածելով թե՝ ոնց կլինի էն «աղա մարդու հետ խոսեմ: Էդպես իրար չէինք մտենում և ես մնում էի անօդնական:»

Տեսնում էի շորս կողմս, ինչպես հարուստներն ապրում են լիովի, քեփերի մեջ, նկատում էի նրանց կուշտ դեմքերը, որոնք էնպես խեթ էին նայում—արհամարհում էին ինձ ու կատաղությունս գալիս էր: Բայց գյուղից բերած իմ հասկացողությունն ի՞նչ էր.—որ էդ բոլորը էդպես էլ պետք է լիներ—բախտը մինին հարստություն է բերում, մեկելին՝ աղքատություն... աշխարհս էդպես եկել է, էդպես էլ կդնա...

Տեսնում էի ինչպես օր-օրի վրա թուլանում էր, հյուծվում ընտանիքս, ուզում էի բղավել, մոմչալ, բայց ո՞ւմ մեջն էր. սովոր տարի էր, աղքատը շումեր որ տար, հարուստն էլ թեկուզ տնով մեռնեի, ուշադրություն չէր դարձնիլ...

Քացածությունից ու հոգսից էնպես էի թուլացել, կարծես ծանր հիվանդությունից նոր էի վեր կացել.—գլուխութտվում էր ու ոտներս հաղիվ էի քաշ տալիս:

...Հիշում եմ՝ մի անգամ մսի խանութիւն առաջից անցնելիս էնպես քաղցած էի, որ մեջս ցանկություն էր գալիս ու իսարի դմակը թացնել ու հենց էնպես՝ հում-հում ուտել... ի՞նչ թաքցնեմ, երկու անգամ հաց գողացա, մի անգամ էլ մսի կտոր...

Կամաց-կամաց միտքս ամբողջովին ընկալ էդ համփեն ու գողությունը սկսեց երևալ աշքիս՝ որպես մի սովորական ապրուստի միջոց:

Սկզբում երևակայում էի, թե մի խոշոր գողություն կանեմ՝ մի անգամից կապահովեմ ընտանիքս, բայց հետո իջամամպերից ու վճռեցի ավելի համեստ ծրագիր ընտրել, այսինքն՝ մեր տան հարևաններից գողանալ... Սրանց մեջ էլ բարձր ու ցածր անելով, վերջապես կանգ առա ձեղ վլաս...

— Բայց մի՞թե չէիք նկատում, որ ներքեւը, ձեր կոողին բնակվող արհեստավորներն ինձանից շատ ավելի լավ էին:

ապրում... Գիտե՞ք, որ այն ժամանակ ես էլ շատ նեղ վիճակումն էի:

— Ի՞նչ էի հասկանում. ինտելիգենտը շատ անզամքաղցած է լինում, բայց դրսից ոչինչ չի երևում: Տեսնում էի՝ ամեն առավոտ մարուր, քաղաքավարի հագնված գնում էիր գործի, ես էլ նորեկ գյուղացու աշքով դատելով, ձեզ համարում էի հարուստ, մանավանդ, որ ինձ հետաքրքրողը շորերն էին:

Երբ արդեն վճռեցի ձեզանից գողանալ, սկսեցի բակից դիտել, ուսումնասիրել ձեր բնակարանը: Ի՞նչ երկարացնեմ, մի գիշեր էլ, երբ գուք թարրոնումն էիք, նախօրոք պատրաստած բանալիով բացի ձեր բնակարանի դուռն ու տարաշորեկնը...

Դուքս գալով, էլ շմտա իմ բնակարանը, այլ ուղղակերացլեցի դեպի մոտակա գյուղը: Գնում էի ու շարունակ երեխայում, թե հետեւից մարդիկ են վազում:

Փոքր ինչ հանդարտվեցի, երբ արդեն քաղաքից դուքս էի: Ճանապարհից շեղվեցի, մտա մի ձորակ ու պառկեցի, գլխիստակ դնելով իմ բերը:

Երկար ժամանակ քունս չէր տանում: Նայում էի աստղերին ու մտածում, որ իմ կյանքն արդեն ուրիշ հունի մեջ ընկալ, որ սրանից հետո հալածված մարդու նման շարունակ պիտի մի տեղից մյուսն անցնեմ, թաքնվեմ, կասկածեմ ամեն մի աշքի, որ ինձ վրա կընկնի:

Միայն շատ ուշ՝ մի քանի ըռուկ քնել էի ու երազով ընկել: Տեսնում էի երազում, իբր թե ինձ շրջապատել է մի աշապին բազմություն. ամենքը երեսները ծամածուած, բերանքաց ձղճղում էին, ցուց տալով ինձ և իմ գողացած սպիտակեղենի կտորները...

Զարթնեցի՝ աշով բռնված ու ականջ դրի: Հեռվից շների հաշոց էր գալիս: Նկատելով, որ լուսանալուն մոտ է, վեր կացա ու շարունակեցի ճամփին:

Լուսանալուն պես թաքնվեցի մոտակա թիերի տակ ու ակսեցի կարգի բերել «ապրանքս», որպեսզի վնողները գլխի շրնկնեխն, թե գողացած է, ապա գործը վերջացնելուց հետո պնացի գյուղն ու ներս մտա մի հարուստ գյուղացու բակը: Դեռ նոր էի բացել ապրանքս՝ կանաչք վրա թափվեցին զըլ-խիս: Մի ժամ շանցած՝ վերջացրի առևտուրս, մոտս պահեցով միայն երկու կտոր սպիտակեղեն՝ մտադրվելով փոխանակել մթերքների հետ:

Բոլորը զարմանում էին, որ ես փողով եմ ծախում, մինչդեռ քաղաքից եկող վաճառողները մթերքների հետ էին փոխանակում: Գյուղացիների տեսակետից իմ արածն անմըտություն էր, բայց նրանք չպիտին, որ ես ստիոված եմ էղպես անում, գողովթյունս ծածկելու համար:

Առևտուրս վերջացնելուց հետո պիտի վերադառնայի քաղաք, — շարունակեց երամյանը, — բայց մտաքերեցի, որ ցերեկով կարող եմ նկատվել, ուստի վճռեցի սպասել մթանը:

Նորից գուրս եկա գյուղից ու թիերի տակ պատկելով, անցկացրի օրս: Փորս կշացնելով հաց ու պանրով ու աղբարի ջուրով վրան խմելով, սկսեցի մտածել ապագա «գործունեության» մասին: Զարմանալի անհոգություն եկավ մեջքս դեպի իմ վիճակը. շատ հանգիստ էի մտածում այն մտակին, թե ինձ կհետեխն, կբռնեն: Թղթախաղում առաջին անդամ տարած մարդու նման նորից ձգտում էի դեպի խաղը՝ գողովթյունը: Եվ ահա գլխումս պատրաստվեց նոր ծրագիր...

Երեկոյան դեմ գնացի նորից գյուղը, ներս մտա էն հարուստ տունը, որտեղ ծախսել էի ապրանքս: Ծոցումս պահած երկու կտոր սպիտակեղենը ընծայեցի տանտիրոջ և խնդրեցի, որ թողնեն ինձ գիշերելու իրենց տանը, պատճառաբանելով, թե մոտակա գյուղում գործ շատ ունեի, ուշացել եմ, իսկ մթնով չեմ ուղում գնալ, որովհետեւ կարող են թալանել:

Տան տերը համաձայնվեց: Ինձ տեղավորեցին երկրորդ հարկի սենյակում, որը մաքուր զարդարված պահում էին

«ազիղ» Հյուրերի համար: Իմ ծրագիրն էլ հենց էդ էր, որ
կիշերն անցկացնեմ էդ սենյակում ու «գործու տեսնեմ»:

Բարձրացա վերև ու աշք ածելով շորս կողմը, մանրա-
մասն դիտեցի պահարաններն ու պառկեցի, սպասելով, որ
ներքեր խորը քոն մտնեն:

Երբ համոզվեցի, որ ներքեւոմ էլ ձեն-ձուն չկա, վեր
կացա, բոբիկ ոտներով մոտեցա պահարաններին ու մեծ
զգուշությամբ բաց արի, հանեցի նրանց միջի կանացի հա-
պուտաներից ինչ որ արժեքավոր էր ու պարկս լավ լցնելով
կամաց իջա ներքել:

Փողոցի շները դուրս թափվեցին ու հարձակվեցին վրաս-
ես արդեն ինձ կորած էի հաշվում, սպասում էի, որ գյուղա-
ցիք կզարթնեն, կրնեն ինձ, բայց էղպես չեղավ: Միայն մի
զյուղացի դուրս եկավ շապկանց, մեջքը քորելով, «ա շուն
կո՞րի», բղավեց ու նորից տուն մտավ:

Չեռքիս փայտով մի կերպ պահելով շներին՝ քրտնքի
մեջ կորած, վերջապես հասա զյուղի ծայրը ու նստեցի մի
տեղ հանգստանալու: Էնակս էի ուրախ, հենց իմանաս նոր
էի մահից ազատվել:

Ուշ գիշերին հասա քաղաք: Թհապետ վճռել էի տուն
շփնալ, բայց հոգնած էի, ուղեցա մի երկու ժամ հանգստա-
նալ, հետո ճամփա ընկնել:

Դուռը թիկացըրի: Կիսո աշքերը տրորելով, եկավ բացեց:

— Դո՞ւ ես..., ո՞րտեղ էիր... էս ի՞նչ պարկ է,—ասաց
նա հազիվ կարողանալով աշքերը բացել:

— Շորեղին ա, պիտի ծախեմ:

— Ո՞վ է տվել քեզ շորեղին,—գրգռված ասաց կիսո:

— Սո՞ւս, կամաց խոսիր... մեկի հետ ընկերացել եմ...

— Հազիր ասա գողացել ե՞մ... հիմար մարդ չկա, որ
քեզ շորեր տա...

— Ի՞նչ ես ավել-պակաս խոսում... ի՞նչ, նամուսս ծա-
խել ե՞մ, որ գողությամբ ապրեմ...

Զգարմանաք՝ կյանքում էսպես շատ է պատահում.—ով

անցնում է բոլոր գծերից, նա ամենից բարձր է խոսում նա-
մուսից ու աղնվությունից...

Էսպես Հարձակվելով կարողացա կնոջս Համոզել, բայց
ա՛րի տես, որ կես գիշերին նրա կանացի հետաքրքրությունը
բռնեց—ուզում էր պարկը բաց անի, իրեն Համար շորեր
ընտրի:

Մի կերպ հետ կացրի, խոստանալով առավոտը ընծայել
մի զգեստ, բայց դեռ լույսը շրացված՝ պարկը վերցրի ու
դուրս եկա էնպես զգուշ, որ կինս չնկատեց:

Գնացի դեպի երկաթուղու կայարանը։ Գնում էի ու
ինքս ինձ նախատում—ի՞նչ Հիմարություն էր տուն դնալը,
չե՞ որ նոր էի էգտեղ գողություն արել և կասկածի տակ էի...
և հետո, մի՞թե շպետք է առաջուց իմանալի, որ կինս «ան-
ճուսալի» տարր է այս գործում...

Զեմ երկարացնի պատմությունս,—նստեցի ապրանքա-
տար գնացքի վագոնն ու իջա երրորդ կայարանում։

Գնացի մոտակա գյուղը, ապրանքս փոխանակեցի մթերք-
ներով ու հետելալ գիշերը վերադարձա քաղաք։

Եթք կինս տեսավ մթերքները, ուրախությունից ամեն
ինչ մոռացավ։

— Էս ո՞րտեղից ա,—Հարցրեց, բայց երեսմ էր՝ շատ
էլ խորը չէր հետաքրքրվում, թե ի՞նչ աղբյուրից է։ Զարմա-
նում էի, թե ինչպես նա՝ շորերի պարկը տեսնելով հերո-
տեց, իսկ մթերքների պարկի առաջ ուրախանում էր։

Էսկուզ իր շնորհքները հավաքեց, իրինահաջ պատ-
րաստեց։ Մեծ երեխաս՝ կերակուրի հոտն առնելով, վեր
թռավ ու հաց ու պանիրը, յուղը իրար խառնեց։ Քնկոտ աշ-
քերով կանգնել էր առաջս ու խոր-խոր կծոտելով գյուղական
հացը, բերանն էնքան էր լցնում, որ դժվարությամբ էր ծա-
մում։

Նա մոտեցավ ինձ՝ ուրախության արցունքներն աշքերին.
ուզում էր ինչ որ ասի, բայց բերանը լիքն էր, չեր կարողա-
նում խոսել։

Ես համբուրում էի նրան, և արցումքներս թաքցնելով,
առում էի մտքումս.

— Որ իմանաս, ո՞ւմ շորերն ես ուսում...

Երամյանը բոպեապես կանգ առավ:
— Խմենք դարեջուրը, — առաջարկեց Դանելյանն ու ինքը
խմեց: Երամյանը շմանեց և ակսեց ծխել աղաջությամբ: Ապա
վերջացնելով, շարունակեց:

— Երկու օր էր, տանից չեխ դուրս գալիս. կնոջս էլ
պատմիրել էի, որ մթերքները ծածուկ պահի, ասելով, թե
միլիցիան կարող է զրավել: Չդիտեմ, նա էդ րոպեին հա-
վատացած էր, թե իմ «արդար» աշխատանքով եմ ձեռք
բերել այդ բոլորը, թե դուցե ձեացնում էր, որ հավատում է:
Համենայն դեպս նա շատ հանգիստ էր վայելում, իսկ ես ոչ
ուսեղն էի իմանում, ոչ խմելը. ամեն մի շփլթոցից, ամեն
մի ուսնաձայնից վեր էի թռչում, իսկույն մոտածում — «էս ա
դալիս են ինձ տանեն...»

Ես նկատում էի, որ դուք էլ գնում-գալիս եք, քրեական
միլիցիա եք բերում, ցուց տալիս ու մեր կողմը խեթ նա-
յութ: Ասած է գող՝ սիրու դող: Ես վախենում էի, որովհետեւ
նոթագրում էի բոլոր նշաններով, որ դուք պիտի ինձ մատ-
նանշեիք, որպես գողի:

Երեք օր տանը թաքնվելուց հետո էլ համբերեցի, դուրս
եկա շուկա, իբր թե մշակություն անելու: Մի քիչ պտտվեցի,
հետո ուզում էի միրգ առնել երեխաներիս համար, մեկ էլ
հանկարծ մի մարդ պինդ բռնեց ինձ հետեից:

— Ա՛յ, սա է, — բղավեց նա ու իր ուժեղ ձեռներով եր-
կաթի օղակի նման պինդ սեղմեց ինձ:

Փորձեցի աղատվել, բայց իզո՞ւր. սկսեցի բղավել, օգ-
նություն կանչել, բայց իսկույն վրա հասավ մյուս գյուղացին
ու բոռնցքով էնպես խփեց գլխիս, որ քիչ մնաց ուշքս կորց-

նեմ: Խփողն էն գյուղացին էր, որի տանը խայտառակ նա-
մարդություն էի արել...

— Ա՛յ անաղուհաց շուն,—ասում էր նա կատաղած ու
խփում, սիրով հովացնում:

Աղմուկի վրա եկավ ոստիկանը և, ուշադրություն շփարձ-
նելով իմ հնարովի բացատրությունների վրա, տարավ ինձ
երկու գյուղացիների հետ...

Առաջին կալանքը թեպես շատ վախեցրեց ինձ, բայց
բանտում նստած «կազմակերպված» բանդիտներն ինձ ներ-
շընչեցին արհամարժել վտանգն ու սովորեցրին դատարա-
նում պաշտպանվելու միջոցները: Մի ամիս շանցած՝ բան-
տում տեղ վիճելու պատճառով ինձ արձակեցին ժամանակից
առաջ: Դատն էլ ձգձգվեց, որովհետև գյուղացին չներկայա-
ցավ նշանակված օրը: Էդ միջոցին վրա հասավ քաղաքա-
ցիական պատերազմը, և ինձ մոռացան...

Եկավ սովետական իշխանությունը, բայց ես արգեն սո-
վորել էի ուրիշի հաշվին ապրելու՝ «հեշտ ապրելու» միջոցը:
Ինձ առաջարկում էին աշխատանք, պաշտոն, բայց ես չէի
վերցնում: Իմ տեսակետից ես մինչև անգամ մտածում էի, որ
«խառը ժամանակ» կարելի է «գործ տեսնել» այսինքն գո-
ղանալ, թալանել, քանի որ նոր կառավարությունը գեռ խորը
չի գնացել... Շատ կարճ էր իմ դատողությունը.—մտածում
էի.—բայց կիկները լավ են անում, որ հարուստներից խլում
են, աղքատներին տալիս, ես նրանց վերջնական նպատակի
խորքերը չէի մտնում, այլ ասում էի ինքս ինձ,—ես կուղա-
նամ, կվերցնեմ ունեցողներից իմ մասը, թող մնացած մար-
դիկ էլ իրենց մասը վերցնեն...

Ահա այդ ժամանակ էր, որ ես կապվեցի գողերի մի՛
խմբի հետ: Մենք մի դիշերում կողպատեցինք հինգ տուն:—
Սկզբում ուրախ էինք, կարծելով թե լավ «պարտակեցինք»,
բայց մի շաբաթ անց տուող բացվեց, ես էլ մյուսների հետ
ընկա խորհրդացին դատարանի ձեռքը...

Թե ինչպես ինձ դատեցին ու դատապարտեցին, չեմ
պատմում:—իմ նպատակն էղ շի. կասեմ միայն, որ սկզբում

վճռել էի ուրանալ հանցանքս, բայց քննչի մի երկու հարցն-
րից հետո շփոթվեցի ու ամեն ինչ խոստովանեցի...

Դատարանը վճռեց ուղղիչ տում՝ երկու տարում...

Ուղղիչ տումը...

Հիշում եմ, ինչպես սրտակոտոր գնում էի էնտեղ, ինչ
ժանր մտքերով... ինձ թվում էր, թե գնում եմ նորից իմ
առաջվա բանտը, որի պատկերը տպավորվել էր մեջս մի քա-
նի ամիս առաջ: Ինձ ճնշում էր այն միտքը, թե ընտանիքս,
մնալով անօգնական՝ սովամահ կլինի, ես էլ դուրս ընկնելով
սովորական մարդկանց շարքերից, ո՞վ գիտե թե ինչ պիճակի
մեջ կընկնեմ:

Սնցալ մի շաբաթ: Նամակ ստացա կնոջիցս. դրում էր,
թե կին-բաժնի օգնությամբ երեխաներին կցել է մսուցին, ու
ինքը գործի մտել, ու հետո էլ գրադիտություն է սովորում...
կարգացի ու զարմացա... սա ի՞նչ նորություն է...

Հետզհետե սկսեցի ուշքի գալ ու հասկանալ չորս կող-
միս կյանքը. ու տարօրինակ զարմանքի մեջ ընկա: Տեսնում
էի՝ հետս լավ են վարվում, տեսնում էի՝ գիր, արհեստ են-
սովորեցնում, ու հարց էի տալիս ինքս ինձ—բա ո՞րն է պա-
տիժը... Առաջի օրերին նույնիսկ մտքովս անցավ, թե սկըզ-
բից էսպես քաղցր են վարվում, որ շմրտնենք, իսկ հետո՝
իրենք գիտեն, թե ի՞նչ կանեն: Բայց անցավ ժամանակը, և
տեսա, որ այս բոլորը ոչ թյուրիմացություն է, ոչ սարքովի
քան, այլ իրականություն, որ հին բանտը այլևս չկա, ու ես
ընկել եմ մի անսպասելի վայր...

Մի թարմություն, կենդանություն եկավ մեջս, երբ ես
ընկա ընդհանուր հոսանքի մեջ: Սկսեցի հաճախել գրագի-
տության դասերը մի առանձին եռանդով.—սիրահարն այն-
պես չի գնում իր սիրութու մոտ, ինչպես հրճվանքով ես
գնում էի դասերին, ժողովներին, դասախոսություններին,
ուշքս ու միտքս տալով նրանց...

Երբեք չեմ մոռանա ուղղիչ տան պատին կպցրած մի պատկեր. նրա վրա նկարած էին բանվորն ու գյուղացին, որոնք ձեռները մեկնած ցուց էին տալիս մի լուսավոր շենք: Պատկերի տակը խոշոր տառերով գրված էր.

— Աշխատավոր, լուսավորի՛ր միտքդ, որ ինքդ կառավարես քո ստեղծած պիտությունը...

Էդ պատկերը կարող է վկայել, թե ի՞նչպես օր-օրի վրա ես աճում էի, միտք բացում: Շատ անգամ եմ կանգնել նրա առաջ, նայել տառերին, ուրիշներին խնդրել, որ կարգան: Բայց մի օր էլ կատարվեց հրաշքը — և ինքս կարդացի էն անմոռանալի բառերը...

Էդ օրվանից՝ կարող եմ ասել, ես սկսեցի ժամերով մեծանալ. գիշեր-ցերեկ պրապտում էի գրեքրի մեջ: Հետզհետե աշքերս բացվեցին, ու սկսեցի հասկանալ, թե ի՞նչ է ասում էս մեր նոր աշխարհը, ու ընդմիշտ ընկերացա նրան...

Բայց մի բան տանջում էր ինձ — իմ անցյալը: Ամեն անգամ, երբ հիշում էի անցյալը, էդ բոպեներին տեսնում էի ձեր գեմքը, և թվում էր՝ դուք չեիք ներում ինձ...

Ես ասում էի մտքում, — մինչև շտեման նրան՝ այսինքն ձեզ, մինչև լսեմ նրա ընկերական խոսքը՝ չեմ կարող հանդիսատ լինել, չեմ կարող ջնջել այն սև բիծը...

...Հիշում եմ վերջին օրը... Եկա կանգնեցի էն պատկերի առաջ, ու խոսք տվի՝ սկսել նոր կյանք, կպշել աշխատանքի ու ամենից առաջ ներկայանալ ձեզ... բայց դուք քաղաքում չեիք...

Ուղղիչ տանից դուքս գալուց հետո ես մտա գործարան և բռնեցի նոր կյանքի ձամփան: Ես միշտ վնտրում էի ձեզ ու վերջապես գոտա...

...Ահա յոթ տարվա իմ կյանքի պատմովիյունը դնում էմ ձեզ առաջ ու սպասում ձեր ընկերական դատաստանին...

Դանելյանը բոպեալակի մնաց լուռ, ապա սթափվելով, նա ասաց.

— Դուք եկել եք իմ գատաստանի առաջ, որպեսզի ասեք, թե ահա այն մարդը, որը դող էր, դարձել է օգտակար աշ-

իսաւամբոր, լծվել է սոցիալիստական շինարարության մեծ կործին: Ես ողջունում եմ ձեր վերածնությունը. դա ինձ համար մեծ ուրախություն է... ավելին կասեմ—ես ոչ միայն մոռանում եմ անցյալը, այլև դատապարտում եմ ինքս ինձ այդ անցյալի համար, թե ի՞նչու չեմ կենտրոնացրել ուշադրությունս ձեր վրա: Երբ ես դիմում էի քրեական բաժնին ու ենթադրում, թե ձեզ՝ իբրև գողի կալանքի կենթարկեն, ես չէի իմանում, թե ի՞նչը ձեզ դրդեց դեպի այդ ճանապարհը... մենք փոխադարձարար մեզավոր ենք իրար առաջ. տվե՛ք ինձ ձեր ձեռքը. այսուհետև անցյալը համարենք ջնջված...

Ու սեղանի վրայից նա պինդ սեղմեց երամյանի ձեռքը:

Ապա բաժակը լցնելով, շարունակեց.

— Խմենք ձեր կենացը. այժմ, դիտեմ, չեք մերժիլ. ձեր վերածնունդը ամենամեծ հաղթություններից մեկն է...

Լ ՈՒՅՑ Ա Ե Ր Ը

Ամեն երեկո, երբ խավարը սև քուլաներով սփռվում է ձորում, ճիղրոկայանի բանվորական շենքերի մոտ պայծառ ու զվարթ շարվում են լույսերը: Շարվում են էլեկտրական լույսերն ու ժամանակավոր շենքերը, որ մինչ քննելը լավում է բանվորների խոսք ու զրոյցը, ծիծաղն ու երաժշտությունը:

Բայց ահա հետզհետե լուսմ են ձայները բանվորական տներում, ու համատարած լուսվան մեջ սկսում է իշխել գետի վշշոցը, կարծես գիշերները՝ օգտվելով խավարից, գետը թաքուն վարարում է:

Երբեմն այդ միավար համերգը խանգարում է երկաթուղու շոգեկառքի անհանգիստ սովորությունը, որը կրկնվում է ձորում արձագանքելով ու հետզհետե հանգչում: Երբեմն էլ մի մոլոր քարմի է գալիս ձորն ի վեր, թեթև սովում է ու պատեպատ ընկած ձամփա է փնտրում իր համար:

Իսկ ձորի եղրերին, հանդիպակ ժայռերի վրա ձգվում են, պառկում հսկա ստվերները, նայում շարաշոսք աշքերով ներքեի լույսերին ու մելամաղձ հոգով ականջ դնում գետի հին, միավար վշշոցին:

Գիշերվա այս հանգստյան ժամերին տոննելներում անընդհատ եռում է աշխատանքը: Այնտեղ, լեռան ներսը, ինչոր խորհրդավոր մարդիկ, իրենց լարված մկանները միացրած մեքենաներին, համառորեն պատռում են ժայռի կուրծքը՝ ուղի են բանում ջրի համար:

Գիշերվա այս ժամերին ձորալանջի կածաններով լուսեր
ևն շարժվում, երբեմն խումբ-խումբ, երեմն, զատ-զատ:
Տոննելի բանվորներն են դրանք, որ վերջացրած իրենց հեր-
թը՝ վերադառնում են մոտակա գյուղերը հանգստանալու:
Նրանք բոլորը լապտերներ ունեն ձեռներին՝ վտանգավոր նեղ
կածանները լուսավորելու համար: Խորհրդավոր են թափառող
արդ լուսերը, նրանք մերթ ծածկվում են ժայռերի հետեւամ,
մերթ նորից հայտնվում: Ու թվում է հեռվից, թե մարդիկ չեն
շարժվողները, այլ լուսերն իրենք են թափում հսկա լուսա-
տիտիկների նման՝ օճապտույտ կածանների վրայով:

Այդ գիշեր Ակոբն էլ լապտերը ձեռքին բարձրանում է
Ճորամտի կածանով: Նա մենակ է, ինչ-որ գործով ուշացել է,
ետ մնացել ընկերներից:

Մանր է ճամփան, խորդ ու բորդ, Ակոբի ոտները դիպ-
չում են թափած քարերին, ընկնում են ջրի ու ցեխի մեջ,
դեմ ընկնում ժայռերին:

Մանր է վերելքը, բայց նա սովոր է, չի նկատում: Նա
քայլում է, մտածում օրվա դեպքերի շուրջը ու այս ու այն
թիւ, ժայռի նշանով, սովոր աշքերով հաշվում է իր անցած
տարյածությունը: Երբեմն նա կանգ է առնում, շունչը ետ
բերում, նայում ներքեւ լուսերին: Ու միշտ այդ լուսերից
մի արտասովոր ուրախություն է գալիս Ակոբի մեջ, կարծես
մի նոր, խանդավառ աշխարհ է այնտեղ, ուր ընկնողը մոռա-
նում է իր անձնականը, իր առօրյան:

Բաքվից է եկել Ակոբը, եկել է այնպիսի եռանդով, ասես
մի երկու օրում ուղում է վերջացնել ամբողջ հիդրոկայանը:
Տոննելի աշխատանքից հետո հանգստյան ժամերին էլ նա
գյուղում կոլխոզին է լծվում ու իր թափով վարակում բոլո-
րին:

Կանգնում է Ակոբը ճամփին, շունչ առնում, նայում ներ-
քի լուսաշխարհին. մտածում է՝ ահա կանցնի մի երկու

տարի, հիդրոկայանը կյանք կտա նոր գործարաններին, իսկ այնտեղ՝ ձորի լանջին, ժայռի վրա կբարձրանա կենդինի հսկա արձանը, ու աշխերը կդարձնի դեպի հեռուները...

Երբ Ակոբը մոտեցավ աղբյուրի ժայռին, հանկարծ ինչու շոր շփլթոց ընկալ ականջը, —կարծես մեկը կածանի մի կողմից մյուսն անցավ, հետևից շարժելով մանր քարերը: Նա կանգ առավ ականջ դրեց: Լուս էր շորս կողմը, ներքինից լըսվում էր միայն գետի վշշոցը:

«Գուցե գայլ էր, կամ թափառական շուն», անցավ նրա մտքով. բայց իսկուն նրան ցնցեց մի ուրիշ ենթագործություն. —Իսկ եթե թշնամիներից՝ գյուղի կողակներից է՞ր... չէ՞ որ ամեն օր նրանք սպառնում են կոլխոզի պատճառով...»:

Նա շարժվեց առաջ՝ դանդաղ, զգույշ քայլերով. մտածում էր, թե ի՞նչպես պիտի անզեն պաշտպանվի հարձակման դեպքում: Բայց մինչ այդ մտածելը հանկարծ հետևից դուրս թափմեցին երկու հոգի ու հարձակվեցին նրա վրա: Պայման էին դրել—լուս մնալ, որ չձանաշվեն, բայց մեկը նրանցից չ'ամբերեց, կատաղած ձայն տվից:

— Ա՛յ ես քու եկած ճամփեն...

Մի ակնթարթում Ակոբը ետ դարձավ, նկատեց խանշալի փայլը, բայց նույն վայրկյանին մյուս հարձակվողը փայտի հարվածով փշրեց նրա լապտերը: Ու սկսվեց կոխվը մթության մեջ: Ակոբը վրա ընկալ, ձեռքերն արցունուելով բռնեց խանշալից, ու ճգնում էր խլել նրա ձեռքից, այդ ժամանակ մյուս ընկերը ետ քաշվեց: Երբ Ակոբը մի ուժեղ հարմածով դորեց գետին իր դիմացինին, իսկուն երեսը դարձրեց դեպի մյուս ախոյանը, բայց վերջինս, նկատելով իր ընկերոջ անկումը, թողեց ու փախավ:

Ակոբը մի փոքր առաջ անցավ ականջը ձայնի պահած, ապա կանգ առավ մի քանի ըոտե, որ թվաց մի երկար ժամ: Զայն-ծպտուն չկար: Վերջապես համոզվելով, որ վտանգ չկա, նա շարունակեց իր ճամփեն: Հանկարծ ուժի տակը զբնդացին ապակու կտորներ: Նա խորը թափում կանգնեց

իր կոտրած լապտերի մոտ, ասես հրաժեշտ էր տալիս մեռնած ընկերոջ, ու վերցնելով լապտերի երկաթե կմախքը, առաջ անցավ:

Հազիմի մի քանի քայլ արած՝ նա զգաց, որ արյունահոսությունն ուժեղանում է: Վերքերը մժմժում էին. արյունը ծծվում, սառչում էր շապկի մեջ; Նստեց մի քարի վրա, հանեց շորերն ու պատառուելով շապիկը, մի կերպ կապկակց վերքերը: Երբ վեր կացավ տեղից, գլուխը պտտվում էր, թուլացած մարմինը հրաժարվում էր շարժվելոց: Խարխափելով մթնում, շարունակ դեմ ընկնելով քարերին, թփերին՝ նա երկար շարշարանքից հետո ուժապատուն հասավ:

Մի փոքրիկ, գյուղական տուն էր Ակոբի կացարանը.— առջեր սրահ, ներսը երկու սենյակ—մխոտած առաստաղով: Մի սենյակը լուսավորված էր հասարակ լամպի պղտոր, աղոտ լույսով:

Ակոբը թխկացրեց դուռը: Ներսից մեկը շտապով մռանցակ ու բացեց:

— Էս ինչի՞ ուշացար, Ակոբ:

— Գործ ունեի, եղացա, — ասաց Ակոբը նվազած ձայնով:

Մարդոն էր, իր նշանածը: Նա առաջ ընկավ, վառեց լամպը Ակոբի սենյակում:

Հանկարծ լույսի մեջ նկատելով Ակոբի սպրինած դեմքը, արյունոտ, կապկալած ձեռքերը, Մարդոն մնաց սարսափուծ:

— Ի՞նչ է պատահել, Ակոբ, — հարցրեց նա շնչառապահ, հազիմ կարողանալով արտասանել խոսքերը:

— Ոչինչ:

— Չէ՛, Ակոբ մի՛ ծածկիլ, — ասաց Մարդոն լացակումած, դողդողօն ձայնով:

— Մի վախիլ, Մարդոն... ճամփին վեր ընկա...»

Մարդոն սկսեց հեկեկալ ու ընկավ Ակոբի կրծքին:

— Մարդո, ասում եմ մի վախիլ, էգուց էլի գործի կը-
գնամ:

Աղմուկից զարթնեց մյուս սենյակում Մարդոյի մայրը.
Նա ներս եկած ու տեսնելով երկուախն գրկախառնված՝ ուզեց
ասել—«աղջի, բա ամոթ չի՞...» բայց պիրտ շարավ ու միայն
ասաց.

— Մարդո, դնա քնի ես մտիկ կանեմ Ակորին:

— Էլ ի՞նչ քնեմ, մի տես է՛, Ակորն արյունալվա է
էլել...

— Վա՛յ, աղջի, ի՞նչ ես ասում...

— Ոչինչ, մայրիկ, ուշ մի դարձնի, բան չկա,—հանգըս-
տացնում էր Ակորը:

Մայրը մոտեցավ Ակորին, տնտղեց միրավոր տեղերը,
ու ծնկները վերհատելով, մնաց շվարած: Հետո հիշելով, որ
մի բան պիտի անել՝ գնաց շտապով, խարխափելով, դես
դեն դիպչելով կրակ վառեց, ջուր դրեց՝ վերքերը լվանալու
համար: Ապա զարթեցրեց իր տղային, Մարդոյի փոքր եղ-
բորը, ու մի մահակ տալով ձեռքը՝ շներից պաշտպանվելու
համար, ուղարկեց բուժակի հետեւց:

Մինչդեռ մայրը՝ ուշքը կորցրած, փսխում էր կրակի
շուրջը, ստեպ-ստեպ ինքն իրեն խոսելով, Մարդոն ձգեց
թախտի վրա Ակորի անկողինը, հետո նստեց կողքին ու
քնքորեն շոյում էր նրա ձեռքերը ու նայում աշքերին:

Մարդոյի եղբայրը վերադարձավ, դուռը շրիկալեն բա-
ցեց ու հայտնեց, որ բուժակը տանը չի, —նրան շտապ կան-
չել էին հարեւան գյուղը:

Մարդոյի սիրուը ճմլվեց այս լուրից: Դժբախտ պատա-
շարից ճնշված՝ նա մի նոր աղետ էր համարում այս զուգա-
դիպությունը: Նա օգնեց մորը, լվացավ տաք ջրով Ակորի
վերքերը, կապեց մաքուր փալասներով ու պանկեցրեց ան-
կողնում, չկարողանալով զսպել իր արցունքները:

Նա շարունակ պատավում էր Ակորի շուրջը, —մեկ վեր-
մակն էր ուղղում, մեկ բարձը. նայում էր աշքերին, ականջ
գնում շնշառությանը: Ակորը պառկած էր կիսարթուն. նա

կոկծում էր վերքերի ցավից. խոժոռած դեմքը արտահայտում էր զսպված զայրույթ. խիտ, սև հոնքերը մոտեցել էին իրար, ինձուել ճակատը: Երբեմն նա ցնցվում էր, բոռնցքները սեղմում, և բացելով աշքերը, կարծես զարմացած նայում էր մոտը նատած Մարգոյին:

Երբ Ակոբը երկրորդ անգամ զարթնեց, Մարգոն խոնարհվեց նրա դեմքի վրա:

— Ակոբ, ուղիղն ասա, ո՞վ էր քեզ խփողը...

— Մարգո, քեզանից ի՞նչ թաքցնեմ—ինձ վրա հարձակվեցին երկու հոգի:

— Ո՞վքեր էին:

— Մթնում ջիմացա՝ երեսները բաշլուզով ծածկել էին, միայն մեկի ձենը Մարոենց Միկիշին նման տվեց: Ասենք դեռ վքեր պետք է լինեին—մեր գյուղի կուլակները, մեր կոլխոզի թշնամիները... բայց ոչինչ վրեժը կդա իր ժամանակին...

— Զէ, Ակոբ, էդ ավազակների հետ գլուխ մի՛ դնիլ, կտան կսպանեն...

— Ես նրանց դեմ սուր ու հրացանով շեմ դուրս գալ՝ ուրիշ զենքով կկռվեմ,—նրանց աշքի փուշը մեր կոլխոզն աւ էլ հենց զրան զոր կտամ. դա նրանց ավելի կսպանի:

— Ես էլ քեզ կօգնեմ, Ակոբ, սիրոտ լավ պահի:

Ակոբը ժամանում է, մոռանալով ցավերը, նրան մեծ ուրախություն է պատճառում Մարգոյի խոսքերը:

Մարգոն ուրախանում էր, որ Ակոբի ուշքը վրան է, որ գրությունը շատ ծանր չի, ու թաց աշքերով ժամանում էր նրա ժամանի դիմաց, զգալով հոգեկան մի շերմություն իր սիրած մարդուց, որի հետ պիտի մի երկու ամսից հետո ամուսնանար:

Նա երևակայում էր, թե ի՞նչպես Ակոբի հետ գործի կը-մանի, ինչպես դուրս կդա կխոսի ժողովներում, ի՞նչ եռանգով կաշխատի...

Ակոբը քնած էր անհանդիստ. Հաճախ շփոթվում էր, դեն ձգում վերմակը, ինչ-որ անկատ բառեր ասում: Մարդոն շարունակ նստած էր նրա գլխավերելը. սրտի մորմոքով նա լսում էր Ակոբի զառանցանքն ու մոռալ մտքերի մեջ ընկ-նում. նրա ծանրանալու հետ ինքն էլ էր ծանրանում:

Ակոբն այրվում էր տենդից: Նրան թվում էր, թե մահ-ձակալի տակից վառում են իրեն, հետո իրը վասվում է տու-նը, ու ինքը դուրս է թոշում, ընկնում դաշտերը, սարերը... Անցնում է կանաչներով, սառնորակ աղբյուրների մոտով, բայց հենց մոտենում է որ խմի, ինչ-որ դինված մարդիկ հարձակվում են ու չեն թողնուամ...

Նա առաջ է գնում, հասնում է ձորին: Նայում է ձորին ու զարմանում.—դիմացը բարձրացել է մի հսկա արձան: Ար-ձան է կարծես, բայց մինույն ժամանակ և կենդանի մարդ, — լենինն է իր առաջ, լույսով ողողված: Նա խորաթա-փանց աշք է ածում չորս կողմը:

— Ընկերնե՞ր...

Զայնն արձագանքում է ձորում, անցնում է հեռու, հե-ռու ու հասնում հաղարավոր ընկերներին: Ակոբը տեսնում է՝ ահա ձորում շարվեցին հիդրոկայանի բանվորները՝ լապ-տերները ձեռներին. ահա և ձորամտի կածանների երկայն-քով ձգվեցին լույսի ժապավենները: Ուր էլ նայում էր, որ-քան աշքը կտրում էր, — նույնիսկ աննշան շամփուրների վրա երկում էին լապտերներն ու շարան-շարան գալիս դեպի լենինը...

Նայում է Ակոբը լույսերին ու հանկարծ սթափվում.—չէ որ ինքն էլ պիտի առնի լապտերն ու գնա ընկերների հետ... Չէ որ լենինն այս գիշեր զորատեսի է հրավիրել բանվոր-ներին...

Շտապում է Ակոբը դեպի տուն՝ լապտերի հետեկից, բայց ներս մտնելով տեսնում է կոտրած է լապտերը, մնացել է

միայն երկաթեցանցը... Դառնացած սրտով վերցնում է այդ
մնացորդն ու գնում, միանում շարքերին:

Քայլում է Ակոբը լուաւոր շարքի մեջ, տխուր, գլխի-
կոր: Թվում է նրան, թե բոլո՞րը, բոլո՞րը իրեն են նայում,
որ գնում է կոտրած, խավար լապտերով...

Բայց հանկարծ հնչում է նորից, ցնցում է ձայնը Լենինի-

— Ընկերնե՞ր...—

Ու բոլորը կանգ են առնում տագնապահար:

— Ընկերնե՞ր...

— Շարժերը նեղված են...

«Կույսը մարած է մի տեղ,

«Մրին է տալիս մի տեղ...»:

Իրարանցումը բռնկում է շարքերը.—ո՞վ է, ո՞վ է,—
անցնում են հարցերը խոռվաճույզ ալիքներով.—«Ակոբն է»—
գալիս է պատասխանը հակառակ ալիքներով ու խոսքը հաս-
նում է Լենինին.

— Ընկեր Ակո՞բը...—ջարցնում է նա.—ինչո՞ւ, ինչո՞ւ է
խավար նրա լապտերը...

Ակոբը դուրս է գալիս շարքից ու գնում դեպի Լենինը.—
այս ի՞շպես նա պիտի կանգնի Լենինի պայծառ աշքերի տակ
իր կոտրած, խավար լապտերով...

Մի պահ Ակոբի լեզուն կապվում է, մնում է լուռ, բայց
երբ բարձրացնում է գլուխը, տեսնում է Լենինի դեմքը, նրա
լայն սրտից ինքն էլ սիրտ է առնում...

— Ընկեր Լենին,—ասում է, —գիշերա տուն էի գնում
գործից. ճամփին հարձակվեց դասակարգային թշնամին, վի-
րապորեց ինձ, կոտրեց լապտերս...

— Դասակարգային թշնամի՞ն...—Դեմքը խոժոռում է
Լենինը:

— «Դասակարգային թշնամին...» անցնում է 22ովկը եր-
կար շարքերով:

Ու գալիս են ընկերները, կուտակվում Ակոբի շուրջը:
Այնքան շատ են լույսերը, այնպես այրում են Ակոբին...

Զգում է նաև բոլոր լույսերն իրենն են ու էլ չի տանջվում
կռարած լապտերից...

Ու խոսում է Լենինը մի ուրիշ՝ հրեղեն լեզվով, որի նմա-
նը չի լսել երբեք Ակոբը, խոսքերն ընկնում են գարնան թարմ
որոտների նման ու ցնցում սրտերը...

...Զարթնում է Ակոբն ու զարմանքով նայում իր շուր-
ջը... չկա գիշերվան տեսիլը... Իր առաջ Մարգոն է ժպտում,
ժպտում են պատուհանից արևի առաջին ճառագայթները...
Չէ՛, իր վերքերը վտանգավոր չեն. նա դեռ կապրի ու կաշ-
խատի...



...Ամեն գիշեր, երբ խավարը սև քուշանեցով սփռվում է
ձորում, հիգրոկայանի բանվորական շենքերի մոտ պահակ-
ների նման շարվում են լույսերն ու ժպտում ուրախ ցոլքե-
րով:

Գիշերվա այդ ժամերին ձորամտի լանջերին շարժվում
են լապտերները, տոննելի բանվորները: Նրանց մեջ է զար-
ձյալ Ակոբը՝ իր նոր լապտերը ձեռքին...

ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Լույսը նոր էր բացվել, երբ Սուքիասը զարթնեց գուան
թխկոցից: Նա իսկույն վեր թռավ անկողնից ու շապկանց,
ոտաբորիկ մոտենալով դուանը, հարցրեց.

— Ո՞վ է:

— Ես եմ՝ Երվանդը, — լսվեց դրսից մի խուլ ձայն:

— Մի քիչ սպա՛սիր, էս րոպեիս, — ասաց Սուքիասն ու
դառնալով դեպի թախտը, սկսեց շտապով հագնվել: Մինչ այդ
նրա կինը, մի ակնթարթում վրան ձգելով իր դերիան, հա-
վաքեց անկողինները, թողնելով պառկած երկու երեխաներին:

Սուքիասը բացեց դուռը, եկողը գլուխորհողի նախա-
գահն էր:

— Բարի լո՛ւս, -- ասաց նա, քունը կոտրած մարդու
թավ ու խոհուն ձայնով. — ներողություն կանես, իսկի գալու
ժամանակը չի, բայց գե հանգամանքը պահանջում ա...

— Ոչինչ, ընկեր Երվանդ, համե՛ցեք, նստի՛ր մեր գոր-
ծը ժամանակ-անժամանակ չի հարցնում:

— Գիշերս իմացա, որ եկել եմ. ինչի՞ ուշացար:

— Գե ի՞նչ ասեմ, գիտես էլի քաղաքի բանը — զնում եւ
վարիչի մոտ, ուղարկում է գործավարի մոտ, նա էլ հաշվա-
պահի, վերջն էլ էնպես է դուրս դալիս, որ վաղը պիտի
զնաս. էղակես մի երկու բյուրոկրատի պատճառով գործը
ձգձգվում է, մի թուլթ գրելը դառնում է պառավի հեթիաթ:

— Հիմի դու էն ասա, ցորենն ու տրակտորը գալիս ե՞նք
թե չէ:

— Շուտով կուղարկեն. Հաստատ խոսք եմ առել, որ
մեզ առաջին հերթին տան:

— Բա է՞դ լավ չեղավ... Հանդամանքն էնպես ա, որ
մենք մինչև էսօր պետք ա անպատճառ ստացած լինեինք.
մեզ համար մի օրն էլ ահագին նշանակություն ունի...

— Ի՞նչ է պատահել, — անհանգիստ տոնով հարցրեց
Սուրբիասը:

— Կովակների դաստին նորից սկսել է պրավակացիա-
ներ տարածել...

— Ելի՞...

— Հա, քու գնալուց հետո նրանք նորից շարժվեցին.
«կովակները տարածել, թե վերեկց կարգադրություն է եկել, որ
կոլխոզները ցրեն, բայց տեղական իշխանությունը իբր թե
չի ուզում հրամանը կատարել; Էն էլ են ասել, թե ոչ հաց
կոտանան, ոչ սերմացու. ով խելք ունի, օր առաջ իր գլխի
ճարը տեսնի՝ դուրս գա կոլխոզից...»

— Բա դուք չեի՞ք կարող առաջն առնել:

— Գործը շատ գաղտնի են տարել. բայց գլխավորն էդ
չի. նրանք նպատակ են զրել տապալել գարնանացանը, իսկ
դրա հետ էլ հույս ունեն, որ կքայբայլի կոլխոզը. բանն էս-
պես է եղել—երեք օր առաջ կովակ Մարտինը հրավերք է
սարքել, մթամ երեխի կնունքի պատճառով. կանչել է մի
քանի հոգի էլ մեր տատանվող կոլխոզականներից: Երբ գի-
նին ընկնում է մերոնց կատարները, էն դաստին սկսում է
ուստավարի կծիկի, տուտը բաց անել—ի՞նչ եք,—ասում
են, —քաղցած-ծարավ նստել էդ կոլխոզի անապատում. դուրս
եկեք, փորներդ մի բան տեսնի. չե՞ք իմանում, որ Մոսկվա-
յից կարգադրել են, ցրել կոլխոզները: Մերոնք էլ ասում են,
թե էդ հրամանը մեզ հայտնի չլի. եթե դուրս գանք, աշքի
կընկնենք, մեզ «հակա» կասեն... նրանք էլ թե՝ անունը դուրս
գալ մի՛ք դնի, բայց ցրվեք մի կողմի վրա՝ մթամ աշխատան-
քի եք գնում... Հացի մասին էլ անհոգ կացեք, մենք մեր մեջ
կպահենք ձեզ, միայն թե մեր ասածն անեք... Էսպես խոսք
են կապում, որ երեք օրից հետո՝ այսինքն այս առավոտ,
ցրվեն...

Սուրբիասը զարմացած աշքերը սևեռեց երվանդի վրա,

Հարծես շհավատալով նրա ասածին: Իր կինը՝ քիչ հեռու կանգնած երկյուղով լսում էր խոսակցությունը, կարծելով թե ինչ որ դժբախտություն է պատահել:

— Բա՛ դոք ի՞նչ էիք շինում,—ասաց նա հարձակողական տոնով:

— Ոե ես գործով խեղդված էի, ժամանակ շունեի, մեր տղերքն էլ հենց իմանում են թե կոլխոզի ցուցակը կազմեցին՝ էն է ամեն ինչ պրծավ. էլ շեն մտածում, թե ինչքան խութելիքը պետք է դրստվեն, որ գործը պլուս գա: Թարսի պես բշիջի քարտուղարն էլ քո հետեւց գնաց քաղաք. պատահել շե՞ս:

— Զէ՛, դուրս գալուց մի քիչ առաջ իմացա, որ հիմանդ պառկած է:

— Մի համումանք էլ կա մեշը. էս մեր փուշ թարադամն էլ կուլակների հացին է եղ քում...

— Բարաղամը... ա՛յ ես նրա նամուսին ինչ ասեմ:

— Հա՛, դու հո գիտես, նա աշքը դրել էր Մարտինի աղջկա վրա. ասում են գեղեցիկ ա, համ էլ նրա հորը մի քիչ պահած կրծունք ունի: Հիմի էս մոտերքումս արդեն բարեկամացել, նշանվել է, ու գինու թասի վրա ինչ ասես փշում է իր մասին, հավատացնում է, թե նամակ է դրել կենարոն, շուտով ինձ ու քեզ պետք է հեռացնեն... իսկ էդ բոլորի աստանն էն է, որ նա ընկել է ազդեցության տակ, ուզում է կոլխոզից դուրս գա, բայց որպեսզի աշքի շընկնի ու շտուժի, հարմար է տեսնում ներսից քայլացել...

— Քայլացե՞լ... նա ի՞նչ է, որ էդ բանը գլուխ բերի. միայն ինքն իրեն կարող է քայլացել... մի անգամ արդեն կոսակցությունից հանել են, հետո վերականգնել, հիմի էլ ինչպիս երեսամ է, գլուխը ցավում է, ուզում է բոլորովին հեռացնեն... քո տեղեկությունները ճիշտ ե՞ն...

— Հաստատ:

— Ո՞ւմնից իմացար:

— Կոմերիտ Սամիկից. էդ անպիտանը կարծես հետեւց էլ աշքեր ոմի:

— Ո՞վքեր են մեր կոլխողականներից կովակների ազդեցության տակ:

— Սամիկը յոթ հոգու անուն տվեց, բայց իսկականն էսօր կիմանանք, թե ո՞վքեր են նրանց կողմը. դեռ հայտնի է էլի՛, ովքեր կլինեն. Էն որ ուղում էինք զտել... նրանք են...

— Հը՛մ... էդպե՞ս, ուրեմն դավադրություն են կազմել և ուղում են պայթեցնել մեր կոլխողը...

— Հա՛, էնդուր եմ ասում, որ ուրիշ հանգամանք է... լավ կլիներ, որ հետնհետ բերեիր ցորենն ու տրակտորը. դրանով նրանց պողերը կկոտրեինք...

— Ճիշտ է, ցորենն էս մոմենտին մեծ գործ կարող էր տեսնել. գյուղացիք նեղված են անցյալ տարվա բերքի պատճառով, բայց էլի կասեմ, որ շատ եք աչքաթող արել... ինչ և է—նրանք օգտվել են իմ բացակայությունից և մի նոր փորձ են արել կոլխողը տապալելու, բայց տակը կմնան...

— Ճիմի ի՞նչ կասես, ընկեր Սուրբիաս. Ես առաջարկում եմ գնալ միասին գյուղի ծերին հանդիպել մեր դասալիք կոլխողականներին. առաջինը՝ կիմանանք, թե ո՞վքեր են կուլակների ազդեցության տակ ընկել, վրա երկուսն էլ՝ մեղ տեսնելը նրանց ուշքի կըբերի:

— Էտ է՞ր քո ասելիքը... լավ! չէ՞ր լինի մի ուրիշին ուղարկեինք:

— Չէ՛, մեր գնալն ուրիշ է. գործը պետք է հենց գյխից կարգի բերել. բավական է, որ նրանք իմանան, թե իրենց ֆանգերը մեղ հայտնի են, արդեն կապերը կթուլանան...

— Լա՛վ, թող քո ասածը լինի:

— Դե վեր կաց, գնանք, թե չէ կուշանանք:

Ու միասին դուրս եկան տնից:



Արևի առաջին ճառագայթները խաղում էին գյուղի շըրջակա բլուրների վրա, դարեկան ջերմություն խոստանալով.

Հեռվում՝ լեռների լանջերին, սպիտակին էին տալիս ծերպ-ծերպ ձյուները, որոնք օր-օրի վրա պակասում էին ու լայ-նացնում եկող գարնան սահմանները։ Դրաում զգացվում էր այն մեղմացած, թարմացնող եղանակը, որը հիշեցնում էր աշխատանքի մասին։

Սուքիասն ու Երվանդը արագ քայլելով դիմեցին գեպի գյուղի ծայրը, պտույտ տալով նեղ փողոցներով, որպեսզի կոլխոզականները չնկատեն։ Հեռվից նրանց ծածով հետե-վում էր կոմերիտ Սամվելը։ նա գիշերը «գաղտնիքը» Եր-վանդին հայտնելուց հետո էլ չէր քնել, ու լուսաբացին եկել էր կանգնել նրա տան մոտ, որպեսզի իմանա, թե ի՞նչ է անելու; Երբ Սուքիասն ու Երվանդը կանգ առան խճուղու մոտ, Սամվելն էլ կանգ առավ, թաքնվելով մի տան հետեր։ Մի քանի րոպեից հետո նա մտավ հանդիպակ նեղ փողոցը, դուրս կանչեց իր ընկերոջը, ու ինչ որ հրահանգներ տալով, նորից վերադարձավ իր առաջվա տեղը։

Մոտ մի ժամ սպասելուց հետո Սուքիասն ու Երվանդը, նկատելով հեռվից եկող կոլխոզականներին, շաբժվեցին դի-պի խճուղին։ Սամվելը նույնպես մոտեցավ խճուղուն ու նո-րից թաքնվեց, զգուշությամբ հետևելով իր դիտարանից։

Երբ կոլխոզականները մոտեցան, Սուքիասը ժպտաց։

— Էս է՝ սրանց դավագրությունը. ուղտը ծնեց-ծնեց, մի մուկ ծնեց. ընդամենը հինգ հոգի են։

— Սպասիր, կարելի է էլի են գալիս—ասաց Երվանդն ու մոտ գնալով, առաջինը բարեկց։

— Բարի աջողում,—ասաց նա, աշխատելով, որքան կա-րելի է հանգիստ ձևանալ։

— Բարի լույս,—մեկ-մեկու հետեից ձայն տվին կոլխո-զականները, շկարողանալով ծածկել իրենց շփոթությունը։ Բոլորի մտքով անցավ, թե առաջները կտրել են, որպեսզի պատժեն դասալըության համար։

— Խեր ըլի, էդ ո՞ւր եք գնում։

Ոչ ոք չպատասխանեց. ճնշող լոռության մեջ ամեն մե-

Գը սպասում էր, թե մի ուրիշը կխոսի: Վերջապես լուսվյունը խզեց ամենից հասակավոր Մադաթը:

— Դե ընկեր Սուքիաս, քեզ հայտնի է, որ հացի պակաս ենք... Դնում ենք մշակութենիւ...»

— Բա էդ ո՞նց է, բոլորդ միանգամից իրար եք ընկել:

— Իրար ենք ընկել, որ մեկ-մեկու օդնենք, համ էլ միասին աշխատենք...

— Ուկի խոսքեր ես ասում, Մադաթ, միայն ինչի՝ մեր կոլլսովումն էլ էզպես չես խոսում. կարծեմ, որ մեր կոլլսովն էլ իրար օդնելու, իրար հետ աշխատելու համար է...

Մադաթը կապ ընկավ, փոքր ինչ լռեց ապա փորձեց դուրս գալ անհարմար դրությունից.

— Դե հացը պակաս է, ո՞նց աշխատենք, ընկեր Սուքիաս:

— Դուք ձեր հացը թողնում եք, գնում ուրիշ տեղ հաց մինտրում,—ասաց Սուքիասը.—դա է՝ ձեր խելացի գործը:

— Բա որ էս բոպեիս հացի պակասություն ունենք,—նորից խոսեց Մադաթը:

— Դուք չգիտե՞ք, որ ես գնացել եմ քաղաք հացի ու սերմացվի համար. իսկ եթե շատ նեղված էիք, ինչո՞ւ չէիք զիմում ընկեր Երվանդին. նա մի բան կաներ, մինչև իմ գալը...

Կոլլսողականները գլուխները կախեցին, ճնշվելով Սուքիասի խոսքերից: Առաջ եկավ Երվանդը.

— Իսկ ձեզ հայտնի է՝, որ գարնանացանի աշխատանքները պետք է էգուցվանից սկսենք. չէ՝ որ ձեզ իմ տվել. սա անելու բան է. վեր եք կենում, առանց հայտնելու զնում:

Կոլլսողականները լուռ էին:

Լարված դրությունից նրանց ազատեց Բարաղամը, որը գալիս էր սալլով, իր անոր՝ Մարտինի և նրա կնոջ հետ: Նրանք գնում էին քաղաք բաժինք գնելու իրենց աղջկա համար: Բարաղամը նստել էր խոտի վրա, ոտները կախել, ու

մեծամիտ դիրք տվել իրեն, խոժողած դեմքով ու ցից պահած գլխով:

Նկատելով Սուքիասին ու Երվանդին, նա գլխի ընկալ, որ կոլխողականները ձախորդ վիճակի մեջ են ընկել, ու երեսը դարձրեց մի կողմը, ցուց տալու համար, թէ ինքը ոչ մի կապ չունի նրանց հետ:

— Քնիեր Բարաղամ, խնդրեմ իշնես սայլից, հետո խոսելիք ունեմ, — զիմեց նրան Սուքիասը:

Սայլը կանգ տռավ:

— Քաղաք եմ գնում, շտապ գործ ունեմ, շեմ կարող — ասաց Բարաղամը մեծամիտ տոնով:

— Քնիեր Բարաղամ, որպես կոլխովի նախագահ, պահանջում եմ, որ դու մնաս այստեղ, հակառակ դեպքում ես քեզ կհամարեմ դիղերտիր:

Սուքիասի վճռական տոնից Բարաղամը սթափվեց. նա զգաց, որ հակառակվելու դեպքում գործը կարող է վատ հետևանք ունենալ ու անզոր կատաղությունը մեջը խեղդելով՝ իշավ սայլից: Նա դժկամ մոտեցավ խմբին ու կանգնեց, նրեսը թեքելով մի կողմի վրա: Նրա ինքնասիրությունը խոցվում էր այս պարտությունից, մանավանդ իր անոր, զոնքաշի, ու կոլխողականների առաջ, որոնց մոտ նա միշտ պարծենում էր իր դիրքով ու աղղեցությամբ:

— Դուք կարող եք գնալ, — զիմեց Սուքիասը Բարաղամի անորը, որը սայլը կանգնեցնելով, սպասում էր:

Բարաղամին ետ պահելը ընկճող տպավորություն թողեց կոլխողականների վրա: Նրանք չեին սպասում, թէ նա այդպես կհպատակվի Սուքիասին, ընդհակառակ՝ կարծում էին, թէ նա ոչ միայն ինքը «կճղի» կանցնի, այլ և իրենց էլ կրաշի հետևից:

Մաղաթը նորից դիմեց Սուքիասին խեղճացած ձայնով.

— Բա մեզ բաց չեք թողնելո՞ւ... ախր հացի համար ենք գնում...

Մյուսաները ձայնակցեցին.

— Թողեք գնանք մի ճար անենք...

— Եմեր ընտանիքներին ո՞վ պետք է պահի...

Սուքիասը ձեռով նշան արավ, որ լոեն, ապա երբ ձայները դադարեցին, ասաց.

— Ընկերներ, դուք մտածում եք հացի մասին, բայց պետք է իմանաք, որ ես ձեզանից ավելի եմ մտածում. դուք գիտեք, որ էդ մասին գնացել եմ քաղաք, դիմում արել. խոստացել են մի քանի օրից հետո ուղարկել ցորենն ու արակտորը: Իսկ մինչև ստանալն էլ մի ճար կանենք, բայց հիմի դուք ասեք, ի՞նչ է ձեր արածը. դուք թողնում եք կոլխոզն ամենապատասխանառու մոմենտին, երբ աշքներիս առաջ գարնանացանն է: Մի՛թե ձեզ համար հասկանալի չէ, որ զենք եք դարձել կոլխոզի թշնամիների ձեռքին և ինքներդ եք վնասում ձեր ընդհանուր գործին: Ես չեմ կասկածում, որ շատ շուտով կզգաք ձեր արած սխալը և ինքներդ կդատապարտեք ձեզ...

Սուքիասի խոսքը դեռ չեր վերջացել, երբ խճուղուց լրացեց թմբուկի ձայն: Գյուղից գալիս էին զինվորական երթով կոմերիտների ու պիոներների միացած խոմբը: Նրանց նկատելուն պես, կոմերիտ Սամվելը դուրս եկավ իր թաքստոցից ու արագ քայլերով գնաց միանալու իր ընկերներին:

Մինչ այդ նա սպասում էր անհանգիստ, ու շարունակ կասկածի մեջ էր, թե իր ընկերները կուշանան ու իր «ծրագիրն» էլ չի հաջողվիլ:

Թմբուկի աշխույժ ձայնը քանի մոտենում, ավելի: Էր գրգռում ուշադրությունը: Սուքիասն ակամա լոեց, համակված մի ցնծուն ուրախությամբ, կարծես երկար ամպած օրերից հետո արև էր ծագում: Ժայռուն դեմքերով նա ու երվանդը դիտում էին աշխույժ երթը, մոռացած իրենց գալու նպատակը: Կոլխոզականները երեսը դարձրած, նայում էին ամոթիսած, ասես իրենց թաքուն հանցանքն այժմ պիտի հայտարարվեր թմբուկներով բոլորի առաջ:

Երթը հասնելուն պես կանգ առավ. Սամվելը դուրս եկավ՝ երկու քայլ շարքերից առաջ ու ասաց առույգ ձայնով.

— Ընկեր Սուքիաս և ընկեր Երվանդ, մեր գյուղի կոմե-

ըիտների ու պիոներների միացած կոլեկտիվը որոշել է օդ-
նության դալ կոլխոզի գարնանացանի աշխատանքներին. և
այսօրվանից ձեր տրամադրության տակ է. օգոստիցե՛ք մեր
ուժերից, ինչպես հարմար կդատնեք...

Անակնկալից հուղված՝ Սովորասը մի քանի վայրկյան
դժվարանում էր խոսել:

— Սիրելի ընկերներ, — սկսեց նա, — ողջունում եմ ձեր
գեղեցիկ որոշումը. դուք մեզ ձեռք եք մեկնում այն մոմեն-
տին, երբ կովակներն աշխատում են խլրտում ձգել մեր շար-
քերում. ահա ձեր առաջ կանգնած այս մի քանի ընկերները՝
ականջ դնելով նրանց սոստ լուրերին, ուղում են լքել մեր
գործը հենց գարնանացանի սկզբին: Սրանք այն տատան-
վող տարրերից են, որոնք դեռ երեսը չեն դարձրել անցյալից
ու կանգնել են սոցիալիզմի դռների առաջ մոլորման մեջ.
Ես շփուեմ, կարողացա՞ արդյոք համոզել այս ընկերներին,
որ գառնան իրենց աշխատանքին, բայց ես գիտեմ, որ երբ
լսեցի ձեր ձայնը, լցվեցի մի մեծ ուրախությամբ. և ասի
մտքումս — քանի որ մեր հետեւից ծլում, բարձրանում են այս
շարքերը, ոչ մի դժվարանք չի կարող լինել մեր առաջը...
ընկերնե՛ր, շատ չի անցնի!՝ դուք ինքներդ կփոխարինեք
մեզ. սակայն դուք չեք նմանիլ այս ընկերներին. ձեր հաղ-
թական շարքերը կմտնեն սոցիալիզմի դռներով առանց վա-
րանման, առանց ետ նայելու..., այսօրվանից հայտարարում
եմ գարումը բացված (ասաց նա սխալմամբ, փոխանակ
ասելու «գարնանացանը բացված»), դուք կգնաք խմբովին մեր
մոտիկ արտերը քարերը հավաքելու... կրկին և կրկին ողջուն
ձեր մատադ եռանդին...

— Կեցցե՛... մի՛ շատ պատրաստ, — միաբերան թընդաց-
րեցին շարքերը:

— Այժմ ձեզ եմ դիմում, ընկեր կոլխոզնիկներ, — շարու-
նակեց Սովորասը. — ի՞նչ է ձեր վճիռը. ուղում եք գնա՞լ;
խտացնել մեր թշնամիների շարքերը, թե՞ վերադառնալ ձեր
կոլեկտիվ աշխատանքին:

Կոլխոզականները դարձյալ լուր էին, կաշկանդված

տրամադրության մեջ: Հռությունը խախտեց ծայրին կանգնածը, որը շարունակ կնձռոտած, մոալ դեմքով նայում էր գետնին:

— Այ ժողովուրդ, ի՞նչ եք սուս կացել, — զիմեց նա, երեսը դարձնելով դեպի խոմբը, — բա չե՞ք տեսնում, մեզ խաբել են, որ ապրուստից զցեն ու հետո թշնամու սրտով ուրախանան. մեղ ասում էին, թե Մոսկվայից կարգադրել են՝ կոլխոզները ցրեն. ո՞ւր է էդ հրամանը — տեսնում ե՞ք, սուս են ասել... բա մեր նամուան ի՞նչ կասի, որ մենք գործը թողնենք, զնանք ու էս երեխեքը զան մեր տեղն աշխատեն... չէ, սա անելու բան չի. մենք պետք է շուռ տանք երեսներս, ոնց որ եկել ենք, էնպես էլ ետ զնանք, մեր աշխատանքին կպշենք...

Տատանման շարժումն անցավ խմբի վրայով, բայց ոչ ոք չէր խոսում ամաշելուց: Սուքիասը նորից զիմեց նրանց:

— Դե, ընկերներ, վերջին խոսքն եմ ասում. — ով ուզում է, թող զնա, ով չէ վերադառնա մեղ հետ...

Սամվելը նշան արավ: Կոմերիտ-պիոներական խոմբը զինվորական կարգով երեսը դարձրեց դեպի գլուխն ու քայլեց առաջ: Նրանց հետեւից շարժվեցին կոլխոզականները ամոթխած դեմքերով: Բարաղամը քայլում էր դժվարությամբ, ասես ոտները բռնված էին, իսկ ամենից վերջը զնում էին Սուքիասն ու Երվանդը Սամվելի հետ, շարքերից փոքր ինչ հեռու:

Նորից լսվեց թմբուկի ձայնը. քայլերն ավելի աշխաժացան. երթը համակեց բոլորին հաղթական աշխատանքի դդացումով:

ԲԱՐԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԵ

Աշուն է: Զորագլխին թառած զյուղը վերջացրել է իր դաշտային աշխատանքները: Ամայի կալերում երևում են խոշոր դարմանի մնացորդները, որոնք հետզհետե դժբունում են խոնավությունից, իսկ նրանց շուրջը, տեղ-տեղ կանաչն են տալիս ցորենի ծլած հատիկները: Մանր, մոռայլ ամպերը դալիս, կանգնում են շրջակա բլուրների վրա ու սպառնում ներս խուժել զյուղը: Պարտեզներն օր-օրի վրա դեղնում են, ու տերևները, կարծես վախեցած, անհանգիստ սոսափում են ցրտաշունչ քամիներից:

Գյուղը դատարկվել է տղամարդկանցից. նրանք բոլորն եւ աշխատում են ներքին ձորում, որտեղ արդեն մի տարի էր, ինչ սկսվել էր հիպրոկայանի կառուցումը: Տներում մնացել էին կանայք, երեխաններն ու կաթուկ ծերունիները: Միայն Մուգելն էր, որ չէր մասնակցում այլ աշխատանքին, ու մենակ մնալով՝ տիսրում էր աշնան ծառի նման:

Մուգելը հիսունից անց էր, բայց դեռ առույգ էր ու երիտասարդի նման աշխատունակ: Նա զյուղը եկողի աշքին էր ընկնում իր հին տարազով, որը համառորեն պահպանում էր անխախտ: Նրա շուրջն ինչ ասես հագնում էին, խառնելով զյուղն ու քաղաքը, իսկ Մուգելին միշտ կտեսնեիք իր պապական շալի չուխայով, արխալուղով ու ծանր, մոթալի փափախով: Հագնելիքի մնացած պարագաներն էլ պահպանվում էին իրենց կարգով: Գյուղացիներին գրգռում էր Մուգելի այդ մոլեռանդ ձգտումը դեպի հին տարազը, բայց մանավանդ գրգռում էր այն, որ նրա հագուատը միշտ կարգին էր, միշտ նոր էր թվում: Իրենք քա՞նի շոր էին մաշել նրա շուխայի

Հետ, բայց տես, նրանն ասես մի շաբաթ առաջ լինի կարած։ Նրա խնամութ ու զգուց վերաբերմունքը դեպի իր հագուստն առակ էր դարձել գյուղում։ Նրա մասին պատմում էին, որ միայն թուրքական զորքերից փախչելու օրն էին տեսել շուրեք ցեսոտ։ Երբ մեկին ասում էին, թե շորդ մաշվել է, նա պատասխանում էր.

— Ի՞նչ անեմ, Մուգելի շուխան հո չի, որ անմաշ մնա։

Մանավանդ նա սրբովիյան նման փայտայում էր իր պատվավոր մոթալի փափախը, որը սև էր, կոնաձև, գագաթը փոսած։ Տուն դառնալիս նա հացցնում էր այդ փափախը կարմիր շիր կարած մի տոպրակի մեջ ու այգակո զնում պատի մեջ շինած պահարանի մի առանձին դարակի վրա, որպեսզի շմաշվի ու չփշանա փոշուց։

Երբ Մուգելը զնում էր գլխին այդ փափախը, նա հին «քյաղիսուղայի» պատկառելի տեսք էր ստանում։ Ու իր խորշը, նահապետական դիմագծերը,—մեծ, հիմնավոր քիթը, ծանրախոհ աշքերն ու ակուված ճակատը, առատ բեղն ու ժորուքը, այնպես ներդաշնակում էին փափախի հետ։ Իսկ երբ նա նստում էր գյուղի հավաքատեղն ու զրուցում հասակավոր մարդկանց հետ, այդ բոպեներին թվում էր, թե շուրջը ոչինչ չի փոխվել, թե մի հին նահապետ է խոսում ծանրակշիռ խոսքերով, ու իր սև սաթի տերողորմյայի խոշոր հատիկներն էլ դանդաղ շրխկալով իրար հետեւից, հաստատում են նրա ասածները, կրկնելով։

— Ճշմարիտ է, ճշմարիտ է...

Մուգելի հետ զրուցողները մեծ մասամբ ծերունիներ էին կամ իր հասակի մարդիկ, նրանք իրար լավ էին հասկանում ու իրենց հավանությունը տալիս գլխի շարժումներով։ Նստում էին հին մարդիկ, գովաբանում հին, «աստծու օրհնած» աշխարհն ու քննադատում, ժխտում նորը։ Ու ոչ չէր զարմանում նրանց քննադատությունից, ինչպես չէին գարմանում, որ ծերունիները ձեռնափայտով են ման գալիս ու սիրում են ժամ զնալը։ Գյուղի կոմերիտները, ջահելները, նրանց մոտով անցնելիս քմծիծաղ էին տալիս ու իրար ասում։

— Ծանր արտիլերիան հավաքվել ա...»

Բայց ես մոռացա ասել ամենագլխավորը. — Մուքելը մի սրբություն ուներ, որը պահպանում էր զերմեռանդ կրոնավորի երկուսղածությամբ: Դա մի հին, կաշվեկաղմ աստվածաշունչ էր, որը «առանդություն էր մնացել իր հորից, իսկ նա նվեր էր ստացել մոտակա վանքի մի վարդապետից: Այդ աստվածաշունչը պահպում էր հաստ քաթանի պարկի մեջ, դուլարի նույն դարակի վրա, որտեղ և փափախն էր դրած:»

Ինքը գրագետ վիճելով, Մուքելը երեսմն հրավիրում էր տիրացու Գրիգորին, հյուրասիրում էր նրան, արագ խմացնում. ու կարդալ տալիս զրհեղեղի ու Բարելոնի աշտարակաշինության պատմությունները, ապա վերջը՝ երեք դլուխ՝ սաղմոս: Շատ էր Մուքելի սրտին մոտ գալիս վրեժինդիր պապի — աստծու բարկությունը, նրա պատիճներն ու նրա հանդիսավոր հաշտությունը ծիածանի կամարի նշանով: Ապա սկսում էին ցածր, խորհրդավոր ձայնով երկար ու բարակ դրուցել աստվածաշնչի գանազան պատմությունների շուրջը, աշխատելով նշաններ փնտրել նրանց մեջ ներկա ժամանակի վերաբերմամբ, ու բաժանվում էին իրարից, ավելի հոսանքրված իրենց աստծու հզորության ու վրեժինդրության վրա:

Շատ էր պատվում ու պաշտում իր աստծուն Մուքելը, բայց վատ օրերի էր հանդիպել. — ամեն կողմից քննադատում էին, տատանում նրա ամուր, «անսասան» գահը: Ինքն իր մեջ ուժ չղդալով պաշտպանվելու համար, նա գազազում էր զահելների հարձակումներից ու խախտում իր նահապետական հանդստությունը:

Ահա այդ աստծու պատճառով էր, որ նա թշնամացել էր խորհրդային իշխանության հետ, որովհետև նա այնպես էր մտածում, որ եթե աստված չկա, օրենք էլ չկա. մարդ կարող է սպանել, թալանել, ամեն ինչ անել:

Մնացած բաներում նա եթե բարեկամ չէր, թշնամի էլ չէր և «յոլա էր տանում» իր գործը: Իբրև միջակ գյուղացի նա մեծ զգուշությամբ պահպանում էր միջակության նոր-

ման, ծառի նման քշտելով իր տնտեսության ավելորդ շիվերն ու ճյուղերը, որպեսզի շնկնի կուակների և ուռնացածների շարքը:

Վախենալով, որ կդիպչեն իր աստծուն, կխախտեն իր հավատն ու ծեսերը, նա խուսափում էր ժողովներից, ընտրություններից և առհասարակ «օրենքի» հետ գործ ունենալուց: Ասենք այդ մեկը ժառանգական էր նրա մեջ, Հոր մասին էլ պատմում էին, թե նա էլ խուսափում էր «օրենքի» հետ շփվելուց և իր ցարական հարկերը վճարում էր պատուհանից, որ իբեն չկպչին ու մի շառ չգցեն վրան:

Բայց այս ընթացքը տանելի էր, երբ հարցը վերաբերվում էր ժողովներին, ընտրություններին. իսկ այժմ գյուղի բոլոր տղամարդիկ աշխատում են հիդրոկայանում, փող են տուն բերում, «պայուններ» ստանում, իսկ ինքը, Մուքե՞լը... նա մնացել է մենակ ու տիրում է աշնան ծառի նման, և որ գլխավորն է՝ նա տատանվում է...

Նա ինքն իբեն զբաղեցնում էր, որպեսզի խլացնի իր մտքերը, բայց իզուր, տանը փսխում էր զանազան մանրմունք գործերի շուրջը—գոմն էր մաքրում, սայլի կոտրած ճաղը փոխում, շտկում ցանկապատը, հետո նստում էր կնոջ մոտ, ճախարակի առաջ, բամբասում էր մեծ տղային, որը քաղաքում բանվոր էր, ապա դուրս էր գալիս փողոց ու հանդիպելով հատ ու կենտ ծերուկներին, զրուցում էր նրանց հետ, հորանջում ու վերադառնում տուն, երբ ստամոքսը զգացնել էր տալիս ուտելու ժամանակը: Ու որտեղ էլ լիներ, մտքում շարունակ որոճում էր այն միտրը, թե ահա, բոլորն էլ աշխատում են ձորում, փող են տուն բերում, իսկ ինքը մնացել է տանը: Ինչո՞ւ. է նա այդպես զատկում մյուս գյուղացիներից... նրա մեջ ինչ-որ մի կասկած կա, որ եթե բանվոր գրվի, մի պատուհաս կգա գլխին, կկորցնի իր հին, պապերից սրբագրծված աստծոն...

Բայց այժմ նա տուն է վերադառնում փողոցից, դանդաղ քայլում է ու նորից տատանվում.—«Հը», դնա՞մ, թե չդնամ... առաջինը՝ փողը քաղցր բան ա, վրա երկուաը՝ էս-

քան մարդ բանում ա ձորում, բա ես ի՞նչ եմ... ես էլ նրանցից մեկը... ոչով չի ասում, թե էնտեղ նեղություն են տալիս...»

Վերջապես...

Մուքելն էլ բանվոր է գրվել Հիդրոկայանում և աշխատում է խիստ կանոնավոր, դեռ ու դեն շընկնելով, վեճի ըրոնվելով ընկերների հետ:

Ընդհանուր եռուղեռը, աշխատանքի լարված թափը վարակում է Մուքելին, արագացնում նրա ձեռն ու ոտքը: Չորս կողմը մարդ ու մեքենա իրար խառնված մի եռանդուն ժխոր էին առաջացնում: Վերև ու ներքև մրցյունների նման վխտում էին բանվորները, քանդում հողը, ձեռնասալակներով կրում շինանյութերը. վագոնիկներն անընդհատ բարձրանում ցածրանում էին ոելսերի վրայով: Երեկոն Մուքելը բոպեապես կանգ էր առնում շունչը տեղը բերելու համար, նայում էր շուրջը սփոված խառնիճաղանձ բազմության վրա ու զարմացած բացականշում.

— Պա՞զ, էսքան էլ մարդ, էսքան էլ մեծ գո՞րծ...

Միայն մի բան ծանրություն էր տալիս նրա մտքին.— ի՞նչպես պետք է հիդրոկայանը ջրից լուց ստանար. որքան էլ նա հարց ու փորձ էր անում սրան ու նրան, էլի չէր կարողանում լիովին հասկանա, ու դրանից թերահավատում էր, մտածելով,—«Խելքի բան չի, ջրիցը միս չի դուրս գալ...»

Բայց շատ շանցած պատահեց այն, ինչ կարող էր պատահել միայն Մուքելին. մի օր գործից հետո եկան իմաց արին, թե ժողով է լինելու: Մուքելն ըստ իր սովորության, ուղում էր շգնալ, բայց իր համագյուղացի ջահել բանվորները պինդեցին, թե անպատճառ պետք է բոլորը ներկա լինեն: Մուքելն ակամա ենթարկվեց, նրանք էլ տարան նստեցրին ակոմբի առաջին շարքում, լավ իմանալով, որ բազմամարդ ժողովից Մուքելը նահանջելու տեղ չի ունենալ:

Մի քառորդ ժամ անց ժողովը սկսվեց, բայց ո՞վ զարմանք, կենարոնից հկած մի ընկեր հակակրոնական մի դասխոսություն արաւի...

Մուգելը նստած էր մոտիկ ու պարզ լսում էր ամեն ինչ—վայ էն լսելուն. ամեն խոսքի վրա մերթ կարմրում էր, մերթ սփրինում. ինքն իրեն կոծում էր, անիծում բախտը, ուզում էր դուրս գալ, բայց խիտ կանգնած ամբոխի միջով հնար շկար:

Ու մնաց Մուգելը մինչև վերջը, և գուրս եկավ բոլորի հետ, քրտնքում կորած, այլայլված ու գնաց դեպի գյուղը շէկլված եղի նման խուսափելով մարդկանցից, անիծելով դասախոսին:

Ու էն գնալն էր, որ գնաց, էլ շվերադարձավ իր աշխատանքին, նույնիսկ աշխատավարձն ստացավ ուրիշի միջոցով: Հիդրոկայանը մթնեց նրա աշքերին.—«Ուսս կոտրեր՝ ցայի էդ Բաբելոնի աշտարակը շինելու»,—կրկնում էր նա հաճախ ու վրա տալիս իր թունդ անեծքները:



Մի շաբաթ էր, Մուգելը լուռ ու մթագնած էր: Ժամերով նըստած զրուցում էր իր տերողորմյայի հետ: Նա կուզեր հիշողությունից հանել իր լսած դասախոսությունը, ազատվել նրանից, բայց լինդհակառակն էր լինում,—հակակրոնական մտքերը մեկիկ-մեկիկ հանկարծ գալիս էին ու աներես հարցնում— «բա թե որ աստված կա, սրան ի՞նչ կասես...» Ու նա ակամայից սկսում էր որոճալ այդ միտքը, ու վերջը զգալով, որ անզոր է հերքել, հերսոտում էր, կորցնում էր հավասարակշռությունը: Մտազբաղ ու ցրված դրության մեջ՝ նա նույնիսկ սկսել էր աշքաթող անել իր հագուստը. նրա ուսերին երբեմն նկատվում էին դարմանի հետքեր, շտերն էլ առաջիւ նման շէին փայլում:

Մեծ տղայի գալն ուշքի բերեց նրան, մոռացության տառվ իր ճնշող մտքերը, բայց դա էլ երկար շտերն էրեկոյան

թեյից հետո, Պետրոսը, մտերմական ու կիսահեղնական ժպիտն երեսին, ակսեց հարց ու փորձ անել հորը.

— Հայրիկ, էդ ո՞նց է քո բանը գլուխ չի եկել հիդրոկայանում...

— Ուստի կոտրեր, չգնայի էն բրիշակը, — ասաց Մուզելը մոայլ տոնով:

— Ի՞նչպես թե... էսքան ժողովուրդը բանում է, ի՞նչ պակաս բան է:

— Հա՛, էսքան մարդ են հվաքել, որ ճամփիցը հանեն, անաստված դարձնեն. բայց թող էդ անողները լավ իմանան, որ իրանց արարմունքն անպատիժ չի մնալ. Հին ժամանակ էւ, երբ Բաբելոնի աշտարակը սկսեցին շինել, ուզում էին գուխը մինչև երկինք դուրս բերել, բայց աստված իմացավ մարդկանց ծուռ միտքը, լեզուները խառնեց ու աշտարակը փուլ եկավ: Հիմի էլ սրանք եկել են ասում, թե աստված շկա, մենք մեր հնարքով պետք է ջրիցը լիս հանենք. «իսկ աստված լսում է էդ բոլորն ու սպասում», որ մի օր իրանն ասի, որ պատիժը տա...

— Եփի քո Բաբելոնի աշտարակը չես մոռացե՞ւ, էդ հերիաթները հնարել են հոգեղորականները ժողովրդին խաբելու համար... դու աշքդ բաց արա. տես, թե մարդն իր գիտությամբ, իր աշխատանքով ինչե՞ր է ստեղծում...

— Բա ջրիցը լիս դուրս կգա՞... տե՞ր, մեղա քեզ...

— Մենակ էս մեր հիդրոկայանը չո չի. քանի՞ տեղ են շինել, կարող ես պնալ քո աշքով տեսնել:

— Ի՞նչ տեսնեմ, հրեն մեր գեղումն էլ սներ են տնկել, մթամ էլեկտրականի համար, կրերեն սների մեջ նավթ կածին, վերեկի ծերից կլառեն, հետո կասեն, թե ջրիցը լիս ենք հանել. դա սուտ բան է, աշքակապություն է:

Պետրոսը չկարողացավ ծիծաղը պահել:

— Դե լավ, հայրիկ, թե որ էդպես չես հավատում, արի պայման կապենք. ես կինդրեմ ուսուցչին, որ քեզ հետ պարապի, համ գրագիտություն սովորեցնի, համ էլ ամեն բան բացատրի, ինչ որ հարկավոր է. հետո էլ, երբ հիդրոկայանը

վերջացնեն, լույսը վառեն, դու էլ համոզվես իմ ասածին, քո
պարտքը լինի, որ դուքս գաս, ժողովի առաջ հայտննս, որ
սխալվել ես:

Անսպասելի առաջարկից Մուքելը հանկարծակի եկալ
ու դեմքը խոժոռեց, ոչինչ շպատախանելով:

Բավական երկար լուսթյունից հետո նա ասաց, հշտամ-
բանքի ձևով գլուխը շարժելով.

— Ուրեմն դու էլ էն անօրեն-անստվածների հետ
միացել ե՞ս, մի ասա տեսնեմ, բա ո՞վ է ստեղծել երկինքն
ու երկիր...

Ընդհատված վեճը նորից սկսվեց. խոսք խոսքի վրա
բռնկվեց հայր ու որդու հին կրոնական կոփիքը: Հետզհետե
տաքանալով, նրանք բարձրացնում էին ձայները, գոավելով
հարեւանների ուշաղրությունը և շփոթեցնելով Մուքելի կնկան,
որն այժմ միայն ցանկանում էր իր որդու կարուն առնել:
Նա մեկ-մեկ միջամտում էր, որպեսզի դադարեցնի վեճը,
բայց ոչ մի աղփեցություն չէր անում:

— Հայրիկ, ես քեզ բան եմ ասում, դու աշքդ բաց արա-
էդ տերտեր, վարդապետ, եպիսկոպոս ա՛ստված, ա՛ստված
են կանչում ժողովրդին խաբելու համար. Հարուստներն
աղքատների արյունը ծծում են, հոգևորականներն էլ օրհնում
են, որ իրենք էլ մասն ստանան...

Բայց Պետրոսն իր գլխավոր զենքը դեռ պահում էր
վերջին:

— Մի խաբերա էլ մեր տեր-Մաթեոսն է, ա՞յ, թե չես
հավատում, կարդամ նրա գրած հրաժարականը...

Այս ասելով նա հանեց ծոցից լրադիրն ու կարդաց.

«Հարգելի հայրենակիցներ,

«Երեսուն տարի շարունակ քահանայություն անելով, ես
խաբել եմ ձեզ սուս առասպելներով ու հեքիաթներով ու
որանցով շահագործել եմ ձեզ: Այժմ, զղալով և զդալով իմ
միասակար գործունեությունը, խնդրում եմ ներողամիտ լի-
նեք և մոռացության տալով իմ անցյալը, թույլ տաք ինձ

այսուհետև ապրել ճակատիս քրտինքով և արդար վաստակով: Այսօրվանից են հրաժարվում եմ քահանայությունից:

Նախկին տեր-Մատթեոս Դանելլան»:

Հարվածն այնքան ապշեցնող էր, որ մի բոպե Մուքելին թվաց, թէ Փետրոսը հնարում է, բայց ի՞նչ... լրագիրը ձեռին էր, ել ի՞նչ հնարել...

— Թո՛ւ քու նամուսին...—ասաց նա ու դեն շպրտեց իր ձեռքի տերողորմյան, որ նա անում էր իր կյանքի ամենաաշխազված բոպեներին:

Նա փոքր ինչ լոեց, ապա վեր կացավ տեղից.

— Լա՛վ, Փետրոս, քու պայմանին համաձայն ևմ. թող էղակն լինի, ոնց որ ասեցիր, կամ դեսը, կամ դենը... ա՛յ, ձեռք ևմ տալիս քեզ...

Փետրոսը լրջություն տալով դեմքին, մեկնեց իր ձեռքը:

Մի տարի էլ անցավ, անցավ ձմեռն ու եկավ թարմ ու պայծառ գարունն իր բուրալից կանաչներով, ծաղիկներով: Նոր ծաղիկների հետ նոր լուրեր էին գալիս, թե հիդրոկայանը ավարտվելու է և մայիսի մեկին պետք է լինի նրա բացումը: Փանի մոտենում էր ժամանակը, Մուքելն ավելի էր անհանգուտանում, հիշելով Փետրոսի հետ կապած պայմանը: Բայց ի՞նչ... Մուքելն իր խոսքի տերն էր, նա պետք է աներ այն, ինչ որ խոստացել էր...

Այո, Մուքելն իր խոսքը կկատարի, միայն նա անհանգուտանում է, թէ ո՞նց պետք է դուրս գա ժողովրդի առաջ, ու հայտարարի իր օնոր հավատի» մասին... այդ է նրա զըժվարությունը: Խսկ որ ինքն առաջվա Մուքելը չի, ի՞նչ կատած կարող է լինել. իր առաջվա սրբությունը—աստվածաշունչը փոշակալել է արդեն տոլաբում, ու ինքը խսկի ձեռքը չի տալիս, և ոչ էլ թողնում է, որ տանեցիք ձեռ տան... նաև արդեն օտար էր իրեն համար:

Փոխվել է Մուքելը ու ինքն էլ է զարմանում, թե ի՞նչ՝
պես եղավ այս բոլորը, ինչպես հետզհետե անցնող օրերի
հետ պոկվեց հին հավատից։ Ու պարզեց իր մտքերը, որոնք
այնպես խառնվեցին տեր-Մատթեոսի հրաժարականից հետո։
Բայց նա մինչև այժմ էլ չի մոռանում «խարերա» տերտերին,
չի կարողանում ազատվել իր հերսից. ամեն անդամ նրան
հիշելիս միշտ կրկնում է—«Յուհ քո նամուախն...» նրա ինք-
նասիրությունը վառվում է, որ տերտերն իրեն էլ ուրիշների
հետ խաբել է երեսուն տարվա ընթացքում...

Բայց ես դարձյալ մոռացա ամենազլիսավորը. — Մուքելը
պարապում էր ուսուցի հետ այն ժամանակից, երբ նա
պայման կապեց իր որդու՝ Պետրոսի հետ։ Այժմ փոքրիկ
գրքեր է կարդում, երկար մտածելով ամեն երեսի վրա։ Հա-
մարյա ամեն օր գնում է ուսուցի մոտ, զրոցում նրա հետ,
կարդում դասը, լսում նրա բացատրություններն ու նոր բեռ-
նով ծանրացած վերադառնում էր տուն, ինքն իրեն ասելով—
այս, թե էս բանն առաջ կլիներ...

Փոխվել է Մուքելը... Այժմ ամեն անդամ իր տերողոր-
մյայի հետ զրուցելիս միշտ ասում էր մտքում.

— Այս տղա, էսպես էլ բա՞ն... էլեկտրականը՝ դու մի
ասիլ իմ տերողորմյայի մեջ է եղել, ես անտեղյակ...

Վերջապես եկավ հիդրոկայանի բացման օրը... Ահա
Մուքելը կանգնած է գյուղի հրապարակում, բազմության
կենտրոնում, էլեկտրական սյունի մոտ... միտինդն արդեն
վերջանալու մոտ է, և գյուղիսորհրդի նախադահը վերջին
ձայնը տալիս է Մուքելին...

Նա մոտենում է նախադահին, բարձրանում է տախտա-
կամածի վրա, ձեռքին բռնած իր աստվածաշունչը:

Հանկարծ երեկոյան մթնշաղը ցնդվում է էլեկտրական-
լուսից ու ժողովուրդու միաբերան կանչում վ. ցնծագին.

— Կեցցի՝ հնչում էր երկար ու կրկնվում նորից ու
նորից։

Երբ նախադահը հանդարտեցնում է ժողովականներին,

բոլորի ուշադրությունն սկսում է կենտրոնանալ Մուքելք վրա:

— Այ ժողովուրդ, — ասում է նա, — էսօր մեզ Համար մեծ աշքալիսեք է, մեծ ուրախություն. ես էլ ձեզ հետ ուրախանում եմ, բայց երանի մեր ջահելներին, նրանք Հենց տակից ապրելու են էս լուսավոր կյանքով: Ասում եմ ուրախանում եմ, բայց սրտիս վրա մի բան կա ծանրացած, որ ուզում եմ ձեզ Հայտնի անել. ես շատ նմ մեղանչել, շատ եմ վատ խոսել, թե էս հիդրոկայանն անստվածների գործ ա, ու էնպես էի մտածում, թե աստված կապտժի ու կկործանի նրանց շենքը, ինչպես որ կործանեց Բարելոնի աշտարակը: Այ ժողովուրդ, շատ ժամանակ իմ աշքերը խավար էին, եռ չէի հասկանում, որ էս նորի լիսը ոչ թե սուրբերից ու աստծուց է, այլ մարդու գիտության, նրա հոմարի, աշխատանքի գործ է. ես էս բոլոր պայծառ բաները սուստ ու կեղծ էի համարում, իսկ էս աստվածաշունչը, ճշմարիտ: Ճիմի բերել եմ հետս մեր հին օրենքի, մեր խավար ժամանակի գիրքը — աստվածաշունչը, բերել եմ էս մոլորեցնող գիրքն ու ձեր առաջ դնում եմ էլեկտրականի տակ:

Այս ասելով նա աստվածաշունչը տարավ ներքև ու դրեց այունի տակ:

Ամբողջ ժողովուրդը մնացել էր ապշած Մուքելի խոսքերից ու մանավանդ այդ վերջին վարժումքից:

Պետրոսը կանգնած էր հոր հետևն ու հրճվում էր. կարծես ինքն էլ մի ուրիշ հիդրոկայան էր կառուցել իր հոր սրբառում, իսկ հրապարակորեն հայտաբերելով նրա նոր համոզմութը, նույնպիսի հիդրոկայաններ պիտի կառուցվեին և շատերի սրտում...

ՄՈԼԱԽՈՏԸ

Վազ առավոտից կոլխողականները սկսել էին քաղջանը ճակնդեղի ու ծխախոտի ցանքերում։ Բնդարձակ դաշտում՝ սկսած կոլխողի մեծ այգուց, սփովել էին մի քանի տասնյակ տղամարդիկ ու կանացք և մաքրում էին մատաղ ծիլերը մոլախոտից։ Օրը պարզ էր ու վճիռ, պայծառ արել լիովի բացել էր հորիզոնը, երկնքի ջինջ կապուաթը՝ ասես նորոգված ու թարմացած բնության հետ, գրավում էր աչքը, տանում հեռուներն ու իշեցնում կանաչազարդ սարերի վրա, մեղմ եղերելով նրանց երկարաձիգ գագաթները։

Պեարոսի մասն ընկել էր այգու մեջ, մի մեծ բացատում, որի երկու կողմից պտղառու ծառեր էին։ Գլխին մի աղլուխ փաթաթած՝ կուցած մարդի վրա, նա խնամքով քաղում էր մոլախոտերը ու ծցում առվափոսը, որտեղ նրանք թառամում էին, ուշաթափ լինում արեի հուրքից։

Առավոտյան հովի հետպահետե տեղի էր տալիս կհսօրվա տապին, տաքացած հողն ալիքում էր ներքեցից իր տոթը, ծանրացնում շունչը, ու քրտինք տալիս ճակատին։ արել խայթում էր կորացած մեջքը, երբեմն միշայն զիջելով սարիք եկած հովին, որը թերև անցնում էր իր ախորժելի շնչով ու գանդաղում զիմացի ծառերի վրա։ Դարավոր ընկուղենին ծանրախոռն, խոզ աղմկում էր իր խոշոր տերեներով, կեռաւսենին բացվում, կարմրին էր տալիս իր նորանաս պտուղներով, իսկ սալորենիների մանրիկ տերեներն արագաշարժ պար էին բռնում։

Պետրոս սկսել էր աշխատանքն արտի ծայրից ու

դնում էր դեպի ներքեւ: Մերթ ընդ մերթ, երբ նրա մեջքը բողոքում էր երկար ճկվելուց, ու արևի տապից, նա կանգնում էր, ձգվում ու հանգիստ տալիս մկաններին: Այդ րոպեներին այլու ծառերի խիտ ստվերները գայթակղիշ գրավությամբ կանչում էին, բայց նրա հայացքը դառնում էր դեպի ներքեւ, ըրտեղ երեսում էր Արփիկի զիկ կարմրած դիմքը՝ սպիտակ գլխաշորի մեջ: Կանգնում էր Պետրոսը, ամեն անգամ աշբով շափում իրենց բաժանող տարածությունն ու տառմ:

— Հա՛, քեզ մատաղ, հա՛, մոտենում ենք իրար...

Նա ասում էր ինքն իրեն, հազիվ լսելի ձայնով, բայց կասկածով ետ էր նայում,—վինի՞ թե որևէ մեկը լսեց իր ասածը: Երբեմն նա փոքր ինչ ձգում էր իր հանգիստը, ավելի երկար էր նայում, բայց երբ Արփիկը, գգալով իր վրա հառած հայացքը, ինքն էլ էր նայում, Պետրոսն իսկուն կունում էր նորից ու շարունակում պոկոտել անթիվ մանրիկ մոլախոստերը: Արփիկի հայացքն իր մեջ առնելով, նա էլ չէր նկատում շոգն ու տորին ու կրկնապատկում էր նուանդը, ախորժելի թեթևություն գգալով ամեն մի վերջացրած, քաղանած մարդից հետո:

Բայց ահա մոտենում է դադարի ժամը. բոլորն զգում են այդ րոպեները, կարծես մեկն անտես 22նշում է նրանց ականջին ու հանգստի հրավիրում: Վերջապես ճաշ բերազը երկաց բացատի ծայրին: Մեկ-մեկու հետեւց բոլորը թողին կործն ու խմբվեցին մեծ ընկույզենու տակ: Աշխատանքի լուսվունը խախտվեց: Սրախոսելով, ծիծաղելով, խմբակը հստեց ճաշի:

Ճաշից հետո կոլխոզականները ցրվեցին այգում: Ընկույզինու տակ մնաց միայն Արփիկը: Պետրոսը թեպետ մեծ պինու տակ մնաց միայն Արփիկը:

Քիչ անց դիմացի այգուց դուրս եկավ Արփիկի մորաքույրը՝ Հերիքնազը, ու աշ ու ճախ աշք ածելով, մոտեցավ նրան:

— Բարով, Արփիկ շան, ո՞նց ես:

— Լավ եմ, — ասաց Արփիկը՝ փորձող հայացք ձգելով
նրա վրա:

— Եկել էի մեր այդին, ասի մի գնամ տեսնեմ... ի՞նչի
շնու երևում:

— Ժամանակ չկա, մոքիր. նստի՛ր:

Հերիքնազը նստեց կանաչ խոտի վրա՝ Արփիկի մստ, ու
ձեռքերով կղակը բռնած փոքր ինչ լոեց տատանման մեջ,
ապա սկսեց փաղաքշող ձայնով.

— Արփիկ ջան, շարշարվում ես էլի՛. բա սա քու
բանն է»:

— Ինչի՞ չի իմ բանը. ուրիշներից ինչո՞վ եմ պակաս
կամ ալիկի:

— Է՛հ, ասում ես էլի... դու էլ գիդաս, Արփիկ, քու
մոր տեղն եմ... որ տեսա քեզ էստեղ մենակ նստած սրբու
փուլ եկավ...

— Ինչի՞ եմ մենակ, բա էսքան ընկերներն ի՞նչ են:

— Չէ՛, իմ ասածն ուրիշ է... բա քու բանը ո՞նց պետք
է լինի Արփիկ ջան, էլի պետք է բաժանված մնա՞ս...

— Նոր ես իմանո՞ւմ, որ վերջացած պրծած է. ասելու
ի՞նչ է:

— Դե լավ չի էլի՛...

— Բա քու լավը ո՞րն է. ուզում էս էլի գնամ էն տավա-
րէ ցափի մո՞ւ:

— Արփիկ ջան, բա ո՞նց անենք, տղամարդ է, էսպես
էլ կլինի, էնպես էլ...

— Ինչի՞ պետք է կնիկը համբերի, — վրա պրծավ զայ-
րացած Արփիկը. — Ես նրա ճորտն ե՞մ. զոռով մարդու են
տվել, Հիմի խելքի եմ եկել, չեմ. ուզում. ինձ հետ ապրող
մարդը պետք է իմ ընկերը լինի, թե չէ իսկի մարդ շեմ ուզում:

— Բա առանց տղամարդու, առանց տեր ու տիրականի-
ո՞նց կլինի. տղամարդու ոտի ցեխն էլ տանը զարդ առ...

— Էդ հին խրատները քեզ համար պահի. առաջդ երե-
խա շեմ, ես գիդամ, ո՞վ է քեզ զրկել. նա հենց ինքը տեղովիք
մին ոտի ցեխն է... դու լավ կանես, ձեռք քաշես. մի անգա-

մից իմացիր, որ կուժը կոտրել, փշրվել է, էլ գոծկել չի լինիլ:

— Դե լավ, լավ, սիրող շուռ մի բերիլ. խոսք է էլի, ասում եմ. ի՞նչ անեմ, սիրոս ցավում է:

— Այ, վերջին անգամն եմ ասում, մոքիր, գործի զադսով հաստատված, պրծած է. թե որ մեկ էլ խոսք ես գցել դրա մասին, բերանիցս կծու խոսքեր կլսես:

— Լավ, որ սիրող նեղանում է, էլ բան չեմ ասիլ. որ որ վերջացած է, էլ ի՞նչ խոսք. օրենքի բան է...

Հերիքնազը լսում է ու նայում շորս կողմը սպասողական դրության մեջ. ապա՝ կարծես ինչ-որ հիշելով, հարցնում է.

— Աղջի, Արփիկ, ասում են սիրող ուրիշի վրա է, դրուտ է...

— Էլի բողջեղ բաց արի՞ր,—զայրացավ նորից Արփիկը, —լավ կանես զրանից շխոսես. էդ բամբասողները ինչ ուզում են թող կոկոան. ես ուշք դարձնողը չեմ—ես օշովի հաշիվ շունիմ տալու:

— Դե, Արփիկ զան, կարելի է մեծացել եմ, խելքից ընկել... ի՞նչ անեմ, զիմանում չեմ. տեսնում եմ քեզ պես զահել, սիրուն կնիկն առանցի մարդի, առանցի օշախի... իմ սիրուք ճո քա՞՞ր շի...

Արփիկը լոեց ու դժգոհ նայում էր գետնին: Հերիքնազը զղայնորեն սղմում էր կզակը, նորից զգուշությամբ աշք ածելով շորս կողմը: Զանցած մի քանի րոպե դիմացի այգուց դուրս եկավ խունացած պիշակով մի գյուղացի, ու փոքր ինչ մոտենալով կանգ առամեւ:

Նրա դեղնած, զղուտ գեմքի ամեն մի, կետից գազազած մարդ էր նայում.—զազազած էին փոս ընկած կարմրած աշբերը, ծամածուած բերանը, ալեխառն, ավելանման մորուքը

Հերիքնազը նրան նկատելուն պես վեր կացավ տեղից, իսկ Արփիկը մնաց նստած, երեսը դարձնելով մի կողմը:

— Բարի աջողում,—ասաց Սարիբեկը (այսպես էր նրա անունը) դիմելով Հերիքնազին:

Հերիքնազը պատասխանեց զլխի շարժումով:

— Բա դու մեծ կնիկ ես, Հերիքնազ, մոր տեղն ես, կարում չե՞ս խրատես էդ կնկան, որ նամուաը հավաքի տուն գա...

— Ի՞նչ ես փշի նման փեշից կպել, — վրա պրծալ Արփիկը, — քեզ հաղար անդամ ասել եմ, որ բաժանվել էեմ օրենքով...

— Բա էս օրենք է՞, որ կնիկարմատը վեր կենա՝ տուն ու տեղ թողնի, թե բաժանվում եմ մարդուց...

— Բա ո՞րն է օրենքը, — որ զոռով մարդու տան, ուշունցի ու ծեծի փայ անհ՞ն, գնա քու ուղած կնիկը ճարի, ես քու ընկերը չեմ. դու ձայնազուրի ես, ես աշխատավոր...

— Էղակես է, հա՞մ, մենք մարդաշիլ չե՞նք. մի ասա տեսնեմ, ո՞վ է էդ օրենքն անողը, — իմ տանը նոքար էր, հիմի մեծ մարդ է դառել, ինձ ձայնից զրկում է՞:

— Ես քեզ հետ զլուխ շունեմ, ինձ հանգիստ թող:

Պետրոսը հեռվից դիտում էր այս տեսարանը. նկատելով, որ ձայները բարձրանում են, նա մոտ եկավ այնքան, որ լսելի լիներ խոսակցությունը ու ականջը պահելով՝ նրանց կողմը, այնպես ձեւացրեց, իբր թե դիտում է մարդերը: Տակտիկական նկատառումներով նա չըր ուզում խառնվել խոսակցությանը, բայց ուզում էր պաշտպանել Արփիկին, եթե Սարիբեկը միրավորեր նրան կամ բռնություն գործ դներ:

Սարիբեկը նկատելով Պետրոսին, ավելի մոազլեց, ու սիրու վախ ընկած՝ ուղեց վերջ տալ խոսակցությանը:

— Բա հիմի ասելու ի՞նչ է, — դիմեց նա նորից:

— Էն է, որ քու ճամփեղ գնաս, ինձանից ձեռք բաշես:

— Լավ, ես հո գիտեմ քեզ զլխից հանողն ո՞վ է, — ասաց նա, խեթ նայելով Պետրոսի կողմը. — էդ էլ չի մնալ քեզ...

— Ինձ օշով հրամայող չկա... ես եմ իմ զլխի տերը. ինձ սովորեցնողը սովետական իշխանությունն ա, գնա նրա հետ խոսի. ինձ հանգիստ թող, թե չէ ժողովատարան կը դնամ. — զրա համար մեծ պատիժ կա...

— Հը՞մ, սպառնալիք ես տալի՞ս... դե կտեսնես սրանից ետը...

— Ինչ ուզում ես արա. քեզանից վախսդ չկա... որու ինձ համար ոնց որ էն մոլախոտը, քաղի ու գեն դցի...»

Սարիբեկի դեմքը ծամածովեց կատաղությունից. նա ուզում էր թունդ հայնոյանք թափել Արփիկի գլխին, բայց Պետրոսի ներկայությունը կաշկանդեց նրան:

— Հա՞յ ես...—մոմուց նա ատամները կրծտացնելով ու երեսը գարձնելով, հեռացավ, շեղելով ճամփեն, դիպչելով ծառերի ճյուղերին, ու ընկնելով առվափնիքը:

Պետրոսը նկատելով նրա նահանջը, հանդիսաւ ժպտում էր հետեից:

Արփիկը վեր կացավ տեղից, թափ տվեց փեշերը, ուղղեց զլսաշորը, ու նկատեց Պետրոսին: Նրանց հայացքները վայրկյանարար իրար առան թեթև ժպիտով:

«Է՞հ, մարդ էլ կա, մարդ էլք,—անցավ Արփիկի մտքով. նրա մեջ ցանկություն եկավ մոտենալ Պետրոսին, ատել, որ նրան շատ է սիրում, բայց այդ անկարելի էր... պետք էր համբերել մինչև որ Պետրոսը բացի խոսքը»:

Արտի ծայրից նշան տվին կարմիր դրոշակով: Դադարը վերջացավ ու նորից սկսվեց քաղհանը: Հերիքնազո՞ր մնաս բարով ասելով, հեռացավ, իսկ կոլխոզի կանայք շրջապատեցին Արփիկին:



Իրիկնապահի արևը սահում, անցնում էր, անցնում աշխատավորների վրայով. լեռների հովն իր առատ շնչով ուշքի էր բերում հոգնած մարմինները. բացատի մի կողմից, ծառերի երկար ստվերները թեք կտրում էին մարդերն ու գնոսմ, դիպչում դիմացի ցանկապատին:

Պետրոսն ու Արփիկն արդեն հասել էին իրար ու միասին աշխատում էին վերջին մարդում, զուգընթաց գնալով՝ մեկն աջ, մյուաը ձախ կողմից: Երկուան էլ հաղիվ էին զսպում իրենց ուրախությունը, որ միասին են՝ այսպես մոտիկ, ու կարող են խռուել մինչև մարդի վերջանալը:

«ԱՇՅ, Հիմա կասեմ», — անցնում էր Պետրոսի մտքով, բայց նա խոսում էր բոլորովին այլ բաներից.

— Արփիկ, էսօր արտաժամ ենք, կարող էինք մի մարդ էլ քաղհանել:

— Դե շատ զռուելն էլ լավ չի. էգուցվա համար էլ պիտի ուժ պահել...

Պետրոսը լուսմ է մի պահ, հետո ասում.

— Էդ քու մարդը ի՞նչ էր բոլթրոթում, բա բաժանված չե՞ս:

— Բաժանված էլ եմ, մտքիցս հանած, բայց էլի զահցես տանում է:

— Թե որ էդպես դադար չի տալիս, չարչարում է, դիմի՛ր ժողովատարան; զրիր թե հալածում է...

— Զեմ ուզում բամբասանքի մաստակ դառնամ, թե չէ վաղուց զրա պոշտ ոլորած կլինեի. բայց էսօր դամարին կպա. կատաղեց...

— Ո՞նց:

Արփիկը ժպտում է, կամար սև հոնքերը բարձրացնելով:

— Սաի դու ոնց որ մի մոլախոտ՝ պոկի ու դեն գցի...

Պետրոսը ծիծաղեց.

— Ի՞սկը մոլախոտ... բայց դրանց լավ զտեցինք. թող գնան առաջվա աղայությունը միտը բերեն...

— Երանի մի քիչ շուտ գար էդ մաքրելը, դրանց խրմատից կտրեր միանդամից:

— Ջագսին արդեն հայտնել ե՞ս:

— Ո՞նց չէ, քանի՛ ժամանակ է...

Նորից մեջ է ընկնում լուսվյունը, նորից Պետրոսի մըտքով անցնում է — «ա՛յ, հիմի կասեմ»... բայց վճռական ըոտեին նա կանգ է առնում. — «չէ՛, մի քիչ կարգի բերեմ գործերս, սենյակը նորոգեմ... հետո...»:

Ու խոսում է ուրիշ նյութերից.

— Դրանք հո շահագործող են, էս խոտերի նման ուրիշի հյութերով ապրող. ինչ-որ նոր բան կա, դրանց գլխովին վնաս է, դրանց մոտ սոցիալիզմի անում տաս՝ մեկ է, թե

Հոանշալը կողքը խրես... Բայց ի՞նչ կասես, որ մեր կոլխոզ-նիկների մեջ էլ կան մին-մին փշեր. չեն հասկանում, որ դործը փշացնում են...

— Դե հասկանալը մի օրում չի լինիլ, սովորել է հարկավոր,—ասում է Արփիկը մտերմաբար նայելով Պետրոսին, կարծես ասելով—«ինձ էլ կովորեցնես, չէ...»:

— Ափսոս, որ մեզանից քչերն են եղել Կարմիր Բանակում, էնտեղ շատ բան են սովորեցնում...

Ապա փոքր ինչ լոելոց հետո նա շարունակում է իր մտքերը.

— Գիտես ի՞նչ կա Արփիկ, էս սոցիալիզմի, կոլխոզի մարդն ուրիշ բան է. նա պետք է հասկանա աշխատանքը. շպետք է ասի՛ ես իմ փայ գործը վերջացրի, ու զրադ կքաշ-վեմ, չէ՞ նա պետք է ասի՛ իմ փայը կանեմ, էս ավելն էլ պլանի փայը... կարելի է որ մի հիվանդ ընկեր կա, կամ թույլ, չի հասցնում գործը. Նրա տեղն ավելացնեմ իմ աշխատանքը... էղպես որ լինի, էլ ո՞վ կհասնի մեր հետեից, էն ժամանակ երկիրը դրախտ կդառնա...

Մարգը վերջանում է, բայց զուգը էլի գեռ մլուզ է տալիս: Արդեն դադար է. կոլխոզնիկները խմբվել են արտի ծայրին ու հետաքրքիր հայացքներն ուղղում են Արփիկի ու Պետրոսի կողմը: Արփիկը՝ սթափիլելով, արագ քայլերով գնում է դեպի խումբը: Նրա հետեից ավելի հանդարտ գնում է Պետրոսը: Իրար ընտելացած՝ խումբը թեթև զրուցով քայլում է դեպի գյուղը, մի ընտանիքի անդամների նման:

Նրանց հանդիպում է գյուղի ծայրին կոլխոզի ցրիչ Պավ-լիկն ու հայտնում.

— Ընկերներ, էսօր ժողով է...

Երեկոյան արտադրական ժողովից հետո Պետրոսն ու Արփիկը կարծես իրար խոսք տված, դուրս եկան միասին, ու նեղ փողոց մտնելով արագացրին քայլերը, որպեսզի մենակ մնան:

Երկուսն էլ հրճվանքի մեջ էին, մանավանդ Արփիկը՝
Երկուսն էլ այդ ժողովին հայտարարվեցին հարվածայիններ:

Զարմանում էր Արփիկը. ո՞նց թե՛ ինքը մի թույլ կնիկ,
տանջված, խեղճացած իր մարդուց, հիմի տղամարդկանց
հետ ուս է դնում, մինչև անդամ հարվածային է դառնել...

— Տեսա՞ր, Արփիկ, որ ասում եմ մեր մեջ փշեր կան...
Սարգիսը, մեկ էլ Շուշանը վրա ընկան ինձ, շնորհքները
ցուց տվին.—ասում են էդ ի՞նչ խնամիություն է. գնում եք
հեշտապրուկ անում, մի երկու խոտ պոկում, թե հարվա-
ծային եք... ես էլ ասի—դե եկեք ձեր աշքով տեսեք, թե մի-
սոլախոտ կգտնե՞ք մարգերում... դե հազար ասա, որ հաս-
կանում չեն...

— Նախանձում են, չեն էլ ամաշում...

Նրանք քայլում են լուռ, երկուսն էլ սպասելով թե ինչ-
որ արտասովոր դուրեկան խոսք է ասվելու. Արփիկն սպա-
սում է, որ Պետրոսը պիտի «բացվի», բայց զարմանում է,
երբ հասնում է իր բնակարանին ու էլի նա լսում է «էդ մա-
սին...»

Իրար ձեռք են սեղմում ու բաժանվում, երկուսն էլ մտա-
ծելով իրար մասին...

Պետրոսը գնում է նեղ ու մութ փողոցներով, մտածելով
թև ահա, մի քիչ անցնի էսպես մի ամիս, գործերը կարգի
կրերի, ու իր միտքը կհայտնի Արփիկին. դե նրա սիրտն էլ,
երեսում է, իր վրա է... ու կապրեն միասին, կաշխատեն...
հետո միտքն անցնում էր կոլխոզին, մտածում էր, թե ի՞նչ
պետք է անել, որ բոլորն էլ ուրիշ տեսակ, սացիալիզմի մար-
դիկ դառնան ու հասկանան աշխատանքը... պետք է սովո-
րեցնել, դեռ շատ պետք է սովորեցնել...

Նա մոտենում է գյուղի ծայրին, որտեղ իրենց տունն է:
Շովելով դեպի մի ցանկապատի անկյունը, նա հանկարծ
շշմում է ատրճանակի ծայնից, ու ակամա ետ է ընկնում:
զգալով մի ցնցող հարված ուախն: Մի ակնթարթում ինչ-որ
միտք ասում է՝ վա՛յր ընկիր, ձևացի՛ր սպանված... ու նւու-

ընկնում է, փռվում դետնին, մեկը վազում է թմփթմփալով ու հետո տիրում է լուսվյուն:

«Լիրավորված եմ... մեռնում եմ...» անցնում է Պետրոսի մարդող գիտակցության մեջ. մահվան օտարութի միտքն ընդգրկում է նրան...

Բայց ահա լսվում են մարդկանց ձայներ, գալիս են լապտերներով ու խմբվում իր շուրջը. ուսի վրա արյունը սառչում է, հոսում է ներքեւ. Իրեն բարձրացնում են, տանում տուն: Ինչոր մոռացություն է գալիս վրան, կարծես ուրիշ աշխարհում լինի...

Պետրոսը լավանում է. բժիշկը քանի անգամ նայել է ուսի վերքն ու ասել, որ վտանգ չկա: Մայրը հազիվ է ուղքի եկել, ու էլի վախենում է, հարցնում բոլորին, որպեսզի ստուգի՝ ճիշտ է, որ վտանգ չկա ու շակված է, ինքն էլ չի խմանում թե ի՞նչ է անում:

Արքիկը հենց նույն գիշերն իմանալով դեպքի մասին խսկուցն շնչառպառ վազեց Պետրոսանց տուն, ու գիշեր-ցերեկ խնամում էր նրան, թողած հին գյուղի ամոթխածությունը: Քանի լավանում էր Պետրոսը, մորն ավելի ու ավելի խորթ էր թվում «օտար» կնիկը, բայց համբերում էր, որովհետեւ կոլխոզից էր:

Երեք օր է անցել, բայց դեռ չի անցել իրարանցումը կողխոզում. ժողովներ են անում, գնում-գալիս Պետրոսի մոտ, սիրտ տալիս նրան: Կոլխոզի նախագահ Միսակը, քրտնքից այրված դեմքով, մեծ բլոկնոտը դրսի կրծքագրպանից դուրս դցած, հարցնում է խրոխտ ձայնով.

— Պետրոս, էղ ո՞ր ճակատամարտում ես վերք ստացել... մի՛ վախիլ,—թշնամին ձեռներիս է արդեն. Սարիբեկը բանված է. տեսնող է եղել փախչելիս, ատրճանակն էլ գտել են գոմում...

Պետրոսն ուզում է ինչոր ասի, բայց նախագահը միշտ չի տալիս.

— Դոշա՛ղ կաց, Պետրոս, էն թշնամիները «կուպան ու կերթան»։ մենք էլի մեր հարվածային գործը կշարունակենք...

— Ախչի՛ Արփիկ, երկում է, լավ ես մտիկ անում, շուտ է լավանում, միայն թե տե՛ս, մենակ աշքով միք կշտանալ, քիչ էլ փորի մասին մտածեր... Դե ես դնացի, գործ ունեմ, մնաք բարովի...:

Նախազահի ակնարկը ժպիտներ է թողնում Արփիկի ու Պետրոսի դեմքին։ Արփիկը նայում է գետնին ու անհարմար զգալով, խոսքը ցցում է ուրիշ բանի վրա։

— Պետրոս, իմացա՞ր, Սարիբեկը բռնվել է... ուզում եր քու գլուխն ուտի, իրանը կերավ...

— Հա՛, Արփիկ, քո մոլախոտը դնաց... Հիմի կապրես նոր կյանքով... Մի բան ունեմ ասելու Արփիկ, արի մենք մշտական մոտ ընկերներ լինենք, ապրենք միասին... Թե որ պու դեմ չես...

Արփիկը լուսում է։

— Դի որ մոտ ընկեր ես, Արփիկ, ձեռք տուր ինձ, ապրենք միասին, աշխատենք մեր կոլխոզում...

Ու առողջ ձեռքը հանում է անկողնից։

Արփիկը ձեռք է տալիս և ուզում է շուտով ետ տանել, բայց Պետրոսը սեղմում է, չի թողնում։

Ներս է մտնում մայրն ու կանգնում ապշած։

— Մա՛յրիկ, խնդրում եմ զու էլ ձեռք տուր Արփիկին։ Հիմի սա իմ մոտ ընկերն է. պետք է միասին ապրենք...

Մայրը խեթ նայում է Արփիկին իր հին, խամրած աշքերնվ. երեսամ է նա դժգոհ է, բայց որդու խաթրը չի կոտրում, մոտենում է ու իր չոր, սառը մատներով բռնում Արփիկի ձեռքը։ Ապա նորից դուրս է գնում բակը ինքն իրեն փընթիրնթալով։

«Էսպես էլ աշխարհ կլի՞... Կոլխոզ—կոլխոզ—ասելով երեխիս իրան կապեց... բա ազապ տղեն մարդաթող կնիկ կառնի՞...»

ԳԱՅԼԵՐԻ ՃԱՄՓԻՆ

I

Աշնան անձրիք մաղում էր անվերջ այնքան բարակ, որ
հազիր էր նշանարվում նրա սկիզբն ու վերը: Շրջակա լեռ-
ները գլուխները ծածկված թանձր մշտուով՝ թաքնվել էին Հո-
րիզոնից: Գյուղի պարտեզներում ծառերն արդեն մերկանալու
մոտ էին, տիսուր ցուցադրելով իրենց տերեների վերջին մնա-
ցորդները: Փողոցների ցեխը հետզետե խորանում էր, թող-
նելով իր մեջ քամու բերած տերեները: Երթևեկությունը
նվազել էր այնքան, որ փողոցներով անցնողներին կարելի
էր հաշվել մասներով:

Այդ եղանակին փաստաբան Մարկոսյանի գալը մի ար-
տակարգ երեւլթ էր և զարմանքով նկատվեց գյուղի գլխա-
վոր փողոցի բոլոր պատուհաններից: Բերողը մասնավոր կա-
ռապան Մարտինն էր, որը վաղուց ծանոթ էր գյուղին իր
արկից ու փոշուց սեացած գեմքով, իր նշանավոր ֆայտոնով,
որի մասին շատերն էին գուշակել թե «գեն գցելու ժամա-
նակն է», բայց նա կար և իր տիրոջ կարծիքով մտադիր էր
դեռ երկար մնալու: Ի՞նչ անենք թե նա Հին, կարկատած մա-
սերի մի ժողովածու էր և շարժվելիս իր քայլքայման համերգն
էր տալիս:

Կառքը կանգ առավ գյուղսովետի առաջ: Շածկոցի տա-
կից դուրս եկավ մի մարդ՝ խունացած վերարկվով ու Հին՝
շարդված ելորպական ձեի գլխարկով, վզին կապած ու է
շարք, ու ձեռքին բռնած մի պորտֆել, որը նույնպիս Հին էր
ու խունացած:

Իշնելով կառքից, Մարկոսյանն ուղղեց վերարկուն, ետքացեց վզին շատ ուռուցիկ փաթաթած շարֆը, որը իսկապես կազմված էր կանացի հին, գործած սև շալի մնացորդներից, ապա իր տարիներից մաշված դեմքին ժպիտի արտահայտություն տվավ, որն անհրաժեշտ էր իր այցելության հաջողության համար:

Նա բարձրացավ գյուղսովեմի պատշգամբը, դժվարությամբ քայլելով իր՝ կառքում շատ նստելուց ընդարձացած ոտներով: Գրասենյակում նա բարեեց ծառայողներին, շողաքրոթ ժպտով ու ձայնով, առանձնապես դիմելով ամեն մեկին, ու անցավ նախագահի սենյակը:

— Հարգանքներս... Բարե՛ ձեզ, ընկեր Թադեոսյան, — դիմեց նա նախագահին, հին ձեզ խորը գլուխ տալով ու պինդ սեղմելով նրա ձեռքը:

— Բարեկ, — զուտապ ձայնով ասաց նախագահը, խորշելով Մարկոսյանի քաղցրավի տոնից:

— Ինչպե՞ս եք:

— Ոչինչ, — ասաց նախագահը սառը տոնով, որը նշանակում էր, թե այդ հարցն ավելորդ էր:

— Կարծեմ ինձ կանչել էիք, — ասաց Մարկոսյանը, նորից քաղցր ժպիտ ներկայացնելով իր դեմքին:

— Այո՛, նստեցեք, այս րոպեիս, — ասաց նախագահը. ու իր առաջի թուղթը ստորագրելով, մի կողմ քաշեց:

Ապա փոքր ինչ միջոց տալով, նա դիմեց նորեկին.

— Քաղաքացի Մարկոսյան, ձեզ կանչել եմ նախագուշացնելով՝ եթե չեք բնակվելու ձեր ամառանոցում, գյուղսովետը կգրավի այդ տունը:

Մարկոսյանը, թեպես սպասում էր այդ առաջարկին, ընկճվեց նախագահի խոսքերից:

— Բայց, ընկեր Թաթեոսյանը, — ասաց նա, ժողովելով իր ռոլոր ժպիտները, — երեկ ձեզ չեն տեղեկացրել. ես ապրել եմ ամառը և այժմ էլ եկել եմ նայելու...

Նախագահ՝ երեսունի շափ մի երիտասարդ, լիքը մարմնով, գործնական, կտրով հայացքով նայում էր Մարկոսյանին, բոլորովին անտարբեր նրա ժպիտներին:

— Ու, դուք պիտի մշտապես ապրեք այդ տանը, հակառակ դեպքում՝ ինչպես ասացի՝ կդրավենք, — ասաց նա որոշակի, կարծես դանակով երջիկ էր կտրատում:

Հին ադլոկատի ջիղը շարժվեց Մարկոսյանի մեջ ինչ ո՛ր խորքերում և ուղեց պաշտպանել ինքն իրեն՝ թեկուզ և շատ մեղմ ձևով:

— Ի՞նչ' րկե, հարգելի ընկեր Թագելույան... ես չեմ ուզում քննադատել ձեր որոշումները, բայց կուզեի ասեւ... քանի որ ինձ տված է սեփականության իրավունք...

— Ի՞նչ իրավունք. մենք՝ ի նկատի առնելով, որ դուք ինտելիգենտ եք, որոշ դյուրություններ ենք տվել ձեզ, հավասարեցնելով աշխատավոր գյուղացիներին, բայց մի պայմանով՝ որ դուք ապրեք, օգտվեք այդ տնից...

Ներս եկավ քարտուղարը՝ ձեռքին բռնած ինչ-որ թղթեր ու անհամբեր հայացքով կանգնեց քիչ հեռու, սպասելով հասակցության վերջին ու դիտելով Մարկոսյանին:

— Այո՛, ճիշտ է, ի՞նչ' րկե, — ասաց Մարկոսյանը ավելի քիափելով, — բայց ուզում էի ասել՝ քանի որ դուք թողնում եք իմ սեփականության իրավունքը... նա պիտի կիրառվի՝ այսպես ասած՝ իր բոլոր ատրիբուտներով...

— Ինչպես թե, — հարցրեց նախագահը, շնասկանալով նրա վերջին բառը:

Մարկոսյանն ուղղեց ակնոցները, կարծես պատրաստվում էր խոսելու դատարանում:

— Ես ուզում էի ասել՝ որ ինձ տրված է սեփականության իրավունք, իսկ սեփականության սկզբունքի՝ նրա ատրիբուտների մեջ մտնում են՝ օգտվելու և չօգտվելու իրավունքը... գեռևս հներում հոռմեական իրավունքն այդ ձեռներապում էր այսպես՝ յստ utendi et abutendi...

Նախագահը նայեց զարմացած, կարծես մի օտար մարդ էր իր առաջ, որի լեզուն չէր հասկանում, կամ դիմացինը հանկարծ ցնդվել էր:

— Դե ես փաստաբան չեմ, որ լատիներեն խօսեմ, —

ասաց նա թեթև հեղնելով, —բայց խնդրեմ ասեք, ի՞նչ է նշառնակում շօդովելու իրավունքը:

Մարկոսյանն այդ հարցից փոքր ինչ աշխուժագով, կարծես հույսի մի կաթիլ ընկալ նրա մեջ. «կուցե համոզեմ»—անցավ նրա մտքով:

— Այս բողեիս բացատրեմ միտքս. օրինակ՝ ես ապրում եմ իմ տան մեջ և հետո թողնում եմ, ել չեմ ազրում. թե առաջին և թե երկրորդ դեպքում նա մնում է որպես իմ անձեռնմխելի սեփականություն...

Նախագահը քմծիծաղ տվավ «անձեռնմխելի» իւսոքից, կարծես իր առաջ մանկական ներկայացում էր:

— Եղ հին իրավունքների մասին դուք կարող եք կարգալ ձեր հին գրքերում. երկի դուք դեռ չեք լսել, որ մեզ մոտ սովետական կարգեր են, և այնպես եք խոսում, կարծես ցարական դատարանումն եք... Հարցը պարզ է՝ եթե դուք չեք ապրելու այդ տան մեջ, մենք կօգտագործենք դպրոցի համար...

Փաստաբանն զգաց, որ իր զենքը ծալվեց թղթե կանակի նման, ու նորից զիմեց իր ժամաներին, որոնք այժմ կարծես ներողություն էին խորում:

— Այո՛, իհարկե՛... զե, ես այսպես ասած՝ ձեական տեսակետից էի մոտենում... Լա՛վ, որ այդպես է, ես մշտապես կապրեմ իմ ամառանոցում, ինչպես դուք եք առաջարկում...

Մարկոսյանն էլի էր ուզում խոսել, բայց նախագահը կտրեց.

— Այդ էր իմ ասելիքը, —վերջացրեց նա, երեսը դարձնելով դեպի քարտուղարը:

— Յտեսություն, —ասաց Մարկոսյանը, վեր կննարով տեղից. նա նորից հանդիսավոր կերպով խորը գլուխ տվից նախագահին ու քարտուղարին, պինդ սեղմելով նրանց ձեռքերը. Անցնելով դեպի գրասենյակ, նա նույն կարգով հրաժեշտ տվավ և ծառայողներին:

Նրա հեռանալուն պես նախագահի սենյակում բռնկվեց ծիծաղ:

— էն ո՞նց էր ասում, — չօգտվելու իրավունք... Հա՛, Հա՛... — ծիծաղում էր նախագահը, — ա՞յ թե ադկակառէ է...

— երազ է տեսել, — վրա բերեց քարտուղարը, — գիտե՞ս, ասում են մի քիչ ուղեղը շարժվել է...

— Հա, էղպես է երևում...

Մարկոսյանն անցավ երկար պատշգամբով, իշավ ցածրիկ սանդուխքներով դեպի փողոց: Կառապանը՝ ուսերին ձգած մի պարկ, խոսում էր գյուղացու հետ:

— Էղ ո՞ւմ ես բերել, — հարցրեց գյուղացին:

— Զմեովա «գաշնիկ» եմ բերել, — պատասխանեց Մարտինը, չնկատելով, որ Մարկոսյանը գալիս է:

Գյուղացին տեսնելով Մարկոսյանին, գլխի ընկավ, թե ում մասին է խոսքը, քմծիծաղ տվավ ու շարունակեց իր հանապարհը:

Մարկոսյանը բոպեապես կանգ առավ, աշքերը կկոցելով նայեց իր առաջ, կարծես ուղենալով մտաբերել ինչ-որ մոռացած բան: Նա լսեց կառապանի ասածն իր հասցեին ու մոռալվեց, ցրելով իր բոլոր ժամաները: Մարերի թանձր մշուշը, խոնավ եղանակը, ցեխը, ու նոր իր կրած պարտությունը մի հուղարկավորական տիրություն բերին նրա վրա: Նրան թվում էր, թե Մարտինի այս քայլքայլած, կարկատած կառքն իսկապես իր դիակառքն էր...

Նա ավելի խորն իշեցրեց գլխարկն, ու նստեց կառքի մեջ: Արձանացած կառապանը նորից շարժեց անձրեից լուղացած, վորքացած ձիերին:

Կառքն անցավ գյուղի երկար փողոցով, պտտվելով ու գուրս եկավ գաշտը:

— Ամայություն ամայությանց... — ասում էր ինքն իրեն Մարկոսյանը, նայելով գաշտին. «Պարզ է, — մտածում էր նա, — ուզում են նեղը ցցել, որպեսզի ինքս փախուստամիմ ամառանցից, բայց ես կենդանի աշքով չեմ թողնի իմ կայքը. ավելի շուտ հոգիս կրաժանվի մարմնից, քան թե իմ սեփականությունը...»:

Նա մտածում էր, ստեպ-ստեպ ցնցվելով ճանապարհի անհարթություններից ու ակների տակ ընկնող քարերից:

— Նոր մարդիկ, նոր օրենքներ... կարծում են հեշտ է առապալել հին օրենքները... սպասե՞ք, երբ ես կշախախնմ իմ գրքի մեջ ձեր մոլորությունները, այն ժամանակ դուք վերջ կուաք ձեր սոցիալիստական էքսպերիմենտներին...

Նրա մտքերը կանգ առան կառքի հետ իր ամառանոցի տուած: Դա մի սպիտակ շենք էր, կիսառոմանական ոճով, երկու թեերին աշտարակներ էին, գլուխները գմբեթաձև: Տան տուածը մի ընդարձակ պարտեզ էր, որի մի մասը հատկացված էր զարդական, հազվագյուտ ծառերին՝ սկսած հոյակապ դիպարիսներից ու վերջացած արհեստական՝ կլոր ձև տված փոքր ծառերով:

Նա իշավ ներքեւ, մոտեցավ ցանկապատի երկաթե դռներին: Մինչ նա փնտրում էր գրանում բանալիները, նրա աշքին ընկավ ցանկապատի մի փոքրիկ փլվածք. նա մի հայհոյանք ուղղեց գյուղի երեխանների հասցեին, որոնց նա վերագրում էր այդ «ոճիրը» ու փորձեց բանալ դուռը: Ժանգոտած կողաքեքն ու բանալին երկար կուլում էին իրար հնտ, շաբադուշակ նախապաշարմունք հաղորդելով տանտիրոջը: — ուստի վատ նշան է, — մտածում էր Մարկոսյանը, — դուռը մի բացւում, երեխ կիսլեն ձեռքիցս...»:

Բայց, վերջապես երկաթե դուռը բացվեց, իր ժանգոտած խաղերի ծվոցով: Նա ներս մտավ իրեն այնպես սովոր ծառուղիով ու գնաց դեպի տունը: Նրա հետեւից գնում էր կառապանը, հետը տանելով մի մեծ շեմողան ու անկողնի կապոց:

Սառուղիները ծածկված էին թափված տերեններով, որոնք անձրեից հետզհետե կպչում էին գետնին: Չորս կողմը մի ամայություն էր տիրում, ասես գերեզմանատուն լիներ: Նորից դժվարությամբ բանալով դռները, նա բարձրացավ երկրորդ հարկն ու վերջապես ներս մտավ իրեն սիրած մեծ սենյակը, որի հետ կապված էին շատ հիշողություններ...

Նա շտապով բացեց մի պատուհանի փայտե փեղկերոր, կարծես վախենալով ինչ-որ թաքնված մարդկանցից, ապա մնարեց կառապանի վարձը, ու նստելով կոտրած աթոռին՝

սեղանի մոտ, մնաց այդպես անշարժ, ստեղ-ստեղ հառաջի ձայներ հանելով:

Այս բոլորը սարք ու կարգը ո՞րքան ծանոթ էր նրան, բայց այժմ թիում էր խորթ, օտար... դատարկ, մերկ թախտերը, սեղանները, պահարանը, սենյակի հատակին ընկած ջին, դեղնած լրագիրը, անկյունում թողած աղբի մնացորդը... այս բոլորը վհատություն էր ներշնչում նրան:

Մի ժամանակ ամեն ինչ այս տան մեջ կանչում էր, հրավիրում նրան, իսկ այժմ կարծես ասում էր՝ «ինչու և եկել, գնա...»:

Երկար նստելուց հետո, նա վեր կացավ, բացեց ձնացած երկու պատուհանների փեղկերը ու սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում:

«Հե՞յ գիդի, ի՞նչ ժամանակ էր... մտածում էր նա անցյալի մասին. այս օրին էլ արժանացանք, որ ձմեռը ամառանոց եկանք... Sic transit gloria mundi »:

Ու անցյալի հիշողությունները մեկ-մեկու հետեւից գալիս էին նրա առաջ...

II

Փաստաբան Մարկոսյանի անունը վաղուց սկզբ կապված էր ոչ միայն այս ամառանոցի հետ, այլև նրա տակի հոգամասի հետ: Այդ հոգամասը շրջակա անտառների հետ պատկանում էր մի կալվածատիրոջ երիտասարդ ժառանգին, որը՝ զբաղված լինելով իր քեֆերով, բավական անուշադիր էր գեպի իր կալվածքի սահմանները: Ժառանգի այդ «ջահելությունն» ու «անխելքությունը» շափելով, գյուղի հայտնի կուգակ Սիմոնը վճռեց, որ ժամանակ է գործ տեսնելու: Մի օր նա ներկայացավ քաղաքում իր ծանոթ Մարկոսյանին, և հարցեր տվեց նրան «դավնոստի»՝ վաղեմիության օրենքի մասին, ապա բացեց նրա առաջ մի բավական «փափուկ» և իր տեսակետից բավական գաղտնի մի ծրագիր: Մարկոսյա-

1 Այսուհետ է անցնում աշխարհիս փառքը (ավագ փառացս անցավորի):

նը պատշաճ վարձատրությամբ հանձն առավ այդ «գործը» և ահա մի օր զատարանում երկու կաշառված վկաների միջոցով հաստատվեց, որ այս ինչ կալվածատերի այս ինչ հողամասը ավելի քան տասը տարի «հանդիստ տիրել և վայելել է» այս ինչ գյուղի բնակիչ Սիմոն Ավագյանը, որն այդ հողամասի կողքին կիրամիղի գործարան ուներ:

Այդպես՝ վաղեմիության օրենքով հողամասն անցավ Սիմոնին:

— Գո՞ղ, ավագա՛կ,—ասաց կալվածատերը Սիմոնի հասցեին, իմանալով իր կառավարչից դատարանի վճոփ մասին ու շարունակեց իր քեֆերը:

Այնուհետեւ այդ հողամասի պատմությունը նորից կապվեց Մարկոսյանի հետ, երբ Հայտնի վաճառական եղոր Մարտինիչը վճռեց զբաղվել հողային գործերով: Նա գնեց գյուղի շրջակայքի հողերը և փոքր մասերի բաժանելով՝ վաճառում էր ցանկացողներին՝ ամառանոցներ կառուցելու համար:

Այս ձեռնարկության մեջ բավականին աշխույժ դեր էր կատարում և Մարկոսյանը՝ որպես եղոր Մարտինիչի մշտական փաստաբանը:

Եղոր Մարտինիչը իր «ընկերության» մեջ էր առել նաև մեր հայտնի կուլակ Սիմոնին: Սակայն այս մարդը, որի խորամանկության մասին շատ բաներ էին պատմում գյուղում, ընկավ ու խճճվեց այդ գործի մեջ, որպես ճանճը սարդի ստայնում: Եղոր Մարտինիչն այնպիս պատեց նրան իր մուգ հակների ցանցով, որ Սիմոնը նույնիսկ զրկվեց մեզ հայտնի հողամասից: Նա տուն վերադարձավ, անիծելով քաղաքացիների խաբերայությունը և Մարկոսյանի դավադրությունը, որն այս անգամ դատարանում պաշտպնում էր եղոր Մարտինիչին՝ ընդդեմ Սիմոնի:

— Էն ա միանգամից ասենք, թե էս անտեր աշխարհում արդարություն չկա էլի՛,—ասում էր նա դատից՝ հետո գյուղ վերադառնալիս իր բարեկամ գյուղացուն:

Եղոր Մարտինիչը մի կլոր գումար շահեց այդ գործում,

տրը մի անպատկառ ժուռնալիստ անվանել էր «Հողային սպեկուլացիա». բայց պատվավոր հասարակության համար ի՞նչ նշանակություն ուներ մի կիսաքաղց լրագրական գործից գրածը: Այժմ նրա մտքում մի «ֆանտազիա» ծագեց՝ կառուցել մի ամառանոց իր սեփական հողի վրա:

Չանցած մի տարի՝ ամառանոցն արդեն պատրաստ էր և ամառվա մի գեղեցիկ օր նա քեզ էր անում իր նորաշեն ամառանոցի պատշգամբում, թնդացնելով շրջակայքն իր հյուրերի գոռում-գոշումով:

Բայց շատ շանցած՝ եղոր Մարտինիշի ֆինանսական դրությունը խախտվեց. մուրհակների ժամկետները խճճվեցին և նա ստիպված եղավ վաճառել իր ամառանոցը: Նորից երեան եկավ Մարկոսյանը, նա որպես եղոր Մարտինիշի դատական գործերը վարող, պիտի հետեւ վաճառման ձևանություններին:

Ամառանոցը գնեց գնդապետ Տեր-Մահակյանը, որը հարստանալով զորքի մատակարարման կաշառքներով՝ «ֆանտազիա» ունեցավ ասլրելու իր սեփական ամառանոցում: Չնայած իր հիսունից անց հասակին, նա ամուսնացել էր մի երիտասարդ կնոջ հետ և նոր գարուն էր ապրում:

Մարկոսյանը ամառանոցի վաճառման առթիվ գնալ-գալով մտերմացավ գնդապետի հետ, բայց առավել ևս՝ նրա լով մտերմացավ կնոջ՝ Աննայի հետ: Այդ մտերմությունը հետը երիտասարդ կնոջ՝ Աննայի հասավ սիրային կապի: Այդ վեպի մեջ Մարկոսյանը խաղաց մի զեր, որն արժանի է հիշատակության:

Այն տարին՝ ամառը նա հաճախ այցելում էր գնդապետին, որն արդեն բնակվել էր իր սեփական ամառանոցում:

Մարկոսյանը գալիս էր քաղաքից՝ նստած. իր սպիտակ ձիու վրա, իսկ Աննան հեռվից՝ ամառանոցի պատշգամբում սպասում էր նրան: Փաստաբանը հրճվում էր. և ինչպես շուրախանար, — նրա գործերը հաջող էին առաջ գնում, և դրա հետ միասին՝ այս երիտասարդ կնոջ թրթուն սիրտն իրեն էր պատկանում...

Ահա նա իշնում է ձիուց ամառանոցի առաջ. Աննան

դուրս է թռչում, սեղմում է նրա ձեռքը՝ ու հետը տանում վերև։ Հյուրերը բավական շատ են։ Ժամանակն անցնում է անհոգ։ Նախաճաշում են, զբոսնում ձիերով, ճաշում, թրթախաղի նստում։ Բնթթիքը տևում է մինչև կես գիշեր։ Աննան ուղեկցում է Մարկոսյանին սանդուխքներով՝ ձեռքին բռնած մոմակալը։ Ներքեում հանկարծ մոմը հանգչում է, կարծես թե քամուց... Աննան թեքվում է դեպի Մարկոսյանը ու տաք շնչով այրում է նրա ականջը։

— Վաղը առավոտյան ամուսինս մեկնում է մի շաբաթով... Ի՞նչ երջանկություն...

Ու մի հապճեալ համբույրով, ձեռքի ամուս սեղմումով նրանք բաժանվում են իրարից։

Երկու տարուց հետո խանգարող ամուսինը մեռավ և Մարկոսյանը մի քանի ամիս սուզի տեղ թողնելով, ամուսնացավ Աննայի հետ։

Մինչ Աննան գտնվում էր երջանկության գագաթին՝ Մարկոսյանի գլխում պտտվում էր մի նոր ծրագիր՝ ձեռք առնել իր կնոջ՝ Աննայի դրամագլուխը և հաստատել իր վրա բաղաքի տունը և ամառանոցը։ Աննային նա հավատացնում էր, թե առանց նրան չի կարող ապրել նույնիսկ մի օր, և միաժամանակ խորհուրդներ էր տալիս՝ իրեն թողնելու գործերը, — զանազան անախորժ ձեւականությունները՝ այսինքն հաստատել տներն իր վրա։

Վերջապես, երկար թախանձանքից հետո այդ էլ կատարվեց, — Աննան հաստատեց իր քաղաքի տունը և գյուղի ամառանոցը իր ամուսնու՝ Մարկոսյանի վրա։ Ու այդ օրվանից, հասնելով իր նպատակին՝ նա սկսեց սառչել Աննայից։ Ամեն ինչ արվում էր՝ նրան հորիզոնից հեռացնելու համար, որովհետեւ Մարկոսյանի առաջ հետզհետեւ բացվում էր մի նոր ծրագիր... նրան շատ էր գրավում հարուստ Միհիթարյանի աղջիկը և նրա օժիտի գումարը...

Աննան տանում էր այդ վիրավորական գրությունը, բայց օրըստօրե հալվելով։ Վերջապես նա հիվանդացավ թոքախտով և մեռավ, թողնելով որպես ժառանգություն իր վերջին օրերի խոսքերը Մարկոսյանի հասցեին՝

— Գող, ավազակ. դու գողացար իմ սիրտը և իմ տունը...

Մարկոսյանը ամուսնացավ հարուստ Մխիթարյանի տղակա հետ ու սկսեց նոր կյանք:

Ամեն ամառ նա գալիս էր իր «վիլան», շրջում սպիտակ ձիու վրա: Ամառվա օրերն անցնում էին հյուրերի հետ, խընջույքներով, ուրախ երգերով:

Բայց այդ օրերն էլ անցան, եկալ ուսուցիան... Նախկին հարստությունից միայն հիշողություններ էին մնացել, ու մեկ էլ այս ամառանոցը, որը նույնպես գրավման վտանգի տակ էր...

III

Քաղաքում հեշտ էր թվում ամառանոցում ձմեռն ապրել: Բայց այժմ, հենց առաջին քայլերից Մարկոսյանի առաջնառացան հազար ու մեկ դժվարություններ: Հարկավոր էր փայտի պաշար տեսնել, հարկավոր էր ջուր բերող, ծառայող գտնել, մթերքների մասին մտածել, մի խոսքով՝ հնարավորություն ստեղծել ապրելու համար, բայց այդ բոլորը զբժուշություն ստեղծել ապրելու համար, բայց այդ բոլորը զբժուշություն ստեղծել ապրելու համար, մի ամենավայր էր. գյուղացիք այժմ խորշում էին նրանից, և ամենաշատը, որ կցանկանային նրան՝ այն էր, որ Մարկոսյանն ի՞նքն աշխատեր, քրտներ իրենց նման:

Այս ու նման հարցերի ծանրության տակ ճնշված՝ Մարկոսյանը մնացել էր տարակուսած: Վերջապես նա սթափվեց իր ընդարմացած դրությունից, մի արհեստական ճիգով սկսեց խրախուսել ինքն իրեն:

Ո՛չինչ... նա կհամբերի, կապրի այստեղ. նա կկանչի գյուղից կիսախելագար Մարթային, մի բան կխոստանա, ու կբանեցնի... ամեն ինչ հետզհետե կարգի կընկնիմ. իսկ գամանակը նա կօգտագործի այնպես, ինչպես ծրագրել է. — Ժամանակը նա հաստատություն՝ «սեփականության մասին»: Այս կգրի իր աշխատությունը՝ «սեփականության մասին»: Այս գիրը՝ նա հաստատ գիտե՝ կցնցի ամբողջ աշխարհը, միանգուրքը՝ նա հաստատ գիտե՝ կցնցի ամբողջ աշխարհը, միանգուրքը՝ ընդմիշտ կսթափեցնի բոլոր սոցիալիստորեն մտածող մոլորվածներին... Հետոն էլ կգրի իր մեմուարները, որոնք

Յուլինպես խոշոր նշանակություն կունենան, որովհետեւ նրանց մեջ կարտացողի իր վերաբերմունքը դեպի ժամանակակից կարգերը:

Նա վճռեց անմիջապես գործի անցնել՝ կազմել գրքի ծրագիրը: Թղթի առաջին երեսի վրա խոշոր տառերով գրից «Մասնավոր սեփականուրյունը որպես տիեզերական օրենք», ապա նրա տակ՝ նույնպես խոշոր տառերով՝ «Ենրածուրյուն սեփականուրյունը կենդանական աշխարհում»:

Նա վեր կացագ տեղից ու սկսեց քայլել սենյակում. մտածում էր ու ստեղծ-ստեղծ մոտենալով սեղանին, նշանակում իր ծրագրած գլուխների վերնագրերը:

Ի՞շարկե՛, նա կսկսի կենդանիներից, այնուհետև կանցնի պատմական տեսության, ցուց կտա, որ քաղաքակրթությունը զարգացել է միայն այն շրջանում, երբ «սրբազան սեփականության» հիմունքները եղել են անխախտ:

Մինչդեռ նա այսպես ծրագրում ու մտորում էր, Հանկարծ զգաց, որ մութը պատում է չորս կողմը: Նա շտապով վերցրեց իր թեյամանն ու դնաց աղբյուր ջուր բերելու: Մեծ դժվարությամբ քայլելով ցեխից ծանրացած կրկնակոշիկ-ներով, վերջապես նա Հասավ աղբյուրին: Մի պառագ կին և մի փոքրիկ աղջիկ պատկառանքով իրենց հերթը տվին Մարկոսյանին: Նա անսովոր շարժումներով մոտեցավ աղբյուրի ծորակին, լցրեց թեյամանն ու փութկոտ Հեռացավ, կարծես զողացած իր էր փախցնում: «Ի՞նչ կասեն, կծագրեն...» այս էր պտտվում նրա մտքում: Մարդկանց տեսնելը փոքր ինչ ուրախացրեց նրան, բայց երբ մոտեցավ իր ամառանոցին, մոռայլ մութը նայեց նրան ծանր ու չարագուշակ: Նա բարձրացավ իր սենյակը, վատեց Հետը բերած փոքրիկ լամպը, վառեց նույնպես կերպուինի քուրան ու վրան դրեց թեյամանը:

Թեյլը խմելուց հետո նա սկսեց գրել իր «Ենրածությունը» «Սեփականությունը կենդանական աշխարհում», օգտվելով քաղաքում արած իր սեագրություններից: Բայց Հազիկ մի երես էր գրել, երբ Հանկարծ լսեց գայլերի ոռնոցը, որը այս միայնության մեջ կրկնակի ահ ու զարգանդ էր բերում

իր հետ: Նա թողեց գրելն ու ամբողջովին ականջ դարձած՝ հետեւում էր ոռնոցին: Շատ շանցած, սկսեցին արձագանքել գյուղի շները, բայց նրանց հաշոցն էլ թվում էր չարագուշակ:

Ոռնոցը հետզհետեւ թուլացավ, անցնելով դեպի ուրիշ կողմերը, սակայն շանցավ նրա բերած տագնապը: Այժմ նրա մենավոր կյանքում բացվեց մի ահավոր էջ, որի հետ պիտի մնար կապված հետագայում: «Կարելի՞ է ապրել այս պայմաններում՝ գալերի մեջ», — հարցնում էր ինքն իրեն, բայց թողնում էր անպատճախան, որովհետև հարցի այն կողմը մի ուրիշ սարսափ կար՝ սեփականությունից դրկվելլ...

Նա չկարողացավ շարումակել իր «ներածությունը», վերցրեց իր մեմուարների տետրը ու արձանագրեց օրվա դեպքերը:

«1926 թվի նոյեմբերի 13-ին, — այսօր ես սկսեցի գրել իմ մեմուարները... ապագա մարդկությունն անկասկած կը- գնահատի իմ բոլոր զոհողությունները մասնավոր սեփակա- նության ասպարեզում...»

«Այսօր ես ժամանեցի Բ. գլուխը: Անձրև էր, ցեխ: Գյուղ- սովոր նախագահը առաջարկեց ինձ մշտապես ապրել իմ ամառանոցում, սպառնալով՝ հակառակ դեպքում գրավել իմ սեփականությունը: Ինձ մնում էր հպատակվել ուժին, բայց ոչ իրավունքին, ընդհակառակը՝ այդ կետում նա ընկալ փա- կուլու մեջ, երբ ես գրի նրա առաջ հոռմեական իրավունքի սկզբունքները:»

Այստեղ գալուն պես սկսեցի գրել իմ մեծ աշխատությու- նը՝ «Մասնավոր սեփականությունը որպես տիեզերական օրենք...» սկսում եմ մեծ հույսերով ու հավատով: Գիտեմ, այդ գիրքը կթարգմանվի բոլոր լեզուներով, և կցնցի ամբողջ աշխարհը Եվրոպայից մինչև Ամերիկա...

Նոր էի սկսել գրել ներածությունը սեփականությանը կենդանական աշխարհում, երբ գալերը սկսեցին ոռնալ... Գալերը ոռնում էին, երբ ես գրում էի իմ նշանավոր աշխա- տությունը...»:

Ապրում էր Մարկոսյանը... ցերեկը իր ապրուատի ղըժվարությունների հետ, իսկ գիշերները՝ գալուերի ուսնոցի սարսափի մեջ: Պինդ մակված սենյակում՝ մախսից զլուխը վերմակի տակ առած, նա գիշերները մտածում էր թե անմտություն է այստեղ ապրելը, վաղը կերթա քաղաք, իսկ առավոտը՝ երբ լուսանում էր, նրա մեջ սկսում էր խոսել մի ուրիշ մարդ, որն ասում էր մի անդիմադրելի ֆանատիզմով՝ «ախտի մնամ իմ սեփականության հետ,—այս է իմ վերջնական վճիռը...»

Երեք օրից հետո բնությունը ժպտաց. արևը երևաց, փոքր ինչ չորացավ գետինը ու Մարկոսյանը կարողացավ շարժվել ու հուսալ: Նախ նա կանչել տվեց գիծ Մարթային, խոստացավ փող տալ, եթե նա կհամաձայնի ծառայել իրեն: Մարթան աշքերը չուած նայում էր, կարծես շհասկանալով նրա ասածը, բայց վերջապես գլխի ընկավ և համաձայնեց: Այնուհետև նա տեղեկացավ մթերքների մասին: Այդ բոլորը բավականաշափ հանգստացրեց նրան:

Նա ուրախացավ նույնպես, երբ իմացավ, որ դեռևս երկու ուրիշ ամառանոցներ չեն գրավված: Բայց այդ ուրախությունը շատ կարծատե էր, մեկում ապրում էր տիրոջ սգավոր կինը, մյուսում՝ իր տերը, բայց սա էլ խլուրդի նման միշտ ձգտում էր թաքնվել. ամեն հանդիպողի նայում էր կասկածով, ասես նա գալիս էր գրավելու իր ամառանոցը:

— Ամիրջան, բա ե՞րբ նստենք, խոսենք, խելք-խելքի տանք, — հարցրեց նրան Մարկոսյանը, երբ մի օր հանկարծ հանդիպեց իր ամառանոցի մոտ:

— Ի՞նչ խոսենք. ավելի լավ է սուս կենանք ու տապ անենք. թե չէ ո՞վ է իմանում ի՞նչ կլինի...

Ամիրջանի կարծիքով՝ եթե վտանգավոր էր կալվածատիրոջ երեալը գյուղի հշխանության առաջ, ապա ավելի և վտանգավոր էր երկուակի, երեքի երեւալը. դա արդեն գավառություն պետք է թվար իշխանության աշքին: Առհասարակ

նա շատ հազվադեպ էր գուրս գալիս անից. միայն ստիպուական կարիքը կարող էր նրան փողոց տանել:

Մարկոսյանը իր միայնությունից ազատվելու համար փորձեց այցելել քահանային, բայց սա, պատուհանից նկատելով նրան, թաքնվեց գոմում և կնոջը պատվիրեց, որ ասի՞թե տերտերը տանը չի: Նա խոսափում էր խոշոր «նախկիններից» և ուզում էր հենվել միջակ գյուղացիների վրա: Փողոցում պատահելիս նա ցածր, գաղտնի ձայնով, որնէ միթթարական բան էր ասում Մարկոսյանին՝ սովետական՝ իշխանության մուտալուս վախճանի մասին, բայց իսկուն բաժանվում էր նրանից, իբր թե շատ է շտապում:

Հետո նա սկսեց հաճախել գյուղի կոռոպերատիվը: Մանրամասն դիտում էր խանութի բոլոր ապրանքները, հարցնում էր գները գործակատարից, ապա սկսում էր զրուցել նրա հետ: Այստեղ լավ ձանձրանալուց հետո նա գնում էր կոշեկակարի մոտ, սկսում էր շաղակրատել, պատմել, ինչոր գլուխն էր գալիս: Կոշկակարն անուշադիր լսում էր նրա ասածները, ամենի զբաղված լինելով իր գործով, իսկ մտքում ասում էր՝

— Քան թե էղքան ավելապակաս դուս ես տալիս, ավելի լավ կանեիր՝ կոշիկդ տայիր կարկատեի...

Վերջապես այստեղ էլ զգալով իր պատճառած ձանձրույթը, Մարկոսյանը դուրս էր գալիս ու անցնում գյուղի վողոցներով, տեղ-տեղ կանգ առնելով տների առաջ:

— Պետրոս, Շորթդ ի՞նչ մեծացել է, ի՞նչ սիրում է, — ասում էր նա ու մոտենում, ձեռք տալիս գյուղացուն կեղծ ժամփով:

— Հա, էլ կովը կաթ չի տալիս, — սառը պատասխանում էր գյուղացին:

Մարկոսյանը զգում էր, որ իր հաճոյախոսությունը տեղ չի հասնում ու գնում էր դեպի մի ուրիշ տուն:

— Էդ ի՞նչ բոլ փայտ ես բերել անտառից, կեսն իմն է. — սրախոսում էր նա, բայց խոսքը քարին էր դիպչում. գյուղացին պատասխանում էր հեգնելով.

— Են վաղ էր, որ կեսը քոնն էր:
Մի ուրիշ տեղ նա ասում է:
— Ստեփան, երեխեդ ի՞նչ լավն է:
Երեխայի մայրը ժպտում է, իսկ հայրը ասում է Մարկոսյանի հետեւից.

— Գործ չոնի, գեղն է ընկել դատարկ բաներից է խոսում...

Նա վերադառնում էր տուն հետն առած զանազան մթերքներ ու իսկույն իր ցամաք ճաշի պատրաստությունն էր տեսնում: Ճաշը շատ կարծատե էր լինում: Ապա պառկում էր անկողնի վրա ու սկսում կարգալ: Շատ շանցած աչքերն սկսում էին պղտորվել. նա խորը հորանջում էր ու քիչ անց արգեն խոմիացնում. ձեռքի դիրքը երբեմն ընկնում էր ներքե, փովում հատակին:

Նա զարթնում էր ծանրացած գլխով, գուրս էր գալիս պարտեղ և ուրվականի նման շրջում ծառուղիներով, ոտնեցով խշխացնելով թափված տերեները, շրջում էր խորհրդավոր լսության մեջ և մտածում սարսափով, թե նորից պիտի գա դիշերը, նորից պիտի լսի գալերի ոռնոցը: «Սա դժոխային կյանք է»—մտածում էր նա. «Պետք է վերջ տալ...» բայց հենց հասնում էր եզրակացության՝ «ուրեմն պետք է թողնի և գնալ քաղաք...» նա իսկույն կանգ էր առնում—«Իս չեմ կարող թողնել իմ սեփականությունը ինչ էլ լինի...»

Մթի առաջին հոսանքից անհանգստացած՝ նա շտապում էր իր սենյակը, վառում էր լամպը: Սկսվում էր անտանելի երեկոն: Նա ճիղ էր անում, որպեսզի ինքն իրեն զբաղեցնի, ստիպի պարապելու, բայց իր «նշանավոր» աշխատության գրելը հետզհետե դժվարանում էր: Երբեմն նա շփոթվում էր դատողությունների մեջ, կամ փոխանակ գրելու, բռնկվում էր երեխակայական պոլեմիկայով «սեփականության թշնամիների» դեմ ու քայլում ինչ-որ անկապ մտածմունքներով: Բայց գլխավորն այն էր, որ նրա ականջները շարունակ լարված հետեւում էին դրսի ծայներին, ահարեկվելով ամեն մի շփլթոցից: Նա ստեղծ-ստեղ կանգ էր առնում ու վախճացած

ականջ դնում. շների հեռավոր հաշոցն անգամ աղղում էր նրա վրա:

...Այս երեկո նա կարդում էր Պրուդոնի գիրքը՝ «Ի՞նչ է սեփականությունը». կարդում էր, մատիտով տեղ-տեղ գծեց քաշելով, բացագանձական նշաններ դնելով: Քանի կարդում էր, այնքան ավելի էր ջղայնանում, կարծես մոտը կանգնած մի մարդ մերկացնում էր իրեն և ասում՝ «ահա տեսեք, այս մարդը մերկ է...»

Նա վեր կացավ ու սկսեց արագ քայլել. մի ձայն մուրչի նման խփում էր նրա ականջին ու կրկնում՝ «սեփականությունը զողուրյուն է...»

Ու նրա մտքով անցնում էր իր ամառանոցի անցյալը. ե՞րբ չէր նա գողություն... կուլակ Սիմոնը գողացավ կալվածատիրոջից իր՝ Մարկոսյանի օգնությամբ, սրանից էլ գողացավ Յագոր Մարտինիչը՝ նույնպես Մարկոսյանի օգնությամբ, իսկ Հետո՝... նա ուղղակի ինքը գողացավ գնդապետի այրուց՝ Աննայից... եվ ամեն անգամ գողությունը սրբատի այրուց՝ Աննայից... Եվ ամեն անգամ գողությունը սրբառձվում էր օրինավոր փաստաթղթերով, հիմնարկների կնիքներով...

Նա Հիշում էր Աննային ու նրա վերջնախոսքերը՝ «գո՞ղ, ալազա՞կ...» ահա թե ո՞րտեղ էր այրվում նրա Հիշովությունը... Աննային նա սպանեց ոչ թե ատրճանակով կամ թույնով, այլ մի ուրիշ, աննկատելի, բայց, ավելի սոսկալի մասով...

...Աննայի ձայնը կարծես հալածում էր նրան, ու փախչելով այդ ձայնից, նա նորից նստեց սեղանի մոտ ու վճռեց շարունակել իր պարապմունքը:

Բայց հանկարծ խորին լուսաթյան մեջ հնչեց գալերի ուսուցը շարագուշակ երկար ձայնով: Նա կանգ առավ, ցնցվենոցը շարագուշակ երկար ձայնով: Նա կանգ առավ, ցնցվենոցը լով ամբողջ մարմնով այդ ահավոր ձայնից ու ականջները լով ամբողջ մարմնով այդ ահավոր ձայնից ու ականջները լով ամբողջ մարմնով այդ ահավոր ձայնից, նա ավելի ահավելի վերած համարդիկից. նա ավելի ահավելի վերած համարդիկից, որ ավելի մոտիկից. նա ավելի ահավելի վերած համարդիկից, որ ձայնը մերթ դադարելով, հետզհետե մոտենում է:

Բայց նրան սպասում էր ավելի մեծ սարսափ, հանկարծ

Նա լսեց ոռնոցը իր պատշգամբից, հենց մի քանի քայլի մրա, գայլերը ոռնում էին, ապա կողկոնձում, հրում պատշգամբի դուռը, փորձելով կոտրել ու ներս խուժել: Դուն զորեղ ցնցումներից Մարկոսյանը դողում էր, բոսկ առ բոպե սպասելով, թե գայլերը կարող են դուռը կոտրել:

Նա քաշեց սեղանը, կպցրեց դռներին, քաշեց պահարանը, նույնիսկ աթոռները. շարեց բոլորը իրար հետեից, իսկ ինքը հեռացավ սենյակի խորքը, կանգնեց պատի մոտ ու նայում էր սրտատրովի դուան կողմը:

Վերջապես երկար ժամերից հետո գայլերի ոռնոցը դադարեց, լույսի շերտերը նշմարվեցին պատուհանների ճեղքերի արանքից և նա զգաց իրեն թեթևացած: Շուտով թելիսմեց, հետո փորձեց պարապել, բայց իսկուն աշքերը փակվեցին, նա թեք ընկալ անկողնի վրա ու անմիջապես քննչ հարքածի նման:

Նա զարթնեց կեսօրին մոայլ տրամադրության մեջ: Դուրսը խոնավ էր, ամպամած: Նորից նրա առաջ ծառացավ գիշերվա ահաբեկումը՝ իր «գժոխքը»: Ի՞նչ անել... Երկու ուժեղ զգացումներ կռվում էին նրա մեջ՝ մի կողմից սեփականությունն էր քաշում նրան իր ամուր կապերով, հիվանդագին, ճիվաղային ֆանատիզմով, մյուս կողմից՝ «գժոխքն» էր վանում իր սարսափներով...

V

Թեպետ Մարկոսյանն ապրում էր գյուղից դուրս, բայց այնտեղ հետաքրքրվում էին նրանով. գիտ Մարթան տարածում էր Մարկոսյանի կյանքի բոլոր մանրամասնությունները: Գայլերի պատմությունն արդեն բոլորին հայտնի էր:

Սկզբի օրերին նա փորձեց մի ճար անել գայլերից պաշտպանվելու համար. նախ մի թափառական շուն ճարեց, բայց սա չմնաց, փախավ. հետո բերեց մի փոքրիկ շուն, որն իհարկե, ոչ մի օգնություն չէր կարող անել, քանի որ ինքն ավելի էր վախենում գայլերից, քան թե իր տերը:

Մի գիշեր գալերի ոռնոցի հետ նա լսեց իր շան աղիուզորմ կլանչոցը, ու նրանից հետո շիմացավ, թե ի՞նչ եղավ շունը. նա անհետ կորավ:

Գյուղացիներից մեկը խորհուրդ տվեց նրան պատուհանի փեղկերը բաց թողնել, որպեսզի գալերը տեսնեն լուսը և քաշվեն. բայց Մարկոսյանը չհավատաց, նա վախենում էր, որ գալերը ապակին կկոտրեն և ավելի հեշտությամբ ներս կընկնեն սենյակը:

Նա փորձեց գործադրել և իր փոքրիկ ատրճանակը, բայց անօգուտ:

Այսպես՝ հարցը մնում էր նույն վիճակում: Իսկ աջաբեկումը գիշերից սկսում էր տարածվել և ցերեկվա վրա: Ամբողջ օրը Մարկոսյանի միտքը զբաղված էր գալերով. ինչ էլ անում էր՝ կարդում էր թե ճաշում, այդ հարցը միշտ հետևում էր նրան: Նա շարունակ մտազբաղ էր, անուշագիր խոսելու ժամանակ, երեմն հանկարծ լուս էր ու մտածմունքների մեջ ընկնում:

«Ցնդլել է»—ասում էին գյուղացիք, ասում էր կոշկակարը և կոսպերատիվի գործակատարը:

Մարկոսյանի կինը նամակով համոզում էր նրան՝ վերադառնալ քաղաք, բայց նրա հորդորները ապարդյուն էին անցնում. ամեն անգամ Մարկոսյանը պատասխանում էր, թե չի կարող թողնել «իր կալվածքը»:

Տարօրինակ էր Մարկոսյանի կյանքը. կարծես մի պատիժ էր, յուրահատուկ պատիժ,—գիշերն անընդհատ սարսափի, իսկ ցերեկով ապուշ դրություն:

Երեկիվա մի մասը նա քնած էր լինում, հետո նա գրում էր, բառերը շարունակ ընդգծելով, կարդում էր գրքեր: Երբեմն մոռանում էր գիրքը ու նստում ապուշի նման, մտածելով գալերի մասին: Մտամոլոր գնում էր գյուղը, ինքն էլ շիմանալով, թե ո՞ւր է գնում և ինչի՞ համար:

Արդեն գյուղում վերջնականապես համոզվեցին, որ Մարկոսյանը խելագարվել է: Շատ անգամ ծիծաղում էին, երբ նկատում էին, որ նա ինքն իրեն խոսելով կանգ է առ-

նում փողոցում, չնկատելով դիմացից եկող մարդկանց։ Հետաքրքիր տեսարան էր ներկայացնում նրա հուշատերն այդ օրերին—մի տեղ մի քանի տող էր գրած անկապ, ապա բազմակետեր՝ մինչև երեսի վերջը։ մյուս տեղը միայն վերնագիր էր, ապա իրար հետեւից շարժած էին գծերը։ Վերջապես կային երեսներ ծուռ ու մուռ գրած, բոլորովին անկապ... «Գայլերը ոռնում էին...» մասնավոր սեփականությունը սրբազն է, չի կարելի նրա մասին գրել հասարակ լեզվով—պետք է բանաստեղծություն գրել...

«Չեռքներդ հեռո՞ւ իմ ամրոցից...»

«Իմ սեփականությունը իմ ամրոցն է... իմ գիրքը՝ սեփականության մասին ալեկոծում է ողջ աշխարհը... Ամերիկայից հեռագեր են գալիս, շնորհավորում են... իմ պատկամները հնչում են ամեն տեղ—«մասնավոր սեփականությունը միակ փրկությունն է ողջ ափեկերքի...»

...«Դանտեի «Դժոխքի» իններորդ շրջանը գտնվում է Բագուշի մոտ, Մարկոսյանի ամրոցի տակ...»

«Գալերը ոռնում էին...»

Նույնիսկ գիտ Մարթան նրան խելագար էր անվանում և ամեն տեղ պատմում նրա անհեթեռությունների մասին։ մի անգամ Մարկոսյանը բաժակ տվեց Մարթային, ասելով՝

— Գնա, մի վեղրո չուր բեր...

Մի ուրիշ անգամ կեղտոտ ափսեն դիտմամբ կոտրեց ու տաց.

— Էս լավը չի, մի ուրիշը բեր...

Մի անգամ էլ, երեկոյան մթնշաղին, բահը ուսին կանգնել էր պարտեզի գոների մոտ։ Երբ Մարթան հարցրեց, թե ինչո՞ւ է կանգնել, նա տաց.

— Պահակ եմ այսօր, եթե անցաթուղթ չունես, չեմ թողնիլ...

Այս բոլոր նորությունները մանրամասնորեն տարածվում էին գյուղում։ գիտեին նույնիսկ, որ Մարկոսյանը փայտեր էր շարել սենյակի պատերի մոտ, կարծելով թե հրացաններ

Էն: Վերջին նորությունն այն էր, որ նա առաջարկել էր դիմ՝
Մարթային՝

— Արի ամուսնանանք, շատ երեխաներ կունենանք,
գայլերին միասին կքշենք...

Այժմ նա օրը մի քանի անգամ պատում էր տան սե-
նյակներում, բացում բոլոր դռները, նորից կողպում, իբր թե-
փորձելու համար՝ թե ամուր են արդյոք. երբեմն առաջին
անգամ թողնում էր բաց, հետո երկրորդ անգամ գալով՝ կող-
պում էր:

Բայց ոչ ոք չդիտեր այն, որ նա մի շաբաթ էր՝ գայլերի-
ահից գիշերներն անց էր կացնում պահարանի վրա նստած
ու այդպես մնում մինչև առավոտ: Գայլերը գալիս էին, ու-
նում, փորձում կոտրելու դուռը, իսկ նա լուսաբացին իշխում
էր աշքերը շուած՝ լուսնոտի նման և ուժասպառ ընկնում ան-
կողնի վրա:

VI

...Բարակ անձրել հոգեմաշ՝ դանդաղությամբ շիշկում
էր տանիքի վրա: Սեփականատեր Մարկոսյանը վառել էր
լամպը, բայց ապակին չէր դրել: Զեռքին բռնում էր Պառուղ-
ուի «Ի՞նչ է սեփականությունը» գիրքը, նա շարունակ մռաց-
նում էր լամպին դրել ծայրերը ու ինչ-որ տարօրինակ բա-
ցագանչություններ անում, ինքն իրեն խոսում:

— Հը, տապալվեցի՞ր... վճռված է քեզ այրել խարուցի-
վրա... այ միջնադարի հանճարեղ միջոց...

Սենյակում տարածվում էր այրված թղթի հոտը...
Հանկարծ հնչեց գայլերի ոռնոցը: Նա հապճեպ թողեց
ամեն ինչ ու աթոռը մոտ քաշելով, բարձրացավ պահարանի
վերեր:

Լամպի լույսը հետզհետե թուշանում էր: Նավթն արդեն
ամբողջովին այրվել էր: Քիչ անց նա հանգավ, մթության
մեջ նա սենում էր աշքերը, կարծես ձգտելով ինչ-որ՝ բաներ
տեսնել...

Ունոցը մոտենում էր... Հանկարծ նա դադարեց. լոռւ-
թան մեջ շոխնդով բացվեցին հետեւի կողմի դռներն ու լովեց
կողկոնձոց. ինչ-որ կենդանի շնչեր լցվեցին սհնյակը...

Մարկոսյանը բնագդաբար կծկվեց, կպավ պատին:

...Հետևյալ օրը գիծ Մարթան նկատեց, որ բոլոր դռները
գավթի կողմից բաց էին: Ներս մտնելով՝ նա մնաց ապշած.—
պահարանի վրա անշարժ ընկած էր Մարկոսյանը: Որքան
էլ Մարթան ջանքեր արեց նրան զարթեցնելու համար, ա-
պարդյուն անցավ: Նա պրդեն մեռած էր:

Սեղանի վրա էր Պրուդոնի գիրքը՝ այրած անկյուննե-
րով...

ԼՈՒԾՆԻ ՇՈՂԵՐՈՎ

1

— Աշքդ լույս Գուրգեն, մեզ մոտ մի ուսանողուհի է գացու, — ասաց սովորողի վարիչն իր մոտ կանգնած պրակտիկանտ ուսանողին, ցուց տալով նոր ստացած նամակը. — կարծում եմ քո գիտական հետազոտություններից ավելի հետաքրիր զբաղմունք կունենաս...

— Զուր ես կարծում, որ մի ուսանողուհու պատճառով ամեն ինչ կմոռանամ, — ասաց ուսանողը վճռական տ'ոնով:

— Կասկածում եմ... ասա տեսնեմ, եթե գա մի գեղեցիկ օրիորդ, ժպտա երեսիդ, չե՞ս տարվիլ ոսկե երազներով, չե՞ս դավաճանիլ գիտությանդ:

— Բնդշակառակը, ես նրան էլ կլծեմ գիտական աշխատանքի և խստապահանջ կլինեմ...

— Երիտասարդությունն ավելի լուրջ է ձեւանում, քան է իսկապես...

— Բայց կատակ ես անո՞ւմ, թե ճիշտ գալու է:

— Հը՞, արդեն հետաքրքրվեցի՞ր, — ասաց գյուղատնտեսը, թեք նայելով ակնոցների տակից ու ժպտալով իր դեմքի կնճիռներով. — Բայց էլ ոչինչ չեմ ասիլ. — պետք է տեղ թողնել երազելու համար...

— Ռոմանտիկ երազները ձեր հին սերնդին են պատկանում. մենք նայում ենք կնոջն առանց մշուշի, առանց քողի...

— Էլի ինձ հին աշխարհն ուղարկեցի՞ր. ուրեմն քո ասելով ես էլ փրկություն չունեմ անցյալից:

— Դու թեղետ անցել ես ուսուցիոն ուղիով, բայց ակամա կոշիկներիդ հետ բերել ես անցյալի փոշին...

— Հե՞յ գիտի անցյալի հերոսներ, մի զարթներ, տեսեր, ինչպես է որակում ձեզ ընկեր Գուրգենը...

— Հարցից շեղվում ես ընկեր Միքայել—խոսքը ոսմանտիկ տրամադրությունների մասին է, ո՞վ է ուրանում, որ անցյալում պայքարել են հերոսաբար:

— Այո, պայքարել են, տանջվել բանտերում, տապալել հին կարգերը, որպեսզի հետո Գուրգենիկները գան նստեն պատրաստի սեղանի շուրջն ու մեզ էլ քննադատեն:

— Էլի՞ ձեր մեջ խոսեց հին ինքնասիրությունը. ես, իշարկե, բարձր եմ գնահատում անցյալի պայքարը, բայց մի՞թե մեր սերնդի վրա պակաս ծանրություն է դրած:

— Ուզում ես ասել, թե դուք լարված աշխատանքի մեջ եք, — ես այդ անտես չեմ անում, բայց դու հաճախ մոռանում ես, որ կա մի ուրիշ՝ բարձր պայքար, որը կապված է հերոսության հետ...

— Ուրեմն, քո ասելով, մեզ փրկություն չկա՞մ, մինչև չանցնենք հերոսության կամուրջով:

— Այո՛, ձիշտ է, և ասեմ ինչո՞ւ. — միայն փոթորիկի ժամին է որոշվում, թե ո՞վ է հերոսը, ո՞վ է պատրաստ ճակատամարտի ելնելու, և ո՞վ է պատրաստ քսան ու չորս ժամում ուրանալու ամեն ինչ... Դո՞ւք, նորերդ՝ մեծ բանաստեղծի ասելով՝ գիտեք թե ի՞նչ եք, բայց չգիտեք թե ի՞նչ եք լինելու...

— Բայց չե՞ն որ մեր խոսքն ընթանում է դործի հետեւրեմն ի՞նչ է նշանակում քո այդ անողոք «գործության ժամը»:

— Զեօ աշխատանքը մոտեցում է միայն, բայց ոչ միակատար հատուցում... Երբ միշնադարյան ասպետը երդում է տալիս իր ուխտին, նա գիտեր, որ մի օր պիտի զնա մինչև վերջ—մինչև անձնազոհություն... Անցյալում ուսուցիոնների համար միշին ճանապարհ չկար...

— Անձնազոհություն... ահա թե ի՞նչ. — կներես, ընկեր

Միքայել, բայց դու անցյալի մեթոդներով ես մոտենում նոր կյանքին. այժմ մեր առաջ ծավալվում է աշխատանքի, շինարարության պայքարը...

— Մեթոդները փոխվել են մեր առօրյա աշխատանքի վերաբերմամբ, բայց հերոսության հեռանկարները մնում են նույնը, եթե աչքի առաջ ունենաս, որ մենք գտնվում ենք մի վիթխարի, երկարատև կովի շրջանում, որի ընթացքում կարող են լինել «փորձության ժամեր»...

— Բայց եթե ես տալիս եմ բոլոր ուժերս սոցիալիստական շինարարության, ուրեմն ի՞նչ ուզի՞ց հեռանկարների մասին է խոսքը:

— Մի՞թե պարզ չէ իմ տեսակետը.—ամեն անգամ, երբ դու համոզում ես քեզ և ուրիշներին, որ կոմունիզմի անշեղ գինվոր ես, պիտի իմանաս, որ այդ խոսքերը կարող են հագուցում պահանջել, պահանջել, որ գնաս մինչև վերջը՝ մինչև անձնագործությունը...

— Ուզում ես ասել, թե վճռական մոմենտներին կլինեն եքողներ... բայց ասա խնդրեմ, մի՞թե ձեր սերունդը միայն անձնագործության շավզով էր ընթանում պայքարելիս:

— Գնացողը գնում էր մինչև վերջը, լքողը լքում էր, բայց զառամատ առաջանում էր առաջին քայլերից, և ամենաքարուր զտողը՝ անձնագործության հեռանկարն էր...

— Ընկե՛ր Միքայել, մենք նորից սկսում ենք մեր հին վեճը, և կարծում եմ իրար չենք համոզելու, ավելի լավ չէ՝, քանի որ տեղը եկավ, պատմես, թե ի՞նչպես է սկսվել քո ուսուցիոն գործունեությունը, դու մի քանի անգամ ինձ խոստացել ես...

— Լավ, քանի որ խոսքը եկավ, պատմեմ, թե ինչպես առաջին անգամ պրակտիկայի գնացի, առայժմ այդքանով բավականացիր... Այն ժամանակ՝ ամառվա սկզբին, ինձ ուղարկել էին պրակտիկայի Հարավային Ռուսաստանի մի խոշոր կալվածք: Նրա տերն ամեն ամառ ընդունում էր միայն մի պրակտիկանատուսանող, վախենալով երկուսից, և առաջասարակ հոգնակի թվից, որովհետեւ նրա կարծիքով դրա-

Նից կարող էր ուսուլուցիւա ծագել: Գնալով այնտեղ, ես շուտով՝ համոզվեցի, որ այդպիսի մթնոլորտում անկարելի է որևէ լուրջ գործ ձեռնարկել: Հազիվ աշխատանքս սկսած, առաջ եկավ կալվածատիրոջ կինը՝ հղիացած մի գեղեցկուհի, որը փնտրում էր միայն հաճույք, նորություն: գալիս էր այդին, մոտս կանգնում, ու սկսում շաղակրատել աշքերիս շեշտակի նայելով, ինչոր գաղտնի ներշնչումներ անելով:

— Այս բուշերը դո՞ւք եք հավաքել, — հարցնում էր. — Ինչ գեղեցիկ են... բայց գիտնական շգանաք. նրանք շատ ձանձրալի մարդիկ են, — իսկի շեն կարողանում կանաց զբաղեցնել... Այսօր շատ աշխատեցիք, կհոգնեք, դնանք վերև, կակառ խմելու... այնտեղ կպատմեք ինձ այս հետաքրքիր բուշերի մասին...

— Այդպես, մոտ երկու շաբաթ նա պատվում էր իմ շուրջը, իսկ ես Հովսեփի — գեղեցիկի դերը կատարելով, խուսափում էի նրա ցանցերից. նա շարունակ առաջ էր խաղում, իսկ ես ետ էի նահանջում: Հաճախ խնդրում էր ինձ ուղեկցել իրեն մինչև կալվածքի ծայրին գտնվող մատուր, որի շուրջը թաղված էին իրենց տոհմի ներկայացուցիչները: Գնում էր թախծոտ զեմքով: իրը թե աղոթելու, բայց իրապես սիրաբանելու նպատակով: Ինչպես հետո իմացա, ամեն ամառ նա նույն կերպ սիրաբանում էր բոլոր պրակտիկանուների հետ:

— Իսկ ամուսինը, — հարցրեց Գուրգենը:

— Ամուսինը մատների արանքով էր նայում. նա էլ իրեն հաշիվներն ուներ. — կալվածքն ստացել էր կնոջ բաժինքի հետ, այդ պատճառով էլ կնոջ ձայնն ավելի ուժեղ էր հնչում:

— Այս քեզ լավ պրակտիկա. ֆեոդալական-բուրժուական կուլտուրան ես ուսումնասիրել՝ վարթամ կյանքը, սերն ու աղոթքը...

— Շտապում ես, ընկեր Գուրգեն, դեռ կարդա մյուս երեսը, հետո ասա... երկար շտենց այդ խաղը. պետք է ասեմ, որ ես այն ժամանակ արդեն տարված էի ուսուցիոն

գաղափարներով։ Ինձ համար ավելի քան պարզ էր, որ այդ հեքիաթային շքեղությունը հիմնված է քաղցած գյուղացիների ուսերի վրա։ Հիշում եմ՝ մի լուսնյակ գիշեր, երբ կալվածատիրոջ հյուրերը հարրած գոռում-գոչում էին պատշգամբում, ևս քայլում էի այնտեղ երկար ու ձիգ ծառուղիներով ու խորհրդածում հին կարգերի մասին։ Մեջս կուտակված ունելուցին տրամադրությունն ավելի բռնկվեց։ Ու այդ գիշեր ես երգվեցի ընդմիշտ նետել իմ ուժերը ունելուցին պայքարի մեջ... Հետևյալ առավոտը, պատրվակ բռնելով, թե անակընկալ գործով ստիպված եմ մեկնելու, թողի կալվածքն ու գնացի Մոսկվա... այնուհետև շարունակվեց իմ ունելուցին կյանքն իր բանտերով, աքսորներով, բայց դա երկար պատմություն է, գրա մասին մի ուրիշ անդամ...»

— Բայց շմոռանաս, ընկե՛ր Միքայել, որ քո ունելուցին երգումն արել ես ոոմանտիկ լուսնի շողերի տակ...

— Իսկ դու էլ շմոռանաս, որ չկա ավելի անաշառ վկա, քան լուսինը, և փոխանակ ինձ քննադատելու, ավելի լավ է խոստովանես, որ դո՞ւ էլ ունես այդ երազներից...»

— Ո՛չ, մենք ունելուցին էնտուզիաստներ ենք, բայց ոչ ոոմանտիկներ:

— Դու այն հասակումն ես, որ ոչ միայն լուսինը, այլև արեք ոոմանտիկ կղարձնես... բայց լավ, թող քո ասածը լինի, էնտուզիաստ ասենք: Ես էլ հենց այդ քո էնտուզիազմի վրա մի գաղտնի պլան եմ հիմնել, որ այժմ պիտի բացեմ, — այստեղ մոտիկ մի գյուղ կա, որի շեֆը մեր սովորողն է, այդ գյուղը կուլակների ազդեցության տակ խորշում է կոլխոզից։ Ահա թե ի՞նչն է սպասում քո էնտուզիազմին...»

— Ի՞նչպես կանխեցիր իմ ծրագիրը — ես էլ հենց նույն մտադրությունն ունեմ:

— Ուրեմն այս կետում հին ոոմանտիկն ու նորագույն էնտուզիաստն իրար ձեռք են մեկնում:

— Այդպե՞ս, ընկեր Գուրգեն, մտածիր այդ ծրագրի շուրջը, իսկ ես գնամ աշք ածեմ մեր տնտեսությանը, տեսնեմ ի՞նչ նվաճումներ ու աճումներ ենք ունեցել այսօր։

Ասաց ու հեռացավ արագ, կարծես սթափիլելով ոչ-գործ-նական խոսակցությունից:

...Արևը մայր էր մտնում, լուսավորելով հեռավոր լեռների գագաթները: Ամառվա երեկոյի հովին էր փշում, թարմություն ներշնչելով ցերեկվա շողից թմրած մարդկանց: Սովորզի ծառուղիներով վերագառնում էին բանվորները: Նրանց մի մասը խմբվել էր կոռոպերատիվի դռանը, սպասելով հացի հերթին, ինկ մյուսները՝ նստած ճաշարանի առաջ, երկար սեղանների մոտ, թեյով էին զբաղված: Մշտական բանվորների կանանցից, ո՞րը ջուր էր տանում ալբյուրից, ո՞րն էլ երեխային էր փնտրում, կամ սամովարը տաքացնում էր շոր փայտի կտորներով: Շենքերից մեկի ճակատի ուղիով իր բարձրախոսն ինչ-որ ասիսական եղանակ էր սկսել:

Երեկոն իջնում էր, հետզհետե խտացնելով իր քողը: Տեղ-տեղ փայլող էլեքտրական լամպերը, մթին հակառակ քանի զնում, ավելի էին պայծառացնում լուսերը:

Գուրգենը դանդաղ քայլերով ետ ու առաջ էր գնում ծառուղիով, մտածելով Միքայելի հայտնած լուրի շուրջը՝ թե ուանողուհի է գալու: Մի ուրախություն էր իջնում վրան.— «Ի՞նչ արտաքինով, ի՞նչ բնավորության տեր կլինի նա», կարծես հարցնում էր նա ինքն իրեն ու երևակայության մեջ ստեղծում էր ցանկալի պատկերը... Աչա նա գալիս է, իր գեղեցիկ, պայծառ դեմքով, ու լցնում իր սիրտը մի նոր զգացումով... ծանոթանում է իր՝ Գուրգենի ծրագրերի հետ, հափշտակվում, թե է տալիս... Ապա մշուշապատ հեռվում նկարվում էին իր ապագա դիտական հետազոտումները, զյուտերը, իրենց միասին գործունեությունը, մի արտակարգ ոգելառ թափով...

II

Հինգ օրից հետո՝ երեկոյան դեմ, սովորզի գլխավոր շենքի գավթում մի կառք կանգ առավել Կառքից իշավ մի օրիբրդ՝ մոխրագուն, համեստ զգեստով, գլխաբաց, կարճ մաղերով: Նա բարձրանալով վերև՝ պատշգամբ, աշք ածեց

պատուհաններին: Գուրգենն այդ ժամանակ, ինչ-որ կարևոր գործ լերջացրած՝ ինքնամոռացության մեջ բարձր շվալացնելով քայլում էր սենյակում: Պատուհանից նկատելով օրինորդին, նա խսկույն ենթադրեց, որ եկողն ուսանողուհին է, ու ակամայից շառագունեց, կարծես տեղն ու տեղը բանել է ին հանցանքի մեջ: Նա խսկույն դուրս եկավ պատշգամբ:

— Այստեղ է ընկեր Մամվելանը, — հարցրեց ուսանողուհին թեթև հուզվելով, ենթադրելով, թե Գուրգենն է սովորված:

— Այո՛, նա այստեղ է ապրում, բայց երկու օրով գնացել է քաղաք:

— Ես եկել եմ որպես պրակտիկանոտ...

— Ընկեր Միքայելին արդեն գրել են ձեր մասին:

— Ուրեմն կարո՞ղ եմ այստեղ իշխանել:

— Այո՛, իհարկե... դուք այստեղ նստեք, ես կրերեմ ձեր քրերը:

— Ո՛չ, ես ինքս կրերեմ, — ասաց ուսանողուհին ու արագ քայլերով իշավ սանդուղքներով: Գուրգենը հետևեց նրան: Կարծես երկուան էլ մրցում էին իրար հետ, թե ո՞վ շուտ կհասնի կառքին: Օրիորդն ուզում էր միանգամից վերցնել բոլոր իրերը. Գուրգենը հազիվ կարուղացավ վերցնել մի կապոց:

Իրերն առժամանակ տեղավորեցին Գուրգենի սենյակում: Սկսվեց սկզբնական ծանոթության կցկուր խոսակցությունը.

— Դուք ո՞րտեղից եք գալիս, ընկեր:

— Բարվեց. — խսկ դուք վաղո՞ւց է այստեղ եք:

— Մոտ քսան օր:

— Մի՞թե միայն դուք եք այստեղ որպես պրակտիկանոտ:

— Մի շաբաթ առաջ շորս ուսանողներ էլ կային, բայց նրանց շտապ կարգով ուղարկեցին գյուղերը. ես մնացի, որպես ինձ հանձնարարված են գիտական աշխատանքներ:

— Խսկ ո՞վ է փոխարինում վարիչին:

— Առաջմ ես:

Ուսանողուհին հանեց իր վկայականները և տվեց Գուրգենին:

Գուրգենը կարդաց լուրջ արտահայտություն տալով դեմքին:

— Առայժմ պահեք, — ասաց Գուրգենը, — հետո եռք կդա
ընկեր Միքայելը, նրան իհանձնեք:

Մի քանի սովորական հարցերից հետո Գուրգենը, ցանկանալով միայնակ թողնել ուսանողուհու, որպեսզի նա
կարդի բերի իրերը, առաջարկեց.

— Դուք այստեղ հանգստացեք, իսկ ես կերթամ սամովար պատվիրելու:

Կես ժամից հետո սամովարն արդեն սեղանի վրա էր:
Հասմիկը (այսպիս էր ուսանողուհու անունը) աննկատելի
ստանձնեց տանտիկնոց գերը, — սկսեց կարդի բերել սեղանը,
թեյի համար տեղ բաց անելով: Նա ժպտում էր, մաքրելով
սեղանի փոշին, հացի ու պանրի մնացորդները, թղթի կտոր-
ները, իսկ Գուրգենը կարմրում էր, աչքերը սեեռելով նրա
վրա: Ամեն անգամ, երբ Հասմիկը հայցքը դարձնում էր
սենյակի որևէ կողմը, Գուրգենը հուզվում էր. նրան թվում
էր, թե ուսանողուհին քննադատում է մտքում իր փնթի սարք
ու կարգը, որ ինքն էլ այժմ պարզորեն նկատում էր թափ-
թրկված, փոշուտ գրքերը, անկարգ դես ու դեն ընկած սեր-
մերի պարկերը, սրվակները:

Ամեն ինչ պատրաստելուց հետո, նրանք նստեցին թեյի
իրար դիմաց ու սկսեցին խոսել՝ սկզբում զյուղատնտեսական
հարցերից, ապա անցան ուսանողական վյանքին. — պատ-
մում էին ծիծաղելի դեպքեր պրոֆեսորների կյանքից: Սա-
կայն նրանց հետաքրքրողն ավելի իրար լսելն էր, քան խո-
սակցության նյութը: Մի գուրեկան, գուրգուրող զգացում էր
գալիս մեջները, կարծես վաղուց մտերիմ էին ու երկար բա-
ցակայությունից հետո գտել էին իրար:

Աննկատելի վրա հասավ մութը: Գուրգենը վեր կացավ,
վառեց էլեկտրական լամպն ու օգտվելով ընդմիջումից, սկսեց
կարդի բերել իր պարապմունքների սեղանի վրայի գրքերն
ու իրերը:

— Վերջերս շատ փնտի եմ դարձել, ընկեր Հասմիկ, կներեք, որ ձեր ներկայությամբ եմ դասավորում դրբերս:

— Ո՛չինչ, երկի շատ էլք տարվել գիտական աշխատանքով:

— Այո, այդ էլ կար:

Մինչ Գուրգենն զբաղված էր իր գրքերով, Հասմիկը դիտում էր նրան, — ալուրց տղա է երևում, — մատում էր նա, — երկի պրոֆեսոր է զառնալու... մի քիչ փնտի է, բայց ոչինչ, կանցնի... պրոֆեսորի արտաքին ունի — լավն ճակատ, խոշոր դիմադժեր, խիտ հոնքեր... ոգևորված կիսուի...»

Ու խկույն Հասմիկն ինքն իրեն երեակայեց նրա օդնական, — պիրար կսաղենք, — նա շագանակագույն, գանգուր մազերով, կապտավոն աշքերով, խիկ ես սեռմկ... իմ սե, խոշոր աշքերով, զարմացած կնայեմ նրա դեմքին մի քիչ ներքեմց, (ես ցածր եմ նրանից)... բայց ի՞նչ ծիծաղելի աղջիկ եմ, այնպես եմ համեմատում ինձ նրա հետ, ասես հետն ամունանալու եմ...»

Գուրգենը եկավ նստեց տեղը: Երկուսն էլ լուռ էին:

— Բնկեր Գուրգեն, որտե՞ղ եմ գիշերելու:

— Այս հարեան սենյակում:

— Խիկ եթե վարիչը վերադառնա՞:

— Նրա սենյակն այն մյուսն է:

— Ուրեմն սենյակն ապահովվա՞ծ է:

— Ոչ միայն սենյակը, այլև ամեն տեսակի աջակցություն:

— Ծնորժակալ եմ:

Գուրգ կիսով շափ բացվեց. արանքից ներս նայեց այդպահն Մուկուշը:

— Ինձ կանչո՞ւմ էիք:

— Արի՛. լավ ժամանակին եկար. սամովարը կտանես, թեյ կիսմես. հետո էլ կասես կնկանդ, որ գա էս կողքի սենյակը մաքրի. ընկերը պետք է այդտեղ ապրի:

— Բարով եք եկել, — ասաց Մուկուշը, ձեռքը Հասմիկին

մեկնելով սեղանի վրայից.—էս ո՞նց է բանը, հընկեր Գուրգեն, հարսնացո՞ւր է:

— Զէ՛,—ասաց Գուրգենը ծիծաղելով.—ընկերը պետք է մեղ մոտ աշխատի:

— Հա՞՝, ագրանամ է սովորելո՞ւ. ա՞յ թե կնանիք սովորում են է՛. մի թվանք գցելն է մնում, վա՞յ թե էն էլ ձեռներից խլեն: Մենակ իմ կնիկն է, որ ամեն բանից վախենում է. գնում է էս մոտիկ գեղը. կնանոցից սուստ խարարներ լսում, ու հուշտ ըլում. մթամ ասում է՝ կոլխոզում կանանց «օրշի» (ընդհանուր) են անում: Ես գիր սովորեցի, իսկ նա ասում է դժար է, կարալ շեմ...

— Ես կհամոզիմ, կսովորեցնեմ,—ասաց Հասմիկը:

— Ա՞յ լավ բան կանես:

Նա հավաքեց բաժակները սինու վրա, վերցրեց բոլորը սամովարի հետ ու տրեխները հատակին քսմսելով դուրս գնաց:

Մի քառորդ ժամից հետո, պատշտամբ բարձրացավ նրա կինը, զրնգալեն բացեց հարևան սենյակի դուռը, ու սկսեց թրիսկացնելով մաքրել: Մի ուրիշ անգամ նա կմաքրեր ու առանց իմաց անելու, կիշներ ներքե, բայց այժմ, լսելով Մուկուչից, որ Գուրգենի մոտ աղջիկ է եկել, հետաքրքրությունը բռնել էր: Նա ներս մտավ, կանգնեց դռան շեմքին, աշքի տակով դիտեց Հասմիկին ու ասաց.

— Սենյակը պատրաստ է:

Ու նորից հայացքը նետելով Հասմիկի վրա, դուրս գնաց: Հենց նոր էին տեղափոխել Հասմիկի իրերը մյուս սենյակը, երբ ներս մտավ Միքայելը:

— Ա՛, բարով, Գուրգեն, բարով եք եկել, ընկեր,—ասաց նա Հասմիկի ձեռքը սեղմելով.

Հասմիկը հայտնեց իր գալու նպատակը:

— Թեպետ ես տանը շէի, բայց կարծում եմ, ընկեր Գուրգենը ձեղ լավ ընդունած կլինի:

— Այո՛, շնորհակալ եմ Հյուրասիրությունից:

— Դե՛, ընկեր Գուրգեն, պատրաստվիր—աշքի առաջ ոնեցիր, որ սոցմրցում է լինելու քո և ընկերոջ մեջ:

— Մի՞թի, — ասաց Հասմիկը, —ուրեմն գործու բայական դժվարանալու է:

— Ոչ թե ձերը, այլ ի՞մն է դժվարանալու, — վրա բերեց Գուրգենը:

Սովորական հարց ու փորձից հետո, ընկեր Միքայելն ասաց Հասմիկին:

— Էս ինչ լավ է ձեր դալը. մեկ-մեկ տանտիկնոջ աշքով կնայեք մեր սարք ու կարգին, ապրուատին...

— Տղամարդիկ շարունակ պնդում են, — ասաց Հասմիկը, — թե կնոջը պիտի աղատել ընտանեկան մանրունքից, բայց հարմար բոպեին իրենք են մղում մեղ դեպի այդ մանրունքը:

— Անցյալի ժառանգությունն է, — ասաց Գուրգենը թեք նայելով ընկեր Միքայելին:

— Դե՛, Գուրգեն, սկսի՛ր, անցյալի բոլոր մեղքերն ինձ վրա բարձի՛ր...

— Կենացի ժամանակ չէ՞ որ ասում են՝ թույլ տվեք հանձնու ձեր՝ խմելու... և այլն, — ասաց Գուրգենը ծիծաղելով:

— Հա, լավ ես գտել «անձս»... ընկեր Հասմիկն, իհարկե, այդպիս չի մտածում:

— Ես ձեր ասածի մեջ մի առանձին բան չեմ տեսնում, — պատասխանեց Հասմիկը, — իսկ ինչ վերաբերում է տնային դրծերին, կարծում եմ, պիտք է կոմունայով աշխատենք:

— Ես համաձայն եմ, — ասաց Միքայելը:

— Ես էլ իհարկե, — ավելացրեց Գուրգենը:

— Դե ինձ կներեք, — ասաց ընկեր Միքայելը. — Ես միայն մի քանի բոպեով եկած շտապ կարգով պիտի զեկուցում ներկայացնեմ, գուք էլ հոգնած կլինեք, պիտի հանգստանաք:

Ամեն մեկը քաշվեց իր սենյակը: Գուրգենը, քառորդ ժամի շափ մտամոլոր քայլեց սենյակում, անուշադիր թեքթեց գրքերը, ապա գուրս եկավ պատշգամբ: Հասմիկի գուրս գնալուց հետո սենյակը կարծես հանկարծ դատարկվեց, դարձավ անհրապույր, ամայի:

Նա նստեց պատշգամբում թողած մի խարխուկ աթոռի վրա: Դիմացը՝ երկնքում, լուանեղջյուրն էր՝ իր խոտացրած լույսով, ու կողքին մեղմ, պսպղուն աստղը: Երկնակամարում և փոփած աստղերը նայում էին հեռավոր ժայռով, ասես մըցելով իրար հետ, թե ո՞րն ավելի պարզ կերևա:

«Ինչո՞ւ եմ այսպես անհանգստանում, զգացումներիս տեղի տալիս,—մտածում էր նա.—մի՞թե ընկեր Հասմիկի դալու պատճառով... Գուցե նրանից է, որ միայնության մեջ էի, —կտրված ընկերներից, ու առաջին պատահած ուսանողութին պետք էր ուժեղ տպավորություն աներ վրաս...»

«Կուզեի դարձյալ Հասմիկի հետ լինել, և այս ցանկությունը խոսեցնում է ինձ աստղերի հետ... Հիմա եթե գա ընկեր Միքայելը, տեսնի ինձ այս սանտիմենտալ դրության մեջ, կասի,—Հը՝՝ ո՞նց ես, մեր տղա, Երա՞զում ես լուսնի հետ...»

Ու այդ մտքից սթափված, նա շտապով ներս մտավ սենյակը, իսկույն հանվեց, պառկեց անկողնում: Բայց երկար ժամանակ քունը չէր տանում. պտտվում էր անկողնում, ականջ դնում հարեան սենյակին, որտեղ Հասմիկն էր. —ու մի շշով չէր լսվում: «Հասմիկը երեկի քնած է ճամփորդի խորը քնով ու երազում ծիծաղում է իմ սանտիմենտալ դրության վրա». —ժպտաց Գուրգենն իր մտորումների վրա ու ընկավ քնի գիրկը:

III

Հետեւալ առավոտ Գուրգենը զարթնեց սովորականից ամելի ուշ՝ դռների թխկթխկոցից: Արևն ընկել էր պատուհանից ներս ու տարածել սենյակում թուղացնող շոգը: Նա վեր թռավ շշմած, ու սկսեց հագնվել անկամ, կարծես ոչ մի ցանկություն շուներ շարժվելու: Բայց հանկարծ ականջին ընկավ պատշգամբից Հասմիկի ձայնը, ու կարծես սատր ջրից ցնցուղն ընկավ աշքերին, միանգամից զարթեցրեց: «Չէ՝ որ Հասմիկն այնտեղ է», անցավ նրա մտքով, ու շտապիշտապ հագնվելով դուրս եկավ սենյակից:

— Բարեւ, — ողջունեց նրան Միքայելը. — ի՞նչ եմ տես-
նում, ընկեր Գուրգեն, այսօան քնէ՞լ. սա քեզանից չի. Հենց
առաջին օրվանից տեղի ես տալիս:

— Հա, գիշերս կարդալով ընկա, ուշ քնէցի, — հնարեց
Գուրգենը:

— Ես ու ընկեր Հասմիկը քեզ ենք սպասում:

— Ես պատրաստ եմ, — ասաց Գուրգենը:

Նրանք միասին թեյ խմեցին ու հետո դուրս եկան ընկեր
Հասմիկին ծանոթացնելու սովորողի հետ:

Հասմիկը հագել էր բացկապուլտ, բարակ զգեստ, դե-
կուտեռվ, թեքը կիսաբաց: Նրա մեջ արդեն շքացել էր նո-
րեկի անվատահությունը, և իրեն զգում էր, որպես իր հարա-
զատ միշավայրում:

Հասնելով գոմին, ընկեր Միքայելն ասաց.

— Ծնկեր Գուրգեն, թեպես իմ պարտականությունն է
ընկեր Հասմիկին ծանոթացնելու մեր անտեսության հետ,
բայց կներես, որ շատ եմ զբաղված, խնդրում եմ քեզ վրա
առնես այդ գործը:

— Լավ, — ասաց Գուրգենն ուրախանալով. կարծես հենց
իր ցանկությունն էլ այդ էր: Նա իսկուն Հասմիկին հետն
առած, ճանապարհը ծոեց դեպի սովորողի այգին:

— Գուցե ձեզ համար ժամանակի վատնում է ինձ ծա-
նոթացնելը, — ասաց Հասմիկը, փորձելու նպատակով: — Ես
կարող եմ հետաձգել մի ուրիշ անդամի...

— Ընդհակառակ՝ շատ ուրախ եմ, որ ինձ վիճակից
ձեզ բացատրություններ տալ. բայց ինչո՞ւ այդ միտքը եկավ
ձեր մեջ:

— Սենյակից դուրս եկաք մուայլ ու դժգոհ դեմքով, և հս
ենթադրեցի, թե պատճառը ես եմ:

— Ո՛չ, դա թյուրիմացություն է. Երեկ գիշեր ուշ քնէցի,
Հիմա էլ վեր կացա ծանր գլխով. դա էր պատճառը, և ուրիշ
ովհնչ. այժմ արդեն անցավ:

Նրանք անցան ծառուղիներով, տեղ-տեղ կանգ առնելով
այս կամ այն ծառը գիտելու համար: Երկուակ փոխադարձ

Ճպումն էր՝ լինել միասին և որքան կարելի է՝ մարդկանցից հեռու:

Կես ժամի շափ այգում շրջելուց հետո, Գուրգենն առաջարկեց.

— Նստենք այս ծառի տակ, վորքը ինչ հանգստանանք: Նստեցին ծառի լայն ստվերում ու լուս նայում էին գետենին, խոտեղը պոկոտելով: Բուշերի բուրմունքի ալիքների հետ մի ինչ-որ սիրո լցնող զգացումն էր դալիս: Երկուսն էլ զգում էին, որ ուրախ էին իրար մոտ լինելուց, բայց խսում էին այլ բաներից:

Հասմիկը հանեց թաշկինակը և ուղղեց գրպանը:

— Այդ ինչ շատ բաներ կան ձեր գրպանում:

— Շատ չէ, բայց մի մեծ բան ունեմ:

Ու հանեց ատրճանակ:

— Ատրճանա՞կ, — զարմացավ Գուրգենը. — ինչո՞ւ համար եք պահում:

— Սիրային գողերի համար...

— Սիրային գողերի՞... դա ի՞նչ սոսկալի պրոզա է..

— Ընդհակառակը, դա մի բանաստեղծական արտահայտություն է:

— Հետո՞,— անգիտակցաբար հարցրեց Գուրգենը:

— Հետո՞... երբ գնում եմ պրակտիկայի, հետա տանում եծ այս ատրճանակը... բայց ինչո՞ւ այդպես հուղվեցիք...

— Ո՞չ, չեմ հուղվում... բայց ինձ մի քիչ տարօրինակ թվաց... երեի ձեզ անցյալում մի դժբախտություն է պատահել:

— Դժբախտություն չէ, բայց եղել է մի անախորժություն:

Գուրգենը լոեց: Մի հիասթափում անցավ վրայով, ասես կանաչ ծառը հանկարծ տերեւթափ եղավ նրա առաջ: Նա պատկերացնում էր Հասմիկին նուրբ զգացումներով մի կին, և հանկարծ՝ այդ ատրճանակը, ու մանավանդ այդ բաներ՝ ուիրային գողեր...»

— Շարունակենք մեր էքսկուրսիան, — ասաց Հասմիկը,

լոռությունը խախտելով ու տեղից վեր թռչելով։ Գուրգենը հետեւ նրան։ Գնացին բանջարանոց։ Մուկուն աշխատում էր՝ մարդերում, գլխին կարմիր աղջուխ կապած։

— Բարեկ, Մուկուչ, — ասաց Գուրգենը, — ինչպես է բանջարանոցդ։

Մուկուչը բարձրացրեց կորացած մեջքն ու հենվեց բաժին։

— Բարով եք եկել, քալամի վրա որին է երևացել։

— Ո՛չինչ, վաղվանից դեղ կանենք։

Երբ նրանք բավականաշափ հեռացան, Գուրգենն ասաց։

— Մուկուչը մեր հին այգեպաններից է։ Նոր բաների հետ այնքան էլ շոմի, բայց եռանդով աշխատող է։

Հետևյալ մարդերում աշխատում էին երիտասարդ գյուղացիները։

— Սրանք մեր նոր պրակտիկանուներն են, — բացատրում էր Գուրգենը, — լսել են կարծատե կուրսերը և այժմ անցնել են գործնական աշխատանքի։

Բանջարանոցների շարքը դիտելուց հետո, նրանք վերադարձան կաթնատնուսական մասը։ Մի քանի շենքեր բաց թողնելով, ներս մտան նոր կառուցած գոմը։

— Մանկությունից իմ առաջ պատկերացել է գոմը որպես մութ, նեխված՝ աղբի մեջ կորած մի որշ, — ասաց Գուրգենը ժպտերես, — և հիմա ամեն անդամ, երբ ներս եմ մտնում այս լուսավոր գոմը, տարօրինակ է թվում, որ ոչ մի մութ անկյուն չկա, հատակը բետոնից է, կանոնավոր բաժեննված ընդարձակ մսուրներ են ու մաքրություն...»

Գոմի մեջ մնացել էին մի քանի հորթեր ու մի հիվանդ կուլ։

Հասմիկը շոյեց, գուրգուրեց ցեղական խոշոր հորթին։ Գուրեկան շոյանքից զգացված, հորթը բարձրացրեց զլուխն ու մանկական պարզությամբ լայն բացած աշքերով նայում էր, կարծես խնդրելով, որ էլի շոյի վիզը։

Նրանք դուրս եկան գոմից, անցան լայն ծառուղիով ու

դարձլալ բաց թողնելով մի շարք պահևստաշենքեր, կանդ առան արկեղող մի բացատի առաջ, որտեղ շարված էին կարգով փեթակները: Ուզում էին ներս մտնել, բայց մեղվանոցում աշխատող շրջանային հրահանգիչն ու մեղվաբուծը զգուշացրին:

— Ընկերներ, դուք դիմված շեք ցանցով, մեղուները կարող են հարձակվել ձեզ վրա:

— Պիտի հպատակվենք, — ծիծաղեց Գուրգենը. — մի ուրիշ անդամ դիմակներով ներս կմտնենք:

— Իսկ ո՞րտեղ է թոշնաբուծարանը, — հարցրեց, Հասմիկը:

— Ամենածայրին. Հենց այստեղով էլ պիտի գնանք:

Երկար ծառուղին բերավ նրանց թոշնաբուծարանը: Ընդարձակ այգու մի մասում, որը դրսից ցանցով պատած էր, կանաչի մեջ ծաղիկների նման տարածվել էին սպիտակ հավերը: Նրանց մի մասը ճյունաթույր գծով շարվել էին առվի գծով ու կարմիր կատարները շարժելով, ջուր էին խմում առանց շտապելու, կարծես խաղալով:

Նրանք ներս մտան ճուտերին հատկացրած շենքն ու այնտեղ հանդիպեցին թոշնաբուծարանի վարիչին, որը մտահոգված, ինքնամփոփ դիտում էր ցանցապատ շրջանում ծըվծվացող սպիտակ ճուտերին:

— Ի՞նչպես են ճուտիկներդ, — հարցրեց Գուրգենը, բարեկուց հետո:

— Հիւանդությունը շարունակվում է...

— Մասսայական բուծարանները միշտ համաձարակի վլտանգի մեջ են, անշուշտ մենք պիտի սովորենք մի շարք սխալներ անելուց հետո...

— Կովում ենք օր ու գիշեր, տեսնենք ի՞նչ կլինի:

Վարիչի առաջնորդությամբ նրանք այցելեցին ինկուբատորների բաժանմունքը, հավաքները, դիտեցին հետևի այգում հավերի ու հնդկահավերի զանազան ցեղերը: Երբ դուրս եկան թոշնաբուծարանից, նրանց առջեկից անցան՝ երեք

Բիսական, երեքն էլ սպիտակ. նրանք միացած ման էին ածում նորելով ճուտերին:

— Մի՞թե շեն կուլում, — հարցրեց Հասմիկը:

— Ո՛չ, շեն կուլում, — ասաց վարիչը, — գոյության կովի աղբակները վերացած են՝ կերն ապահովված է, նշանակություն ունի և այն, որ բոլորը մի գույնի են, թե ճուտերը, թե թխականները:

— Ա՛յ քեզ կոմունա, — ասաց Հասմիկը, չկարողանալով աշքը հեռացնել տարօրինակ երրորդությունից:

— Ինկուբատորից ստացած ճուտերը փոքր ինչ ավելի հիմարիկ են լինում, քան թխականներինը, — շարունակեց վարիչը. — Արանք ավելի աշխատվծ են ու առուց տեսք ունեն. բացի զրանից թխականը բավական բան է սովորեցնում իր հշկոցով:

— Այստեղ շատ բան կա անելու, — ասաց Հասմիկը, երբ նրանք գուրս եկան այգուց ու գնում էին դեպի փորձադաշտը. — Ես պրակտիկայի ժամանակ աշխատում եմ ծանոթանալ տեղում եղած բոլոր ճյուղերի հետ:

— Դուք ուզում եք էնցիկլոպեդի՞ստ դառնալ:

— Այնքանով, որքանով այդ չի խանգարիլ իմ հիմնական մասնագիտությանը:

Փորձադաշտում շրջանային գյուղատնտեսը բացատրություններ էր տալիս մի խումբ կոմերիտականների:

— Զարգմանալի է, — ասաց Հասմիկը, — որ տնտեսությունն էլ գնում եմ, ամեն տեղ դպրոցի տպավորությունն եմ ստանում:

— Այո՛, մենք էլ հենց զրան ենք ձգտում:

Փորձադաշտը դիտելուց հետո նրանք վերջացրին առաջին թուցիկ պտույտն ու վերադարձան իրենց բնակարանը:

— Իսկ այստեղ կա՞ լաբորատորիա:

— Այո, կա, ներքեմի հարկում, բայց գեռ կարգին սարքավորիած չէ:

— Կարելի՞ է տեսնել:

— Ինչո՞ւ չէ:

Նրանք իշան մի կիսալսավար սենյակ, որտեղ պատերք մուտ շարված էին մի քանի պահարաններ զանազան նմուշ-ներով ու քիմիական նյութերով: Սեղանի վրա անկարգ թափ-ված էին զանազան իրեր և նյութեր՝ փոքրիկ պլարկերով:

— Ներկցեք, ընկեր Գուրգեն, պիտի ասեմ, որ շատ ան-կարգ դրության մեջ է լաբորատորիան. Եթե թույլ կտաք, ես կարգի կբերեմ:

— Ընկեր Միքայելը թույլ կտա:

— Վաղվանից կսկսեմ: Բացի դրանից ես կուղեի, որ մեր աշխատանքները որոշ պլանով ընթանալին:

— Այդ պլանն արդեն կաղմված է, կքննենք և կաշխա-տենք խիստ կարգով հետեւ նրան:

Գուրգենը մի առանձին ջեշտով արտասանեց «Խիստ կարգով» բառերը, ցույց տալու համար, որ ինքը լուրջ է վե-րաբերվում գործին:

Հասմիկը նայեց նրան նույնպես լուրջ և միաժամանակ թաքնված մտերմական հայացքով, որը կարծես ասում էր.— «Ես կլինեմ քո լավ և գործունյա ընկերը...»

IV.

Սովորդի վարիչը նորից քաղաք է կննացել: Գուրգենն ուրախ է, որ մենակ է մնալու Հասմիկի հետ: «Գուցե նա քաշվում է ընկեր Միքայելից,—մտածում էր նա, —այժմ այդ արդելքն էլ չլա, կարող է ավելի պարզ արտահայտվել...»

Առավոտը վաղ, արեածագին, նրանք միասին գնում էին այդին ծառերի վնասատու միջատներ փնտրելու:

Առավոտը շողշողում է, գուրգուրում, հրապուրում և այդ հրապուրանքի կենտրոնում Հասմիկն է:

Նրանք միջատներ փնտրելով հեռանում են, խորասող-վում երկար ծառուղիների մեջ:

Ահա դարձյալ մի ծառ, որի վրա միջատներ կան: Հաս-միկը քչիորում, կանչում է Գուրգենին, մտերմաքար նայելով նրա դեմքին:

— Տեսե՞ք, ընկեր Գուրգեն, ո՞րտեղ են թաքնված:

Գուրգենը մոտենում է ու անդիտակցաբար ձախ ձեռը զնելով Հասմիկի ուսին, նայում է նրա ցուց տված տեղը: Այդ րոպեին Հասմիկը՝ առանց փոխելու իր դիրքը, ձեռքը գրպանն է տանում ու իր ուսի վրայով հանկարծ դեմ է անում Գուրգենի աչքերի առաջ սև ատրճանակի թերանը...

Գուրգենը ետ է քաշվում, ու մինչև ականջները կարմըրած՝ աչքերը հառում է գետնին, կոշիկի ծայրով քանդելով գետինը:

«Ինձ էլ է «սիրային գողերի» թվին դասում»—մտածում է նա, ու նորից իշնում է վրան հիասթափումը, նորից կանաչ ծառը տերեւաթափ է լինում, ու Հասմիկն ընկնում է «սոսկա-լի պրոդայի» շրջանը...

Իսկ Հասմիկը, զրպանը դնելով ատրճանակը, մի քանի բոպե կենտրոնացնում է ուշադրությունը ծառի վրա, իբր միշտներին դիտելով, բայց իսկապես միշոց է տալիս Գուրգենին «ինքն իրեն հավաքելու»: Ապա ցանկանալով մոռացության տալ եղածը, նա ասում է բարձր ձայնով:

— Ընկեր Գուրգեն, հիշո՞ւմ եք այս միջատի լատիներեն անունը.

— Ո՛չ, մոռացել եմ,—պատասխանում է Գուրգենը լրջութեն, չնայած որ հիշում է:

«Ուզում է հանգստացնել», մտածում է նա, — բայց ար-ժե՝ արդյոք լուրջ ուշադրություն դարձնել...

Ու ցանկանալով կատակով անցնել միջադեպի վրայով, նա ասում է.

— Տվե՛ք ինձ ձեր ատրճանակը, ընկեր Հասմիկ, այդ խաղալիքը բավական խանգարում է ձեզ...

— Ո՛չ, նա ինձ չի խանգարում, իսկ այսուհետեւ ձեզ էլ չի խանգարիլ... և հետո՝ սա թույլերի գենքն է, իսկ ես ձեզ ուժեղների թվին եմ դասում...

«Ուժեղների թվին»-ը շոյում է Գուրգենի ինքնասիրությունը, բայց միաժամանակ մտածում է, — «գուցե հեղնանք է... ինչեւ պետք է վերջ տալ այս տղայական գեղումներին, ամբողջը վին թաղվել գիտական զբաղմունքի մեջ...»

Ու վերադառնում են լուս, երկար ծառուղիով: Կարծես
նույն Հասմիկն էր, նույն Գուրգենի առաջ, բայց քուզով
ծածկված, անհասկանալի...

Թոշնաբուծարանի մոտ Հասմիկը բաժանվում է:

— Ես պիտի ինկուբատորների զերմաշափը ստուգեմ,—
ասում է նա, ներս մտնելով ներքնի հարկը:

Գուրգենը մտացիր անցնում է ծառուղիով, բարձրանում
է վերև իր սենյակն ու նստում սեղանի մոտ: Պիտի թե
խմել, պիտի սկսել ղբաղմունքները, բայց ձեռքին գործ չի
կպչում: Նա հանում է իր հուշատետրն ու գրում նոր երեսից:

«Ճենց առաջին տեսնելուց Հասմիկը շարունակ պտտվում
է երևակայությանս մեջ ու խանում զբաղմունքներս: Ես
սեր չեմ ընդունում, միայն զգում եմ ուրախություն նրան
տեսնելիս ու տիսրում եմ բաժանվելիս: Ես սեր չեմ ընդու-
նում, բայց ամեն անդամ, երբ ուզում եմ պարզ ձեռով վճռել
այդ կարգի հարցերը, անսպասելի կերպով միտքս խճճիում
է ինչ-որ բարդություններից և ընկնում եմ հակասություն-
ների մեջ: Ահա ալդպիսի մի տարօրինակ բարդություն է և
ընկեր Հասմիկը... Մաթեմատիկայի մեջ կան իրրացիոնալ,
երևակայական թվեր, կյանքում էլ կան տարօրինակ, իրրա-
ցիոնալ բնավորություններ, որոնց թվին է պատկանում ըն-
կեր Հասմիկը: Նա կարծես ոմնի և սովորական կնոջ հատկու-
թյուններ, բայց այդ բոլորը ծածկված է մի քմահաճ ինքնա-
սիրության տակ, որը դարձնում է նրան անհասկանալի, ան-
լուծելի...

Տարօրինակ եմ և ես... երբ Հասմիկն ուզում էր պարզ
արտահայտել իր միտքը և «սիրային գողեր» բառերն արտա-
սանեց, ես նրա մեջ գոեհկություն տեսա ու հիասթափվեցի:
Կարծես ես ուզում էի, որ նա լինի ավելի նուրբ, ավելի
մշուշապատ... Բայց երբ ծառի մոտ ձեռներս մտերմաբար
դրի Հասմիկի ուսին, նա էլ գուցե իմ քայլը համարելով գոեհ-
կություն, ետ մղեց ինձ... ատրճանակով, ինչո՞ւ ես անա-
խորժություն զգացի... Երկուս էլ նույն ցավով ենք տար-
ված, և սակայն, մեր պայքարի մեջ կարծես մի փոխադարձ:

մտերմության է բաքնված... կամ գուցի դա իմ երևակայությունն է...»

Գուրգենի մտքերն ընդհատեց Միքայելը, որը նոր վերադառնալով քաղաքից, ներս մտավ իմանալու, թե ի՞նչ է կատարվել իր բացակայության ժամանակ:

— Ընկեր Գուրգեն, բարենիրս... Հը՝, ո՞նց ես, կարծում եմ հիմա գիտությունը թողած՝ բանաստեղծությամբ ևս զբաղվում:

Գուրգենին թվաց, թե Միքայելը նկատեց իր այժմյան «զբաղմունքը», և ճանկարծակի գալով, կարմրեց:

— Ո՛չ, այդպիսի բան չկա, — ասաց նա, շտապով ծածկելով տետրը:

— Ի՞նչպես են ընթանում գործերը, — ասաց Միքայելը, նստելով աթոռին:

— Ոչինչ, լավ են:

— Եօ, վերջապես թափ տվի վրայիցս զեկուցցներն ու թվերը: Իսկ գու, Գուրգեն, ի՞նչ փուլի մեջ ես, հուսով եմ, որ դեռ չես սիրահարվել...

— Եօ, ընկեր Միքայել, ուռ կարծես մտադրվել ես ինձ շարունակ կարմրացնել:

— Ինչո՞ւ պիտի կարմրես. ձեր սերունդը մերի համեմատ մի տաս տարի առաջ է թողնում կարմրելը: Բայց կատակը մի կողմը — ի՞նչ տպավորություն է անում ընկեր Հասմիկը:

— Ես նրանից շատ բան եմ սպասում, պատրաստված ու եռանդուն աղջիկ է, ու կարելի է ասել — լիովին «սոցուղղղված» է, միայն բնափորության մեջ կան տարծորինակ դժեր...

— Եօ, ո՞ր կրթված կնոջ մեջ չկան տարօրինակ գծեր. դա նրանից է, որ ազատագրված կինն իր երևակայությամբ ավելի շատ է ցանկանում, քան կյանքը կարող է տալ ներկայումս. իսկ երբ մարդ իր «կարողությունից» ավելի է պահանջում կյանքից, նա ջղայնանում է... մենք հետաքրքրվենք միայն նրա աշխատանքով:

— Աշխատանքի կողմից հարվածային է, ամեն տեղ
հասնում է, գյուղատնտեսության բոլոր ճյուղերին հետևում
է, և ոչ միայն ուսումնասիրում է, այլև օգնում գործով: Աշ-
խատում է անգրագիտության վերացման գործում, եւ ի՞նչ
ժնաց...

— Լավ է, լավ է... շատ սրախ եմ. մեր սովորողը
հենց ձեզ նման երիտասարդներ էին պակասում. այժմ այդ
էլ կա, ուրեմն կարող ենք մեր ծրագրերը լիովին իրագործել,
ժանավանդ այն կոլխոզի ծրագրերը, որի մասին քեզ արդեն
ասել եմ: Մի քիչ կարգի բերեմ մեր տնտեսության գործերը,
այն ժամանակ դրանով կզբաղվենք միասին...

— Է՛հ, ցտեսություն:

— Ցտեսություն, ես սպասում եմ քո հրամանին,—առայ
ֆուրգենը, մոտենալով մանրագիտակին:

Միքայելը շտապէ քայլերով իջավ ներքեւ:

V

Կյանքն ընթանում էր եռուն աշխատանքի մեջ: Հասմիկն
արդեն փաստորեն դարձել էր Գուրգենի օգնականը՝ նրա գի-
տական հետազոտությունների մեջ: Նա սիստեմատիկաբար
գիտում էր փորձագաշտի բույսերը, հավաքում էր նմուշները,
հետեւում էր բոլոր ճյուղերի աշխատանքներին: Երբեմն էլ
Գուրգենին քշում էր գուրս, իսկ ինքն զբաղվում մանրագի-
տակով:

Աննկատելի կերպով նա դարձել էր և Գուրգենի վերա-
հակից.—մի առանձին խանդով հետապնդում էր նրա գոր-
ծերին ու հեղնանքով նկատողության արժանացնում նրա
անկարգությունը: Գործի շուրջը նրանք բավական մտերմա-
ցել էին և «գուա-ով» էին խոսում:

Այսօր էլ նրա ձեռքը ընկալ Գուրգենի տետրերը, որոնց
մեջ շավարտված հողվածներ էին զանազան հարցերի շուրջը:
Սեղանի արկղում դիտողության թերթիկները տեղավորելիս
նա հանեց տեսրերն ու սկսեց թերթել.

— էս ի՞նչ բաներ են, — ասաց Հասմիկը, նայելով վեր-
նագրերին:

«Պահպանողականների արշավանքը միջավայրի ազդե-
ցորյան դեմ...»

Գուրգենը վեր թռավ տեղից:

— Որտեղից ձեռդ ընկավ այդ տեսրերը, — ասաց նա,
կարմրելով, — դա մի հոգված է դարվինիզմի հարցերի շուրջը:

— Կուզե՞ս, էլ չեմ կարդա. կարծում էի դիտողություն-
ներ են, ուզում էի կարգի բերել:

— Արդեն ուշ է արգելելը. կարող ես շարունակել:

Հասմիկը շարունակեց:

«Այլեկտիվը կենդանական աշխարհում...»

«Եներգիայի կուտակումը բույսերի սերմերի մեջ կամ
գենետիկայի հեղաշրջումը...»

Գուրգենն սկսեց քայլել սենյակում: Ապա մոտեցավ
Հասմիկին, որը զարմանքով դիտում էր նրան ու, ձեռքը
խրելով իր խիտ մաղերի մեջ, ասաց.

— Զարմանալի եռուն, նշանակալից ժամանակում հնք
ապրում, ընկեր Հասմիկ, մարդ ուզում է հագար ուղեղ,
հազար ձեռք ունենա, ամեն դործի հասնի... Մի կողմից մեջս
վառվում է գիտության ծարավը, գլխումս վիստում են գե-
նետիկայի հարցերը. թվում է, թե մի նշանավոր գյուտ պի-
տի անեմ, հեղաշրջում կատարեմ, հարյուրապատկեմ բեր-
քատվությունը... Մյուս կողմից էլ մի ուրիշ ձգտում է գալիս
մեջ՝ ուղում հմ ոտով-գլխով նվիրվեմ սոցիալիստական շի-
նարարության գործնականին, որից հեռու է թվում ինձ դի-
տությունը... Մի տո՛ւր այդ տեսրը:

Գուրգենը վերցրեց տեսրը ու սկսեց թերթել: Բայց ըս-
տագեշամի աշք ածելուց հետո ձգեց սեղանի վրա ու նորից
սկսեց քայլելը:

Հասմիկը շարունակեց կարդալ:

— Օ՛՛ո՛, սա արդեն կարգից գուրս է, — ասաց նա ժպտա-
լով — «Մերը կամ սեռը պայծառ արեի տակ — չողարկված
խոնիք...»

— Զէ՛, մի՛ կարդալ, — կանգ տուավ Գուրգենը, — դրանք թռուցիկ նկատողություններ են...

— Արոնք սպառնում են լուրջ տրակտատներ դառնալ և ամեն ինչ հեղաշրջել...

— Հեգնանքը Հասմիկի տարերքն է:

— Իսկ երևակայությունը՝ Գուրգենի... երբ այդ սիրո մասին հոդվածը վերջացնես, թույլ տուր վերնագրի տակ՝ փակադերի մեջ գրեմ՝ «Հնկեր Գուրգենի հազար և մեկ հակասությունների մասին...»

— Իսկ դրա տակ ես կավելացնեմ — ընկեր Հասմիկի հազար ու մեկ քողարկումների մասին...

— Թողնենք այս փետուրամարտը և անցնենք գործիքի սպառում է մանրադիտակը, իսկ ինձ՝ փորձադաշտը... Մի բան միայն կուզեի նկատել; Հարգելի պրոֆեսորացու, որ այս բոլոր հոդվածներն սկսած ու թողած են. եթե այդպիս շարունակես, ամբողջ կյանքդ կիսատ կմնա...

— Լավ պտուղն ուշ է հասնում...

— Անուրջներ և կամուրջներ... թևերդ շատ ես լայն արձակում, բայց մոռանում ես, որ ամենաուշ հասնող պտուղը գկեռն է, որի հասնելը միաժամանակ և փտել է նշանակում...

— Ճաշակիդ ի՞նչ ասեմ, եղեմական պտուղները թողած, ընկել ես գկեռի հետեւից:

— Եղեմական պտուղները բավական վտանգավոր են քեզ համար, — ասաց Հասմիկը ժպտալով ու դուրս գնաց:

Գուրգենը շարժեց գլուխը, նույնպես ժպտալով. նա մի բանի բոցի լուռ քայլում էր, ապա հանեց պորտֆելից իր հուշատետրը, ու սկսեց գրել:

«Որքան աղջիկներ կային քաղաքում, որոնք այնպես թեթև էին նայում իրենց փաղաքանքներին, իսկ ինձ վիճակվել է մի ինչ որ հանելուկային կարծրություն... Մեկ տեսնես ժոտամաերիմ է թիւմ, մեկ էլ հանկարծ դառնում է խոսափում՝ սնդիկի նման... ո՞րտեղ է վերջապես Հասմիկի և կինտէսենցիան...»

Այսօր էլ տեսրերիս հասավ, իմացավ իմ կարծիքը սիրու մասին—որ ես չեմ ընդունում սերը... Այդպես՝ օր-օրի վրա ես մերկանում եմ իմ գաղտնիքներից, իսկ Հասմիկը մնում է անլուծելի մի «սիրինք»...»

Նա գաղարեց զրելուց և պլուխը ձեռքերի մեջ առած, նայում էր տեսրին: Ապա վեր թռավ, ինքն իրեն ասնելով— «Է՛ս, ի՞նչ եմ զգացումների հետեւց ընկեր... աշխատա՞նք, գիտություն, սոցիալիստական շինարարություն...»

Ու նորից վրա ընկավ իր մանրագիտակին:

Իսկ Հասմիկն այդ ժամանակ զնում էր գեպի վրուճադադաշտան արևակեզ ճամփով ու մտածում Գուրգենի մասին,— «Ճիշտ է, նա արդեն ընտելացել է իր բնակությանը, և դուս ընկերական հարաբերությունների սահմանից դուքս չի գալիս: Բայց նրա զգացումները լարված են. թվում է, թե ամեն բոպե պատրաստ է արտահայտվելու... իսկ եթե այդ լինի, ի՞նչպես կլինի, մի՞թե իր հողվածի «Հքողաքնչված» ծեռվ... և ի՞նչ կհնատեի այդ բոլորին...»

«Երկու կին են պայքարում մեջս. մեկը շարունակ ձրդում է մոտ լինել Գուրգենին, «քնքուշը մոմենտներ» է փնտրում, իսկ մյուսը խոժուած դեմքով ետ է մղում նրան, հիշեցնելով ինչ-որ անդրդիմելի պահանջներ»:

Նա անցնում էր դաշտով՝ տարօրինակ, երևակայական գեճի բռնված Գուրգենի հետ, ճգնում էր համոզել նրան ինչ-որ իրեն՝ Հասմիկի համար կարևոր հարցում, որը Գուրգենը՝ կարծես դժվարությամբ էր հասկանում:

Խոտերի խշխշոցը նրան սթափեցրեց. կանգ առավ, կարծելով թե օձ է, բայց իսկույն նկատեց, որ լորտուկ է անցնում սահուն գալարումներով: Վրա վաղեց բռնեց ու հետո երկու ձեռքով պինդ պահելով սկսեց դիտել:

«Եթե գու թույն ունենայիր, անշուշտ մարդիկ քեզ ավելի՝ կհարգեն» ասում էր մտքում Հասմիկը, դիտելով լորտուկը՝ անօդնական, աղերսող դեմքը—«օձի նման քո մեջ էլ կտևնեին խմաստության խորհրդանիշը... Եվայի և ամբողջ մարդ-

կության մեղքի սկզբնապատճառը կհամարեին, և ոչ թէ
անպատկառ ձեռներով կշոշափեին քեզ»:

Լորտուկի Հետղօնեան ուժեղացող շարժումներից սարսուռ
զգալով, Հասմիկը բաց թողեց նրան ու շարունակեց ճանա-
պարհը:

«Չէ՛, Գուրգեն, — շարունակում էր նա իր վեճը, — ևս մար-
մին ու հաճուցք չիմ, ևս ուրիշ եմ... ևս «փոքր ինչ թույն եմ
քեզ համար...»

«Փոքր ինչ թույն անհրաժեշտ է նրա՝ տղամարդու մեջ
նստած հին կենցաղի մնացորդների գեմ... չէ՛, միաշւ նա
շգիտակցի իմ մեջ նստած երկրորդ կնոջ, ևս նրա մտերիմը
շեմ լինիլ»:

Նա մտավ փորձադաշտն ու սկսեց իր սովորական զի-
տողությունները: Բայց հաղիկ մի տաս բողեք էր անցել, երբ
նրա ականջին հասավ խոսակցության ձայն: Ետ նայելով,
նա նկատեց Միքայելին ու Գուրգենին, որոնք միասին խոսե-
ցով մտանում էին:

— Ոզչույններս, ընկեր Հասմիկ, — բարձրածայն կանչեց
Միքայելը:

— Բարեւ:

— Ի՞նչպես եք, գո՞յք եք մեր սովորովից:

— Գո՞յ եմ, մանավանդ նրա համար, որ այստեղ շատ
բան կա անելու:

— Ա՛յ, ի՞նչ հրաշալի խոսք եմ լսում... Բայց չմոռա-
նաք, որ միայն ձեր պրակտիկայով շպիտի սահմանափակ-
վեք. մենք ուրիշ գործ էլ ունենք անելու. մոտակա զյուղե-
րից մեկում պետք է կոլխոզ հիմնենք, մենք նրա շեֆն ենք.
շգիտեմ Գուրգենն առել է՛, թե չէ:

— Ասել է, և ես էլ իմ պատրաստակամությունն եմ
հայտնել:

— Լա՛վ, շատ լավ, ուրեմն, ընկերներ, գուք երկուսով
կլինեք ավանդաբրդը, իսկ ես էլ կդամ ձեր հետեից, որպես
արիերգարդ. նախապատրաստական աշխատանքները վեր-
չացնելուց հետո կդիմենք գործի...

- Սոցարշավի եռյակը Հայտարարում եմ կազմված,—
ասաց Գուրգենը,—որոշումը կայացած է...
— Ստորագրում եմ,—ասաց Հասմիկը:
— Ես էլ Հաստատում եմ դաշտային կնիքով...,—ասաց
Միքայելը.—իսկ այժմ, ընկերնե՛ր, սկսենք մեր փորձադաշ-
տի ուսումնասիրությունը...

VI

Արդեն մի շաբաթ էր, Գուրգենն ու Հասմիկը բանակցու-
թյունների մեջ էին զյուղի ղեկավար ընկերների հետ՝ կոլ-
խող Հիմնելու առիթիվ։ Նրանք շտապում էին, իսկ Միքայելը
շարունակ հետաձգում էր, պատճառ բերելով, թե պիտի
հախօրոք ուսումնասիրել զյուղի պայմանները, բայց նրա
միտքն ուրիշ էր, նա ուզում էր կազմակերպել «արշավը»
զյուղատնտեսական մերենաների ուղեկցությամբ, որոնք նո-
րոգմելու կարիք ունեին։ Այս կետի մասին նա չէր հայտնում
Գուրգենին ու Հասմիկին, ցանկանալով նրանց հանկարծակիր
բերել մեքենաների հանգիսավոր երթով։

Վերջապես Միքայելը հայտնեց, որ կարելի է սկսել
«սոցարշավը»։ Այդ օրը Գուրգենն ու Հասմիկն արտակարգ
հոգման մեջ էին, շարունակ օգտվում էին ամեն մի առիթից,
որ թողնեն գործն ու խոսեն կոլխոզի մասին։

Նրանք երկուառվ դուրս եկան սովխողից ճաշից հնառ։
Արոշված էր ժողով Հրավիրել երեկոյան։ Միքայելը պիտի
պար առանձին։

Զով օր էր. թիթև քամին ծփում էր հասած արտերի վրա-
յով, հետը բերելով թարմ ծղոտի բուրմունքը։

— Ի՞նչ ես վագում, Գուրգեն, — ասաց Հասմիկը ծիծա-
ղելով. — կարծես Հրդեհի ես շտապում։

— Իսկ դու, ի՞նչու ես ծիծաղում. դու ավելի ես կաս-
կածելի...»

— Ես նայում էի հետեիցդ ու մտածում, թե ընալորու-
թյանդ ո՞ր գծերը կծաղքեն ասլագայում, երբ պրաֆեսոր
կդառնաս։

— ԹՀՌ՝ դեռ պրոֆեսոր շղառած արդեն ավանսով ծաղրում ե՞ս:

— Ի՞նչ կա որ. դա մի սովորական երևույթ է. ամեն մարդ ծիծաղելի է դառնում, երբ նրա բնավորության գծերն ընդհանուրի սեփականություն են դառնում:

— Ե՛օ, թող հաջողվի պրոֆեսոր դառնալ, Համաձայն եմ մի քիչ էլ ուսանողների բերանում ծամոն դառնալ. իսկ եթե Հասմիկը լիներ ուսանողների մեջ, իսկի էլ չէի նեղանալ:

— Ինչո՞ւ դեպի ինձ այդպիսի բացառություն:

— Դեպի քեզ ես առանձին վերաբերմունք ունեմ...

— Չես էլ նկատում, որ քայլերդ քեզ Հակասում են, շարունակ առաջ ես ընկնում, թողնում ես ինձ միայնակ...

— Այո՛, ընկեր Գուրգենի քայլերն են Հակասում, իսկ ընկեր Հասմիկի լեզուն...

— Դա շատ համարձակ հիպոթեզ է, ես էլ քո վերաբերմամբ մի հիպոթեզ ունեմ, որ ավելի մոտ է ճշմարտության:

— Այսի՞նքն:

— Ինձ թվում է, որ ընկեր Գուրգենը, չնայած իրեն նոր մարդ է համարում, դեռ չի ազատազրկել հին կենցաղի հոգերանությունից...

«Փորձում է», — անցավ Գուրգենի մտքով:

— Ինչ որ պահած բաներ ես դուրս բերում, — ասաց Գուրգենը. — անսպասելի զյուսեր ես անում. եթե քո ասածը ճիշտ է, դա վերաբերում է ընդհանուրին, ուրեմն կինը նույնքան իւճողված է հին կենցաղով, որքան և տղամարդը:

— Բայց զտումը պիտի սկսել տղամարդուց, որպես նախկին իշխողից... մի բանաստեղծի ասելով, կինը ոչ միայն բնության ստեղծածն է, այլ և տղամարդու երևակացության... ահա այդ «երևակայող» տղամարդը տեսականում կնոշը դարձրել է մի «երկնային» էակ, իսկ իրականում — միայն իր հավելվածը...

— Այո՛, առաջ այդպես էր, իսկ ա՞յժմ:

— Իսկ այժմ ենթագիտակցական ծալքերում դեռ շաբումակվում է նախկին «Հավելվածային» վերաբերմունքը...

— Ուրիշն ես, որպես տղամարդ, մահացու մեղքե՞ր եմ ունեցել... իսկ ինձ թվում է ընդհակառակիր, որ դու տարված ես Հիմանդրագին ինքնասիրությամբ, տղամարդու ամեն մի խոսքը քեզ թվում է կնոջ իրավումքների խախտում... Դա նշանակում է, որ դու հոգեբանորեն դեռ չես մարսել կնոջ և տղամարդու հավասարությունն ու ընկել ես հակառակ ծայրահղության մեջ՝ ստեղծելով կնոջ մասին մի ուռացած կարծիք...

— Հրաշալի ես վիճաբանում, Գուրգին... ուղղակի հարձակումներս ետ ես տալիս, մեղադրում ես, փոխանակ արդարանալու...

— Եմ ասածը զուտ ճշմարտություն է, եթե առաջ կար նեղ—տղամարդկային մոտեցում, այժմ՝ հանձինս Հասմիկի՝ արտահայտվում է նեղ—կանացի մոտեցումը. պետք է ընդունենք, որ կինը, իր ենթագիտակցական ծալքերի շնորհիվ, զեռևս չի կարողանում հարմոնիզացիայի ենթարկել իր զգացումներն ու ընկերական հարաբերությունները...

— Օհո՛, դու դեռ պրոֆեսոր չդառած, արդեն կեղծ վկացություններ ես տալիս գիտության մասին:

Նրանց վեճն ընդհատեց հետեւից եկող ավտոմոբիլի թափու երկար սուլոցը: Նրանք փութեատ քաշվեցին ճանապարհի մի կողմք, ու երկուսն էլ հանկարծ բացագանձեցին.

— Ընկեր Միքայելն է...

Ավտո-ապրանքատարը գալիս էր, հետեւից քաշելով կալսելու մեքենան, ապա գալիս էր տրակտորը, որը քաշում էր հնձելու մեքենան:

Ավտոյի շոփերի կողքին նստած էր ընկեր Միքայելը:

— Վա՞հ, ա՞յ քեզ անակնկալ. էս ինչ մեքենայական մ'ըթ եք կազմակերպել, ընկեր Միքայել, — ասաց Գուրգենը մոտենալով ավտոյին, երբ նա կանգ առավ:

— Սա մեր սոցարշավի արտիլերիան է, — ասաց Միքայելը. — առանց այս ծանրակշիռ արգումենտների ձեր էնտուպիագմը կարող է զուր կտրել:

— Դա ի՞նչ աշ թեքումային մտքեր են:

— Թող կոլխոզը գլուխ դա, հետո ուզում ես աշ թեքման մեջ մեղադրիր, ուզում ես՝ ձախ... իսկ դու այն ասա, ի՞նչ-պես է ձեր էնտուզիազմը...

— Մեր էնտուզիա՞զմը... ամբողջ ժամանակ վեճի մեջ էինք:

— Ի՞նչի մասին:

— Նոր կնոց մասին:

— Կոլխոզում:

— Ոչ, ընդհանրապես:

— Օ՛, ամոթ էնտուզիաստներին. դա ուզզակի դավաճանություն է. շուտ արեք, բանվոր մտեք, թե չէ բաններդ բուրդ է... դե՛, նստեք ավտոն. տեմակերից շեղված մարդկանց մեքենան կշտկի...

— Բնիկեր Միքայել, Հակաճառելու շատ բան ունիմ; բայց առայժմ հետաձգում եմ, — ասաց Գուրգենը:

Գուրգենն ու Հասմիկը նստեցին ավտոն. Մեքենան նուրից շարժվեց, խուլ աղմուկ հանելով:

Նրանք էլ չկարողացան խոսել, որովհետեւ ավտոն ինչ-որ փոս ընկալ, սաստիկ ցնցեց նրանց. Երկուսն էլ սկսեցին քրքալ:

Մինչև գյուղ Հասնելը ուրախ տրամադրությունը հետեւ վում էր նրանց:

VII

Արտասովոր երթը նկատելով, գյուղի երեխաները խոսմբ խոսմբ վազում էին մեքենաների հետեւից, իրենց ձևերով ուժեղացնելով աղմուկը: Իրիկնաղեմի երկար ստվերներում նստած Հատ ու կենտ ծերունիները վեր էին կենում տեղերից ու զարմանքով նայում, ապա զանդաղ քայլերով դիմումնեպի գյուղի կենտրոնը, իմանալու, թե «ի՞նչ խաբար է»: Ճի գնացող կանայք պլշած, շեղ Հայացքով դիտում էին նորեկներին:

Մեքենաները կանգ առան գյուղի հրապարակում՝ դըպ-
րոցի առաջ։ Իշնելուն պես Միքայելը մարդ ուղարկեց գյուղ-
առվետի նախագահի հետեից, ապա նկատելով, որ հետաքըր-
քրը վող գյուղացիները հետզհետե խմբում են իր շուրջը,
սկսեց բացատրություններ տալ մեքենաների մասին։

Արեգ մայր էր մանում։ Ամառվա երեկոյի այն ժամերն
էին, երբ ցերեկվա շոգից թմրած գյուղը նորից արթնանում,
աշխատանում է։ Կանայք շտապ ջուր էին կրում կժերով, կամ
ավելում բակերը. փողոցներով անցնում էին կանաչ խոտ
բարձած ձիաներն ու էշերը, շուրջը տարածելով նոր հնձած-
խոտի թարմ բուրմունքը։

Գուրգենն ու Հասմիկը անց ու դարձ էին անում մուտա-
կա նեղ փողոցներով, դիտելով տների բակերը։ Մի տան-
առաջ նրանք կանգ առան։ Աշխատանքից նոր վերադարձած
գյուղացին երկու ձեռով բռնած իր փոքրիկ երեխային, վեր-
վեր էր թոցնում, մեծ զվարճություն պատճառելով նրան։
Երեխան անընդհատ քրքում էր, ու ձեռները շարժում։ Կինը-
քլթթացնելով ջուր էր ածում կժից պղնձի մեջ, աղջիկն
ավելում էր բակը, սաստիկ փոշի բարձրացնելով, իսկ պա-
ռակ նանը կուն էր կթում։

— Ահա քեզ մասնավոր սեփականության իդիլիան, —
ասաց Գուրգենը — սեփական տուն, սեփական պարտեզ ու
այզի, սեփական կով, և առ սարիքներ... միանգամայն կտ-
րելի է հիանալ...

— Բայց ավա՞զ, այդ իդիլիան իր վերջալուսն է ապ-
րում... մի նայի՛ր, երեխան լավիկն է, չէ՞։

— Հենց այդ լավիկն էլ մեծանալուն պես քար է ձգելու
մասնավոր սեփականության գլխին։

Նկատելով նորեկներին, գյուղացին գաղարեց երեխայի
հետ խաղալոց ու զարմացած նայում էր նրանց, կարծելով
թե իրեն մոտ են եկել։ Անհարմարություն զգալով այդ ան-
հանգիստ հայցքից, Գուրգենն ու Հասմիկը հեռացան, վե-
րադառնալով նորից դեպի հրապարակը։

Այնտեղ արդեն բազմությունը լցվել էր։ Տիրում էր մի

ժիսը, որի լեյտ-մոտիվը կազմում էր ավտոյի ու տրակտորի խոր գզրկոցը: Միքայելը դիտմամբ շարժման մեջ էր պահում նրանց՝ «արտիլերիային» հաղթական տոն տալու համար:

Վերջապես եկավ գյուղովենտի նախագահը, մոտ երեսում տարեկան՝ դեմքն արեից այրված ու անխնամ մազակալած, նա ամոթիսած բարեկց Գուրգինին ու Հասմիկին, ապա ամբոխը ճեղքելով, մոտեցավ Միքայելին, որն այդ րոպեին բացատրում էր տրակտորի մասերը:

— Բա՛րե, բա՛րե,—բացագանչեց Միքայելը, ձեռք տաշով նախագահին.—ահա ինչպես տեսնում ես, եկել ենք. ժամանակը կարճ է, պիտի շուտով սկսենք ժողովը:

Ապա մի կողմ քաշելով նախագահին, հարցրեց ծանր ձայնով.

— Իմաց ես արել տղերանց. չքավորականների ժողով արել ե՞ս:

— Հա՛, ինչպես չե՞ս, հիմա էլ ես ինքս եմ ասել ամենքին:

Ծուտով եկան գյուղի զեկավար ընկերներն ու բարեկելով նորեկներին, շրջապատեցին նրանց: Գյուղացիներն ուշադրությամբ դիտում, շոշափում էին մեքենաները, կամ անկարգ խմբելով, սպասողական հայացքով նայում հյուրերին, ցածր ձայնով զանազան նկատողություններ անելով իրար մեց: Գյուղի քահանան թաքնվել էր հաստ շինարուհետեն ու դադարգողի դիտում էր ամեն ինչ:

— Հը, ի՞նչպես է մեր սոցիալիստական սեկտորի տրամադրությունը, — հարցրեց Գուրգենը բջիջի քարտուղարին:

— Ո՛շինչ, լավ է, — պատասխանեց քարտուղարը, իր նիհար դեմքի կասկածու հայացքը հառելով Գուրգենի վրա, կարծես իմանալու համար, թե ինչ մտքով է հարցնում:

Փոքր ինչ զրուցելուց հետո, գյուղսովենտի նախագահն ասաց.

— Դե՛, ընկերներ, կարող եք սկսել ժողովը:

Նրանք ներս մտան դպրոցի դահլիճն ու շարվեցին բեմի սեղանի շուրջը: Մի խումբ գյուղացիներ շտապով ներս գնացին նրանց հետեւից ու դրավեցին առաջին կարգերի նստա-

բանները։ Մյուսներն ավելի դանդաղ՝ հետզհետե լցվեցին դաշլիճը, բերելով իրենց հետ զրսի աղմուկն ու դաշտալին աշխատանքի քրտնքի հոտը, որով ծծված էին նրանց շորերը։ Նստարանների վրա այլևս տեղ չկար. նոր եկողները խըմբվում էին դաշլիճի հետեր, կամ միջանցքներում։

Աղմուկը հետզհետե կենարոնանում էր մի կետում, որտեղ երկու խումբ վեճի էին բռնվել իրար հետ։ Դրսից լսվում էր մեքենաների աղմուկը։

Լուսնի խոշոր բոլորակը երկաց սարերի հետեւց ու երեկոյան մթնշաղն աննկատելի կերպով միացավ նրա մեղմ լուսի հետ։ Բակում վժվժում էին երեխանները, երեքմն մասպրցելով պատուհանների վանդակներով ու հետաքրքիր հայցքներ նետելով դաշլիճի ներսը։ Պատուհանների տակ խմբվել էին գյուղի կանայք ու ծառամ, աղմկում էին տարօրինակ իրարանցման մեջ։

Լսվեց զանգի ձայնը։ Դաշլիճը ներս բերին երկու լամպ, մեկը դրին բեմի սեղանի վրա, մյուսը կախեցին պատի մեխից։ Նախագահը կանգնած, փոքր ինչ սպասեց, դիտելով իր սովոր աշքերով դիմացի հասարակությունը, մտքում դուշակելով, թէ ի՞նչ ելք կստանա ժողովը, ապա սկսեց փոքր ինչ շփոթելով հյուրերի ներկայությունից։

— Քնկերնե՛ր, ձեզ բոլորիդ հայտնի է, որ ամեն տեղ չիմնում են կոլխոզները, իսկ մեր գյուղը ետ է մնացել էդ ծրագրից, պատճառը նա է, որ մեզ մոտ մի շաբք կուզակ էլեմենտ-տարերն իրենց մութ պրովոկացիայով մոլորեցնում են շքավոր ու միջակ գյուղացիներին, որ նրանք ետ կենան կոլխոզներից։ Հիմի ի՞նչ է մեր անելիքը՝ մենք պետք է առաջ տանենք սոց-շինարարության գիծը, պետք է միջոցներ ձեռք առնենք էդ մութ էլեմենտ տարերի դեմ, ու ասենք քքավորներին ու միջակներին՝ ահա այս է մեր իսկական սովետական ծրագրեր... Էս հարցում աջակցելու համար մեզ մոտ հյուր են եկել ընկերներ. նրանք օգնելու են մեզ ոչ միայն իրենց խորհուրդներով, այլև գործով։ Քնկերները կրացատրեն մեզ կոլխոզի նշանակությունը։ Այժմ կխոսի ընկեր Գուրգենը։

Գուրգենը, Հանկարծակի գմլով իրեն անունը տալուց, տեղից վեր թուամ, անսպասելի Հարցից՝ շփոթված աշակերտախ նման, մի քանի վայրէլյան նա Հայացքն ուզդեց ունկընդիրների վրա, ու ձեռքով անդիտակցաբար շոյելով երկար մաղերը, սկսեց.

— Բնկերնե՛ր, մենք եկել ենք ձեզ մասնակից տնելու այն սոցիալիստական շինարարությանը, որ ծավալված է մեր ընդարձակ Միության մեջ։ Սովետական իշխանության առաջին օրերից ամենքի համար պիտի պարզ լինե՞ր, որ պրոլետարիատի Հաղթանակը նշանակում է սոցիալիզմի Հաղթանակ, ու եթե այդ սոցիալիզմի երթը մինչև այժմ չուպազել է գյուղացիական սեկտորում, դրա պատճառն այն է, որ պրոլետարիատի Ծակեցը՝ գյուղացին, իր հետամնացության պատճառով չի կարողացել մի անդամից թափ տալ իրենից Հին Կյանքի ժառանգությունը։ Իսկ այսօր արդեն մեր շքավոր ու միջակ գյուղացիությունը գիտակցում է իրեն շահերը, և գյուղի սոցիալիստական շինարարության Հինարանն է կազմում։ Բայց մենք դեռևս ունենք դասակարգային թըշ-Նամիներ—կուզակներ, ունենք և անհատներ շքավոր ու միջակ գյուղացիների մեջ, որոնք իրենց անդիտակցության շնորհիվ ենթարկվում են նրանց։ Ինչ վերաբերվում է կուզակներին, մենք դիտենք, որ Հետզհետեւ ցամաքեցնելով շահագործման այն հյութերը, որոնք նրանց կյանք են տալիս, կդարձնենք նրանց արհամարհելի մի ուժ։ Իսկ անդիտակից շքավորներին ու միջակներին դեռևս պիտի անդուզ համոզենք խոսքով ու գործով, ցույց տանք իրենց դասակարգային իսկական ուղին...

Հետզհետեւ խորանալով Հարցի մեջ, Գուրգենը կանք առավ կոլխոզի նշանակության վրա, պարզեց նրա գերագանց Հանրօգուստ ուժը թե տնտեսական, թե կուլտուրական ասպարեզներում։ Ասկա նա դիմեց բատրակներին ու շքավորներին, Հրամիրելով նրանց Հիմք դնել կոլխոզին, ու Հետզհետեւ լայնացնելով իրենց շարքերը, ամրող գյուղը դարձնել կոլխոզային մի խոշոր բջիջ։

թնդացող՝ ծափա՞րությունները ոգևորեցին Գուրգենին. — ինքնամոռացության մեջ, նա ժպտաց իր կողքին նրաւած Հասմիկին, թաշկինակով սրբեց ճակատի քրտինքը: Հասմիկի փոխադարձ ժպիտը նրան ավելի թևավորեց, այդ ժպիտի մեջ նա տեսնում էր քաջալերում, և որ գլխավորն է՝ մի նոր մտերմություն: Մի պահ նա կարծեց, թե իր ճառի շնորհիվ կոլսովի հաջողությունն ապահովված է, բայց հենց որ ծափա՞րությունները դադարեցին, մեկ-մեկու հետեւ լավեցին Հիսութափիչ ձայները...

— Մեզ պե՞տք չի կոլսովը... ո՛ւզում չենք...

Նախագահը խեթ նայեց Հետեւ շարքերին ու զանգահարելոց հետո ձայն տվեց Միքայելին:

— Ընկերնե՛ր, նախագահը ձեզ բացատրեց մեր գալու նպատակը, — ասաց Միքայելը, մտերմական զրուցի տոն տալով իր ձայնին, — Ճիշտ է, մենք եկել ենք ձեղ օգննու, բայց մի ուրիշ կերպով. մենք ուղղում ենք մի էնակո Հիմնավոր դործ բռնել, որ մի անգամից ձեր ձեռքից բռնի, վեր բաշի: Շատ անգամ եմ ձեզանից լսել, թե ուանչպարությունը մհնակ մարդու գործ չէ, բայց ի՞նչ կասեք, եթե ձեր ուղած չորս-հինգ մարդու տեղ հարցուրավոր մարդիկ միասին աշխատեն, ահա էս կոլեկտիվ գործն է, որ ձեզ թե կտա, ձեր ուժը շատ և շատ անգամ կավելացնի...

Միքայելն սկսեց բացատրել կոլեկտիվի առավելություններն անհատ տնտեսության հանգեց, ապա անցավ մեքենաներին, օրինակներով ու թվերով բացատրելով մարդու և մեքենաների աշխատանքի տարբերությունը:

— Հիմի ես ձեզ հարց եմ տալիս, — շարունակեց նա, — ուզում եք, որ ձեր աշխատանքը մեկի տեղ տասն անգամ ավելի արդյունք տա:

— Ուզում ենք, — վրա տվալ մոտիկ նստածների մի խմբակ:

— Ուզում ենք ձեր աշխատանքի տերը լինել, ազատվել կուակների շահագործումից:

— Ուզում ենք, — նորից լսվեց նույն խմբակի կողմից, բայց իսկուն այս ու այն կողմից ձայն տվին...

— Զե՞նք ուզում կոչեսով... մեզ հարկա՛վոր չի...

Զայները հետզհետե սաստկացան: Նախագահը շարունակ զանդահարում էր, բայց չին հանդարտվում:

Երբ աղմուկը փոքր ինչ մեղմացավ, Միքայելը բարձր ձայնով առաջարկեց.

— Ընկերներ, ձեր միջից մինն ասում է՝ ուզում ենք, մյուսն ասում է՝ չենք ուզում, բայց բանը բղավելով չի, բանը համոզելով է. թող էդ հակառակները բացատրեն մեզ, թե ինչո՞ւ չեն ուզում. կարելի է թե նրանք մեզ համոզեն...

Գուրգինը ջղայնորեն ձեռքը շարժեց ու ասաց Հասմիկի ականջին.

— Էլի ընկեր Միքայելն իր հին մեթողը գործադրեց... հիմի ամեն ինչ շիլափիլալ կդառնա:

Դրսի աղմուկն սկսեց սաստկանալ, ու բոլորի ուշադրությունը գրավեց.

Ծուտով կանայք խմբով ներս մտան, հետեւ շարքերի մոտ փոքր ինչ կանդ առան ու սկսեցին ճիշճալ, ապա տուաշանցան ծանր քայլերով, ու կանդնեցին բեմի առաջ՝ անկարդ խմբիլով: Նոթերը կիտած, բարկացած հայացքով, նրանք պլուխները սովորականից ավելի բարձր էին պահում, բայց խոսափելով գեմ առ դեմ նայելուց:

Նախագահը նկատեց խմբի մեջ իր կնոջը ու հուզմունքից կարմրեց. սաստիկ գրգռումից նա կուզեր կնոջ ձեռքից բռնել ու դուրս քաշել դահլիճից, բայց գիտեր, որ այդ անկարելի է, ու այդ անկարողությունից տանջվում էր, ասես փշերի վրա էր նստած: «Չէ, էդ անզգամից պիտի բաժանվեմ, — մտածում էր նա, — էլ համբերություն չկա, խայտառակ առավ էս ընկերների առաջ»:

Նրան թվում էր, թե ոչ միայն գյուղի ընկերները, այլև նորեկները գիտեն, որ իր կինը դիմացը կանգնած էր:

Մի պառավ կին նշանով մոտ կանցեց նախագահին ու քիչալը ետ քաշելով, ասաց.

— Սրտիդ մուրազը կատարիի, բալաս, որդիերանց բախտին արժանանաս, մի հարցրու էդ քաղաքից եկած տղե-

բանց, մեր Համբարձումին ե՞րբ են բաց թողնելու. էս ա երկու ամիս է լուր չկա...

— Քո գործն էստեղ չի, նանի, պետք է դատախազին դիմես,—ասաց նա կորուկ ու էլի գնաց իր տեղը:

Սակայն նանց չհամոզվեց ու գլուխը տմբամբացնելով քաշվեց մի կողմք:

Բոպեաշափ լուրիլունից հետո նախագահը հարցրեց գնամքը խոժոռած.

— Ինչի՞ համար եք եկեւ, ընկերներ:

Կանանցից մեկը՝ արդեն տարիքն առած մի կին, ռարձրահասակ ու ոսկրուտ դեմքով, առաջ եկավ.

— Մենք ուզում չենք կոլխոզը, տարեք ձեր պրտկերն աքաղաքի աղջկերանց նստեցրեք էնտեղ...

Հասմիկը նրա ասածի վրա շիկնեց ու աշքերը խոնարհեց իր առաջի թղթերի վրա, ապա դարձնելով հայացքը Գուրգենի ժպտացող դեմքին, ինքն էլ սկսեց ժպտայ: Մյուսներն անհարմար դրության մեջ էին:

Փոքր ինչ հանդիսավոր պառվայից հետո, կինց ետդարձեց երեսը, ու կարծես նշան տայով, նորից նայեց ընմի կողմքը. մյուս կանայք վրա տվին իրար խառնվելով.

— Ո' ոզում չենք կոլխոզը... տա՛րեք, ձեզ ըլի, չենք թռղնիլ...

Տիրեց սպասողական, ծանր լուրիլուն. նախագահը, նկատելով, որ էլ չեն խոսում, ասաց, առանց նայելու նրանց վրա.

— Լավ, մենք կքննենք ձեր խնդիրը. դուք նստեցեք...

Բայց կանայք չնստեցին. նրանք խիտ խմբով, համարյա իրար կպած, դուրս եկան, նորից կանգ առնելով րոպեաշափ հետևի շարքերի մոտ ու սագերի նման անկարդ ճշալով:

VIII

Միքայելից հետո խոսողը պիտի լիներ Հասմիկը, բայց չրշկոմի քարտուղարն առաջարկեց նրան գնալ բակը և պրո-

պատանդ մղել կանանց մեջ։ Հասմիկը վեր կացավ ու արագ քալերով գուրս գնաց։

Դահլիճում, ընդհանուր աղմուկի մեջ մի քանի հոգի մաս էին բարձրացրել, խոսք էին խնդրում։

— Գյուղի կովակները չեն եկել, — ասաց բշիջի քարտուզար Գուրգենի ականջին, — բայց նրանք իրենց տեղը ուղարկել են մի քանի միջակ ենթակովակներին։ Հիմի նրանց ենք ձայն տալիս, որպեսզի օղակի մեջ առնենք։

— Խոսքը պատկանում է ընկեր Հովակիմին, — ասաց նախագահը։

Տեղից սկսել մի գյուղացի, խոշոր ու ոսկրոս դեմքով, հագած թեպետ հին, բայց խնամքով պահած շուխան։ Նա նայում էր թեք հայացքով դեպի աջ, իր լայն ու խիտ բսած սև մորուքը գուրս ցցած, կարծես նա բոլորի գլխների վերևից դիմում՝ էր մեկին, որը ժողովից գուրս էր նստած։

— Էնպես որ մենք շնորհակալ ենք, որ մտածում եք մեր մասին, բայց մեզ հարկավոր չի կոլխոզը։ Օրինակի համար ասենք, ես աշխատավոր մարդ եմ, առավոտը վաղ՝ մութը-մութը վեր եմ կենում, գնում գործի, իսկ մեր մեջ էնպես թամբալներ կան, օրը ճաշ ա դառնում, նոր են աշքերը տրորում, վեր կենում։ Հիմի եթե բերենք իրար խառնենք թամբալին ու աշխատավորին, նրանց ունեցածը հավասարեցնենք, ի՞նչ գուրս կգա, է՞ն գուրս կգա, որ էշը կգատի ձին կուտի, էդ կոլխոզը որ կա թամբալների համար ա, դրանից մենակ խանգարմունք առաջ կգա, թամբալը չի լավանա, իսկ էն լավի՝ աշխատողի ձեռներն էլ կթուլանան, նա էլ կասի—ինչի՝ եմ շարշարվում ուրիշի համար։ Հիմի իմ ասելն էն ա, որ թողեք ամեն մարդ իրեն տան, իրեն ունեցածին տեր ըլի, էն ժամանակ ամեն բան լավ կգնա...»

Հանկարծ մեկը զիլ ձայնով նրա խոսքը կտրեց.

— Էդ ո՞նց ա, երբ ես քու բատրակն էի, ես բանում էի, որ մտիկ էիր անում, թամբալը գու չէիր, ո՛ւրիշն էր... թե կուզես՝ թամբալը նո ա, ով որ ուրիշի աշխատանքով ա ապրում։

Գյուղացին լայն երեսը դարձրեց նրա կողմը, ուզեց ինչ-որ ասի, բայց նրա ծայլը խլացրին, սկսեցին ամեն կողմից վրա տալ նկատողություններով.

— Բա որ մանեթին մանեթ շահ էիր առնո՞ւմ, միտոք չի՞:

— Մշակի համը ո՞նց էիր կտրում...

Գյուղացին նկատելով, որ իրեն «բուրգ» գգելու ենք, ձեռնոտու համարեց լոել ու նստեց, տապ արավէ: Բայց այդ էլ չօգնեց, դուրս եկավ խոսելու իր նախկին բատրակ երկանդը:

— Բնկերներ,—ասաց նա.—էստեղ մեղ ասում են, թե կոլխոզ հարկավոր չի. բայց ո՞վքեր են ասողները. ենթակուլակները՝ կուլակի մարդիկ... կուլակների համար, ի՞նչ ասել կուպի, չի հարկավոր ոչ կոլխոզ, ոչ էլ սովետական իշխանություն. դրանց համար միայն հարկավոր է, որ ամեն բան մնա իր առաջվա տեղը, որ իրանք տեր ըլեն, մենք նոքար. բայց էդ հին ժամանակն անցավէ: Զեղ համար կոլխոզը մահ է, գնացեք ձեր գլխներին վայ տվեք, իսկ մենք՝ շքավորներս ու բատրակներս ուղում ենք, որ կոլխոզ լինի, և մեր ուղածն էլ կանենք...

Նրա խոսելու վրա հետեւ շարքերից ձայն տվին.

— Եդ խելքով միշտ շքավոր կմնաս...

— Շատ է հասկանում, խելքին զոր ա տալիս...

— Փիլիսոփա է դառել գլխներիս:

Երվանդը խիստ հոնքերը խոժոռած, իր տեղից արհամարքող հայացքով նայեց հետեւ շարքերին, ու ասաց հեղնող շեշտով.

— Ինչքան ուղում եք ոռնացեք, ձեր հայ-հայը դնացեէ է, վայ-վայը մնացել...

Աղմուկը դեռ չեր դադարել, երբ բեմին մոտ եկավ մի գյուղացի՝ գլխարաց, կեղտոտ քաթանի շապիկ հադած, բուբիկ ոտները տրեխների մեջ ձգած: Նա շապիկի վզկապը բաց էր թողել, ցուցադրել իր կրծքի մոլախոտի նման իրար կծկված մաղերը: Հինգ մատը միանդամից բարձրացնելով,

նա մոտենում էր, մեծ քիթը ցից արած, աշքերը մեծամտորեն հառնով նախագահի վրա.

— Խոսք եմ ուզում, տալիս ե՞ք թե չէ, — բղավում էր նա այնպես բարձր, ասես մի սարից մյուսն էր ձայն տալիս:

— Խոսիր տեսնենք, — ասաց նախագահը, հաղիս զսպելով իր բարկությունը:

Դահլիճի ուշադրությունն անցավ խոսողի վրա, և աղմուկը դադարեց:

— Եդ որ դուք ասում եք, թե կոլխող դրվեցեք, խոկի մեր դարուց քաշում ե՞ք թե չէ. դուք քաղաքում լավ ուսում-իմում եք, լավ հագնվում ու դալիս մեզ ասում, թէ հընկերնե՛ր, եկե՛ք կոլխող մտեք. (այս ասելով նա նայեց Գուրգենի վրա). Թե որ դուք մեզ հնգեք եք, ձեր լավ, խստակ պինջակն ինձ տվեք, ձեր շաղ ոռջիկն էլ հետը, խոկ իմ մաշված, քըրտնակեր շապիկը գուք հագեք, այլ էն ժամանակ եկեք միասին աշխատենք, կոլխող սարքենք... թե որ էդ կոլեկտիվը լավ բան է, ինչի՞ շեք քաղաքում սարքում. եկել եք գեղի վրա շոքել... չէ՛, մենք շենք ուզում կոլխող, մենք ուզում ենք ձեզ նման ուտել խմել ու սիրում աղջկերանց հետ ման դաւ...»

— Աւդիդ է ասում, — բղավեցին հետեւ շարքերից:

Նա կանգ առավ, ինքնաբավական հաղթական հայացքով հոռ ու առաջ նայեց և թողում էր, թե եկի պիտի շարունակի, բայց նրա վրա էլ թափվեց ուսպիկաների անձրեւ.

— Սարո, էդ ե՞րբ շքավոր գառար:

— Շորերը տանը թողել է, տկլոր է եկել:

— Մարդարի արազը լավ թունդ է կպել...

Աղմուկը նորից բռնկվեց. երկու կողմերը իրար մկրտում էին կծու խոսքերով ու հայհոյանքով: Զանգահարումը խոռոշվում էր աղմուկի հետ, ոչ մի աղդեցություն շանելով: Բեմի վրա՝ սեղանի շուրջը նստածները տեղերից վեր կացան: Միքայելը մոտեցավ բեմի ծայրին ու ձեռքերը տարածելով, դիմեց ժողովին.

— Ընկերներ, հանդարտվեցէ՛ք:

Երբ աղմուկը դադարեց, Միքայելը խոսք խնդրելով դիմեց Մարոյին, որը դեռ կանգնած էր բեմի առաջ:

— Ընկեր, ոռւ ասում ես, թի քաղաքում կոլեկտիվ չկա.
քաղաքում եղել ե՞ս:

— Եղել եմ:

— Բա էնտեղ կոլեկտիվ չե՞ս տեսել:

— Չէ՛:

— Բա դործարաններում, հիմնարկներում մարդիկ ո՞նց
են աշխատում, միասի՞ն, թի ջոկ-ջոկ:

Սարոն բերնբաց նայում էր Միքայելին:

— Ես էն եմ ասում,—նորից սկսեց նա իր ճշճղան ձայ-
նով,—որ էդ ձեր լավ շորերը տվեք, մենք էլ հագնենք, ձեր
ոռոճիկն էլ հետը, էն ժամանակ միասին ընկեր կլինենք...

Հանկարծ Գուրգենը հանեց իր սպիտակ պիշակն ու
ձգեց Սարոյի մլա:

Սարոն վերցրեց պիշակն ու հանկարծակիի գալով, շպի-
տեր ի՞նչ անի:

— Ա'րա, ե'տ տուր, ամո'թ է,—բղավեցին հետեւ շար-
քերից:

— Հիմի ո՞նց ես, Սարո, ոռւ լավ, քաղաքի պիշակ ունես,
ես չոնեմ,—բղավեց առաջին շարքերի գյուղացիներից մեկը:

Սարոն շվարած մեկնեց պիշակը նախագահին ու իս-
կոյն գուրս գնաց դահլիճից:

Մինչ այդ, Միքայելը ետ նայելով Գուրգենին, գլխի
շարժումով կշտամբում էր նրան, որն ի պատասխան զրա-
ժակտում էր: Հասմիկը ներս եկավ կանանց ցրվելուց հետո,
հոգնած, կնճռած ճակատով: Տեսնելով Գուրգենին պիշակը
հագնելիս, և իմանալով պատճառը, ժպտաց, ապա վերցնե-
լով մի թղթի կտոր, գրեց վրան ու զգուշությամբ դրեց Գուր-
գենի առաջ:

— «Հերոսությունից մինչև ծիծաղելին մի քայլ է,
Գո'ւրգեն...»

Գուրգենը նայեց Հասմիկին ճնշված ժպտով, ապա
նույն թղթի վրա պատասխանեց.

— Սա մի գեմագողիա էր ի պատասխան ավելի մեծ
գեմագողիայի...

Դա՞վիճի մյուս ծայրի աղմուկը հանկարծ դադարեց, և
ուշադրությունը կենտրոնացավ նոր խոսողի վրա: Կանգնած
էր Սարդիսը՝ փոքրահասակ, սև բլուզի վրա պիջակ հագած,
խորամանկ, փոքրիկ դեմքով մի մարդ, անհամաշափ երկար
սպիտակահեր բեղերով ու պալղուն աշքերով: Նա վեր կա-
ցավ, փոքր ինչ պառզա տվեց, ապա սկսեց.

— Դուք՝ ուսումնական մարդիկ, եկել եք մեզ լուսավո-
րելու, խորհուրդներ տալու. բարով եք եկել. միայն ասենք
դուք բժիշկ եք, մենք էլ հիվանդ. շատ բարի. ինչո՞վ եք մեզ
բժշկելու. դուք ասում եք կոլխոզ մտեք, համեցեք, գնանք
տեսնենք կոլխոզն ի՞նչ է. թե մարդ է մտնում կոլխոզ
փշանում է, թամբալանում, ձի, եղն է մտնում, շարշարում
են, կաշի ու ուկոր դարձնում, հենց իմանաս մեջը սատանա
է նստած, որ ամեն ինչ շուտ է տալիս... Երբ որ բանն էդպես
է, պատճառն ի՞նչ է, որ դուք մեզ էնտեղ եք ուղարկում...

Զքավորների խմբից շեկ Վանին խոսքը կտրեց.

— Լավ ուստա ես քեզ համար, Սարդիս:

— Կոլխոզը փորիկ վնաս է,—ասաց շահել բատրակնե-
րից մեկը ծիծաղելով:

— Կոլխոզի սատանան դու ես, էլ ո՞ւր ես ուրիշի վրա
գցում,—ասաց բատրակ Երվանդը:

Սարդիսի ինչ-որ մրթմբթաց նրանց հասցեին, ու տեղից
դուրս եկավ: Կարծիս նրա նշանին սպասելով, հետեւ շար-
քիրը շարժվեցին, աշակերտական նստարանները ետ ու
առաջ քաշելով, վերեկի տախտակները թիսթիսկացնելով: Նրանք
կանչում էին բղավելով, գնալով դեպի մուտքը.

— Զե՞նք ուղում... Զե՞նք ուղում...

Բեմի վրա կանգնած էր բջիշի քարտուղարը և ուղում էր
խոսել, բայց իրարանցումն ու աղմուկը հնարավորություն
չէին տալիս: Նրա նիշար, ջլուտ ու խոժողուծ դեմքը հասել
էր հետեւ շարքերին. Հազիվ զսպիլով իր ցասումը, նա սպա-
սում էր այդ շարժման հետեանքներին:

Երբ մնացողները կենտրոնացան առաջին նստարանների
վրա, նախադաշը զանգահարեց ու ապա պատվիրեց դռները

միակել: Բատրակ Երվանդը գնաց դուսը փակելու. այդ ժամանակ զբսից դռանը մոտեցավ տատանվող միջակներից մեկը՝ Ստեփանը:

— Երվա՞նդ, Հը՝, ասում ես կոլխով մտնե՞մ, — Հարցրեց նա անկամ ձայնով:

Բայց Երվանդն ուշադրով շդարձնելով նրա ասածին, զրնգալն փակեց դուսն ու Ստեփանը՝ քիթը դիպցնելով, ետքաշվեց ու դանդաղ քայլերով հեռացավ: Կուկակ Սարգիսը նկատելով, որ նա ձեռքով բռնել է քիթը, ասաց հեղնանքով:

— Այ, քեզ արժան է... ի՞նչ ունես կամքումը, որ փաթաթվես յափունչումը...

Բշիշի քարտուղարը աշք ածելով դահլիճում մնացողներին, ասաց ուժեղ և ինքնավտահ ձայնով:

— Ընկերնե՞ր, առաջին անգամը չէ, որ կուկակները ոտնձգություններ են անում մեր սոցիալիստական շինարարության դեմ. նրանք իրենց հետեւից տարան մի քանի անգիտակից միջակներին, բայց նրանց զանքերը զուր են. մենք կցախչախենք դասակարգային թշնամուն... Ես դիմում եմ ձեզ՝ գիտակից բատրակներիդ, չքավորներիդ, դուք պիտի սերտ կպշեք կոլխոզին ու հետզհետե լայնացնեք նրա շրջանը...

Բատրակ Երվանդը ձայն խնդրեց:

— Ընկերնե՞ր, մեր ժողովից հեռացան կոլխոզի հեկառակ մարդիկ՝ ևնթակուլակները, էդ ավելի լավ է, մեր թշնամիները գնացին: Ես առաջարկում եմ, ուղղակի ցուցակի մեջ գցենք՝ ով ուզում է, թող կոլխոզի անդամ գրվի:

Առաջարկությունն ընդունվեց: Երբ ցուցակագրեցին, պարզվեց, որ անդամագրվել են 37 անտեսություն:

— Ուրեմն, ընկերներ, — ասաց Միքայելը, — կարող եմ շնորհավորել ձեզ. կոլխոզի հիմքը դրված է. այս անդամագրված ընկերներդ վաղը կդաք ժողովի. կրացատրենք ամեն ինչ, ցուցմոնքներ կտանք:

Կես ժամի շափ գործնական հարցերի շուրջը խորհրդակցելուց հետո, ժողովը ցըսկեց:

— Այժմ, ընկեր Հասմիկ և ընկեր Գուրգեն, մենք կարող ենք գնալ, — առաջարկեց Միքայելը:

Նրանք նստեցին ապրանքատար ավտոն ու ճանապարհ ընկան դեպի սովորոց:

IX

— Մինաս, կամաց քշիր, թե չէ շարդ ու փշուր կանես մեզ, — դիմեց Միքայելը մեքենավարին:

Մինասը դանդաղեցրեց ավտոյի լոնթացքը:

— Դե՛, ընկեր Էնուպիաստներ, — ասաց Միքայելը, — մեր գործը կարող ենք կիսով շափ հաջողված համարել. բայց դեռ շատ բան կա անելու. պետք է աշխատել միշտ վառ պահել կրակը...

— Բայց, ընկեր Միքայել, դու այսօր իդեալիստական թեքման մեջ էիր ընկել, — ասաց Գուրգենը:

— Ինչպե՞ս թե, — զարմացավ Միքայելը:

— Դու ուզում էիր համոզել ենթակուզակներին. մոռանում էիր փիլիսոփա Հոբեմոսի խոսքերը. — «Եթե մաթեմատիկական հշմարտությունները մարդկանց շահերին հակառակ լինեին, նրանք երբեք չեն ընդունվիլ...»

— Մի՞թե այդ տպավորությունն ստացար.՝ իսկ ես ուզում էի նրանց ասպարեզ քաշել՝ ճանճերին սպիտակի վրա նստեցնել, որպեսզի երեան ու քննադատության տակ ընկնեն... Բայց զարմանալի է, Գուրգեն, դու միշտ ինձ մեղադրում ես զանազան թեքումների մեջ, իսկ քոնքը մոռանում ես. օրինակ՝ Հենց քո պիշակի պատմությունը...

— Ի՞նչ թեքում ես տեսնում դրա մեջ:

— Կարճ ասած — դա մի շահելություն էր. դու ենթարկվեցիր պրովկացիայի և քո վարմունքով ցույց տվեր, որ նրանց տեսակետի վրա ես կանգնած: Բայց քանի որ լավ վերջացավ, այնքան էլ շպետք է հարձակվել ընկեր Գուրգենի վրա:

— Ուրեմն երկուսս էլ թեքման մեջ ընկանք. մնում է ընկեր Հասմիկը:

— Օ, իմ բանը շատ դժվար էր, —պատամխանեց Համակը. —դուրսը կանայք ինձ ուղում էին, իսկ դուք ներսը հանգիստ նստած էիք: Ի՞նչ սուս լուրեր, ի՞նչ պրովոկացիա տսես, որ առաջ չեին դնում: Այնքան խոսեցի, որ գլուխս զմբղմբում է: Բայց էլի վերջը կարողացա ֆրոնտը պատռել և կանանց մի մասն իմ կողմը քաշեցի: Հենց որ նրանց ղեկավարութիները նկատեցին այդ, իսկույն ցրվելու հրաման տվյալն, վախճառված, որ մյուսներին էլ շհամողեմ: Դե իհարկեն, նրանց հավատի բերելը մի օրվա բան չի, պիտի երկար շանք թափել...

— Քանի ընկեր Հասմիկն այստեղ է, հուսով եմ, այդ աշխատանքն էլ իր վրա կվերցնի, —ասաց Միքայելը:

— Արդեն վերցրել եմ վրաս, ու մինչև նպատակիս շհամնեմ, չեմ հանգստանալ:

Խոսակցությունը դադարեց ավտոմոբիլի կանգ առնելու պատճառով: Պարզվեց, որ մեքենայի մեջ ինչ-որ փշացել է: Գուրգենն ու Հասմիկը օգտվեցին հանգամանքից, և շարունակեցին ճանապարհը ոտով, իսկ Միքայելը մնաց:

Միքայելն իշխավ ավտոյից ու կանգնած նայում էր հնուացող զույգի հետեւից, որը լուսնի կաթնամշուշի մեջ մի առանձին խորհրդավորություն էր ստանում: Ու մի խառը զգացում էր գալիս մեջը. նա և ուրախ էր, տեսնելով, ինչպես նո՞ր կյանքի, նո՞ր շինարարության համար նոր սերումն էր լըծվում: Գործի իր թարմ եռանդով, ու միաժամանակ մի տըխրություն էր գալիս մեջը՝ մի մտածում, թե ինքը գնացող, անցնող սերունդ է... որքան էլ ինքը համընթաց քայլում է նրանց հետ՝ այնուամենայնիվ լուսնի տակ անցնող շողաղում զույգի քայլերն ուրիշ են, նրանք ավանդարդ են, նրանք իրար ամելի լավ են հասկանում... և ի՞նչ խոսք, նրանք արդեն սիրահարված են, նույնիսկ գուցե առանց գիտակցելու...

Ու մտքերը թռչում էին գեպի անցյալը. խուսն երամով ելում էին հիշողության մեջ իր թարմ տարիները՝ ընկերները, առաջին ուսուցիչից հուղումնալից ելեջները... հիշում էր իր սիրած Օլգային՝ այն անձնվեր աղջկան, որը գալիս էր

բանտն իրեն տեսնելու, և որն այնպես զոհվեց Հետագայում...

Նայում էր Հեռացող զույգին, որը Հետզհետե լուծվում էր Հեռվում՝ մշուշի մեջ ու խոսում անցյալի Հետ. Հին Հույները նորոգվում էին, խոնվում մեջը, պղտորում աչքերը... ու կարծես քելու համար իր շուրջը վիստացող անցյալի ստվերներին, նա ձեռքով մի շարժում արակ, ու նայեց մեքնային. արդեն երկրորդ անգամն էր սուլիչն իմացնում էր, որ պատրաստ է գնալու:

Նա նորից նստեց ավտոն ու շարունակեց իր ճանապարհը:

Հասմիկն ու Գուրգենը քայլում էին լուս։ Հասմիկի մեջ մի կասկած անցակ, թե Միքայելը կարող էր իր մասին ոչ ցանկալի ենթադրություն անել, բայց նա դուրս վանեց այդ մտքերը՝ կանացի թուլություն համարելով դրանց. — «ուզեմն ես է՛լ մի սովորական, թույլ ու վախսկուս կին եմ... մտածում էր նա. իմ մեջ է՛լ է ապրում կաշկանդող Հին կենցաղը... իսկ ես Գուրգենին էի մեղագրում...»

Գուրգենը նայում էր Հասմիկին, ու թվում էր նրան, թե այժմ ուրիշ կին է իր Հետ գնում. ինչ-որ փոխվել է նրա մեջ, որ նա դժվարանում էր բնորոշել. նա զգում էր միայն, որ ավելի մտերիմ է իրեն, որ ինչ-որ մեծ կապ կա իրենց մեջ, մի մեծ զործ, որի ճանղեակ իր բոլոր անցյալ զեզումները փոքրիկ են, երկրորդական...

Բայց և այնպես մնում էր լարված գրության մեջ, շարունակ ձգտում էր Հասմիկի թեղ մանել, իսկ նա խուսափում էր, աննկատելի հեռանալով նրանից:

— Ընկեր Հասմիկ, արի այս կարծ կածանով կտրենք, բարձրանանք մեր սովորողի հետեի բլրի գագաթը. Հրաշալի զիշեր է, նստենք այնտեղ ու զրուցենք, իսկի քունս չի տանում...

— Գնա՛նք, ես դեմ չեմ, — ասաց Հասմիկը, չնայած որ մեջը ինչ-որ տատանվում էր:

Նրանք դուրս եկան ճանապարհից ու ընկան նեղ կա-

ծանը: Այժմ արդեն նրանք քայլում էին իրար մոտիկ, համար իրար դիպչելով:

— Հասմիկ, ի՞նչ կասես մեր արշավի մասին:

— Ավելի լավ անցավ, քան ես սպասում էի, ինձ թվում է, ընկեր Միքայելը շափաղանցնում էր դիմադրովթյունը:

— Այո, նա որպես ճին մարդ, շատ զգույշ է, բայց գուցե հիմք ունի...

Գուրգենն ուղում էր իմանալ Հասմիկի կարծիքն իր Ելույթի մասին, բայց անհարմար էր զգում ուղղակի հարց տալ: Կարծես գուշակելով նրա ցանկությունը, Հասմիկը ասաց.

— Մասնավորապես Գուրգենն՝ այսօր ցուց տվեց, որ կարող է պայքարել...

Ապա ըստեաշափ կանգ առնելով, ավելացրեց:

— Ես մինչև այժմ քեզ ընդունում էի որպես գիտովթյան էնտուպիաստ, այժմ քո մեջ մի ուրիշ մարդ էլ բացկեց — սոցշինարարության մարտնչող...

Գուրգենի այտերը վառվեցին այդ խոսքերից:

— Զգիտեմ ինչո՞ւ, Հասմիկ, — ասաց նա հուզված, մտերմական ձայնով. — Ես միշտ դժգոհ եմ ինքս ինձնից. միշտ ինձ թվում է, թե շասացի այն, ինչ-որ ասելու էից շարի այն, ինչ անելու էի... Այսքանը գիտեմ, որ լծվել ենք մի մեծ ու դժվար գործի և պիտի նպատակին հասնենք...

— Եվ իհա՛րկե, կհասնենք...

Քայլում էին, խոսում ամայի դաշտում. ինչ-որ ասով էին, վերեկց էր անցնում, իսկ ներքուատ անտես թելերով կուտակվում էր մի զգացում, որի անունից կարծես խոսափում էին...

Մոտ կես ժամից հետո նրանք արդեն բլրի վրա էին: Թիկնելով գետնին՝ խոտերի վրա, նայում էին առաջները սփոված լուսաղարդ տեսարանին: Լուսինը սահում էր երկընքի ջինչ, բաց կապույտի վրայով, փայլում էր ներքենի այգու բարդիների գագաթներին, մութ ստվերներով լցնելով նրանց տակերը: Թեթև հոգ էր փշում, խաղում շնչի հետ,

ասես բերում էր բարձունքներից ինչ-որ տարօրինակ զգացումներ, մտքեր...

X

Գուրգենը պատկել էր, դլուխը հենած արմունկներին ու լուս նայում էր մերթ առջևը սփռված տեսարանին, մերթ գողոմի՝ երեսը դարձնում էր Հասմիկի կողմը։ Նա մեծ ցանկություն ուներ արտահայտելու իր մտորումներն ապագա գործունեության ժաման՝ միասին գործելու, պայքարելու մասին, սակայն մի ուրիշ, մտերմական տոնով, որի մեջ կուզեր հնչեցնել և իր առանձին, թաքնված դպացումները։ Բայց ինչո՞ւ Հասմիկը խուափիում է «առանձին» մտերմությունից։ Երբ նրանք մենակ մնացին, թվում էր, թե շատ մոտ են իրար, անբաժան ընկերներ են, և առանց Հասմիկի նա չէր կարող երևակայել իր ապագան, բայց այժմ դարձյալ ինչ-ոք մշուշ իշնում է, ծածկում Հասմիկին, հեռացնում նրան իր աշքերից։ Թվում է, թե նա մի բարձր գագաթի վրա է ու ինքը մաքառելով պիտի հասնի նրան։ Աւ նորից շարմում են նրա առաջ տարօրինակ խոշընդուները, նորից Հասմիկը դպում է «իրրացիոնալ»։

«Եթե մոտենամ,—մտածում էր Գուրգենը,—ասեմ, ես քեզ սիրում եմ, նա անպատճառ կհեգնի, կասի՝ դու միանգամայն ծիծաղելի ես, չէ՞ որ դու շես ընդունում սերը... ուրեմն այդ կողմից նավերս այրել եմ... եթե ասեմ—արի ամուսնանանք, ապրենք միասին, ինչպես ապրում են շատերը, այդ խոսքերը կհնչեն նրա ականջին այնպես գուհիկ, ինչպես մի նուրբ երածշտություն հանկարծ վերջանար կովի բառաշով։ Նա երեխ այդ գեպքում մի զարմացական-հեգնական հայացք կնետի վրաս, կսկսի խնդալ ու կթողնի հարցն առանց պատասխանի, իսկ ինքնասիրությունը չի թույլ տալ նորից կրկնելու։ Ուրեմն ո՞րն է Հասմիկի «կվիհնա-էսենցիան», ո՞րն է այն հանգույցը, որից կարող եմ ելնել... կամ գուցե այս բոլորը նրա կողմից մի խաղ է, որի նպատակն է ինձ տանշել...»

Նորից նա նայում էր առջեկի տեսարանին, ու շրջում էր մտքերը, անցնում ապագա գործունեության հեռանկարներին:

Իսկ Հասմիկը հենվել էր գետնին արմունկով ու մյուս ձեռքի ափով երեսը ծածկել, բայց մատների արանքով գաղտապողի դիտում էր Գուրգենին, նկատում էր նրա ստեղծատեպի իրեն ուղղված ծարավի հայացքները: Մի բոպե նրա մեջ մի խենթ ցանկովյուն եկավ՝ խառնշտել Գուրգենի մազերը, կատարյալ իրարանցում ու ապշեցում առաջացնել նրա մեջ, բայց մի սառը միտք բարակ օձի նման դուրս սողաց միջից ու ասաց, — «Հասմիկ, զգա՞ստ. թեպետ Գուրգենն այժմ մի ուրիշ՝ պվելի պայծառ փայլ ստացավ աչքիդ, բայց զուրը դեռ չի պարզվել վերջնականապես... տղամարդիկ անդիտակցարար հետևում են իրենց նախկին հոգեբանության, — նրանք սծպտյալ իմպերիալիստներ» են կանանց վերաբերմամբ, և ձգտում են մեզ դարձնել իրենց «հավելվածը» ակոմպանիմենտը, իսկ ես կոչված եմ ինքնուրույն ձայն ունենալու... Թող Գուրգենը պարզապես, համոզիլ կերպով ցույց տա, թե ի՞նչ եմ ես նրա աշքում, թող տեսնի իմ մեջ այն մյուս Հասմիկին, այն ժամանակ... Չե՛, փոքր ինչ թույն դեռ անհրաժեշտ է... ու քանի զսպանակն իմ ձեռքին է, առայժմ կպահեմ...»

Նա գլուխը բարձրացրեց ու ցանկանալով հանել Գուրգենին ձնշված լուսումից, հարցրեց.

— Ինչի՞ մասին ես մտածում, Գուրգեն:

Գուրգենը հանկարծակի գալով, իսկույն շպատասխանեց.

— Ապագայի մասին, — ասաց նա բառերը ձգելով, — այսպիսի լուսնկա գիշերները, երբ նայում եմ խաղաղ, քնածտեսարանին, թվում է, թե ժամանակը կանգ է առնում. կուղեի մի անընդհատ, վառ ցերեկ լիներ, եռուն գործերով լի... Սյու բոպեիս աշքիս առաջ անցավ մեր այցելած գյուղը, ու մեր գործն ինձ թվաց շատ դանդաղ, կարծես սայլով ենք ընթանում... անհամբերությունից միտքս թոշում է առաջ, ու

տեսնում եմ մեր ամբողջ երկիրը՝ նույնիսկ երկրագունդը վերածված համատարած սոցիալիզմի...»

— Այսինքն՝ անում ես այն, ինչոր գիտության մեջ, այնտեղ էլ ապագա գյուտերով բազմապատկում ես բնորդագությունը, այլ խոսքերով՝ Գուրգենը լուանի աղդեցության տակ երազում է, իսկ երազները մեծ գրողի ասելով՝ ծույլ ուղեղի գավակներ են...

«Ելի խփեց անպիտանը», — մտածեց Գուրգենն ու խայլվածի նման վեր թռավ, նստեց տեղը: Կարծես նրան բարկացնելու համար Հասմիկն էլ նստեց:

— Զոր ես կարծում, թե վաղվա գալիքը երազ է, — ասաց Գուրգենը լուրջ տոնով, — չե՞ որ մեր կյանքն այժմ մի արշաւոյս է, որը և ներկա է, և ապագայի նախերդանքը...

— Գուրգեն, դու ամբոխավարություն ես անում առանց ամբոխի. հարցը ոչ թե վաղվան գալիքի մասին է, այլ քո գիգանտ թռիչքների մասին, որ անում ես երևակայության թերութ...

— Իսկի էլ չէ. մեր բոլոր ճանապարհները տանում են դեպի սոցիալիզմ. դու մոռանում ես, որ մեր կյանքը մեծ պլանի մեջ է առնված և օրեցօր ներկան լուծվում է ապագայի մեջ...

— Բայց դու թռչում ես բոլոր պլաններից դուքս ու պտտվում ես վերջնակայանների շուրջը...

— Իսկ դո՛ւ, որ այդպիս հարձակվում ես, չե՞ս ձգտում միշտ գերակատարել պլանները, ուրիշ խոսքով՝ չե՞ս թռչում պլաններից դուքս:

— Ծնորհավորում եմ, Գուրգեն, դու ընկար քո իսկական ուղին. այժմ դու, ըստ սովորության կսկսես հարձակվել ինձ վրա, վերագրելով ինձ այն, ինչ ես քեզ եմ վերագրում:

— Ո՛չ, ես մտադիր չեմ հարձակվելու..., այսպիսի մի գիշեր, երբ նույնիսկ գորտերը քնքշանում են ու իրենց կըռկըռոցը բայաթի դարձնում, երբ բնությունը խոսում է ուշացած պոետների ու մարդարեների հետ՝ ես զինադադար եմ հայտարարում Հասմիկին՝ ապագայի մասին խոսելու համար...

— Օ՞չ, ինչ բանաստեղծական էր նախերդանքու... խոստովանիր, Գուրգեն, եթե ես այստեղ Ալինեի, այս զիշեր մի ուսուպիա կգրեիր «Ուանի աշխարհը» վերնագրով:

— Ինչո՞ւ չէ, կգրեի, բայց ոչ թե «Ուանուպիա», որ նշանակում է «ոչ մի տեղ», այլ կգրեի «Ապանուպիա» այսինքն՝ «ամեն տեղ»...

— Եթե այդպես է, զինագարը ընդունում եմ, պայմանով, որ լավ թոփչք կատարեն գեպի ապագան... ղե՛ թոփ՛ր լայն թևերով. բայց շմոռանաս և ինձ... տե՛ս, լուսինը ժըպտում է մեզ ու գորտերն էլ իրենց պատմական դերն են կատարում, նրանք կոկոռում են ուսուպիաների վրա, կարծելով ին իրենց ճահճներից գուրս էլ ոշինչ չկա...

— Չէ, Հասմիկ, ոու առաջ ընկիր, որ հավատամ թե իսկապես գալիս ես հետո:

Հասմիկ.—Լավ, ես եմ սկսում. ղե՛ լսիր ուշի-ուշով... ուրեմն՝ տարիներ են անցնում, թե ո՞րքան—այդ թող ինքը ժամանակն ասի, ու մենք միասին գալիս ենք նորից զեպի այն գյուղը, որտեղ մենք այսօր նվաճեցինք միայն 37 տրնտեսություն։ Թոշում ենք «Դեպի ապագա» օդանավով, ազատ ու զվարի, շգգալով ոչ սահմաններ, ոչ արգելք, ողջ երկրագունդը մեկ է, ուր ուղում ես իշխր. ամեն տեղ զգում ես քեզ աշխատավոր մարդկության մի բջիջում՝ ընդհանուր սույնալիստական կարգերով, ընդհանուր լեզվով... Մեզ ուղեկցում են պրոֆեսոր Արեգյանը ու մի քանի ուրիշ գիտնականներ, որոնք վերադառնում են Ֆիլադելֆիայի, Բոմբեյի գիտական կոնգրեսներից...

Հայաստանի առաջին քաղաքից մեր դեմ են ելնում բազմաթիվ օդանավեր, շրջապատում են մեզ պսակաձև, ինչպես այն գուքրիկ ձյունաթուցը ամպիկները, որոնք ընդգրկել են լուսնին... Դա կլինի արևածագին ու ողջ էսկադրան կրոցավայրի արշալուցի նարնջի գույներով ու կհնչի ռադիոյով մի նոր, վերամբարձ հնտերնացիոնալ...

Մենք թոշում ենք պտույտներ անելով Հայաստանի վրայով. մեր առաջ սկսվում է մի հրապուրիչ երկիր, այնքան

տարբեր մեր առաջվա տեսածից... Ամեն տեղ, ուր աշքն էր զարնոմ, կենդանության մի շքեղ պատկեր էր ցայտում. նախկին չոր, անապատային ու ժայռոտ վայրերից հետքեր չեն մնացել. ո՞րքան բուտականություն, ո՞րքան զրեր-առուներ ու լճակներ, պուրակներ, այդիներ... բազմաթիվ հիդրոլայաններ, գործարաններ..., ու դալար սարերի, դաշտերի մեջ փայլում էին փոքրիկ քաղաքները՝ մեկը մյուսից գեղեցիկ... Գուրգենը նայում է համշտակված, բողե առ բողե լսվում էր նրա բերանից՝ հիանալի՛... հրաշալի՛... սքանչելի՛... վերջապես, երբ նրա ողնորությունը հասավ իր դադարին, նաև հանկարծ վճռեց այլևս թողնել գիտությունն ու նվիրվել բանաստեղծության. իսկուն հանեց իր ծոցատերն ու սկսեց գրի առնել մի պոեմ, որի առաջին տողերն այսպես էին.—

Նորգված երկիր, պլանաշե՞ն երկիր,

Ես ենք տեսա արեի շողերով...

...Գուրգենն անհանգիստ շարժում արավ.

Գուրգեն. —Հասմի՛կ, —ասաց նա, —դու հասմիկուրեն ես տանում գործը. Ես բողոքում եմ.

Հասմիկ. —Բողոքի՛ր, բայց իմացի՛ր, որ ապագայում, երբ դասակարգերը կվերանան, խոսքը կլինի ազատ՝ Արագածի հովերի նման, բայց ոչ նրանց նման թեթև և դո՛ւ, ի՞շարկե, շերմ պաշտպան կլինես ազատ խոսքի... իսկ այժմ շարունակենք մեր ճամփորդությունը...

Մենք ուշագրությամբ հետևում էինք, աշխատելով նկատել մեզ ծանոթ վայրերը, բայց համարյա ոշինչ չեինք կարողանում գտնել: Վերջապես երկուս էլ ցնցվեցինք, երբ առաջին պտույտից հետո պրոֆեսոր Արեգյանն ասաց.

— Ահա երևանը. նա այժմ վերածված է շորս կոմբինատ-քաղաքի...

Մենք ագահությամբ հառեցինք աշքներս ներքե. Հասմիկը նայում էր նախկին կայարանի կողմը, կարծելով, թե կպանի մյուս թաղերը. բայց գործարաններն էլ չեին նկատվում, նրանք առանց ծխնելուցդների էին. իսկ նրանց շուր-

չը այնքան նոր ծառաստաններ, նոր շենքեր կային, որ նա շկարողացավ մի բան պարզել: Գուրգենն էլ նայում էր համալսարանի կողմը, բայց այստեղ էլ գժիկար էր մի բան որոշել: Նախկին երեանից բան չէր մնացել. միայն Զանգում էր ձգվել օձի նման, բայց նրա ափերն էլ բոլորովին փոխված էին:

— Այս շորորդ կոմքինատի վերին մասը հատկացրած է գիտության և գիտնականներին,—ասաց Արեգյանը.—ուսանողները «վերացական» թաղ են անվանում...

Մենք նայեցինք վերեկ կողմը. ամենից աշքի ընկնողն աստղադիտարանի աշտարակածն շենքն էր: Նրա գագաթից հանկարծ թռան դեպի մեզ մի խումբ ուսանողներ. շարաձձի պտույտներ և ութածի հանգուցներ անելով օդում, նրանք բարձրացան մեր վերեն ու բաց թողին կարմիր թերթիկների մի հորդ անձրեւ: Թերթիկների վրա գրած էր.—«Կեցցե՞ն սոցիալիստական շինարարության անդրանիկ մարտիկները...» Գուրգենի ինքնասիրությունը որոշ թթիւներ ունեցավ այդ բաներից, իսկ Հասմիկի դեմքն ամբողջովին մի մեծ ժայիտ վերածվեց: Մենք նշաններով ողջունեցինք ուսանողներին ու դուրս եկանք քաղաքի շրջանից: Սավառնում էինք գանդապ, ու հրճվում նորանոր տեսարաններով: Ահա մոտեցանք Աևանա լճին, որն արդեն մի հրաշալիք էր, —լազուր շրերը շրջապատկած էին սոճիների վերասլաց անտառներով, որոնց խիտ կանաչների մեջ հսկա ծաղիկների նման փայլում էին գունավոր շենքերը: Դժվար էր գտնել մի ուրիշ վայր, ուր ընությունն ու մարդկային արվեստն այդպիս ներդաշնակ զուգորդվեին: Գուրգենը նայում էր հմայված. նա սպառեց իր պսեմի մեջ հին բանաստեղծության ողջ արսենալը, քրրտնաթոր եղավ ու մնաց դժգոհ... Նա շարունակ ետ ու առաջ էր շրջում ածականները՝ «գեղահրաշ»—«հրաշագեղ...» «գեղածիծաղ»—«ծիծաղագեղ...» «գարմանահրաշ»—«հրաշագարման...» ու վերջը չկարողացավ արտահայտել իր մեջը հորդացող զգացումները, զայրութով նետեց մատիտը լճի մեջ... Կարծես այդ նշանին էին սպառում. այդ րոպեին ներքելից

մեղ նկատեցին լճի վրա շարված հիդրոպլանները, ու Հսկա
բաղերի նման խմբով բարձրացան գետի մեղ՝ ողջունելու...
Այդ էքսպրումտ դիմավորումն այնքան ցնծալի էր, որ Գուր-
գենը մոռացավ իր անհաջող բանաստեղծական գերյուտը...
Հիդրոպլաններն ընկերացան մեղ ու մենք շարունակեցինք
պատույտը...

...Գուրգենը, խայթված այդ շարաճճի հարձակումներից,
շղայնության նշաններ էր ցուցադրում:

Գուրգեն.—Խոսի՛ր, խոսի՛ր, Հասմիկ, ոգևորիիր, այդ
բոլորը մենք արձանագրում ենք...

Հասմիկ.—Իբր թե դժողո՞ւս. բայց եթե դժողո՞ւցիր, որ
քեզ բանաստեղծ դարձրի, այժմ պիտի ուրախ լինեն, որ
ազատեցի քեզ այդ պաշտոնից, մանավանդ, որ քեզ մեծ
վտանդ էր սպառնում—որու գիտե՞ս, որ Հայտնի Ֆուրյեն իր
ուսուպիայի մեջ՝ իր ապագա ֆալանստերներում, շատ ան-
հաճելի պաշտոն է առաջարկում անշնորհք բանաստեղծնե-
րին...

Գուրգեն.—Այսի՞նքն...

Հասմիկ.—Ամաչում եմ մինչեւ անդամ ասել... փողոց-
ները մաքրելու պաշտոնը...

Գուրգեն.—Այդ գեպքում անհրաժեշտ կլինի պատճել և
քեզ, որպես ինձ բանաստեղծ դարձնողին...

Հասմիկ.—Համաձայն եմ, ընդունում եմ իմ պատիժը և
լուսեմ. առաջարկում եմ քեզ շարունակել մեր ճանապարհոր-
դության նկարագիրը...

Գուրգեն.—Լա՞վ, շարունակենք մեր երթը, դեպի ապա-
գան...

XI

Գուրգեն.—...Հասմիկը՝ ըստ սովորության, այնքան էր
տարիել տեսարաններով, որ մոռացել էր մեր ճանապար-
հորդության բուն նսլատակը: Վերջապես մեզ ուղեկցող պրո-
ֆեսոր Արեգյանը հարցրեց.

— Ո՞րեղ կուգեիք իշնել, ընկերներ:

— «Ճեցակեր» գյուղում,—ասաց Հասմիկը:

— «Յեցակեր» գյուղու, — Հարցրեց Արեգյանը, դեմքի բոլոր կնճիռները Հարցականի վերածելով, — բայց մեզ մոտ այդպիսի բաժանումներ չկան... մենք ունենք միայն կոմբինատիոններ, սոցիալիստական բջիջներ...

Բոպեաչափ մտածելուց հետո, նա ասաց.

— Զեզ կարող է օգնել Հնագիտության պրոֆեսոր Ակնոցյանը, որի հետ ձեզ քիչ առաջ ծանոթացրի:

Պրոֆեսոր Ակնոցյանը հանեց իր սակալոյաժից մի պատմական քարտեզ ու երկար փնտրելուց հետո՝ բացականշեց.

— Գտա՞նք. նախկին «Յեցակեր» գյուղու այժմ ընկնում է 51-րդ սոցիալիստական բջիջի շրջանում:

Արեգյանն իսկույն կարգադրեց, որ մեզ իշեցնեն հենց այդ բջիջում: Մեզ ուղեկցող օդանավերն ու հիգրոպլանները հրաժեշտ տալով, մեկնեցին իրենց տեղերը:

Մենք իշանք մի կոկիկ քաղաքում՝ մի բարձր սպիտակ շենքի առաջ: Երկար ժամանակ մնացել էինք կանգնած, ապա շած հիացմունքից. լայն փողոցի բոլոր տները շրջապատված էին ծաղկանոցներով ու պուրակներով: Տպավորությունն այն էր, կարծես մենք գտնվում էինք մի շքեղ կուրորտում, որի շենքերը կառուցված էին հատուկ մրցությամբ՝ մեկը մյուսից գերազանցող: Վերջապես Հասմիկը՝ որպես հին մտածողությունից դեռ շազատագրված՝ հարցրեց Արեգյանին.

— Սրանք ձեր հանգստյան տներն են:

Պրոֆեսորը ժպտաց ներողամտաբար.

— Ո՛չ, սրանք մեր սովորական տներն են, որտեղ կաշրելի է աշխատել և հանգստանալ: Մեր սակավաթիվ հիվանդների համար մենք ունենք հատուկ կուրորտներ, բայց ընդհանրապես, հեշտ հաղորդակցության շնորհիվ, մեր առաջ բաց են բնության ամենագեղեցիկ վայրերը՝ թե՛ հանգստանալու, թե՛ զվարճանալու համար:

Հանելով ծոցից Հնագետ պրոֆեսոր Ակնոցյանից վերցրած քարտեզը, Արեգյանը ցուց տվեց մեզ նախկին «Յեցակեր» գյուղի տեղը: Հասմիկն ադահ աշքերով դիտում էր շրջակայքը, բայց այնքան էր փոխվել տեսարանը, որ միայն բլուրների ընդհանուր գծերն էին հեռավոր կերպով հիշեցնում

անցյալը։ Չորս կողմբ ժառագարդ ու ծալեազարդ, ընթանուր բանջարանոցներով ու այգիներով... մի թիզ հող չկար տռանց մշակման, իսկ հոյակապ տները, գործարանները, կանոնավոր լայն փողոցները... չէ՛, սա շատ հեռու էր նախկին «Յեցակեր» գյուղի պատկերից...»

— Հե՞յ գիղի «Յեցակեր» գյուղ, ո՞րտեղ ես,—ասաց Գուրգենը, — հիշո՞ւմ ես, Հասմիկ, ամռան երեկոն, նեղ ու ծուռ փոշու փողոցները, գյուղացու իդիլիական բակը, մեր սոցարշավը Միքայելի հետ...

Այս խոսքերի վրա Հասմիկի աշքերը պղտորվեցին, նաև սշինչ չպատասխանեց ու երեսը դարձրեց մյուս կողմը, իր հուզմունքը ծածկելու համար։

— Ինչո՞ւ ես տիրում, Հասմիկ, — հարցրեց Գուրգենը։

— Տիրում եմ, որովհետև մեղ համար էլ անելու բան չի մնացել... ա՞յս, չէ՞ որ մենք պիտի Յեցակեր գյուղի կոլխոսի 37 տնտեսությունը վերածեինք համատարածի. չէ՞ որ ես պիտի պրոպագանդ մղեի գյուղի կանանց մեջ...

— Ո՞րքան միամիտ ես, Հասմիկ, մեղ համար այսուղ էլ աշխատանք շատ կա... մոռացիր Յեցակեր գյուղը. նա արդեն պատմություն է...

Խոսակցությունն ընդհատեց պրոֆեսոր Արեգյանը։

— Այսօր գյուղատնտեսական ինստիտուտում զեկուցում է լինելու բանջարաբուժության նոր ձևերի մասին, — ասաց նա, — կարծում եմ դա ամենալավ սյուրպրիզն է ձեզ համար։

Մի քանի բոսկեից հետո մենք արդեն մի մեծ շենքի առաջ էինք, որը շրջապատված էր հազվագյուտ ծառերով։ Երբ ներս մտանք դահլիճ, նա արդեն լիքն էր հասարակությամբ. հիմնական զեկուցումն արդեն սկսված էր։

Զեկուցման ժամանակ մենք այնքան նորություններ իմացանք ագրոկուլտուրայի զարգացման շուրջը, որը տաս տարում հազիվ կարող էինք յուրացնել. փոխվել էին ոչ միայն գիտության տվյալները, այլև նրանց մշակելու մեթոդները։ Արհեստական անձրև, արհեստական լուս, ջերմություն... ֆիզիկան ու քիմիան սերտ միացած ագրոկուլտու-

րացի Հետ։ Պարզվեց նույնպես, որ եղանակների գուշակումը նույնքան ճիշտ հիմունքների վրա է դրված, որպես և աստղագիտությունը։ Այս բոլորը Գուրգենը լսում էր օրենտիվ սառնարատությամբ, իսկ Հասմիկը ցուցադրում էր իր դեմքին անհամբեր հետաքրքրություն, շարունակ զարմանքի արտահայտությամբ փոփոխելով իր դեմքը։ Բայց մի դեպք հուզումնալից դարձավ Հասմիկի համար. զիտնականներից մեեկը համեմատության դնելով կապիտալիստական և սոցիալիստական շրջանների ազրոկուլտուրան, ասաց ի միջի այսոց։

— Միայն սոցիալիզմն էր, որ ամբողջ թափով առաջ տարայ գյուղատնտեսությունն իր հսկա ծավալով. կապիտալիստական աշխարհը պարարտացնում էր հողը մարդկանց արյունով. այն ավելածությունը, որ նա պատճառում էր իր արյունահեղ պատերազմներով, մարդկանց կյանքերը խորտակելով, հսկայական միջոցները վատնելով, չեր կարող նպաստել ոչ գիտությանը, ոչ նրա գործնականին... Այժմ, ընկերներ, երբ մենք հանրագումարի ենք բերում սոցիալիզմի նվաճումները, չենք կարող առանց հիացմունքի նայել այդ պերճախոս, լայնատարած դաշտերին, որոնք սփռված են ողջ երկրագնդի վրա։ Եվ այդ բոլորը նրանից է, որ չկա շահակործում, չկան պատերազմներ... զենքերը դարձել են պատմական թանգարանների զարդեր, իսկ նրանց վրա ծախսվելիք մետաղը գործադրվում է մեքենաների վրա...»

Հանկարծ Հասմիկն այլալիվեց։

— Հիվա՞նդ ես, — հարցրեց Գուրգենը։

— Զի՞, Գուրգեն, բայց հիվանդից էլ վատ եմ, ես անհարմարություն եմ զգում... զրպանումս ատրճանակ կա, վերցրու։

Գուրգենը խոստացավ վերցնել ընդմիջման ժամանակ, բայց այս քեզ դժբախտություն. երբ նրանք քաշվեցին մի անկյուն, և Հասմիկը հանեց իր ատրճանակը, հանկարծ մեղ մոտեցան մի խումբ զիտնականներ, որոնք լսելով Արեգյանից, թե մենք «պրոլետարական դիկտատուրայի շրջանի»

մարդիկ ենք, ուզեցել էին մեզ մոտիկից տեսնել, հետներս խոսել:

Նկատելով Հասմիկի ձեռքին ատրճանակը, մեկը նրանցից հարցուեց.

— Սա ի՞նչ է. երեխ հեռադիտակ է, այո՞:

Կարո՞ղ եք երկակայել Հասմիկի դրությունը. նա յոթն անգամ իր գույնը փոխեց. հուզումնալից հայացքով նա նայում էր Գուրգենին: Դրությունն ավելի քան ծանր էր, բայց Գուրգենը, որը միշտ կրիտիկական բոպեներին փրկության է դալիս Հասմիկին, այս անգամ էլ եկավ...

— Սա մի մանկական խաղալիք է,—ասաց նա, —սրանով մեզ մոտ երեխաները ծտեր էին որսում...

Կարծես մի սար ընկավ Հասմիկի ուսերից. նա մտերմական մի հայացք ուղղեց Գուրգենին, ու այդ հայացքի մեջ ինչ-որ խորը արտահայտություն կար...

...Հասմիկը լսում էր Գուրգենին շրթունքները խածնելով, մեծ ճիգ գործադրելով իր լսությունը պահպանելու համար: Երբ Գուրգենը վերջացրեց ատրճանակի պատմությունը, նա անհամբեր կտրեց խոսքը.

Հասմիկ.—Գուրգեն, դու այնտեղ մի կարևոր դեպք բաց թողիր, թույլ տուր լրացնեմ:

Գուրգեն.—Ենգրեմ, կարող ես. տրվում է հինգ բոպե:

Հասմիկ.—Դու մոռացար, որ հենց այն բոպեին, երբ բոլորը հետաքրքրությամբ դիտում էին Հասմիկի ատրճանակը, Գուրգենին մոտեցավ գիտնական եթերյանը և իր քննական հայացքը հառեց նրա վրա:

— Զեր մեջ ինչ-որ տարօրինակ գծեր են նկատվում, — ասաց նա. — Դուք անցյալի լավ նմուշ եք. թույլ տվեք քննելու ձեր ուղեղը «իգրեկ» ճառագայթներով...

Գուրգենը շփոթվեց տասը տարեկան աշակերտի նման ու խոսք չգտնելով որ ասի, լուս հետեւց պրոֆեսորին դեպի նրա կարինետը:

— Այո՞, այո՞,—ասաց եթերյանը քննելուց հետո, — իմ հնիթաղրությունները ճիշտ էին. ձեր ուղեղի ծալքերում դեռևս

թաքնված են անցյալի մնացորդները — տղամարդու գերիշխանության «աղֆա» և «բեթա» գերեր, գուք դեռ չեք ազատազրկել վերջնականապես այն հին վերաբերմունքից, որ գոյություն ուներ դեպի կինն անցյալում... այդ են ասում «փրեհեկ» Հառագայթները ձեր ուղեղի ենթագիտակցական շերտերի մասին...

— Օ՛, այդ բոպեին ես չեի ցանկանալ լինել Գուրգենի պրության մեջ... նա կուզեր շոգիանալ, ցնդվել, որպեսզի շտեսնեին իր վառվող դեմքը, բայց արդեն ուշ էր, անողոք դիտությունն իր խոսքն ասել էր...

Ու կարծես նրա դժբախտությունը կրկնապատկելու համար պրոֆեսոր Եթերյանն իր եղբակացությունը հայտնեց Հասմիկին...

— Դե, ես վերջացրի իմ ուղղումը, այժմ կարող ես շարունակել քո պատմությունը, — ասաց Հասմիկը:

...Գուրգենն. — Քո ուղղումը բավական ուտոպիական էր թեատր, բայց հետաքրքրական. դու չուզեցիր մենակ շփոթված լինել և ինձ ընկեր արիր... ուրեմն փաստն այն է, որ երկուսս էլ այլայլված էինք, (մանավանդ Հասմիկը)...

Մեզ սթափեցրեց պրոֆեսոր Արեգյանը:

— Պետք է շտապել, — ասաց նա, — այսօր մեզ մոտ հյուր են գալու Հնդկաստանի ընկերները. դա ձեզ համար բավական լավ առիթ է...

Մենք գուրս եկանք գյուղատնտեսական ինստիտուտից. մեր առաջ հանկարծ բացվեց անմոռանալի տեսարան — ամբողջ փողոցը բռնված էր մարդկանցով, զանազան ձեի ինքնաշարժ մեքենաներով, իսկ վերեւում երկու հարկով շարժվում էին օդանավերը, ուղեկցելով եկվոր ընկերներին: Մենք միացանք երթին: Երաժշտությունը, մարդկանց խանդավառ կեցցեներն ու կոչերը, ողջը մի վերացնող համերդ էր կազմում:

Հյուրերն իջան աշխատանքալին պալատում, որի ընդարձակ դահլիճում հայտքվել էր աշագին բազմություն:

Տարօրինակ պատկեր էր. մենք տեսնում էինք առաջներս Հնդկաստանի ընկերներին, և միաժամանակ ուղիութեաւտեսի միջոցով զիմացի էկրանների վրա երկում էր Հնդկաստանի այն քաղաքը, որտեղից նրանք եկել էին, տեսնում էինք այնտեղի միտինգը, և նրանք էլ փոխադարձաբար մեզ էին տեսնում... դա միշաղգային ու միշերկրային միտինգ էր—Հնդկաստանի բանվորը, հաղթելով տարածությունը միտինգում էր Հայաստանի 51-րդ սոցիալիստական բջիջի հետ:

Հանդիսավոր ճառի մեջ կոմբինատի մի բանվոր անաց.

— Ամբողջ աշխարհը աշքերը հատել է Հնդկաստանի դիտական կողեկտիվի վրա. այստեղ մոտենում է իր ավարտմանը մի խոշոր գյուտ, որի շնորհիվ արեկի էներգիայի օգտագործումը պիտի ավելանա հարյուր հազար անգամ: Մի ուրիշ կետ ևս գրավում է համաշխարհային ուշադրությունը—դա Անդրկովկասն է, որի գիտական կողեկտիվները նույնպես միացած ուժերով զբաղված են նորագյուտ «նեռֆիտ» մետաղով, որի միջոցով հաջողվել է ատոմնալուծել մի շարք նյութեր և որը նույնպես խոստանում է մոտ ապագայում էներգիայի հսկայական աղբյուրներ, մի նոր հեղաշրջում դիտության մեջ...

Մեծ խանդակառությամբ ուղիոյի միջոցով լսվեց պատասխան-ճառը Հնդկաստանից.— միաժամանակ մենք և տեսնում էինք և լսում խոսողին:

Մենք դուրս եկանք այդ միշերկրային միտինգից բոցավառ տրամադրությամբ:

Ճաշից հետո մենք այցելեցինք «կոմունա» տներից մեջը, որտեղ ապրում էին կոմբինատի բանվորները: Այնտեղ էր ապրում և պրոֆեսոր Արեգյանը: Հասմիկը մի առանձին հետաքրքրությամբ հարց ու փորձ էր անում, ծանոթանում կոմունայի կյանքին:

— Այս նույն կենցաղն է տիրում և մեր բոլոր տներում,—ասաց Արեգյանը,—ամեն տեղ ընդհանուր հաշարան, ընդհանուր մանկատուն, ակումբ-գրադարան, ընթերցարան,

Ալինո-Հեռատես և կինո-թատրոն. կարելի է ասել, — ամբողջ տունն ապրում է որպես մի մեծ ընտանիք...

Պատասխանելով մեր հարցին, նա ասաց.

— Մեր պարտադիր աշխատանքը տեսում է միայն շորս ժամ, բայց մեզ մոտ մեծ ծալվալ է ստացել կամավոր աշխատանքը, որը ուղղակի հրաշքներ է անում իր ստեղծագործական թափով: Մենք հազիվ ենք կարողանում տեղավորել բոլոր ցանկացողներին:

Երեկոյան մենք բարձրացանք տան վերևի տերրասը, որտեղ «կոմունարները» հանգստանում էին այդ ժամերին: Մեր առաջ բացվում էր մի շքեղ տեսարան. ամեն կողմից մեզ կարծես ողջունում էին հարեւան սոցքիչների, կոմբինատների զիվարթ, շողջողուն լուսները: Արեգյանը ցուց էր տալիս կոմբինատներն ու բացատրում.

— Ահա մեր հարեւան արհեստական կաշվի կոմբինատը, իսկ նրա ձախ կողմը քիմիական կոմբինատն է... այն բարձր աշխարհակը՝ արհեստական անձրեի կայանն է... և այդպես շարունակվում են մեկմեկու հետեւից կոմբինատ-բջիջները, — ամբողջ երկրագնդի բոլոր մասերում...

Մենք աշխատանքի ենք լծել բոլոր գետերն ու գետակները, հիգրոկայաններ կառուցել, լծել ենք քամին ու արել, — ասում էր Արեգյանը, — երկիրը դիտության օգնությամբ վերանորոգել է, փոխել իր վաղեմի դեմքը. մեր ամբողջ աշխատանքները, մեր ամբողջ կյանքը մեծ պլանի մեջ է առած. կա մի մեծ, համաշխարհային պլանային խորհուրդ, որը տարեկան չորս անդամ ժողով է ունենում երկրագնդի գանաղան կետերում...

Նա փոքր ինչ լոեց խորհրդածելով, ապա շարունակեց.

— Պլան... ամեն ինչ պլանի մեջ է... նա ընդգրկում է մեր ամբողջ կյանքը. նա է նախագծում և ուղեգծում, նա է կազմակերպում մեր կամքը, ուժ է տալիս մեր բոլոր ընդունակություններին... Զարմանալի է, թե ինչպես անցյալում մի խորաթափանց ուղեղ կարողացել է նշմարել պլանի այդ հզոր նշանակությունը. խոսքս Սպինոզայի մասին է, որն

ասել է՝ եթե մարդիկ ապրեին որոշ պլանով, նրանց չեր կարող տիրանալ ոչ մի նախապաշարմունք... ահա այդպես պլանը՝ մեծ Հոկտեմբերի այդ ծնունդը, դարձել է մեր աշխարհազգացման ամուր հենարանը...

Մեր շուրջը նստած հասարակությունը՝ խմբերի բաժանված, զրուցում էր զանազան հարցերից. մի տեղից լսվում էին գիտական տերմիններ, մյուս տեղից՝ զրողների, երաժշտական նկարիչների, անուններ: Այս մի խմբում բռնն վիճաբանություն է փիլիսոփայության մասին. լսվում են ականավոր փիլիսոփաների անունները՝ սկսած հին ժամանակներից. կրկնվում են Մարքսի, Հեղեղի անունները:

— Սրանք ձեր գիտնականնե՞րն են — միամտաբար հարցնում է Հասմիկը:

— Ո՛չ, ոչ, սրանք մեր բանվոր-բանվորուհիներն են, — պատասխանեց Արեգյանը ներողամիտ ժայռով:

Տերրասի ծայրին՝ էկրանի վրա երևաց կինո-հեռատեսի պատկերը, ակամա գրավելով մեր ուշադրությունը:

— Ո՞րտեղ կուղեիք լինել այս երեկո, — հարցրեց Արեգյանը:

Ծրագիրն այնքան մեծ էր, որ մենք մնացինք շվարած. — թատրոն, երաժշտություն, դասախոսություններ... ո՞րը ընտրենք՝ հիանալի է...

— Դուք կարող եք այդ բոլորը տեսնել և հենց այստեղ նստած:

Արեգյանը ցույց էր տալիս քիշ-քիշ ամեն բանից. ահա մի դիսպուտ ապագա քաղաքի հատակագծի շուրջը, ահա մյուներկայացում, մի համերդ... բանաստեղծ Ամպյանի դասախոսությունից...

Արեգյանը կանգ առավ:

— Այս բանաստեղծը շատ օրիգինալ մարդ է. նա թարգմանել է Հույն բանաստեղծ Արիստոֆանի «Թոշունները» կոմեդիան և այժմ ապրում է օդում՝ մեր նոր ձևի ռօդանավ տներում... այնտեղից էլ դասախոսում է...

Մենք գեռ երկար խոսում էինք Արեգյանի հետ, ու քանիք
մոտ էինք ծանոթանում «ապագայիների» կյանքին, նա
ավելի մտերիմ ու հարազատ էր դառնում մեզ համար...

Երբ մենք իշնում էինք տերրասից, Հասմիկը նորից աչք
ածեց շրջակայքի լուսաշող տեսարանին ու ասաց.

— Գուրգեն, այս բոլորը երա՞զ է, թե իրականություն:

— Հասմիկ, դեն ձգիր այդ հին բառերը.—այնտեղ, որ-
տեղ դոյցություն ունի պլանը, ի՞նչ գործ ունեն երազները....

Հասմիկը նայեց Գուրգենին մի թափանցող հայացքով,
որը շատ բան էր ասում...

XII

Առավոտը դարձնեցինք արևածագին, մի նոր, անուշ
ինտերնացիոնալի ձայնից:

Արեգյանը ներքեւ իշավ դաշիճ, բարեկց.

— Ո՞րտեղից է լսվում երաժշտությունը,—հարցրեց Գուր-
գենը:

— Այսպես ասած՝ մեր «ատրուշանից»—արևի ուժակա-
յանից. նրանցից մեկը մեզանից մոտ է: Ամեն առավոտ,
երբ արևի առաջին ճառագայթներն ընկնում են կայանի վրա,
նա հնչում է ինտերնացիոնալը: Բայց մենք շուտով գնալու
հնք բերքի տոնին. դուք պետք է անպատճառ ներկա լինեք:

Փորրիկ օդանավով մենք թուանք ու իշանք մի ընդարձակ՝
դաշտում: Տարօրինակ գույնգույն մի բազմություն էր սփյու-
զել այնտեղ, կարծես մարդ—ծաղիկներ էին բուսել դաշ-
տում: Այստեղ ներկայացնում էին կենդանի պատկերով գյու-
ղատնտեսության պատմության բոլոր անցած շրջանները, ու
դրա համար էին խայտարդետ հագուստները:

Ահա մի խոմք կիսամերկ մարդիկ, հասարակ փայտե-
րով փորում էին գետինը. ահա մի որիշ խումբ բահերով էր
վարում, հետո գալիս էին փայտե շումը, գութանների տե-
սակները, և վերջապես՝ տրակտորը, կոմբայնն ու էլեկտրա-
գությանը:

Հանկարծ զբոշակները ծածանեցին, նշան տալով ու ամբողջ դաշտի բազմությունն սկսեց երգել. թնդաց մի հզոր, մասսայական երգ:

Արեգյանը կրկնում էր երգի խոսքերը, մեզ ծանօթացնելու համար. դա աշխատանքի հիմն էր. նրա մի մասը միայն մնաց մեր հիշողության մեջ.

— Անցավ շահագործող, գիշատիչ շրջանը մարդկության, անցան պատերազմներն, ու խաղաղ աշխատանքը տիրեց ողջ երկրին... փթթում են ծաղիկները, փթթում են սրտերը, աշխատանքը մե՛րն է հիմա, աշխարհը մե՛րն է հիմա...:

— Թնդանոթները մեքենաներ դարձան, թունավոր գաղերը պարարտանյութ, ողջ երկրագումը մի աշխատանոց է հիմա, մի սրտով է բախում, մի սոց-կարգով ապրում... աշխարհը մե՛րն է հիմա, աշխատանքը մե՛րն է հիմա....

— Արևափայլ դաշտերով քայլեցի՛ք ազատ, հպարտ հակատներդ հովերին արեք, քշված են անդարձ կեղեքողներն ու կոմոնիզմի զրոշն է մեր առաջ... աշխատանքը մե՛րն է հիմա, աշխարհը մե՛րն է հիմա...

Հասմիկն ու Գուրգենը լսում էին հմայված. նրանք լուս ձեռք-ձեռքի տվին. ինչոր զգացմունք հորդում էր նրանց մեջ, մզում էր դեպի այդ արևավառ կյանքը...

...Բայց այդ բոպեին հանկարծ ամեն ինչ մշուշով ծածկեց. ինչոր օգանավ բարձրացրեց նրանց ու սլացավ դեպի ներկան... Նրանք իշան ներքեւ լուսնի շողերով սովորողի բլուրի վրա, ափսոսալով, որ ապագա կյանքի միայն մի չնշին մասը տեսան...

...Երկուն էլ անդիտակցարաբ-ձեռք-ձեռքի էին տվել ու նայում էին իրար թափանցով հայացքով, ասես նոր էին հանաշում միմյանց... Մի ակնթարթ ևս,—ու իրենք էլ շիմացան, թե ինչպես գրկեցին իրար մի երկար կարոտ համբույրով...

Լուսինը մոտեցել էր հորիզոնին ու նայում էր գումատ, իր հեռավոր սառնությամբ. լուսաբացը հետզհետեւ տարած-

զում էր ու վերցնում առարկաների վրայից աղջամուլջի քողերը. աքաղաղներն իրարից վասված՝ հետզհետե ուժեղացնում էին իրենց կանչը. դիմացի պարակը շարժում էր իր կտառարները վաղորդյան հովից. ներքեփի ճամփով անցնում էր գյուղացին, Գյուղեփի երգը շվացնելով...

— Ի՞նչ բերինք ապագայի երկրից, — Շարցրեց Գուրգենը:

— Մի օդանավ բերինք՝ «Թեպի ապագա» օդանավը. նա Հիմա մեր թերեն է գառել...

— Մեր նոր թերը...

— Լույսը բացվում է, Գուրգեն, գնա՞նք ուղղակի դեպի աշխատանք՝ դեպի փորձադաշտը...

— Գնա՞նք դեպի մեր կոլլսովի 37 տնտեսությունը, որի շարունակությունը մենք տեսանք ապագայում — ասաց Գուրգենը, Հասմիկի ձեռքը սեղմելով:

Նրանք վեր կացան աշխատ թափով: Բացվող լույսի մեջ երկուսն էլ իրար թվում էին նոր մարդ, նո՞ր եռանդով, կրկնապատկված ուժերով...

Կարծես թե առած իշան բլուրից ու քայլերն ուղղեցին դեպի փորձադաշտը:

— Ո՞րքան ուրախ եմ, Գուրգեն, որ պայքար կա, գործ կա անելու...

Երբ մոտեցան փորձադաշտին, հանկարծ նրանց դիմաց Երկաց Միքայելը՝ ձիով:

— Էս ո՞րտեղ եք, ա՞յ քաջեր, — ասաց նա, — մթնումը բաքնչում եք, լուսումը երևում... զիշերս չեմ քնել, շատ անհանգիստ էի, մտածում էի՝ շինի՝ ձեզ փորձանք է պատաշել...

Նրա ձայնը դողում էր հուզմունքից, ասես իր հարազատ զավակներին էր հանդիպում:

— Ոչինչ չի պատահել, — պատախանեց Գուրգենը, — քուներս չեր տանում, նստած խոսում էինք բլուրի վրա:

— Խոսում էինք ապագայի մասին, — ավելացրեց Հասմիկը:

— Դե դուք տեղովն ապագա եք, էլ ի՞նչ ապագա եք

ուզում: Ի՞նչ ուրախ եմ, որ ձեզ տեսա. դե՛, գնանք փորձա-
դաշտը:

Միքայելը հասնելով, կանդ առավ փորձադաշտի ծայրին,
հանեց ծոցից զիառողոթյան տեսրերն ու մետրը, տվեց
Հասմիկին: Նու ու Գուրգենն իսկուն առաջ ընկան քայլերով:

— Գուրգենին սոցմբցում եմ Հայարարում,— ասաց
Հասմիկը, երեսը դարձնելով գեպի Միքայելը:

— Ախաղեր, ես էլ եմ սոցմբցման մեջ մտնում,— ասաց
Միքայելը նրանց հետեւից:

— Ընդունում ենք,— կանչեցին երկուսով:

Մտան դաշտի մեջ:

— Ուղեմն, Հասմիկ, դու ինձ սոցմբցում և էլ ի՞նչ ես
հայտարարում,— Հարցրեց Գուրգենը, երբ նրանք հեռացան
Միքայելից:

— Սոցմբցում և սոց-սեր... սիրում եմ մի անպիտան
տղայի «սոցիալիստական» սիրով... իսկ նա էլ սիրում է,
բայց իր զգացումի անունը չի ուզում տալ...

Գուրգենը ժպտաց.

— Ես այժմ կարող եմ շարունակել իմ տեսրի հողվածը՝
սիրո մասին... սիրում եմ մի շարաճճի աղջկա, «պայծառ
արկի տակ»...

Արկը հզոր պտույտներով պատռեց Հորիզոնում կռւ-
տակված թեթև ամպերն ու ձեռց դաշտին իր թարմ շողերը,
ամեն ինչ ուկեղօծելով:

Միքայելն սկսեց հաշվել ցողունները, բայց սխալվեց,
կանդ առավ ու նայեց երիտասարդ զույգի կողմը: Անքուն
պիշերվա հուզմունքը, նրանց տեսնելու ուրախությունը, և
այդ եռուն, ջահել աշխատանքը, նրա աշքերը խողուցին ու
հրճվանք-արցունքի երկու կաթիլներ սահեցին նրա արևակեղ
դեմքով:

ԶՐՎԵԺԻ ՑՈԼՔՈՒՄ

I

Ինժեներ Թառյանը վաղ առավոտյան դուրս եկավ Գետաշենի կոմքինատի ժամանակավոր բնակարանից ու զարտուղի կածանով սկսեց բարձրանալ դեպի ձորագլուխը: Գնում էր մտազբաղ, զունատ դեմքով, բորբոքված աչքերով: Նախընթաց երեկոյան՝ Գետաշենի արտադրական խորհրդակցության ժողովում նա ենթարկվեց խիստ քննադատության և առն վերադառնալով՝ շկարողացավ քնել հուզմունքից: Առաջին բոպեներին նա վճռեց զեկուցում գրել կենտրոն, հայոնել, որ «այսպիսի պայմաններում չի կարող աշխատել», բայց մի երկու երես գրելուց հետո նկատեց, որ զեկուցման տեղ դուրս է գալիս գրգռված, անկապ արտահայտությունների մի շարան, ու պատռելով գրած թերթերը, շպրտեց անկյունը: Ապա՝ առանց շորերը հանելու, պառկեց մահճակալի վրա ու սկսեց կարդալ Մոսկվայից նոր ստացված տեխնիկական գիրքը: Կարդում էր ու կարծես հանդստանում.— սառը ֆորմուլները տանում էին միտքը կանոնավոր սանդուխքներով դեպի իրենց զգաստ բարձրունքներն ու վերացնում առօրյացից, բայց այդ տեսում էր ոչ երկար.—Հանկարծ, զրքի ամենալուրջ տեղը նա հիշում էր իր դեմ խոսողներից որևէ մեկին, ու բռնկվելով զայրույթով, կորցնում էր կապը, դադարում կարդալուց. ապա հանդստանալով՝ նորից ընկնում գրքի ոելսերի վրա:

«Փետք է վերջ տալ այս բոլորին»,—ասաց նա վեր թռու-

շելով տեղից, ու սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում։ Այդիրմ նա աշխատում էր հանգիստ վերլուծել իր դեմ առաջապրած մեղադրանքները. բայց այդ չէր հաջողվում. նա հաճախ մոռանում էր, արագացնում քայլերը, երևակայում էր թե էլի շարունակվում է ժողովը, ու կրկնում էր մտքում իր պատասխանը, ծաղկեցնելով նոր արգումենտներով։

Հարգածն անսպասելի էր թառյանի համար։ Դեռ մի քանի օր առաջ նրան թվում էր, թե իրեն կհայտարարեն հարվածային, բայց այդ բոլորի փոխարեն՝ հանկարծ այս անողոք քննադատությունը... և, ի՞նչ, իրեն դատապարտում էն կոմքինատի բոլոր թերությունների համար՝ և՛ տեմպը դանդաղելու, և՛ շինանյութերն ուշ հասցնելու, բանուժի պակասի, բանվորների մատակարարման, նույնիսկ տեխնիկական սխալների համար...։

Ինչպես և առաջներում, նա այժմ էլ այդ հարձակումները բացատրում էր անձնական թշնամանքով, ինտրիվներով,—«այս», պարզ է—մտածում էր նա, քայլելով,—այս բոլորի պատճանն այն խառնակիշների ոտնձգություններն են... ինժեներ Սարյանը—մի սրան նայեք, ձվից նոր է զուրս եկել, բայց խոսում է իմ տեխնիկական սխալների մասին... իսկ ինժեներ Վարդանյանը... եթե ես շնորհեի նրանց, շմեղմացնեի նրանց սխալները, այժմ ինձ վրա չէին ուղղիլ իրենց սլաքները... չէ՛, պետք է անմիշապես հակահարված տալ, դիմել կենտրոն, որպեսզի հեռացնեն այդ ինտրիվաններին»։

Արտադրական խորհրդակցության ժողովում խոսեցին իրանվորները, բայց նա կենտրոնացնում էր իր ուշադրությունը միայն մի քանի ինժեներների և ծառայողների վրա, համարելով ամբողջ ելույթը նրանց կազմակերպած գործու։

...Եվ այժմ էլ՝ վաղ առավոտյան, անքուն գիշերից հետո, նա շարունակում էր նույնը՝ նորից կրկնում մտքում, թե պետք է ազատել կոմքինատը «խառնակիշներից»։ Բայց այդպէս մտածելով, նա հանկարծ հիշեց մի ուրիշ դեպք, —եթե

մի անգամ նման խնդրով նա զիմեց Կենտկոմի քարտուղարին, որը լսելով նրա գանգատները, հարցրեց.

— Իսկ այս ամբողջ իրադարձի մեջ չկա՞ն ձեր սեփական սխալները...

Ու ինքը՝ ճնշված այդ անսպասելի հարցից, պատասխանեց.

— Ես, իհա՛րի, ինձ զերծ չեմ համարում սխալներից, բայց հարցի ծանրության կենտրոնն ուրիշ տեղ է...

...Նա արագացրեց քայլերը, կարծես խուսափելով այդ հիշողությունից, ու բարձրանալով՝ ձորագլուխը՝ նստեց մի խոսմբ ցից ժայռերի մեջ:

Նստած տեղից նրա առաջ բացվում էր ընդարձակ տեսարան: Դիմացի լեռների անտառածածկ լանջերը, վաղ առավոտյան մեղմ կիսամշուշի մեջ թվում էին հեքիաթային: Ժամանակավոր, փայտե տների շուրջը դեռ նոր էին նկատվում մեկ-մեկ մարդիկ. լսվում էր գետի վշտը, ու երեմն էլ ուատոելով այդ աղմուկը, գալիս էր ժամանակավոր էլեկտրոկայանի դիզել-մեքենայի ոիթմիկ ձայնը:

«Իսկ այս ամբողջ իրադարձի մեջ չկա՞ն արդյոք ձեր սեփական սխալները», — նորից հիշեց նա անսպասելի հարցը, — «Գուցե հենց այստեղից էլ պետք է սկսել, գուցե իմ գործելակերպի մեջ ինչ-որ անհանդուժելի բան կա, պիտի ուղղվի...»

...Ու նրա հիշողության մեջ՝ մեկը մյուսի հետեւ գալիս էին զեպքերն իր մոտիկ անցյալից՝ մոայլ գույներով, կարծես դիտմամբ ավելի մոայլելու համար նրա ներկան...

Նրա առաջ էր գալիս այն առափուր, երբ նա հեռագիր ստացավ Մոսկվայից, թե կոմքինատի պրոեկտը հաստատված է, ու դեռ կիսահագնված՝ ուրախ դուրս թռավ մյուս սենյակը, համբուրեց կնոջը, երեխաներին, լցնելով բնակարանը ցնծագին բացականչություններով:

— Սոֆի՛կ, պրոեկտը հաստատված է...

Ուրախությունը վարակեց ամբողջ ընտանիքը. երեխաները՝ վեց-յոթ տարեկան տղան ու աղջիկը, դեռ շիմանալով

ի՞նչ է պատահել, սկսեցին թոշկոտել, կախվել նրա ուսերից, իսկ ինքը բռնում, համբուրում էր նրանց...

— Նո՞ւ, Սոֆիկ, Հիմա կսկսվի մեր իսկական կյանքը, — ասում էր նա ուրախությունից լայնացած դեմքով: — Նախ և առաջ նյութականը...

— Այո՛, Արտյուշ, վերջա՛պես մենք կապրենք մարդարի, — ասում էր կինը, — թե չէ ի՞նչ է մեր օրը, չենք կարողանում մի կարգին բավականություն ստանալ կյանքից...

Ապա փոփոխելով ձայնը ու կոկետորեն նայելով ներքից վերև, ասում էր քնքշորեն.

— Դիտես ի՞նչ, ես կուղեի մի բան...

— Ի՞նչ:

— Մի դաշնամուր դնենք...

Կդնենք, իհարկե, ի՞նչ խոսք, — համաձայնում էր նա, — ու միայն այդ, այլ և կնորոգենք բնակարանը, կահարասիքը...

Ապա փոքր ինչ ետ ու առաջ քայլելով սենյակում, ձեռներն ուսկապների տակ իրած, նա ասում է.

— Վաղն արդեն լրազրում կգրեն, որ ևս «Գետաշենի» կոմքինատի գլխավոր ինժեների օգնական եմ. Հիմա դու տե՛ս, Սոֆիկ, թե ի՞նչ պիտի զգան ինժեներ Շահյանն ու Գհորդյանը. չէ՞ որ նրանք աշք ունեին այս գործի վրա. երկի նախանձից կաթված կստանան...

Կինն ամբողջովին համակվում էր ամուսնու զգացմունքներով ու ավելի խտացնում նրա ասածը.

— Իհարկե, նրանք ինչպե՞ս կարող են ներել, որ դու նրանցից բարձր ես...

— Բայց դու դեռ չգիտես, Սոֆիկ, թե ի՞նչ դժվարություններ կային գործի մեջ. Ճիշտ է՝ սկզբնական պրոեկտը կազմել է ուրիշը, բայց միայն ե՛ս էի, որ արյուն ու մարմին տվի պրոեկտին. մի ուրիշը վիզը կկուրրեր...

Նորից երեխաները վրա են ընկնում, խնդրում են ընծաներ գնել և նա խոստանում է լիովի. ապա կինը հիշեցնում

է, որ դեռ հագնված չէ.—նա լվացվում է, հագնվում ու նըստում թելի:

Թելի ժամանակ էլ շարունակվում էր խոսակցությունը, բայց համարյա ինքն էր խոսում, և ի՞նչ—միայն իր նոր դիրքի, իր հոչակի մասին...

«Ե՛ս, Ե՛ս...» այս էր նրա լեյտ-մոտիվը...

Ո՞րքան մեծ ուրախություն էր այդ օրը, բայց ինչո՞ւ այժմ այդ բոլորը պատկերանում էր մոռալ գույներով. կարծես իր մեջ մինչև այսօր մի ուրիշ մարդ էր թաքնված և միայն այժմ էր բացվում իր իսկական դեմքը...

Իսկ հետո, երբ նա եկավ կոմբինատ, երբ պարզվեց, որ պիսավոր ինժեների երկարատև բացակայության պատճառով փաստորեն ինքն է դեկավարելու շինարարությունը, նա չէ՞ր մտցնում իր գործի մեջ անձնական մոմենտներ, հարցերն առաջ չէ՞ր տանում միահեծան ու խլացնում քննադատությունը...

Այո՛, այս բոլոր իրադարձի մեջ կան և իր սիսալները.—սոցիալիստական շինարարությունը հանձնել են իրենց, բայց նա դեռևս «զտված» չի դրա համար... պետք է հանգիստ վերլուծել իր դեմք բերած մեղադրանքները... և ուղղել սիսալները...

Այսպես՝ նա կշտամբում էր ինքն իրեն, վերաբննելով իր մոտիկ անցյալը: Այս բարձունքի վրա, այս թարմ օդի մեջ, նրա գիշերային մտքերը թվում էին հիվանդու ու թափվուածին աշնան տերեների նման. ու մի նոր ալիք խփում էր մեջը՝ որ պե՛տք է փոխել ընթացքը, պե՛տք է ուրիշ կերպ աշխատել...

II

Արևի շրջանակը նոր էր արձակում իր առաջին շուկերը դիմացի լեռների վրա, կովելով փոքրիկ ամպերի հետ: Զորերուամ թեթև մշուշով սքողված անտառները հետզհետե պարզ-գում էին. զով օդը, ասես նորոգված գիշերվա մթնում, մեղմ

շարժում էր ցողունները: Նա նայում էր տռավոտյան թարմությամբ գուրգուրող անտառոտ լանջերին, նայում էր ծագող արևի բուռն վերելքին, կկոցելով ուժեղ լուսից իր անքնությունից այրվող աչքերն ու կրկնում իր մտքում—«պետք է վերացնել թերությունները, ու նոր աշխատանքի դիմել...»:

Հանկարծ ժայռի տակ լսվեցին մարդկային ձայներ: Նա ցնցվեց անախործ զգացումով, ցանկություն չունենալով այդ բռպեին հանդիպել որեւէ մարդու: Զանցած մի երկու բռպե՝ նրա առաջ երևաց պահապան Կարոն իր մեծ փափախով, իսկ նրա հետեւից մի օրիորդ, ճամփորդական խակի գույն զգեստով, ուսին ձգած բինոկլը: Օրիորդն իր կենսուրախ աշխույժ դեմքով, ուստական լայն ժպիտով մի զվարթ գարնանային շղթ բերավ իր հետ: Երբ նա մոտեցավ, ինժեները վեր կացավ տեղից:

— Ներեցիք, դուք եք ինժեներ Տարյանը,—ասաց օրիորդը արագ շնչելով, ու իր կատավուն, ցայտուն աշքերը շեշտակի ձգելով, ուսին ձգած բինոկլը: Օրիորդն իր կենսուրախ աշխույժ դեմքով, ուստական լայն ժպիտով մի զվարթ գարնանային շղթ բերավ իր հետ:

— Այո՛, ե՞ս եմ:

— Լիդա Կրասնովա,—հայտնեց իր ազգանունը, ձեռքը մեկնելով ինժեներին—ներեցիք, ես թյուրիմացության մեջ եմ ընկել ձեր լեզուն չիմանալու պատճառով—կարծում էի, թե իմ առաջնորդը տանում է ինձ դեպի ձեր գրասենյակը: Օ

— Ո՛չինչ,—ասաց Թառյանը ժպտալով,—ես կարող եմ ձեզ ընդունել և այսուել՝ մեր գործն ամբողջովին ընության մեջ է...

— Ես գործուզված եմ Մոսկվայից՝ «Կայծեր» ժուռնալից: Ինձ հանձնարարված է գրել մի շարք ակնարկներ ձեր կոմբինատի մասին:

— Շատ ուրախ եմ, կաշխատեմ ամեն կերպ աշակցել ձեզ, առայժմ խնդրեմ նստեք և հանդստանանք այս բնական աթոռների վրա:

Ապա դառնալով պահապանին, ասաց.

— Կարո՛, դու կարող ես գնալ:

Կարոն իր մազակալած դեմքից մի ժպտում հայացք-

ձգեց նրանց վրա, խուզաբեկող աշքերը պսպղացնելով. նաև կարծես ասում էր—«Հասկանում եմ, բանն ինչումն է», ուշուով գալով, իշավ ներքեւ:

Երբ երկուսն էլ նստեցին, թառյանն ասաց.

— Սա՞ եթե կարելի է ասել, իմ լեռնային կաբինետն է...

— Այսպես բացօթյա՞, օրիդինալ է,—ասաց օրիորդը ժպտալով:

— Ավելի ճիշտ—սա իմ մենարանն է. Հանգստյան վայրը...

— Հիանալի՞ է,—ասաց օրիորդը, աշքերը կուշ նայելով ծագող արկին.—Իս ձեզ նախանձում եմ, դուք շրջապատված եք այս գեղեցիկ բնությամբ:

— Դորդի մեջ բնության ամենագեղեցիկ տեսարանն անդամ չի նկատվում... Դուք երկի առաջին անգա՞մն եք տեսնում մեր երկիրը:

— Այո՛, և գուցե զրանից է, որ չեմ հագենում նայելուց ևս այժմ նմանվում եմ Տոլստոյի այն հերոսին, որն առաջին անգամ տեսնելով կովկասյան լեռները, շարունակ կրկնում է մտքում—«Լեռնե՞րը...»

Նա հանեց բինոկլը պատյանից ու սկսեց դիտել շրջակայքը:

— Հոյակապ տեսարաններ են, մեկը մյուսից գեղեցիկ... ա՞շ, ինչպես է խաղում արեք ջրվեժի հետ... պիտի օգտագործե՞ք նրա ուժը...

— Նրա ուժը քիչ է, հետագայում կօգտվենք... բայց գեղեցիկ է... եթ գիտե՞ք, այդ շրվեժի հետ կապված է մի տարօրինակ լեռնդպատմում են, որ նրա վերել, հնում, մի ջրաղաց է եղել: Մի սովոր տարի կալվածատեր իշխանն աղահությունից բռնված հրամայում է իր ջրաղացպանին երկու անգամ ավելի վերցնել շահատը: Գյուղացիք նեղվում են, փորձում են գնալ ուրիշ, հեռու ջրաղացներում աղալ ցորենը, բայց կալվածատերը հալածում է, չի թողնում: Մի օր՝ երբ նա գալիս է ջրաղացն ստուգելու, հանկարծ մի չտեսնը-ված, սաստիկ անձրև է գալիս, և կատաղի հեղեղը քանդում

է տանում ջրաղացը, նրա հետ էլ իշխանին, ու ձգում ջրվեժի տակը, մի անհայտ անդունդի մեջ: Ասում են, գիշերները նա ելում է Հորից, ճգնում է բարձրացնել գլուխը ջրի տակից, բայց ջրվեժի հարվածները նորից ձգում են նրան անդունդը...

Մինչ ինժեները պատմում էր, կիդան՝ թողնելով բինոկուլոր, հանեց մատիտն ու բլոկնոտը ու սկսեց գրի առնել:

— Դուք արդին զրո՞ւմ եք, — ասաց Թառյանը զարմացած, աշքերը հասելով օրիորդի վրա. մի՛թե դա էլ հետաքըրքիր է ձեր ակնարկների համար:

— Ոչ միայն հետաքրքիր է, այլ և իմ առաջին ակնարկի վերնագիրն է լինելու «Ճրվեժի ցոլքում»:

— Տարօրինակ մարդիկ են ժուռնալիստներն ու գրողները. նրանք մի առանձին թափով կառշում են «Եթերային» բաներից, թողնելով մեր շինարարության պրովայիկ, բայց ծանրակշիռ խնդիրները:

— Ձեր մեծ հարցերին կմոտենանք անշուշտ, իսկ սա այսպես ասած, նախներդանքն է... բայց հետաքրքիր է, ո՞րոնք են այդ հարցերը...

— Այս բոպեիս իմ գլուխը լիքն է տեխնիկական հարցերով, շինանյութերի ու սարքավորման պատվերներով, բանուժի լրացման հոգսերով և այլն և այլն... այս հարցերը բոլորը բարդ են ու տագնապալից՝ իրենց շտապողականությամբ...

— Ինձ թվում է, ձեր այդ ամբողջ առօրյան, կամ ինչպես ասում եք՝ պրովան իր բարդություններով, հոգսերով ու տագնապով մի յուրահատուկ գեղեցկություն է կազմում... ևս դարձաւ նախանձում եմ ձեզ՝ դուք ստեղծագործում եք սոցիալիստական շինարարության ամենաեռուն կիսում...

— Դուք ինձ զինաթափ եք անում... այս՝ իհա՛րկե, շինարարության մեջ կան բարձր մոմենտներ,—այդ այն ժամանակ է լինում, երբ աշխատանքը ծափալվում է իր ամբողջ լայնությամբ, երբ տիրում է եռ ու զեռ, այն արքեցնող ժխուրը... Այդ բոպեներին իսկապես զգում ես, որ արժե ապրել... բայց, երբ վերջանում է գործը, երբ «գրաի մարդիկ» ոգևոր-

վում են մեր գործով՝ հանդիսավոր բացման մոմենտին, մյուտարօրինակ տխրություն, մի էլեզիա է իշնում կառուցողի վրա, կարծես մի հզոր երածշտությունից հետո մեղ ձգում են խորին լուսթյան մեջ։ Այդ մոմենտին մենք նմանում ենք այն հազվագյուտ բանաստեղծներին, որոնք տխրում են իրենց երկը վերջացնելիս—տխրում են, որ պիտի բաժանվեն նրանից...»

— Բայց ընդհանուր խանդավառության մեջ ի՞նչ նշանակություն ունեն վարպետի մրմունչները, նրա սրափ էլեզիան, դա անհատական է...»

— Զե՞ս որ դուք ինձ՝ անհատիս, երանի եք տալիս, ապկա պիտի իմանաք, թե ի՞նչ ապրումներ ունեմ ես... իսկ այն բազմաթիվ հոգսերը՝ պատասխանատվությունը ամենքի և ամեն ինչի համար, այն քննադատությունը, հարձակումները, որոնք առատ ու անխնա թափվում են մեղ վրա...»

— Բայց չէ՞ որ վերջի վերջո այդ բոլորը մի ընդհանուր աշխատանքի, սոցիալիստական շինարարության մասնիկներն են, իսկ այդ ամբողջությունն ինձ համար մի պոեզիա է...»

— Գովում եմ ձեր վերաբերմունքը դեպի աշխատանքը, բայց կարծում եմ, որ ձեր մեջ այդ բոլորը դեռևս թեորիա է... Հետաքրքիր կլիներ իմանալ, թե ո՞րքան հետևողական կլինեք դուք կյանքում. բայց դրա համար անհրաժեշտ է, որ բավականաշափ ապրեք այստեղ։

— Ես մի ամիս մնալու եմ։

Խոսակցությունն ընդհատեց շշակի թավ, զուժկու ձայնը, արձագանքելով ձորի լանջերից։

Լիդան նորից վերցրեց բինոկլը ու սկսեց դիտել ձօրը։ Այժմ արդեն բոլոր կածանների վրա երևում էին մարդկանց խմբեր, որոնք շապառում էին դեպի գործը։

— Հիանալի՞ է,—ասում էր օրիորդը, բինոկլը դարձնելով այս ու այն կողմը. — ի՞նչ գունեղ պատկեր է, արժե մի բանի դիտողություններ գրի առնել...»

Ռւ նորից հանելով բլոկնոտը, սկսեց գրել։

— Երկի դուք այժմ կզրեք—«տիտանների արևի տակ...»
— Ես այսպես չեմ զրիլ, —ասաց Լիդան, բարձրացնելով ժաղումն գեմքը. —բայց հետաքրքիր է, թե դուք ի՞նչպես կզրեք:

— Ես այսպես կզրեի—«Վաղ առավոտյան գյուղացի Մարգարը գնում էր «Գետաշենի» կոմբինատը. նրա տրեխներին կովի աղբ էր կպած, իսկ ուսերի վրա նկատվում էին խոտի մնացորդները. շշակի ձայնը հիշեցնում էր նրան իր կովի բառաշը...»

— Այդ է ձեր պրողան—լավ. այժմ լսեցե՞ք, ես կկարդամ ձեր թելազրածը. —«Մի գեղեցիկ արեոտ օր, գյուղացի Մարգարը վերադառնում էր տուն՝ Գետաշենի կոմբինատում երկու տարի աշխատելոց հետո. նրա վրայից իսպառ շքացել էին նահապետական գյուղի հետքերը. նա այժմ տողորված էր սոցիալիստական շինարարությամբ և գնում էր իր գյուղը կոլխոզ հիմնելու...»

— Օ՛, ձեզ հետք է զգույշ լինել, դուք գեղեցիկ աղավաղումներ եք մտցնում...

— Դուք երկի ուզում եք ասել՝ ուղղումնե՞ր...

— Այդ հետո կտեսնենք. իսկ այժմ ես առաջարկում եմ իշնել ներքեւ դեպի մեր շինարարությունը. Հարկավոր է ձեզ տեղափորել և ծանոթացնել գործի հետ:

Նրանք իշան նեղ կածանով դեպի Գետաշենի ճաշարանը. —«Ի՞նչ լավն է անպիտանը»—մտածում էր ինձեները, երբ Լիդան նրա առաջն էր ընկնում իր սլացիկ մարմնի աշխուց թռիչքներով. —«Սրան կարելի է նույնիսկ սիրել...»

III

Ճաշարանի դռների մոտ Լիդան ուշադրություն դարձրեց պատի թերթի նկարների վրա ու կանգ առավ.

— Ո՞ւմ մասին են այս ծաղրանկարները, —հարցրեց նա:

Թառյանը փոքր ինչ շփոթվեց անսպասելի հարցից, որովհետեւ ծաղրանկարներն իրեն էին վերաբերվում. նա

Պուղեր կանգ շառնել, բայց ստիպված էր այդ անել օրիորդին պատասխանելու համար.

— Դատարկ բաներ են,—ասաց նա ձեանալով անտարբեր ու թարգմանեց գրածները:

Ծաղրանկարը ներկայացնում էր Թառյանին մարդարեի երկար զգեստով, երկու ձեռներով բարձր բռնած պատվիրանները:

Պատկերի տակ գրած էր.

«Ե՞ս մարդարեն պատգամներ է բերում լեռան գագաթից.—

Պատվիրան առաջին.—Աշխատեցե՛ք առանց պլանի, մինչև որ ես կխորհրդակցեմ Մարտ մոլորակի հետ:

Պատվիրան երկրորդ.—Կառուցեցե՛ք առանց շինանյութերի, մինչև որ ես ամպերը շինանյութեր դարձնեմ:

Պատվիրան երրորդ.—Կերպակրվեցե՛ք առանց մթերքների, մինչև որ ես կայծակներ որսամ սարի վրա»:

— Օ՛չո, ձեզ կարգին ձեռք են տռել,—ասաց Լիդան զգուշ ժպտալով:

— Դե, իհարկե, առանց շափազանցության ծաղրանկարը համ շունի...

Որքան էլ Թառյանն աշխատում էր անտարբեր ձեանալ, նրա դեմքի արտահայտությունը մատնում էր նրան: Այս երկրորդ անգամն էր, ինչ նա տեսնում էր այդ նկարը և ինչպես անցյալ անգամ, այսօր էլ մտածում էր, թե ո՞վ կարող է լինել նրա հեղինակը ու ենթադրելով սրան կամ նրան, ակամա բռնկվում էր վրեժի զգացումով: Մանավանդ այժմ այս օտարուհու առաջ, նա ավելի էր գրգռվում:

Նրանք բարձրացան վերև ու նստեցին պատշգամքի վրա, որը նայում էր դեպի ձորը:

— Ի՞նչ լավ է այստեղ,—ասաց Լիդան, հափշտակվելով,—այս բնության մեջ ինչ-որ լարվածություն կա, այս լեռները կարծես ճնշում են, բայց միաժամանակ մի հզոր ձգում են առաջացնում՝ բարձրանալու դեպի վեր, շատ վեր...

Սպասավորը ներս մտավ, հետեւ դուռը բաց թողնելով.
նա թեթև շփոթված էր, իսկ ճաշարանի սենյակից խոսակցու-
թյան ձայն էր լսվում:

— Էղ ի՞նչ է, Տիգրան, — հարցրեց ինժեները:

— Բողոքում են, թե ինչո՞ւ ձեզ մոտ ավելի շուտ եմ
դալիս:

Բաց դռնից լսվեց բանվորի ձայնը:

— Ի՞նչ է, ինժեները վերի արտի ցորենն է՝, որ նրան
մեղանից շուտ ես տալիս:

— Ես ձեզ շուտ չեմ տալիս, բայց նա էղակն է կար-
ծում, — ասաց սպասավորը:

— Լավ, քո գործը տես, երբ որ հերթը պահել ես, էլ
ի՞նչ խոսք:

Սպասավորը պատվերն ստանալուց հետո, դուրս գնաց:

Լիդան հետաքրքրվեց, թե ի՞նչ է պատահել. Թառյանը
բացարձեց.

— Նորից քննադատություն... բողոքում են, որ իբր ինձ
ավելի շուտ են մատուցում... Այս շաբաթ ուղղակի իմ բենե-
ֆիսն է. մանավանդ անցած երեկոյան ամենաթունդ հարձա-
կումների ենթարկվեցի. կոմբինատի բոլոր թերությունները
բարդեցին գլխիս:

— Երբ օրկեստրի մեջ թերություն է լինում, նախ և առաջ
մեղադրում են դիրիժյորին:

— Լավ է լինել դիրիժյոր, երբ օրկեստրը՝ որպես մի
մարդ, հնչեցնում է իր սիմֆոնիան, բայց երբ լսվում են դի-
սոնանսներ, այդ դեպքում դիրիժյորը կրկնակի ցավով է
տանջվում. մեկն այդ դիսոնանսներն անմիջապես լսելով,
մյուսը՝ նրանց քննադատությունը ճաշակելով:

— Բայց չէ՝ որ քննադատությունը անխուսափելի է
պրոլետարիատի ամեն մի գործի համար. և եթե կուզեք
քննադատության ժամին է, որ նա պիտի ցուցադրի իր լայն
գիտակցությունը և ասի. — այս բոլորը ձգտում է մի ընդհա-
նուր նպատակի՝ սոցիալիստական շինարարության. հերոսը
պիտի ընդունի իրեն ընտրող պրոլետարիատի հարվածները

նույն հանգստությամբ, ինչպես ընդունում է իր առօրյա աշխատանքը...

— Հերո՞ս...—ասաց Թառյանը, —դուք ինձ զարմացնում եք, ընկեր, ինչո՞վ բացատրել, որ այդպես բարձր հերոսական չափանիշով եք մոտենում մեր աշխատանքին:

— Մասամբ նրանից է, որ հայրս հին ռեսլուցիոներ է՝ Սիբիրի բանտերի ու աքսորի բովից անցած մի մարդ, որն այժմ էլ գործում է նոր՝ երիտասարդ ուժերի հետ: Նրա կարծիքով սոցիալիզմի կառուցողը պիտի լինի հերոս՝ անցյալի ռեսլուցիոների նման:

— Բայց մի՛թե դուք տարբերություն չեք դանում անցյալի և ներկայի գործունեության մեջ...

— Ո՛չ, ես էական տարբերություն չեմ տեսնում, և ահա թե ինչո՞ւ, երբ անցյալում մեր հերոսները զոհվում էին ցարական բանտերում, ի՞նչն էր նրանց ոգևորողը, որ կդա մի օր, մասսաները կբարձրանան կհասնեն իր՝ հերոսի գաղափարներին ու կշարժվեն... Իսկ ներկայումս ի՞նչ պիտի ասի նա.—«Ես պիտի աշխատեմ, տանջվեմ, մինչև որ մասսաները կհասնեն սոցիալիզմի բարձունքներին...» և այնքան ժամանակ, որքան որ տարբերություն կլինի դեկավարների և մասսաների մեջ՝ հերոսը պիտի տանջվի, այրվի՝ լույս տալու համար... նա պիտի լինի մի Պրոմեթես:

— Օ՛, մեծ անուններ մի՛ք տալ. մեր աշխատանքն ավելի համեստ է... գործի մեջ՝ ինչպես պատերազմի ժամանակ, հերոսությունը դառնում է առօրյա:

— Ի՞նչ մեծ անունների վախ կարող է լինել մեր հեղաշրջմող դարում, երբ ամեն մի բանվորի կրծքում մի-մի Պրոմեթես է նստած:

Լիդան ուզում էր էլի ինչոր ասել, բայց այդ բոպեին փութեստ ներս մտավ մատակարարման բաժնի վարիչը մտահոգված, կնճռու ու քրտնած ճակատով...

— Հեռագիր է ստացվել,—ասաց նա բարեկալուց հետո. «Կարմիր Հոկտեմբեր» գործարանն ուշացնում է պատվերները... հետո...

— Իսկույն գալիս եմ, — ասաց Թառյանը խոսքը կտրեցով. — ինդրեմ կանչեք ինժեներ Ալենիկովին... Հետո այս ընկերոջ համար բնակարան պետք է պատրաստել...

Վարիչը նույն թափով գուրս գնաց, զուրը բաց թողնելով:

— Ահա մեր դրությունը, — ասաց ինժեները. — ամեն ժամ մի նոր անակնկալ է երևան գալիս, նորից լարում մեզ, նորից պայքարի կանչում... թեպետ ես շատ կցանկանայի ձեզ անձամբ ծանոթացնել մեր շինարարության հետ, բայց զբժշախտաբար անկարող եմ. շուտով կսկսի մեր տենդացին աշխատանքը, — հեռագիր, հեռախոս, գրություններ ու հաղարու մի մեծ ու փոքր զործեր...

— Ո՛չինչ, ես ինքս կարող եմ ծանոթանալ...

— Ահա դալիս է մեր ինժեները — նա ձեզ կօգնի:

Ալենիկովը կանոնավոր դեմքով, ժամանակամատ էր, պատրաստակամ արտահայտությամբ:

— Բնկեր Ալենիկով, ծանոթացեք ընկերոջ հետ և ծանոթացրեք նրան մեր գործերին:

— Լավ, — ասաց նա, ուրախանալով, որ բացատրություններ տալու է մի գեղեցիկ օրինորդի:

Լիդան գնաց Ալենիկովի հետ, իսկ Թառյանը շտապեց դեպի գրասենյակը, ափսոսանք զգալով, որ ինքը չի ուղեկցում օրինորդին:

IV

Երկու օր էր, Լիդան ամբողջովին կլանված էր կոմբինատի աշխատանքներով: Ինժեներ Ալենիկովի հետ առաջին նվագ թուցիկ ծանոթանալով գործին, այնուհետեւ նա մենակ էր գնում աշխատանքի վայրերը, դիտում, ու տեղ-տեղ կանգառնելով, նկատողություններ գրում իր բլոկնոտում:

Գալով այս անծանոթ երկիրը, ընկնելով այս տարօրինակ բնության ու տենդու կառուցման վայրը, նա կարծես մի հենակետ էր գտել իր տենչերի համար:

Մի քանի անգամ նա հանդիպել էր ինժեներ Թառյանին,

բայց գուստ պաշտոնական խոսակցություն էր ունեցել Հետքը: Հենց առաջին տեսնելուց նա համակրելի տպավորություն էր թողել իր վրա:

Երրորդ օրը՝ առավոտյան, ինժեները դուրս գալով իր բնակարանից, նկատեց, որ կիղան գնում է գեղի աշխատավայրը, և ուրախանալով այդ հանդիպումից, նա արագացրեց քայլերն ու մոտեցավ նրան: Նա մի պահանջ էր զգում, ավելի ինտիմ լինելու այդ նորեկ աղջկա հետ: Սովորական բարեկից հետո նու ասաց:

— Ինչպես եք, գո՞յ եք. ես շատ զբաղված էի այս երկու օրս և չկարողացա անձամբ ձեզ օգտակար լինել: Այսօր փոքրը ինչ թեթև եմ, կարող եմ ձեզ ուղեկցել:

— Ծնորհակալ եմ,—ասաց կիղան,—ես բավականաշատ ծանոթացա գործին. ձեր օգնությունն ինձ անհրաժեշտ կլինի ավելի բարդ հարցերում:

— Ուրախությամբ բնդառաջ կդամ ձեր բոլոր պահանջներին:

Նրանք գնում էին նոր կառուցված խճուղով, զբուցելով զանազան հարցերից. փոխադարձ համակրությունը ստեղծում էր նրանց մեջ մի մտերժական զգացում, որը հետզհետեւ սարածում էր նրանց վրա իր բարակ ցանցը:

Նրանք պատահեցին մի խումբ բանվորների, որոնք աշխատում էին հանապարհի վրա, հարթելով անձրիխ գոյացած փոսերը: Երբ զուգն անցավ, բանվորներն սկսեցին սրախոսել նրանց հետեւից.

— Ի՞նչ աղջիկ է, թամամ աշքի լիս է... յարաբ ինչի՞ է եկել:

— Դրան էլ հարցնել կլի՞, էն է եկել է ինժեների հետ յամանակ անցկացնի:

— Բա հո ինձ նման չի,—ասաց երրորդը, բաժի վրա հենվելով,—կնկանս պատկելու տեղն էլ եմ մտիցս զցել...

— Այ տպա, էս թափուր աղջկան մտիկ անելուց հետո մո ո՞նց բանեմ,—ասաց Սարոն, նույնպես հենվելով բահին:

— Դես սո՞ւս, թամբալ, քեզ էլ մի մհանա է պակաս, որ

անգալություն անես, բա'նիր, թե չէ անումք սև տախտակից
վրա կպիեմ...

Ինժեները մի քանի բառեր որսալով այդ խոսակցություն-
նից, գլխի ընկավ, որ իր մասին է, և անախորժություն զգաց.
«Եեւ ոչինչ չեղած արդեն խոսում են», — անցավ նրա մտքով:

Դուրս գալով բլրի լանջը, նրանք կանգ տուն: Այստեղից
բացվում էր աշխատանքի, մի եռուն սկատկեր, ներքեում,
մինչև գետափը սփռված բանվորները բանգում էին Հովք.
Հանապարհի մոտ եքսկավատորն իր վիթխարի բերանով հող
էր դուրս տալիս խոշոր կտորներով, տեղ հարթելով ապագա
շենքերի համար:

Լիդան նայում էր ներքե, երբեմն աշքերին դնելով բի-
նոկլը:

— Ի՞նչ եռանդ ներշնչող պատկեր է. — այս տենդային
աշխատանքը դիտելով, քիչ է մնում ևս էլ բանվոր գրվեմ...

— Ես ձեզ կառաջարկեի ավելի լավ գործ, — քարտոսա-
րություն պաշտոնը, — ասաց նա, ինքն էլ զարմանալով իր շտա-
պողականության վրա:

— Դա ծրագրից դուրս առաջարկություն է. չէ՞ որ ես
կարձ ժամանակով եմ եկել:

— Ո՛չինչ, կարելի է երկարացնել ժամկետը. մենք կղի-
մենք, ուր հարկն է...

Լիդան ուզում էր մերժել, բայց տատանվեց. նա փորձեց
շտկել դրությունը անորոշ պատասխանով:

— Դժվար թե հաջողվի...

— Համենայն դեպս մտածեք դրա մասին...

Ինժեների տոնից լիդան նկատեց, որ նա այդ առաջար-
կությամբ որոշ քայլ է անում մոտ հարաբերություն ստեղծե-
լու իրեն հաճախ տեսնելու համար:

Նրանք իշան ներքե ու մոտեցան կառուցվող շենքերից
մեկին: Բանվորները ետ ու առաջ էին շտապում, շինանյու-
թեր տանում ձեռնասալերով ու դատարկ վերագառնում.
Վարպետներն արագ տեղափորում էին բերած նյութերը:

Իշնելով փոսը, թառյանը դեռ վերեից նկատեց շենքի

ծայրի անկյունում կանգնած ինժեներ Վարդանյանին, և Հիշելով նրա ելութիւն իր դեմ՝ չկարողանալով ինքն իրեն զսպել՝ մոալլից ու խոժոռեց դեմքը։ Նկատելով նրան, Վարդանյանը մի քանի քայլ մոտ եկավ, ենթադրելով, թէ Թառյանը գալիս է իր կողմը, բայց նա գլխի թերեւ շարժումով բարեեց, ու դիտմամբ ծոեց ճանապարհը դեպի աջ։ Լիդան զարմացավ նրա դեմքի հանկարծակի փոփոխությունից, շիմանալով նրա պատճառը, իսկ Վարդանյանը մնաց անհարմար զրության մեջ, ու իր շփոթությունը ծածկելու համար, սկսեց ցուցմունքներ տալ վարպետին ձեռքերը շարժելով։ Նրան բացահայտ զրգում էր Թառյանի վերաբերմունքը, մանավանդ որ նա տեղ-տեղ կանգ առնելով նկատողություն էր անում, առանց իր՝ Վարդանյանի ներկայության։

Լիդան արդեն սկսում էր վիրավորանք զգալ Թառյանի անուշաղիր վերաբերմունքից, բայց վերջինս՝ ետ դառնալով հանկարծ սթափվեց, նկատելով որ աշքաթող է արել Լիդային ու խսկույն սկսեց խոսել Հետք, աշխատելով ցուցադրել Վարդանյանի ասած իր ուրախ տրամադրությունը։

— Ընկեր Լիդա, ահա և մեր ապագա կոմբինատի գործարաններից մեկը. մի օր էլ կգաք կտևսնեք՝ պատրաստի շենքեր, վառ լամպեր, հաղորդալարեր, բայց չեք տեսնի ինձ՝ կառուցողիս և կմոռանաք, որ ես այստեղ տանջվել ու մաշվել եմ. Հիշո՞ւմ եք Զեխովի պատմվածքը այն ինժեների մասին...

— Ի՞նչպես չէ, Հիշում եմ... ձեր ասածն այն ինժեները չէ, որ Հսկայական կամուրջ է շինում ու բացման հանդեսի ժամանակ՝ բաղմաթիվ հասարակության մեջ, երևակայում է, թե բոլորը մտածում են իրեն՝ կառուցողի մասին...»

— Այս՝ Հենց այդ է... և այդ մոմենտին երեսով է խայտարքն զգեստ հագած կաֆեշանտանի մի պարողութիւն ու հանդիսականների ամբողջ ուշադրությունը նրա կողմն է անցնում... մոռանում են և՛ կառուցողին և՛ կամուրջը...

— Բայց իհա՛րկեն, այժմ պատկերը զիսովին փոխվել է, — ասաց Լիդան լրջորեն. — այժմ ոչ մի «խայտարդետ» չի

կարող թեքել պրոլետարիատի ուշադրությունը, նույնպես և ոչ մի ինժեներ չի կարող երեակայել, թե ինքն է միակ կառուցում այժմ կոլեկտիվն է կառուցում և նա է մեծարվում հանդիսի ժամանակ...

— Ի՞արեկե, — ասաց Թառյանը, փոքր ինչ գծողություն այդ ուղղումից, որը նվաստացնում էր իր գերը. ապա նկատելով նորից Վարդանյանին, նա՝ բարձրացնելով՝ ձայնը, շարունակեց.

— Բայց այդ կոլեկտիվի մեջ կան իսկական և շինծու կառուցողներ... գուցե ես առիթ կունենամ ձեզ Հետ խոսելու վերջինների մասին... իսկ այժմ անցնենք բետոնի գործարանը...

Նրանք ներս մտան տախտակե շենքն ու սանդուղքներով բարձրացան վերև:

V

Երեկոյան Թառյանը նստած իր առանձնասենյակում՝ մեծ գրասեղանի մոտ՝ զրազված էր կոմբինատի պրոեկտներով: Էլեկտրական լամպը լցնում էր սենյակն ուրախ լույսով, կարծես մերկացնելով ամեն մի իր, բացելով ամեն մի թաքնըված անկյուն: Նրա աջ կողմը՝ դրած էր թղթերով լիքը պորտֆելը, իսկ սեղանի վրա անկանոն ցրված էին գծագրերի խողովակածե փաթեթներ, գրասենյակից բերած «գործեր», գրքեր, հաշվառման աղյուսակներ և այլ թղթեր:

Գլխավոր ինժեներն ուղարկել էր Մոսկվայից կոմբինատի ընդարձակման պրոեկտները՝ տեղում մի շարք հարցեր պարզելու և վերջնական լրացումներ մտցնելու համար: Այժմ Թառյանն ուսումնասիրում էր այդ պրոեկտները, պատրաստվելով զեկուցման տեխնիկական խորհրդում:

Նա ուշադրությամբ նայում էր առջեր բացված գծագրերին, ու ստեղ-ստեղ թղթի վրա հաշվում ու ստուգում: Պրոեկտների կապույտ գոնի վրա արտացոլվում էին սպիտակ գծերը, ասես բացելով թաքնված գաղտնիքները:

Վերջացնելով գլխավոր պրոեկտներից մեկի ստուգամբ, նա ուշ երեկոյան վեր կացավ տեղից ու սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում:

«Ուրեմն կոմբինատն ընդարձակվելու է,—մտածում էր նա.—այն, ինչ ենթադրություն էր, այժմ դառնում է իրականություն... ո՞ւմ կհանձնեն նոր շինարարությունը, ո՞վ կլինի զեկավարը, ի՞նքը, թե մի ուրիշը...» Այդ հարցը հոգում էր նրան. նա սիրում էր իշխանություն, թեպետ և խորշում էր նրա բարգությունից ու ծանրությունից:

Գլխավոր ինժեները գրում էր, որ կմնա Մոսկվայում դարձյալ մի ամիս «գուցե և ավելի»—այդ լուրը ուրախացնում էր նրան, քանի որ իր «Իշխանությունը» շարունակվելու էր նորից. նույնիսկ, երեսն նա մտորում էր, թե մի գուցե զիսավոր ինժեները կմնա ընդմիջտ Մոսկվայում, և այն ժամանակ... ինքը՝ Թաոյանը կլինի նրա տեղը... բայց այդ դեպքում նա կկարողանա՞ արդյոք վերականգնել իր խախտված դիրքը, մոռացության տալ իր «պարտությունը...» ահա ի՞նչն էր զիսավորը... որտեղից էլ սկսում էր նա, միշտ գալիս էր դեպի իր «պարտությունը», որը սարի նման ծառանում էր առաջը...

Նա կանգ առավ պատուհանի առաջ ու դուրս նայեց: Իր դիմաց, մեծ շենքի առաջ, էլեկտրական լամպի տակ, կանգնած էր պահակը՝ հրացանն ուսին, աշքերը հառած մի կետի:

Թաոյանը նայում էր անթարթ, կարծես առաջին անգամն էր պահակ տեսնում ու զարմանում. նա գրավում էր իր ուշադրությունը:

«Ուրեմն մենք պիտի այրվենք ու լույս տանք, որպեսզի սրանք հասնեն սոցիալիզմի գաղաթներին, և ունենան նույն պիտի բարձր գիտակցություն, որպես և իրենց զեկավարները»,—այսպիս էր ասում լիդան...

...«Բայց չէ՞ որ կարող է պահանձել, որ այս պահակը ավելի հարուստ մտքեր ունենա, քան ես, որ լոկ մի «սպեց» եմ, վարակված փառքի ու իշխանության տենչով...»

...«Պիտի այրվել լույս տալու համար, պիտի կյանքը

դնել սոցիալիստական շինարարության համար...» Եթէ կիդայի այս մտքերը ես համարում եմ «անփորձ», թեորետիկ, ապա ի՞նչ եմ առաջադրում նրանց փոխարեն, ինչի՞ եմ ձրգում... Ծովզս ամեն ինչ շարժվում է, իսկ իմ կյանքը կարծես կանգ է տուել...»

«Եվ դրա պատճառն այն է, որ մի անդունդ է գոյացել իմ և բանվորության մեջ...»

Նրա հայացքն ընկալ այն շենքին, որտեղ ապրում էր կիդան:

...Եթէ կիդան համաձայնվեր իր մոտ աշխատելու... ինչո՞ւ է նրան թվում, թե այդ կինը կարող է մի առանձին դեր խաղալ իր կյանքում, ասես նրա ձեռքին հրաշալի բանալիներ կան... թվում է, թե նա՛ կարող է մի կամուրջ ձգել իր և մասսաների մեջ...

Մի գգացում քաշում էր նրան գնապի այդ օրիորդը, բայց դա լոկ մարմնի, գեղեցկության հրապույր չէր. նրան դուր էին գալիս կիդայի ձգտումները, նրա խիզախ, պաշքարող ժագերը, թեկուզ և նրանք իր աշքում անփորձ էին թվում:

Բայց ահա բավական ժամանակ է, կիդան դրական պատասխան չի տալիս իր առաջարկին՝ պաշտոնավորելու Գետաշենում՝ և այդ հապաղումն ավելի է լարում իր ձգտումը դեմքի նա:

Նա մոտեցավ սեղանին, հավաքեց կարեոր թղթերն ու գծագրերը: Երբ բացեց պորտֆելը, այնտեղ նկատեց մի ծրար, ու կնոջ նամակն էր, որը ստացել էր ցերեկով, բայց ժամանակ շունենալով կարդալու, մոռացել էր պորտֆելի մեջ:

Նա շտապով բացեց ծրարն ու սկսեց կարդալ: Կինը գրում էր սովորական ձեռվ, որ երեխաները լավ են, բայց կարուել են հորը, հաղորդում էր մի շարք նորություններ ծանոթների և բարեկամների մասին, ապա նորից անցնում է երեխաներին.

«Պավլիկն ասում է, թե պիտի դա քեզ մոտ իր ընկեր հոկտեմբերիների հետ. այդտեղ պիտի մի աշտարակ կա-

ոռուցեն և դրա վրա մի այնպիսի մեծ էլեկտրական լամպ զնեն, որ ամբողջ աշխարհին լուս տա...»

Թառյանը կանգ առավ բոպեապես տիսուր ժպտալով.

«Երեխան ինձնից լավ է ծրագրում—մտածում էր նա.— Նա գալիս է իր կողեկտիվի հետ, իսկ ես շարունակ պտտվում եմ իմ եսի շուրջը...»

Բայց նամակի վերջն անձնապես գրավեց թառյանի ուշադրությունը. այնտեղ կինը մի անսովոր տոնով գրում էր, թե վերջին թառյանը անտարբեր է դարձել գեպի ընտանիքը, որ այդ հանգամանքը ծանր խոհեր է բերում իր մեջ... «Գուցե հարկավոր է ինձ էլ ընթանալ նոր ուղիներով... կուզեի ես էլ պաշտոնավորել»...

Նա մնաց ապշած այս տողերից.—«ուրեմն այսուհետ էլ նոր ուղիներ, այստեղ էլ ճեղքված... Նա՛ էլ, ինչպես և ես, կանգնել է «անխոսափելի հարցերի առաջ...»

Նա նստեց սեղանի մոտ ու մի քանի բոպե մտածելուց հետո սկսեց գրել պատասխանը: Փոքրիկ ներածությունից հետո նա շարունակեց.

«Այս հոգեկան կացությունը, որի մեջ ես գտնվում եմ ներկայումս, կարող եմ անվանել ճգնաժամ... Ճիշտն ասած՝ այդ ճգնաժամն սկսվել էր վաղուց, բայց չէր նկատվում, ինչպես չի նկատվում օր-օրի վրա շորի մաշվելը... Ավելին կասեմ՝ ես նույնիսկ ենթադրում էի, թե ինձ կմեծարեն, կհայտարարեն հարվածային... Բայց ահա մի օր ինձ համար պարզվեց, որ ես ոչ միայն չեմ վայելում մասսայի համակրությունը, այլև նա ինձ անվստահության քվե է տալիս: Մի երեկո՝ մի լայն ժողովում, ինձ ենթարկեցին քննադատության, և այն օրվանից սկսվեց այս բոլորը...»

Սկզբում, ճիշտ է, ես կարծում էի, թե դա մի պատահական երկութ է, ինտրիգների արդյունք, բայց հետզհետե համոզվեցի, որ դա տարիների եղրակացությունն է, նրանց հաշվեհարդարը... պարզվեց, որ ես կցված եմ եղել սոցիալիստական շինարարությանը, կատարել եմ սովետական «ձեռներ», բայց ներքուստ կապված չեմ եղել նրա հետ...

Ելահամի օր լուսարձակն ընկալ ինձ վրա. մարդիկ տեսան այն, ինչ-ոք կար՝ որ ես խորթ եմ շրջապատին... Սկզբում չէին ուղում հավատալ, բայց այժմ ես ինձ տեսնում եմ կանգնած մի պատի առաջ, որի վրա զրված է — «այստեղ վերջանում է անցյալը...»

Ահա որտեղ եմ ես դեմ ընկելու նայում եմ առաջ վիրավոր սրտով... ի՞նչն է այժմ ինձ ուժ տալիս — այն, որ մեջում մեծ ցանկություն եմ զգում ընթանալու նոր ուղիներով, գործադրելու իմ գիտությունն ու փորձը սոցիալիստական շինարարության համար... Բայց զրա համար անհրաժեշտ է վերափոխվել. զրա համար հարկավոր են նոր թևեր...

Դու զրում ես, որ կարիք ես զգում «նոր ուղիների», ցանկանում ես աշխատել... ի՞նչ կարող եմ առել միայն մի բան — հետևե՛ք քո դատողական, քո վճռին. միևնույն է, որքան էլ թաքնվես վխտացող մտքերից, նրանք անխռապահելիորեն կդան, կկանգնեն առաջդ ու կասեն այն, ինչ ինձ են ասում».

— «Այստեղ վերջանում է քո անցյալը...»

VI

Լեցուն, ժանրակշիռ օր Յառյանի համար այն օրերից մեկը, երբ կարծես ամբողջ շինարարությունը կենտրոնանում էր իր կարիքնետում, երբ նույնիսկ շինարարության փոշին տեղափոխվում էր իր մոտ՝ այցելուների սաներով:

Նրան հաճելի էր, որ բազմաթիվ մարդիկ կախում ունեն իրենից, սպասում են իր վճռին, և այդ վճռուն անմիջապես դառնում է իրականություն, գործ: Այդ ժամերին նա լցվում էր մի արբեցնող զգացումով. թվում էր, թե բոլոր բանվորների, աշխատակիցների կամքը կենտրոնանում է իր մեջ, թե ինքն է շարժում ամեն ինչ, բարձրացնում շենքերը... Այսպիսի ժամերին նա համերաշխ ու ներդաշնակ էր շնչում ընդհանուրի հետ:

Բայց այդ ժամերի մեջ անխռապահելիորեն ներս էին սպարդում զանազան անախորժ, խճճված հարցեր, հազիր մե-

կից ազատվելով, նա ընկնում էր մի ուրիշի մեջ, ասես նրան
մաս-մաս էին անում և տեղավորում մանր տուփերի մեջ:

Այդպիսի բոպեներին նա իրեն զգում էր պաշարված
ըմանրունքով» (ինչպես ինքն էր անվանում այդ խճճված
հարցերը), ու մի ցանկություն էր գալիս մեջը՝ ազատվել իշ-
խանությունից, անցնել մի համեստ, քիչ պատասխանառու
պաշտոնի:

Առավոտյան ամենից առաջ նրա մոտ եկալ մատակա-
րարման բաժնի վարիչը: Թառյանը գնահատում էր այդ թխա-
գեմ, ուշադիր հայացքով Միքայելյանին: Նրա ձախ աչքը շա-
րունակ կիսախուսի էր, կարծես անընդհատ հնարյան էր էր
փնտրում դժվարություններից ազատվելու համար:

Նա բերակ մի շարք անախորժ լուրեր.—այս ինչ գործա-
րանը ուշացնելու է իր պատվերները, մի ուրիշն առաջարկում
է լրացուցիչ պայմաններ... Շինանյութերի վերաբերմամբ
սպասվում են կրծատումներ...

Եվ այդ բոլորի գեմ անհրաժեշտ էր պայքարել, միշոց-
ներ ձեռք առնել՝ հարմարեցնելու արդեն հունի մեջ ընկած
գործը նոր փոփոխությունների հետ:

Նրա գնալուց հետո եկան զանազան կազմակերպու-
թյունների, տրեստների, գործարանների, արտելների ներկա-
յացուցիչներ: Նրանք հիշեցնում էին, որ իրենց աշխատանք-
ներն սկսվելու ժամկետն արդեն անցել է, սպառնում էին
խախտել պայմանագրերը: Հողափորների մի արտելի վարիչ
երկար ժամանակ վիճում էր, ապացուցում, որ իրենք վնաս
են անում, և խնդրում էր՝ պայմանագրին հակառակ ավելաց-
նել գները: Եվ այս բոլոր հյուրերի հետ անհրաժեշտ էր օբ-
զու գտնելու, համոզել, հետաձգել ժամկետները, խոստումներ
անել...

Ժամի մեկին նշանակված էր տեխնիկական խորհրդակ-
ցություն: Նա պատվիրեց սպասափորին այլևս շընդունել այ-
ցելուններին, բայց քիչ անց՝ պարզվեց, որ երկու ինժեներների
դրադված լինելու պատճառով ժողովը չի կայանալու:

Թառյանը թիկնել էր աթոռին ու կարծես ուզում էր որո-

շեւ թե ո՞ր գործին պիտի անցնի այժմ։ Բայց նոր անցած խոսակցություններն ու վեճերը դեռ ևս ինքցիայով աղմկում էին մեջը։ Ու այդ մտածումների ժխորի մեջ մի միտք սողում էր մեջը...

«Արտաքուատ կարծես ամեն ինչ գնում է իր կարգով, ընդունում եմ մարդկանց, խոսում, կարգադրում, բայց ներքուատ մեջս մղմղում է մի վերք... այս բոլորը չի կարող լցնել այն անդունդը, որ գոյացել է իմ և բանվորության մեջ. հարկավոր է մի արտակարգ բան...»

Հանկարծ նրա առանձնասենյակի դուռը փոքր ինչ բացվեց ու արանքից ներս նայեց լիդան։ Դուան հետեւում լսվում էր սպասավորի արգելող ձայնը։

Թառյանը դուրեկան ցնցումով սթափվեց, ու դլխի շարժումով բարեկելով, ասաց.

— Համեցե՞ք։

Լիդան աշխուժով ներս մտավ, կարծես ինչ-որ գրավիչ շշովով լցնելով սենյակը։ Նա հագել էր նավաստու կապույտ-սպիտակ բլուզ, ձեռքին բռնել ժուռնալների ու լրագրերի մի կապոց։ Նրա դեմքն արկից կարմրել էր, և ուրախ հուզմունքի մեջ էր։

Թառյանը ձեռք տվեց ու ցուցց տալով աթոռը, առաջարկեց նստել։

— Այս ո՞րտեղ եք, բավական ժամանակ է, չէիք երեւում, մոռացել եք մեզ։

— Չեմ մոռացել, համենայն դեպս իմ բլոկնոտը միշտ հիշում է ձեզ...։

— Բլոկնո՞տը... ո՞վ զիտե ինչ սարսափելի բաներ եք գրում մեր մասին։

— Ի՞նչ կա որ. Եթե գրածս ճշմարտություն է, ի՞նչ կարող եք առարկել։

— Գուցե և շատ բան. ճշմարտությունը պիտի ներկայացնել իր արմատներով, ուղում եմ ասել՝ իր պատճառների...։

— Բայց դուք զիտե՞ք, որ կան պատճառներ և «պատ-

ճառներ»։ Երբեմն նույնիսկ առաջ են բերում երկնարկանի «պատճառների պատճառները» և հարցերը հյութազուրկ անում...»

— Զկարծեք, թե միայն բացասական կողմերի մասին է խոսքս. ես ուզում եմ ասել, որ արտաքինից դատելով, կարող եք թյուրիմացությունների մեջ ընկնել. օրինակ՝ անցյալ օրը մի թղթակցություն կարգացի մեր շինարարության մասին։ Թղթակիցը մեծ ոգևորությամբ խոսում է մեր մասսայական աշխատանքների մասին։ — «Կարյուրավոր ձեռքեր քանդում են...» և այլն... իսկ այդ նույն պատկերն ինձ տրիբություն է պատճառում. որովհետև այդ մասում մենք դեռևս շենք կարողացել մեխանիզացիա մտցնել...»

— Ես կաշխատեմ խուսափել վրիփումներից. — դժվար հարցերի վերաբերմամբ միշտ խորհրդակցում եմ ինժեներների հետ։

— Այժմ դուք բավականաշափ ծանոթացել եք մեր շինարարությանը. ի՞նչ տպավորություններ ունեք։

— Կասեմ առանց թաքցնելու. իմ կարծիքով ձեզ մոտ սոցիալիստական շինարարությունը միակողմանի է առաջ գնում...»

— Այսի՞նքն։

— Դուք կառուցում եք շենքեր, բայց կարծես մոռանում եք, որ դրա հետ զուգընթաց պիտի կառուցեք և մարդկանց նոր՝ սոցիալիստական գիտակցությունը...»

— Այս թե որտեղից եք բռնում մեզ, — ասաց թառյանը. — բայց եկեք խոսենք կոնկրետ... ի՞նչ եք ուզում ասել։

Լիդան մի պայծառ, զարմացնուու հայացք ձգեց թառյանի վրա։ Նրան դուր էր գալիս այդ կովկասյան առնական դեմքը իր թախծոտ, խոհում աշքերով. բայց այդ դեմքի վրա նրա ինքնասիրությունը խայթում էր հեզնող ժամփի հազիվ նկատելի մի գիծ։ Նրան թվում էր, թե այդ ժամփն ասում էր. — «Ինչ ուզում ես խոսի՛ր, բայց իմացի՛ր, որ դու կին ես, այսինքն՝ փոքր ինչ երեխա...»

— Լավ, ես կխոսեմ ավելի կոնկրետ. — ասաց Լիդան. —

մեր հիմնարկները, նորաշենները, երբեմն մոռանում են, որ պիտի լինեն նոր, սոցիալիստական կյանքի դպրոցներ. նրանք պիտի կարմիր բանակի նման ներս առնեն մարդկանց և գուրս թողնեն վերափոխված...

— Բայց մի՞թե մեզ մոտ այդ չի արվում:

— Շատ. քիչ:

— Գուցե մենք այդ ասպարիզում քիչ արդյունք ենք տվել, բայց պիտի իմանաք, որ այդ վերափոխումը մի օրվա դորձ չէ... Հարցը բավական բարդ է՝ մանավանդ մեր շինարարության հոսուն, փոփոխվող բանվորության վերաբերմամբ. այս կետում մեր ընկերները հաճախ են շեղվում...

— Ինչպես և գուք եք շեղվում հակառակ ուղղությամբ՝ հանուն ձեր շինարարության դուք աշքաթող եք անում կառացողներին... մենք այդ կետում կպայքարենք ձեր դեմ...»

— Ես համաձայն եմ ձեզ հետ պայքարելու, — ասաց Թաոյանը ժպտալով, — պայմանով, որ գուք աշխատեք մեզ մոտ:

— Ես հենց զբա համար եմ եկել... բանը նրանումն է, որ մեծ անհարմարություն եմ զգում, երբ գնում եմ զիտելու ձեր աշխատանքները. մի տեսակ բուրժուայի տեսք եմ ստանում, — ուրիշներն աշխատում են, իսկ ես նայում եմ...

— Այս, անցյալ օրը մեր ինժեներներից մեկն ասում էր, որ գուք ամեն տեղ մագնիսական փոթորիկ եք առաջացնում:

— Ի՞նչպես թե...

— Ուշադրություն եք գրավում:

Լիդան կարմրեց:

— Գուցե և խանգարում եմ...

— Ոչ, այդպիսի բան չկա, սա կատակի խոսք է. ուրեմն... ընկեր լիդա, ձեզ անհրաժեշտ է պաշտոն. ես նորից իմ առաջարկությունը կանեի ձեզ...

— Ո՛չ, ես կուզեի մի այնպիսի պաշտոն, որ ինձ հնարավորություն տար մոտ լինել բանվորական մասսաներին:

— Լա՛վ, ես շեմ պնդում. մանավանդ որ ինքս էլ ըն-

քունում եմ, որ կենցաղային հարցերին առանձին ուշադրություն պիտի դարձնել:

— Ուրեմն կարող է պատահել, որ մենք չպայքարենք այդ հարցերի շուրջը, այլ ընդհակառակը — ընթանանք մի գծով...

— Ինչպիս երեսմ է՝ դուք լուրջ սպառնալիքներ եք ունեցել. Երկի ձեր բլոկնոտում բավականին պայթուցիկ նյութեր կան մեր գնել...

— Այնքան էլ չէ, առա տալիս եմ ձեզ, կարող եք կարգալ...

Թառյանն ուզում էր հրաժարվել կարդալուց, ցուց տալու համար, որ կարենը լուրջում չի տալիս, բայց չկարողացավ գրակել իր հետաքրքրությունը, վերցրեց բլոկնոտն ու սկսեց թերթել: Մի քանի երեսից հետո գրած էր խնամքով մի հոդված:

Նա սկսեց կարդալ գովասանական ակնարկը, ենթադրելով, թե իր մասին է, բայց երկու երեսից հետո նկատեց, որ ինձեներ Սարյանի մասին է, ու մի թախիծ իշշավ վրան, ասես մի թել կտրվեց մեջը... իր հակառակորդը գովասանքի էր արժանանում...

Նա թողեց այդ հոդվածն ու շարունակեց թերթել, իր հուզումը ծածկելու համար: Հանկարծ նրա աշքին ընկավ մի սևագրություն, որն իրեն էր վերաբերում.—

«Ինձեներ թառյանը դեռ չի ազտագրվել անցյալի ժառանգությունից... բանվորները նրա համար ավելի «բանուժ» են, քան սոցիալիզմի կառուցողներ... տարված է «կառուցողի» փառքով... բայց դրանց տակ կա խորհող ու փնտրող մի միտք... թվում է՝ եթե վերացվի հոգեկան մի բարակ շերտ, նա կհարի իսկական սոցիալիզմին, կկցվի մասսաներին...»:

Թառյանը կարդաց շունչը պահած, մեծ ջանք գործադրելով, որպեսզի շմատնի իրեն՝ ապա վերադարձնելով բլոկնոտը, ասաց՝ մի բան ասելու համար.

— Դովում եմ ձեր եռանդը. շարունակեցեք նույն ոգով. « Լիդան վեր կացավ տեղից:

— Ալրեմն, ընկեր Տարյան, գուք կիսուն՞ք իմ պաշտոնից մասին.—կարճ ժամանակով է, բայց անհրաժեշտ է:

— Լավ, կիսունմ և ձեզ իմաց կանեմ:

— Յտեսություն,—ասաց Իիդան, ձեռքը մեկնելով թառյանին: Նա գնաց, իսկ թառյանը մնաց անշարժ իր տեղը, կարծես կիդայի խոսակցությունը մի երաժշտություն էր, որը դեռ շարունակում էր հնչել իր ականջին, բայց այդ երաժշտությունը միաժամանակ և գրավում էր, և տանջում... Իիդան բացասում էր իրեն,—«անցյալի ժառանգությունից շաղատագրված...», հնչում էր նրա ականջին կիդայի խիստ դատավճիռ...

VII

Արեք փայլում էր խճուղու վրա, խաղում էր գետի փրփրուն ալիքների հետ. զով օդը մեղմ սահում էր, գուրդուրում դեմքերը. գետի վշշոցի հետ աղմկում էր մյուս ափին՝ դտնվող սղոցարանը:

Ինժեներ Սարյանը (որին Իիդան «բրոնզե ինժեներ» էր անվանել իր ակնարկի մեջ), կանգնած էր կամուրջի վրա, իր նախկին ուսանողական ընկեր Աշխենի հետ, որը եկել էր էքսկուրսիայի և այժմ հրաժեշտ էր տալիս:

Ինժեների դեմքը, որն առանց այն էլ թուխ էր, բացօթյաւ աշխատանքից ավելի էր այրվել, սևացել:

Նա հագել էր արեկից խունացած, կինամոնագույն բլուզ, որի օձիքը բաց էր թողել, իսկ գոտու տեղ ինչ-որ թել էր կապել:

Աշխենի հետ նա ուսանողական տարիներին մտերիմ էր. հետո, երբ նա ավարտեց ու տեղափոխվեց Գետաշեն, կապն սկզբում պահպանվում էր նամակագրությամբ, բայց շատ շանցած՝ այդ էլ դադարեց:

Աշխենը եկել էր էքսկուրսիայի, բայց նա մի ուրիշ գաղտնի նպատակ էլ ուներ,—նա եկել էր պարզելու, թե ինչո՞ւ է լոել Արմենը, և ի՞նչ դիտակորություն ունի նա իր վերաբերմամբ...

Բայց այդ հարցը շատ «իմափուկ» էր, հարկավոր էր մռատենալ դրան հեռափոր պտույտներով. սակայն արդեն երկու ժամ էր, ինչ նա այստեղ էր, բայց չէր կարողանում մի բան հասկանալ այդ «ժայռի կտոր» տղայից: Խոսելիս նա չէր նայում Աշխենին, այլ հրամանատարի նման դեմքը պտտում էր այս ու այն կողմը, կարծես այնտեղ կովող զորքեր կային, և իր հրամանին էին սպասում:

«Ի՞նչ է պատահել,—մտածում էր Աշխենը.—ինչո՞ւ է նա այնպիս խորթացել, որ ոչ մի կերպ չի հաջողվում մեջ բերել «այն հարցը...» Ճիշտ է՝ նա խոսում է, բայց ինչի՞շուրջը—շինարարության, տեխնիկայի, պլանների, սոցիալիզմի հաղթանակի...»

— Մեր գործերը լավ չեն գնում,—ասում էր նա մտահոգ, —պետք է անընդհատ աշխատանքի դիմենք, բայց չի հաջողվում շինանյութերի պակասության պատճառով... ոչի՞նչ, մեր հարվածայինների միջոցով ամեն ինչ կհաղթահարենք... Է՛ Աշխեն, արժե կյանքը դնել սոցիալիստական շինարարության համար...

Աշխենը լսում էր լարված դրության մեջ, ուզում էր խոսքը դարձնել իրենց անցյալին, կամ «ապագա» ամուսնության, բայց Արմենն էլի իրենն էր քշում,—խոսում էր շենքերից, մեքենաներից, հիդրոկայաններից: Ահա մնացել է մի քանի բոպե, արդեն Աշխենի ընկերները գնացել են, ինքն էլ պիտի դնա միանա նրանց. նա զայրութից ինքն իրեն ուսում է, ուզում է կմշտել Արմենի թեր, ուշքի բերել նրան, բայց էլի դարձի չի դալիս:

— Ինձ ուզում են հարվածային հայտարարել,—ասում է Արմենը, —բայց ամաշում եմ, չպիտեմ ինչպես պիտի կտնդնեմ բանվորների առաջ ու գովաստանք լսեմ իմ մասին...

— Ճիշտո՞ւմ ես մեր ուսանողական կյանքը, —վերջապես հարցնում է Աշխենը:

— Է՛հ, ի՞նչ հիշեմ, բան չէինք սովորում, —հիմա գլխիս վա՞յ եմ տալիս: Նոր եմ սկսում սովորել: Այստեղ որ եկա, վճռեցի բոլոր աշխատանքներն ուսումնասիրել, բայց մի եր-

կու ինժեներ բյուրոկրատություն են անում, շատ բան չեն լուսաբանում: Ինժեներ թաղյանն ինձ չի սիրում. անցյալ անդամ «արտագրականում» քննադատեցի նրան, հիմա ամպամած է նայում մրաս...

Աշխենը հնթադրում էր, թե Արմենը մի ուրիշ սարտի հաւաքը ունի, նա փորձում էր բան իմանալ.

— Այստեղ հետաքրքիր աղջիկներ կա՞ն:

— Չգիտեմ:

— Ասում են մի ոռու աղջիկ է եկել Մոսկվայից.—գեղեցիկ է:

— Չգիտեմ:

— Բա դու աշխեր չունե՞ս:

— Դե՛ աղջիկ է, է՛լի... ո՞վ ժամանակ ունի...

— Ե՞րբ ես գալու քաղաք:

— Գուցե աշնան վերջը:

— Որ գնամ, ո՞մ բարեկմ, —Հարցնում է Աշխենը ընկ-ձրված ձայնով, մտածելով, թե գուցե այնտեղ, քաղաքումն է Արմենի «սիրտը»: Բայց անսպասելի կերպով ասում է.

— Հա՛, կասես Բարեկենին, որ ուղարկի իմ գիրքը—ամբարտակների մասին... անպատճառ ուղարկի...

Աշխենի ընկերութիւն հեռվից՝ գետի մյուս ափից, թաշ-կինակով նշան է անում, թե զնալու ժամանակն է. Աշխենն էլի մի փոքր մլուլ է տալիս, հուսալով թե վերջապես «սառույց» կհալլի»:

Մի բոլե երկուսի հայացքները հառում են իրար. Աշխենը ձգտում է թափանցել նրա «ներսը», սպասում է թե նա կասի իր ուղածը, բայց լսում է ուրիշ բան...

— Աշխեն, ինչո՞ւ դու այդպես քաշվեցիր ասպարե-զից,—Հարցնում է նա լուրջ,—մտել ես ինչ-որ պստիկ հիմ-նարկ, թաղվել ես թղթերի մեջ, բյուրոկրատություն ես անում...

— Զուր ես կարծում, թե դո՞ւ ես միայն շինարարու-թյամբ զբաղվում,—ասում է Աշխենը նեղացած, ապա ձեռքը մեկնում է փութկուտ շարժումով.

— Մնաս բարեւ:

Ու գնում է զայրացած, արագ քայլերով, շնկատելով առ-
շի ճանապարհը:

«Բրոնզե ինժեները» մի բուլե նայում է նրա հետեւից ու
կարծես ճանկարծ մտաբերում է, որ Աշխենը գնաց ննդա-
ցած, և ցանկանալով մեղմացնել դրությունը, կանչում է նրա
հետեւից.

— Աշխեն, ձմեռն արի՛, ձմեռը, գործի թեթև ժամանա-
կը...

— Ինչո՞ւ, ես քո վառարանն ե՞մ, որ ձմեռը գամ,—
ասում է Աշխենն ու ավելի բորբոքվում, խառնում քայլերը,
դիպչում քարերին:

«Վերջացավ, ամեն ինչ վերջացավ»,—մտածում էր Աշ-
խենը, ու գնում հուսաբեկ, հետզհետեւ ծանրացող քայլերով:

Իսկ «բրոնզե ինժեները» շտապ գնաց գետի ափով դեպի
վեր:

Թիշ անց, նա լսեց աջ կողմից քայլերի ձայն, ու երեսը
դարձնելով նկատեց կիդային, որն իշնում էր նեղ կածանով:

— Քարե ձեզ, ընկեր,—ասաց կիդան, մոտենալով,—այս
ճանապարհով ես շեմ գնացել, խնդրում եմ ինձ տանեք ավա-
գանի մոտ:

— Ես հենց այնտեղ եմ գնում:

Ու շարունակեցին ճանապարհը միասին:

Հենց որ Արմենն ու կիդան իրար ընկան, Աշխենի ընկե-
րուժին հեռվից նկատեց զուգին ու նրա ուշադրությունը
դարձրեց այն կողմը:

«Ահա թե ինչո՞ւ է սառել դեպի ինձ»—մտածեց Աշխենը
սրտի ճմլոցով. նա հազիվ էր կարողանում զսպել իր հուզու-
մը, ու ատամները կրծտացնելով նայում էր:

— Է՞օ, գնանք,—ասաց Աշխենը ջղայնորեն.—ինչո՞ր
պրակտիկանտ ուսանողութիւն է, Մոսկվայից է եկել...

Այժմ նրան թվում էր, թե իմացավ Արմենի սառնության
սրտճառը, ու մտածում էր վրեժի մասին. նա «վրեժը» կրկ-
նում էր մի առանձին կրքով, ասես բավականություն էր
ստանում նրանից:

Լիդան գնում էր ճամփով, բրոնզե ինժեների հետ ու շարունակ հարցեր տալիս, իսկ նա պատասխանում էր շփոթված, կասկածելով իր ոռուերենից, որը լավ չէր իմանում:

Լիդան դուր էր գալիս նրան, բայց թվում էր որպես մի բարձր սարի ձյունեղեն դագաթ, գեղեցիկ, բայց անմատչելի...

Երբ նրանք տեղ հասան, Արմենն այնպես էր լարված, ասես մի գժվար, անհասկանալի գիրք էր կարդացել:

Ավագանի փոսի մոտ կանգնած էին ինժեներ Թառյանն ու Ալենիկովը: Նկատելով Լիդային Արմենի հետ, Թառյանը հիշեց Լիդայի գրածը «բրոնզե ինժեների» մասին ու ենթադրելով, թե նրանք «մոտ են» իրար, կնճռեց ճակատը: Լիդան մոտենալով ձեռք տվեց երկուսին էլ, ու սկսեց հարցեր տալ ավագանի մասին: Արմենը բարեկ հեռվից:

Մինչ նրանք խոսում էին, «բրոնզե ինժեները» գնաց նոր գործած կանալի ուղղությամբ:

Բավականաշատ հարցեր տալուց հետո, Լիդան հանեց բլոկնոտն ու սկսեց գրի առնել իր գիտողությունները:

VIII

— Մենք գնահատում ենք ձեզ որպես մասնագետի-նշանակություն ենք տալիս ձեր տեխնիկական փորձառությանն ու հմտությանը,—ասում էր կուսկոմի քարտուղար Շավարշը Թառյանին:—մենք ձեզ տվել ենք իշխանությունը ավելի, քան ուրիշներին, աշքի առաջ ունենալով մեր շինարարության ուրուցն պայմանները. շատ անգամ ուրիշ տեսակետներ զոհել ենք ձեր զուտ տեխնիկական տեսակետին... դա եղել է օգտակար և նպատակահարմար և մեր ընկերներն ամեն կերպ ընդառաջ են եկել ձեր պահանջներին: Բայց ահա հասել է մի օր, երբ մեր շինարարությանն անհրաժեշտ են ոչ միայն ձեռքեր, այլև թերեր... այստեղ է ահա, որ ձեր դերը փոխվում է «դիալեկտիկորին»:—շինարարության շարժիչ ուժի փոխարեն դուք շպետք է դառնաք նրա արդելակը...

— Այդ դո՞ւք եք ասում, ընկեր Շավարշ, դո՞ւք, որ
միշտ տեսել եք մեր տանջալից աշխատանքը...

Խոսակցությունը Թառյանի առանձնասենյակումն էր:
Ընկեր Շավարշը եկել էր մի շաբթ հարցերի շուրջը նախնա-
կան խորհրդակցության, բայց գլխավորապես՝ որոշելու հա-
մար Թառյանի դիրքը:

— Իմ խոսքը ձեր աշխատանքի մասին չէ, այլ ձեր ուղ-
ղության. մեր բանվորությունը բարձրացել է, աճել գիտակ-
ցությամբ, մասնակցում է ամեն մի հարցում, հանդես է գա-
լիս իրեն հանդիպակ պլաններով, հսկում է, քննադատում,
մատնանշում թերությունները... իսկ ի՞նչ դիրք եք բռնել
դուք.—մենք շատ անդամ ենք խոսել այդ հարցերի շուրջը.—
«Հարվածայինները»—ասում էիք.—«հա՛, ո՛չինչ, բա՛ն է,
էլի՛... սոցմբցո՞ւմը... կարմիր տախտակը»,—գուցե մի բան
ավելացնեն...» և այլն... իսկ հարվածայնությունն արդեն
ծափալվել է, ափերից գուրս է թափվում. մասսաները պա-
հանջում են նոր տեմպ, նոր մոտեցում...

— Այդպես՝ դուք միշտ տեմպի հարց եք զնում, մոռա-
նալով, որ դա կախված է մեծ մասամբ շինանյութերի ժամա-
նակին հասցնելուց. իսկ երբ շինանյութերը, մեքենաներն
ուշանում են, դարձյալ ինձ են մեղադրում և՛ տեմպի, և՛ «ուղ-
ղության» համար...

— Նույնիսկ մեր պատվերների վերաբերմամբ պիտի
փօխել աշխատանքի մեխողք.—ա՛յ, օրինակ մեր մոտոռների
պատվերի համար ընկեր Լիդան առաջարկում է դիմել «Կար-
միր աստղ» գործարանի բանվորներին, և իր վրա է վերցնում
պործը...

Թառյանը բոպեապես մնաց լուս. նրա ինքնասիրությա-
նը դիպչում էին Շավարշի ցուցմունքները:

— Ուրեմն, ընկեր Շավարշ,—ասաց նա, — դուք բնա-
կա՞ն եք համարում այն վերաբերմունքը, որ ստեղծվել է իմ
դեմ...

— Այո, դա պատահական երկույթ չէ. բանվորությունը
տեսնում է, որ դուք իրեն համընթաց շեք քայլում և երես է

թեքում ձեզնից. և նա իր վերաբերմունքը ցույց տվեց իր՝ ծողովներում... Այժմ ձեր հարցի լուծումը կախված է ձեզանից... մասսան իր վերելքն է ապրում, դուք պետք է նրա հետքայլեք, և որ գլխավորն է՝ նրա առաջին շարքերում...

Թառյանը ոչինչ չպատասխանեց: Շավարշը վեր կացավ տեղից, վերցնելով սեղանի վրայից պորտֆելը:

—Այսօրվա մեր խոսակցությունը համարենք առաջարան, —ասաց նա, լուրջ ու բարյացակամ տոնով. —Հետապայում մենք մեր ընկերների հետ միասին կկազմենք որոշ ծրագիր, կքննենք բոլոր հարցերը, և կարծում եմ՝ կկարողանանք մի քանի ամսվա ընթացքում վերականգնել մեր շինարարության առողջ տեմպն ու ընթացքը...

Նա դուրս գնաց, կարճ «ցը» ասելով, իսկ Թառյանը մնաց նստած, ինքնամոռացության մեջ:

Նրա ինքնասիրությունը խոցվում էր Շավարշի քննադատությունից, բայց ներքուատ զգում էր, որ նրա ասածը ճիմք ուներ:

«Ահա այժմ պարտկոմի քարտուղարը եկել է կամուրջ ձգելու իմ և բանվորության մեջ. նա կարող էր ուրիշ ընթացք աւալ դործին և ես կընկնեի, որպես աշնան թոշնած մի տերի... սոցիալիստական շինարարության մեջ ես կարող եմ դործել միայն մասսայի հետ. դրանից դուրս ես ոչինչ եմ... պետք է թողնել մի կողմ կեղծ ինքնասիրությունը և շտկել իմ բեկված գիծը...»

Ճիշտ է, մինչև այժմ նա մտածում է իր սխալների մասին, բայց միշտ այդ արել է «Ճին ձեռվլ». — Նա կուզեր այնպես ուղղել իր գործունեության ընթացքը, որ իր արածը «արտություն», զիշում շթվար: Այժմ հասել է վերջին խոսքի օրը. ամեն կողմից շրջապատը թելադրում է իրեն՝ «զեպի նոր աշխատանք...»

«Պետք է ընթանալ մասսայի հետ, — նրա առաջին շարքերում, նրանից ստանալ այն հրաշագործ ուժը, առանց որի ես ոչինչ եմ...»

Լիդայի առաջին և երկրորդ ակնարկները «Գետաշենի» մասին լուս տեսան «Կայծեր» ժուռալում:—մեկը շինարարության ընդհանուր պատկերն էր տալիս (որի մեջ մի քանի նվաստավոր տողեր կային Թառյանի մասին), իսկ մյուսը նվիրված էր Հարվածայիններին ու «բրոնզե ինժեներին»՝ Սարյանին: Գետաշենում այդ ակնարկներն ընդունեցին ոչ միատեսակ, մի քանի ինժեներների մեջ դժգոհության մի պլիք անցավ Լիդայի դեմ և միաժամանակ բացվեց բամբասանքի կծիկը:—սկսեցին խոսել, թե Լիդան մի «ավանդուրիստկա» է, որ նա գովել է ինժեներ Սարյանին ինտիմ կապի պատճառով: Խոսում էին նույնպես, որ նա միաժամանակ ապրում է Թառյանի հետ, որը նրան երես է տալիս, —և ահա այդ երես տալու հետևանքը՝ ում ուզում է գովում է, իսկ ով իր համար հետաքրքիր չէ, մոռացության է մատնվում:

Թառյանի վրա Լիդայի ակնարկները ցնցող ազգեցություն արին: Առհասարակ նա անտարբեր չէր դեպի այն ամենը, ինչ խոսում և անում էր Լիդան, իսկ այդ դեպքում նա գրում էր և իր մասին: Այն մի քանի տողերը, որոնք վերաբերում էին իրին, նա կարդաց հուզումով, բայց երբ վերցրեց ժուռալի հետեւալ համարը ու կարդաց Սարյանի մասին, նա չկարողացավ զսպել իր դժգոհությունը և մինչև կեսը հազվակացնելով, դեռ շպրտեց ժուռալը, բռնկվելով խանդով դեպի «բրոնզե ինժեները»: Այո՛, նա համարում էր Լիդային բարձր իր տեսած կանանցից, ընդունում էր, որ նա խորը տոփորքած է սոցիալիզմի պայքարով, և ի՞նչ... նա էլ դարձել է մի սովորական կին և դեկավարվում է իր անձնական սահմատիաններով...» «Չէ, նա այն չէ, ինչ որ ինքը տեսնում էր նրա մեջ...»

«Ուրեմն ես ի՞նչ եմ, ես՝ որ ներկայումս դեկավարում եմ շինարարությունը, որ այսքան շանքեր եմ թափում...»

Փոքր ինչ հանդարտվելով, նա առաջ քաշեց սեղանի վրա կուտակված թղթերը: Նա հանկարծ նկատեց մի գլանա-

ձեւ ծալած գծադիր ու նրա մոտ մի տեսր, և խսկույն մտաբերեց, որ այդ գործը Սարյանինն է։ Դա մի շենքի պրոեկտ էր, որը փոփոխության էր ենթարկվել շնորհիվ նոր հանգամանքների։ Նա դիտմամբ այդ գործը հանձնել էր Սարյանին՝ ցուց տալու համար, որ նրա գիտցածը դեռ շատ քիչ է «Գետաշենի» համար։ Բայց ահա նա բացեց պրոեկտը, թերթեց տեսքը ու մնաց զարմացած։ —«բրոնզե ինժեները» դուքս էր եկեղ տեխնիկական բարդ հաշիվների տակից։ Ճիշտ է, մի տեղ սխալ էր գործածել ֆորմովաները, բայց այդ էլ ներելի էր երիտասարդ ինժեներին։ այսքանը պարզ էր, որ նա հետրդին առաջադիմում է...»

Նա վերջացրեց տեխնիկական հաշիվների ստուգումը, բայց դեռ շարունակում էր նայել խնամքով կատարված գծադրին։

«Վերջ ի վերջո եթե ես նկատում եմ նրա առաջադիմությունը, ինչո՞ւ նույնը շնկատեր լիդան։ և նա այդ արակ բացարձակ, հենց սկզբի օրից։—չէ՞ որ նա ցուց տվեց ինձ իր բոլոնութը...» Գուցե նա համակրում է Սարյանին, բայց համենայն դեպս դա ենթադրություն է։ Եթե նրան բամբառում են, այդ էլ այն խավերում, որոնք դեռ շեն ազատագրվել հին քաղքենիկական ժառանդությունից։

Չէ՛, փաստը փաստ է, նա ոչ թե պիտի կովի այդ տեսակ «հակառակորդների» դեմ, այլ իր ներսի ամանը ուրիշ դեմ անցյալից բերած անհատական ժառանդության դեմ... Միայն այն դեպքում նա կարող է մոռացնել տալ իր անցյալի սխալները։ Ու երբ նա՝ ազատագրված այդ բոլորից, կը մտնի առաջավոր հարվածայինների շարքերը, այն ժամանակ իր անունն էլ կտեսնի «բրոնզե ինժեների» կողքին...»

Հետևյալ օրը, երբ նա գնում էր շինարարությունն աշքածելու, ալվարտվող շենքերից մեկի վրա նա նկատեց լիդացին։ Այդ բարձրության վրա նա թվում էր ավելի գեղեցիկ։ Նրա մոտ կանգնած էին երկու տեխնիկներ։

Նա նայեց վերև, ու հեռացավ կարուսով, ակամա ներեւով լիդայի ալվարմունքը։ Չէ՛, գժվար է հավատալ, որ նրա

մեջ խոսում են անձնական մոտիվները... «Երկուաից մեկը,— եթե նա մի սովորական կին է, ի՞նչ կարիք կա այսքան նրա մասին մտածելու. իսկ եթե նա բարձր է իմ տեսած կանանցից, ապա ուրեմն ես կհանդիպեմ նրան, երբ կհասնեմ իմ պերելքում...»

Իսկ լիդան նայում էր վերևից, ու հայացքով հետևում, զգում էր նրա ջղային քայլվածքը. զգում էր, որ իր գրածները նրա վրա անախորժ աղղեցովիցոն էին արել. և ասում էր մտքում՝ «մեծ նավին մեծ լող է հարկավոր. սպասի՛ր մի քիչ և դու էլ կլինես մեր շարքի մեջ. առ այժմ քեզ կշրջապատճենք կոմերիտական գեղեցիկ պսակներով...»

X

Առավոտը վաղ Թառյանը զարթնեց հանկարծակի, կարծես ինչ-ոք մեկի հրամանով: Նա վեր կացավ, շտապ հագնը-վեց և պատրաստվում էր դուրս գալու, երբ նրա դիմաց եկավ սանդուղքների վրա մեխանիկ նազարյանը:

— Բարեւ ձեզ, կարելի՞ է մի քանի րոպեով:

— Համեցեք, — ասաց Թառյանը ձեռքը տալով:

Ներս մտան, նստեցին սեղանի մոտ: Մեխանիկն իր խոցուած դեմքով րոպեապես մնաց լուս. սև ակնոցները մուայլ տեսք էին տալիս նրան. Հին ձեռվ խուզած մորուքը վերևում այտերի մոտ ածիլած էր, իսկ ներքեում հետզհետե նեղանում էր, կտրած եռանկյունու ուղիղ գծերով. նրա ամբողջ դեմքը կարծես միանգամից ձուված էր հնուց և մնում էր անփոփոխ, նույնիսկ թվում էր, թե մորուքի մազերը չեն ածիլվում և խուզվում, այլ միանգամից կարգի են ընկել ու այդպես էլ մնացել:

— Բնկեր Թառյան, ներեցեք, որ եկա ձեզ մոտ, տուն պրասենյակում դժվար է հանգիստ րոպե գտնել ձեզ հետ խոսելու համար:

— Պատրաստ եմ ձեզ լսելու:

Մեխանիկն սկսեց հանգիստ տոնով. — այդպես էր նա

ինքն իրեն խոսք տվել՝ լինել Հանգիստ։ Նա շղային էր, և բավական էր մի թեթև առփթ, որ կորցնի իր հավասարակըշ-ությունը։

Նա սկսեց թվել մի շարք թերություններ. — այս ինչ գործին հետևող չկա, «անտեր» է, այն ինչ նյութերը ժամանակին չըերին, մեքենան կարող է կանգ առնել. արջեստանոցն ուշացնում է մեքենայի նորոգումը... ու այդպիս մի շարք հարցեր գալիս էին իրար հետեից։ Եթե Թառյանը շճանաշեր նրան, նա կզարմանար այդ անընդհատ մարտիրոսագրություններից... Մինչև որոշ տեղ նա հանգիստ էր, բայց ահա եկավ զգայուն տեղը։

— Ես չեմ հասկանում, ընկեր Թառյան, սա ի՞նչ բան է. Երեխաններ են ուղարկում ինձ օգնական. մի երկու օր սովորում են, հետո թողնում, կամ դառնում են մեծամիտ, քիչ է մնում ինձ սովորեցնեն... մեկ էլ տեսնում ես՝ մեքենան փշացրին, իսկ ո՞վ է պատասխանառու, իհարկե՛ զլխավոր մեխանիկ նաղարյանը... Ես չեմ կարող աշխատել այսպիսի պայմաններում...

Մեխանիկը խոսում էր, իսկ Թառյանը սկսել էր իր հայացքը նրա գեմքին ու նայում էր տարօրինակ արտահայտությամբ, կարծես նոր էր նկատում ինչ-որ կարևոր բան։

— Բերե՛ք, գործի գրեք խելքը զլխին տղաներ, թե չէ սա ի՞նչ բան է. չեն լսում, չեն ուզում սովորել. այս հիմի մեքենան կոտրել են, ի՞նչ պիտի անենք...

«Ճի՛ն են, ճի՛ն և գեմքը և մորուքի ձեր և խոսքերը...» մտածում էր Թառյանը, նայելով մեխանիկին։

Նաղարյանը հանկարծ լոեց։

— Գուք վերջացրի՛ք, — հարցրեց Թառյանը, կարծես արթնանալով իր մտքերից։

— Այո՛, — ասաց մեխանիկը։

— Ռեկուտցիայից առաջ գուք ո՞րտեղ էիք ծառայում։

— Նորելի մոտ։

— Էավ է՛ր նրա մոտ։

Մեխանիկը ոչինչ շպատասխանեց:

— Ես նկատել եմ, — առաջ թառյանը, շապասելով նրա սպատասխանին, — որ ձեր դործելակերպի մեջ մի հիմնական սխալ կա. դա այն է, որ դուք չեք ուզում նկատել, որ ժամանակը փոխվել է...

Նազարյանն ուզում էր միջամտել, բայց թառյանը ձեռքի նշանով հանգստացրեց նրան:

— Մի քսան տարի առաջ, դուք այդ ձեր օգնական տղաներին մի-մի ապահակ կտայիք, հետո կհայտնեիք «տիրոջը», որ բանի պետք չեն, և նրանց անմիջապես դուքս կվանդեին. այնուհետեւ կդնայիք «մարդկային ապրանքի» շուկան, կվարձեիք ավելի լավերին: Իսկ այժմ մենք սովորեցնում ենք բոլորին, զործի ենք դնում. ու նորից սովորեցնում, առաջ քաշում... Այսուհետ մենք հեշտ ճանապարհներ շունենք. մենք ենք պատրաստում և՛ ամանը և՛ նրա միջի հեղուկը... Հենց դրա մեջ է մեր ժամանակի իմաստը, որ կարողանաս առաջ տանել և՛ զործը և՛ մարդուն... Դուք դատում եք հին տեսակետից, երբ ասում եք — թող գա՛ լավը, թող լսի՛ ինձ և մեր մեջ մնա՞ մի քիչ էլ ուզում եք, որ ձեզ հպատակվեն... Այդ բոլորը գալիս են հնից: Մենք պիտի կառուցենք ոչ միայն շենքերը, այլև նոր մարդու գիտակցությունը...

— Դե որ դուք էլ այդպես եք մտածում, էլ ի՞նչ կարող եմ ասել, — նեղացած խոսքը կտրեց Նազարյանը:

Թառյանն զգաց, որ թեպետ հարցը պարզ է, բայց չի կարող հասկացնել մեխանիկին «նորի» էությունը: Միաժամանակ, նա զգում էր, որ ինքն էլ որոշ շափով վարակված է նույն այդ «հնուկը», միայն մի զանազանությամբ, որ զգում է այդ, և պայքարում է ինքն իր դեմ... Եվ այժմ՝ մատնանշելով տեխնիկի թերությունները, կարծես ինքն իրեն էր քննադատում:

— Ինչ վերաբերում է փշացած մեքենային, — շարունակեց թառյանը, — այսօրվանից տվեք նորոգելու, իսկ արհետանոցի մասին նույնպես միջոցներ ձեռք կառնենք զործն

արագացնելու համար: Արդիշ ի՞նչ ունեք, — Հարցրեց Թառջանը, զգալով, որ նազարյանն ինչոր ուղում է ասել, բայց քաշվում է:

— Հա՛, մի հարց էլ կա... ոե ձեզ հայտնի է իմ զբությունը... Ես սոճիկով շեմ կարող պահել ընտանիքս...

Թառջանը փոքր ինչ լոեց, սպասելով որ նա էլի կխոսի, ապա ասաց.

— Լավ, կավելացնենք Հետևյալ ամսից: Միայն պետք է ասեմ, որ պիտի արագացնեք ձեր տեմպը. այդպես աշխատել չի կարելի:

Նազարյանի մոայլ դեմքին կարծես ինչոր շարժվեց. նույնությած ձայնով արտասանեց «Չնորհակալ եմ», ապա ձեռքն անդիտակցաբար տանելով ծոցագրապանը, շոշափելով բլոկնուն ու հիշեց, որ երեք հարցի մասին պիտի խոսեր:

— Շնորհակալ եմ, ընկեր Թառջան. կաշխատեմ աժեն եկրպ բավարարել... Ես ուղում էի ձեզ մի բան ասել...

Բայց այդ բոպեին Եվիկը ներս նայեց.

— Ձեզ կանչում են:

Թառջանն իսկույն վեր կացավ, ու դուրս գնաց նախառենյակը:

— Ափսոս, — ասաց մտքում մեխանիկը, նա ուղում էր խոսել այն խրոնիքական կոնֆլիկտի մասին, որը ստեղծվել էր իր և արքեստանոցի վարիչի մեջ, և որը իր կարծիքով՝ նույնպես լուրջ և կարևոր խորհրդակցություն էր պահանջում: Նա սպասեց, մտածելով, թե գուցե Թառջանը նորից ազատվի, բայց ահա նա ներս եկավ, իր հետ բերելով կիդային և շորս կոմերիտականների:

— Նստեցե՛ք, — հրավիրեց Թառջանը դիմելով նրանց:

Նրանք նստեցին, իսկ մեխանիկը վեր կացավ տեղից:

— Ցտեսություն, — ասաց նա, հեգնող հայացք ձեռքով կիդայի վրա, ու դուրս գնաց:

Թառջանը հետեւց նրան մինչև դուռը:

— Ոչի՞նչ, մնացած հարցերի մասին մի որիշ անգամ կխոսենք, — ասաց Թառջանը ձեռք տալով:

Ապա հեկավ նստեց հյուրերի դիմաց, ժպիտը դեմքին՝ ժպիտների հանդեպ: Լիդան հագել էր նավաստու զգեստ, իսկ կոմերիտականները խակի գույն բլուզներով էին, որոնք արեից ու քրտնքից դեղնավուն էին դարձել: Նրանք՝ բացի Լիդայից, փոքր ինչ քաշվում էին:

— Խոսմ եմ ձեզ,—ասաց Թառյանը, դիմելով Լիդային:

— Բնկեր Տարյան,—ասաց Լիդան.—մենք ցանկանում ենք օգտակար լինել ձեր շինաբարությանն ավելի, քան մեր անմիջական աշխատանքներն են պահանջում. մենք ուզում ենք ստեղծել մի ավանդաբարդ, որը զարկ տա հարվածայնության. և բացի դրանից վերացնել բանվորների կենցաղային պայմանների մի շարք թերությունները...

— Ես միայն կարող եմ ովզունել ձեր որոշումը,—ասաց Թառյանը:

— Մենք կաշխատենք դործին կցել և շրջանի կոմերիտականներին, միայն դուք պիտի մեզ աջակցեք, ընդունելով մեր ընկերներին և տեղավորելով նրանց այս կամ այն շինմասում:

— Շատ ուրախ եմ, ընկերներ,—ասաց Թառյանը,—որ դուք ձեռնարկել եք այս գեղեցիկ դործը. ևս ամեն կերպ կաշակցեմ ձեզ:

— Առայժմ մեր ցուցակում կան 12 հոգի. նրանք պիտի տեղավորվեն այն կետերում, որտեղ տեմապը և պլանը թերակատարվում է:

Թառյանը ժպատաց:

— Ուրեմն դուք մեծ դավադրություն եք կազմել դանդաղության դիմ:

— Այո,—ասաց Լիդան,—մենք պաշարում ենք բերդը և հենց վաղվանից:

— Ես էլ ձեզ հետ,—ասաց Թառյանը,—թեպետ դժվար թե ձեր հետեւից հասնեմ:

— Ո՛չ, ընդհակառակը,—ասաց Լիդան,—մենք սպասում ենք ձեզնից մի նոր, հարվածային աշխատանք...

Այսուհետեւ Թառյանը դիմեց մյուս կոմերիտականներին. Հարցրեց.

— Իսկ դուք ի՞նչ կասեք, ընկերներ:

Կարծես մի ընդհանուր հրամանով բոլորի դեմքին շարժվեց ամոթիած ժպիտը:

— Մենք բոլորս մեկ ենք,—ասաց Համոն, իր հաստատակամ աշքերը դարձնելով Թառյանի վրա:

Թառյանը հարցրեց ամեն մեկից թե ո՞րտեղ է աշխատում, ի՞նչ պայմանների մեջ է:

— Ուրեմն, ընկեր Տարյան, մեր առաջարկությունն ընդունված համարենք,—ասաց Լիդան վեր կենալով տեղից. Նրան հետեւցին կոմերիտականները:

— Այս՝ ընդունված է և հաստատ հիմքերի վրա է,—ասաց Թառյանը, նույնպես վեր կենալով և ձեռք մեկնելով:

Նրանք հրաժեշտ տվին ու գուրս եկան: Նայելով այդ թարմ գեմքերին, որոնք լցված էին մի վառ հավատով, թե ամեն ինչ կարող են անել, ամեն ինչ հաղթահարել, Թառյանն ինքն էլ վարակվեց նրանց ոգեսրությամբ, կարծես հարյուրավոր ձեռքեր էին ավելանում իր ուժերին:

«Չէ՛, կարելի է աշխատել այսպիսի ընկերների հետ, կարելի է աշխատել անձնվեր, ամբողջ էռթյամբ լծվել ու ցիալիստական շինարարության...»

Ու պորտֆելը վերցնելով, նա շատապ քայլերով դիմեց դեպի դրասենյակը:

XI

Աշխենը վերադարձավ քաղաք բեկված սրտով. նա հազիվ էր կարողանում թաքցնել իր տիրությունը, իսկ երբ ընկերությն հարցնում էր, թե ինչո՞ւ է տիրում, նա պատասխանում էր.

— Գլուխս ցավում է, երեխ մըսել եմ:

Միայնակ ժամերին նա անձնատուր էր լինում իր ապրումներին: Նա չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, թե այն Արմենը, որն այնպես մոտ էր իրեն, այժմ սիրում է մի ուրիշին: (Նա հավատացած էր, որ նա սիրում է Լիդային):

Ճիշտ է, ուսանող ժամանակ նրանք մեծ նշանակություն չեն տալիս իրենց կապին, խաղ էին համարում, բայց այժմ, երբ Արմենն արդեն «ինժեներ Սարյան է», Աշխենի մեջ մեծ ցանկություն կար նրա հետ ամուսնանալու: Իր ընկերութիւն, որը ամուսնացել էր ինժեների հետ, միշտ պիտում էր համոզված տոնով.

— Ախչի՛, խելքի՛ արի, ձեռիդ ընկածին բաց մի թողնիլ, եղ սուս բան է, թե մենք՝ կանայք կարող ենք առաջ գնալ առանց տղամարդկանց. կատվի վաղելը մինչև մարագն է, ինչո՞ կարերան հաջող ամուսնությունն է...

Համարականն ավարտել հաջողվեց՝ ընտանեկան հանգամանքների շնորհիվ. այժմ էլ ինչո՞ր հիմնարկում «բյուրուկատություն է անում» (նա հիշում է Արմենի հեգող խոսքերը իր աշխատանքի մասին):

Նա ինքն էլ զգում էր, որ թեազուրկ է եղել. ինչո՞ր հոգնածություն է եկել վրան. ընկել է մի փոքրիկ շրջան, որը նրան հետզետե ավելի ցած է տանում. իսկ մայրն իր հին կարգով հիշեցնում է ամուսնության մասին...

Այդպիսի պայմաններում Գետաշենը դարձել էր նրա տենչերի կենտրոնը, «իրկության» վայրը. պետք է ամուսնանալ Արմենի հետ, դիրք ստեղծել. «կնոջ կարերան հաջող ամուսնությունն է, իսկ Արմենը հաջող փեսացու է...»

Եվ այժմ այդ հույսն էլ է մարում: Արմենը գնում է ձեռքից... Ստեղ-ստեղ նա բոնկվում է վրեժով, որը քանի գնում ավելի էր ծավալվում մեջք: «Ես չե՞մ թույլ տա այն լրին, որ տիրի իմ Արմենին»—ասում էր նա ու երեմն ինքնամուռացության մեջ բոռնցքով խփում սեղանին: Մայրը նկատում էր այդ ու մոտավորապես գլխի ընկնում, որ «բանը վատ է», բայց որքան աշխատում էր խոսք դուրս քաշել, չէր հաջող մոս:

Մի շաբաթից հետո, երբ Աշխենն ուշքի եկավ, նրա մեջ վրեժի մի ծրագիր ծագեց: Նա արդեն Գետաշենում մի քանի շշուկներ էր լսել լիդայի մասին, թե Թառյանը նրան երես է առաջնորդել կամ ապրում է հետը: Նույնիսկ ընդունելով, որ

այդ բոլորը ճիշտ է, Աշխենը դարձյալ վտանգը տեսնում էր Սրմենի կողմից, որովհետև նա ազատ էր, ամուսնացած չէր: Թառյանին ի՞նչ,—նա կարող էր սիրուժիներ պահել ու թողնել, իսկ Արմենն ուղղակի ընդմիշտ կընկնի նրա ճանկը...

Եվ ահա նա մտածեց վրեժը հանել կիդայից ուրիշ միջոցով,—նա վճռեց գնալ ինժեներ Թառյանի կնոջ մոտ, նրա ականջը ձգել կիդայի և Թառյանի հարաբերությունների մասին և նրա ձեռքով հեռացնել ասպարեզից կիդային:

Նա ծանոթ էր տիկնոջը, երկու անդամ հանգիպել էր նրան իր ընկերուժիներից մեկի ընտանիքում, բայց իհարկե, այդ ծանոթությունը հեռավոր էր:

Սկզբում նա վճռեց նամակ գրել, բայց վերջը մտածեց, որ նամակին կարող են չհավատալ, դեն շպրտել, իսկ իրեն կհամարան:

Նա հագավ իր նոր՝ կանաչավուն զգեստը, երկար պտտվեց հայելու առաջ, շպարվեց, շրթունքները կարմիր ներկեց, ապա վերջապես դուրս եկավ խոշոր ոեղիկովք ձեռքին:

Բուրժուական ընտանիք է, պետք է կարգին հագնված դնալ,—մտածում էր նա, ենթադրելով, թե ինքը ճիշտ որ կարգին է հագնվել:

Նա անցավ իրենց նեղ, փոշոտ փողոցով, ու մի քանի պտույտներից հետո դուրս եկավ քաղաքի կենտրոնական փողոցը:

Նա կանգ առավ շքամուտքի առաջ ու մի բոպե տատանվեց, ապա դանգահարեց, ոեղմելով փոքրիկ կոճակը: Դուրք բացեց ոռու սպասավորուժին, ձեռքերը վեր քաշած:

— Տանն է,—հարցրեց Աշխենը:

— Տանն է,—պատասխանեց սպասավորուժին ու ավելացրեց—իսկույն:

Նա գնաց իմաց տալու տիկին Թառյանին, թողնելով Աշխենին նախասենյակում:

Ներսից պիանոյի ախորժելի ձայնն էր հնչում: Քիչ անց

սպասավորուհին նորից եկավ ոտները քաշ տալով իր լոյն
առաջիների մեջ, ու ասաց ավելի բարյացակամ տոնով.

— Համեցե՛ք:

Երկրորդ սենյակից դուրս եկավ տիկինը, մի սուզ՝ կա-
նացի կատածոտ հայացքով շափեց Աշխենին ոտից գլուխ ու
սառը քաղաքավարությամբ հրավիրեց ներս:

— Նստեցե՛ք խնդրեմ, և խոկուզ...

Ու նորից մտավ երկրորդ սենյակը: Այնտեղ փոքրիկ
տղան չարություն էր անում, պիանոյի ստեղնաշարին բառնց-
քով խփելով: Տիկինը բարկացավ վրան, ու մի մելոդիկ կտոր
նվազելով, փակեց պիանոն, ապա ինչոր կարգադրեց սպա-
սավորուհուն:

Մնալով մենակ, Աշխենն սկսեց մանրամասն դիմել
չորս կողմբ:

Նրան դուր էր գալիս սենյակի արդուզարդը. նրա մեջ
ինչ-որ հին, բուրժուական ոճ կար. կարծես մի թանգարան
լիներ, անշարժ ու լուս: Պատերին հին նկարներ, որոնց մեջ
էր Բյոկինի «Մեռած կղզին». Նուրբ բամբուկե դարակներ,
որոնց վրա դարսած էին զանազան գեղեցիկ իրեր. կային
փոքրիկ՝ զարդանկար կտորներով ծածկված շիրմաներ: Մյուս
սենյակի դռնից երկում էին հին ձեւի մահճակալներ,—բարձր
վանդակներով, փալուն մետաղից շինված գլխիկներով:

Հին ոճավոր պահարանը լիքն էր գեղեցիկ կազմով գըր-
քերով. երկում էր, նրանց փոշին խնամքով սրբվում էր,
բայց գրքերը վաղուց է, չին կարդացվում, այնպես լուվ-
իրար կողքի հարմար կարգով էին նրանք դասավորված:
Առաստաղից ներքեւ էին նայում շքեղ լուսարերը, զույնզույն
հոգունքածե ապակե թելերով:

Աշխենը նայում էր, հիանում, բայց նրա ներսը հետզե-
տե աճում էր զախը, իսկ երբ տիկին թառյանը նորից ներս
մտավ, նա հանկարծ ահով բռնվեց. նա սարսափեց իր մտա-
դրությունից—ինչպե՞ս թե ինքը եկել է տիկինոջը պատճեւու
նրա ամուսնու «դավաճանության» մասին...

Վերջապես տիկինը ներս եկավ՝ հագուստը փոխած, նըս-

տեց Աշխենի դիմաց, ինքնահավան, վերևից նայող կնոջ հայացք ձգելով նրա վրա։ Աշխենին սպասել տալն էլ որոշ ձեւ էր՝ նրան փոքր ինչ նվաստացնելու համար։

— Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել, — հարցրեց նա։

— Տիկին, ես ուզում էի ձեզ հետ խոսել մի կարևոր հարցի մասին... Ես նոր եմ եկել Գետաշենից...

Մի անհանգիստ ցնցում անցավ տիկին Սոֆյայի մեջ. նա զգաց, որ ինչ-որ անախորժ բան է հաղորդելու Աշխենը։ Բայց ինքն իրեն զսպելով հարցրեց։

— Գետաշենից ։ Դուք այնտեղ եք աշխատում։

— Ո՛չ, ես էքսկուրսիա էի զնացել. այնտեղ մի ընկերուհի ունեմ, — ասաց Աշխենը՝ կարմրելով։

— Այդպես... եվ ի՞նչ, այնտեղ երկա՞ր մնացիք, — հարցնում էր տիկինը, կարծես աշխատելով հեռացնել անախորժ լուրը։

— Ո՛չ, միայն մի օր։

— Հետաքրքի՞ր էր այնտեղ։

— Այո՛, բավական հետաքրքիր...

— Նոր մարդիկ կա՞յլին։

— Այո, մուաստանից եկած մի օրիորդ կար...

Սոֆյայի սիրող ճմլվեց. նա հիշեց մի շաբաթ առաջ լսած լուրն իր մի ծանոթ տիկնոջից, որը խայթեց իրեն ակնարկելով այդ աղջկա մասին։

— Նա այնտեղ պաշտոն ունի՞։

— Նա և՛ ժուրնալիստ է, և՛ իրեն այնպես է զգում, կարծես իրեն տանը լինի... ասում են ձեր ամուսինն թե է տալիս նրան...։

Սոֆյայի ինքնասիրությունը ոտքի կանգնեց, նա կուգեր ասել այդ բոպեին, — «ո՛չ, սուտ է», բայց նա ցանկանում էր էլի տեղեկություններ իմանալ, ուստի զսպեց իրեն։

— Այսինքն ի՞նչպես է թե տալիս... Օրինակ, ի՞նչ է անում...։

— Նրանք թույլ է տալիս ազատ ամեն դործի մեջ խառնութելու...։

— Հետո՞,—անհամբեր հարցրեց տիկինը:

— Հետո ասում են, որ ձեր ամուսնու և նրա մեջ կապ կլա...

Տիկին Սոֆյան կարծես մի սուր ծակոց դգաց. քիչ էր մնում ճշա Աշխենի վրա, բայց նորից իրեն զսպեց, ու կեղծ հանգիստ տոնով հարցրեց.

— Հետո՞...

Աշխենին թվում էր, թե դրանով կվերջանա իր ասելիքը, բայց այժմ նեղն ընկնելով, նա շարունակեց հնարելը.

— Այսպիսի լուրեր էին, թե այն ուսւ աղջիկը և ձեր ամուսինը տեսնվում են իրար հետ գիշերները...

— Իոկ այդ լուրերին դուք հավատո՞ւմ եք:

— Այո, որովհետեւ պատմողն իմ ընկերուհին է. նա էլ տեսնողներից էր լսել...

— Ուրիշ բան չունե՞ք ասելու...

— Ոչ, բոլորն ասացի. ես ուզում էի ձեր ուշադրությունը դարձնել...

Սոֆյայի զլուխն սկսեց պատվել—սենյակի պատերը շարժվում էին, բայց նա ատամներն իրար սեղմելով կովոմ էր իր թուլության դեմ: Նա փոքր ինչ լսելուց հետո ասաց.

— Ծնորհակալ եմ ձեր տեղեկությունների համար, դուք ինձ, իհա՛րիկե, ուզում եք լավություն անել. բայց մի հարց էլ կտամ ձեզ՝ ասացեք, արդյոք մի ուրիշ պատճառ չկա՞՝, որ ձեզ ստիպեց ինձ մոտ գալու... Խնդրեմ անկեղծ ասեք:

Աշխենը զինաթափ եղավ, ու Սոֆյայի հայացքից խուսափելով զլուխը կախեց. նրան թվում էր թե Սոֆյան դիտի ամեն ինչ:

Բայց նա ոչինչ շասաց իր և Արմենի միջև եղած կապի մասին:

Տիկին Սոֆյան բոպեաշափ սպասելով, համոզվեց, որ ամեն ինչ դուրս քաշեց Աշխենից ու դեմքին ու ձայնին կեղծ անտարբերություն տալով ասաց.

— Հասկանալի է. դուք կարող եք անհոգ լինել. այդ բոլորը թշնամիների բամբասանք է, որը հավատացած եմ՝ ձեզ

էլ դուք տեղը վրդովի է: Ես շատ լավ եմ հանացում իմ ամուսնուն և չեմ կարող թույլ տալ կարծելու, որ նա թեկուզ մի բռպեով ենթարկվի զանազան ավանտյուրիստ կանանց... Համենայն դեպս շնորհակալ եմ ձեղանից...

Աշխենն ընկճվեց. նրան թվում էր, թե մեծ իրարանցում կառաջացնի տիկնոց մեջ, բայց այժմ տիկինը շեշտակի նայում էր, քննող վարժուհու նման, իսկ ինքը նմանում էր քըն-նությունից ձնշված աշակերտուհու:

Նա դեր կացավ տեղից ու շնչաց ընկճված ձայնով:

— Յտեսություն:

— Յտեսություն, ուրեմն դուք հիմա հասկացա՞ք, թե որտեղից են դալիս այդ կեղաստ բամբասանքները,—ասաց տիկինը,—եթե դուք ուզում եք լավություն անել, կինզգիկ ձեզ, միայն, որ այս բոլոր խոսակցությունը մեր մեջ մնա, թեպետ իհարկե, ես շատ շնչին ուշադրություն եմ դարձնում դրա վրա...

Աշխենը դուքս եկավ փողոց ու ձնշված կրծքին ազատ շունչ ավեց. նա կարծես փշերի վրա էր նստած, ու ոչ թե դնացել էր մի բան տակլու, այլ իրեն ստիպմամբ բերել էին հարցաքննության: Նա զժգոհ էր, ու կարծես փոշմանում էր,—«ստեցի, բամբասնցի, ստորություն արի, և ի՞նչ,—փախանակ նրան ընկճելու, ես ինքս ընկճեցի... կամ դուցե կեղծում է այդ կինը, համենայն դեպս ես կուզեի նրա նման լինել...»

Իսկ տիկին Սոֆյան, Հենց որ Աշխենը դուքս դնաց, մի քանի բոսկե երկու ձեռքով բռնեց իր գլուխու, կարծես իրեն հաջիվ տալու համար, թե ի՞նչ է կատարվել. ապա երկար լարումից ուժասպառ լինելով, նա ընկավ դիվանի վրա ու կսեց զղաձորեն հեկեկալ:

Մի միտքը կարծես շնչում էր նրա ականջին «կործանվում է, կործանվում է քո ընտանեական աշխարհը...».

Սպասավորուհին դավթի դռնով ներս եկավ, զամբյուրը լցրած մթերքներով ու մնաց ապշած. տեսավ կրակի վրա դրած կաթը բարձրացել է, թափվել, իսկ տիրուշին պառկած էր դիվանի վրա անհարմար դիրքով և հեծկլտում է...

Ավտոն սլանում էր խճուղով, հետեից թողնելով փոշու ամպը, դաշտերն ու բլուրները ու քանի արագ էր գնում, աչնքան ավելի էր թիթեացնում աիկին Սոֆյայի տրամադրությունը, կարծես սեղմելով նրա մոռալ մտքերը։ Մի շաբաթ է անցել, նա շատ է մտածել, տանջվել և այժմ վճռել է գնալ «այնտեղ» և անձամբ ստուգել։ Նա ինքն իրենից զարմանում էր. դեռ մի ամիս առաջ նա կարծես հեշտ էր վճռում «անկախ աշխատելու», թեկուղ ամուսնուց բաժանվելու հարցը, իսկ այդմ այդ բոլորը շքացել էր, և մեջը ծառացել մի հզոր տենչ՝ պաշտպանել ամեն կերպ իր բերդը՝ իր «կարգին ընտանիքը»։ Ո՛չ, նա լույս անդամ չի ուզում բաժանվելու մասին, նա ամեն ինչ կործադրի, միայն թե ազատի իր ամուսնուն այդ «ավանդուրիստկայի» ձեռքից…

Սլացող ավտոն կարծես ձայնակցում էր նրան, ուժ էր տալիս՝ իր ախոյանի դեմ կալելու համար։

Նրա կողքին նստած էր մի գեր մարմնով տնտեսվար՝ ինչոր հիմնարկի տնտեսական բաժնի վարիչ. նա երբեմն փորձում էր խոսել տիկնոջ հետ, բայց վերջինս հաղիկ էր լսում նրան, պատասխանում էր շոր ու ցամաք «այս» կամ «ոչ»։

Բայց ահա ավտոն դանդաղում է ընթացքը. տնտեսվարը իր կենսուրախ փրկած երեսը գարձնելով դեպի տիկինք, կարծես ասում է — «ոչինչ, ամեն բան կդրստվի, ինչպիս միշտ դրստվում են մեր դործերը...» Նա երկարացնում էր իր խոսքը՝ ըստ երեսվթին ուզում էր սիրաբանել, բայց տիկինը, քաղաքավարի կերպով մի երկու բառով պատասխանում էր, ու անձնատուր լինում իր մտքերին։

Եխոկ եթե այս բոլորն ապարդյուն անցնի, — մտածում էր աիկինը. — ի՞նչ կարող ես կու անել, երբ մի փոքրիկ հայտաբարություն զակսին բավական է, որ օդը ցնդի քո ամուսնական ամուր բերդը... և դրա դեմ ո՛չինչ ոչինչ չի օքնի... Կըսա կողքին նստած է մի տղամարդ՝ իր Արտյուշի նման

ընտանիքի տեր. ահա նա ձգում է սիրաբանել իր հետ, ու եթե ինքն էլ արձագանք տա, նա կարող է տարվել, և ո՞վ պիտե, գուցե հենց ճանապարհին էլ վճռի նրա ընտանիքի բախտը... Այսպես են տղամարդիկ... իսկ մենք էլ նույն խմորից ենք..

— Ի՞նչու եք այդպես տխուր,—շարունակում է անտեսմարը.—այս գեղեցիկ բնության մեջ չպետք է տիրել... Ես անավանդ ձեզ նման հետաքրքիր կինը...

— Ո՛չ, ես չեմ տիրում. փոքր ինչ տկար եմ, ուրիշ ոչինչ:

Տնտեսվարը պատմում է իրեն անցյալ ճամփորդությունից. տիկինը հազիվ է լսում նրան, տարված իր մտքերուն:

Նա հիշեց Արտյուշի վերջին նամակը,—այն ճգնաժամը, որի մասին նա դրում էր, գուցե հենց այդ սիրային պատմության շուրջն է, և ոչ թե իր զործունեության խնդիրների շուրջը... է՛շ, շարժե մտածել. ինչ ուզում է թող լինի. Հարցուկապոր ամուսիններ բաժանվում են իրարից, մեկն էլ մենք էլինք...

Տնտեսվարը ոգևորվում է, ձայնը բարձրացնում, տիկինը գեմքը խոժողում է, ապա ճարպկորեն խոսակցության մեջ է ձգում, որ իր ամուսինը «Գետաշենի» ինժեներ Թաոյանն է՝ տնտեսվարին հասկացնելու համար, թե ով է ինքը: Եվ տընտեսվարն ասում է՝ «Ճանաշում եմ ձեր ամուսնուն» և այնուհետև քաշվելով այդ անունից, մեղմացնում է իր ձայնը և իր սիրաբանությունը, մտքումն ափսոսելով:

Տիկինն սկսում է դիտել տնտեսվարին. նա հաստափոր է, տեղ շատ է գրավում և հաճախ գիպչում է իրեն, բերանից էլ կոնյակի հոտ է փշում... «Երեկի երկու կին է պահում, և իր հիմնարկի ու իր ընտանիքի հաշիվներն իրար է խատնում...»

Նա համեմառում էր տնտեսվարին Արտյուշի հետ. իշա՞րկե, նա ուրիշ է, այս նորելուկ Սանխո-Պանսոյի նման չի... նա գժվար թե այսպիսի թերին քայլեր անի, սիրաբանությամբ զբաղվի... չէ՛, նա բարձր է այդ բոլորից... Երեկի նա արդեն ստացած կլինի իր հեռագիրը և կհան-

ովալի իրեն... թե՝ գուցե սառնություն է տիրել նրան ու իրեն սպասում է մի անակնկալ...

Ավտոն սլանում է, արագ պտտում Սոֆիայի մտքերը. լարված ժամացուցի նման անընդհատ մտածում է, ինչն իրեն մաշում...

Նախավերջին կայարանում, երբ ավտոն կանգնել էր ինչ-որ նորոգելու համար, հանկարծ դիմացից լովեց մոտեցող ավտոյի թափ ձայնը ու շանցած մի բոպե՛ կանգնեց կայարանում: Սոֆյան նկատեց իր Արայուշին ու ժամանով դլովս շարժեց, պատասխանելով նրա ողջույնին: Թարգանն արագ իշավ ավտոյից ու մոտ գնալով, համբուրվեց կնոջ հետ:

— Է՞ ո՞նց է, եկար,— Հարցրեց նա:

— Դե դու չես գալիս, մոռացել ես մեզ, գոնք ես պամ...

— Է՛հ, գործերն օր-օրի վրա շատանում են, հնար չկապոկվելու...

Մի քանի բոպեից հետո նրանք նստեցին ավտոն ու սկայան դեպի «Գետաշեն»:

Սոֆյան, մոռանալով իր սրտմաշուկ մտքերն, այժմ նստած «իր ամուանու մոտ, երջանիկ սլանում էր, չնկատելով նույնիսկ շրջակա գեղեցիկ բնությունը: Նրանք խոսում էին ընտանեկան մտերմությամբ, իրար հաղորդելով զգացումներ, որոնք սովոր ճամփաներով թովում էին ներսը: Տիկինը խոսում էր երեխաների մասին, պատմում նրանց շարությունների մասին, հավատացնում, որ շատ մեծացել ու փոխվել են... Եղ Արայուշն էլ արձագանքում էր նոր հարցերով:

«Զէ՛, ամուր է մեր ընտանեկան բերդը», մտածում էր Սոֆյան, խոսակցության ժամանակ գաղտադողի դիտելով ամուանուն ու ոչ մի փոփոխություն չգտնելով նրա արտահայտության; Նրա վերաբերմունքի մեջ:

...Երջանիկ է տիկինն Սոֆյան՝ նրա կյանքում ոշինչ չի փոխվել...

«Ամուր է բերդը», — շարունակ պտտվում էր նրա մըտքում մինչև Գետաշենը:

Տիկին Սոֆյան մի քանի ժամ ինքնամուացության մեջ էր, կարծես ոչ մի ամպ չէր երևացել իր կյանքի հորիղոնում. նույն Արտյուշն էր, փոքր ինչ ավելի մտազբաղ, ավելի շատ էր խոսում գործերից, բայց դա բնական էր. չէ՝ որ նա ծանրաբեռնված էր հազար ու մի հոգսերով...

Նրանք նախաճաշեցին միասին. տիկինն ուստում էր խորշելով սպասավորուհու պատրաստած հասարակ նախաճաշից ու թեթև զրուցում: Բայց ահա թառյանը վերցրեց պորտֆելն ու ասաց...

— Սոֆյա, ես ուշանում եմ, պիտի գնամ գործի, իսկ դու զբաղվիր որևէ բանով...

Սոֆյան մնաց մենակ ու սկսեց աշք ածել սենյակը: Նրան զարմացնում էր այս ամուրուն հատուկ փնթիռվյունը, որը նա նկատում էր իր շորս կողմը:

Նախ նա թեթև խուզարկեց սենյակները. փոքրիկ սեղանի զրու զրած էին երկու հախճապակե թասեր. նա խկույն մտածեց—ինչո՞ւ երկու, և ոչ մեկը. իհարկե, մեկը նրա համար է... ինչ-որ վեպ է զրած գրասեղանի վրա, վրան խորշը դափակոր աշքերով մի կին է նկարած, իսկ գրքի լուսանցքում ինչ-որ գծեր են քաշած մատիտով, տեղ-տեղ էլ բացագանձական նշաններ... Երեխ սա նրա տվածն է, սիրային վեպ է... բայց ամենից շատ նրան գրգռում էր վուալե շալը, որն այժմ ձգած էր աթոսի վրա. թեպետ Արտյուշն ասաց, թե դա իրեն՝ Սոֆյայի համար է, բայց ո՞վ գիտե, գուցե նա հիմա է այդպես ասում, իսկ եթե ինքը չդար Դետաշեն, կձգեր նրա վզովը...

Այսպիսի կասկածները հատիկ-հատիկ ընկնում էին նրա մեջ ու թունավորում, բեկում տրամադրությունը: Մոտ մի ժամ կարգի բերելով, կամ ավելի ճիշտ՝ խուզարկելով սենյակը, նայելով թղթերին, մանավանդ նամակներին, նա վերջապես սթափվեց, երբ սպասավորուհին դուռը բաց արակ ու ներս նայեց:

— Սենյակը շմաքրե՞մ:

— Հա, ա՞րի մաքրի:

Մինչև Եվլիկը մաքրում էր, տիկինը մտածում էր, թե
ի՞նչպես անի, որ «տեղեկություններ» գուրս քաշի նրանից
«այն աղջկա» մասին: Նա տատանվում էր, ինքնասիրությունը
չէր թույլ տալիս ստորանալ սպասավորությունը առաջ, բայց
քանի անցնում էին րոպեները, նա ավելի ու ավելի զգում էր,
որ չի կարող համբերել:

Նա սկսեց օգնել Եվլիկին. սրբում էր փոշին, տեղավորում
գրքերն ու թղթերը և մտածում, թե ի՞նչ ձևով սկսի:

Նա սպասեց, մինչև Եվլիկը գործը վերջացրեց ու հանելով
ոճդիկովից մի երեքանոց թղթադրամ, մեկնեց նրան, ասե-
լով.

— Եվլիկ, լավ ես աշխատում, էս վերցրու, երեխաներիդ
համար պետք կդա... բայց լավ կանես, մեկ էլ սրբես փոշին:

— Շնորհակալ եմ,—ասաց Եվլիկն իր փեշի խոր գրպա-
նը ձգելով թղթադրամը:

— Քանի՞ ժամանակ է աշխատում ես, Եվլիկ:

— Մեկ տարի, խինդ ամիս:

— Էստեղ ծառայող կանայք կա՞ն:

— Ինչի՞ չէ, կան:

— Ես էլ պետք է ծառայեմ, լա՞վ է այստեղ:

— Ի՞նչի չէ:

— Էստեղ ոռու կանայք կա՞ն:

— Կան, մի քիչ էլ էտոնցից կան:

— Ռուսաստանից նոր եկած կա՞ն:

— Հա, մի աղջիկ կա...

— Ո՞րտեղ է ապրում:

— Ա՞յ էս դիմացի տան... սիրուն է...

«Դիմացի տանը», «սիրուն է»—ընկնում են Սոֆյայի
ականջն ու ցնցում—«պարզ է,—մտածում է նա—Արտյուշն
իր հարմարության համար է բնակեցրել նրան իր դիմաց...»

Սոֆյան հուզմունքից ձեռքին բռնած ուղանկյուն թա-
նաքամանը սիսալմամբ կողքի վրա է զնում սեղանին ու

թափում միջից թանաքը: Նրանք երկուառվ մաքրում են սեղանը:

— Ո՞րտեղ է ծառայում այդ աղջիկը, — հարցրեց Սոֆյան կեղծ հանգստությամբ:

— Եսի՞մ, — պատասխանեց եվիկը, արդեն զգալով, որ տիկինը ոչ թե զրուցում է իր հետ, այլ հարց ու փորձ է անում: Նա վիրավորվեց: «Ի՞նչ, կկաշափի՝ ինձ...» անցավ նրա մտքով:

— Նա էստեղ եղել է, — հարցրեց Սոֆյան:

Եվիկը նեղացավ, լսելու տվեց, սկսեց արագ-արագ մաքրել գրադարակի փոշին: Նա մեկ վճռեց շպրտել փողն ու կուրս գնալ, բայց հետո մտածեց, որ բանը կարող է հասնել Թառյանի ականջը, նեղացնել նրան, իսկ դեպի Թառյանը որպես գիտուն մարդու, նա մի տարօրինակ պատկառանք էր զգում:

Տիկին Սոֆյան ինքն իրեն խղճաց, — «արդյոք ես մի մուրացկանուհի չե՞մ, որ տեղեկություններ եմ մուլում ինչ-որ եվիկից», — մտածում էր նա:

Բայց խանդը կրծում է նրան: Փոքր ինչ միջոց տալով, նա նորից սկսեց հարցեր առաջարկել: Եվիկը համառորեն պատասխանում էր «Եսի՞մ», չմգի՞նա», սակայն երբ տիկինը լռեց, եվիկի մեջ խաղաց ինչ-որ կանացի հետաքրքրություն ու ցածր ձայնով ասաց.

— Կան էդ աղջիկը լավ շրից չե...

— Նա էստեղ եղել է, — նորից հարցրեց տիկինը:

— Հա՛, երկու անգամ եղել է տղերանց հետ...

«Պարզ է, պարզ է», — մտածում էր տիկինը, տխուր, օտարոտի նայելով սենյակի իրերին: Եվիկի խորամանկ հայացքից նա զգաց, որ նա էլ է գլխի ընկնում, թե ի՞նչու է ինչը հարց ու փորձ անում ու այդ գիտակցությունը ստիպեց նրան դադարեցնել հարցերը:

— Լա՛վ, Եվիկ, բավական է, շնորհակալ եմ, — ասաց նա, — միշտ էդպես մաքուր կպահես սենյակը:

— Միշտ կսրբեմ, բայ կթողնա՞մ,—ասաց Ելիկը դուրս գալով:

XXV

Սոֆյան ընկավ աթոռին ու կողքանց հենվելով նրա մեջքին, ավելի տխրեց ու ընկճվեց: «Ի՞նչու եմ եկել այստեղ, մտածում էր նա,—որպեսզի ստորանամ սպասավորութու առաջ, իսկ հետո էլ ծաղրի առարկա դառնամ այն աղջկա բերանո՞ւմ... ավելորդ էր, ավելորդ էր իմ գալը...»

Նա վեր կացավ, մոտեցավ սեղանին ու նկատելով հաւա-լին, մոտ քաշեց, ու տեսնելով իր վհատ դեմքը, սթափվեց. իսկույն Հարդարեց դեմքն ու հանելով չեմողանից իր բերած կոստյումը, սկսեց Հագնվել: Խնամքով կարգի բերելով իր արտաքինը, շպարմելով, նա փոքր ինչ սիրտ առավ, ու վըճ-ռեց այցելության գնալ մի ինժեների կնոջ մոտ, որն այնտեղ էր ապրում:

Նա դուրս եկավ, ձեռքին բանած բարակ, գեղեցիկ ձեռ-նափայտը, բայց հազիվ մի քանի քայլ արած, միտքը փոխեց ու գնաց դեպի դրասենյակը, ուզեց տեսնել, «ստուգել» Ար-տյաջին:

Նա անցնում էր ընդարձակ շենքերի միջով: Չորս կողմն՝ անընդհատ շարժում էր.—գնում-գալիս էին շինանյութերով բարձած բեռնակիր ավտոներ, ֆուրգոններ ու սալլեր. զիշ ձշում էր ավտոն, ճանապարհ էր պահանջում տիկին Սոֆյայից. ինչ-որ մեքենա ականջ ծակող ձշոցով տախտակներ էր սպազում. խոմբ-խոմբ գնում-գալիս էին բանվորներ, տես-նիկներ, ամեն տեսակի մարդիկ. մի եռուն կյանք էր այնտեղ, բայց օտարութի էր իրեն, և որ գլխավորն է՝ ինքն իրեն զգում էր փոքր ու չնշին իր բոլոր հարցերով, զգում էր ավելորդ այս ժխորի մեջ...

Հարցնելով իր ամուսնու տեղը, նա բարձրացավ երկրորդ հարկը. այստեղ միջանցքում խմբված էին մարդիկ. դիմացի բաց դռնից երեսում էր գծագրանոցը, որտեղ մեծ սեղանների

վրա աշխատում էին տեխնիկները: Անցնելիս կասկածով հայացք ձգելով դեպի մեքենաբուհիների սենյակը, տիկին Սոֆյան մոտեցավ իր ամուսնու առանձնասենյակին. այնտեղ երեք մարդ կանգնած սպասում էին: Սպասավորը, հասակավոր, փոքր ինչ ալեխտոն մի մարդ, որը կարծես ամառամբու միշտ մըսում էր ու կծկվում, հարցրեց նրան.

— Դուք ո՞ւմ եք ուզում:

— Ենթեներ Թառյանին:

— Զբաղված է, պետք է սպասեք:

Այդ պատասխանը կոպիտ հարվածի նման 22մեցրեց Սոֆյային, կարծես սպասավորը դիտմամբ ուզում էր վիրավորել իրեն:

— Սուե՛ք, որ իր կինը եկել է, ուզում է տեսնել, — առաջնա ցածր ձայնով:

Սպասավորը ներս մտավ ու քիչ անց բացեց դուռը հրաժիրելով տիկնոջը: Առանձնասենյակում երեք ինժեներներ նստած ծխախոտի թանձր ծխի մեջ տաք վեճերի մեջ, քննում էին մի խոշոր շենքի երկաթի մասերի փոփոխման հարցը՝ առջեները դրած մի քանի կապույտ դժադիր: Փոփոխման հարցն առաջ էր գալիս այն հանգամանքից, որ ստացած երկաթիղենը չէր համապատասխանում պահանջած չափերին:

Նկատելով իր կնոջը, Թառյանը գործնական ժամկանվ ողջունեց ու ձեռքով ցուց տալով աթոռը, առաջարկեց նստել: Այդ ել վիրավորեց Սոֆյային, այդ ել թվաց անուշադրություն դեպի ինքը: Մի քանի բոլե նա նստած էր գրգռված դրության մեջ. — «այսուեղ ես ավելորդ եմ» — անցավ նրա մոքով:

Բայց ահա Թառյանը եղրակացրեց.

— Ուրիմն հարցն այս ձեռվ է անցնում... Համաձայն

Է՞ք...

Ու նա նկարեց իր բլոկնոտի վրա ու հանձնեց իր կողքին նստած քարտուղարին:

Բոլորը թեթևացած սկսեցին առատ ծխել:

Թառյանը նայեց կնոջն ու նկատելով նրա դժգոհ գեմքը, առաջարկեց ինժեներներին.

— Խնդրեմ ծանոթանաք կնոցս Հետ...

Նրանք սիրալիք բարեկեցին տիկին Սոֆյային, ապա մի երկու բոպեից Հետո վեր կացան՝ գնալու համար, բայց ոտի վրա սկսեցին նորից խոսել ինչ-որ մոռացված Հարցի մասին:

Այդ ժամանակ գուոք բացվեց և ներս մտավ Լիդան՝ տուլյդ, տաքացած ղեմքով, արագ շնչելով, կարծես վազելով էր եկել: Նա բարեկեց բոլորին ձեռք տալով, բացի տիկնուցից ու նստեց իրեն առաջարկած աթոռին, սեղանի վրա ղնեխով ձեռքի ժուռնալը:

Սոֆյան Լիդայի ներս մտնելուն պես ասաց մտքում — «սա նա է» ու մի ակնարկով զգաց, որ նրա մեջ կա մի քանի, որն ինքը չունի, զգաց, որ նա իրենից լավ է, և այդ զգացումը բոպեապես թեազուրկ արագ նրան: Արտաքուստ նա ղեմքին տվեց անտարբեր, նույնիսկ արհամարհող արտահայտություն, բայց ներքուստ նա ընկճվում էր:

Աչքի տակով գաղտապողի նա զիտում էր Լիդային ստից զլուխ, որսում էր ամեն մի չնշին թերություն նրա արտաքինի մեջ, բայց սրտի խորքում զգում էր, որ Լիդան այն կանանցից է, որոնց նա անվանում էր «երջանիկ բնավորություններ», այդ տեսակ բնավորությունների համար կյանքն անընդհատ հաղթությունների մի շարք է. ահա այժմ էլ նրան բնդունեցին մեծ ուշագրությամբ ու աշքերը շեն հեռացնում նրանից: Մի հափշտակող առաջինազգում կա այդ առջևկա մեջ՝ արտաքին ու ներքին մի գրավչություն, որը սովորական չէ: Նա համեստ է հագնված, բայց կա մի գեղեցկություն, որը ծածկում է ամեն ինչ: Այդ գիտակցությունից Սոֆյան տվելի էր ատում նրան մի ատելությամբ, որը հետզհետե ավելի էր բռնկվում:

Ինժեներները զուրս եկան, ղեմքերի վրա տանելով քողարկված ակնարկով ժպիս: Դուրս գալով, ինժեներ Վարդանյանն ասաց Սարգսյանին:

— Կավ տեսարան է, չէ՞ — թող մի քիչ կրծեն իրար:

— Ի՞նչպես. ուրեմն դու համոզված ես, որ մեջը մի բան
կա...»

— Իշա'րիե կա, դու կասկածո՞ւմ ես:

Բնժեներ Սարգսյանն ուսերը վեր քաշեց:

Լիդան տվեց Թառյանին հետը բերած ժունալը:

— Ելի բան եք գրե՞լ, — հարցրեց Թառյանը, թերթելով, —
հետաքրքիր վերնադիր է՝ «կառուցվող շենքեր և կառուցվող
մարդիկ...» Այո՛, հասկանալի է... սա ձեր անցյալ անգամվա
խոսակցության զարգացո՞ւմն է:

— Այո՛, կարելի է ասել նրա մարմնացումն է. դժբախ-
տաբար մարդկանց «կառուցվոմը» դեռևս առաջնակարգ խըն-
դիր չէ այստեղ...

— Շուտով դա էլ կլինի, — ասաց Թառյանը, նայելով
ժունալում հարվածայինների պատկերներին: Նայում էր ու
մտածում, ծանոթացնի՝ արդյոք Սոֆյայի հետ Լիդային թե
չէ: Նա տատանվում էր, որովհետեւ շդիտեր, թե ի՞նչպես կըն-
դունի այդ Սոֆյան:

— Ես կարող եմ ձեզ մոտ թողնել ժունալը. Երկու հատ
ունեմ...

«Ի՞նչ մտերմություն, — մտածեց Սոֆյան, — այն էլ իմ
ներկայությամբ»:

Թառյանն աշքի տակով մի հայացք ձգեց Սոֆյայի վրա
ու զպաց նրա լարված դրությունը. նա ասաց Լիդային պաշ-
տոնական տոնով.

— Ի՞նչով կարող եմ այսօր ձեզ օգտակար լինել:

— Ես եկել եմ խոսելու հարվածայինների մասին, նրանց
տեխնիկական սպասարկումը ետ է մնում և մի տեսակ սա-
սեցնում է գործը...

— Այդ կարող ենք խսկույն կարգի բերել, — ասաց Թա-
ռյանը նշանակելով առջեր գրած սեղանի օրացուցի վրա:

Լիդան ետ ընկափ աթոռին ու շարաճճի ժպիտով նայեց
Թառյանին:

— Հետո ես մի առաջարկություն էլ ունեմ, — ասաց,
արդյոք չե՞նք կարող մենք միասին մի դավադրություն կազ-

մել, այնպես անել, որ տեխնիկական պերսոնալն ամբողջ կազմով իրեն հարվածային հայտարարի...

Սոֆյան ավելի հաստատվեց իր հնթագրության վրա, որ Արտյուշի և Լիդայի մեջ «մտերմություն» կա:

Թառյանը ժպտաց:

— Դափագրության կարիք չկա. մենք այդ ծրագիրն ունենք արդեն, բայց միայն փոքր ինչ ժամանակ է հարկավոր բոլորին նվաճելու համար:

— Մեր հարվածայինների շարքերը հետզհետեւ լայնանում են, նրանք արդեն սերտ կապ են հաստատել կոմերիտականների հետ:

— Ծնորհավորում եմ. ես էլ ծրագրում եմ մի շարք խորհրդակցական ժողովներ: Զեր հոգվածները մեծ ազդեցություն են անում, մամուն, անկասկած, խոշոր դեր է խաղում մեր շինարարության մեջ: Լավ է, որ դուք տեղական մամուլումն էլ եք մասնակցում:

— Ճիշտն ասած, ես ոչ մի նոր բան չեմ ստեղծում, ես միայն գրում եմ այն, ինչ տեսնում եմ...

Ապա Լիդան ավելի ցածր ձայնով սկսեց թվել մի շարք հարցեր հարվածայինների վերաբերմամբ: Սոֆյան գրգռվում էր այդ ցածր ձայնից, որը նրան թվում էր շատ ինտիմ և վիրավորական իր համար. նա լարում էր ականջները, ոչ մի խոսք բաց շլոգնելու համար, բայց մեջն աճող խանգը շփոթում էր նրա միտքը, նրան թվում էր, թե գաղտնի խոսքեր են ասվում, որ ինքը չի լսում: Դեռ Լիդան չէր վերջացրել իր ասելիքը, երբ նա վեր կացավ տեղից ու մոտենալով գրասեղանին, ասաց գրգռված տոնով, ուշագրություն շդարձնելով Լիդայի վրա, բայց հարվածն ուղղելով նրա դեմ:

— Արտյուշ, շուտ կվերջացնես, ես շտապում եմ...

Թառյանը մի ցնցում զգաց կնոջ խոսքերից, կարծես մի անախորժ գաղտնիք բացվեց:

— Վերջացնում ենք,—ասաց նա, նայելով կնոջը:

Հանկարծ Թառյանին համակեց մի տխուր զգացում, կարծես ճիշեց ինչոր հին բան...

«Հի՞ն են, —մտածում էր նա. —Հին են Սոֆյայի ձայնը, շարժումները և իր ամբողջ ներքին ապրումները...»

Լիդան նայեց տիկնոջն ու զգաց իր վրա ուղղած նրա սուր, շանթող հայացքը: Նա գլխի ընկավ, որ դա Թառյանի կինն է, ու վեր կացավ տեղից, նկատելով որ զրությունը լարված է:

— Ուրեմն դուք միշոցներ ձեռք կառնե՞ք:

— Այո, Հենց վաղվաճից:

Լիդան ցտեսություն ասելով դուրս դնաց:

— Նո՞ւ, Սոֆի, ի՞նչ կասես, —դիմեց Թառյանն իր կնոջը:

— Ես այսօր ուզում եմ գնալ, —ասաց Սոֆյան վճռական ու խիստ տոնով:

— Ինչո՞ւ... ի՞նչ է պատահել, նստի՞ր տեսնենք...

— Հենց այնպես.. նա ուզում էր ասել, «որովհետեւ ես այստեղ ավելորդ եմ», բայց զսպեց իրեն ու միայն ավելացրեց.

— Խնդրում եմ կարգադրես, որ ավտո տան...

— Ի՞նչպես թե... նոր ես եկել և խսկում գնում ե՞ս...

Ի՞նչ է պատահել:

— Ո՛չինչ, երեխաներին հիշեցի, ուզում եմ գնալ:

— Այդպես շտապելու կարիք չկա. Եկել ես, մի երկու օր գոնե մնա...

— Ո՛չ, —ասաց Սոֆյան, ավելի կտրուկ ու գրգռված տոնով, —ես քեզ խնդրում եմ, ավտո պատվիրես, թե չէ ստիփած կլինեմ ինքս դիմելու...

— Լավ, մի ասա, ի՞նչ է պատահել:

Սոֆյան լուս նայում էր հատակին շեղ հայացքով: Թառյանը, զգալով որ նա խանդում է, ինքն էլ լոեց ու չփառեր էնչ ասի:

Լուսթյունը խանդարեց ինժեներ Ալենիկովը, որը ներս մտավ, սիրալիք բարեկեց երկուսին էլ:

— Արտեմ Լազարիչ, մի շտապ հարց կա, պիտի միասին վճռենք... մեր փայտեղենի հարցը ուրիշ ընթացք է ստանում...

Սոֆյան մռայլ գեմքով՝ հրաժեշտ տալով, դուրս գնաց:

— Հանգստյան ժամին ես տուն կդամ, միասին կվրանենք, — ասաց Թառյանը կնոջ հետեւից:

XV

Թառյանը չկարողացավ տուն գնալ Հանգստյան ժամին, նա վերապարձավ միայն գործից հետո: Ներս մտնելով, նա տեսավ Սոֆյան նստած է սեղանի մոտ ու գրում է:

— Ի՞նչպես ես, Սոֆի, դու այսօր կարծես տկար էիր, — ասաց նա մոտենալով:

— Ո՛չ, ես տկար չեմ. քեզ խնդրեցի ավտոմոբիլի մասին... իսկ դու ի՞նչ արիր...

Նրա ձայնը խլվեց, նա վեր կացավ տեղից ու գնաց գեղի սենյակի անկյունը:

— Ուրեմն դու լո՞ւրջ էիր վճռել, ճիշտ ասած՝ ես չեմ հավատում, որ դու այսօր կզնաս:

— Ինչո՞ւ, իբր թե ես շատ ցանկալի եմ քեզ Համար...

— Ի՞նչ է կատարիլում, Սոֆի, ես քեզ չեմ Հասկանում:

— Եվ ինչո՞ւ պիտի ինձ Հասկանաս, դու Հասկանում ես ուրիշներին..., չէ՞ որ նրանք ավելի մոտ են քեզ...

— Ի՞նչպես թե ուրիշներին. դա ի՞նչ բան է:

— Շատ սովորական բան. մի նոր ընկեր, երիտասարդ, թարմ, առաջադեմ... իսկ ես ի՞նչ... ես միայն խանգարում եմ...

— Սոֆի, դե բավական է. դու ինչ-որ երկարացության մեջ ես ընկել:

— Ինչո՞ւ երկարացության. ես կարծեմ աշքեր ունեմ:

— Այսինքն ի՞նչպես թե աշքեր ունես, ի՞նչ ես ուզուս ասել...

— Ես ոչինչ չեմ ուզում ասել. ի՞նչ գործ ունեմ խառնովելու քո ինտիմ հարաբերությունների մեջ, ես ցանկանում եմ գնալ, ուրիշ ոշինչ:

— Լա՛վ, դու վազը կդնաս... բայց ասա, ինչո՞ւ ես բարկացած, ինչն է պատճառը:

— Հավ, շխոսենք զրա մասին. վաղը առավոտյան խընդուում եմ կարգադրես, որ ավտոմոբիլ ուղարկեն:

Ապա սկսեց կարգի բերել չեմոդանը, իսկ Թառյանը ետու առաջ էր քայլում սենյակում:

Հանկարծ Սոֆին ըրխկոցով փակեց չեմոդանի խոսիը, ու վեր կենալով ասաց.

— Այնտեղ թողել է ընտանիքը, այստեղ նոր ընկեր ճարել (նա շեշտեց «ընկերի» վրա). իսկ ինձ ասում է՝ չեմ հասկանում... լավ պոլիտիկա է...

— Բավակա՛ն է, վերջապես, Սոֆի, թո՛ղ այդ խաղերը, — ասաց Թառյանը, ձայնը ուժեղացնելով:

Արտյուշի առնական, լուրջ ձայնը ազդեց Սոֆյային. նա պիտեր, որ Արտյուշը բարկանում է, երբ արդարացի է, բայց ձեացավ նեղացած:

— Հա՛, իհարկե, մնում է, որ դու ինձ վրա բղավես, գուրս անես այստեղից: Ես խանգարում եմ քեզ և քո սիրելի ավանտյուրիստկային...

— Ի՞նչ ավանտյուրիստկա:

— Այն, որ քեզ հետ միշտ սիրաբանում է...

— Նորից կրկնում եմ, Սոֆի, վե՛րջ տուր այս երեխայության. իսկ եթե համոզված ես, ինչ ուզում ես, արա. միայն ազատիր ինձ այս տեսարաններից, այս մանրուրից...

— Հա, իհարկե, ես մանրուրով եմ զբաղված, ես հետամնաց եմ, իսկ նա տարված է բարձր գաղափարներով...

Ու ետ ընկնելով աթոռի մեջքին նա սկսեց զղայնորեն հեկեկալ, կրկնելով.

— Ես ավելորդ եմ... ես խանգարում եմ...

Թառյանը մնաց շվարած. նա ամեն կերպ աշխատում էր հանգստացնել Սոֆյային, բայց այդ երկար ժամանակ չէր հաջողվում: Վերջապես Սոֆյան հանդարտվեց: Այժմ նա սկսեց արդեն ուղղակի հարցեր տալ Լիդայի մասին: Արտյուշը հավատացնում էր, որ ոչ մի կապ չկա իր և նրա մեջ. ու այդ պատասխաններն այժմ փոքր ինչ հավատ էին ներշընչում, կամ գոնե Սոֆյային թվում էր, թե եղել է ինչ-որ կապ

և այսուհետեւ չի լինելու... Արտյուշը չի բաժանվելու իրունից...

Ու Հետզհետեւ Սոֆյան ընկալ մյուս ծայրահեղության մեջ.—նա կրկնապատկեց իր փաղաքշանքը դեպի Արտյուշը. մի չարված ուժգնությամբ կարծես նա ի մի էր հավաքիլ իր ամբողջ զգացմոնքը դեպի նա: Թվում էր, թե Արտյուշի մեջ մի նոր մարդ էր տեսնում, ավելի գրավիչ, ավելի սիրելի...

Նրանք մնացել էին առանց ճաշի. թեյն ու ընթրիքն ինքը Սոֆին պատրաստեց, իր հոգաւոր քնքշանքը տարածելու ամեն տեղ:

Ամբողջ երեկո, ամբողջ գիշեր նա կարծես ուզում էր իր քնքշանքի, իր գուրգուրանքի մեջ թաղել իր կասկածները...

Իսկ Թառյանը, խոսելու արանքներում մտածում էր իր նո՞ր հանապարհի, իր նո՞ր ապրումների մասին. ու ակամա համեմատում կիդային Սոֆյայի հետ. մեկը՝ որպես ծառացած մի նժույգ՝ թռչում էր դեպի ապագան, իսկ մյուսը՝ քաշում էր դեպի հետ, դեպի նեղ, անհորիզոն անցյալը, որից նա ձգտում էր դուրս գալ...

Հետեւ առավոտ Սոֆյան նորից մուայլվեց. այս անգամ առանց բռնկումների: Ամպամած, թախծոտ դեմքով հրաժեշտ տալով Արտյուշին, վերադարձակ քաղաք:

XVI

Կնոջ գնալուց հետո Թառյանը մի թեթևություն էր գտում, կարծես մի կաշկանդող ծանրություն էր ընկել վրայից: Նա գարմանքով նկատեց այն փոփոխությունը, որը կատարվել է իր մեջ: Սկզբում՝ կնոջ առաջին նամակից նա եղրակացրել էր, թե Սոֆյայի մեջ բեկում է առաջացել, բայց տեսնվելուց հետո համոզվեց, որ նա դեռ հեռու է դրանից, և եթե հարց է դնում «անկախ աշխատանքի մասին», հպարտությունից է անում, կասկածից խայթված ինքնասիրությունից:

Առավոտը դեռ կիսահագնված նա մոտեցավ սեղանին ու աշխատանքից իր առաջիկա ամսվա համար կազմված ծրագրը, որը ընդգրկում էր մի նոր գործունեություն:

Եվիկը մի քանի անգամ գաղտագովի ներս նայելով դռան արանքից, վերջապես Հարմար բոպե գտավ ներս քերելու թեյն ու նախաճաշը: Բայց Թառյանը շտապ-շտապ, մտագրադ գուրս զնաց, թողնելով նախաճաշը:

Երբ նա անցնում էր ակումբի մոտով, բոպեաչափ կանգ առավ, դիտելով նոր կառուցվող շենքը:

Ակումբի բաց պատուհանից լսվում էր տեղիումի բարտուղար Սիմակի ուժեղ, կոկորդային ձայնը.

— Բա զու ի՞նչ բանվորի կնիկ ես, որ մեր կանոնները չես խմանում. ինչո՞ւ իմաց չես արել, որ մարդկ Հիմանդացնել է. բժիշկ կուղարկենք, փող կստանայիր...

Կինը ցածր ձայնով ինչոր պատասխանեց:

— Հա, զե սրանից հետո կիմանաս, թե մի բան պատճի, եկ ուղղակի ինձ իմաց արա... Հիմի ես քեզ թուղթ կտամ, կերպաս Հաշվապահի մոտ, կստանաս փողը, էս էլ բժշկի թուղթն է...

Թառյանը ներս մտավ ակումբի միջանցքը: Զախ կողմի սենյակում, որի դուռը բաց էր, լիկկայանի ուսուցիչը պարապում էր մի խումբ կանանց Հետ: Թառյանը կանգ առաջ դռների մոտ, բարեկց ուսուցչին, որը փոքր ինչ շփոթվեց, կարծելով թե նա եկել է իր պարապմունքներն ստուգելու: Կանայք ամոթխած դլուխները ցած քաշեցին, բայց աշքի տակով դիտում էին Թառյանին: Գրատախտակի վրա խոշոր տառերով գրած էր.

«Մարքսը, Էնգելսը, Լենինը և Ստալինը մեր մեծ ուսուցիչներն են»:

Իսկ երկրորդ տողում —

«Էլեկտրական լույսն ավելի արժան է, քան նավթի լամպինը...»

Թառյանը բարեկց ուսուցչին:

— Ինչպես է, զո՞՞ եք պարապմունքներից:

Ուսուցիչը գանգատվեց, որ զասարանը փոքր է, չի տեղավորում բոլորին. նստարաններն էլ քիչ են:

— Լավ, զրա մասին կխոսեմ, — ասաց նա, ու անցավ դեպի աշ, տեղիումի գրասենյակը:

Երբ նա ներս մտավ, Սիմակն աղյուսակներ էր լցնամ
թվերով:

Թառյանը բարեց:

— Բարե, Համեցեք, — վեր թռավ նա տեղից, աթոռ առա-
չաբեկնով թառյանին:

Մի արտասովոր ուրախություն համակեց Սիմակին. դա
ուներ իր գաղտնի պատճառը. — արդեն մի տարի էր, ինչ
թառյանը խոստացել էր ուղարկել նրան բանֆակ սովորելու,
բայց նրան չէին ազատում գործից, առարկելով, թե փոխա-
րինող չկա. այժմ նրան թվում էր, թե Թառյանը այդ հարցն
արդեն վճռել էր ու եկել անձամբ հաղորդելու ուրախ լուրը:

Թառյանը նստեց:

— Ի՞նչպես է առաջ գնում ձեր շինարարությունը, —
հարցրեց նա ժամանով:

— Ի՞նչպես թե շինարարությունը. դա ձեղ է վերաբեր-
վում... — պատասխանեց Սիմակը:

— Ո՛չ, ձեղ էլ է վերաբերվում. մեր գործը մի ամբող-
ջություն պիտի համարել...

— Հա, այդ մտքով իհարկե, ճիշտ է, բայց. պետք է
ասեմ, որ մեր մասն առաջ է գնում փոքր ինչ կաղալով:

— Ի՞նչու կաղալով. ես լսել եմ, որ դուք բավական հա-
ջող եք տանում գործը:

Սիմակն սպասում էր, թե այս առաջարանից հետո Թա-
ռյանը կհայտնի «ուրախ լուրը». բայց նա անցավ ուրիշ
հարցերի.

— Մեր տեխնիկական գործերն այնքան ծանր ու բարդ
են, — ասաց նա, — որ ժամանակ չի մնում բանվորների կենցա-
զային խնդիրների համար մտածելու, մինչդեռ այդ կառուի
հարցերը, մանավանդ բնակարանային՝ անդրադառնում են
մեր շինարարության վրա:

Սիմակը համոզվեց, որ իր ենթադրությունը սխալ էր, որ
ոչ մի «ուրախ լուր» չկա մեջտեղը, ու հիասթափվեց:

— Մեր կենցաղային հարցերի շուրջը ես մի քանի ան-

գամ զեկուցել եմ, — ասաց նա փոքր ինչ ընկճված ձայնով, — բայց պետք է խոստովանել՝ դեռ քիչ բան է արթած...

— Ինկեր Սիմակ, մեր ասաց այժմ դրած է մի խնդիր — վերացնել այն բոլոր թերությունները, որոնք արգելք են հանդիսանում մեր շինարարությանը. մենք պետք է աշխատինք շատ կարծ ժամանակում կարգի բերել այդ բոլորը: Դրա համար ծրագրված է կազմել մի հանձնաժողով, որը պիտի զբաղվի այդ հարցերով:

— Եմ կարծիքով, գործը հանձնաժողովին հանձնելը կնշանակի դանդաղեցնել. ավելի լավ է ուղղակի դուք ինքներդ տեղից շարժեք:

— Գուցե ձեր ասածով լինի, նայած թե ինչ բարդություններ կան. այժմ մենք կմշակենք ծրագիր, իսկ հարցերի արագ իրագործումը ես ինձ վրա եմ վերցնում:

Սիմակը սկսեց իր բացատրությունները, կանգ առավ նախ բնակարանային հարցի անբավարար վիճակի վրա, պարզեց, որ հանրակացարանները չեն կարող տեղափորել բոլոր բանվորներին, ապա անցավ ճաշարաններին:

— Մեր ճաշարանների վարիչներն այնքան էլ սիրելի մարդիկ չեն բանվորների աշքին:

Նա սկսեց թվել մի շարք թերություններ:

— Իսկ ի՞նչ դրության մեջ է բանվորության մթերման պործը:

— Այստեղ էլ պետք է շատ բան կարգի բերել. անփութ վերաբերմունքը բավական հաճախ նկատելի երևույթ է...

Սյնուհետև նրանք անցան կուլտ-կրթական հարցերին. ի միջի ալլոց Սիմակը խոսեց. լիկկայանին ավելի մեծ սենյակ տալու մասին:

Թառյանը հիշեց իր տեսած դասարանը:

— Ուղեմն, ընկեր Սիմակ, այս խնդիրները պետք է ամեն կերպ առաջ քաշենք, պետք է խորհրդակցենք համապատասխան ընկերների հետ:

Թառյանը լոեց, — նա նայում էր Սիմակի թախծուա դեմ-

քին, նրա փոքր ինչ ուռած, խոհում աշքերին, ու կարծես ճըգ-նում էր մոռացված մի բան:

Հանկարծ նա հիշեց Սիմակին հետաքրքրող հարցը՝ որ խոստացել է նրան ուղարկել բանֆակ, ու զգաց անհարմարություն:

«Այս քեզ հակասություն—անցավ նրա մտքով.—տղան թևեր է առել, պիտի թոշի, իսկ մենք բաց չենք թողնում, որպեսզի դնա բանֆակում սովորի, ասելով թե նա անփոխարինելի է...»

— Մի հարց էլ կա, ընկեր Սիմակ, — ասաց Թառյանը, — ես խոստացել եմ ձեզ բանֆակ՝ ուղարկել, բայց դեռ չեմ կատարել, այժմ վերջնականապես կվճռվի և այս հարցը. առաջիկա աշնանը դուք կլինեք բանֆակում... հենց այժմյանից կուղարկենք գրությունը...

— Շնորհակալ եմ, ընկեր Թառյան, — ասաց Սիմակը, ուրախությունից շփոթվելով. — Կաշխատեմ ամեն կերպ արդարացնել ձեր հույսերը...

— Մեզ համար ցանկալի է, որ դուք կապված մնաք մեր շինարարության հետ:

— Իհարկե, ես միշտ կապ կպահպանեմ «Գետաշենի» հետ...

— Հա, մի ուղիղ հարց էլ, քիչ մնաց մոռանամ... միայն զա պետք է գաղանիք մնա մեր մեջ. — Ես ձեզ կտամ հողվածներ պատի թերթի համար. իմ ծածկանունը կլինի «Բնքսիմ դեմ». դուք կզետեղեք այդ հողվածները, բայց չեք հայտնիլ, թե ով է գրողը. իհարկե այսուհետև պետք է աշխուժացնենք պատի թերթը, և լույս հանենք առնվազն շաբաթը մի անգամ:

— Ուրախությամբ կկատարեմ ձեր խնդիրը:

— Դե լավ, ուրեմն ցտեսություն:

XVII

Թառյանը դուքս եկավ ակումբից և քայլերն ուղղեց գեպի շինավայրը: Ճանապարհին նրա առաջ ծավալվում էր մի

աշխույժ աշխատանք. բավական երկար տարածովիչան վրա փորձում էր ջլմուղի կանալը. մի կողմից արագ տեմպով քանդում էին, մյուս կողմից շարում խողովակները:

Նա անցնում էր, ու տեղ-տեղ կանգ առնելով, նայում ներսը, փոսի մեջ ու համակվում զեկավարին հատուկ ուրախությամբ. նա ուրախանում էր գործի աշխույժ տեմպից:

Նրա մեջ տարօրինակ ցանկություն էր գալիս՝ անմիջապես ֆիզիկական աշխատանք կատարելու, լինելու բանվոր, մարդետ. նա կարծես իր՝ զեկավարի գործը իսկական գործ չէր համարում... լինել հարվածային բանվոր, թագվել գործի մեջ՝ այս էր թվում գերագույն երջանկությունը...

Եվ իսկապես, ի՞նչ է իր իշխանությունը, որը նրան այդպես զբաղեցնում է. մի՞թե դա անցյալի մի հիմնանություն, մի մորմոք չէ... այս մեծ շինարարության մեջ ինքը փոքրիկ մի մասնիկ է միայն, բայց երևակայում է թե միահեծան շարժում է ամենքին և ամեն ինչ... ընդհանուրը, կուեկտիվն է իրեն տանում իր ընթացքով, և ոչ թե ինքը՝ թառայանը... նա այս մեծ մեքենայի մի համեստ մասնիկն է միայն...

Նա մոտեցավ կառուցվող մի խոշոր շենքի: Այստեղ պատերը գեռ նոր էին բարձրացել գետակից: Բանվորները եռանդուն թափով աշխատում էին: Շենքի մի ծայրին «բրոնզե» ինժեները» բացատրում էր վարպետին: Մոտակայքում որմնադիրներից մեկը միալար երգում էր միայն երկու տող.

Երեան բաղ եմ արեւ

Լեռնի յաման, լեռնի յաման...

— Արամ, զե բավական ա է, զուղս տարար... մի ուրիշ բան երգիր,—ասաց նրա կողքի բանվորը:

— Հազիր ա'սա շես ուզում, որ երգեմ...

— Ինչի՞ շեմ ուզում, միայն թե էդ մի՛ երգիլ:

Վարպետը լուսմ է մի երկու բողե, բայց զետո նորից սկսում է նույն երգը, նույն ձևով:

Թառայանին նկատելով, մոտեցավ բրոնզե ինժեները:

Նրանք բարեհցին միմյանց:

— Ի՞նչպես են դործերը:

— Այժմ բավական աշխուժացել են. միայն ավագի մատակարարումը դեռ կարդի չի բերած. խոստացել են մի ավտո ավելացնել:

Նուանք անցան պատի ուղղությամբ՝ թափված քարերէ, Հողավեմբերի միջով, տեղ-տեղ կանգ առնելով:

— Որքա՞ն հարվածային ունեք, — հարցրեց Թառյանը:

— Արդեն շուտով կհասնենք բանվորների մի երրորդին:

— Լավ է, ուրեմն մենք կարող ենք մեր ուղած տեմպը ամբողջովին ապահովել:

Երբ նրանք դուրս եկան շենքից, Թառյանն ասաց.

— Ես ձեզ հետ ուղում էի խոսել մի քանի ինդիրների մասին. Ես շեմ հիշիլ մոտիկ անցյալը, այն ժամանակ մեր մեջ թյուրիմացություններ կային, որոնք այժմ վերացած կարող են համարվել: Ներկայումս ես կարող եմ ասել, որ իմ վերաբերմունքը դեպի ձեզ միանգամայն ընկերական, շիտակ է... դուք իհարկե, առիթ կունենաք ստուգելու իմ ասածը: Բայց անցնենք գործի: — Ես աշքի անցրի ձեր պրոեկտը. շատ ուրախ եմ, որ դուք հառաջադիմում եք. շեմ թաքցնիլ, — ինձ համար անսպասելի էր, որ դուք հաջողությամբ դուրս էիք եկել դժվարությունների տակից: Ես այժմ վստահ եմ, որ առաջ կդնաք նույն ընթացքով, իսկ իմ կողմից դուք կհանդիպեք ամենաչերմ աշակցության...

Բրոնզե ինժեները զարմացած նայում էր գետնին, շփոթվելով իրեն համար անսպասելի այդ հայտարարությունից: Նա միայն կարողացավ ասել.

— Շնորհակալ եմ. Ես աշխատում եմ իմ ուժերի համեմատ...

— Ես գիտեմ և ձեր մյուս, նույնքան բեղմնավոր գործունեության մասին. — մեր աշխատանքների աշխուժացման, հարվածային շարժման մեջ դուք նշանակալից դեր եք խաղում, ամեն տեղ իրակ օրինակ ծառայելով: Մենք միասին շատ բան ունենք անելու. Ես օգտակար կլինեմ ձեզ իմ տեխնիկական փորձառությամբ, իսկ դու ինձ կվարակեք նոր՝ սոցիալիստական տեմպով... Դա էլ պետք է խոստովանել մի նոր

գաղտնիք է, որը ձեր առաջ լայն բացում էր դռները, իսկ իմ առաջ կազմես փակվում էր... ահա այս էի ուզում ասել... ևս կցանկանայի որ գուք հաճախ գայիք ինձ մոտ, խորհրդակցելու ավելի մանրամասնորեն...

Սարյանը գովասանքի արժանացած աշակերտի նման շփոթվում էր, և չփիտեր ի՞նչ ասի: Երբ Թառյանը վերջացրեց նա ասաց հուզված:

— Ես մինչև այժմ աշխատել եմ որքան կարողացել եմ... ուրախությամբ կաջակցեմ ամբողջ ուժերովս մեր ընդհանուր գործին...

Մի քանի բոպեն նրանք գնում էին լուռ: Սարյանը տարօրինակ հուզմունքի մեջ էր. մինչև այժմ նրան հավատացնում էին, թե Թառյանը իր թշնամին է, իսկ այժմ գուքս է գալիս ընդհակառակը — նա ողջունում էր իր հաջողությունները, նաև պատրաստ է իրեն ամեն կերպ առաջ քաշելու... ու նորից, ինչպես իր մասին կիդայի գրածը կարդալիս, նրա մեջ խաղողում էր մի ցայտուն ուրախություն՝ իր զարթնող ուժերի, իր անսպասելի ընդունակությունների ուրախությունը... այո՛, նա կարող է առաջ գնալ. կարող է դեր խաղալ սոցիալիստական շինարարության մեջ...

Նրանք մոտեցան մի նոր շինատեղի: Այստեղ Թառյանին սպասում էր մի սյուրպրիզ. — այստեղ էին կոմերիտականների նոր բրիգադաները, որոնք եկել էին իրենց պլակատներով: Նրանցից մեկը ամբացրած էր գետնի մեջ խրած երկու ձողերի վրա. կարմիր լաթի վրա գրած էին խոշոր տառերով իրենց լոգումները:

Կոմերիտականների խոմբը մի առանձին եռանդով փորում էր, հարթում տեղը. իսկ մյուս՝ ավելի փորձված բանվորները հիմքերի գծերով փոսեր էին փորում:

Ամբողջ տեսարանը մի խանդավառ հուզում առաջացրեց Թառյանի մեջ. նրա համար անսպասելի էր այս բոլորը, որովհետև չփիտեր, թե այսքան մարդ է գալու աշխատանքի, մանավանդ չէր սպասում, թե գործը այսպիսի էնտուզիազմ կառաջացնի, այսպիսի ցուցադրական նշանակություն կըստանա:

նա նկատեց Լիդային, նա էլ քւունգը ձեռքին, կարմբած
ու քրտնած փորում էր հողը:

— Պրօսիմ, պրօսիմ,— Հանկարծ Հնչեց Լիդայի հստակ
ձայնը, երբ նա նկատեց Թառյանին:

Թառյանը մոտեցավ, բարեկց: Լիդան երկում էր իր աշ-
քին մի նոր հմայքով՝ աշխատանքի, էնտուղիազմի հմայքով:

— Մենք ձեր դեմ դավադրություն ենք կազմել—տես-
նում ե՞ք,—ասաց Լիդան,—ընկեր Սարյանն էլ պետք է մաս-
նակցի,—ասաց նա, նայելով Թառյանի կողմը:

— Այո, ես անակնկալի մեջ ընկա.—ասաց Թառյանը,—
չէի կարծում, թե այսքան մարդիկ կըերեք. կեցցե՞ք:

Եվ ինքն էլ ընդհանուր ոգևորությունից վարակվելով,
վերցրեց Հանգստացող բանվորի ձեռքից նրա քլունդն ու
սկսեց աշխատել:

Բայց մի հինգ րոպէ շանցած, Թառյանի մոտ եկավ թըդ-
թատարը—Հայտնեց նրան, որ կանչում էն:

Սարյանը մնաց այնտեղ և սկսեց նույնպես աշխատել:

XVIII

Թառյանի համար սկսվեց մի նոր կյանք:

Արտաքուստ կարծես նույն Գետաշենն էր, նույն գործը,
բայց թե՛ ինքը, թե՛ իր շրջապատը այժմ նրա աշքին ուրիշ
կերպ էին երկում:

Նա այժմ կրկնապատկել էր իր աշխատանքը: Թվում էր,
թե եռանդի մի նոր աղբյուր է բացվել իր մեջ, որն անդուռ
մղում էր նրան դեպի աշխատանքը: Բայց զարմանալի էր,
որքան նա շատ էր աշխատում, այնքան ավելի շնչին էր երե-
կուռ իր արածը, և առհասարակ փոքր էր թվում իր դերը այս
ընդհանուր շարժման մեջ:

Գրա հակառակ՝ նա այժմ սիրով տեսնում էր այն, ինչ
դժվարությամբ էր տեսնում առաջ՝ ուրիշների գործը: Այժմ
նա ինքն իրեն չէր դնում Գետաշենի կենտրոնում, նրա եսը
չէր շոյվում այն մտքից, թե ինքն է շարժում ամեն ինչ, այլ

զգում էր իրեն իր հզոր երթի մեջ, և այդ զգացումը օր-օրի վրա նրան համակում էր մի նոր, լայնաթիւ ուրախությամբ:

Հետզհետե նրա դործունեության մեծ մասը տեղափոխվում էր դեպի շինավայրերը: Թվում էր, թե նա խուափում է հանգստից:

Նրա արտաքինն ավելի ու ավելի սկսում էր նմանել բանվորի. միշտ վերագառնում էր տուն փոշոտալած, շաղախի բծերութ, բայց երբ մաքրում էր շորերը, փոշու ամեն մի հյութեի մեջ տեսնում էր իր կյանքի, իր վերելքի պատմությունը:

Զգալի փոփոխություն էր նկատվում և Գետաշենի աշխատանքի մեջ: Արդեն բանվորության մեջ ստեղծվել էր հարվածայինների մի միջնաբերդ, որը հետզհետե լայնացնում էր իր շրջանը: Մեծ աշխուժություն էին մտցնում գործի մեջ և կիդայի կազմակերպած կոմերիտական բրիգադներն իրենց վարակիչ էնտուզիակմով: Արդեն բեկում էր նկատվում և շինանյութերի մատակարարման մեջ:

Օր-օրի վրա բարձրանում էին շենքերը: Ահա Գետաշենի մի ծայրում մի շենքն արդեն պատրաստ է և այնտեղ սկսել են սարքավորումը: Թառյանը շարունակ հետևում էր աշխատանքին, մոնայորների խմբի հետ զբաղված էր խոշոր մեքենայի տեղափոխման գործով:

Մեքենայի շուրջը տիրում էր մի եռանդուն աղմուկ, լարված ձայների բացագանչեր, շղթաների զբնզոց:

Արդեն տաս ըսպեի շափ կիդան կանգնած էր գործարանի շենքում և բլոկնոտը ձւորին գրում էր, բայց թառյանը չէր նկատում նրան, երբեմն նա դադարում էր գրելուց և դիտում էր թառյանին:

Այո՛, թառյանը փոխվել է, և կիդան, նոր չէ, որ այդ նկատում է: Ու այժմ նա նորից հարց է տալիս ինքն իրեն, — ի՞նչ կա այդ մալ գումեջ, որ իրեն համակրելի է: Նրա մեջ կիդան տեսնում է: մի թաքնված ուժ, որը ճնշված է եղել անցյալի նեղ փականքի մեջ ու դուրս է եկել նոր կյանքի ասպարեզը: Բայց նա գեռ ամբողջովին չի ազատազրվել անցյալից: Հակառակ իր ուղղագիծ, անշեղ կյանքին՝ կիդան տեսնում է

Թառյանի մեջ դեռևս տատանվող մի աշխարհ։ Բայց նա օրեցօք այրում է իր անցյալի նավերը, նվաճում է ինքն իրեն, նվաճելով և Գետաշենը...

«Մեքենաները կենդանանում են մարդկանց ձեռքերով»— զրում է Լիդան, —ինժեները՝ բանվորների ու մոնտյորների հետ փոշոտվում է, լարում է իր մկանները, և ուրախանում ամեն մի հաջող շարժումից։ Նա ապրում է գործի մեջ՝ նրա հաջողություններով, ուրախություններով...

Հանկարծ աղմուկը դադարում է, մեքենայի մասը զնում են իր տեղը ու բոլորը շունչ են առնում։ Լենինգրադից եկած ինժիները, որն ուղարկված էր մեքենաներ մատակարարող գործարանի կողմից, երեսը դարձնում է Լիդայի կողմը և նայում է նրան հետաքրքրությամբ՝ խոշոր ակնոցի տակից, բերանում բռնած կարծ ծխամորճը։ Հետո նա մոտենում է թառանին և սկսում է խոսել հետեւյալ մեքենաների մասին, որ պիտի ստացվեին ավելի ուշ։ Նա կասկած էր հայտնում, թե մյուս կառուցվող շենքերը կարող են ուշանալ պայմանավորված ժամկետից, իսկ թառյանը հավաստիացնում էր, որ ամեն ինչ կկատարվի ըստ պայմանագրի։ Լիդան շտապով դուրս դնաց գործարանի շենքից, կարծես վախենալով իր ներկայությամբ հանել թառյանին ինքնամոռացումից, որի մեջ նա այժմ գտնվում էր։ Նա անցնում էր երկար շենքերի միջով, շարունակելով իր մաքերի թելը։

«Այս, թառյանի մեջ կա պայքար և հաղթություն...» ահա թե ի՞նչն է դրավում Լիդային։ Նա նոր էր գիտակցում այն, ինչ անորոշ զգում էր, որ այս շրջապատի մեջ ամենից շատ նա ձգտում էր դեպի թառյանը, բայց տարօրինակ էր իր վերաբերմունքը, —կարծես նա չեր ուզում, որ այդ զգացմունքը լիներ և թառյանի մեջ, վախենալով, որ նա կշեղի նրան իր ձևոր աշխարհից...» նա կուզեր մի մագնիսական զորությամբ հեռավից ազգել նրա վրա, միշտ օդնել նրա վերելքին, բայց ոչ մի կողմնակի ճառագայթ շխլել նրա ուշադրությունից՝ իր վրա դարձնելու համար։ Ամեն ինչ գործին, ամեն ինչ սոցիալիստական շինարարությանը՝ ահա այդ կուզեր նա տեսնել թառյանի ձգտումների մեջ...

Կենտրոնից եկել էր ընկեր Սահակյանը՝ մի շարք հարցեր տեղում պարզելու համար: Գիշերելով պարտկոմի քարտուղարի մոտ, նա տեղեկացավ, որ այն թերությունները, որոնց առիթով նա եկել էր, արդեն վերացվելու վրա էին: Պարզվեց, որ նա ուշացել էր ճանապարհին ուրիշ գործերի հետևանքով:

* Համարյա ամբողջ գիշերը նրանք վեճի էին բռնված. քարտուղարն ապացուցում էր, թե չպետք է շարժել նորից անցյալի թերությունները, քանի որ հին հարցերը կրերեն իրենց հետ հին անձնական հաշիվները, ինտրիվները, որոնցից զուր տեղը կառաջանա խանգարմունք: Իսկ ընկեր Սահակյանն ապացուցում էր, որ անցյալի սխալներն իսպառ չնշելու համար պետք է նրանց քննադատությունը պարզորոշ մտցնել զիտակցության մեջ:

Երկուան էլ մոտ ընկերներ էին՝ նոր ասպարեզ մտած, ու վեճի ժամանակ թերի լսելով իրար, անհամբեր ուզում էին առաջ բերել իրենց գիտեցածն ու քաղաքական փորձը, շարունակ շեղվելով հիմնական վեճից և ընկնելով կողմնակի հարցերի մեջ: Գիշերվա մեջ մի քանի անգամ տարվելով վեճով, նրանք վեր էին կենում, նստում շապկանց անկողնի վրա՝ ոտները կախած, ապա հանդարտվելով, նորից պառկում, ու շարունակում վիճաբանությունը: Ու այդպես մինչեւ լուսաբաց:

Ընկեր Սահակյանն առաջ տարավ իր գիծը, որոշեց խորհրդակցություն հրավիրել: Բայց նախքան այդ նա ծանոթանում էր գործին:

Այդ երկու օրվա մեջ զգալի բեկում առաջացավ Գետաշենի հասարակության այն սահմանափակ խավի մեջ, որը կազմված էր ծառայողների մի մասից ու նրանց կանանցից: Թառյանի հակառակորդները, որոնք մինչեւ այդ առժամանակ մեղմել էին իրենց ակտիվությունը նրա գեմ, այժմ նորից թե առան, և սկսեցին տարածել, թե ընկեր Սահակյանը եկել է Թառյանի գործերը քննելու և նրան «հեռացնելու» համար:

Առանձնապես այդ ուղղությամբ աշխատում էին երկու ինժեներներ—Վարդանյանն ու Սարգսյանը, մանավանդ առաջինը: Նա մի անանուն նամակ էր ուղարկել Մոսկվա՝ դլամուր ինժեներին, գանդատվելով Թառյանից, վերադրելով նրա սխալներին Գետաշենի բոլոր թերությունները, որոնք իր գըրշի տակ ուժացել էին, ավելի զորեղ տպավորություն անելու համար:

Ինժեներ Վարդանյանը մաղձուր դեմքով, դեղնած աշքերով մարդ էր: Մի ժամանակ, երբ նա ծառայում էր Բաքվի նշանավոր հարստի նախահանքերում, այդ մաղձուր դեմքն իր դերը կատարում էր լիովին և թվում էր՝ որոշ բավականություն էր պատճառում իրեն, տալով նրան վախ ազդող իշխանավորի տեսք: Նա տնինա թափում էր այդ մաղձը իր ստորագրյալների վրա, շարունակ «կոնդման» տեսորի տակ պահելով բոլորին, իսկ այժմ մտնելով սովորական իշխանության շենքը, նա իր նախկին սովորության հակառակ՝ աշխատում էր ժապավագան ամենքին. բայց ամենքի վրա թողնում էր չի անախորժ տպավորություն, որովհետև նրա ժպիտն անբնական մեռելային էր, ու մի տեսակ սարսուր էր բերում՝ ասես նրա հետ խոսելիս սառը, մեռելային մատներ էին Հպում:

Ինժեներ Թառյանին նա առանձնապես ատեց այն օրից, երբ վերջինիս դիրքը բարձրացավ. նա կարծում էր, թե ինքն ավելի է արժան այդ դիրքին: Նախանձից ատելով Թառյանին, նրան թվում էր, որ վերջինն էլ ատում է իրեն և խանգարում է իր կարյերային: Ո՞ւ թե ինչու նրա «տապալումը» իր սրտին այնքան մոտ էր:

Ինժեներ Սարգսյանը չափած-ձևած, զգուշ խոսքերով ու շարժումներով՝ միշահասակ մարդ էր, կանոնավոր հագնված ու ոսկե շրջանակով ակնոցով: Անցյալից նա կարծես բերել էր իր հետ և իր հին աշխարհը՝ մի փոքրիկ արկղի մեջ և պահում էր այն զգուշությամբ, բացելով ոչ բոլորի մոտ: Իրեն հետաքրքրող զլիավոր հարցը իր կարյերան էր, որի համար էլ նա մի կողմից ամեն կերպ դրվատում էր իր գործունեու-

թյունը, իսկ մյուս կողմից էլ զգուշությամբ աշխատում էր դցել ուրիշներին:

Եթե Թառյանի գիրքը տատանվեց, նրա դադտնի հույսերը նույնպես զարթնեցին. նրան թվում էր, թե ինքն է մենակ արժանավոր, որը կարող է նրա տեղը բռնել ու սկսեց գրգռել նրա դեմ Վարդանյանի ատելությունը, կարծելով թե վերջինս իր մրցակիցը լինել չի կարող, և մտադիր էլ չէ: Նա հույս էր դնում և «բրոնզե ինժեների» վրա՝ որպես Թառյանի հակառակորդի, այն հիման վրա, որ վերջինս նույնպես քննադատել էր Թառյանին արտադրական խորհրդակցության ժողովում:

Ահա այս երկուսը,—մեկը զգուշությամբ, իսկ մյուսն ավելի եռանդուն,—տարածում էին, թե Թառյանին հանելու ևն գործից, թե նրա «ակցիաներն» արդեն ընկել են:

«Գետաշենի ղեկավարությունը փոխվում է»,—անցնում էր բերնե-բերան ու ամեն լսող արձագանքում էր այդ լուրին ու փոխում իր վերաբերմունքը դեպի Թառյանը: Այն ինժեներներն ու տեխնիկները, որոնք առաջ երկար նստում էին նրա կարգինետում, այժմ քիչ էին երևում. միայն ինժեներ Վարդանյանն աշխատում էր մեկ-մեկ երեալ նրա աշքին, ու բարեմել կծու քաղաքավարությամբ, իր թունոտ ժպիտով, որը կարծեն ասում էր—«դու ընկնում ես, բարեկա՛մ, ընկնում ես...»

Մի քանի ծառայողներ, որոնք միշտ սիրալիր, խորը բարեսում էին Թառյանին, այժմ այդ անում էին զսպված: Գրասենյակի վարիչը սուտ հիվանդացել էր ու չեր երեսմ, որպեսզի թաքցնի իր վերաբերմունքը մինչև հարցի պարզվելը:

Ծառայողները ճաշարանում խումբ-խումբ նստած խոսում էին շշուկներով օրիւա հարցի՝ այսինքն Թառյանին «հեռացնելու մասին. ամենքն աշխատում էին ցուցյ տալ, որ վաղուց նախատեսնում էին այդ փոփոխությունը և կողմնակից էին դրան. տալիս էին Թառյանին փոխարինողի անունը, բայց հնարութիւ.՝մեկի պատահաբար ասած անունը կրկնում էին մյուսները:

Ամենից շատ աշքի էր ընկնում այն սեղանը, որի մոտ

նստած էր պատի թերթի բանաստեղծ Սևյանը: Նա մեծ թափով հարձակվում էր Թառյանի վրա իր մոտ նստած երկու օրիորդների հետ: Սկզբում, երբ Թառյանը նոր էր նշանակվել, Սևյանն ստիպեց պատի թերթի նկարչին ներկայացնել Թառյանին մի արտակարգ, նապոլեոնյան պոզայով. արձվացին հայացքով նա նայում էր լեռներին, շենքերին, աշքերից ուղղելով լուսարձակի ճառագայթներ, իսկ տակը զետեղել էր իր ոտանալորը,—«Եվ նա իր շանթող հայացքն է նետում ժայռերին,—Ճիշքելու համար, գետերն է դիտում,—Ճիզրոկայանների համար... ո՞վ է նա... տեխնիկացի արձվաթե դեկավարը...»

Առաջին օրը Թառյանը գուրս եկավ ճաշարան: Այդ առիթ տվեց ավելի խոսելու նրա գեմ և ենթադրելու, թե ճիշտ որ նա հեռացվելու է: Երկրորդ օրը նկատելով ինչոր տարօրինակ վերաբերմունք դեպի ինքը, նա զլխի ընկավ, թե ի՞նչ է նշանակում այդ փոփոխությունը, իմացավ տարածվող 22ուկների մասին և գնաց ճաշարան ու նստեց իր սովորական տեղը: Սակայն նրա ճաշելու ընթացքում բոլոր հայացքները դեպի իրեն էին ուղղած. նա զգում էր նույնպես, որ մեծ մասամբ իրեն մասին են խոսում: Ամենքը նայում էին Թառյանի գեմքին, հետաքրքրվելով, թե ի՞նչ է արտահայտում նա ու ասում էին մտքում—«Հա՛, իհարկե, երևում է, որ պիտի հեռացնեն...» ու այդ ուշադրության տակ Թառյանն զգում էր իրեն անհարմար դրության մեջ,—կարծես բեմի վրա էր՝ միշտ անախորժ դերի մեջ:

Միայն հաշվապահ Նալասարյանն էր, որ եկավ իր սովորական ժամին, առանց որևէ փոփոխության խորը բարեկց Թառյանին ու գնաց նստելու իր մշտական տեղը հանգիստ, կանոնավոր, նա միշտ կրկնում էր իր ափորիզմը, որը համարում էր շատ խորիմաստ—«Հաշվապահությունը քաղաքականություն չէ»: Մարդկանց էլ նա վերաբերվում էր նույն կարգապահությամբ, որպես իր հաշիվներին ու թվերին:

Թառյանին մոտեցավ ինժեներ Ալենիկովը, հեռավոր բարեկլով: «Երեք սրան գեռ մասնակից չեն արեւ, —մտածեց

Թառլանը, — թե չէ սա ել կիսուսափեր ինձանից»: Նա ձեռք
տվեց Թառլանին ու նստեց կողքին:

— Ի՞նչ նորություն, — հարցրեց Թառլանը:

— Արտեմ Լաղարիչ, ինչոր լուրեր են պատվում, իբր
թե փոփոխություններ են լինելու...

«Սկսվեց», — անցավ Թառլանի մտքով:

— Նո՞ւ, ի՞նչ կա որ... Դա մի սովորական երևույթ է...
խոսակցությունները միշտ անպակաս են:

— Բայց խոսում են ավելի մեծ մասշտաբով...

— Խոսողներն են մեծացնում մասշտաբը, որովհետեւ
փոփոխությունների հետ նրանք կապում են իրենց կարյե-
րան... Ավելին կասեմ — շատերը նույնիսկ փոխում են իրենց
գույնն այդ փոփոխությունների հետ... դա կոչվում է «մի-
միկրիա...»

— Չուտ քիոլոգիական երևույթ, — ասաց Ալենիկովը
ժպտալով:

— Այո, և բավական տիսուր երևույթ, — ասաց Թառլանը
շարունակելով իր մտքի թելը, — ունողուցիան էլ ունի իր փոր-
փուրը, դա կազմվում է այն փոքրաթիվ, քաղքենիական տար-
բերից, որոնք փոխվում են արտաքուստ, բայց ներքուստ դեռ
շարունակում են ապրել մեռնող գասակարգերի թափթափել-
ներով: Գունափոխությունը նրա գլխավոր հատկանիշներից
մեկն է, բայց նա իր քանակով այնքան փոքր է, որ մի թեթև
պրոլետարական ալիք բավական է նրան ծածկելու համար...

— Այո՛, ճիշտ եք նկատել այդ տիսուր երևույթը. դա
միաժամանակ ծիծաղելի է, այդ մետամորֆոզն այնքան
արագ է կատարվում, հաց թխելուց ել արագ...

— Գունափոխությունն ինձ համար մի գոեհիկ, պրի-
միտիվ երևույթ է, ես դրա կարիքը շոնեմ, և եթե նկատեմ
մեջս, կատեմ ինքս ինձ: Ես ուրախ եմ նրանով, որ մեծ պա-
հանջ եմ զգում մեջս ամբողջ կյանքս զնելու սոցիալիստա-
կան շինարարության համար. և այդ իմ ձգտումը ես կարող
եմ իրագործել ինչ փոփոխություն էլ տեղի ունենա իմ կյան-
քում... Ես կարծում եմ, որ ինչպես կարմիր հրամանատարը

նախ և առաջ՝ պիտի լինի լավ կարմիր բանակային, այնպես
էլ մենք նախ և առաջ պիտի լինենք լավ բանվորներ...

...Նրանց խոսակցությունը շարունակվեց մինչև այն
ժամանակ, երբ զգացին, որ ճաշարանը դատարկվել է և
իրենք են միայն մնացել այնտեղ:

XX

Սահակյանը մտադիր էր մնալու Գետաշենում երկու օր,
բայց գործը երկարեց: Վերջապես չորրորդ օրը երեկոյան
նա խորհրդակցության հրավիրեց Գետաշենի տեխնիկական
կազմի ներկայացուցիչներին: Ինժեներ Թաոյանը, որպես
տեխնիկական ղեկավար, այդ ժողովի կենտրոնական անձն
էր, որովհետև նա պիտի ընդուներ իր վրա քննադատության
բոլոր սլաքները:

Թաոյանը նստած էր շատ սկեպտիկ տրամադրության
մեջ: Վերջին օրերի պատվող շնորհական նրա
ականջին ու ակամա ազգում, ենթադրել տալով, թե իր հե-
տանալու ժամը մոտեցել է և պետք է հրաժարական տալ:
Իսկ նրա հակառակորդները նստած էին ինքնավտահ, հա-
վատացած լինելով, որ վերջին հարվածն են տալու:

Ժողովը բանալով, Սահակյանը համառոտ բացատրեց
նրա նպատակը և առաջին խոսքը տվեց ինժեներ Վարդանյա-
նին, ապա Սարգսյանին, ցանկանալով սկզբից պարզել հա-
կառակորդների դիրքը:

Վարդանյանին թե տվեց այն հանգամանքը, որ առաջին
խոսքն իրեն տվին. Նրա ղեղին աշքերը փայլեցին շարախըն-
դությամբ. Նա հարձակվեց Թաոյանի վրա, անխտիր բար-
ձելով նրա վրա բոլոր թերությունները, այնպես ներկայաց-
նելով դրությունը, կարծես այն նշանավոր արտադրական
խորհրդակցությունից հետո ոչինչ չէր փոխվել Գետաշենում:

Սարգսյանն արտահայտվեց ավելի զգուց, մեղմացրած
ձևով, կարծես քայլում էր ճահճոտ տեղով, փորձելով ամեն
մի քայլը: Նա խոսում էր այնպես, կարծես չէր մեղադրում

Թառյանին, բայց իր բերած փաստերն ասում էին այն, ինչ
ինքը չէր ասում, ու մեղադրում էին Թառյանին, թեպետ նրա
անոնք քիչ էր հիշվում:

Երբ խոսքը հասավ Թառյանին, բոլորը զարմացան նրա
հանգիստ ու օրեկտիվ տոնից: Իր բացատրության մեջ նա
մատնանշեց անցյալի սխալները, շնորհելով և ինքն իրեն,
բայց միաժամանակ ցույց տալով և ուրիշ պատճառներ.—
«անցյալը կմնա որպես մի սխալ,—ասաց նա, —նրա նշանա-
կությունը նրանում է միայն, որ մենք կսովորենք այլևս
չխալվել»:

Ապա կանգ առնելով երկու ինժեներների մեղադրանք-
ների վրա, նա ասաց.

— Թվում էր, թե այդ ընկերները քննադատելով իմ գոր-
ծունեությունը, ջատագով ևն Գետաշենի առաջադիմությանը՝
ինչպես իրենք էին պնդում, սակայն փաստն այն է, որ երբ
ես մոտ ժամանակներս հարց զրի, որպեսզի մեր ամբողջ
տեխնիկական պերսոնալն իրեն հայտարարի հարվածային,
հենց այդ երկուան արգելք եղան այդ բանին՝ զանազան
պատճառաբաննություններ հնարելով՝ գործը հետաձգելու հա-
մար: Կամեմ ավելին, —այսօրվա նրանց ելույթը պարզեց, որ
այդ ընկերները նույնիսկ չեն հետաքրքրվում Գետաշենի աշ-
խատանքներով, չեն ուզում տեսնել այն վերելքը, որը նկատ-
վում է վերջին ժամանակներս...

Այդ խոսքերը գրգռեցին Թառյանի հակառակորդներին.
Նրանք փորձեցին հերքել, բայց մեջ եկան «բրոնզե ինժե-
ները» և Ալենիկովը և հաստատեցին Թառյանի խոսքերը:
Բրոնզե ինժեների այդ պաշտպանությունն անսպասելի էր
Թառյանի հակառակորդների համար, բայց նրանք մնացին
ապշած, երբ պարտկոմի քարտուղարը նույնպես պաշտպա-
նեց Թառյանին: Նա կանգ առավ անցյալի սխալների վրա,
ապա անցնելով ներկային, ասաց.

— Բայց կարևորն այն է, որ այդ բոլոր սխալներն այժմ
անվերադարձ անցյալ են, մենք թեսակոխել ենք մի նոր շրր-
շան, որը հետզհետե աճում է՝ թե քանակով, և թե որակով...

Ընկեր Սահակյանն իր եղբափակման խոսքում ասաց, որ
Հույս ունի հետապայում միշտ վերելքի մեջ տեսնել Գետա-
շենը. նա փոքր ինչ կշտամբեց երկու ինժեներներին «անձ-
նական մոտեցման» համար:

Երկու ինժեներներն զգացին, որ իրենց խաղը տանուլ են
տվել, ենթադրելով, որ Թառյանն ընկնելու է, և շատ բան
կտային, եթե Հնարավոր լիներ ետք վերցնել իրենց խոսքերը:
Նրանք գնում էին տուն լուս, մտքում մեղադրելով իրար:

Իսկ Թառյանը գնում էր ամուր քայլերով, խորհրդածելով
իր գործունեության շուրջը, համեմատելով անցյալն ու ներ-
կան: Ահա այժմ նա զգում է իր մեջ մի նոր ուժ, որը դալիս
էր բանվորությունից. «անցյալում մի մեծ սխալ կար մի-
այն,—ես կտրված էի ամենահզոր բանվորությունից...»
մտածում էր նա, բարձրանալով դեպի իր բնակարանը:

Հետեւալ օրը, ճաշարանում տարածվեց երեկոյան ժողո-
վի հետեւանքների մասին ու սկսվեց հակառակ շարժումը—
մակընթացությունը: Մինչույն մարդիկ, որոնք երեկ հարձակ-
վում էին Թառյանի վրա, այժմ արդեն գովում էին նրան.
նույնիսկ պնդում էին—«ախր ես ասում էի է՛...» թեպետ
ասել էին դրա հակառակը: Բանաստեղծ Սեյանը պատռեց
իր ոտանավորը, որ գրել էր Թառյանի դեմ: Սուտ հիվանդ
քարտուղարը երեաց գրասենյակում և ասում էր հանդիպո-
վին,—«Հիվանդ պառկած էի, ինչո՞ւ չէիք դալիս այցելու-
թյան»: Խոսում էին նույն մարդիկ, նույն տեղը, բայց առաջ-
վա հակառակը: Անցնում էր փոքրիկ խմբի փոքրիկ ալեկո-
ծումը, տեղի տալով առօրյա միօրինակության:

Լիդան այդ օրերին հանկարծ անհայտացալ Գետաշե-
նից: Շատ բաներ էին ենթադրում այդ դեպքի շուրջը, բայց
նրա անհայտանալու պատճառն ուրիշ էր: Գետաշենի մի խո-
շոր տրանսպորտ, որը բարկացած էր երկաթեղենից, թյուրի-
մացության պատճառով դեմ էր ընկել մի կայարանում: Հե-
ռադրերը չէին օգնում հարցը պարզելուն: Լիդան, իմանալով
այդ բոլորը, առանց ժամանակ կորցնելու, վերցրեց բոլոր
տեղեկությունները և անմիջապես ճանապարհ ընկալվ: Վեց

օրից հետո նա երեաց նորից Գևտաշենում հաղթական տրամադրությամբ.—տրանսպորտ արդեն շարժվել էր և նրա հետկից էլ ինքն էր ճանապարհ ընկել: Նա եկավ այն ժամանակ, երբ նրա անհայտանալու շուրջը սոմանտիկ լեգենդներ էին պատվում: Ամենից շատ իիդայի բացակայությունն անհանդապացնում էր Թառյանին, և երբ նա վերադարձավ, կրկնակի ուրախություն տիրեց նրան,—մեկը որ տեսնում էր իիդային; մյուազ՝ իմանալով նրա դնալու պատճառի մասին:

— Դուք արդեն հարվածային եք,—ասաց նա իիդային:
— Ո՛չ, ես ինքու ինձ շատ վատ կղզամ, եթե այդ չնշին բանի համար ինձ հարվածային կհռչակեն:

— Ոչ միայն դրա համար,—երեխ կան շատ գործեր...
— Ոշինչ շկա արժանի ուշադրության:
— Եթե բոլորն այդպե՞ս մտածեին...
— Այն ժամանակ հարվածայնությունը կլիներ սովորական երևությ, որին մենք ձգտում ենք:

Թառյանը գլուխը շարժեց, իր ժպիտով արտահայտելով կշտամբանք: Բայց և այնպես մի դուրեկան ձայն ասում էր իր մեջ.—«Իիդան ուրիշ կերպ չի կարող լինել...» Ինքը Թառյանը կտսրեր, եթե նա ուրիշ ձգտումներով լիներ...

XXI

Գևտաշենում հայտարարվեց հարվածային ամիս: Դա բնականորեն բխում էր վերջերս բռնած նոր ընթացքից, բայց առիթը եղավ ընկեր Սահակյանի դալը:

Հայտարարման առաջին օրը գործից հետո կազմակերպվեց միտինգ, որն անցավ շատ բարձր տրամադրության մեջ, բանվորները խոսք տվին ոչ միայն հասնել պլանների թվերին, այլև գերազանցել: Բանվորությունն իր պատկառելի բազմությամբ, իր դրոշակներով, իր շեշտակի հումկու խոսքով խորը տպավորություն արավ ղեկավար ընկերների վրա: Ընկեր Սահակյանը մեկնեց քաղաք լի հավատով, որ այսուհետև բոլոր թերությունները կվերացվեն:

Սկսվեց մի նոր շարժում. ասես մի հղոր մզումով ամենաքը ձգտում էին գերազանցել իրար՝ աշխատանքի մեջ։ Տրված արտադրական նորմաներին բանվորներն առաջարկում էին իրենց հանդիպակ պլանները։ Ամեն ինչ կարծես շարժում էր մի հղոր ուժի թելազրությամբ, որը նստած էր ամենքի մեջ։

Աշխատում էին, լարում ուժերը, ամեն օր նոր վտակներ էին ավելանում, իսկ Գետաշենը հորդացած գետի նման լայն հոսում էր լուրջ ու խոճում, մերթ առաջ տանելով դանդաղողներին, մեկ շափի բերելով շատ շտապողներին։

Թառյանի համար, որպես զեկավարի՝ սկսվեցին այն երջանիկ օրերը, երբ նա այլևս չէր նկատում իր զեկավարությունը, այլ մի ընդհանուր հոսանքի մեջ գնում էր առաջ՝ իր կամքը միացրած նրա հետ։ Եինարարության կյանքում նա հիշում էր ծանր օրեր, երբ իր կարգագրությունները կանգ էին առնում շղթայի որնէ օղակում, իսկ այժմ բավական էր մի խոսքը, որ արձագանք դտներ հարյուրավոր մարդկանց մեջ և անմիջապես գործի անցներ։ Մարդիկ հասկանում էին միմյանց կես խոսքից, որովհետև տարված էին աշխատանքով և ինքը թառյանն էլ արբեցած էր այդ նույն աշխատանքով, տալիս էր նրան իր ամբողջ եռանդը։ Այն, ինչ առաջ զբաղեցնում էր նրա միտքը, նրա հուզերը, —իր փառքը, իր ընտանիքը, հակառակորդները, —բոլորը կարծես դարձել էին հեռու անցյալի աննշմար պատկերներ։

Պատի թերթն այժմ դարձել էր տպագրական թերթ «Գետաշենի ձայն» անունով և լույս էր տեսնում շաբաթը երկու անգամ։ Թառյանն աշխատակցում էր երկու գծուի, —մեկն իր իսկական ստորագրությամբ, մյուսը՝ «ինքս իմ դեմ» ծածկանունով։ Երբեմն պատահում էր, որ նա վերջին անունով մատնանշում էր Գետաշենի թերությունները, իսկ առաջինով արձագանքում էր իր իսկ հողվածին, թե այսինչ թերությունները վերացված են։ Իր առաջին հոդվածի վերնագիրն էր — «Ի՞նչու ես հարվածային շեմ»։ Հոդվածը խոսում էր մի բանվորի անունից և հանգում էր այն մտքին, թե ինքը

կարող էր հարվածային լինել, եթե ավելի գիտակից, ավելի աշակուրջ հետևեր գործին և նվիրված լիներ սոցիալիստական շինարարության:

Երեք օրից հետո նա ուղարկեց «Գետաշենի ձայն» թերթին հետևյալ հայտարարությունը.

«Կարդալով! «Ինքս իմ դեմ, ստորագրությամբ հոդվածը՝ (Ինչո՞ւ ես հարվածային չեմ) այսօրվանից հայտարարում եմ ինձ հարվածային և առաջարկում եմ ուրիշներին հետևել իմ օրինակին: Ա. Թառյան»:

Հենց առաջին օրից ընտրվեց մի եռյակ, որի անունը հետագայում դարձավ «երկաթե եռյակ»: Նրա մեջ մտնում էին Թառյանը, «բրոնզե ինժեները» և Լիդան: Նրանք հաճախ խորհրդակցում էին պարտկոմի քարտուղարի հետ և միջոցներ մշակում Գետաշենի գործը բարձրացնելու համար:

Նրանք աշակուրջ հետևում էին բոլոր ցեխների աշխատանքին և ամեն տեղ հասնում էին աշակցության:

...Ահա այսօր էլ, ինչպես և ամեն օր, Թառյանը ուշ երեկոյան վերադառնում էր տուն եռյակի խորհրդակցությունից և ժամանակավոր էլեկտրակայանի ձայնակցությամբ մտածում էր իր և ընդհանուրի աշխատանքի մասին:

Բանվորական շենքերի առաջ՝ հրապարակում, աշխատյա պղմկում էին պատանիները. խոմբ-խոմբ կամ զույգերով զբոսնում էին աղջիկներն ու տղաները, կամ մի տեղ կանգնած աղմուկով խաղում: Հնչուն ծիծաղը, կանչերն ու ճիշերը մի կենսաթրթիո երաժշտություն էին մտցնում Գետաշենի ժանր ու լուրջ գործից հետո: Թառյանն անցավ հրապարակով ու մոտեցավ իր բնակարանին: Ներքեմի հարկում ժողով է, ժեկը խոսում է: Նա բարձրանում է վերև, ուղարկում է ելիկին պապիրոս գնելու ու նստում է թեյի՝ բաց պատուհանի մոտ:

Նա գտնվում է այն դուրեկան դրության մեջ, երբ հոգնածությունը դուրեկան հանգիստ է խոստանում, գրավում, իսկ մարմինը դեռ տեղի չի տալիս, ասելով՝ սպասի՛ր, սպա-

մի՞ր... Նա հանում է ծոցից իր Հուշատետրը ու զանազան թղթեր և սկսում է կարդալ ու կարդի բերել:

Եվիկը վերադառնում է, բերում է պապիրոսը ու զարմանում, որ Թառյանը դեռ չի խմել թելը: Նա երկու կումով խմում է ու ծխում: Եվիկը նորից լցնում է բաժակը ու դնելով նրա առաջ, դուրս է գնում:

Բայց պատուհանից ծանոթ կանացի ձայն է հնչում ներքից:

Նա աշքի է անցնում իր Հուշատետրի նկատողությունները, առանձին թերթերով գրությունները: Նա կարդի է բերում, նորից նշանակում ավելի մանրամասն, բայց մի ձայն ներքերից շեղում է նրա մտքերը... Նորից դուրեկան ծանոթ ձայնն է: Խոսում ներքեկի հարկից:

Նա դուրս է գալիս պատշգամբը. այս՝, նման է նրա ձայնին... ապա իջնում է ներքե, ու մոտենում ժողովի դաշտին, կանգնում է պատուհանի առաջ՝ ստվերում, որպեսզի շնկատվի: Այս, լիդան է խօսողը. իր գրավիչ տոնով նա կոչ է անում բանվորներին՝ ավելի եռանդով տանել գործը: Հորդորում էր ո՛չ միայն սովորել, լավ աշխատել, այլև նույնը սովորեցնել ընկերներին:

Թառյանը լսում էր մի առանձին հաճույքով, նա և ամաշում էր ամեն բոպե ետ նայելով, որպեսզի մարդ շտեսնի իրեն, և միաժամանակ բուռն ցանկություն ուներ լսելու մինչև վերջը: Բայց մի քանի բոպեից հետո լսվեց դուան թրըխեցը, նրան թվաց թե մարդ է գալիս և շտապով հեռացավ, բարձրացավ վերեւ:

Նա հանեց իր օրագիրը, որի մեջ արձանագրում էր օրվա նվաճումները: Օրագիրը շոր ու ցամաք էր, զինվորական հակիրճ նախադասություններով, լիքը զանազան թվերով: Նա բացեց նոր էջ ու սկսեց գրել. «Ես արձանագրում եմ նվաճումներ, թվեր, բայց չեմ գրում կառուցվող մարդկանց մասին, մինչդեռ՝ նրանք մեր աշքի առաջ աճում են, կուտակում սոցիալիստական շինարարության հերոսությունը,—նրա հոգեկան ուժերը:»

«Հսում էի Լիդայի ճառը. նա հնչում էր այնպես զբավիշ... Եթե մեր հանդիպման առաջին օրը նա խոսում էր հերոսության մասին, ինձ թվում էր, թե նրա գեղեցիկ երեակայությունն էր խոսում, բայց այժմ տեսնում եմ, որ նա ինքն արգեն տալիս է իր նմուշը:

«Այո, Լիդան ամեն տեղ հասնում է, ամեն տեղ դործում... խկապես որ «այրվում է լուս տալու համար...» Միշտ կտեսնեք նրան ամենադժվար կետերում. հետամնաց բրիգադներին խրախոսում է, առաջ քաշում, աշխատում է մեզ հետ, և միաժամանակ զրում է. նույնիսկ ժամանակ է գտնում տեխնիկայի ուսումնասիրության համար...»

Նա կանգ առավ գրելուց ու մտածում էր Լիդայի մասին:

Ի՞նչ զարմանալի ընթացք ստացան իրենց հարաբերությունները... Այժմ նրանք ավելի հաճախ են հանդիպում, ավելի շատ են խոսում իրար հետ, ու քանի շատ են տեսնըվում, այնքան ավելի են կապվում գործով... Զգացումները կարծես թաքնվում են ինչոր խորը տեղ: Բայց Թայանին զգում է մի աճող կապ. նա այժմ կարող էր ասել—Լիդան անբաժանելի է ո՛չ միայն Գետաշենից, այլ և իրենից... Նա ամուր նստած էր իր սրտում...

XXII

Երեկոյան թեյից հետո բանվորները խումբ-խումբ վերադառնում էին հանրակացարան, առանց շտապելու, դանդաղ քայլերով: Էլեկտրական ուժեղ լամպերը աշք ծակող լուսով պսպղում էին, հրապուրելով բնակիչներին: Եկողների մեծ մասը նստում էին մեծ սեղանի մոտ, հանում լրագիր կամ գիրք, կարդում: Ոմանք պառկում էին թախտերի վրա, ոմանք էլ այս ու այն կողմը խմբվում ու զրուցում: Որմնագիր բանվոր Մեսրոպը երեսնիվայր պառկել էր թախտին ու կարդում էր մի բրոշյուր: Նա լիկայանի աշակերտ էր ու կարդում էր դժվարությամբ, դանդաղ:

—Սո-ցիա-լիս-տական ո՞ւղ-ո՞ւղ-ո՞ւղ... արա, էս ի՞նչ ա-

գրած, մի տե՛ս, ուղտերով ա՞-, — դիմում է նա իր մոտ նըստած Պողոսին, որը լրագիր էր կարդում:

Պողոսը երեսը դարձնում է Մեսրոպի կողմն ու նայում զրդին, նրա ցուց տված տեղը.

— Սա ուղտերով ա՞-. բա աշքեր չունե՞ս... ուղիներով...

— Ի՞նչ ա նշանակում ուղիներով:

— Նշանակում ա ճամփաներով:

— Բա ի՞նչի հն էդակես գրում:

— Գնա՛ գրողին հարցրու, — պատասխանում է Պողոսն ու ընկղմվում իր լրագրի ընթերցանության մեջ:

Մեսրոպը չի բավարարվում այդ պատասխանով ու շարունակում է մաքառել իր ընթերցանության մեջ:

Քարտաշ Բարսեղը խորհրդածելով ծամում է Հետը բերած հացի կտորը, շթողնելով ոչ մի փշբանք, ապա հանում է իր հին ձեփի փայլուն տուփը, կոշտ մատներով փաթաթում է հաստ պապիրոսն ու ագահությամբ ծխում, կարծես անհետ կորցնելով ծուխն իր թոքերի մեջ:

Մոտենում է բրիգագավար Ոսկանը,

— Բարսեղ, բա ե՞րբ ենք մենք էլ պարզերես դուրս դալիս:

— Ի՞նչ ա, պակաս ե՞ն թվերը:

— Զէ՛, ավելանում են, համա լավ շեն ավելանում: Բանը քեզ վրա է կանգնել, տղերանց մի քիչ վրա գցի... բա ե՞րբ ես հարվածային դառնում:

— Դե քարտաշը միշտ էլ հարվածային ա, միշտ մուրճով հարված է տալիս...

— Դե հանաքը թող, օրինակ տուր...

— Աշքիս վրա: Դու որ գրելով ես հաշվում, ես էլ աշքով եմ հաշվում. մի շաբաթից հետո մեր անոնք վեր կլինի, իմացա՞ր:

— Լա՞վ: Ուրեմն խոսք ես տալի՞ս:

— Ի՞նչ խոսք՝ դու գործին մտիկ արա...

Ոսկանը ժպտալով գլուխը շարժում է ու գնում մյուսների մոտ:

Բարսեղը ծխելը վերջացնում է, փշելով մաքրում է ծխա-
մորճը, դնում է ծոցի գրապանում։ Հետո, աշբերը կկոցելով
նայում է էլեկտրական լամպին, կարծես ճգնելով ինչոր
մտաբերել։ Նա ուզում էր մտաբերել այն, ինչ այսօր կարդա-
ցել էր լրագրում, ու պիտի հարցներ, բայց նրա աշբերը՝
որոնք չեն սիրում երեկոն, կամաց-կամաց սկսում էին
թմրել։ Նա հանում է շորերը, խնամքով ծալած դարսում տա-
րութետի վրա ու պառկում է անկողնում։ Դուրեկան հանդրս-
տությունը փոքր ինչ ետ է մղում քունը, նա մտաբերում է
օրիա դեպքերը. այսօր նրա մոտ եկալ իր նախկին գործա-
տեր Կոստանովը, որը պատերազմից առաջ իր կապալառուն
էր և վերջին անգամ կտրեց իր աշխատավարձի կեսը. հիմի
եկել, խնդրում էր, որ Բարսեղը վկայի, թե ինքն առաջ ոչ թե
կապալառու է եղել, այլ արտելի վարիչ, իբր թե ինքն էլ հետ-
ներն աշխատելիս է եղել։

Դե, ասում է՝ միասին աղ ու հաց ենք կերել, ինձ օդ-
նի՛ր... Հա՛, Հա՛, գելին նորից կենդանացնե՞մ, որ գա մեղ
նորից ունի՛ Չէ՛, պարոն աղա Գրիգոր, ոու մի գնա մի՛ քիչ
էլ ման եկ էս աշխարհում, ու մտածիր քո էն ժամանակվա
արարքների մասին, հետո կխոսենք. գեռ մի քիչ էլ բարակի,
որ էս բաները հասկանաս։ Մի քիչ դժվար մարսելու ա քեզ
համար, թե չէ որ մի անգամ էլ եկար, էդ քու թղթի վրա կը-
գրեմ. «խնդրեմ ծանոթանաք, սա առաջ գել էր. հիմի էլ գել
է, մինչև ատամները շթափվեն, մոտ շթողնեք գործերին...»

Մեսրոպը վեր է կենում աթոռից. նորից լույսն ընկնում
է Բարսեղի աշքերին ու նրանք փակվում են։ Նա քնում է խո-
րը քնով, ոչ մի անհանդմտություն շղգալով գեռս տիրող
աղմուկից։

Սրդեն ամբողջ հանրակացարանը լցվել էր բանվորներով
և նրանց կենդանի ժխորը կարծես շոմչ էր տվել նույնիսկ
նրա միջի առարկաներին։ Խոմբ-խոսմբ հավաքված զանա-
զան տեղերում՝ մինում են կամ գրուցում, ծիծաղում, ոմանք
էլ սեղանի շորջը նստած գրում են կամ կարդում։ Հանրակա-
ցարանի մեջտեղից հանկարծ բացվում է ուաղիո-բարձրախո-

սը և արեւելյան պարի եղանակի գանդաղ ալիքները լցվում
են սննյակը, բռպհատես գրավելով բոլորի ուշադրությունը:
Երիտասարդ բանվոր վազգենը վեր է թոշում տեղից, սկսում
է պարել, ընդորինակիկով կանանց, ծիծաղաշարժ նազ անե-
լով իր շարժումներով շորս կողմը կանգնածներն սկսում են
հրճուալ, գրավելով և հեռու եղածների ուշադրությունը: Շու-
տով յուրահատուկ գերասան վազգենի շուրջը հասարակու-
թյուն է խմբվում. նա սկսում է ընդօրինակել ինժեներներին,
տեխնիկներին, հաշվապահներին: Շուրջը հավաքված բան-
վորները բռնկվում են ծիծաղով, երբեմն ծափահարում, իսկ
վազգենը լուրջ էր, առևս մի լուրջ գործի էին դրել նրան:

Հետզհետեւ հանրակացարանի բանվորները բաժանվում
են խմբակների: Մի տեղ վիճում էին կոլխոզի մասին, մի
ուրիշ տեղ իրենց առօրյա գործից, իսկ մի անկյունում էլ
բավական տաք վիճաբանություն էր արտաքին քաղաքակա-
նության շուրջը: Մի խումբ ուսւա երկաթագործ բանվորներ
գսպիած մեղմ բասով երգում էին «Վոլգան»: Ամբողջ հան-
րակացարանն իր խոսակցություններով, իր ծիծաղով, երգ ու
ուսդիուրաձրախոսով վերածվեց մի յուրահատուկ խառը
երաժշտության, որն իր աշխատաթյամբ զուրեկան էր բոլո-
րին, նույնիսկ նրանց, որոնք զբաղված էին կարդալով կամ
գրելով:

Բետոնագործ Մարդարը, խստադիմ, խոշոր սև աշբերը
հառած թվին, գրում էր իր թվերը: Նա բրիգադիր էր և ամեն
օր ստուգում էր իր բրիգադի պլանային թվերը: Արտագրելով
տեխնիկի տված թվերը, նա ստուգում էր, անցյալ օրերի հետ
համեմատելով: Վերջապես նա վեր կացավ ու իր թախտի
մոտ կանչից իր բրիգադի անդամներին.

— Այս տղեք, էսօր լավ չեք բանել, տասը տոկոս
պարտք ենք մնացել:

— Էլի՞ շհասա՞նք... բա լավ բանում էինք...

— Հենց դու, ինքդ լավ չէիր բանում, խոսելու ա մեծ:

— Դե՞, ընկերներ,—շարունակեց Մարդարը,—պարտքէ
տակ մնալը տղամարդություն չի:

— Եկեք խոսք տանք ընկերներ, — ասաց Շավարշը, — որ էգուցվանից էլ ոչ մի պլանի պարտք չենք ունենալ:

— Համա՛ձայն ենք... — պինդ ու սրտալի հնչում են ձայները:

— Դե, տղե՛րք, — ասում է Մարգարը, — խոսք կա երկաթա, խոսք կա՝ փալաս, դուք ո՞րիցն եք:

— Մեր խոսքը երկաթից էլ պինդ ա...

— Դե, էղակն էլ կդրեմ:

Մարգարը հանում է ծոցից մի թուղթ, մոտենում է սեղանին՝ ու զում է.

«Մենք, երրորդ բրիգադի բետոնագործ բանվորներս երկաթի խոսք ենք տալիս էգուցվանից էլ ոչ մի պլանի պարտք չունենալ, որի մասին ստորագրում ենք...»

Մարգարը կարդում է իր գրածն ու հետո ասում.

— Դե, ե՛կեք, ստորագրեցեք:

Ընկերները մեկ-մեկու հետևից մոտենում են, ստորագրում:

Որմնադիրների բրագաղավար Սուքիասն իր շուրջն է հավաքել բրիգադն ու գլուխը տմբառմբացնելով, լայն պնչերը փքած, ասես դասախոսում է. երեսում է՝ բավականություն է ստանում գրանից.

— Սոցիալիզմն էլ ոնց որ տուն շինելը, էնակն բան ա. օրինակի համար լենինն ինժեներ ա, պլան ա տալիս, — թե էսպես պետք ա բռնենք գործը. մենք էլ մեր կողմից պետք ա բանի դնենք մեր հունարը: Հիմքի դո՛ւ, Պետրոս, ասում ես, ի՞նչ կա, մի քիչ էլ տոկոսը պակաս ըլի, չէ՛, շատ սխալ ես. Էդ կնշանակի սոցիալիզմի քարը ծուռ ես դնում, տունը կը քանդվի... ամեն քար պետք ա իր տեղը զնվի...

Հանկարծ աղմուկը փոխում է իր ընթացքը. խլրտում է նկատվում հանրակացարանի ծայրին: Բոլորը շարժվում են գեպի այն կողմը ու կուտակվում մի տեղ: Ինժեներ Մարյանն էր եկել ու խոսում էր բանվորների հետ:

— Ընկերնե՛ր, ինձ ասացին, որ առաջին և երկրորդ բե-

առնագործ բրիգադներն իրար հետ վեճ ունեն. եկել եմ դրա Համար.—մի ասե՛ք, տեսնենք ի՞նչ եք ուզում:

Երկու բրիգադի կողմից էլ խոսում են, աշխատելով մեկ-մեկու մեղադրել:

Պարզվեց, որ նոր անցած ամսվա պլանի թվերը սխալ են հաշվել. փաստորեն երկրորդ բրիգադն առաջինից ավելի էր գործ շինել, բայց թվերով՝ առաջինն էր գերազանցել:

— Ուրեմն՝ ձեր վեճը քանակի մասին է. մեր տեխնիկը շատելուց սխալվել է. բայց չե՞ որ սխալը կարգվի ստուգ-ման ժամանակ:

— Բա սրանք ցուցակում մեղանից առաջ են ընկել, — ասաց երկրորդ բրիգադի անդամներից մեկը:

— Այ ընկեր Սուրեն, էղ խոսքը չի սազում քեզ պես բանվորին. մենք բանվորներին վերածել ենք բրիգադների. դործի հարմարության համար է, և ոչ թե մարդկանց իրարից բաժանելու և նրանց մեջ վեճ ու կոփ գցելու. Մեր եռյակը շխալ տեղեկություններ է ստացել, ինքն էլ կուղղի. իսկ դուք պետք է լինեք իսկական ընկերներ. մենք միշտ պետք է ձբդ-առենք առաջ զնալու ոչ միայն գործով, այլ և ընկերական վերաբերմունքով: Իսկ ձեր վեճերը՝ թե մենք առաջ ենք, դուք ետք ու էսպես բաները ցուց են տալիս, որ դուք շեղվում եք Համարից ու ուզում եք մեզ ետ տանել դեպի ձեր հին գյուղական վեճերը: Ես կարծում եմ, որ սա ձեր մեջ կլինի վեր-շինը...

Վիճողները լոել էին ու զլուխները կախել: Մեկը, որ վեճին չի մասնակցում, ասաց.

— Դե, ի՞արկե, ամոթ բան է մեր մեջ...

Բրոնզե ինժեները, վերջացած համարելով հարցը, երեսը դարձրեց մյուսների կողմը:

— Ընկերնե՛ր, հիմա ինչպե՞ս է ձեր մատակարարումը:

— Լավ է, —վրա բերին մի քանի հոգի:

— Ճաշը ո՞նց է:

— Հարվածային ա... —Վարիչների գլխին կակալ ենք պոտրում. էն ա կոմիսիան ամեն օր ստուգում ա...

Բրոնզի ինժեները ծիծաղեց ու հրաժեշտ տալով դուրս գնաց:

Լուսնի ահապին շրջանակը լուսավորում էր հրապարակը, մեղմ սբողելով ավանի շենքերը: Սարյանը գնում էր, կարծես ծծելով ինչ-որ բարձր, վեհ կյանքի զգացումներ... նրան թվում էր թե իրեն վիճակված է մի խոշոր գեր, որի համար նա պիտի դնի իր ամբողջ կյանքը, առանց մնացորդի...

Նրա համար այս հարվածային օրերն ասես հարսանիքի օրեր լինեին. նա միայն մի երաժշտություն էր լսում իր շուրջը՝ աշխատանքի երաժշտությունը. նա տիրում էր գաղաք ների ժամանակ և հրճվում շշակների կանչից... նա իր կյանքն արդեն անխղելի կապերով միացրել է Գետաշենի ջետ:

Ահա կառուցվում է սոցիալիզմը, բարձրանում են շենքերը մարդկանց համար, և այնտեղ էլ սովորում են, պատրաստվում մարդիկ՝ «կառուցվում» են նոր կյանքի համար...

Հարկավոր է շտապել, հարկավոր է շատ կառուցել... նրան թվում է, թե շինարարական տեխնիկան գանդաղ է զարգանում... նա կուզեր մի խոշոր զյուտ անել, զյուրացնել կառուցումը և երկիրը լցնել նոր, սոցիալիստական շենքերով...

Նա գնում էր եռյակի նիստին. Թառյանի սենյակի պատուհանից նա նկատեց Լիդային ու սիրտը ճմլվեց տարօրինակ զգացումով. այո՛, զուցե այժմ թառյանը նրան գործի խոսքերի հետ սիրային խոսքեր էլ է տառում... երջանիկ է նա... իսկ ի՞նքը—նա այժմ զգում է, որ սիրում է Լիդային, բայց երբե՞ք չի տնել նրան այդ մտախն...

Դեռ ոչ մի աղջիկ իրեն այնպես շի գրավել, ինչպես Լիդան: Իսկ Աշխենը... մի քանի օր առաջ նամակ էր գրել, դժգուհում էր կյանքից, անիծում էր իր «միջավայրը» և դիմում է իրեն, որ ազատի, մի տեղ հարի Գետաշենում իր համար... Զէ՛, Աշխեն, Գետաշենը քեզ համար չէ. սա մի ուրիշ աշխարհ է... դու որ գաս այստեղ, երեւ կաշխատես ինձ ամուսնացնել

և կյանքս լցնել քո մանրուքով... չէ՛, մենք իրար հետ ոչինչ
շունենք...

Նա բարձրացավ վերև, Թառյանի բնակարանը:

XXIII

Հարվածային ամիսն անցավ արտակարգ հաջողությամբ:
Մի բարձր ոգևորություն իր վարակիլ տենդով բռնել էր ամ-
բողջ Գետաշենը: Ամսվա վերջը ոչ միայն լրացրել էին պլանի-
թվերը, այլև գերակատարել:

Վերջապես եկավ հաշվետու օրը, երբ արտադրական
խորհրդակցության ժողովում պիտի հայտարարեին հարվա-
ծայինների անունները, պիտի զեկուցեին ամսվա արդյունք-
ների մասին:

Կես ժամ առաջ արդեն ակումբի նստարանները, աթոռ-
ները զրավված էին բանվորների, ծառայողների խիտ շարքե-
րութ:

Մի տաք, մարդկային մթնոլորտ լցրել էր դահլիճը, երբ
բեմի վրա երկացին զեկավար ընկերները:

Առաջին ծափահարությունների ճարճաւոյունն արդեն
սրոշեց ժողովի հետագա ընթացքը: Դա այն ժողովներից էր,
որոնք ոչ այնքան իր մեջ արտասանած ճառերով են բնուր-
շում, որքան իրենց բուսն էնտուպիազմով:

Առանձնապես բռնկվեց ժողովը, երբ պարտկոմի բար-
տուղարը ներա եկավ ձեռք-ձեռքի տված «Երկաթե եռյակի»
անդամների—Թառյանի, Լիդայի և բրոնզե ինժեների հետ:

Նա բացեց ժողովը, և սկսեց ոգևորության տարափը:
Անտես հոսանքներով նա անցնում էր ճառախոսներից բան-
վորներին և վերջիններից խոսողներին. թվում էր, թե ժողովը
զեկավարվում է ոչ թե բեմից, այլ ինքն իրեն:

Սկսում են խոսել մեկ մեկու հետեւից կիդան, բրոնզե ին-
ժեները, հարվածային բանվորները... Ամեն խոսողից հետո
դահլիճն արձագանքում է իր հզոր ծափահարություններով:

Խոսում են արտադրական թվերը. նրանք էլ են բերում

իրենց հետեւից նոր բռնկումներ. «Հարյուր տասը, Հարյուր տասներկու տոկոսով...» Հնչում են մեկ մեկու հետեւից գերազանցած թվերն ու ծափահարություններով արձագանքում ժողովից:

Նոսում է Թառյանը: Նրա վաղեմի շփոթությունն այդ մասսայից՝ անցել է. իր դիմաց բազմաթիվ աշքերի մեջ նա տեսնում է խրախուսանք. նա այժմ ուրիշ բան չի կարող տաել, քան այն, ինչ թելազրում են այդ բազմաթիվ աշքերը... նա խոսում է Գետաշենի նվաճումների մասին...

— Ընկերնե՞ր,—վերջացնում է նա իր խոսքը, — այս անցած Հարվածային ամսում մենք սովորեցինք Հաղթահարել գժվարությունները, մենք զինվեցինք Հաղթական տեմպով և այժմ կարող ենք կոիվ Հայտարարել և բոլոր ապագա ամփոներին... ևս Հավատացած եմ, որ սրանից հետո Գետաշենն էլ երբեք չի զիշիլ իր զիրքերը...

Մի առանձին խանդավառությամբ ընդունում են բանվորները Խղացին.

— Գետաշենն անմոռաց կմնա իմ կյանքում, — ասում է նա, — իմ այստեղի աշխատանքը գեռ շատ չնշին է. ևս այսուհետեւ էլ կմնամ կապված Գետաշենի հետ և կօգնեմ նրա զորքին հեռալից ամեն կերպ՝ ինչով որ հնարավոր է...

Հայտարարում են Հարվածայինների և կարմիր տախտակի արժանացած անունները, ու քվեարկելուց հետո հաստատում ցուցակը:

Կոմերիտականների բրիգագները պարզեատրվում են կարմիր դրոշով:

Թառյանը, Լիդան, բրոնզե ինժենները Հայտարարվում են Հարվածային:

Ժողովը վերջանում է ու եռացող կաթսայի նման գուրա է թափալում ակումբի դռներից, տանելով հետ իր չերմ տպավորությունները:

...Այլ զիշերին Եվիկը զարթնում է իր փոքրիկ սենյակում ու լսում է Թառյանի քայլվածքը, նա դեռ չի քննել. էսօր նա Հարվածային եղավ, — մտածում է Եվիկը, ու հիշում է ժողո-

վլր, ու Հետո ինքն էլ մտորում է Հարվածային դառնալ, խո-
սել բարձր ձայնով բոլորի հետ...

Իսկ Թառյանը շարունակում է քայլել...

XXIV

Մի շաբաթից հետո Մոսկվայից վերադարձավ գլխավոր
ինժեները, իր հետ բերելով տեխնիկական հանձնաժողովը,
որը բազկացած էր երեք ինժեներներից:

Նրանք պիտի տեղում քննեին Գետաշենի նոր՝ լայնա-
ցրած պրոեկտը:

Մոսկվայի ինժեներներին հյուրասիրելուց հետո, որոշ-
վեց ամբողջ խմբով ձիաներով շրջագայություն կատարել նոր
պրոեկտի վերաբերող վայրերը դիտելու համար:

Եթե նրանք գործը վերջացնելուց հետո վերադառնում
էին, թառյանը դիմամաճը ետ պահեց ձին, առաջ գցելով
մոսկվացի հյուրերին և գլխավոր ինժեներին: Նա հեռվից ար-
դեն նկատել էր Լիդային, որը նստած էր ձորի լանջին, ժայռի
մոտ ու գրում էր: Նկատելուն պես նա անդրդիմի պահանջ
ուզաց տեսնվելու՝ խոսելու նրա հետ: Նա իրեն զգում էր թե-
թևացած գլխավոր ինժեների գալով, իսկ մի ժամ առաջ էլ
Մոսկվայի հյուրերի հետ սեղան նստելով, հյուրասիրելով
նրանց Հայաստանի կոնյակով և գինիներով, նա ինքն էլ
մասնակից եղավ, և այժմ գտնվում էր մի արտասովոր տրա-
մադրության մեջ:

Նա ձին նստած իջավ մինչև Հանապարհի պտույտը ու
կանգ առավ նրա ծայրին, հայացքն ուղղելով դեպի Լիդան:
Հանկարծ Լիդան գլուխը բարձրացնելով, նկատեց Թառյանին,
որը գլխարկը ձեռին լայն շարժումով բարեկց իրեն: Տեսնե-
լուն պես Լիդան սրաի դուրեկան թրթիռով աշխուզժ բարեկց,
ձեռքը շարժելով ու ժպտուն դեմքը հառելով նրա մրա:

Թառյանն իջավ ձիուց ու հետեկից քաշելով, գնաց դեպի
Լիդան:

— Զեզ սագում է ձի նստելը, — ասաց Լիդան, բարենե-

բից հետո,—ձեզ մնում է միայն Հագնել չերքեղի շորեր, և
այն ժամանակ դուք կլինեք իսկական կովկասյան լեռնցի:
— Իսկ եթե մի աղջիկ էլ փախցնեմ, պատկերն արդեն
լրիվ կլինի, չէ:

— Ի՞նչ օգուտ աղջիկ փախցնելուց, քանի որ հետո՝
դուք ինքներդ ստիպված կլինեք փախչելու նրանից:

— Զեր պատասխանը շատ տեղին էր, ալո՞ւ, իրարից
փախչելը կա, իսկ իրար փախցնելը չկա... այդ ի՞նչ եք
դրում...

— Եվ գրում եմ և նկարում ջրվեժը:

— Ջրվեժը:

— Այո՛, հենց առաջին օրից նա տպավորվել է իմ մեջ...

— Այո, հիշում եմ... կարծես շատ վաղուց էր այդ...
դուք առանձնապես ուշադրություն դարձրիք նրա վրա... հե-
տո գրի առաք իմ պատմած լեզենդն իշխանի մասին. բայց
ասացիք, թե ձեր առաջին ակնարկը լինելու է ջրվեժի մա-
սին...

— Ես այդպես էի ուզում, բայց հետո փոխեցի միտքս.
ջրվեժը թողի վերջինի համար...

— Վերջինի՞...—Հարցրեց Թառյանը, կարծես շնավա-
տալով Լիդայի ասածին: Նա ինչոր ուզում էր ասել, բայց
ձին խանգարեց, սանձը քաշելով և արածելով կածանի վերիի
խոտերը: Նա պինդ քաշեց ձիուն, ու Հարցական դեմքով նա-
յեց Լիդային:

— Այդ որտեղից եք դալիս, —Հարցրեց Լիդան կամե-
նալով խոսքը փոխել:

— Մոսկվայից եկած ինժեներների հետ էինք. տարանք
ցույց տալու նոր շենքերի տեղերը:

— Ի՞նչ հետեւանք ունեցավ նրանց հետազոտությունը:

— Լավ է անցնում. Գետաշենի լայնացման պրոեկտն
ընդունվում է ամբողջովին:

— Շատ ուրախալի է, ափսո՞ս, որ ես չեմ մնալու այս-
տեղ...

— Ի՞նչպես, մի՞թե զնալու եք, —Հարցրեց Թառյանը,

ասես նոր միայն գիտակցելով՝ «վերջին» խոսքը, որը քիչ առաջ ասաց կիդան։ Նա բաց թողեց ձիու սանձն ու ավելի մոտեցավ կիդային։

— Այո՛, զնում եմ, երեք օրից հետո... արդեն երկու անգամ հետաձել եմ ժամկետները...

— Ես այնպես եմ ընտելացել ձեր ներկայությանը, որ շնչ կարող երևակայել Գետաշենն առանց ձեզ...

— Ճիշտն ասած, ես էլ բավական դժվարությամբ եմ բաժանվում Գետաշենից...

Տիրեց կարճատե լոռություն։ Երկուան էլ նայում էին գետնին։

— Ընկեր կիդա, ես կուղեի անկեղծ լինել ձեզ հետ մի հարցի վերաբերմամբ... Այսօր ես մի ուրիշ տրամադրության մեջ եմ զգում ինձ... դուք հիշեցրիք ինձ մեր հանդիպման առաջին օրը... Հիշո՞ւմ եք, դուք ձեզ համեմատում էիք վեպի այն հերոսի հետ, որն առաջին անգամ տեսնելով Կովկասյան լեռները, շարունակ կրկնում է մտքում «լեռնե՞րը...» Ահա ես էլ՝ սկսած մեր հանդիպման առաջին օրերից կրկնում էի մտքումս մի անուն... դա ձեր անունն էր...

Նա փոքր ինչ լրեց, կարծես դժվարանում էր շարունակել, իսկ կիդան անհամբերություն էր զգում, շիմանալով ի՞նչ պատասխանել։

— Հետապայում, ընկեր կիդա, ես դուրս եկա այդ ճըգնաժամից... Գիտեք, երբեմն մարդու հոգու մեջ էլ՝ ինչպիս առարկաների վրա՝ նստում է փոշին և պահանջ է զգացվում թափ տալու, ազատվելու նրանից... ու ես թափ տվի իմ անցյալի փոշին... Զեմ թաքցնիլ ձեզանից՝ իմ զգացումները անտես թելերով կապված են ձեզ հետ... իսկ այժմ, երբ դուք ասացիք, թե զնալու եք, իմ ականջին շատ տարօրինակ հընչեցին ձեր խոսքերը. ինձ թվում էր, թե դուք մշտապես պիտի մնաք այստեղ...

կիդան զգաց, որ խոսակցությունը դառնում է բացատրություն և փորձեց խոսափել։

— Բայց չէ՞ որ ես ձեզ մոտ հյուր եմ եկել... կարճ ժամանակով, որոշ հանձնարարություններով...

— Այո՛, ես գիտեի այդ, բայց միշտ հեռացնում էի ինձնից այդ միտքը...

— Ես ձեզ մոտ աշխատեցի մի փոքր, և այսուհետեւ ամեն կերպ կաջակցեմ հեռվից Գետաշենի շինարարությանը, ինչով որ կարող եմ...

— Դուք աշխատեցիք այսուհետ հերոսարար. ձեր անունը գրված է այսուհետ կարմիր տախտակի վրա... և ես կուզեի, որ միշտ լինեք մեզ մոտ...

Թառյանը լոեց: Նրա փոխակած գգայուն ձայնը հնչում էր լիդայի ականջին մի գուրգուրող կանչով՝ դեպի սեր, անձնական մի ինտիմ անկյուն՝ իր համակրած մարդու հետ, բայց նա հանկարծ սթափվեց, ծառացավ ինքն իր գեմ, ու նայեց շեշտակի թառյանի գեմքին.

— Ես ձեզ հասկանում եմ,—ասաց լիդան, — և կասեմ առանց քաշվելու, ես այն կանանցից չեմ, որոնք վախենում են նման հարցերից: Ես նույնպես չեմ թաքցնիլ — դուք այս ամբողջ Գետաշենի գործիչների մեջ եղել եք ինձ համար ամենահամակրելին... բայց պիտի իմանաք և այն, որ նախքան տղամարդու հետ միանալը, նրա ձգտումները պիտի միանան իմ ձգտումների հետ...

Թառյանի սիրաը ընկճվեց — լիդայի խոսքերը հնչեցին այնպես, կարծես նա ասում էր — «մենք հեռու ենք միմյանցից մեր գաղափարներով, ուստի և չենք կարող մոտ լինել իրար...»

Նա ասաց ձնշված.

— Մի՛թե ներդաշնակություն չեք գտնում իմ և ձեր ձրդումների մեջ...

— Ո՛չ, դուք դեռ վերջնականապես չեք աղատագրվել անցյալի ժառանգությունից...

— Ես աղատագրվել եմ անցյալից ավելի քան ձեզ թվում է...

Թառյանը նայում էր ներքեւ, ձեռքի մտրակով խփելով

գետնին։ Լիդան նայում էր նրան, հիշելով իր առաջին հանդիպման օրը, երբ նրա կովկասյան առնական կնճիռը խաղում էր ճակատին։ Նա նույնպես պահանջ զգաց բացատըրվելու։

— Ես ուզում էի տեսնել ձեզ սոցիալիստական շինարարության բոլոր մեջ, պրոլետարիատի հետ ձեռք-ձեռքի, և տեսա... Բայց ես կուզեի տեսնել ձեզ հերոսության դադարներին... կուզեի որ ամբողջ էությամբ տարվեիք գործով և մոռանայիք նույնիսկ ինձ... այն ժամանակ դուք կլինեիք իսկական հերոս...»

Թառյանը շամեց այս խոսքերից, ի՞նչ է նշանակում այս բոլորը. մի կողմից մի չեղմ զգացում էր ներշնչում Լիդայի այն խոստովանությունը, թե նա իրեն ամենից շատ է համակրում, մյուս կողմից՝ «հերոսականը» կիզիչ լեզվակներով շանթում էր նրան... Գուցե սա մի քողարկված խոսք էր, — մտածեց նա, բայց խոկուն ետ վանեց այդ միտքը, — «Ն Լիդան չի կարող քողարկել, կեղծել. — նա չի ուզում, որ ես կանգնեմ վերելքի լանջում. նա ուզում է տեսնել ինձ բարձր զագաթներին...»

— Քնիեր Լիդա, — ասաց Թառյանը լուրջ տոնով, — մեր հանդիպման առից ես ձեր մեջ տեսա մի արտակարգ մարդ և այժմ նորից ավելի ես համոզվեցի... դուք իմ մեջ տեսնում եք մի զգացմունք դեպի ձեզ, դա գուցե մի սխալ է եղել... ես կհաղթահարեմ և այդ... ահա և իմ ձեռքը...»

Նրանք սեղմեցին իրար ձեռքերը մի տարօրինակ զգացումով, այդ հպումն էլեկտրական հոսանքով հաղորդում էր մի չերմագին, անմոռաց կապ և միաժամանակ՝ խոստում էր տալիս մոռանալ իրար...

Թառյանը գնաց դեպի ներքն, ու հասնելով ձիուն, նըստեց վրան ու մտրակելով, քշեց դեպի վերև, դեպի մոտակա դյուռը, կարծես ուզում էր հեռանալով մոռացության տալ մեջը փոթորկվող զգացումներին։ Խակ Լիդան բարձրանում էր նույնպես, խորհրդածելով այս անսպասելի բացատրության շուրջը...»

Մի պահ նայելով Թառյանի հետեւց, Լիդան ասում էր
ինքն իրեն, — Ես կլինեմ քո հարազատ ընկերը, երբ դու հիմ-
նովին կնվազես ինքդ քեզ սոցիալիստական շինարարության
համար... վերջնականապես կազմատվես անցյալից...

XXV

Թառյանը գնում էր դեպի նոր շինավայրը, որը գտնվում
էր ջրվեժի մոտ: Նոր բաժանումով նրա զեկավարությունն
իրեն էր հանձնված, իսկ գլխավոր ինժեներն արդեն ստանձ-
նել էր իր պաշտոնը:

Թառյանը գնում էր, ձեռքին բռնած «Կայծեր» ժուռնալի
համարը, որի մեջ զետեղված էր Լիդայի վերջին ակնարկը
«Ջրվեժի ցոլքում» վերնազրով: Համարը նա վերցրեց գրասե-
նյակում, մի ծառայողից, թեթև աշքի անցրեց, բայց չկարո-
ղացավ կարգավահան մի ինտիմ, հուզող նամակ էր ստացել
ու շեր ուղում ընկղմվել ալեկոծող տողերի մեջ:

Նա գնում էր մտածելով Լիդայի մասին, հիշում էր նրա
հրաժեշտի բոպեները, այն առավոտը, որ այնպես տպավոր-
վել է իր մեջ...

...Վաղ առավոտյան մի դուրեկան աղմուկ բաց պատու-
հանից ներս է ընկնում ու զարթեցնում իրեն: Ներս է նայում
Եվիկը, դուռը փոքր ինչ բանալով, ու հայտնում է, թե իրեն
կանչում են: Նա շտապ հագնվում է ու դուրս նայում պատու-
հանից: Խսկույն նրան ողջունում են ցնծագին ձայներով
խմբված կոմերիտականները, որոնք շրջապատել էին Լիդա-
յին: Արև փայլում էր նրանց թարմ դեմքերին իր առաջին
կայտառ հառագայթներով: Լիդան նայում էր մի անսովոր
արտահայտությամբ՝ և՛ ժպտում էր և՛ թախծում միաժամա-
նակ:

Նա իշնում է ներքե, ողջունում է կոմերիտականներին,
ինչ որ ասում, ինչ որ անում է, բոլորը թվում է երազում:
Մոտենում է Լիդային ու հրաժեշտ է տալիս, պինդ սեղմելով
նրա ձեռքը:

— Մնաք բարեւ, — զնշում է կիդայի ձայնը, — մենք նորից
կհանդիպենք...

կիդան գնաց...

կիդան գնաց... նա սթափվում է այն ժամանակ, երբ կո-
մերիտականները՝ իրենց գլուխ առած կիդային, անհայտա-
նում են հեռվում...

Մի քանի րոպե նա նայում է հետեւից, ու ապա բարձրա-
նում վերեւ, կրկնելով մտքում կիդայի վերջին խոսքերը, —
«մենք կհանդիպենք նորից...» բայց ե՞րբ, որտե՞ղ և ինչպե՞ս...
Այդ ի՞նչ խոստում է, որ այս թարմ արևի նման լավ օր է
խոստանում...

Այդ օրվանից անցել է մի ամիս:

Այժմ նորից կիդան խոսում է հետը իր «Կայծերի» մեջ
և հուզում է որպես մի ինտիմ նամակ...

...Ճանապարհին նրան հանդիպում է թղթատար Սոսին
ու տալիս է մի նամակ: Հասցեի ձեռքից նա իմանում է, որ
կնոցից է, ու պատռելով ծրարն սկսում է կարդալ, ապա
կանգ է առնում ծանր շնչելով:

Կինը գրում էր.

«Արայո՛ւշ, վաղուց է, որ քո մեջ նկատում եմ անտար-
բերություն դեպի ինձ և դեպի ընտանիքը: Ես կարիք չեմ
զգում երկար բացարությունների մեջ մտնելու, քանի որ քեզ
հայտնի է ամեն ինչ: Իմ ցանկությունն այն է միայն, որ-
պեսզի հարցերը դրվեն պարզ, իսկ այդ ձգտումը քո մեջ չեմ
տեսնում, ուստի ես ինքս եմ ուզում վերջապես պարզե-
դրությունը:

Իմ գրելիքը շատ պարզ է — մեր ճանապարհները՝ ինչպես
երես է, իրար չեն բռնում. ինձ համար գաղտնիք չէ, — դու
ձգտում ես նո՞ր կյանքի, նո՞ր մարդկանց հետ...

Այս նամակն ստանալուց հետո համարիր ինձ բաժան-
ված ու արա համապատասխան կարգադրություններ»:

Սոֆյա

Թառյանն արագ կարդաց նամակն ու մնաց շշմած: Զնա-
յած, որ Սոֆյան վիաստորեն ճիշտ էր գրում իր՝ Թառյանի

«նոր կյանքի», նոր տրամադրության մասին, այնուամենայ-նիվ, այդ նամակը մի ցնցում էր բերում իր համար: Այն մո-մենտից, երբ Սոֆյան եկավ Գետաշեն և բացատրություն-պահանջեց, նա զգաց, որ ինքը և կինն արդեն օտար են և ապրում են իրար հետ միայն անցյալի իներցիայով: Նա զգաց, որ միակ կինը, որի հետ նա կցանկանար կապել իր կյանքը,—Լիդան էր... Բայց այդ ժամանակ այդ հարցերը դեռ անորոշ էին: իր զգացումները դեպի Լիդան գտնվում էին մի գուրեկան մշտաշի մեջ, որը նա չէր ուզում ցրել...

Իսկ այժմ... երկու կողմից էլ նրա գեմ է գալիս խստա-պեմ որոշությունը. Լիդան գնում է իր առաջ նո՞ր վերելքի, նո՞ր «գագաթների» հեռանկարները, բայց անշատված է իրենից... Մյուս կողմից էլ բաժանվում է և կինը, իր «հյան տունը...»

Նա գնում էր իսորհելով իր նոր վիճակի մասին: Հան-կարծ նրա ականջն ընկալ զրկեմի ձայնը: Նա կանդ առավ, նստեց մի քարի վրա ու սկսեց կարդալ Լիդայի ակնարկը: Դա իսկապես մի առանձին գրվածք էր, թաթախված լիրիկա-կան զեղումներով, նրան թվում էր, թե նրա տողերի տակ ուրիշ տողեր կան թաքնված, որոնք խոսում են իրեն՝ թա-պանի հետ...

...«Խաղում է արևը ջրվեժի մեջ, խաղում են ջրվեժի ցոլ-քերն ու հիշեցնում մի հին լեզենդ... ստրկական զարերի հառաջն է հնչում այդ լեզենդի մեջ, երբ Հնչված ճորտը շկա-րողանալով հաղթել իրեն կեղեքող կալվածատերին, հանձ-նում է նրա պատիմը երկնքին»:

Այնուհետև Լիդան առաջ էր բերում իշխան-կալվածա-տերերի լեզենդը, որը լսել էր Թառյանից՝ իր Գետաշեն գա-լու առաջին օրը, ու ապա շարունակում էր. «Ջայտուն խուր-ձերով թափվում են ջրերը, անդուդ հարվածներով խփում, խորտակում «շար իշխանին»; բայց միայն լեզենդի մեջ, միայն ասմունքի մեջ... Այժմ ահա բանվորներն են շարժվում ջրվեժի շուրջը, նոր նախագիծը նրան իր մեջ է առնում և

վաղը—մյուս օրը նրա շիթերը կուտղվեն գեղի տուրբիններն ու կլծվեն աշխատանքի հին ջրաղացների տեղ»:

«Կառուցողները մոտենում են ջրվեժին, լցնում են Հրեզմեն խոսքերով լեզենզը դարերի... նրանք իրենց հուժկու ձեռներով խորտակում են իշխաններին, անցյալի տերերին...»

«Կառուցվում են Հոյակապ շենքեր. փոխվում է երկրի տեսքը, փոխվում են և մարդիկ—Հոյակապ շենքերի հետ կառուցվում է և մի Հրաշալի շենք՝ նոր՝ ստեղծագործ մարդը...»

Թառյանը նորից չկարողացավ կարգալ մինչև վերջը, չե՞նոր այդ իրեն մասին էր՝ իր նմանների մասին... վեր կացավ տեղից, մոտեցավ ջրվեժին: Հուժկու ազմուկը դուրեկան էր հնչում նրա ականջներին, ներդաշնակում էր իր ալեկոծվաղ զգացումներին:

Նա վերցրեց գլխարկին ու դեմքը տվալ բարակ ցնցուղի հարփածներին...

Ապա քայլերն ուղղեց գեղի հեռվում նշմարվող բանվորների խմբերը, գլխարկը ձեռին, դեռևս զգալով ջրվեժի ցընցուղները...

...Անցել էր երկու տարի:

Ավարտվել էր «Գետաշենի» առաջին հերթի կառուցումը: Հանդիսավոր բացման օրը, հօծ բազմության առաջ, միտինչում հայտարարվեցին կառուցող հերոսների անունները: Նրանց մեջ էին Թառյանն ու Լիդան:

«Աշխատանքային հերոսի շքանշան»—լսվում էին նրանց անունների հետեւից:

Միայն այդ ժամանակ Թառյանը տեսավ Լիդային: Նա եկել էր հանդեսի սկզբին՝ իրենից աննկատելի: Միտինգից հետո նրանք գնացին Թառյանի բնակարանը, ու նոր միայն սկսվեց նրանց տեսակցությունը:

Փոխադարձ հարց ու փորձը, այն չերմ խոսակցությունը,

որը կապում էր նրանց և ուրախացնում, խայթող կասկածով անհանգստացնում էր Թառյանին։ Վերջապես նա հարցըրեց.

— Ընկեր Լիդա, մի՛թե դուք նորից պիտի հեռանաք...

— Ո՛չ, ես կմնամ ձեզ մոտ... նոր «Գետաշենի» համար...

Նրանք սեղմեցին իրար ձեռներ:

— Ես կարծես միայն նո՞ր, նո՞ր պիտի սկսեմ կառուցել, — ասաց Թառյանը. — այս բոլորը, ինչ որ ես կատարել եմ, դեռևս չնշին է իմ ապագա հեռանկարների հանդեպ...

Պ Ր Ո Ֆ Ե Ս Ո Ր Ը

Պրոֆեսորը նստած էր գրասեղանի մոտ, զլուխը թեքած էր ձեռագիր նյութերի վրա: Նրա դեմքը բացառիկ էր իր շրջապատի մեջ,—ալեխան մորտոքը, խիտ հոնքերն ու գուղավոր ակնոցի տակից նայող մտազբաղ աչքերը, պատկանիկ և միաժամանակ խորհրդավոր տպավորություն էին մնում այցելուի վրա, կարծես նա Հին Ժամանակների ալսիմիկ էր՝ խորասուզված «փիլիսոփայական քարի» պրապտուների մեջ:

Երբ Սամվելը ներս մտավ, պրոֆեսոր Մելյանն ամբողջովին ընկղմված էր իր մտքերի մեջ և չնկատեց նրա գալր: Սամվելը մոտեցավ գրասեղանին ու ժպտաց պրոֆեսորի ցրվածության վրա,—նա չէր նկատում իրեն, թեև մոտն էր կանգնած:

— Ողջուն ձեզ, Հարգելի պրոֆեսոր,—ասաց նա մեզմ՝ ձայնով, որպեսզի հանկարծակի չըերի իր ուսուցչին:

— Ա՛, դո՞ւ ես Սամվել, — ասաց պրոֆեսորը զլուխը բարձրացնելով և ցրված հայացք ձգելով նրա վրա. — Նստի՛ր, տեսնենք ի՞նչ կա:

— Ահա բերել եմ ձեր հանձնած նյութերի վերլուծումը, բավականին հետաքրքիր բաներ են ստացվում...

— Շնորհակալ եմ, Սամվել, քո աշխատանքը կարծում է իմ որոնումները, — ասաց պրոֆեսորը, աչքի անցնելով վերլուծման թերթերը:

— Բայց պիտի խոստովանեմ, Հարգելի պրոֆեսոր, որ ձեր հանձնարարած գործերը կատարելով, ես միշտ մնում եմ ծարավի, քանի որ ձեր հետազոտությունների վերջնական նպատակն ինձ համար գեռես մշշշի մեջ է:

— Ա՞հ, սիրելիս,—ասաց պրոֆեսորը ժպտալով, —թե դու, թե մեր էմման շատ անհամբեր եք, ուզում եք Հենց խոկուն իմանալ վերջնական նպատակը, բայց մոռանում եք, որ գիտական աշխատողը մեծ եռանդի հետ պիտի ունենա և մեծ համբերություն։ Եվ հետո՝ որքան հիշում եմ ևս մոռավոր բացարարություն եմ տվել իմ գյուտի մասին։

— Կներեք, որ իմ հետաքրքրությունը դարձնում է ինձ անհամբեր, ձեր գրուցներից ես կռահում եմ միայն, որ այդ գյուտը լինելու է մի արտակարդ պարարտանցութ։

— Դա շատ հասարակ բացարարություն կլիներ իմ գյուտի մասին։ Ի՞արկե նա կփոխարինի շատ տեսակի պարարտանցութեր, բայց հարցի մեջ կան մի շարք նորություններ։ Բանն այն է, որ այդ նյութի մեջ ներգործում են նաև հառագայթներ։ Իմ ստանալիք բաղադրությունը ես անվանել եմ «ակտիվին», թեպետ նա դեռևս վերջնականապես չի լրացած իր մասերով, բայց իր հրաշալի հատկություններով համապատասխանում է իր անվան։ «Ակտիվինի» առկայությունը հողի՝ մեջ՝ կրարձրացնի բերքը շտեսնված շափերով, նա կազմվացնի մեր բոլոր տեսակի հողերը, կամրացնի մարդկության բարօրության հիմքը, կրացի նրա առաջ փառավոր հեռանկարներ...»

— Ես շափականց ուրախ եմ, որ աշխատում եմ այսպիսի մեծ գործի համար, — ասաց Սամվելը, — թեև գյուտի ամբողջական պատկերը դեռ չի բացվել իմ առաջ...

— Այս Սամվել, չկա ավելի բարձր բան, քան մարդկության ծառայելը, բայց չպետք է շատ տարվել երեակայությամբ, — հարցի մեջ կան դժվարություններ։ Խնդիրներից մեկն այն է, թե ինչ նյութերի ընկերակցությամբ պիտի միացնել հողին այսպիսի գորեղ գործոնները... Դրա մասին մի օր մանրամասն դիտական բացարարություն կտամ քեզ։

...Դուռը բացվեց և հարեան սենյակից ներս մտավ պրոֆեսորի աղջկեր՝ էմման։ Նա ընդհանուր բարե տվավ ու իր կապտավուն աշքերով շարաճճի հայացք ձգեց Սամվելի վրա։

— Ես չե՞մ խանդարում...

— Ու, սիրելի էմմա, — ասաց պրոֆեսորը, — լավ է եկաթ, մի բան պիտի ասեի քեզ, բայց մոռացա... Հետո կհիշեմ... ի՞նչ կասես...

— Դրսիցն եմ գալիս, հիանալի եղանակ է, բայց դու, հայրիկ, տանից խսկի դուրս չես գալիս. չէ՞ որ բժիշկն ասել է... երեկ էլ նախաճաշիկը թողել էիր, խսկի չէիր մոտեցել...

— Հա՛, երեկ հետազոտման այնպիսի մոմենտներ էին, որ ամեն ինչ կարելի էր մոռանալ:

— Հայրիկ, Հայաստանից նամակ է եկել՝ Աղամյանից... հիշո՞ւմ ես այն ուսանողին, որ քեզ մոտ մի ամիս աշխատեց:

— Կարծես թե հիշում եմ... ի՞նչ է գրում:

— Գրում է, որ լավ են, եռանդով աշխատում են: Խընդրում է ձեզանից խորհուրդներ իր աշխատանքի համար:

— Է՛ս, ժամանակ լիներ, գնայի Հայաստան, փոքր ինչ շրջեի... Հայրենի բնությունն ուրիշ բան է... Այժմ ասա, էմմա, ինչ արիր քո վերլուծումները:

— Արդեն պատրաստ է, շուտով կբերեմ:

— Ծնորհակալ եմ երկուսիցդ էլ, — ասաց պրոֆեսորը, — ձեր երիտասարդ, թարմ աջակցությունն առանձնապես ոգեռում է ինձ:

— Հարգելի պրոֆեսոր, կարող եք վստահ լինել, որ իմ շանքերը չեմ խնայի ձեր դյուսի համար, խսկ ընկեր էմմայի մասին իհարկե, խոսելն ավելորդ է...

Էմման նայեց Սամվելին մտերիմ ժպիտով: Նրանք երկուսով գնացին լաբորատորիա՝ վերցնելով պրոֆեսորի տվյալ վերլուծման նոր նյութերը: Պրոֆեսորը գորովալից դեմքով նայում էր զույգի հետեւից, մտածելով, որ նրանց մեջ ինչ-որ մտերմական կապ կա...



Անմոռանալի, պատմական օր էր...

Առավոտյան պրոֆեսորի կաթինետի դուրս շրիկալեն քացվեց և ներս ընկալ դիտական աշխատով, լաբորատ

Սամվելը։ Շտապելուց նրա պեսսնեն վայր ընկավ։ Նա մոտեցավ պրոֆեսորին և ասաց հերհն։

— Իսե՞լ եք, Փաշիստական Գերմանիան Հարձակվել է մեզ վրա…

— Ինչպե՞ս, — շշմած բացագանչեց պրոֆեսորը եւս ընկնելով բազկաթոռի վրա ու տարակուսանքով նայելով Մամվելին, կարծես դժվարանալով հավատալ նրա ասածին։ Մի քանի վայրկյան լուսվյունից հետո շարունակեց — պատերա՞զմ… դա ապշեցուցիչ է այն բոլոր ջանքերից հետո, որ մեր երկիրը գործ է գրել խաղաղության համար… դա չտեսնը ված բարբարոսություն է…

Քիչ անց իրար հետեւից եկան Սամվելը, էմման, ինստիտուտի պրոֆեսորներից մի քանիսը։ Գալիս էին, հուզված խոսում բարձր ձայնով ու ցրվում։

Երբ պրոֆեսոր Մելյանը մնաց իր աղջկա հետ, նա այլևս չկարողացավ շարունակել իր աշխատանքն ու սկսեց քայլել սենյակում, հոգեկան ալեկոծման մեջ, ստեղծ-ստեղծ կանգ առնելով ու խոսելով։

— Պատերա՞զմ… — կրկնում էր նա, ասես ջանալով ընդդրկել նրա ամբողջ բովանդակությունը — ո՞րքան երիտասարդ կյանքեր պիտի զոհվեն, ո՞րքան կուլտուրական աշխատանք պիտի կործանվի… Փաշիզմի մահաբեր թույնը սպառնում է ոչնչացնել կուլտուրան, արժատախիլ անել ամենանվիրական ձգումները… մարդկության առաջընթացը պիտի կանգ առնի՝ դիմադրելու համար այդ բիրտ, վայրենի հրոսակներին…

Պրոֆեսորը կանգ առավ էմմայի դիմաց ու նայում էր նրան՝ ասես նոր միայն նկատելով նրա ներկայությունը։

— Պատերա՞զմ… ահոելի ու երկարատև… էմմա, արդյոք սա չի նշանակում, որ վարագույր է իշնելու մեր գիտական աշխատանքի վրա, որ մենք պիտի ամեն ինչ թողնենք և մեր ամբողջ ուժերը լարենք վայրագ Փաշիզմի գեմ… արդյոք կհաջողվի՝ շարունակել իմ «ակտիվինի» հետագո-

տությունները... Ա՛յս «ակտիվին»... ո՞րքան դժվար կլինէ քեզանից բաժանվելը...

Էմման վեր թռավ տեղից:

— Հայրիկ, ես կարծում եմ, որ դու իրավացի չես. քո տարակուսանքը նրանից է, որ շատ ես սիրում գիտությունը. բայց չէ՞ որ այդ մեծ պայքարում ամեն մեկին միջակված է իր գերը. գիտությունը կշարունակի իր մեծ գործը և դու էլ կմնաս քո պատվավոր գերում:

Պրոֆեսորը կարծելով, որ իր դատողությունների հոսանքը դիմագրության է հանդիպում՝ զարմացած նայում է Էմմային:

— Ե՞՞ծ, կապրենք, կտեսնենք, Էմմա, թե ի՞նչ է բերում և ինչ է պահանջում մեղանից այս աշեղ փոթորիկը...

Մի քանի օր անցավ այսպիսի տատանումների ու թերի աշխատանքի մեջ, այնուհետև պրոֆեսորը մտավ իր սովորական հունը և շարունակում էր «ակտիվինի» հետազոտումները: Բայց որքան էլ նա լարում էր իր ուժերը, մի ներքին ձայն կարծես միշտ հիշեցնում էր նրան, որ պատերազմ է, որ պիտի զբաղվի ռազմական գործին վերաբերող պրոբլեմներով: Ու չնայած ջերմ սիրուն, որով նվիրված էր իր «ակտիվինի» գյուտին, նա հաճախ տարակուանքի մեջ էր ընկնում: Այդ ապրումների մասին նա չէր խստում Սամվելի ու Էմմայի հետ, բայց շատ շանցած առիթը հարկադրեց նրան բացելու վարագույրը: Մի օր, երբ Սամվելը եկավ հանձնելու էր հերթական վերլուծումը, նա ասաց.

— Հարգելի պրոֆեսոր, ձեզ պետք է հաղորդեմ մի անակնկալ լուր, ինձ կանչում են բանակ...

— Մի՞թե, — զարմացավ պրոֆեսորը, — ինձ թվում է, քեզ կտանեն ռազմա-քիմիական գործարան...

— Այո՛, ես էլ ենթադրում եմ. երեք օրից պիտի մեկնեմ: Ռոպեաշակի լուսությունից հետո պրոֆեսորն ասաց խոր-չըրդածելով.

— Հայրենիքի պաշտպանությունը, Սամվել, ամենաբարձր գործն է, որ կարող է վիճակվել մարդուն, բայց քեզ փոխարինելու հարցը մտահոգություն կպատճառի ինձ...

— Ոչինչ, կարծում եմ ինձ փոխարինող կգտնվի, եմման էլ կշարունակի իր աշխատանքը:

— Բայց հարցի մի ուրիշ կողմ էլ կա, որի մասին ես չեմ խոսել քեզ Հետ... քո գնալը նորից հրահրում է ինձ գեղակի այն ձգտումը, որ շարժվում է մեջս՝ պատերազմի առաջին օրից... Բանն այն է, Սամվել, պիտի խոսուվանեմ, որ այս պատմական օրերում դժվար է նստել հանգիստ և զբաղվել գիտական հետազոտություններով. կարծես մագնիսային թրթիռներ եմ զգում, կամ թե մեջս խոսում է մի երկրորդ մարդ և միշտ հիշեցնում է, թե պետք է արձագանքել պատերազմին՝ զբաղվել նրա հարուցած պրոբլեմներով... ցավում եմ, որ իմ կռվելու տարիներն անցել են, թե չէ կուզեի քեզ Հետ գնալ ձակատ...

— Բայց չէ՝ որ դուք ել պատվավոր գործ ունեք կատարելու այստեղ՝ թիկունքում, դուք մոռանում եք, որ ձեր գյուտը բոլոր ժամանակների համար է և գիտության հաղթանակներից մեկն է լինելու:

— Այո, ճիշտ է, գիտությունը բոլոր ժամանակների համար է, նա ուղեկցում է Հումանիզմին, ընկերական կյանքի ամենաբարձր իդեալներին: Բայց այդ լուսավոր շարժման գեմ է գալիս ֆաշիստական սե ուեկցիան իր ստրկական շղթաներով... Ահա այսպիսի ահեղ ժամին ո՞րն է գիտության անհիքը, արդյոք այն չէ, որ պիտի պայքարի այդ մահաբեր շունչը վերացնելու համար, պետք է օգնի ոչնչացնելու ֆաշիզմի հրդաներին, որպես մարդկության ամենաժամանակնաստ վնասատուներին... ֆաշիզմը ժանտախտ է, կատաղած շների սհմակ...

— Քննունում եմ այդ բոլորը,—ասաց Սամվելը, — բայց և այնպես կարծում եմ, որ ձեր գյուտը՝ նպաստելով մարդկության երջանկության, հենց դրանով էլ պայքարում է

«Քինասատումների» դեմ, այնպես որ ինչ էլ լինի՝ այդ աշխատանքը չպետք է թողնվի...

— Եթե թողնեմ «ակտիվինը», դա ի՞նչարկե կլինի միայն ժամանակավորապես...

— Շատ ուրախ եմ, որ այդպես է ձեր որոշումը: Ես ոլետք է խստափանեմ՝ այնպես եմ ընտելացել ձեր աշխատանքին, որ գժվարությամբ կարող եմ պատկերացնել ձեզ առանց «ակտիվինի» և այդ հույսով էլ ավելի մեծ եռանդով Համակված կդնամ բանակ: Այժմ թույլ տվելի ձեզ հրաժեշտ տալ և մաղթել մեծ նվաճումներ գիտության մեջ...

— Գնա՞ս բարով,—ասաց պրոֆեսորը վեր կենալով տեղից և համբուրմելով Սամվելի հետ,—գնա, որտեղ էլ լինես՝ պայքարիր մեր հաղթանակի համար...

Սամվելը դուրս գնաց պրոֆեսորի կարինետից՝ թողնելով նրան մի քանի րոպե հրաժեշտի խորը տպավորության տակ:



Սամվելի գնալուց հետո տիսրությունն ստեղծագործ էր պրոֆեսորին: Մի կողմից նա մտածում էր, որ Սամվելը ապադա խստացող գիտական աշխատող է, բայց նրան տարան ճակատ... ո՞վ զիսե, ի՞նչ կլինի... մյուս կողմից էլ նա նկատել էր, որ էմման սիրահարված է նրա վրա, և քանի որ ենթադրում էր, թե սերը փոխադարձ է, ուրիշն հավանական է, որ խոսք են տվել ամուսնանալու, իսկ այժմ... շքանում է այդ երիտասարդ սրտերի երջանկությունը... ի՞նչ է ուրեմն էմմայի դրությունը. երկի գժվար ապրումների մեջ է, պետք է խոսել հետը, սիրտ տալ...

Ամեն անդամ, երբ էմման գալիս էր մոտը, պրոֆեսորը միշտ նայում էր նրա դիմքին, ուզենալով գուշակել նրա տրամադրությունը, բայց հետաձգում էր բացատրությունը: Այդ օրը, երբ էմման եկավ, պրոֆեսորը բռնեց նրա ձեռքից և ժպտաց հայրական գգվանքով:

— Էմմա, մեր թիվը պակասեց, Սամվելը գնաց, բայց

մենք երկուսով մի կերպ կշարունակենք դործը... նստիր մոռաքս, ևս կարիք ունեմ քեզ ջետ դրուցելու:

Էմման նստեց հոր կողքին: Պրոֆեսորն բովեաչափ լուսէր, դժվարանակով շոշափել «փափուկ հարցը»:

— Էմմա, — ասաց նա, — ևս նկատում եմ, որ զու արխուրում ես, գուցե գրա պատճառը Սամվելի գնա՞լն է...

Էմման թեքեց իր գեղեցիկ զլուխը և կարմրեց, շփոթեց անսպասելի հարցից:

— Ասա, աղջիկս, — շարունակեց պրոֆեսորը, — իշարկե դժվար է, զգացմունքների հարց է, բայց զու շպետք է քաշվեն հորիցդ... արդյո՞ք ձեր մեջ փոխադարձ համակրանք կա՞...

Էմման բարձրացրեց զլուխը, բայց ամաչելուց չնայեց հոր դեմքին:

— Հայրիկ, քեզանից չեմ թաքցնի, — ասաց նա ցածր ձայնով, — մենք միմյանց սիրում ենք, բայց ես տիրում եմ ոչ այն պատճառով, որ բաժանվել եմ Սամվելից. կա մի ուրիշ հանգամանք... պետք է տահմ, որ որոշել եմ գնալ ուղղաձակատ...

Պրոֆեսորը նայեց զարմացած, կարծես սիալ էր լսել էմմայի խոսքերը:

— Այո, ևս այլպես եմ որոշել, — շարունակեց էմման, — բայց երբ մտածում եմ, որ քեզ պիտի թողնեմ մենակ, մտածում եմ, թե ո՞վ կարող է տալ քեզ այն խնամքը, որ ես ստանձնել եմ մայրիկի մաշվանից հետո, ևս տիրում եմ, մանավանդ այժմ՝ քո այդ նշանակալից հետազոտումների ժամանակ...

— Էմմա, ջիշտն ասած ես մեղանչել եմ քո վերաբերմամբ, ենթադրելով, որ քո տիրությունն անձնական զգացմունքներից է... ուրախ եմ, որ սիալվել եմ և դովում եմ քո որոշումը: Իսկ իմ մասին մի մտաշոգիքիր:

— Ես չեմ կարող հանգիստ սրանով սրոշել իմ գնալու ժամկետը, քանի որ միշտ իմ աշքի առաջ է քո դրույթումը:

— Ոչինչ, էմմա, դա էլ դժվար չի կարգավորել. անշուշտ

ևս կդանեմ գիտական աշխատողներ, իսկ ինչ վերաբերում է իմ տնտեսության, մի բան կանենք... և հետո ես էլ կսովորեմ ավելի ուշադիր լինել և կարծում եմ՝ հաջողություն կունենամ...

— Մի հարց էլ կա, հայրիկ... վերջիրս նկատում եմ, որ դու զբաղվում ես ուրիշ հարցերով և կարծես աշքաթող ես արել «ակտիվինի» գյուտը:

— Աղջիկս, դու ինձ զինաթափ ես անում. Ճիշտ է, վերցերս ես աշխատում եմ մի ուրիշ պրոբլեմի վրա, իսկ ռակտիվինի-ին հատկացնում եմ միայն ժամանակիս մնացորդը...

— Դա ինձ այնպես տիսրեցնում է հայրիկ, թվում է, թե կործանվում է մի գեղեցիկ, հոյակապ շենք...

— Էմմա, ես գիտեի քո վերաբերմունքը և այդ պատճառով էլ չէի հայտնում քեզ. բայց քո եզրակացությունը շտապողական է:

— Ես կուզեի, որ դու հանգիստ սրտով շարունակես քո աշխատանքը:

— Լավ ես ասում, բայց մի՞թե կարելի է մեր օրերին հանգիստ լինել, երբ ամեն կողմից անհանգիստ ձայներ են զալիս, — կանչում են դեպի այսօրվա ուազմական պրոբլեմները...

— Գիտեմ, հայրիկ, դա առաջանում է քո բնավորությունից, — քեզ միշտ այնպես է թվում, թե բավականաշափ ակտիվ չես, բայց դա իհարկի միայն թվում է, դու մոռանում ես քո գյուտը, որ եթե ավարտվի՝ կլինի գիտության փառավոր նվաճումներից մեկը: Այդպիսի աշխատանքի հետաձգելը ներելի չէ:

— Բայց և այնպես... — ասաց պրոֆեսորը, սակայն էմման նրա խոսքը կտրեց:

— Չէ, հայրիկ, ես չեմ թողնի, որ առարկես, զնանք նախաճաշելու...

էմման թեր տվեց իր հորը: Պրոֆեսորը գնում էր ու մտածում էմմայի խոսքերի վրա, — «կործանվում է մի հոյա-

կապ շենք...» պատերազմն սպառնում է գիտությանը... Սամ-
վելը գնաց, գնում է և էմման, շատ շանցած ևս կմնամ միայ-
նակ... պատերազմը կարող է ոչնչացնել այդ մատաղ սրբե-
րը իրենց սիրո հետ... Բայց այդ բոլորի տեղ աճում է հայ-
րենիքի սերը և պաշտպանությունը. զրա համար պիտի զոհ-
վի ամեն ինչ...

Պրոֆեսոր Մելյանի մեջ նկատվում է փոփոխություն:
Նա դարձյալ քրտնաշան աշխատանքի մեջ էր; բայց առաջվա-
նման չեր մնում փակլած իր կարինետում, այլ հաճախ լի-
նում էր ժողովներում, դասախոսություններ էր կարդում
բանվորական ուայններում: Այնպես էր թվում նրան, կար-
ծես մեկը շարունակ հորդորում էր, ոգևորում, շտապեցնում:

Նրա հիմնական աշխատանքն այժմ կհնտրոնացած էր
մի ուրիշ քիմիական գյուտի վրա, որն ուղմական նշանա-
կություն ուներ և վերաբերում էր ականների լիցքի նոր բաշ-
ղադրանում էր: Նա երբեմն խորհրդակցում էր մի ինժեների
հետ իր նոր գյուտին վերաբերող խնդիրների շուրջը: Սակայն
այս բոլորի մասին նա խուսափում էր պատմել էմմային,
ուզենալով «այուրպրիզ» անել այն օրը, երբ վերջնականապես
կընդունվի ու կիրագործվի իր գյուտը:

Պրոֆեսորի նոր, ուազմական գյուտը երկար չմնաց անո-
րոշության մեջ: Մի քանի փորձերից հետո նա հավանության
արժանացավ Պաշտպանության ժողկումատի կողմից և
ուղարկվեց գործարան: Նա արդեն ուղում էր հայտնել Էմ-
մային, բայց անակնկալ կերպով վերջինս կանխեց պրոֆե-
սորին: Մի օր նա ուրախությամբ բռնկված ներս մտավ Հոր-
կարինետը:

— Հայրիկ, Սամվելից նամակ է ստացվել,—ասաց նա
կարմրելով և աշքերի առանձին փայլով:

— Ի՞նչ է զրում, մի կարդա տեսնենք, — ասաց պրոֆեսորը, վարակվելով ուրախությամբ:

— Այս, ինչ է զրում... նախ՝ գործարանում է աշխատում, բայց թե ո՞րտեղ՝ հայտնի չէ... Հետո ասում է՝ լավ եմ, առողջ եմ...⁵

— Լավ է, լավ է, — արձագանքեց պրոֆեսորը:

— Եսկ հետո՝... չեմ ասի...

— Դա դադտնիք է:

— Այս, բայց քո դադտնիքն է, հայրիկ:

— Ի՞նչպես:

— Սամվելը գրում է. — «Ես ծանոթացա հարգելի պրոֆեսորի նոր գյուտին և հիացա ուրիշների հետ միասին»...

— Այս քեզ անսպասելի բան...

— Ուրեմն, հայրիկ, քո նոր դյուտը մեծ ուշադրության է արժանացել... այժմ ուրախացիր լիովին և այլս չթաքցընես քո էմմայից...

Պրոֆեսորը ծիծաղեց:

— Լավ բռնեցիր ինձ, էմմա, ես ուզում էի քեզ սյուրպարիզ անել, բայց ինչպես ասում են՝ շաբաթն ավելի ջռտ եկավ, քան ուրբաթը:

Էմման մոտեցավ, զրկեց հորը և համբուրեց, ապա ասաց խանգավառ.

— Շնորհավորում եմ, հայրիկ, և միաժամանակ հայտնում եմ մի ուրիշ նոր լուր, — ես շուտով մեկնելու եմ ուազմաճակատ... քո մասին հոգացողներ եմ գտել...

— Ես էլ սիտի մեկնեմ ճակատ՝ անձամբ դիտելու իմ գյուտի գործազրությունը: Ուրախացիր, էմմա, պիտի այցելեմ և ուզմական գործարանը. Հավանական է, որ տեսնեմ Սամվելին...

— Ուրեմն միասին ենք դնում...

— Այս, սիրելիս, գնում ենք...

— Բայց, հայրիկ, մի՞թե դու թողնելու ես քո «ակտիվինի» հետազոտությունները:

— Ու, վերադառնալուց հետո ամբողջովին կզբաղվեմ
նրանով:

— Գնո՞ւմ ենք, գնում ենք,—ասում էր Էմման ոգևոր-
ված,—այժմ պետք է ճամփի պատրաստություն տեսնել:—)

Աւ արագ դուրս գնաց:

...Երեք օրից պրոֆեսոր Մելյանն իր աղջկա հետ մեկ-
նեցին ուղղմաձակատ:

Ա Լ Ե Ք Ը

«Թեաք է մի այնպիսի գյուտ անել, որ մեր հաղթանակ-ների շարքն ընկնի», —ասում էր ինքն իրեն մեքենավար Ալեքս: Ճիշտ է, գործարանում նա մի քանի տեխնիկական առաջարկներ էր արել, որոնք ընդունվել էին, բայց այդ բոլորը նա համարում էր աննշան: Նրա միտքն այժմ կենտրոնացել էր մի մեքենայի վրա. արդեն երեք ամիս էր, ինչ նա զբաղվում էր զրանով, թե գործարանում, այն ժամերին, երբ աշխատանքը գաղարում էր և բանվորները ցրվում էին, և թե սանը՝ մի մողելի վրա, որը հատկապես պատրաստել էր իր գյուտի համար:

Սակայն իր այդ պրապումների մասին նա ոչ ոքի չէր հայտնում; Նրան թվում էր, թե գյուտը նման է թոշոնի, եթե բաց թողնի ձեռքից (այսինքն իմաց անի), նա կթոշի, կան հնատանա... Երբեմն էլ մտածում էր, որ հայտնելու դեպքում, թեկուզ և շատերը կիրախուսեն, բայց և այդ խրախուսանքով կիսանգարեն իրեն: Վերջապես այդ բոլորից զատ մի ներքին ձայն միշտ ասում էր նրան — «Արդյոք սնապարծություն չի տուածուց հայտնել, խոստանալ այն, ինչ դեռ իրականացրեած չէ: Թող գործը եփվի, պատրաստվի, հետո դրվի սեղանի վրա...»

Բայց արդեն չորս օր է, ինչ նա կտրվել է իր գյուտի աշխատանքից, —պատճառն այն է, որ իր փոքրիկ տղան, հինգ տարեկան Ռուբիկը հիվանդացել էր: Ալեքը փոխարինում էր կնոջը, գործարանից վերադառնալուց հետո, նստելով հիվանդի մոտ մինչև ուշ գիշեր:

Երեխան պառկած էր նվազած աշքերով, տաքությունից

կաշմրած այտերով. նա ծանր էր շնչում, ասես օդ էր աղերսում իր նյարդային, զայրացկութ ձայնով:

Երբեմն Ալեքը վեր էր կենում տեղից և անազմուկ քայլերով մի քանի անգամ անց ու դարձ անում սենյակում: Այդ ժոմենաներին նրա աշխին էր ընկնում սեղանի վրա դրված մեքենայի մողելը, որը կարծես ձգողական ուժով քաշում էր նրան դեպի իրեն: Ու նրա քառասնամյա դեմքը, որն այս վերջին ամսում, իրեն համակող զյուտի շնորհիվ անխնամ էր մնացել ու մազակալել, ակոսվում էր մի ցնցող կնճիռով... «Պետք է շարունակել, —մտածում էր նա, —այս զյուտը շատ կարեոր է գործարանի համար... հայրենիքի համար...», բայց այդ բոլեներին երեխայի մի շարժում, մի շշով սթափեցնում էր նրան և նա շուտով մոտենում էր ու նորից նստում չիվանդի մոտ:

Ալեքը տառապում էր, շարունակ կասկածելով, որ երեխայի հիվանդությունը կարող է բարդանալ, բայց նաև տառապում էր որպես ձամաքում՝ իր գյուտի աշխատանքից կարվելու պատճառով: Նա մերթ կուանում էր, ականց դնում երեխայի շնչառությանը, կամ զգուշությամբ շոշափում նրա փոքրիկ մատները՝ տաքությունն ստուգելու համար, մերթ մաքերով դերանում, անձնատուր լինում իր գյուտին: Ճեթե մեքենայի անվակները դասավորեմ այնպես... իսկ լեզվակը գոփոխեմ»—մտածում էր նա ու երեակայությամբ պատկերացնում ամեն ինչ այնպես սպազ, տսիս ինքը, աներենույթ նստած մեքենայի մեջ, շարժում էր բոլոր մասերը: Մտածում էր ու նյարդայնորին ձեռքերը սեղմում, ձըգտում էր դեպի իր մեքենաները ու նորից կրկնում—«պետք է շարունակել»...

Հետեւյալ օրը, վերապառնալով գործարանից, Ալեքը նկատեց իր կնոջ վշտահար դեմքին մի թեթև փոփոխություն դեպի լավը: Կինը հայտնեց, որ բժիշկը «հույս է տալիս և տարությունն էլ նվազ շափով իշել է:

Ալեքը ինքն էլ հուսադրվեց և նստելով երեխայի մոտ, նկատեց, որ նա ավելի հանգիստ է շնչում և ավելի երկար է

քնում: Նորից ժամերն անցնում էին և նրա միտքը տարբուերդ-փում էր մերթ իր երեխայի, մերթ իր գյուտի վրա: Այսօր տուավոտից նրա երեխակայությունը ճնշում էին այն փոփոխումները, որ նա մտադիր էր անելու մեքենայի մեջ, գյուտը թվում էր այնքան իրական, այնքան մոտ իր նպատակին...

— Մա՞յրիկ... Հա՞յրիկ... — Հանկարծ շշնչաց Ռուբենկը:

Ալեքը կուցավ, դիտեց հիվանդի դեմքը և ղարմացավ. երեխայի ձակատին նկատվում էին քրտինքի կաթիլներ: «Երեք լավանում է» — մտածեց նա, հիշելով բժշկի ասածը: Այդ տրամադրությունն առիթ տվեց նրան ավելի թեքիլու դեպի իր գյուտը. նա վեր կացավ, զգուց քայլերով մոտեցավ սեղանին ու ձեռք առավ իր մողելը: Մի քանի րոպե նա մուլեռանդ հայացքով դիտեց, ապա սկսեց պտտացնել դանդաղ, կամացուկ, որպեսզի ձայնը հիվանդի ականջին շհասնի: Բայց քիչ անց, մոռանալով, նա անզգուշությունից բաց թողեց մի զսպանակ և շնկացրեց: Այդ շնկոցի վրա անսպասելի զարթնեց երեխան:

— Հայրիկ, այդ ի՞նչ է, խաղալի՞ք է:

— Չէ, Ռուբենիկ, մեքենա է, ոու չո գիտե՞ս...

— Բեր ինձ մոտ, պտտացրու...

Ալեքը մոտեցավ անկողնին:

— Ի՞նչպես ես, Ռուբենիկ, — մեղմ ձայնով հարցրեց Հայրը:

— Հիմա լավ եմ, — ընդհատվող, հոգնած ձայնով պտտախանեց հիվանդը:

Ալեքը մի քանի անգամ պտտացրեց անվակներն ու շրիկացրեց, բայց այդ միջոցին հանկարծ կանգ առավ աշքերը սենոելով մողելի վրա:

— Հայրիկ, էլի պտտացրու, — դիմեց նորից Ռուբենկը, բայց Ալեքը կարծես չէր լսում երեխայի անհամբեր ձայնը, նա ինքնամոռացության մեջ էր. թվում էր՝ մողելը վառվում էր աշքերի առաջ... Հանկարծ բացագանչեց.

— Գտա՞ , գտա՞...

— Հայրիկ, ի՞նչը գտար:

Երեխան տարակուած նայում էր Հորը, բայց պատաս-

իսան շստանալով, դժգո՞ւ զեմքով շուռ եկավ դեպի պատը:

Ալեքի կինը, որը հարեան սենյակում կարգի էր բերում Ռուբիկի սպիտակեղենը, լսելով խոսակցությունը, զարմացած ներս մտավ:

— Դրա ժամանակն ես գտե՞լ, — կշտամբեց նա ամուսնուն, նկատելով նրա ձեռքին մողելը:

Ալեքն սթափվեց այնպիսի զգացումով, կարծես մի անուղղելի սխալ էր կատարել:

— Երեխան ինքն ուզեց, ես էլ բերի, — ասաց նա:

— Ինքն ուզեց, — ուրախացավ մայրը, համարելով դա չավանալու նշան ու մոտեցավ Հիմանդին:

— Ռուբի՞կ, — փաղաքուշ ձայնով կանչեց նա, բայց առջան արդեն քնել էր:

— Լավ է եկար, ես քեզ էի սպասում:

— Ի՞նչ է, երեխան նեղանում է՞ր:

— Չէ, իմ գյուտը... հաջողվում է... մի նոր վարիանտ չկավ միաբա, Հենց իսկը սա է...

— Է՞զ, քո գյուտը... բա՞նի ժամանակ է, քեզ հալումաշ է անում:

— Թող չարչարվեմ, տանջվեմ, բայց նպատակիս հասնեմ... Հայրենիքի համար ամեն զոհողություն կարելի է տնել: Այնքան եմ անհամբեր, որ Հենց Հիմա կուզեի գնալ գործարան...

— Հիմա... գիշերն ի՞նչ ունես այնտեղ... դեռ ժամի ըրկուսն է:

— Աչ, ե՞րբ պետք է լուսանա... դեռ քանի ժամ կա...

Ալեքը երեխայի նման շփոթված նայում էր կնոջը, ասես նոր միայն Հիշելով, որ գործարանն այդ ժամին փակ է և իրեն ներս չեն թողնիլ:

— Բա չե՞ս քնելու:

— Չեմ կարող քնել:

Ալեքը նստեց սեղանի մոտ ու աչքերը հառեց իր ձեռքի մողելին: Նա ինքնամոռացության մեջ գննում էր, պտտացնում, ինքն իրեն խոսում: Կինը նստել էր Ռուբիկի մոտ: Նա

սովոր էր ամուսնու տարօրինակ բնավորության և ուշադրություն չէր դարձնում այդ բոլորի վրա:

Առավոտը ժամի վեցին մոտ Ալեքս վեր թռավ տեղից:

— Գնում եմ,—ասաց նա, շփոթված հայացք ձգելով կնոջ վրա:

— Դեռ վաղ է, սպասիր:

— Չէ, ես կխնդրեմ, որ ինձ աշխատանքը սկսելուց առաջ ներս թողնեն:

Ալեքս մոլորված մարդու տեսքը ուներ. նրա աչքերը կարմրած էին, մազերը խառնված, ակնոցը կախվել էր մի ականջի վրա:

— Մի կարգի բերքեղ, այնպես զնա, այդ ի՞նչ է քո արտաքինը,—դժուճ շեշտափ ասաց կինը:

Բայց Ալեքս չէր լսում: Նա ինչոր թղթեր վեցցրեց Հետու և գուրս զնաց: Հանկարծ կինը նկատեց սեղանի վրա նրա զլիարիք ու խոկուցն վերցնելով, արագ քայլերով հանալ Հետեկը ու կանչեց սանդուղներից:

— Չե՞ս նկատում, առանց գլխարկի ես գնում:

— Ե՞ս, զրոյք տանի, — վինթինթաց Ալեքս ու բարձրացավ վերև, գլխին խորք դրեց իր ճիշտած կեպին ու նորից շտապով իջառ սանդուղներից:



Մի շաբաթվա մեջ երեխան առողջացավ: Բայց այն զիշերը հանկարծ բացված գյուտի նոր վարիանտը ամբողջովին կլանեց Ալեքսին: Եթե մինչև այդ նա տարված էր իր գյուտով, այժմ՝ կարելի էր ասել՝ արբեցած էր: Առավոտից երեկո, նրա միտքը անդադար զբաղված էր դրանով: Երեկոն զիշերները զարթնում էր ու երկար մտածում: Շարունակ աշխատում էր, փորձում, շափում, հարձարեցնում մեքենայի մասերը: Հոգնածությունը անսե գոյություն չուներ Ալեքս համար: Նրան թվում էր, թե նո՞ր է միայն հասկանում, թե ինչպես պետք է աշխատել:

Քանի գործն առաջ էր գնում, նա ավելի էր դժվարանում ծածկել գյուտն իր ընկեր-բանվորներից: Նրանք նկատում էին Ալեքսի փնտրումներն ու փորձերը, բայց մտածում էին, թե երևի աշխատում է որևէ թեթև փոփոխություն մտցնել մեքենայի մեջ՝ ուղիղնալացման նպատակով: Գործարանի դիրեկտորը նույնպես էր մտածում և մի առանձին հարգանք զգալով դեպի իր մերենավարը, չեր հետապնդում նրան այդ պարապմունքի մեջ, ավելի լավ համարելով ազատ թողնել նրան գյուտարարության ասպարիզում:

Բայց մի առավոտ Ալեքս հանկարծակիի եկավ, երբ գործարանի ցրիշը հայտնեց նրան, թե դիրեկտորը կանչում է: Նրան թվաց, թե վերջինս բացել է իր «գաղտնիքը» և կանչելու պատճառը հենց իր գյուտն է:

Երբ նա մտավ դիրեկտորի կարինետը, այնտեղ նստած էր ակնոցավոր սրաքիթ քարտուղարը, որը թղթապանակը բացած հանում էր իրար հետեւից գրություններ և դնում դիրեկտորի առաջ ստորագրելու՝ համառուս բացարություններ տալով: Նկատելով Ալեքսին, դիրեկտորն ընդհատեց իր գործը, պատվիրելով քարտուղարին գալ մի ժամկից հետո, ապա մոտ կանչեց Ալեքսին բարյացակամ ժայիտով:

— Ալեք, արի նստիր, տեսնենք:

Քարտուղարը հավաքեց իր թղթերը ու խոժուած հայացք ձգելով Ալեքսի վրա, դուրս գնաց:

Դիրեկտորն սկսեց աննշան հարցերից:

— Ի՞նչպես ես, Ալեք:

— Լավ եմ, շնորհակալ եմ...

— Ասում են ինչոր արտաժամյա աշխատանքով ես զբաղված...

«Երեխ իմացել է»—տագնապով մտածեց Ալեքը: Նա շփոթեց և պատասխանեց ուշացումով.

— Մերենան լավ չէր աշխատում, կարգի բերի:

— Խսկ աշխատավարձի մասին երեխ կդիմես...

— Զէ, ընկեր Շավարշ, դուք մասին խոսք չի մինելու:

— Ի՞նչո՞ւ:

— Զէ, այդպես բան չկա, — ճնշվելով ասաց Ալեքս, զգալով, որ մի երկու այդպիսի Հարցերից ճետո ստիպված կլինի «բացել» իր գյուտը:

— Ի՞նչ էր պատահել մեքենային:

Ալեքս մեղմացրեց իր սուտը, գարձնելով մի շատ թեթև զործ:

Դիրեկտորը զարմացավ, որ իր անմեղ Հարցերն այդպես հուզեցին Ալեքսին: Նրա կլոր, փափով գեմքին խաղաց ժպիտը. նա վերագրեց մեքենավարի հուզումը նրա տարօրինակ բնավորությանը:

Ալեքս հավատացած էր, որ դիրեկտորն ամեն ինչ գիտե և այժմ ուղղակի հարց կտա իր գյուտի մասին, բայց նա անսպասելի փոխեց խոսքը.

— Լավ, Ալեքս, զրա մասին ճետո կխռունք, իսկ այժմ ես քեզ կանչել եմ մի ուրիշ գործի համար: Մենք խոշոր պատվեր ենք ստացել, որը վերաբերում է երկրի պաշտպանության, բայց դա ամբողջությամբ կատարելու համար անհրաժեշտ է բարձրացնել գործարանի արտադրանքը:

Եվ դիրեկտորը, որպես ինժեներ, բացատրեց, թե ի՞նչ տեխնիկական փոփոխություններ են պահանջվում այդ պատվերի կապակցությամբ:

— Ուրիշն, ընկեր Ալեքս, հարցն այսպես է դրված, պետք է մտածենք, թե ի՞նչ կարելի է անել...

Դիրեկտորը, ըստ սովորության, խոսելիս հաճախ նայում էր առջեր դրված բլոկնոտին: Եթե նա դիտեր իր մեքենավարի գեմքը, կնկատեր, որ մի ուրախ շարժում անցավ նրա վրայով: Ալեքսի աշքերը փայլում էին, ժպտում: Նա այժմ իրեն զգում էր որպես մի հայր, որը ընծաներ է պատրաստել իր երեխաների համար, բայց ժամանակ առ ժամանակ թարցնում է, ավելի անսպասելի ու գրավիչ դարձնելու նպատակով: Ալեքսի համար պարզ էր, որ իր գյուտը համապատասխանում էր հենց այդ պատվերին, բայց նա չասաց այդ, մտքում վճռելով, որ գյուտը կշատապեցնի ամեն կերպ,

բայց կհայտարարի միայն վերջացնելու օրը, երբ այն որևէ
կասկածից դուրս կլինի:

Դիրեկտորը բարձրացրեց գլուխը:

— Հը, ի՞նչ ես մտածում, Ալեք:

— Դե, ընկեր Շավարշ, դուք լավ գիտեք, թե այդ գործի
մեջ ինչ դժվարություններ կան... կմտածեմ... տեսնենք կա-
րելի է մի բան անեմ...

Ալեքը խոսում էր այնքան համեստ տոնով, որ եթե մի
կողմնակի մարդ լսեր, կմտածեր, թե նա անկարող է մի
բան անել: Բայց դիրեկտորը, ճանաչելով նրան, գիտեր, որ
այդ անորոշ խոսքերը նշանակում էին, որ նա խսկապես
կկպչի գործին և մի որևէ հնար կգտնի:

— Դե լավ, ընկեր Ալեք, ուրիշն կաշխատես այդ ուղ-
ղությամբ... Ես էլ կմտածեմ... Քեզ ինչ մատերիալ հարկավոր
է, կտրվի, բայց պետք է խմանաս, որ գործը շտապողական է:

Ալեքը դուրս եկավ գործարանի բակը և բաց թողեց իր
ուրախության զսպանակները: Նա ուրախ էր, որ իր գյուտն
ընդառաջում է այդ խոշոր պատվիրին, որ ինքը օգնելու է
հայրենիքին, նրա հաղթությանը...

«Բայց պետք է շտապել»—Հիշեց նա և արագացրեց քայ-
լերը: Երբ վերադարձավ իր տեղը, նրա օգնական Վարդգեսը
խարտոցում էր ինչ-որ սոնակ: Նա, ըստ սովորության շատ
լուրջ էր, նույնիսկ խոժողած դեմքով, ասես վիճում էր գործի
հետ:

— Վարդգես, քաջ եղիր,—ասաց Ալեքն այնպիսի տոնով,
կարծես քեֆից էր վերադառնում:

— Անհոգ կաց, ընկեր Ալեք, գործի տակ չեմ մնալ:

— Բայց գործ էլ կա, գործ էլ... դու միշտ ինձ լավ օդ-
նական ես եղել, իսկ հիմա պետք է լինես, ինչպես ասում
են—հոգով ու սրտով...

— Դե, քեզ էլ հայտնի է թե ինչպես եմ աշխատում...

— Չէ, մի ուրիշ պատվավոր գործ են հանձնել մեզ.
Հայրենական Պատերազմի համար է. ոչ մի զանք չպիտի
ինայենք...

Ու Ալեքը բացատրեց մի քանի խոսքով, թե ի՞նչ պատվեր է ստացել և ի՞նչ պիտի անել, բայց իր գյուտի մասին շերկարացրեց խոսքը:

Վարդպեսի լուրջ գեմքի կնճիռները փոքր ինչ բացվեցին: Նա ասաց վճռական տոնով:

— Ես պատրաստ եմ, ընկեր Ալեք, այդպիսի գործի համար ես մեկի տեղ տասն էլ կանեմ:

Ալեքը հանեց գործիքների արկղից մեքենայի մի մաս ու հանձնեց նրան.

— Սա կհարմարեցնես իր տեղը...—Ու նա ցույց տվեց, թե ո՞րտեղ և ինչպես պիտի միացնի այդ մասը:

Վարդպեսն սկսեց աշխատել: Նա միայն հեռավոր կերպով էր կուհում, թե ի՞նչ է ուզում անել Ալեքը: Օրօրի վրա դիտելով իր վարպետին, նա և զարմանում և պատկառում էր: «Ալեքն ուրիշ տեսակ մարդ է,—մտածում էր նա,—նա իր խելքով, իր հնարքներով միշտ առաջ է ձգում, կատարելագործում է մեքենաները, մարդ թե աշխատի, այդպես աշխատի»:

...Մի շաբաթ էր Ալեքը շարշարվում էր մեքենայի շուրջը: Այդ օրերին նա տեսնուու աշխատանքի մեջ ինքն իրեն մռացել էր, ոչ կարգին ճաշում էր, ոչ քնում: Երբ վերջապես ամեն ինչ պատրաստ էր, ասաց իր օգնականին.

— Դե, ընկեր Վարդպես, դու արդեն գլխի ընկար, թե ի՞նչ եմ հնարել, մնում է, որ մի երեք օր էլ լուսիլուն պահպանես... Այդ երեք օրում մենք կտանք արտադրանքը եռուկի շափով, իսկ հետո դրանից էլ ավելի...

— Քնկեր Ալեք, զարմանում եմ քիզանից, բա մարդ այդպիսի ոսկի գյուտ ունենաւ ու լուռ մնա՞...

— Հենց բանն էլ այդ է, Վարդպես, որ մարդ պետք է դործը հիմնավոր բռնի: Եթե առաջուց ասես, կարող ես խոսքիդ տակ մնալ...

Մեքենան սկսեց աշխատել նոր—փոփոխված մեխանիզմով: Հետեւալ օրը, կարդալով գործարանի արտադրանքի բյուլետենը, դիրեկտորը մնաց ապշած, —քանակը բարձրացել էր եռակի շափով...

Հուզված այդ հանելովկային թվից, նա անմիջապես կանչել տվեց Ալեքին, որի մեքենաներին էին վերաբերում այդ թվերը: Մինչ այդ նա մի անգամ էլ հանդիպել ու խոսել էր նրա հետ և ավելի հավաստիացել, որ գործը «հաջողվի», բայց այդպես շուտ և այդպիսի քանակով նա չէր սպասում:

Ալեքը եկավ: Այս անգամ նրա դեմքը կարծես լուսավորված էր ինչ-որ ներքին կրակով, վաստակավոր միտքը արտացոլում էր նրա աշքերից:

— Ալեք, սա ի՞նչ բան է, ձիշտ է՞՛, որ քո մեքենան երկու հարյուր տոկոսով բարձրացրել է արտադրանքը...

— Այո, ձիշտ է ընկեր Շավարշ, — վստահ պատասխանեց Ալեքը:

Դիրեկտորը հառեց աշքերը մեքենավարի վրա, ասես ձգտելով թափանցել նրա ներսը:

— Ի՞նչպես...

Տիրեց բոպեական լուսիլյուն:

— Ծնկեր Շավարշ, — ասաց Ալեքը, — վերջապես եկավ ժամանակը, որ ես բացեմ ձեր առաջ իմ գյուտը... Երեք ամիս է ինչ իմ ուշքն ու միտքը դրանով էր զբաղված, այժմ ամեն ինչ վերջացած, պատրաստ է...

Ու Ալեքը մանրամասն պատմեց իր գյուտի մասին:

— Ծուտով արտադրանքն ավելի կբարձրանա... — ավելացրեց նա:

— Ուրեմն լավ ես աշխատել, Ալեք, ես իհարկե գիտեի, որ դու մի բան պատրաստում ես, բայց չեի կարծում, թե այսքան խորը կգնաս: Ես էլ աշխատում էի, բայց իմ մտածածն ավելի զժվար իրագործելի է... Այդպես ուրեմն, գաղտնի գործերով էիր զբաղված, հա՞...

— Դե ի՞նչ արած, ընկեր Շավարշ, ես չեմ սիրում առաջուց ասել. թող դա իմ թերությունը լինի, բայց կարծում եմ այնքան էլ վատ չէ...

— Կեցցես, Ալեք, քո գյուտը մեր հաղթանակներից մեկն է. դու արժանի ես ամենաբարձր գնահատականի: Ու վեր

Յիենալով տեղից, նա մոտեցավ Ալեքին ու համբուրմեց նըս
Հետ:

— Դե գնանք Հիմա, աշք ածենք քո մեքենային...

Դիրեկտորը Ալեքի հետ թևանցուկ դուրս եկավ իր կա-
րինետից:

Այդ օրը ամբողջ գործարանի բանվորները խոսում էին
Ալեքի գյուտի մասին: Աշխատանքից հետո հրավիրեցին մի-
տինգ: Սկսվեցին Ալեքի ամենադժվար ժամերը: Նրան նստեց-
րին բեմի վրա, կարմիր սեղանի մոտ, դիրեկտորի և մի քա-
նի զեկավար ընկերների հետ: Նա քաշվում էր և աշքերը ձգել
էր սեղանին: Բոլորի հայացքները, բոլորի խոսքերը ուղղված
էին Ալեքին: Երբ նա նայում էր այդ բազմությանը, թվում էր,
ու իր ընկերների դեմքերը կիզիչ ճառապայթներ էին արձա-
կում իր վրա:

Նա մի չերմ երազանքի մեջ էր...

Ու երբ վերջին խոսքը տվին Ալեքին, նա հուզմունքից
դժվարությամբ հագիւ կարողացավ շնորհակալություն հայտ-
նել ընկերներին, ասել, որ իր ամբողջ շանքերը կնվիրի իր
սիրելի հայրենիքին...

Ծափահարությունների, խրախուսական բացազանչների
մեջ բանվորները ոգևորությամբ բարձրացրին Ալեքին ձեռքե-
րի վրա ու այդպես դուրս բերին դաշիճից:

Ն Ա Յ Ր Ը

Երկու օր էր, ինչ նա վճռադարձել էր սազմաճակատից։ Պատերազմի աճեղ, փոթորկալից կյանքում նրա երկարայության մեջ թիկունքային խաղաղ հայրենիքը վերածվել էր մի շքնաղ, հերիաթական երկրի, որտեղ ամեն ինչ հմալիշ էր։ Քաղաքում հանդիպող ամեն մի ծանոթ մարդ թվում էր նրան էարոտած ու մտերիմ։ Նույնիսկ տները կարծես ողջունում էին մի նոր, կենսուրախ տեսքով։ Ուրախ էր իր ընտանիքում, հարազատների մեջ, պատմում էր սազմաճակատի գեապերից ու իր սիրագործություններից, որոնց լուս վկաները կրծքի շքանշաններն էին։

Բայց այսօր, երեկոյան զեմ նա դուրս եկալ անից տխուր տրամադրությամբ։ Գնում էր այցելելու իր ընկերոց հորը։ «Ի՞արկե, — մտածում էր, — նա շատ ընկնծված կլինի Գուրգենի մահվան լուրն իմանալուց հետո, ծանր տեսակցություն կլինի...»

Նա փնտրում էր մի հնար, որ կարողանա մեզմացնել իր խոսքը, խուսափել սուր ու ցնցող զրություններից։ Ու այդ մտքերը դանդաղեցնում էին նրա քայլերը, կարծես ետ էին պահում ոտները։ Քանի անցնում էին բոպեները, այնքան ավելի էր կուտակվում նրա մեջ հուզումը։ Սրաի բարախումով նա կանդ առաջ այն փոքրիկ, հին տան առաջ, որի հետ կապված էին իր պատանեկան հուշերը։ Քանի անգամ նա էկել էր այստեղ՝ իր ընկերոց՝ Գուրգենի մոտ... Պատերազմի նախօրյակին երկուսն էլ համալսարանի առաջին տարվա թարմ ուսանողներ էին, պարապում էին միասին և հանգստյան ժամերին զրուցում ու վիճում զանգան հարցերի շուրջ։ Իսկ այժմ... Նույն բակն էր իր առջե, նույն թթենին,

բարե սանդուղքները... թվում էր, ամեն ինչ իր տեղն էր, բայց ո՞րքան մեծ էր փոփոխությունն այն օրվանից... Գուրգենն այլևս չկար... Նա սպանված էր...

Նա բարձրացավ պատշաճմբը, որի մի անկյունը ծածկված էր թթենու ճյուղերով: Այնտեղ նրա առաջ բացվեց անցյալից շատ ժանոթ մի տեսարան, որը նույնպես կարծես ասում էր, թե իսկապես ոչինչ չի փոխվել: Թափափի վրա նըստած էր իր ընկերոջ հայրը, վաթունի մոտ մի մարդ, հաղթանգամ մարմնով ու ալեխառն մորուքով: Նա ձգում էր տերողորմցայի հատիկները, խորասուզված իր մտքերի մեջ: Այդպես նա նստում էր և այն ժամանակ, հանգստանալով դրսի աշխատանքից, երեմն էլ իր պայծառ, հարցասեր հայցքով մասնակցում իրենց զրուցին:

— Բարե, հայրիկ, — հնչում է այցելուի առնական ձայնը:

— Ա՞հ, երվանդ ջան, դու ե՞ս, — ասում է ծերունին, զարթնելով իր խոհերից ու հանկարծակիի գալով անսպասելի հյուրից, ապա վեր կենալով տեղից՝ վաթաթվում է ու համբուրվում նրա հետ: — Ա՞յ բարով, հազար բարի ևս եկել... աղջի, մի աթոռ բերեք, — զիմեց նա բարձր ձայնով դեպի դոնքաց սենյակը:

Երվանդը նստեց թափախին ու զարմացած նայում էր ծերունուն: Նա չէր փոխվել, — իր առաջ նախկին քեռի Ակոփին էր՝ նույն առուց ու անխոռվ տեսքով:

Եկավ իր ընկերոջ քույրը՝ Աննիկը, աթոռը ձեռքին: Տեսնելով երվանդին, նա ժպտաց ու շառագունեց:

— Բարե, Աննիկ, — ասաց երվանդը ու տեղից վեր կենալով՝ պինդ սեղմեց նրա ձեռքը, ինքն էլ խիստ կարմրելով:

Երկուսն էլ հուզիչ ուրախության մեջ՝ զգում էին, որ անցած օրերի ինտիմ զրուցներն ու համակրական հայացքները չէին մոռացվել իրենց սրտերում, զգում էին, որ մեծացել են, հասունացել ու գեղեցկացել:

— Ի՞նչպես ևս Աննիկ, սովորում ես:

— Այս, համալսարանում...

— Հա, լավ է, ևս էլ պիտի շարունակիմ ուսումս...

Աննիկը կուզեր երկար պրուցել Երվանդի Հետ, բայց իսկույն հիշեց եղբօրը ու մտածեց, որ ավելի լավ է՝ մենակ թողնի Երկուախն,—դա կմխիթարի Հորը... Ապա արցունքները կսպելով գնաց:

Երվանդը նստեց աթոռին ու տատանվում էր. չգիտեր ի՞նչպես բացի իր խոսքը: Բայց քեռի Ակոփը, ինքը սկսեց.

— Աչքիս չեմ հավատում, Երվանդ, էս ո՞նց է եկել ես:

— Վիրավորված եմ, Հայրիկ, եկել եմ բուժվելու և հանգըստանալու:

— Վերքդ Հո ծանր չի:

— Զէ, բժիշկն ասում է՝ կանցնի... Իսկ դու, Հայրիկ, ի՞նչպես ես, — Հարցրեց նա՝ ցանկանալով խոսքը Հեռացնելու պազմաճակատից:

— Ապրում ենք, որդիս... Նամակ եմ ստանում Աշոտից, ոդաշու է, լավ անուն է Հանել, քաջ տղամարդ է..., ես էլ շարունակում եմ աշխատանքս գործարանում՝ կաղապարներ եմ շինում:

— Լավ է, Հայրիկ, որ էս դժվար տարիներին ամուր ես մնացել և աշխատում ես:

— Դե, Երվանդ ջան, դուք որ սազմաճակատում մահվան հետ էիք կովում, բա մենք էստեղ ի՞նչ պետք է անենք: Ճիմա էլ, որ քեզ տեսա, հենց իմանաս իմ Հարազատ որդու եմ տեսնում: Մի պատմիք ինձ կոխվներից, ծարավի եմ խոսքիդ...

Երվանդը դժվարության մեջ էր: Նրան թվում էր, թե քեզի Ակոփը տեղեկություններ է ուզում Գուրգենի մասին, մինչդեռ ինքը չէր ուզում նրա անունը տալ, որպեսզի շվրշտացնի Հորը՝ սպանված որդուն հիշեցնելով: Նա սկսեց պատմել այն ճակատամարտի մասին, որտեղ ինքը վիրավորվել էր: Նկարագրեց, թե ինչպես գիշերային մթնում՝ ցըրտի ու բուքի մեջ իրենց զորամասը Հարձակվեց թշնամու վրա և ճեղքեց նրա պաշտպանության գիծը: Քեռի Ակոփը լսում էր լարված ուշադրությամբ՝ դադարելով տերողորմյան ձգե-

լուց և այն սեղմելով ձեռքի ափում։ Երբ Երվանդը վերջացրեց՝ նա հարցրեց։

— Որդիս, ուրախ եմ, որ քաջ կովել ես ու մեր Հայրենիքի անունը բարձր պահել, ինքդ էլ ասողանալու վրա ես... միայն մի բան պիտի հարցնեմ՝ էդ կովին մեր Գուրգենը մասնակցում է՞ր։

Երվանդն այլևս հնար չէր գտնում հարցերից խուսափելու։ Քեսի Ակովի հանդիսատ տոնը ներշնչեց նրան, որ կարիք չկա թաքցնելու ճշմարտությունը։

— Այս, հայրիկ, Գուրգենը մեզ հետ էր և այդ կովում նա շատ աշքի ընկալ իր խիզախս, հերոսական գործերով։

Ու Երվանդը պատմեց մի դեպք, թե ինչպես Գուրգենը մենակ դիմագրել էր թշնամու քսան գինվորի։

— Միայն դա չի, հայրիկ, ուրիշ շատ քաջություններ են եղել՝ մեկը մյուսից գերազանց... Գուրգենի կրծքին հինգ շքանշան կար...։

Հայրը խոր շնչեց։

— Երվանդ ջան, դու մեր Գուրգենի վերջին րոպեներին նրա մո՛տն էիր։

— Այս, մոտն էի. Հիվանդանոցում միասին էինք պառկած։

— Հենց էդ էի ուզում իմանալ... ի՞նչպես էր, ամո՞ւր էր, տղամարդ էր...։

— Այս, հայրիկ, նրա սիրտը պողպատ էր... գիտակցությունը միշտ բարձր էր...։

Երվանդը կանգ առավ Հուզմունքից. նա դժվարանում էր հաղորդել ընկերոջ վերջին խոսքերը։

Հայրը րոպեապես մտածմունքի մեջ ընկալ, ապա կարծես մի բան մտարերելով, հանեց առջեղ փոված լրազրի տակից մի կազմած տեսր։

— Մի բան էլ պետք է առեմ, Երվանդ... դու Հիմի ոնց որ իմ հարազատ զավակն ես... էս մեր Գուրգենի տեսրն է, մեջը հիշատակարան է գրել... Մի բանի անդամ ինքս եմ

Կարդացել, Հետո մեր Աննիկին եմ կարդալ տվել, որ միտքը
ւավ հասկանամ... Որդիս, մի գու էլ կարդա տեսնենք...

Երվանդը վերցրեց տետրը ու բացելով, սկսեց կարդալ.
Ճայնով առաջին երեսից.

«1941 թ. մարտի 25. Այսօր տեսա մի այգում գարնան
առաջին ծիլերը: Ծիրանի պտուխներն արգեն ուղացել են,
դունավորվել, նոր ծաղիկներ, նոր կյանք են խոստանում:
Սրտիս մեջ էլ ասես ծագում են ծիլեր-իզձեր... Ապրել եմ
ուղում մի նոր երջանկությամբ, ապրել այնպես, որ իմ ամ-
բողջ էությամբ ծառայեմ ժողովրդին... Ես այդպիսի մի
կյանքի եմ ձգտում, որ իմ սրտի նվիրական իզձն է»...

Երվանդը կանգ առավ. նա մտաքերեց որ մի անգամ
զրուց էր ունեցել ընկերոջ Հետ այդ հարցի շուրջը:

— Որդիս, Հենց էղ տեղն էի ուղում, որ կարդաս... Գուր-
գենը գրում է, որ իր սրտի մուրազն է՝ ապրել ժողովրդի հա-
մար... Հիմի ես սրտով մի բան եմ ուղում իմանալ Գուրգենը
ուղմաճակատում քեզ էսպես խսքեր ասում է՞ր...

— Գուրգենի միտքը միշտ էսպես բարձր էր, հայրիկ,
նրա վերջին խոսքերն էս էին—Երվանդ, կասես հորս, որ չը-
վշտանա, ես իմ կյանքը տալիս եմ ժողովրդի ազատության
համար...

Հայրն անթարթ նայում էր Երվանդին, կարծես սպասե-
լով, որ նա էլի շարունակի: Հետո զլուխը շարժեց, արագ
շնչելով, կարծես իր խոհերը սպայքարում էին ալեկոծվող
վշտի դեմ:

— Երվանդ, որդիս, Հիմի իմացա ամեն ինչ... երբ որ
մարդս բարձր նպատակ է դնում իր առաջ և հասնում է
դրան իր կյանքը զոհելով, կնշանակի՝ նա հաղթում է մահին,
նա անմահ է... Իմ տղան՝ Գուրգենը որ միշտ էսպես մեծ
նպատակ է ունեցել արժանի է անմահության... Ես էլ, որ
էսպես տղալի եմ արժանացել,—թող Հիշենք նրա Հետ և մեր
Աշոտին,—ես էլ երջանիկ ծնող եմ... Դրանից է, Երվանդ, որ
դարձը մոտ չեմ թողնում սրտիս...

Երվանդը ապշած նայում էր քեռի Ակոփին, ասես մի

անսպասելի գաղտնիք էր բացել նրա մեջ: Երբ նա մի փոքր էլ զրուցելուց հետո հրաժեշտ տվեց ծերունուն՝ երկար սեղմեց նրա ձեռքը:

— Ես չեմ մոռանա քո խոսքերը, հայրիկ... Գուրգենը քո արժանավոր զավակն էր, դու էլ նրա արժանավոր հայրն ես...

Նա գնում էր՝ խորհելով այս խոսակցության շուրջը: Թվում էր նրան, թե Գուրգենն իրեն է կտակել ժողովրդին ծառայելու իր նվիրական իղձը... Թվում էր, թե այն, ինչ ինքը կատարել է այս աշխարհացունց պատերազմի մեջ, դա միայն մի նախերգանք է, և որ հաղթությունից հետո պիտի սկսի մի նոր կյանք՝ լի անձնվեր աշխատանքով...

Եվ կարծես մտքում խոսք էր տալիս ընկերոջ. — «Դու հանգիստ եղիր, Գուրգեն, ևս կիրագործեմ քո նվիրական իղձը...»

ՀՈՒՇԵՐԻ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Հասնելով հայրենի փոքրիկ քաղաքը՝ նա իշավ ավտոյից իրենց տան առաջ և մտավ գավիթը։ Այստեղ ամեն ինչ առաջվան խաղաղ վիճակումն էր. Հավերը քզուզում էին թթենու տակ, իսկ պատշգամբի վրա, որը մի քանի աստիճան գետնից բարձր էր, կատուն խաղում էր իր ձագերի հետ։

Պատշգամբից նա աշք ածեց ծայրի փոքրիկ խոհանոցին, այնուհեղ էլ մարդ չկար, ապա մտավ միջանցքն ու սենյակի դուռը զգուշությամբ բանալով, տեսավ իր մորը. այդ բոպեին նա թախտին նստած՝ բրինձ էր ընտրում՝ աշքերին ծուռ գրած ակնոցի օգնությամբ։

— Մայրի՛կ, — կանչեց նա մեղմ ձայնով։

Մայրը վեր թռավ, թափելով ձեռքի բրինձը ու մոտ վազեց։

— Վա՞յ, Աշոտի՛կ ջան, դու ե՞ս, — բացազանչեց նա ու վրա ընկավ, գրկեց. Համբուրներ տվավ, թրջելով նրա գեմքը արցունքներում։

Նկատելով, որ մայրը ցնցող ուրախությունից նվազում է՝ Աշոտը գրկած տարավ նրան դեպի թախտը ու նստեցրեց։ Բայց մայրը չէր պոկվում իր կրծքից։ Վերջապես նա ևս քաշվեց ծանր շնչով ու շվարած նայում էր, Հավատալով աշքե. րին, Համարելով այս երեսութը այն երազներից մեկը, որ նա հաճախ տեսնում էր պատերազմի տարիներին։ Նա շոշափում էր տղայի ձեռքը, կարծես ինքն իրեն ստուգելու համար։

Նա նորից գրկեց ու համբուրեց որդում։

— Եդ ի՞նչ մեծացել ես, Աշոտի՛կ ջան, ինչքա՞ն ես փոխվել... Մի ասա՛, ո՞նց ես։

— Լավ եմ, ժայրի՛կ, ինքու էլ Հո տեսնում ես։

- Բա մենք լուր ստացանք, թե վիրավորվել ես...
 — Հա, ձիշտ է... Դե հիվանդանոցում պառկեցի, բռւ-
 ժեցին:
- Բոլորովին անցել է, —կասկածելով հարցրեց մայրը:
 — Բոլորովին, —հանգստացրեց Աշոտը, թեսկետ ոտքի
 սպիսերի տակ դեռ «Ճնացորդներ» կային:
- Մայրը ուրախացած՝ պարծանքով դիտում էր տղայի
 լայն կուրծքը, զինվորական առողջ կեցվածքը, զգում էր, որ
 նա մեծացել է, ամրացել, իսկական տղամարդ է դարձել:
- Էդ քանի շքանշան ունես, անուշիկ, բա ինչի՞ չէիր
 զրում զրանց մասին:
- Ժամանակ չկար, մայրի՛կ:
- Ապրե՛ս, որդի՛ս, զու մեր երեսը պարզ արիր, որա-
 նից գենը բաց ճակատով կնսուեմ մայրերի մեջ. Հայրենիքի
 պաշտպան՝ հերոս տղա ունեմ:
- Նա շոշափում էր շքանշանները, իսկ Աշոտը բացատրում,
 թե զրանցից ո՞րը ի՞նչ կովումն է ստացել: Մեկի վրա նա
 կանգ առավ ավելի մանրամասն:
- Էդ կովում, մայրի՛կ, մենք հազիվ հիսուն հոգով դիւ-
 մակուում էինք ֆաշիստական մի գնդի: Երեք օր, երեք գիշեր
 տառնց մի բոլի զադարելու կովում էինք ու պաշտպանեցինք
 զիրքերը:
- Քոռանա՛մ ես, որդի՛... ինչ զրության մեջ ես եղել,
 իսկ էդ ժամանակ՝ ո՞վ գիտե ես ինչ էի անում էստեղ:
- Տեսնելով, որ մոր աշքերից արցունքներ են թափվում,
 Աշոտը փոխեց խոսքը:
- Մայրի՛կ, մի շասացիր՝ մերոնք ո՞նց են:
- Լավ են, բալի՛կ, զե մեր փեսի պատերազմ գնալուց
 հետո վարսենիկը մնաց երկու երեխայուի: Ես օգնում էի,
 բայց էլի կասեմ՝ եթե Գոհարիկը շլիներ, մեր բանը շատ
 կղմիվաբանար:
- Գոհարիկը, —անհամբեր հետաքրքրությամբ հարցրեց
 Աշոտը, —ինչպե՞ս է նա հիմա:

ՀՈՒՇԵՐԻ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Հասնելով հայրենի փոքրիկ քաղաքը՝ նա իշավ ավտոյից իրենց տան առաջ և մտավ գավիթը։ Այստեղ ամեն ինչ առաջվան խաղաղ վիճակումն էր. հավերը քզուզում էին թթենու տակ, իսկ պատշգամբի վրա, որը մի քանի աստիճան գետնից բարձր էր, կատուն խաղում էր իր ձագերի հետ։

Պատշգամբից նա աշք ածեց ծայրի փոքրիկ խոհանոցին, այնուհեղ էլ մարդ չկար, ապա մտավ միջանցքն ու սենյակի դուռը զգուշությամբ բանալով, տեսավ իր մորը. այդ բոպեին նա թախտին նստած՝ բրինձ էր ընտրում՝ աշքերին ծուռ գրած ակնոցի օգնությամբ։

— Մայրի՛կ, — կանչեց նա մեղմ ձայնով։

Մայրը վեր թռավ, թափելով ձեռքի բրինձը ու մոտ վազեց։

— Վա՞յ, Աշոտի՛կ ջան, դու ե՞ս, — բացազանչեց նա ու վրա ընկավ, գրկեց. Համբուրներ տվավ, թրջելով նրա գեմքը արցունքներում։

Նկատելով, որ մայրը ցնցող ուրախությունից նվազում է՝ Աշոտը գրկած տարավ նրան դեպի թախտը ու նստեցրեց։ Բայց մայրը չէր պոկվում իր կրծքից։ Վերջապես նա ևս քաշվեց ծանր շնչով ու շվարած նայում էր, Հավատալով աշքե. րին, Համարելով այս երեսութը այն երազներից մեկը, որ նա հաճախ տեսնում էր պատերազմի տարիներին։ Նա շոշափում էր տղայի ձեռքը, կարծես ինքն իրեն ստուգելու համար։

Նա նորից գրկեց ու համբուրեց որդում։

— Եղ ի՞նչ մեծացել ես, Աշոտի՛կ ջան, ինչքա՞ն ես փոխվել... Մի ասա՛, ո՞նց ես։

— Լավ եմ, ժայրի՛կ, ինքով էլ Հո տեսնում ես։

կարգում էին ու ապա վյշում հերոսի մասին... Իր առաջ պատկերանում էր երազուն աշքերով մի աղջիկ, որը կարծես մոգական զրությամբ քաշում էր իր զգացումները... Աչա պատուհանից երևում են պարտեղի ծառերը, որոնք այնքան բան կարող են պատճել պատանեկան մի սիրո մասին...

Բայց այժմ անցել է շորս տարի... Շատ բան կարող էր փոխվել, սիրտն իր ազատ ձամփան ունի... Ո՞վ գիտե, գուշե մի ուրիշն է նրան զրավում...

Նա չեր ուզում մասնակից անել մորը իրեն տանջող մտքերին: Վճռել էր անձամբ իմանալ Գոհարիկից իր «կատավճիռը», իսկ այնուհետեւ... կամ մի նոր գարուն կծաղկի իր սրտում, կամ մի վարագույր կիշնի իր պատանեկան անցյալի վրա... Նա կթաղի իր հուշերը՝ առանց հայտնելու որեւ մեկին...

Մայրը ներս եկավ, սարքեց սեղանը, շարոց ուսելեղենը՝ ձևաձեղը, մեղրը, մտծոնը, կանաչեղնը, բայց այս բուլորը շատ չնշին էր թվում նրա աշքին: Աշոտը գնաց լվացվեց: Ա վերադառնուի թարմացած:

— Արի, բալի՛կ ջան, նախաձաշիր. Էսրանը միայն հասցրի, պատրաստեցի:

— Սրանից էլ լավ ի՞նչ ես ուզում, մայրի՛կ. Հիվանդին էլ կկնդանացնի քո սեղանը:

Աշոտը մի ուրուն հաճույք էր զգում այս ընտանեկան ուսելիքներից, ասես զրանց մայրական գորովն էր խառնը-ված:

— Աշոտի՛կ ջան, մի սրանց կեր է... էղ ի՞նչ է, նշան դրած աղջկա նման ես ուսում:

— Մայրի՛կ, ինչո՞ւ դու ինձ «Աշոտիկ», «բալիկ» ես ասում, չէ՞ որ ես բավականին մեծացել եմ, արդեն քսաներկու տարեկան եմ:

— Ինչքան էլ մեծանաս, որդի՛ս, մորդ համար երեխա ես մնում:

Վերջացնելով նախաձաշը՝ Աշոտն սկսեց ծիւել:

— Էղ ի՞նչ է, բալի՛կ, ծիւել էլ ես սովորի՛ւ:

— Դե սազմաճակատում բոլորը ծխում էին, ևս էլ նրանց շեմ:

— Մի անգամ երազում տեսա, Աշում, իբր ասում էիր՝ մայրի'կ, ամեն բան ուզարկել ես, միայն ծխախոսը մռացել ես:

— Եղ ի՞նչ իմաստուն երազ ես տեսել, մայրի'կ, Հեռվից հեռու իմացել ես, որ ես ծխում եմ:

Մայրը խոր շոնչ առավ:

— Է՛օ, որդի'ս, մին-մին էլ շատ անիրազ բաներ էին պատահում երազում... Տեսնում էի՛ գալիս էիր, դուռը բացում ներս մտնում... Խելքս գնում էր ուրախությունից... Էն է՛ մոտենում էի, որ գրկեմ, Համբուրեմ, մեկ էլ չես իմանում, ի՞նչ էր լինում, Հանկարծ անհետանում էիր աշքից: Զարթնում էի ու լաց լինում...

— Եղ լավ չես արել, մայրի'կ, պատերազմի ժամանակ մարդ պետք է ամուր պահի իրեն և ուրիշներին էլ սիրտ տա:

— Դե, մոր սիրտը բարակ կլինի, Աշոտ, միայն չկարծես թե քո մերը աշխարհքից քաշված՝ մենակ սուկ էր մաել: Դրսում ամեն բանի էլ հասել եմ, որ իմ Հերոս տղային արժանի մայր լինեմ... Մինչև անգամ ժողովներումն էլ եմ խոսել...

— Ժողովներում... ա՞յ քեզ բան...

Նա մի ձեռքով գրկեց մորը, գուրգուրեց:

— Քա՛ջ ես, քա՛ջ, Շուշանի'կ ջան, որ իմանայի՛ քեզ էլ Հետո կտանեի ուզմաճակատ:

Մայրը Հրճվանքով զգում էր Աշոտի ձեռքի ուժեղ ձնշումը, սիրտն ուրախ ծփում էր իր սիրելի զավակի կրծքի մոտ. Նրա առնական ձայնը լսելիս, ասես մի նոր, թեավոր կյանք էր բացվում նրա առաջ:

— Գոհարիկն է՛լ էր մասնակցում էղ ժողովներին:

— Դե, Գոհարիկին ո՞վ կհասնի, նա ուրիշ է... ի՞նչպես էր խոսում...

Մոր զովառանքը ուրախացրեց Աշոտին, բայց դրա Հետեմից եկավ անորոշության ու կասկածի դառնությունը: Բոպիական լուսթյունից հետո նա նորից գիմեց մորը.

— Մի բան էլ պիտի հարցնեմ, մայրի'կ, ո՞վ էր գրում
քո նամակները:

Մայրն իսկույն շպատասխանեց ու շփոթված ժպտով նաշ-
յում էր որդուն:

— Աշո՞տ ջան, գե առաջ ես էի ուզում գրել, բայց չեր
լինում, — հենց որ գրիշը ձեռս էի առնում, սիրտս շուռ էր գա-
լիս, արտասուս խեղզում էր... Մեր Վարսենիկն էլ գնացել
էր, էն է ուրիշին դիմեցի... Գոհարիկի եղբայրն էր գրում:

Աշոտը զարմացավ այդ անսպասելի հայտնությունից:

— Ինչպե՞ս թե... բա ինչո՞ւ ինքը Գոհարիկը չեր գրում:

— Դե աղջիկ է, կարելի է քաշվում էր:

— Մայրի'կ, դժվար թե Գոհարիկի փոքր եղբայրը կա-
րողանար էղպես նամակներ գրել:

Մայրը ավելի խորամիտ ժպտաց. նա կարծես մի բան
էր տպում ասել, բայց տատանվում էր:

— Բալի'կ ջան, խոսք եմ տվել, որ շասեմ, բայց եկել
ես, ո՞նց կարամ քեզանից թաքցնել... էդ նամակները Գոհա-
րիկն ինքը դրում էր, Հետո իրեն եղբորն արտագրել էր տա-
լիս:

Աշոտը մնաց շվարած: «Ուրեմն Ճիշտ էին իմ ենթա-
դրությունները» անցավ նրա մտքով:

— Ասում ես քաշվում էր, Հա՞:

— Հա, էղպես էր երեսում:

Աշոտը կուզեր էլի հարցեր տալ, բայց չեր ուզում մոր
առաջ բացել իր զգացումները: Նա վեր կացավ տեղից ու
սկսեց քայլել սենյակում, ապա կանգ առավ պատուհանի
մոտ: Մայրը կուհեց, որ նրա հարցերը և այժմյան մտած-
մունքները նշան են, որ Աշոտը առանձնապես հետաքրքրվում
է Գոհարիկով: Բայց քանի որ որդին բան չեր ասում դրա մա-
սին, ինքն էլ լուսում էր:

— Մայրի'կ, ինչպե՞ս է մեր պարտեզը:

— Լավ է, բալա՛ս, մի գնա տես, ուրախացիր:

«Փուցե իմ բոլոր ենթադրությունները երեակայության
արդյունք են, — մտածում էր Աշոտը պարտեղ իշնելիս, — այս

մշուշը պարզելու համար հարկավոր է տեսնվել Գոհարիկի հետ... բայց ինչպես անել. գնա՞լ նրա մոտ, թե՛ սպասել, որ ինքը դա...»:

Ու մի հեղնական միտք ընկալ նրա մեջ. ի՞նչ կոփվներումն է եղել, ի՞նչ ճակատամարտեր է տեսել, իսկ այս թվում է թե այս փոքր հարցը դարձրել է «մաղե կամուրջ» և տատանվում է...

Նա անցավ ծառուղիով՝ իրեն այնքան ծանոթ ծառերի միջով, որոնք շորս տարվա մեջ փոքր ինչ աճել, մեծացել էին: Կանաչների բուրմունքը համակեց նրան, տեղափոխեց դեպի մոտ անցյալը: Նա ծարավի կարուով շնչում էր այդ օդը շիմանալով ո՞ր կողմը դարձնի իր հայացքը... Մոտակա ծառերից մի փոքրիկ թռչուն անտես դալլալում էր՝ ասես ողջումնելով նրան: Չորս տարվա արյունահեղ, աշխարհացանց պատերազմից հետո տարօրինակ էր թվում, որ այստեղ մնացել էր նույն խաղաղ բնությունը:

Նա նստեց ծիրանինու տակ՝ այնտեղ դրած նստարանի վրա: Մեղմ զեփյուռը շոյում էր նրա գեմքը, առջեղ կայտառ սահում էր առվակը՝ կարծես ուրախանալով իր հոսանքից: Իր շուրջը ամեն մի ծառից մի հուշ էր գալիս անցյալից: Չորս տարի առաջ այս ամբողջը, իր կանաչներով, ծաղիկներով այնպես ներդաշնակ կապված էր թվում Գոհարիկի հետ... Ահա այն կեռասենու տակ նրանք նստած էին երկուսով ու կարդում էին այն վեպը ու հաճախ վիճում: Ինքը տասնութ տարեկան էր, Գոհարիկը՝ տասնհինգ: Գարուն էր: Ծաղկած կեռասենու բուրմունքը արբեցնում էր, մեղմ քամին երբեմն թոցնում էր զինջ, սպիտակ ծաղիկների թերթիկները ու ծգում նրանց վրա... Նրանց հայացքները թափանցում էին իրար, աշքերը ասես իրար համբույրներ էին ուղարկում, բայց խոսքերով նրանք ոչինչ շասացին իրենց զգացումների մասին...

Մինչ Աշոտն այսպես ինքնամոռացման մեջ էր՝ տարված անցյալի հուշերով, հանկարծ նա լսեց հետեւց.

— Ազո՞տ...

Նա վեր թռավ տեղից: Մասուղիում՝ մոտ հիսուն քայլե

վքա, տեսիլի նման երեաց Գոհարիկը՝ թիանցուկ իր մոբ հետ: Աշոտը մոտեցավ արագ քայլերով:

— Բարե՛, Հազա՞ր բարի ևս եկել, Աշոտ, — Հնչեց Գոհարիկի մեղմ, ախորժաւուր ձայնը:

— Բարե՛, բարե՛, — ասաց Աշոտը՝ անսպասելի Հուզումից 22մածու երկու ձեռքով սինդ սեղմեց Գոհարիկի ձեռքը:

— Աշոտ, էդ ինչքա՞ն ևս փոխվել, իսկական մարտիկ եւ չարձել...

— Դու էլ, Գոհարի՛կ, անձանաշելի ևս գարձել...

— Երեկի դեպի վատն եմ փոխվել, Հա՛:

— Ոչ, դեպի լավը, և այնպիսի լավը, որ չեմ կարող խոսքերով արտահայտել:

Ու իրար ձեռք բռնած՝ նրանք սիրով դիտում էին իրար, զարմանալով արտաքին փոփոխություններից և ուրախանալով, ասես իրենց ցանկությամբ էին եղել այդ փոփոխությունները: Աշոտը Հիանում էր. Գոհարիկն այնպես ներդաշնակ ձեավորվել էր որպես կին, ոլացիկ իրանով, դեմքը՝ փոքր ինչ լցվել էր. ժպտում էր փաղաքուշ այտերի զուրեկան փոսիկներով:

— Ինչպե՞ս ևս, Աշո՞տ... Է՞՞զ, ինչքան բան է անցել զիմավդ, — ասաց Գոհարիկը՝ ազատելով իր ձեռքը:

— Լավ եմ, ոչինչ, դու՞ւ ինչպես ևս, Գոհարի՛կ:

— Ապրում ենք... Դե, մենք թիկունքի մարդիկ ենք, մերը սովորական է, դեռ դու պատմիր պատերազմից:

— Ի՞նչ պատմեմ, էն է՝ գնացինք, Հաղթեցինք, եկանք:

— Հովհանս Կեսարի նման ևս տսում, Աշո՞տ. «Եկի, տեսի, Հաղթեցի»:

— Դե, Հաղթողների խոսքը շպեաք է երկար լինի:

— Բայց մինչև Հաղթության հասնելը ի՞նչքան դժգարություններ են եղել:

— Հաղթությունից հետո այդ դժվարությունները այսօս մեծ շեն թվում:

Նրանք քայլեցին ծառուղիով: Մոր սրտում ցնծություն էր սիրում, ասես նա իր մեջն էր առել նրանց երկուսի ուրա-

իսությունը: Երբ զուզգը նստեց ծիրանենու տակ՝ նստարանի վրա, նա փոքր ինչ մլուլ տալուց հետո աննկատելի դնաց տուն:

— Ո՞չ, ինչ անուշ է այս բնությունը, Գոհարիկ... Չորս տարիա դժոխացին պատերազմից հետո այնպես կարու է եկել մեջս..., Այս ծառերը ինչպես հիշեցնում են մոտիկ անցյալը... Հիշո՞ւմ ես մեր ընթերցանությունը՝ ծաղկած ծառերի տակ...

— Պատանեկան հուշերը միշտ էլ գեղեցիկ են, Աշում:
«Զուսպ է պահում իրեն, չի ուզում խոսել անցյալի մասին», անցյալ Աշումի մաքով: Նա փոխեց խոսքը.

— Ուրիշ... Ի՞նչ ես անում, Գոհարիկ:

— Աշխատում եմ հիվանդանոցում:

— Ես չոփազանց շնորհակալ եմ քեզանից, Գոհարիկ,
որու քրոջն երեխաների համար այնքան բան ես արել:

— Ո՞յս, Աշում, ի՞նչ կարիք կա այդ մասին խոսելու: Մի՞թե մոռանում ես, որ ոսկմաճակատում զու կանգնած էիր թշնամու ոռոմքերի ու գնդակների տակ, քո կյանքն էիր դնում ժողովրդի համար, իսկ իմ արածը մի փոքրիկ ընկերական պարտականություն է:

— Ոչ, Գոհարիկ, քո արածը փոքր գործ չէ... Շնորհակալ եմ նույնպես, որ օգնել ես մորս և այնպիսի լավ նամակ-ներ ես գրել:

Գոհարիկը շառագունեց և շփոթված նայեց Աշումին:

— Ինչպես... Միթե ձեռագրից չեիր նկատում, որ ես
չեմ:

— Ձեռագիրը քոնքը չեր, բայց սիրու քոնն էր...

— Մայրիկդ է ասել... Նա ինձ դավաճանել է...

— Ինչո՞ւ պետք է զաղտնի մնար... Ինչո՞ւ նամակներն
ուրիշներին էիր արտադրել տալիս:

— Միթե քեզ համար հասկանալի չէ, Աշում... Դու
կարող էիր այդ իմ քայլին ուրիշ մեկնություն տալ և ենթա-
դրություններ անել...

— Ի՞նչ ենթադրություններ... և մի՞թե դա վատ կլիներ...

— Ա՛խ, Աշում, դու այսօր դատաքննիչի գեր ես ստանձնել, բացատրություն ես պահանջում այն բանի համար, ինչ քեզ համար պետք է պարզ լինի... ես այն ժամանակ այդ ձեռվ միայն հնարավոր գտա օգնելու մորդ: Պետք է ասեմ, որ նա առաջին անգամ փորձեց ինքը գրել, բայց այնքան արցունքներ էր թափել, որ թանաքի լճեր էին գոյացել թղթի վրա, և նամակը չէր կարդացվում: Մայրդ իսկապես արցունքի ծով է... Այդ գրությունը տեսնելով, ես հանձն առա գրել...

— Քո նամակները կարդալիս ես մի առանձին ջերմություն էի ստանում; և պետք է խոստովանեմ՝ երբեմն կուշում էի, որ դու ես գրում... ու այդպես մտածելով՝ ես ենթադրություններ էի անում քո զգացումների մասին...

— Տեսնո՞ւմ ես, զե՞ն նշաններ չկային, բայց դու արդեն եղրակացություններ էիր անում, որին ես իրավունք ունեի ինձ թաքցնելու:

— Թ՛, ես շատ կուպեի, որ դու քո անունից գրեիր... Իմ ստացած նամակների մեջ շատ տողեր մնացել են հիշողության մեջ: Մի անգամ գրել էիր՝ իբր մորս կողմից. «Միրելի՛ Աշում, դու կովիր հերոսաբար... այն սերը, որ կա գեպի քեզ քո ընտանիքում և ընտանիքից գուրս՝ թող ջերմացնի քեզ ծանր լուպեներին...»: Ես այդ նամակն ստացա այն օրերին, երբ վիրավոր՝ պառկած էի հիվանդանոցում: Այդ «ընտանիքից գուրսը» քեզ էր վերաբերում, Գոհարի՛կ, ես այդ զգացի...

Գոհարիկը շփոթվելուց աշքերը գցած գետնին լսում էր:

— Այնուհետև հիշում եմ մի ուրիշ նամակում գրում էիր, — «ծառերը ծաղկել են այնպես գեղեցիկ, ասես պատերազմը նրանց շի վերաբերում... Ծաղկել են և քեզ են հիշում, բո հաղթական վերադարձին են սպասում»...

— Ա՛խ, Աշում, դու ինձ տանջում ես՝ գաղտնիքներս բացելով...

— Ես էլ եմ տանջվել, Գոհարի'կ, մեկ մտածելով թե զու
ես գրողը, մեկ էլ կասկածելով... Ես քեզանից բարիներ էի
ստանում, բայց ուրիշների հետ միասին: Մի անգամ էլ քոյ-
րըս ուզարկել էր ձեր հիվանդանոցի աշխատակիցների խրմ-
քական լուսանկարը... Հիշում եմ՝ հինգ հոգի էին... Դու
կանգնած էիր բժշկի կողքին... Ու ես մտածեցի՝ չի՞ կարող
պատահել, որ Գոհարիկի սիրաը պատկանի...

— Աշո՞ւ, լո՞ւրջ ես ասում... Դա իմ մորաքրոջ տղան-
է... Դու նրան չես տեսել, Բաքվումն է առվորել...

— Մորաքրո՞ջը աղան...—զարմացավ Աշուը ու լոեց:

— Մի՞թե հնարավոր է, Աշո՞ւ, որ զու այդպիսի հնիտա-
զրություն անեիր, զու զգիտես... Հորս տարվա մեջ չի եղել
մի օր, մի ժամ, որ ես հանեմ քեզ իմ՝ հիշողությունից...
Բազմաձակատից զրած քո նամակները ինձ անհուն որա-
խություն էին պատճառում... Քո նկարագրուծ ճակատամար-
տերը ինձ վերացնում էին, վասում իմ երեակայությունը...
Իսկ երբ իմացա, թե վիրավորված ես, անքուն զիշերներով
արտասվում էի՝ մտածելով, որ զու արգեն չկաս...

Գոհարիկի աշքերին արցունքներ փայլեցին:

— Այժմ ինձ համար ամեն ինչ պարզ է, Գոհարի'կ...
Զորս տարի ես էլ պահել եմ մեջս իմ սերը, միշտ երազել իմ
քո մասին, բայց երբեմն էլ մտածել, հարց եմ տվել ինքս
ինձ՝ արդյոք Գոհարիկը հիշո՞ւմ է ինձ, սիրո՞ւմ է ինձ, թե
գուցե...

— Մի՛ կրկնի քո կասկածները, Աշո՞ւ, —ընդհատեց Գո-
հարիկը:

— Այժմ, Գոհարի'կ, ես եղանիկ եմ, կարծես նորից եմ
սկսում ալրել... Մեր զգացումներն այժմ նույնն են, ինչ որ
այն ծաղկած դարնանը...

Նա բռնեց Գոհարիկի ձեռքը ու նայեց նրա դեմքին:
Նրանց աշքերը մպառում էին որպես տարիներ առաջ: Ապա
Նրանք կարծես մագնիսական ուժով մոտեցան, և շրթումքնե-
րը հալվեցին իրար... Բայց հանկարծ Գոհարիկը ետ քաշվեց՝
ասելով.

— Մայրիկդ դալիս է...

Մայրը դալիս էր երջանիկ տրամադրության մեջ՝ նկատելով, ինչպես իր «աղունիկները» կտուց-կտցի զրուցում են այնպիս մտերմաբար ու սիրալիք: Նա մոտենում էր՝ հետզհետեւ ավելի ձռվելով այս նոր երջանկությանը:

— Աշում ջան, Գոհարի'կ ջան, արդեն ճաշի ժամանակն է, գնանք տուն:

Սպա մի գորովալից հայացք ձգելով զույգի վրա՝ ավելացրեց:

— Դուք երկուսդ էլ իմ գավակներն եք, ապրեք ու աշխատեք միասին, միշտ մոտ ընկերներ եղեք, ինչպես առաջէիք, դա է իմ սրտի ցանկությունը:

Աշունը գրկեց մորը ու համբուրեց:

— Մայրի'կ, քո սիրալը միշտ իմաստուն է... մենք մոտ ընկերներ ենք և միշտ էլ կլինենք այդպես...

Նա թևանցեց մորը և Գոհարիկին, և երեքով քայլեցին գեպի տուն:

— Գոհարի'կ, մայրիկն ասում է՝ աշխատեք միասին... ես այժմ ուազմաճակատից վերադառնալուց հետո՝ մեջս մի անհուն ահնչ եմ զգում, սովորելու և աշխատելու...

— Աշում, ես էլ ծարավի եմ աշխատանքի, ասես ամեն կողմից այդ կոչն է հնչում ականջիս:

— Գոհարի'կ, եղիր իմ նվիրական ընկերը... կոռվորենք և կաշխատենք միասին մեր երկիրը ծաղկեցնելու համար... մայրի'կ, լսո՞ւմ ես:

— Լսում եմ, որդիս, հենց իմ սրտիցն ես խոսում:

Նրանք քայլում էին երեքով, համակված մի նոր երջանկությամբ...



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
✓ Առեր	3
✓ Կիսատ տունը	5
Վիրավոր բռչունք	7
Վանդակներում	9
✓ Կարմիր համբույրը	14
Կովախնձորը	18
Հեթիարը	22
Խորհրդավոր այգին	26
✓ Արյունոտ ծաղիկները	33
Վերջին տերեր	36
Անցյալի ճիշիք	40
Անցյուրը	43
Խալիշայի երզը	45
Արծարի տակ	49
Հին ժամացույցը	52
Կարմիր հարսնացուն	55
Սովետական առավոտը	78
Կամուրջը	83
✓ Բնկեր Մուկուշը	88
Տրակտորը	102
Օղակում	114
Անփուսափելին	123
Տեսիլը	141
Աշխ վախեցած Հանեսը	152
Հարմարյանի հուշատետրից	166
Հանդիպումը	191
Լույսերը	204

	կց
Դավադրությունը	213
Բարելոնի աշտարակը	223
Մոլախոտը	234
Գայլերի նամփին	245
Լուսնի շողերով	267
Զրվեծի ցոլքում	333
Պրաֆեսորը	437
Ալեքը	449
Հայրը	460
Հուշերի ծաղիկները	466

Պատմ. խմբագիր ՀԱ. ՇԽՄԱՄ
Նկարիչ Կ. ՏԻՐԱՏՈՒԹՅԱՆ
Տեխ. խմբագիր Ա. ՄԱՑԻՆՅԱՆ
Պրբագրիչ Ա. ՇԱՀԲԱԶՅԱՆ

պատմ. Պատվեր 73: Տիրաժ 4000: Հեղ. 22 մամ., տպ. 30 մամ.:
Հանձնված է արտադրության 21/1 1948 թ.:

Ստորագրված է տպագրության 15/IV 1948 թ.:

Հ. Ս. Ս. Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և Հրատ. Պաշտ.
№ 3 տպարան, Ալավերդյան և 65, Երևան, 1948





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220026906

230.

A II
26906